

«Մենք երաշխավորում ենք, որ ձեզ համար
դժվար կլինի վայր դնել այս գիրքը»:
- Ջին («Ֆլեշտոյնթ») -ի հաղորդավար) և Թերի Բեյլիներ

ՊԱՅՔԱՐԻ՝ Ի ԻՆԳՊԵՆ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԱՐԹՈՒՆ ԱՊՐԵԼՈՒՇԱՄԱՐ

ԴՐԵՆԴԱ ԿԻՍԻ

«Մենք երաշխավորում ենք, որ ձեզ համար
դժվար կլինի վայր դնել այս գիրքը»:
- Ջին («Ֆլեշոյնթ») -ի հաղորդավար) և Թերի Բեյլիներ

ՊԱՅՔԱՐԻ՝ Ի ԻՆԶՊՊԵՍ



ԵՐԿԻՆՔԸ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԱՐԹՈՒՆ ԱՊՐԵԼՈՒՇԱՍԱԼ՝

ԴՐԵՆԴԱ ԿԻՍԻ

ԳՈՎԵՍՏԻ ԽՈՍՔԵՐ «ՊԱՅՔԱՐԻՐ ԻՆՉՊԵՍ ԵՐԿԻՆՔԸ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ



Պայքարի ինչպես երկինքը. մշակութային ուղեցույց արթուն ապրելու համար» գիրքը շատ ավելին էր, քան սպասվում էր վերնագրից: Այն մշակութային ՊԱՏԵՐԱԶՄԻ բարոմետր է եկեղեցու և պատմության աչքերով: Մի սխավվեք. մենք չարի և բարու ՊԱՏԵՐԱԶՄԻ մեջ ենք: Դրենդան նոր, յուրօրինակ և ներշնչող կերպով նկարագրում է ազդեցության յոթ սարերը և մեր վերելքը: Դուք սկսում եք հասկանալ, որ Աստված ստեղծել է բոլորիս՝ մագլցելու և նվաճելու ազդեցության յոթ սարերը: Մենք պետք է «բանեցնենք, մինչև Նա գա» (Ղուկաս 19.13): Դուք խորապես կիմանաք սահմանումը, պատմությունը և ուղղությունը այն ամենի, ինչ անհրաժեշտ է, որ տեղի ունենա, որպեսզի եկեղեցին զբաղեցնի իր օրինական տեղը այս ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ: Մենք կհաղթենք չարի ուժերի դեմ պայքարում: Մենք երաշխավորում ենք, որ ձեզ համար դժվար կլինի վայր դնել այս գիրքը: Այն լի է հարուստ տեղեկություններով, որոնք վերաբերում են մեր առջև ծառայած ընթացիկ ճակատամարտերին: Դուք ավելի կրթված, զինված և ներշնչված կլինեք՝ գրավելու ձեր դիրքը այս ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ և հաղթելու թշնամուն: Դուք պատրաստվում եք սկսելու ձեր կյանքի ռազմերթը և հաստատելու ձեր իրավունքները հանուն Քրիստոսի: Մենք պետք է միացնենք բոլորիս ջանքերը: Ապրեն, Դրենդա, ապրեն: Այժմ սա կավելանա «Ֆլեշփոյնթ»-ի բանակի համար առաջարկվող գրականության ցանկին»

– Զին («Ֆլեշփոյնթ»-ի հաղորդավար) և Թերի Բեյլիներ

Դրենդան համարձակ է, խիզախ և աններողամիտ, երբ փորձում է լուծում տալ այսօր եկեղեցու առջև ծառացած որոշ դժվարին հարցերի: Առանց փոխզիջման նա անդրադառնում է այն հարցերին, որոնք մոտ են Աստծո սրտին և թանկ են Նրա համար: Ժամանակն է, որ եկեղեցին ոտքի կանգնի և պայքարի ինչպես երկինքը:

– Ջոնի Լեմ, «Դեսյաթար» հեռուստատեսային ցանցի համահիմնադիր, «Զրույց սեղանի շուրջը՝ Ջոնիի հետ» հաղորդման հաղորդավար

Ես ունեցել եմ արտոնություն՝ ճանաչելու Դրենդա Կիսիին մեկ տասնամյակից ավելի: Դրենդան հիշեցնում է Առակաց 31-րդ գլխում նկարագրված կնոջը՝ լի տաղանդներով և արժեքավոր պտուղներով: Նրա վերջին գիրքը օրինակ է արժեքավոր պտուղների առատության, որ նա շարունակում է բերել: «Պայքարի ինչպես երկինքը» գիրքը անձնական ճամփորդություն է Դրենդայի համար և կարող է ու պետք է լինի անձնական ճամփորդություն յուրաքանչյուրիս համար: Բոլորս շահում ենք լավ կազմակերպված հասարակությունից, որը կառուցված է Աստծո սկզբունքների և բարեհաճության վրա: Եվ հակառակը, բոլորս տուժում ենք, երբ Նրա սկզբունքներն անտեսվում են կամ, առավել վատ, ծաղրվում: Սա քաջալերող գիրք է, որը ներշնչում է բոլորիս ավելի մոտենալ Նրան, Ով ստեղծել է մեզ, Ով երբեք չի թողնի մեզ, և Ով հոչակում է, որ Իր դրոշը մեզ վրա Սեր է:

– Միշել Բախման, Ռիջենթի համալսարանի դեկան, ԱՄՆ Կոնգրեսի նախկին անդամ

«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ + ՀՈՒՅՍ + ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կրկին Դրենդան քայլ է անում և տալիս մեզ խիստ անհրաժեշտ տեղեկություններ այս գլխավայր շրջված աշխարհում: Գրքում պարունակվող տեղեկությունները կհանեն ձեզ ձեր հարմարավետության գոտուց:

Շարունակեք կարդալ... Դրենդան իր գրքում տալիս է հուսադրող պատասխաններ և ներշնչում քաջություն՝ համարձակությամբ

ՊԱՅՔԱՐԻՐ ԻՆՉՊԵՍ ԵՐԿԻՆՔԸ

հետևելու Աստծո կանչին: Նա ներկայացնում է ուղեցույց, թե ինչպես պատասխանենք պայքարի մեջ մտնելու մեր կանչին:

Շնորհակալություն, Դրենդա, այս ժամանակներում անչափ անհրաժեշտ գրքի համար:

– Զին Փիլա, հրահանգիչ

Կարդալով Դրենդա Կիսիի «Պայքարի ինչպես երկինքը» գիրքը՝ ոչ միայն պատիվ եմ համարում գրքի մասին ինչ-որ բան գրելը, այլև ողջունում եմ նրա համարձակությունն ու քաջությունը՝ կանգնելու ժամանակակից փարիսեցիների դեմ և սիրով գրելու ճշմարտությունը: Դրենդան նշում է, որ մենք պատերազմի մեջ ենք՝ մշակութային, հոգևոր և անձնական առումներով: Ես անձամբ զգում եմ, որ սահմանը գծված է, թե ով է Տիրոջ կողմից: Երբ կարդաք առանց վախի շարադրված այս տեղեկատվությունը, կհասկանաք, թե ինչու պետք է պայքարենք ինչպես երկինքը:

– Հովիվ Ռոբին Բուլոկ

Հիանալի է: Մոլորակում ապրող յուրաքանչյուր մարդ պետք է կարդա այս գիրքը: Դրենդա Կիսին մեր ճանաչած խիզախ կանանցից մեկն է, որ ծանրակշիռ ուժ է Թագավորության մեջ: Սա համարձակ և ճշմարիտ գիրք է: Դրենդան անվախորեն լույս է սփռում չարի ծրագրերին՝ հորդորելով ընթերցողներին զանազանել ժամանակը, որում ապրում ենք, և հասկանալ այն կարևոր դերը, որ ունենք: Այս հզոր աշխատությունը մեզ բորբոքում է պայքարելու ինչպես երկինքը պատմության այս կարևորագույն ժամանակաշրջանում, հատկապես հանուն գալիք սերնդի:

– Թոմ և Քեթի Թոնիներ, «ԲՈՒԵՍԹ» ուսանող առաջնորդների զարգացման ծրագրի հիմնադիրներ, KUEST.org

Հովիվ Դրենդան մատնանշում է ակնհայտ ամբարտավանությունը, որն աճել է մեր հասարակության մեջ, քանի որ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծո հետ փոխհարաբերության ցանկության նվազումը հանգեցրել է նրան, որ պնակալեզները, ինչպիսին Հարարին է, ունեն ծրագրավորված ազդեցություն մեր այսօրվա հասարակության վրա: Հպարտությունը գալիս է անկումից առաջ, և ընդհանուր պատկերն այն է, որ մարդիկ պարծենում են միայն արտաքին տվյալների վրա հիմնված քիչ տեղեկություններով: Նրանք, ովքեր կրնտրեն իմաստության պակասը, մշտապես սխալ կմեկնաբանեն իրենց առջև դրված փաստերի ճշգրիտ նպատակը և նշանակությունը՝ չօգտագործելով Աստծո տեսապակին:

Մենք եռամաս ենք՝ ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ: Այս անհատները մերժել են ամբողջական գիտությունը:

Այս գիրքը հարուստ է Թագավորության սկզբունքների վրա հիմնված իմաստությամբ, հետևաբար պարտադիր է կարդալ այն, որպեսզի պատրաստ լինենք մեր առջև ծառայող ներկա մշակութային, սոցիալական և անձնական մարտահրավերներին:

Որպես նյարդավիրաբույժ՝ ես առերեսվում եմ փաստերի, որոնց առնչվում եմ ամեն օր, հատկապես երբ դրանք կյանքին սպառնացող դեպքեր են, որոնք անհապաղ վիրահատություն են պահանջում: Հովիվ Դրենդան թարմ հայացք է նետում պատերազմական մեր զենքերին և դրանց կիրառմանը կյանքին սպառնացող իրավիճակներում: Հովիվ Դրենդան մեր ուշադրությունն ուղղում է պատասխանի վրա՝ ընդգծելով Փառքի, Բարության, Համաձայնության և Հավատքի մեր տեսակետն ու գործածումը: Մենք ակտիվ դեր պետք է ստանձնենք այս գործընթացում, որպեսզի իրագործենք մեր հաղթանակը:

Այս գիտական շարադրանքը պարտադիր պետք է լինի բոլորի զինանոցում, քանի դեռ ապրում ենք և պատերազմում հավատքի բարի պատերազմը»:

– Դոկտոր Էյվերի Ջեքսոն, նյարդավիրաբույժ

Քաջություն և համարձակություն է պահանջվել այս գիրքը գրելու համար: Թշնամին կպայքարի ինչպես դժոխքը, որպեսզի թույլ չտա, որ այն հրատարակվի: Ռեզմական հետախուզության մեջ մենք հա-

վաքում ենք տեղեկություններ բազմաթիվ տարբեր աղբյուրներից: Անկախ նրանից, թե որտեղից ենք ձեռք բերում տեղեկությունը, այն անցնում է խիստ գործընթացով, որպեսզի պարզվի, թե արդյոք ճշգրիտ է (ստուգված), և արդյոք այդ տեղեկությամբ կարող ենք հաջող գործողություն ձեռնարկել հակառակորդի դեմ (արդյո՞ք այն գործող է): Այս գիրքը և՛ ստուգված է, և՛ գործող: Դրենդան բացահայտում է թշնամու իրական գաղտնի ծրագրերը, ինչպես նաև նրանց, ում նա օգտագործում է, որպեսզի ավերածություն և խռովություն բերի բառեպաշտ երկրներում և Քրիստոսի մարմնում:

Դրենդան նաև բացատրում է, թե ինչպես քրիստոնյաները կարող են ներգրավվել և պետք է ներգրավվեն թշնամու դեմ պայքարում: Եթե դուք սիրում եք ազատությունը և արդարությունը, դադարե՞ք մալուխային լրատվական կայաններով շեղվելուց և կարդացե՞ք «Պայքարի՞ր ինչպես երկինքը. մշակութային ուղեցույց արթուն ապրելու համար» գիրքը: Տասնամյակներ անցկացնելով պետական հետախուզությունում, իսկ այժմ լինելով լիարժեք ծառայության մեջ՝ ես զարմացած եմ, թե ինչպես է քրիստոնյաների մեծ մասը թույլ տալիս, որ թշամին շեղի իրեն քարոզչությամբ՝ միաժամանակ իրագործելով իր կործանարար ռազմավարությունները: Այլևս դա չի լինի: Շնորհակալություն, Դրենդա Կիսի, որ մեզ տրամադրեցիք թշնամուն հաղթելու մեր Հրամանատարի (Աստծո) հրամանների այս աննախադեպ տեսակետը: «Պայքարի՞ր ինչպես երկինքը» գրքից իմ սիրելի հայտնություններից մեկը սա է. «Մենք կանչված ենք սիրելու մարդկանց, բայց հանգիստ չթողնելու սատանային և ոգիներին, որոնք փորձում են գործել մեր կամ ուրիշների դեմ: Արդյո՞ք եկեղեցին ճիշտն ընդդեմ սխալի ամուր, հարգալից դիրքորոշում ընդունելու փոխարեն թողել է ազդեցության ոլորտները՝ թույլ տալով, որ սատանան ներխուժի այնտեղ: Երբ հանձնում ենք այս ոլորտները, դրանք գրավվում են չար ուժերի կողմից: Մենք կորցրել ենք մեր ազդեցությունը և թողել, որ թշնամին տիրի: Վերջին տասնամյակում այնքան շատ ենք լսել հանդուրժողականության մասին, որ թույլ ենք տվել՝ չար արարքները, հատկապես երեխաների հանդեպ, անարգել մնան»:

- Էրոն Ուորդ, Հակաահաբեկչության դեմ պայքարի պաշտոնաթող ավագ մասնագետ Ռազմածովային հատուկ ուժերում, ՆԱՏՕ-ի մարտական խորհրդական և «Կառուցի՞ր ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔՈՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՂԱԿԸ» գրքի հեղինակ

«Պայքարի՛ր ինչպես երկինքը» գիրքը գրելու համար ես չեմ կարող մտածել ավելի լավ, ավելի համապատասխան անձնավորության մասին, քան իմ լավ ընկեր և ծառայակից հովիվ Դրենդա Կիսին է: Ինչո՞ւ: Որովհետև Դրենդան իր բնավորությամբ և անհատականությամբ բարի պտուղներ է բերել իր ամուսնության մեջ, ընտանիքում, ծառայության մեջ և տեղական եկեղեցում՝ խոսքը դարձնելով գործ:

Հանդիպելով այսօրվա «գողիաթներին»՝ Դրենդան բացահայտում է այն պայքարը, որ մղում է եկեղեցին՝ Աստծո արդար բանակը, և այն ուժերին, որոնց դեմ կանգնած են Աստծո հավատարիմ սուրբերը: Շատերը կարող են բաց թողնել այս գրքի որոշ մասեր՝ որպես «դավադրության տեսություններ», ոմանք կարող են պարզապես չցանկանալ իմանալ որևէ բան՝ գլուխները թաղելով ավագի մեջ, մինչդեռ մյուսները «կարթնանան և կհաստատեն մնացածներին» (Հայտնություն 3.2) և կպատերազմեն բարի պատերազմը Դրենդայի և Գարիի հետ: Ակնհայտ է, որ «Պայքարի՛ր ինչպես երկինքը» գիրքը լավ ուսումնասիրվել, խորապես վերլուծվել և գրվել է այնպես, որ հենց սկսես կարդալ, չես ցանկանա վայր դնել: Պետք է կույր և շատ միամիտ լինել չտեսնելու համար, որ «խավարի ուժերն» իսկապես ներթափանցել են հասարակության յոթ սարերը: Դրենդան բացահայտում է այս ճշմարտությունը և տալիս գործնական, աստվածաշնչյան բանալիներ այսօր ապրելու համար:

Այս գրքում այնքան շատ նյութ կա, որ խելամիտ կլինեն կարդալ այն, այնուհետև կրկին կարդալ:

– Հովիվ Փիթեր Մորթոկ, «Սիթի իմփեքթ» միջազգային եկեղեցիների հիմնադիր և ավագ հովիվ

Իմ կարծիքով այս մոլորակի վրա չկա մեկը, ով իմ մայրիկի՝ Դրենդա Կիսիի չափ հոգ է տանում արդարության խթանման համար և օգնում, որ ապրեք մի կյանքով, որը հիմնված է Աստծո Խոսքի վրա: Նա մշտապես ջերմեռանդորեն օգնել և շարունակում է օգնել մարդկանց իրենց հավատքի, ազատության, առողջության և ընտանիքի ասպարեզներում: Իր մինչ օրս ամենահանդուգն և համապարփակ գրքում նա անդրադառնում է այն ստերին, որոնք սատանան փորձել է հրամցնել մարդկանց, միաժամանակ բերում է Աստծո ճշմար-

ՊԱՅՔԱՐԻՐ ԻՆՉՊԵՍ ԵՐԿԻՆՔԸ

տությունները՝ լույս սփռելու համար: Նրա մարգարեական ձայնը և խորաթափանցությունը կրորբոքեն ձեր համարձակությունը՝ տալով քաջություն և գործնական պատասխաններ այսօր մեր առջև ծառայած դժվարին խնդիրներին:

Ինչը կարող է ավելի լավ լինել, քան «լուսավորվելու պահ» վերապրելը այն ոլորտում, որտեղ դուք պայքարում եք: Ես գիտեմ, որ այս գրքում բազմաթիվ այդպիսի պահեր կունենաք: Դուք չեք կարողանա այն վայր դնել. ես չկարողացա:

– Էմի Կիսի Ֆրեդիգեր, «Բժշկված մեկ գիշերում» և «30-օրյա բժշկության համարձակություն» գրքերի հեղինակ

Դրենդա Կիսին համարձակորեն և հմտորեն բանեցնում է Հոգու սուրը՝ «Պայքարի՛ր ինչպես երկինքը» գրքում դեմառդեմ կանգնելով սատանային: Ունենալով խոր, նույնիսկ գիտական հասկացողություն ներկա իրադարձությունների, համաշխարհային պատմության և սահմանադրական իրավունքի մասին՝ Դրենդան հորդորում է ամերիկյան եկեղեցուն արթնանալ, վերադարձնել իր կառավարությունը, պաշտպանել Աստծուց տրված իր իրավունքները և հակառակվել սատանայի քաղաքական գաղտնի ծրագրերին, որին նա դիպուկ բնութագրում է որպես «առաջին բռնակալի»: Այս գիրքը պարտադիր պետք է կարդա յուրաքանչյուր քրիստոնյա, որը պատրաստակամ է պայքարելու խավարի իշխանությունների և չարի հոգևոր ուժերի դեմ, բայց չգիտի, թե ինչպես: Քրիստոսի՝ փորձված և ստուգված զինվորների համար այս գիրքը կթեժացնի հավատքի պատերազմը Աստծո Թագավորության համար մինչև Հիսուսի վերադարձը:

– Ամանդա Փրեբըլ Լենհարթ, փաստաբան

Ինչպես Ջոն Ադամսն է ասել, «փաստերը համառ են, և ինչպիսին էլ լինեն մեր ցանկությունները, հակումները կամ մեր կրքերի թելադրանքը, դրանք չեն կարող փոխել իրերի և ապացույցների փաստացի վիճակը»: Ինչ Դրենդան ներկայացնում է «Պայքարի՛ր ինչպես երկինքը» գրքում, անհերքելի փաստեր են, որքան էլ դժվար լինի

դրանք ընդունել, կամ որքան էլ անհավատալի դրանք թվան: Այս փաստերն անտեսելը հիմարություն է և վտանգավոր: Հավատալը, որ դրանք գոյություն չունեն, մանկամտություն է և ինքնակործանում: Վաղուց ժամանակն է հասկանալու և ընդունելու մեր ապրելակերպին սպառնացող վտանգները: Մենք պետք է ընդունենք այն ուժերին հետ մղելու մարտահրավերը, որոնք ցանկանում են ոչնչացնել Մեսիայի արյունով ստացած մեր ազատությունը: Դա նշանակում է, որ մենք պետք է հետ մղենք այնտեղ, որտեղ կարող ենք, երբ կարող ենք և ինչպես կարող ենք: Այս գիրքը տալիս է մեզ գործնական միջոցներ, որոնք անհրաժեշտ են դա անելու համար:

– Դանիել Զ. Փիլա, հարկային վեճերով փաստաբան և
«Աղ ու լույս. ամերիկյան մշակույթի
վերականգնման գաղտնիքը» գրքի հեղինակ


Սուրբ գիրքը հրաշալի պատում է այն մասին, թե ինչպես Աստծո ժողովուրդն ականջ դրեց Թագավորության համար մեծ գործեր անելու կոչին պատմության ամենախավար պահերին: «Պայքարիր ինչպես երկինքը» գրքում Դրենդա Կիսին այս սերնդին փոխանցում է ներշնչող և գործնական ուղերձ՝ չհոգնելու բարիք անելուց և լինելու ուժեղ ու խիզախ՝ անկախ նրանից, թե որքան խավար կարող են թվալ իրավիճակները: Կասկած չկա, որ քրիստոնյաները բախվում են չտեսնված չարիքի և մարտահրավերների, բայց «Պայքարիր ինչպես երկինքը» գիրքը հիշեցում է մեզ, որ Քրիստոսի հաղթանակը չի եղել և երբեք էլ չի լինի հարցականի տակ: Միակ հարցը սա է. «Արդյո՞ք կներգրավվենք պատերազմի մեջ՝ կանգնելով Նրա կողքին»:

– Էրոն Բեր, «Քրիստոնեական արժեքների կենտրոն» կազմակերպության նախագահ (CCV.org)

Աստծո ժամանակի հաշվարկն ամեն ինչ է: «Պայքարիր ինչպես երկինքը» գիրքը չէր կարող լույս տեսնել ավելի լավ ժամանակ, քան այն ժամանակ, որի մեջ Ամերիկյան հայտնվել է: Հեղինակը չի

ՊԱՅՔԱՐԻՐ ԻՆՉՊԵՍ ԵՐԿԻՆՔԸ

խուսափում մեր ժամանակի հրատապ խնդիրները քննարկելուց՝ միաժամանակ ընթերցողին տալով աստվածաշնչյան լուծումներ այդ խնդիրներին: Առաջին էջից մինչև վերջին էջը դուք չեք կարողանա վայր դնել գիրքը: Դուք կարող եք զգալ Տիրոջ օծությունն այս գրքի էջերում:

– Թոնդա Մուր, փաստաբան 

Fight Like Heaven. A Cultural Guide to Living on Guard

Copyright © 2024 by Drenda Keesee.

ISBN: 978-1-945930-95-9

Drenda Keesee Ministries

P.O. Box 647

New Albany, OH 43054

1-(877)-894-3848

You can reach Drenda Keesee Ministries on the Internet at www.drenda.com.

All rights reserved under International Copyright Law.

Contents and/or cover may not be reproduced in whole or in part in any form without the express written consent of the Publisher.

«Պայքարի՞ր ինչպես երկինքը. մշակութային ուղեցույց արթուն ապրելու համար»

Հեղինակային իրավունք © 2024 Դրենդա Կիսի

ISBN: 978-1-945930-95-9

Դրենդա Կիսիի ծառայություն

Փ/Ա 647

Նյու Ալբանի, Օհայո 43054

1-(877)-894-3848

Դուք կարող եք կապ հաստատել Դրենդա Կիսիի ծառայության հետ համացանցով www.drenda.com կայքում:

Բոլոր իրավունքները պաշտպանված են Միջազգային հեղինակային իրավունքով: Բովանդակությունը և/կամ կազմը չեն կարող վերարտադրվել ամբողջությամբ կամ մասամբ որևէ ձևով՝ առանց հրատարակչի գրավոր թույլտվության:

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, հատուկ նշումների դեպքում՝ անգլերեն «Նոր միջազգային թարգմանությունից» (NIV), «Նոր կենդանի թարգմանությունից» (NLT), «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB), «Նոր Քինգ Ջեյմս տարբերակից» (NKJV), «Ընդլայնված Աստվածաշնչից» (AMP), «Ժամանակակից անգլերեն տարբերակից» (MEV) և «Անգլերեն ստանդարտ տարբերակից» (ESV):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԱՌԱՋԱԲԱՆ.....	15
ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	19
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ.....	21
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՄԱԳԼՅԻՐ ՍԱՐԸ	23
ԳԼՈՒԽ 1 ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է	27
ԳԼՈՒԽ 2 ԿՐՈՆԱԿԱՆ ԱՏԵՐՆ ԱՄԵՆԱՎԱՏՆ ԵՆ.....	41
ԳԼՈՒԽ 3 ԵՐԿՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	63
ԳԼՈՒԽ 4 ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՅՈՐԹ ՍԱՐԵՐԸ	79
ԳԼՈՒԽ 5 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞ՒՄ ԵՍ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	91
ԳԼՈՒԽ 6 ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.....	99
ԳԼՈՒԽ 7 ՅՈՐԹ ՍԱՐԵՐԸ՝ ԱՊԱԿԱՆՎԱԾ ԽԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ	109
ԳԼՈՒԽ 8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ	137
ԳԼՈՒԽ 9 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ.....	153
ԳԼՈՒԽ 10 ԴԵՂԱՄԻՋՈՅՆԵՐ, ՇԱՀՈՒՅԹ ԵՎ ՎԱԽ	165
ԳԼՈՒԽ 11 ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ	181
ԳԼՈՒԽ 12 ԿՐԹՎԵԼ՝ ՈՒՍՈՒՑՉԻՆ ՆՄԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ	189
ԳԼՈՒԽ 13 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ. ԱՎԵԼԻ ԼԱՎ ՃԱՆԱՊԱՐՀ	209
ԳԼՈՒԽ 14 ԽԵԼԱԳԱՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	225
ԳԼՈՒԽ 15 ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	237
ԳԼՈՒԽ 16 ՄԵԴԻԱ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	249
ԳԼՈՒԽ 17 ՄՏԱԾԵԼ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ	271
ԳԼՈՒԽ 18 ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԿՈՒՄ.....	283
ԳԼՈՒԽ 19 ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ԵՐԱԶԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔ	289
ԳԼՈՒԽ 20 ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՋ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՈՒՄ	303
ԳԼՈՒԽ 21 ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ	315
ԳԼՈՒԽ 22 ԱՊՐԵԼ ԱՐԹՈՒՆ.....	329
ԳԼՈՒԽ 23 ՆՎԱՃԻՐ ՍԱՐԸ	349

ԱՌԱՋԱԲԱՆ



Հարգելի Դրենդա Կիսի, Աստծո կին, հավատքի կին, ճշմարտության կին, Քրիստոսի մարմնի ընկեր և հոգևոր մայր Աստծո ընտանիքում: Դուք գերազանցել եք իմ ակնկալիքները այս նոր՝ «Պայքարի՛ր ինչպես երկինքը» գրքով: Դուք բարձրացել եք սարի լանջից՝ որպես մեկը Քրիստոսի մարմնում, ով քաջալերում և հավատք է կերտում, և հասել եք սարի գագաթին որպես մարգարեուհի, որ հռչակում է Տիրոջ Խոսքը: Ձեր ծայնը, անկասկած, որոտի պես կինչի անհոգ քրիստոնեական աշխարհի սրահներում:

Ինչպես ժամանակակից, կարգված և օժված դպիր՝ դուք վերցրել եք տեղեկատվության հսկայական զանգված, խտացրել եք այն՝ ավելի հեշտ յուրացնելու համար, փաթեթավորել եք հայտնություններով, ներշնչման ներքո համակարգել և փոխանցել, որպեսզի կերպարանափոխում բերեք նրանց կյանքում, ովքեր կընդունեն ձեր խիստ անհրաժեշտ, Աստծուց ներշնչված գաղափարները: Ես տեսնում եմ այս գիրքը ինչպես հրկիզող վառելիքի տուփ, որը բացվելուն պես կբռնկվի և անմիջապես կսկսի կլանել նրանց վառվող սրտերը, ովքեր սիրում են ճշմարտությունը:

Ես խոր ցանկություն եմ ունեցել գիրք գրելու նույն թեմայով, բայց դուք այնքան վարպետորեն եք դա արել՝ միաձուլելով այս բոլոր տարբեր, սակայն մեծապես իրար հետ կապված մասերը, որ այլևս հարկ չկա դա անելու: Ես պարզապես կտարածեմ ձեր գիրքը և կանեմ դա եռանդուն կերպով, որպեսզի նրանք կարողանան «հաստատվել» ոչ միայն պատմական ճշմարտության, այլև «ներկա ճշմարտության» մեջ, ինչպես հորդորեց Պետրոս առաքյալը (Բ Պետրոս 1.12):

Սա ժամանակի հանդեպ զգայուն նյութ է: Մենք հնարավորությունների փոքր պատուհան ունենք: Գլոբալիստական, սատանայական ծրագիրը կարող է խափանվել, բայց միայն արթուն և ջերմեռանդ եկեղեցու կողմից: Դեռ ավելին, այն պետք է լինի համախմբված եկեղեցի՝ զինված այնպիսի գիտությամբ, որը չի կարող զոհ գնալ ժամանակի խաբեությանը: Նույնիսկ Աստված դժգոհեց. «Իմ ժողովուրդը բնաջինջ եղավ գիտություն չլինելու

համար» (Ովսեե 4.6): Դուք դեղամիջոց եք այս երկրնտրանքի համար և, պետք է ասեմ, մեծ գլխացավանք նրանց համար, ովքեր ցանկանում են, որ մարդիկ քնած մնան իրենց անտեղյակության մեջ: Եվ շատ ավելի, քան գլխացավանք. ինչպես Յայելը վրանի ցիցը դրեց քնած Սիսարայի քիմքին և խիզախորեն գամեց այն գետնին՝ վերջ տալով Աստծո թշնամու կյանքին, այնպես էլ դուք մեխ եք դրել ճշմարտության ժամանակակից թշնամիների քիմքին, որոնց անհրաժեշտ էր բացահայտել: Ես ողջունում եմ այս գիրքը ստեղծելու ձեր համառությունը և այն հրատարակելու ձեր խիզախությունը:

– Մայք Շրիվ, տեխնիկական գիտությունների բակալավր, բժշկական գիտությունների դոկտոր, ավետարանիչ և արթնության գործիչ, «Ճշմարիտ լույս» նախագծի հիմնադիր և 15, այդ թվում՝ 3 հանրաճանաչ՝ «65 խոստում Աստուծոց քո երեխայի համար», «Հզոր աղոթքներ գերբնական արդյունքների համար» և «25 հզոր խոստումներ Աստուծոց» գրքերի հեղինակ: www.shreveministries.org/
www.thetrueLight.net



**«ԵՎ ԼՈՒՅՍԸ ԽԱՎԱՐՈՒՄ
ԼՈՒՅՍ ԷՐ ՏԱԼԻՍ, ԻՍԿ ԽԱՎԱՐԸ
ՊԱՐԶԱՊԵՍ ԱՆԿԱՐՈՂ ԷՐ
ՀԱՂԹԵԼ ՆՐԱՆ, ԿՈՒԼ ՏԱԼ ՆՐԱՆ,
ԽԵՂԴԵԼ ՆՐԱՆ ԿԱՄ ԳԵՐԻՇԽԵԼ
ՆՐԱՆ»:**

(ՀՈՎՀԱՆՆԵՍ 1.5)

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ



Մի եղեք անտեղյակ...

Երեսուն և ավելի տարիներ ծառայելով անհատներին աշխարհով մեկ՝ ես տեսել եմ, թե ինչպես է Աստծո Խոսքի զորությունը հրաշալի և անհավանական կերպով փոխում կյանքեր: Մեծագույն հուսախաբությունը վերապրել եմ այն գիտակցումից, որ շատ խնդիրներ, ցավեր և նույնիսկ հիվանդություններ տարածվել են չարագույժ ծրագրերի օգնությամբ դրվող թակարդների միջոցով, որոնց նպատակն է կոտրել, հիվանդացնել, կախվածության մեջ գցել մարդկանց: Մենք կսխալվենք, եթե չմտածենք գաղտնի ծրագրերի ազդեցության մասին, որոնք մարդկանց գցել են սատանայի ծուղակներն ու թակարդները:

Բ Կորնթացիների 2.11-ն (NIV) ասում է. «Որ սատանան խորամանկությամբ չգերազանցի մեզ, որովհետև նրա գաղտնի ծրագրերին անտեղյակ չենք»:

Եթե չենք ցանկանում, որ սատանան խորամանկությամբ գերազանցի մեզ, պետք է տեղյակ լինենք, թե ինչպես են երկրային համակարգերը հաստատվել ազդեցության և ներգործության բոլոր ոլորտներում՝ նպատակ ունենալով գողանալու մարդկանցից այն առատության կյանքը, որը Հիսուսը եկավ նրանց տալու: Բժշկությունից մինչև ֆինանսներ, կառավարություն, ժամանց, մեդիա և նույնիսկ կրոն՝ թշնամին իր համախոհների միջոցով դրել է թակարդներ՝ մարդկանց վնասելու, ընտանիքները քայքայելու և նրանց խաղաղությունը, մատակարարումը և բժշկությունը խլելու համար:

Այս մշակութային ուղեցույցում ես բացահայտում եմ այն գաղտնի ծրագրերը, որոնք ծուղակն են գցում մարդկանց: Ցավոք, դրանք հիմնականում նպատակաուղղված են և մեծ վիշտ են պատճառում՝ անկախ նրանից՝ ընտանիքներին պարտքի մեջ են գցում, թե քրոնիկական հիվանդություն առաջացնում: Ավան-

դույթները և համոզմունքները՝ ճշմարիտ թե սուտ, ունեն ազդեցություն, եթե մարդը հավատում է, որ դրանք ճիշտ են: Ես չեմ ասում, թե բոլոր մարդիկ, որոնք աշխատում են այս ոլորտներում, ունեն վատ դրդապատճառներ. նրանք չունեն, բայց ինչ-որ մեկը նրանցից վեր՝ երկնավորներում, ունի:

Մի անգամ ես հանդիպեցի մի բժշկի, որն ասաց. «Ես գիտեմ, թե որքան մարդ պետք է մտնի իմ դռնով, որպեսզի ես ապրուստի միջոցներ վաստակեմ, և քանի վիրահատություն պետք է անեմ, որ հիանալի կյանք ունենամ»: Սա բիզնես է: Մենք միամիտ ենք՝ կարծելով, թե բոլորը մտածում են մեր շահերի մասին: Մենք չենք կարող ապրել ո՛չ միամտությամբ, որովհետև սատանան «մոնչում է՝ որոնելով, թե որին կուլ տա», ո՛չ էլ վախով՝ մտածելով, թե բոլորն ընկած են մեր հետևից: Մենք չպետք է անտեղյակ լինենք գաղտնի ծրագրերին և պետք է մտածենք, աղոթենք, ուսումնասիրենք և ստանանք պատասխաններ: Այս գիրքը կօգնի բացահայտելու մշակույթում առկա գաղտնի ծրագրերը և այն պատասխանները, որ Աստված ունի այն մարդկանց համար, որոնց Նա սիրով ստեղծեց:

Թեև մենք գիտենք, որ Հիսուսն արդեն հաղթել է պատերազմում, Ա Կորնթացիների 16.13-ը մեզ հորդորում է. *«Արթուն եղեք, հաստատ կացեք հավատքում...»:*

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ



*«Իշխանությունը շարացնելուն և խաղաղությանը վերջ
չկա, Դավթի աթոռի վրա և նրա թագավորության վրա, որ
նրան հաստատի և պնդացնի նրան իրավունքով և արդա-
րությունով հիմնկվանից մինչև հավիտյան: Հորաց Տիրոջ
նախանձը պիտի անի այս»:*

– Եսայի 9.7

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ընտանիքիս, ըն-
կերներիս և գործընկերներիս, որոնք ավարտին հասցրին այս
աշխատանքը: Տիրոջ բանակը Նրա Հոգու թելադրանքով արել է
ավելին, քան ես կարող էի խնդրել, մտածել կամ պատկերացնել:
Նրա զորությունը գործում է ձեր մեջ: Դուք մշտապես ջանք եք
արել որ արթնացնեք Աստծո ժողովրդին պատերազմի այս ժամի
համար և ցույց տաք, թե ինչպես կարող է հաղթանակ ունենալ
Նրանում: Դուք գիտեք, թե ով եք դուք, և ես գնահատում ու սի-
րում եմ ձեզ ավելի, քան բառերով կարող եմ արտահայտել:

Եվ հատուկ շնորհակալություն իմ Տիրոջը և Փրկչին՝ Հիսուս
Քրիստոսին, և իմ ամուսնուն՝ Գարիին, որ քաջալերեց ինձ՝ ասե-
լով՝ այր:

– Դրենդա Կիսի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՄԱԳԼՅԻՐ ՍԱՐԸ



Դրենդա, ինչ էիր մտածում:

Ես ցավից ջղաձգվեցի, երբ մարմնիցս մի փայտիկ հանեցի: Ուժասպառ էի, ամբողջովին թրջված, և աջ ոտքս արյունահոսում էր ճյուղի չափ փոքր բացվածքից: Սա ամենևին այն չէր, ինչ ծրագրել էի: Հետ նայեցի ցեխոտված ամուսնուս. նա սպասում էր, որ հասկանար, թե որ ճանապարհն է ամենաանվտանգը: Խելացի մարդ: Ես ընտրության երկու հնարավորություն ունեի: Թաց քարերը կամ մեծ գերանը միակ միջոցն էին, որ ծառայում էին մեզ որպես կամուրջ՝ անցնելու վարարուն գետակը, որ մեր և սարի գագաթի միջև էր. այն սարի, որ որոշել էի բարձրանալ:

Ես կատարեցի սխալ ընտրություն:

Սարերն ունեն հոգևոր համատեքստ ամբողջ Սուրբ գրքում և կյանքում: Դրանք նշանակում են հետևողականություն, ներշնչանք, հոգևոր արթնություն և արգելքների հաղթահարում:

Կախված եղանակից՝ սարերը և օվկիանոսներն իմ սիրելի առանձնավայրերն են: Օվկիանոսները՝ ձմռանը, սարերը՝ ամռանը՝ վեհաշուք, անողորկ, վայրի և անզուսպ, հատկապես փոթորկոտ եղանակին: Հրաշալի եղանակ էր, երբ սկսեցինք ճանապարհորդությունը: Դա էր պատճառը, որ ես պնդեցի՝ շարունակենք, ինչի համար հետագայում զղջացի:

Ամռանը մեքենայով սարեր ելնելը և օրվա տապից վեր բարձրանալն ու թարմ, նոսր օդը շնչելը, արահետներով քայլելը, վայրի ծաղիկներին և տունդրային նայելը թարմացնում են հոգիս: Սարերը միշտ գրավել և հիացրել են ինձ: Ես անցել եմ ամենագեղեցիկ լեռնային տեսարաններով և բարձրացել զարմանահրաշ լեռնային արահետներով, լինի խորդուբորդ ժայռոտ լեռներում թե կղզիացած ջունգլիներում:

Այս անգամ այլ էր: Մենք ստանձնել էինք ավելին, քան կարող էինք: Գարին գիտեք դա: Ես գիտեի դա: Բայց միակ բանը, որ կարող էինք անել, համառորեն առաջ շարժվելն էր: Վերջին հաշվով նախկինում էլ եղել էինք դժվար իրավիճակներում:

Մեծ մասամբ, երբ սար եմ մագլցել, անպատրաստ եմ եղել՝ սխալ հագուստով և պարագաներով: Շատ հաճախ դա եղել է իմ ծրագրված,

հանպատրաստից: Ամառային մարզահագուստով և «Մայքլ քորս» ապրանքանիշի թենիսի կոշիկներով տեսքս ավելի համապատասխան էր գավառային ակումբի, քան խորդուբորդ վերելքի համար:

Ես բարձրացա և շարունակեցի քայլել թաց քարերի միջով, որոնք քիչ առաջ հանել էին ինձ հավասարակշռությունից:

Գրեթե հասել ենք:

Ուժասպառ եղած՝ մտքով վերադարձա նախորդ վերելքներին: Քենըքը սարի վրա կշտամբեցի Գարիին, որ սկսի վերելքը. «Եկ այնքան հեռու գնանք, որ տեսարան բացվի»: Շատ չանցած՝ ասացի. «Եկ պարզապես մի փոքր առաջ գնանք»: Աչքս չթարթած՝ արդեն այնքան մոտ էինք գագաթին, որ անհիմն կլինեք վերելքն ընդհատելը: Մենք հասանք գագաթին, և արժեր դա անել: Սա նույնպես արժի:

Կյանքն այդպիսին է: Պարզապես կանգ մի՛ առ:

Ահա մենք կրկին այստեղ ենք. պատմությունը կրկնվում է: Կառույի կղզու Նա Պալի ափին գտնվող Կալալաուն, անկասկած, դժվարհաղթահարելի արահետ էր: Զբոսայգու պահակը մեզ զգուշացրեց. «Ավելի հեռու չգնաք: Դուք պատրաստված չեք և չեք հաղթահարի այն»: Ես գնահատեցի նրա զգուշացումը, բայց, անկեղծ ասած, ավելի շատ այն ընդունեցի որպես առաջարկ: Նկատի ունեմ՝ նա չգիտեր, թե ինչի էի ես ընդունակ: Լինելով իմ դասարանում հաջողության հասնելու ամենահավանական թեկնածուն՝ իմ մեջ ձևավորվել էր «դու կարող ես» վերաբերմունք, և ես չէի պատրաստվում նահանջելու: Դա միայն մարտահրավեր էր ինձ: Ես գիտեմ, որ կան վտանգներ իշխանություններին չհնազանդվելու մեջ, և նայելով ոտքերիս՝ այդ վտանգները չափազանց իրական էին: Պարզապես ինչ-որ բան կա սարի մեջ, որ աղաչում է բարձրանալ, կամ արկած, որ սպասում է քեզ: Երբ հասանք գետին, հանդիպեցինք վտանգի և մահվան մասին նախազգուշացնող ցուցանակների: Այս գետը մեր և բարձունքի միջև էր, այնպես որ, մենք չէինք պատրաստվում կանգ առնելու: Սա այն վայրն էր, որտեղ անհաջողություն ունեցա, վայրը, որտեղ ես ընկա:

Դրենդա, ինչ էիր մտածում:

Ինձ հավաքեցի, և մենք անցանք վարար գետը՝ ի զարմանս մեծ մասամբ հավայացի երիտասարդների, որոնք լողում էին լեռան գագաթին գտնվող գեղեցիկ ավազանում և ջրվեժում: Մենք կարողացանք: Մենք շատ ավելի տարեց արշավորդներ էինք, քան որևէ մեկը երբևէ կենթադրեր: Երկար չմնացինք, բայց մինչև հիմա հիշում եմ գագաթին հասնելու զգացողությունը: Ջրվեժները փառահեղ տեսք ունեին: Երիտասարդների ապշած դեմքերն ամեն ինչ ասում էին. մենք դժվարին սխրանք գործեցինք: Մենք նվաճեցինք

սարը: Գլխավերևում փչող քամին և ներքևում բացված տեսարանը մազլցելուն արժանի վարձքն էին: Լեռնագագաթից մենք նոր տեսանկյուն ձեռք բերեցինք: Դա փոխեց մեզ:

Երբ վերջապես վերադարձանք ավտոկայանատեղի և ազահաբար խմեցինք երկու կոկոսի հյութ՝ գրեթե ուժասպառ եղած, ես գիտակցեցի սարերի կարևորությունը և դրանք մազլցելու իմ կարիքը: Ինչ-որ բան կա սարի մեջ, որ աղաչում է մազլցել, որովհետև մենք ստեղծված ենք դրանք մազլցելու համար:

Իսկ ի՞նչ, եթե ձեզ ասեմ, որ կան սարեր, որոնք այնքան կարևոր են բարձրանալու համար, որ մեր կյանքը բառացիորեն կախված է դրանից:

Իսկ ի՞նչ, եթե ձեզ ասեմ, որ կա ազդեցության յուրաքանչյուր ոլորտում գերիշխելու ծրագիր, որի նպատակն է մղել մեզ դեպի այն օրակարգը, որը կապշեցնի ձեզ:

Կան ազդեցության յոթ սարեր, որոնք վերահսկում են մեզ շրջապատող աշխարհը: Ով կանգնած է այդ սարերի գագաթին, ուղղորդում է մեր աշխարհի ընթացքը: Ես կապացուցեմ դա ձեզ:

Ազդեցության մշակութային սարերն են՝ կառավարություն/քաղաքականություն, տնտեսություն/բիզնես, առողջապահություն/բժշկություն, կրթություն, մեդիա/ժամանց, կրոն և ընտանիք, որոնք ունեն իրենց մարտահրավերները՝ մազլցելու և տիրելու համար: Դրանք անվտանգ չեն, և եկեղեցական աշխարհի մեծ մասը խույս է տվել, նույնիսկ վախեցել է ազդեցության այս արկածային, բայց երբեմն նենգ ոլորտները մտնելուց: Հետ կանգնելով ճանապարհորդությունից՝ նրանք ենթարկվել են մեկ այլ ազդեցության: Եվ ցավոք, ովքեր խիզախել են մազլցել, անպատրաստ են եղել և ջախջախվել են հոսանքից, ջերմային հարվածից կամ ծարավից: Կա միայն երկու թագավորություն՝ Աստծո Թագավորությունը և սատանայի թագավորությունը: Եթե Աստծո ժողովուրդը չի խիզախում դուրս գալ արշավանքի, մենք այն լռելյայն հանձնում ենք մեր հակառակորդին:

Երբ այս գրքի համար ուսումնասիրություններ էի անում, որպեսզի ավելին իմանայի մեր մշակույթում ազդեցության յոթ սարերի մասին, ես հայտնաբերեցի ցնցող տեղեկություն, որը ստիպեց ինձ ավելի խոր գիտակցել այն ժամանակը, որում մենք ապրում ենք...

Որտեղ ենք մենք պատմության ժամանակի սանդղակում, և մի՞թե սա վերջն է:

Ո՞րն է այս ժամանակում ձեր այստեղ լինելու նպատակը, և ի՞նչ կարող եք դուք անել:

Մեր հակառակորդն այս ոլորտներում թակարդներ է դրել, որպեսզի տապալի մարդկանց, ստիպի նրանց սայթաքել և հայտնվել կործանման, քառսի ու անկարգության մեջ՝ վերջին հաշվով խլելով նրանց ապագան և նախասահմանությունը: Մենք պետք է իմանանք, թե որոնք են մեր հանձնարարությունները, և ինչպես ճանապարհ ընկնենք՝ նայելով նրանց, ովքեր տեսել են վտանգները և ծանոթ են տարածքին: Մենք պետք է ներգրավվենք:

Ազդեցության սարերը մերձենում են ժամանակների վախճանի համար, և դուք հավիտյան ազդեցություն պետք է ունենաք դրանց վրա:

Սարերը վտանգավոր են որոշակի պայմաններում, բայց եթե մենք գիտենք ճանապարհը և թե

ինչպես անցնենք այն, ճամփորդություն կատարելու բավականությունն արժե այդ ամենին: Տեսարանը, ճամփորդությունը, մարդիկ, որոնց հանդիպում ենք, և սարերը, որ նվաճում ենք, լիովին արժեն մեր ջանքերին:

Հիսուսն այլաբանորեն խոսեց սարերի մասին՝ որպես արգելքների, որոնք պետք է հաղթահարել: Եթե որևէ մեկն ասի այս սարին. «Վեր կաց և ծովը գցվիր, և իր սրտում չերկմտի, կլինի նրան»: Ճանապարհին կան արգելքներ, բայց մյուսը ամենևին էլ տարբերակ չէ՝ հարմարավետորեն մնալ կայանատեղիում՝ պարզապես նայելով կամ ոչինչ չանելով և թույլ տալով, որ հակառակորդն իր դրոշը կանգնեցնի այն տարածքում, որն Աստված ասում է, որ պատկանում է մեզ:

Մշակույթը չի կործանվի, եթե Աստծո ժողովուրդը չհրաժարվի դրանում ներգրավվելուց, մագլցողների ուշադրությունը գրավելու համար մարտավարություն մշակելուց: Ավտոկայանատեղիից բացվում է մռայլ տեսարան: Ժամանակն է դուրս գալու մեքենայից և ճամփա ընկնելու: Եթե ընտրեք, կունենաք հաջողություն այն սարում, որն Աստված տվել է ձեզ՝ տիրելու համար, և կգրավեք մյուսների ուշադրությունը: Աստված հաջողությամբ կպսակի ձեր ճանապարհը, և դուք կդառնաք այն օրինակը, որ փնտրում են ուրիշները: Թույլ տվեք լինել ձեր ուղեցույցը: Շատերը կքայլեն այս ճանապարհով, և դուք կարող եք օգնել նրանց կյանքի ճիշտ պատասխաններով, որ կողմնորոշվեն ծանր և բարդ իրավիճակներում, որոնք ստիպում են նրանց հրաժարվել իրենց ամուսնությունից, ընտանիքից, առողջությունից, հավատքից կամ աշխատանքից: Կան սարեր, և այս գիրքը կնախապատրաստի ձեզ ճամփա ընկնելու և նվաճելու ձեր սարը:



ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է



Ժամանակն է պայքարելու և նվաճելու ազդեցության սարերը:

«Միջնադարյան ժամանակներ» գվարճալի երեկոյի ժամանակ, որի ընթացքում ասպետները մենամարտում են թագավորությունների միջև ընթացող ֆեոդալական պայքարում, ես հիշեցի, որ պատմության ընթացքում միշտ եղել է մրցապայքար վերահսկողության, կառավարելու իշխանության համար: Ո՞վ կամ ի՞նչը կկառավարի: Առաջին համաշխարհային պատերազմի ծախողումից հետո առավել «քաղաքակիրթ» աշխարհում Երկրորդ համաշխարհային պատերազմի աղետալի սերմերը ցանվեցին Ադոլֆ Հիտլեր անունով մի երիտասարդի մեջ: Եթե չլիներ հրաշք, ինչպես նաև մարդկանց ուժգին դիմադրությունը, որոնք գնահատում էին ազատությունն այնքան, որ պատրաստ էին անձնական զոհաբերության, աշխարհին տիրելու Հիտլերի մոլագար ծրագիրը կկործաներ Եվրոպան, եթե ոչ աշխարհը:

Այսօր մենք ականատես ենք լինում, թե ինչպես են Երկրորդ համաշխարհային պատերազմի սերմերը ծլարձակում: 1971 թվականին Գերմանիայից Կլաուս Շվաբ անունով մի անձնավորություն հիմնադրեց այն, ինչն այսօր հայտնի է որպես Համաշխարհային տնտեսական ֆորում (ՀՏՖ): ՀՏՖ-ն հիմնադրվեց որպես ոչ առևտրային կազմակերպություն՝ Կառավարման եվրոպական ֆորում (ԿԵՖ) անվանմամբ, որն առաջատար գործարարների հրավիրեց ամենամյա համաժողովի, որպեսզի մշակվի ռազմավարություն, թե ինչպես եվրոպացի առաջնորդները կարող են

նմանակել Միացյալ Նահանգներում գործարարության մեթոդները: Ներգրավելով միջազգային գործարար և քաղաքական առաջնորդների՝ 1976 թվականին ԿԵՖ-ը անդամակցություն ապահովեց աշխարհի 1000 առաջատար ընկերությունների համար: Ըստ էության՝ այն դարձավ առաջին ոչ պետական հաստատությունը, որը նախաձեռնեց համագործակցություն Չինաստանի տնտեսական զարգացման հանձնաժողովների հետ: 1987 թվականին ԿԵՖ-ը վերանվանվեց «Համաշխարհային տնտեսական ֆորում»:
2015 թվականին ֆորումը պաշտոնապես ճանաչվեց միջազգային կազմակերպություն:

ՀՏՖ-ի անորոշ առաքելությունն է «ի նպաստ հանրային շահի ցուցադրել ձեռներեցություն՝ հիմնված շահագրգիռ կողմերի տեսության վրա, որը հաստատում է, որ կազմակերպությունը հաշվետու է հասարակության բոլոր շերտերին»:
Ֆորումի փիլիսոփայությունը կարելի է գտնել «2020 թվականի Դավոսի հռչակագրում», որը նախատեսում էր «կապիտալիզմի ավելի լավ տեսակ»:

Համաձայն ՀՏՖ-ի հռչակագրի՝ «ընկերությունն ավելին է, քան հարստություն ստեղծող տնտեսական միավոր: Այն իրականացնում է մարդկային և հասարակական ձգտումները որպես ավելի լայն հասարակական համակարգի մաս: Արդյունավետությունը պետք է չափվի ոչ միայն բաժնետերերի շահութաբերությամբ, այլև այն բանով, թե ինչպես է ընկերությունը հասնում բնապահպանական, հասարակական և հմուտ կառավարման իր նպատակներին»:
ՀՏՖ-ի ռազմավարական գործընկերներն են աշխարհի առաջատար ընկերությունները, որոնցից յուրաքանչյուրն ընտրված է աշխարհի վիճակը բարելավելու իր նվիրվածության համար: Դրանց թվում են «Ամազոն»-ը, «Բլեքֆոք»-ը, «Դել» տեխնոլոգիաները, «Գուգլ»-ը, «ՋԻ»-ն, «Ինթել»-ը, «Մետա»-ն, «Մայքրոսոֆթ»-ը, «Ջոնսոն ընդ Ջոնսոն»-ը, «Փֆայզեր»-ը, «ՓեյՓալ»-ը, «ՅուԲիԷս»-ը և «Վիզա»-ն: Սրանք ընդամենը մի քանիսն են:

Քովիդ-19 համավարակի ժամանակ ՀՏՖ-ն Շվաբի միջոցով ներգրավվեց համաշխարհային գործերի մեջ՝ հայտարարելով. «Ավելի լավ արդյունքի հասնելու համար աշխարհը պետք է գործի համատեղ և արագ՝ թարմացնելով մեր հասարակության և տնտեսության բոլոր ուղղությունները՝ կրթությունից մինչև հասարակական պայմանագրեր և աշխատանքային պայմաններ:

Յուրաքանչյուր երկիր՝ Միացյալ Նահանգներից մինչև Չինաստան, պետք է մասնակցի, և յուրաքանչյուր արդյունաբերություն՝ նավթից ու գազից մինչև տեխնոլոգիաներ, պետք է վերափոխվի: Մի խոսքով՝ մեզ անհրաժեշտ է կապիտալիզմի «Մեծ վերագործարկում»»: Շվաբն այնուհետև պնդեց, որ «աստիճանական միջոցառումները և մասնագիտական շտկումները բավարար չեն լինի այս սցենարը կանխելու համար»՝ ավելացնելով. «Մենք պետք է կառուցենք բոլորովին նոր հիմքեր մեր տնտեսական և հասարակական համակարգերի համար»: Կլաուսն ամփոփում է «Մեծ վերագործարկումը»՝ հայտարարելով, որ «համավարակը ներկայացնում է հնարավորության հազվադեպ, բայց նեղ պատուհան՝ արտացոլելու, վերաիմաստավորելու և վերագործարկելու մեր աշխարհը: Դուք ոչինչ չեք ունենա, և դուք երջանիկ կլինեք»:

Շվաբը նույնիսկ գիրք է գրել «Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն» վերնագրով, որտեղ նա հաստատում է մի շարք նոր տեխնոլոգիաների առաջընթացման անհրաժեշտությունը, որոնք միաձուլում են ֆիզիկական, թվային և կենսաբանական աշխարհները՝ ազդելով գիտության և տնտեսության բոլոր ճյուղերի վրա և նույնիսկ կասկածի ենթարկելով այն գաղափարները, թե ինչ է նշանակում լինել մարդկային արարած: Հարցազրույցների ժամանակ Կլաուսը բազմիցս նշել է, որ «չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը տարբերվում է նրանով, որ չի փոխում այն, ինչ դուք անում եք, այլ փոխում է ձեզ: Եթե որպես օրինակ վերցնեք գենետիկական խմբագրումը, ապա փոխվում եք դուք, և, իհարկե, սա մեծ ազդեցություն է թողնում ձեր ինքնության վրա»:

Կլաուսի դիրքորոշումը հաստատվում է ՀՏՖ-ի հայտարարությամբ, որ չորրորդ արդյունաբերական հեղափոխության ժամանակ գեների խմբագրման նոր միջոցները, ամենայն հավանականությամբ, կգերազանցեն կենսաբանական էվոլյուցիան:

ՀՏՖ-ի «Մեծ վերագործարկման» խելաթյուրված ծրագիրը, որը ներառում է տրանսհումանիզմը, հավանաբար լավագույնս ձևակերպել է Շվաբի անփոխարինելի օգնական և ՀՏՖ խորհրդատու Յուվալ Նոա Հարարին: Սա այն անձնավորությունն է, որին խորապես պատվել և նույնիսկ որպես «մարգարե» են բնութագրել Շվաբը, Մարկ Յուկենբերգը, Բիլ Գեյթսը, Հարվարդի համալսարանը, Սթենֆորդի համալսարանը և «Նյու Յորք Թայմս» օրաթերթը:

Հարարին ելույթներով հանդես է գալիս ՀՏՖ-ում, Սթենֆորդի համալսարանում, «ԹԵԴ» և «Թայմս» զրույց-հաղորդումներում: Մի ժամանակ նրա գրքերը գլխավորում էին միաժամանակ «Նյու Յորք Թայմս»-ի փաստագրական գրականության ամենավաճառվող գրքերի ցանկի առաջին երկու հորիզոնականները:

Ես երբեք չէի կարողանա ներկայացնել այն աշխարհի պատկերը, որը Հարարին նկարագրում է, ուստի թույլ կտամ, որ նրա բառերն իրենք խոսեն: Քովիդ-19 համավարակի վերաբերյալ Հարարին հայտարարել է.

- «Ինչ է տեղի ունենում հիմա: Սա (Քովիդ-ի ճգնաժամը) իսկապես ջրբաժան է վերահսկողության պատմության մեջ: Նախևառաջ մենք տեսնում ենք, թե ինչպես են զանգվածային վերահսկողության համակարգեր ներմուծվում և ընդունվում դեմոկրատական երկրներում, որոնք նախկինում դիմադրում էին դրանց: Երկրորդ՝ մենք տեսնում ենք, թե ինչպես է վերահսկողության բնույթը փոխվում մակերեսայինից ավելի խորքայինի: Մակերեսայինն այն է, երբ, ասենք, կառավարությունը կամ խոշոր ընկերությունը հետևում է, մշտադիտարկում, թե ուր եք գնում, ինչ գնումներ եք կատարում, ինչ եք դիտում հեռուստատեսությամբ: Խորքային վերահսկողությունը սկսվում է ձեր մարմնի ջերմաստիճանը և արյան ճնշումը մշտադիտարկելուց, սակայն, վերջին հաշվով, այն վերաբերում է ձեր մարմին և ուղեղ ներխուժելուն և իմանալուն, թե ինչ եք զգում ամեն րոպե. խոսքը ոչ միայն ցավի կամ հազի, այլև հույզերի մասին է:
- Գուցե մի քանի տասնամյակ հետո, երբ մարդիկ հետ նայեն, Քովիդ-ի ճգնաժամից կհիշեն այն, որ դա մի պահ էր, երբ ամեն բան դարձավ թվային, և ամեն բան դարձավ մշտադիտարկելի, երբ մենք համաձայնեցինք հսկողության ենթարկվել ամեն ժամանակ, ոչ միայն իշխանատիրական (ավտորիտար) վարչակարգերում, այլև նույնիսկ ժողովրդավարական (դեմոկրատական) հասարակարգերում: Եվ հավանաբար ամենակարևորն այս ամենում այն է, որ այդ պահից սկսվեց խորքային վերահսկողությունը:
- Ընդամենը երկու շաբաթ պահանջվեց վիրուսի ճիշտ հաջորդականությունը, նրա ամբողջական գենոմը պարզելու

և հուսալի թեստեր մշակելու համար: Այնպես որ, մենք իսկապես ավելի լավ վիճակում ենք, քան նախկինում: Մենք ունենք գիտական գիտելիքներ: Այն, ինչ անհրաժեշտ է, բայց չունենք, քաղաքական իմաստությունն է՝ մեր հսկայական ուժն օգտագործելու համար: Գուցե բոլորի մեծագույն խնդիրը միջազգային համագործակցության և համաշխարհային համերաշխության բացակայությունն է: Ես այնքան էլ չեմ վախենում վիրուսից: Ես ավելի շատ վախենում եմ մարդկության ներսի դևերից»:

Աստծո Անձի վերաբերյալ Հարարին հայտարարել է.

- «Մենք հրաժարվում ենք աստվածներից, բայց ինքներս մեզ կվերածենք նոր տեսակի աստվածների:
- Այն, որ Հիսուս Քրիստոսը մեռելներից հարություն է առել և Աստծո Որդի է, կեղծ լուր է:
- Գիտությունը բնական ընտրությամբ էվոլյուցիան փոխարինում է բանական մտահղացմամբ էվոլյուցիայի, բայց ոչ թե ամպերից վեր գտնվող ինչ-որ Աստծո բանական մտահղացմամբ, այլ մեր բանական մտահղացմամբ և մեր ամպային տեխնոլոգիաների բանական մտահղացմամբ: «Այբիէմ»-ի ամպային տեխնոլոգիաները, «Մայքրոսոֆթ»-ի ամպային տեխնոլոգիաները էվոլյուցիայի նոր շարժիչ ուժերն են»:

Նկատի առեք, թե ինչպես է Հարարին վերաբերվում մարդկանց.

- «Մարդիկ այժմ «կոտրվող» կենդանիներ են:
- Դուք գիտեք, որ մարդիկ ունեն շունչ կամ հոգի և ունեն ազատ կամք, և ոչ ոք չգիտի, թե ինչ է կատարվում իմ ներսում: Ինչ ես ընտրում եմ, լինի դա ընտրություններում թե հանրախանութում, իմ ազատ կամքն է: Դա այդպես է:
- Այսօր մենք ունենք տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս զանգվածաբար «կոտրել» մարդ արարածներին կամ «ներխուժել» նրանց մեջ: Ամեն ինչ թվայնացվում է. ամեն ինչ մշտադիտարկվում է:

- 21-րդ դարում մենք կարող ենք տեսնել, թե ինչպես է ի հայտ գալիս անպիտան մարդկանց նոր ստվար խավ. մարդիկ, որոնք բացարձակապես չունեն տնտեսական ոչ մի արժեք:
- Դուք ունեք փոքրաթիվ ընտրախավ, որն իր շահերն է հետապնդում, նույնիսկ եթե դա շահավետ չէ բնակչության ճնշող մեծամասնության համար, ... այսօր մոլորակի խոշոր վտանգներից մեկը այս տեխնոլոգիական ուտոպիան է, որովհետև գուցե ընտրախավի համար այն կգործի, (բայց)... երբ ջրհեղեղը սկսվի, գիտնականները կկառուցեն նոյյան տապան ընտրախավի համար՝ թողնելով, որ մնացածը՝ մյուս մարդիկ և մնացած էկոհամակարգը, խորտակվեն:
- Տվյալները կարող են թույլ տալ ընտրախավերին անել ավելի արմատական բան, քան պարզապես թվային բռնապետություններ կառուցելը: Ներխուժելով օրգանիզմներ՝ ընտրախավերը կարող են ձեռք բերել իշխանություն՝ վերանախագծելու կյանքի ապագան: Որովհետև երբ դուք կարողանում եք ներխուժել ինչ-որ բանի մեջ, սովորաբար կարողանում եք նաև նախագծել այն:
- Եթե մենք իսկապես հաջողություն ունենանք կյանքի մեջ ներխուժելու և այն նախագծելու գործում, սա չի լինի պարզապես մարդկության պատմության ամենամեծ հեղափոխությունը: Սա կլինի ամենամեծ հեղափոխությունը կենսաբանության մեջ չորս միլիարդ տարվա ընթացքում՝ կյանքի սկզբնավորման պահից մինչև հիմա:
- Իմ ԴՆԹ-ի, ուղեղի, մարմնի, կյանքի վերաբերյալ տվյալները պատկանում են ինձ, թե՛ ինչ-որ խոշոր ընկերության կամ կառավարության կամ գուցե մարդկային խմբի:
- Դուք չունեք որևէ պատասխան Աստվածաշնչում այն մասին, թե ինչ պետք է անել, երբ մարդիկ այլևս պիտանի չեն տնտեսության մեջ: Դուք կարիք ունեք բոլորովին նոր տեխնոլոգիաների, նոր կրոնների, և հավանաբար դրանք ի հայտ կգան Սիլիկոնային հովտից և ոչ թե Մերձավոր Արևելքից: Եվ դրանք կտան մարդկանց տեսիլքներ՝ հիմնված տեխնոլոգիայի վրա, կտան այն ամենը, ինչ հին կրոնները խոստանում էին՝ երջանկություն, արդարադատություն և նույնիսկ հավիտենական կյանք, բայց այստեղ՝ երկրի վրա, տեխնոլո-

գիայի օգնությամբ, այլ ոչ թե մահից հետո՝ ինչ-որ գերբնական էակի օգնությամբ»:

Հարարին հայտնում է անմահության վերաբերյալ իր տեսակետները.

- «Հարկ չկա, որ մենք սպասենք Հիսուս Քրիստոսին, որպեսզի Նա վերադառնա Երկիր՝ հաղթելու մահվանը: Լաբորատորիայում մի քանի շեղված մարդիկ կարող են անել դա:
- Նույնիսկ Լենինն ու Մարքսն իրենց ամբողջ փառասիրությամբ երբեք չգնացին այնքան հեռու, որ մարդկանց անմահություն խոստանային ... այո՛, դրախտ երկրի վրա, սակայն, վերջին հաշվով, նույնիսկ սոցիալիստական համակարգում դուք մահանում եք: Եվ նրանք իրենց բերանները փակ պահեցին այն հարցում, թե ինչ է տեղի ունենում մահվանից հետո: Բայց նոր կրոնները, որոնք տեսնում ենք, որ ի հայտ են գալիս Սիլիկոնային հովտում և նման վայրերում ամբողջ աշխարհում, նույնիսկ խոստանում են անմահություն այստեղ՝ Երկրի վրա, տեխնոլոգիայի օգնությամբ: Օրինակ՝ 2-3 տարի առաջ «Գուգլ»-ը հիմնեց «Կալիկո» անվամբ դուստր ընկերություն, որի առաքելությունն է լուծել մահվան խնդիրը»:

Ցավոք, Հարարին մենակ չէ իր հայացքներում կամ ՀՏՖ-ին հավատարմության մեջ: ՀՏՖ-ն հիմնադրելուց հետո Շվաբն ավելի ուշ իր «Համաշխարհային (գլոբալ) երիտասարդ առաջնորդներ» խմբի (ստեղծվել է 1993 թ. որպես «Համաշխարհային առաջնորդներ վաղվա համար») միջոցով հավաքագրեց, գաղափարապես ուսուցանեց և վերապատրաստեց մի խումբ առաջնորդների աշխարհով մեկ: Այս առաջնորդներին պատրաստեցին դիրքեր զբաղեցնելու և իրենց սրի՝ իրենց տիրոջ սրի ուժը գործածելու համար:

Համաշխարհային երիտասարդ առաջնորդների (ՀԵԱ) և նրանց ՀՏՖ նախորդների և գործընկերների անուններն այսօր քաջաձանոթ են համաշխարհային ասպարեզում. Վլադիմիր Պուտին (Ռուսաստան), Բիլ Գեյթս («Մայքրոսոֆթ»), Ջասթին Թրուդո (Կանադա), Անգելա Մերկեր (Գերմանիա), Նախագահ Էմանուել Մակրոն (Ֆրանսիա), նահանգապետ Գևին Նյուսոմ (Կալիֆոռնիա, համաշխարհային հինգերորդ ամենախոշոր

տնտեսությամբ), Թոնի Բլեյր (Անգլիա), վարչապետ Ջասինդա Արդեռն (Նոր Ջելանդիա) և մի շարք պետական պաշտոնյաներ ու քաղաքական գործիչներ, որոնք առաջնորդում են աշխարհի երկրների և քաղաքականությունների մեծ մասը:

Սրանց ավելացրեք սոցցանցերի մագնատներին, հայտնի մարդկանց, գիտնականներին, առաջատար գործարարներին և մեդիա ներկայացուցիչներին, որոնցից են՝ Ջորջ Ստեֆանուպոլյուս (հեռուստալրագրող), Լեոնարդո ԴիԿապրիո (դերասան/բնապահպանական ակտիվիստ), Մարկ Յուկերբերգ («Ֆեյսբուք»/«Ինստագրամ»/«Մետա»), Շերիլ Սենդերբերգ («Ֆեյսբուք»-ի գործառնական տնօրեն), Մարիսսա Մեյեր («Յահու»), Սերգեյ Բրին և Լարի Փեյջ («Գուգլ»-ի համահիմնադիրներ), Փիթեր Թիեյ («ՓեյՓայլ»-ի համահիմնադիր), Պիեռ Օմիդյար («Իբեյ»-ի համահիմնադիր), Ջիմի Ուելչ («Վիքիպեդիա»-ի համահիմնադիր), Էրիկ Շմիդտ («Գուգլ»-ի նախկին գործադիր տնօրեն և Արիեստական բանականության հարցերով ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահ), Ջեֆ Բեզոս («Ամազոն»), Ջեկ Մա («Ալիքսա»), Ալեքսանդր Սորոս (Ջորջ Սորոսի որդին, որն ավելի քան 32 միլիոն դոլար է նվիրաբերել «Բաց սահմաններին»՝ հաջակցություն ազատական և առաջադեմ նպատակներին), Դավիթ դե Ռոտշիլդ և, իհարկե, շատ ուրիշներ:

Համաշխարհային երիտասարդ առաջնորդների տեսիլքը և առաքելությունը հետևյալն են. «Համաշխարհային երիտասարդ առաջնորդների ֆորումը խթանում է պատասխանատու առաջնորդների բազմազան համայնքների ազդեցությունը սահմաններից և ոլորտներից դուրս՝ ավելի ներառական և կայուն ապագա կառուցելու համար»: Կազմակերպությունը շարունակում է՝ նշելով. «Մենք խթանում ենք համագործակցությունը համաշխարհային հանրային շահի շրջանակում: Մեր անդամների թիվն աճում է՝ ավելի քան 1,400 անդամ և շրջանավարտ 120 ազգությունից, այդ թվում՝ քաղաքացիական և գործարար ոլորտի նորարարներ, ձեռներեցներ, տեխնոլոգիական ոլորտի առաջամարտիկներ, մանկավարժներ, ակտիվիստներ, արվեստագետներ, լրագրողներ և այլն: Համաշխարհային տնտեսական ֆորումի առաքելությանը համահունչ՝ մենք ձգտում ենք խթանելու հանրային-մասնավոր համագործակցությունը ի նպաստ համաշխարհային հանրային շահի»:

Վերջին երկու տասնամյակում մենք տեսել ենք, թե ինչպես է

նրանց դաշինքը թափանցում կյանքի բոլոր ոլորտներ, որպեսզի գերիշխանություն ձեռք բերի համաշխարհային ասպարեզում՝ հսկայական իշխանություն զավթելով: Նրանք ոտք են դրել ազդեցության բոլոր յոթ ոլորտները՝ ընտանիքի, կառավարության, եկեղեցու, կրթության, մեդիայի, մշակույթի, առողջապահության յոթ սարերը, և հիմա խախտում և ստեղծում են կանոններ, որոնք կարծես ունեն ավելի մեծ իշխանություն, քան պետությունները, սահմանադրությունները և կառավարությունները: Քաղաքացիներն ու հավատացյալները, անգործության մատնված, տագնապով հետևում են, թե ինչպես են նրանք մարդկանցից խլում խոսքի ազատությունը, ինքնարտահայտումը, դավանանքի կիրառումը, սեփական մարմինը վերահսկելու իրավունքը, առողջապահական որոշումները և երեխաների կրթությունը և իրենց ցասման սուրն ուղղում դեպի Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն և Մեծ վերագործարկում՝ Նոր աշխարհակարգ:

Մարդկային գեները խմբագրվում են: Գնաճը 40 տարվա պատմության մեջ հասել է առավելագույնին: Դպրոցներում երեխաներին գաղափարապես ներշնչում են, որ ընդունեն իրենց սեռականությունը որոշելու «գենդերային» նախատիպը տասնյակ «նոր տարբերակների» շարքում: Ընտանիքը և ամուսնությունը վերասահմանվել են և գրեթե ամբողջությամբ մերժվել: Քրիստոնեությունը և այն, ինչը եղել է կյանքի նորմ, դարձել են թշնամի, նույնը վերաբերում է անգլո-ամերիկյան ծագման մարդկանց:

Յուրաքանչյուրը, ով հայտնվում է նրանց ճանապարհին, ենթարկվում է ճնշման ապատեղեկատվական արշավների կամ հասարակական գրաքննության միջոցով: Նրանց պիտակավորում են «մոլեռանդ», «ռասիստ», «կնատյաց» և «դատապարտող» այլ բառերով, որոնք մշակվել են իշխանությունը զավթելու քարոզարշավում ընտրախափի փայլուն մարքեթինգի շնորհիվ: Շատերը, որոնք դեմ են այս դրույթին, իրավամբ կարծում են, որ համաշխարհային ռազմավարության ծրագրերն ուղղակիորեն վերցված են մարքսիստական ուղեցույցից: Ով համարձակվում է չհամաձայնել նրանց օրակարգին, որը նախատեսված է թերևս իրենց իսկ պատկերով ստեղծված նոր աշխարհակարգի համար, թշնամի է իրենց «բաց սահմանների ազատ հասարակությանը»:

Ընդհանուր և բարձրագույն կրթության, այսպես կոչված, առաջադեմ ներկայացուցիչներն օգտագործել են իրենց ազդեցույթ-

յունը, որպեսզի ցանեն տարածայնության սերմեր՝ ժողովրդավարական սկզբունքները և ազգային հավատարմությունը փոխարինելով մեկ համաշխարհային գաղափարախոսությամբ, ստեղծեն բաժանում ազգությունների և սեռերի միջև և նպաստեն տնտեսական և սոցիալական դասակարգային սրված պայքարին: Նրանց նպատակն է մեծացնել տարբերությունները և հնարել «նոր ու կատարելագործված» սեռական ինքնություններ՝ որպես ինքնության քաղաքականության և անհատականության պայքարի հիմք: Վեճերն ու բաժանումները բավական են, որ բոլորը շարունակեն պայքարել միմյանց դեմ, իսկ այդ ընթացքում նրանք արագորեն առաջ են տանում իրենց օրակարգը՝ աննկատ շատերի կողմից:

Ավանդական ընտանիքի ոչնչացումը հարձակման թիվ մեկ ուղղությունն է. վերացվում է ընտանիքում երեխաներին հսկող ծնողների պաշտպանական ուժը: Լիարժեք ընտանիքը ցանկացած հասարակության կամ պետության ուժն է, իսկ նրա բացակայությունը՝ անկումը: Ինչպիսին ընտանիքն է, այնպիսին էլ պետությունն է: Ընտանիքի թուլանալով՝ թուլացել են նաև ժողովրդավարական կառավարությունները: Կրթությունը բռնագրավվել է հակաաստվածային, հակաընտանեկան գաղափարախոսություններով և օգտագործվել է երեխաներին ու բուհերի ուսանողներին որոշակի գաղափարներ ներարկելու համար: Ժամանցը և արվեստն արտացոլում են բարոյական այլասերվածությունը, որը մեղքը ներկայացնում է որպես ազատություն, իսկ «ինքնությունն ուսումնասիրելու» եսակենտրոն ձգտումները՝ որպես բավականություն: Սոցցանցերի տիրակալները գրաքննության են ենթարկում ցանկացած հաղորդագրություն, որը չի համապատասխանում իրենց գաղափարական դիրքորոշումներին, և թելադրում են իրենց օրակարգը՝ լվանալով սերունդների ուղեղները և թույլ չտալով, որ որևէ մեկը խույս տա իրենց կրթական համակարգի քարոզչությունից:

Շատ եկեղեցիներ թողել են Հիսուսի վարդապետությունը և Աստծո Թագավորության սկզբունքները հանուն հոգեբանության և աշխարհի ընդունելության: Շատերը փակել են իրենց դռները Քովիդ-ի կամ հաջորդ ավտաճին մանրէի կամ էլ կենսալաբորատորիայում ստեղծված հիվանդության վախից, քանի որ դեղագործական ընկերությունները և պետական կառույցները սահ-

մանափակում են ազատությունը և հարկադրաբար վաճառում իրենց արտադրանքը «Արամ սա, այլապես կմահանաս» և «Արամ սա, այլապես չես կարողանա ընտանիքիդ համար ապրուստ վաստակել» կարգախոսներով:

Մինչ նվաճվում են ազդեցության յոթ սարերը, փխրուն աշխարհը ճոճվում է փլուզման եզրին, և նրան փոխարինելու է շտապում Նոր աշխարհակարգը՝ Մեծ վերագործարկմամբ, որի նպատակն է վերահսկել տնտեսությունը կամ որևէ այլ բան, որն օգտագործվում է Աստծո՝ մեր Արարչի առջև ազատությունը, ժողովրդավարությունը և ինքնավարությունը փոխարինելու համար: Կառավարությունը ցանկանում է դառնալ Աստված, ինչպես «այն մեկը (սատանան)», որպեսզի ներգործություն ունենա իր կողմից վերահսկվող քառսի վրա և ստեղծի Նոր աշխարհակարգ: Սա կրկին Բաբելոնի աշտարակի օրինակն է, և նրանք բացահայտորեն փորձում են նմանվել Աստծուն և վեր բարձրանալ Նրա գրության Խոսքից:

«Ինչպես վայր ընկար երկնքից, ո՛վ Արուսյակ, առավոտվա որդի. ինչպես կտրվեցիր՝ գեպինն ընկար, ո՛վ ազգեր թուլացնող: Բայց ինքդ ասել էիր քո սրտում. «Վեր կելնեմ երկինքը, Աստծո աստվածներից բարձր կդնեմ իմ աթոռը, կնստեմ ժողովի սարի վրա՝ հյուսիսի ծայրերում: Վեր կելնեմ ամպերի բարձրությունների վրա, Բարձրյալին կնմանվեմ»:

Բայց դու դժոխքն ես իջնելու, գուբի խորխորապները: Քեզ տեսնողներն աչքները հառած նայելու են քեզ և զննելու են քեզ՝ ասելով. «Սա նա՛ է, որ ստիպում էր երկրին դողալ, որ ցնցում էր թագավորությունները, որ աշխարհն անապատ էր դարձնում և նրա քաղաքները ավերակ էր անում...»:

– Եսայի 14.12-16 (NKJV)

Մենք կարող ենք տեսնել, թե ինչպես է այս «անապատը» թափառում, քանի որ երես ենք թեքել Աստծո արժեքներից: Ամբողջ երկրում քաղաքները լցված են հանցագործություններով, թմրանյութերով հեղեղված մարդկային աղբահորերով: Երեկոյան լուրերով տեսնում ենք, թե ինչպես են այրվում մեր քաղաքները, և լսում անօրինականության ինքնավար գոտիների մասին,

որոնք հոչակվել են ոգևորված երիտասարդների կողմից, որոնց մասամբ ֆինանսավորում են աշխարհը կազմաքանդողները: Նրանք ունեն ծրագիր՝ փլուզելու այն ամենը, ինչ գոյություն է ունեցել, հասարակության հիմքերն ու սյուները, որպեսզի հաստատեն իրենց նոր ծրագրերը: Ձեզ դուր չեն գա այս ծրագրերը, եթե իմանաք նրանց վերջնական նպատակը:

Հակաքրիստոսի ոգին ներխուժել է կյանքի և մշակույթի «յոթ սարերը», և մենք կարող ենք տեսնել այն կործանումը և ցավը, որ հետևանք են Նրա Թագավորության պատվիրաններին և ապրելակերպին չհնազանդվելու: Այս ամենը դիտելը կարող է վիատեցնել, բայց մենք պետք է կենտրոնացած մնանք սպասվող պատասխանների և հաղթանակների վրա, որոնք հիմնված են Աստծո Խոսքի վրա:

Մենք պետք է սովորենք պայքարել ինչպես երկինքը և հեռացնենք դժոխքը մեր ապրելակերպից, մեր կառավարությունից, մեր երեխաների կրթությունից և մեր եկեղեցիներից:

Ինչպե՞ս վարենք այս վերջին պատերազմը և ճիշտ որոշումներ կայացնենք մեր ընտանիքների, մեր ազատության, մեր երկրի և Ավետարանի համար: Հնարավոր է, արդյոք, որպես հավատացյալ, ոտքի կանգնել և կռվել Աստծո դեմ մղվող այս պատերազմում

Մենք պատերազմի մեջ ենք մշակութային, հոգևոր և անձնական ռազմաճակատներում:

Եվ թեև այս դարաշրջանի մարդկանց համար խաղաղությունները բարձր են, հաղթանակն արդեն որոշվել է:

Յուրաքանչյուր անհատ ինքն է որոշում, թե որ կողմի համար կպայքարի և ում կողքին կկանգնի՝ Աստծո՞, թե՞ Գոգի:

և գտնել խաղաղություն ու մատակարարում այս աշխարհի քաոսային համակարգերից վեր: Ես բարձրաձայն ասում եմ՝ այո: Ինչպե՞ս մասնակցենք այս պատերազմին երկնային տիրույթներում՝ միաժամանակ երկրի վրա ունենալով ազդեցություն յոթ ոլորտներում (սարերի վրա):

Մենք պատերազմի մեջ ենք մշակութային, հոգևոր և անձնական

ռազմաճակատներում: Եվ թեև այս դարաշրջանի մարդկանց համար խաղաղությունները բարձր են, հաղթանակն արդեն որոշվել է:

Յուրաքանչյուր անհատ ինքն է որոշում, թե որ կողմի համար կայաքարի և ում կողքին կկանգնի՝ Աստծո՞, թե՞ Գոգի:

Արդյո՞ք մենք ապրում ենք վերջին օրերում: Յուրաքանչյուր նշան աղաղակում է՝ այո՞: «Բայց մի՞թե տարիներ շարունակ չենք լսել այս պատմությունները», - կասեն կամ նույնիսկ կծաղրեն ոմանք: Ծիծաղելի է, որ այս հարցը կարող ենք տեսնել Սուրբ գրքում: Սա նորութունն է: Հին կտակարանում՝ Երեմիայի 17.15-ում. մարդիկ ծաղրում էին Երեմիային, և նա ասաց Աստծուն. «Ահա նրանք ինձ ասում են. «Ո՞ր է Տիրոջ խոսքը, թող մեկ գա»»: Եվ այն կատարվեց ճիշտ այնպես, ինչպես Երեմիան զգուշացրել էր: Նրանք, ովքեր ականջ դրեցին, նախապատրաստվեցին և հոգածություն ստացան Աստծուց: Նրանք, ովքեր չլսեցին, կործանվեցին: Աշխարհը և, որ ավելի կարևոր է, մարդիկ դժվարին իրավիճակում են: Միայն երկինքն ունի պատասխան: Եվ մինչև չսովորենք պայքարել երկնքի պես, երբեք չենք հեռացնի դժոխքը: Միայն երկու կողմ կա: Կայաքարե՞ք: Ուզեք թե չուզեք, դուք արդեն միացել եք պայքարին:

**Եվ մինչև չսովորենք պայքարել երկնքի պես, երբեք չենք հեռացնի դժոխքը:
Միայն երկու կողմ կա:
Կայաքարե՞ք: Ուզեք թե չուզեք, դուք արդեն միացել եք պայքարին:**



ԿՐՈՆԱԿԱՆ ՍՏԵՐՆ ԱՄԵՆԱՎԱՏՆ ԵՆ



Կիրակնօրյա պարզ առավոտ էր 40 անդամից բաղկացած մեր փոքրիկ եկեղեցու համար: Մենք երիտասարդ էինք և լցված Աստծո հանդեպ ջերմեռանդությամբ ու տեսիլքով: Մենք տեսել էինք, թե ինչ անհավանական բաներ էր Նա արել մեր անձնական կյանքում: Իմ ամուսինը՝ Գարին, սկսում էր Աստծո Թագավորության մասին ուսուցումը, երբ հանկարծ այս դեպքը պատահեց:

Ես նայեցի ծախ՝ լսելով արտառոց մի աղմուկ: Ի զարմանս ինձ՝ տեսա մեր եկեղեցի հաճախող մի կնոջ: Նա փորձում էր բարձրացնել զգեստը, և նրա հայացքից հասկացա, որ նա անում էր դա ոչ կամովին: Հոգիս առաջ մղվեց՝ հակառակվելու դիվային ներկայությանը, որը դրսևորվեց, երբ նա սահեց հատակին: Երբ ձեռքս մեկնեցի նրան, առաջին բառերը, որ շուրթերիցս դուրս եկան, հետևյալն էին. «Ես կապում եմ քեզ, Հիսուսի անունով»: Դիվային ներկայությունը կծկվեց ցավից՝ բախվելով Կենդանի Աստծո զորությանը: Պիղծ ոգին խոսեց կնոջ ձայնով՝ փորձելով վերադարձնել նրա կյանքի վրա ունեցած իշխանությունը:

– Նա իմն է:

Գարին իմ կողքին էր, և երկուսս էլ ձեռքներս դրեցինք նրա վրա ու կապեցինք դիվային ոգուն: Կնոջ մարմինը պողպատի պես կարծրացավ, և թվաց, թե նա ինքն իրեն հրում է վեր՝ գրեթե օդ բարձրանալով: Դա բոլորովին անբնական էր: Աստծո Հոգին ավելի ուժեղ բորբոքեց իմ ներսը, երբ ես կրկին հակառակվեցի նրան տանջող ոգուն:

– Նա քոնը չէ: Նա ազատ է, Հիսուսի անունով:

Կինը մի քանի անգամ հազաց, թեթևակի շարժվեց, և նրա մարմինը թուլացավ, հանգստացավ: Երբ բացեց աչքերը, ես տեսա, թե ինչպես վերադարձավ նրա դեմքի հաճելի արտահայտությունը, որը նա մշտապես ունեւր: Նա ազատ էր:

Այդ կիրակնօրյա ծառայությունը սովորական չէր, բայց շատ առումներով այս հականարտությունը նորություն չէր Աստծո Ռթագավորությունում: Հենց սկզբից էլ սատանան մշտապես հետապնդել է մարդկանց: Վերջին հաշվով, Հիսուսը բազմաթիվ դիվային ոգիների քշեց Երկրի վրա եղած ժամանակ: Նա ասաց, որ նույնը մենք պետք է անենք:

Վերջերս ուսումնասիրում էի մեր հակառակորդի կազմակերպված եկեղեցին, երբ մի մտահոգիչ բացահայտում արեցի. սատանան ունի ծրագիր: 1990-ականներին արված տեսագրությունը սատանայի եկեղեցու ստոիկ ներկայացուցչի ձայնն ավելի ու ավելի չարագուշակ էր դարձնում մի հարցազրույցի ժամանակ, որին մասնակցում էր ավետարանիչ Բոբ Լարսոնը: Այդ մարդու ձայնը սահմռկեցուցիչ էր, բայց առավել ուշագրավ էր այն, ինչ նա ասաց: Երբ նրան հարցրին, թե արդյոք Հիտլերը սխալ էր միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու հարցում, նա պարզապես պատասխանեց. «Ո՛չ, չկա սխալ կամ ճիշտ»: Բոբ Լարսոնը, որ նստած էր նրա դիմաց, ավելի խոր թափանցեց՝ տալով նրան երկրորդ հարցը հոգեկան հիվանդների կամ հաշմանդանների նկատմամբ սատանայի եկեղեցու դիրքորոշման վերաբերյալ: Նրա պատասխանը կտրուկ էր: «Սատանայի եկեղեցին թույլ զանգվածների համար չէ: Այն ընտրախավի, աշխարհի առաջնորդների համար է... Եկեղեցին (քրիստոնեական) կարող է պահել թույլերին»:

Արդարացի զայրույթ բարձրացավ ներսումս, երբ լսեցի նրա ձայնը: Այս մարդը, որի մի ականջը չկար, և հագնված էր ամբողջովին սև, գործածվում էր սատանայի կողմից, ու թեև ես ցանկանում էի ոտքի կանգնել և բղավել էկրանին, միևնույն ժամանակ լցվեցի կարեկցանքով: Ահա նստած է մի մարդ, որը չունի ճշմարիտ պատկերացում լույսի կամ սիրո մասին: Նրա կյանքը, ինչպես շատ ուրիշ կյանքեր, որ գործածվում են սատանայի կող-

մից, կավարտվի կործանմամբ, եթե չապաշխարի: Ես պատմում եմ այս ամենը, որպեսզի բացեմ ձեր աչքերը և սրտերը այն իրական պատերազմի համար, որ մոլեգնում է ամեն օր մարդկանց սրտերի ու մտքերի համար: Եդեմի պարտեզից սկսած՝ սատանան քրտնաջան աշխատում է, որ կանգնեցնի այն, ինչ Աստված գործի է դրել: Աստված գործածում է մարդկանց, և նույնն անում է մեր հակառակորդը:

Պատմության ընթացքում մենք կարող ենք տեսնել մարդկության անկումը՝ Նոյի սերնդի անկումից մինչև յուրաքանչյուր կայսրության անկումը: Երկար ժամանակ չէր անցել ջրհեղեղից, երբ մարդիկ գաղտնաբար համաձայնեցին կառուցել Բաբելոնի աշտարակը: Պողոս առաքյալի օրոք հունահռոմեական աշխարհում տաճարները նվիրված էին Իսիդա և Սերապիս աստվածներին (եգիպտական Օսիրիս և Ափիս աստվածների և հունական Զևսի ու մյուս աստվածների միախառնումը):

Ստելու լավագույն միջոցը սուտը ճշմարտության տարրի հետ խառնելն է: Կրոնը և գաղտնի հասարակությունները պատմության ընթացքում հենց դա էլ արել են: Կրոնը մարդու փորձն է՝ ստեղծելու իր ճանապարհը Աստծուն հասնելու համար, և սա լավագույնս կարելի է տեսնել Բաբելոնի աշտարակաշինությունում: Աստվածաշնչում Բաբելոնի աշտարակը մի շինություն էր, որ կառուցվել էր Սենաար երկրում (Բաբելոն) համաաշխարհային ջրհեղեղից հետո: Նրա կառուցման պատմությունը, որ նկարագրված է Ծննդոց 11.1-9-ում, բացատրում է մարդկային բազմազան լեզուների գոյությունը: Եբրայերենում օգտագործվում է «Սինար» բառը: Եբրայերեն «ܫܢܝܐ Šin‘ar»-ը համարժեք է եգիպտերեն «Sngꜣr» և խեթական «Šanḫar(a)» բառերին, որոնք բոլորն էլ վերաբերում են հարավային Միջագետքին:

Ծննդոց գրքում ասվում է, որ Նեբրովթի թագավորության սկիզբը «Բաբիլոնը և Արեքը և Աքադը և Քադանեն էր՝ Սենաար երկրում»: Ծննդոց 11.2-ը նշում է, որ Սենաարը այն հարթավայրի շրջակայքն էր, որը Մեծ ջրհեղեղից հետո դարձավ Բաբելոնի աշտարակի վայրը: Զրհեղեղից հետո Սեմի, Քամի և Հաբեթի որդիները սկզբում մնացին Հայկական լեռնաշխարհում, այնուհետև տեղափոխվեցին Սենաար: Հոբելյանների գրքի 9.3-րդ խոսքում Սենաարը հատկացվում է Աշուրին՝ Սեմի որդուն: Հոբելյանների

10.20-ում նշվում է, որ Բաբելոնի աշտարակը կառուցվեց Սենաարի ծովից բերված բիտումով (ասֆալտ): Դեյվիդ Ռոլը տեսականորեն մտածում էր, որ աշտարակն իրականում տեղակայված է եղել Էրիդուում, որը ժամանակին Պարսից ծոցի ափին էր, որտեղ կան բիտումից մշակված հսկայական, հնագույն զիկկուրատի ավերակներ:

Ծանոց 11-ը հայտնում է այս պատմությունը.

«Եվ բոլոր երկիրը մեկ լեզու և մեկ խոսվածք էր: Եվ եղավ, երբ որ նրանք արևելքից չվեցին, Սենաար երկրում մի դաշտ գտան և այնտեղ բնակվեցին:

Եվ իրար ասացին. «Եկե՛ք աղյուսներ շինենք և կրակով այրենք»: Եվ աղյուսները նրանց համար քարի տեղ եղան, և կուպրը նրանց համար եղավ ցեխի տեղ: Եվ ասացին. «Եկե՛ք մեզ համար մի քաղաք շինենք և մի աշտարակ, և նրա գլուխը մինչև երկինքը լինի, և մեզ համար անուն ստանանք, որպեսզի չցրվենք բոլոր երկրի երեսի վրա»:

Եվ Եհովան իջավ մարդկանց որդիների շինած քաղաքը և աշտարակը տեսնելու: Եվ Եհովան ասաց. «Ահա մեկ ազգ է և մեկ լեզու նրանց ամենի համար, և ահա սկսեցին շինել, և հիմա նրանց համար դժվար չի լինի, ինչ որ խորհեցին շինելու: Եկե՛ք իջնենք և այնտեղ նրանց լեզուն խառնակենք, որ իրար լեզու չհասկանան»:

Եվ Եհովան այնտեղից նրանց ցրեց բոլոր երկրի երեսի վրա, և քաղաքը շինելուց դադարեցին: Դրա համար նրա անունը Բաբելոն կոչվեց, որովհետև Եհովան այնտեղ խառնակեց բոլոր երկրի լեզուն: Եհովան նրանց ցրեց այն տեղից բոլոր երկրի երեսի վրա»:

– Ծանոց 11.1-9

«...Մեզ համար անուն ստանանք»: Նրանց մտադրությունն էր համախմբվել և մարտահրավեր նետել Աստծուն՝ կառուցելով

բացահայտ անհնազանդության աշտարակ: Այլաբանորեն թե ոչ՝ այս աշտարակը ներկայացնում էր իշխելու, Բարձրյալին նմանվելու նրանց ցանկությունը, ինչպես Արուսյակն ասաց. «Բարձրյալին կնմանվեմ»: Միավորված ազգերի կազմակերպության շենքը Մանհեթենում, որի մասին կքննարկվի ավելի ուշ՝ երրորդ գլխում, աշխարհի իրադարձությունները վերահսկելու մարդու կամքի խորհրդանիշ է, ինչպես Բաբելոնի աշտարակը, և նպատակ ունի կյանքի սարերից հեռացնելու Աստծո հանդեպ հավատքը և Նրա Սուրբ Խոսքը՝ Աստվածաշունչը: Շենքը կամ աշտարակը ընդամենը կառույց է, որ ներկայացնում է այն գաղափարախոսությունը, որն ուղղված է Տիրոջ և ցանկացածի դեմ, ով կընդունի Նրան:

Եգիպտացիները երկրպագում էին հազարավոր աստվածների, թեև հայտնի է միայն շուրջ 1,500-ի անունը: Իսրայելի զավակների եբրայեցի նախահայրերը ճանաչում էին միայն մեկ Աստծո: Այս հակադրության պատճառով Ելիցի սկզբնական շրջանում նրանց ստրկացած ժառանգները Եգիպտոսում ականատես եղան զորությանը մեկ ճշմարիտ Աստծո, որ վեր էր ցանկացած այլ աստծուց:

Եգիպտոսի աստվածներին և աստվածուհիներին որպես կուռքեր սահմանելը նշանակում էր, որ Իսրայելը պետք է առանձնանար մյուս բոլոր ազգերից նրանով, թե ում էր նա պաշտում: Ի վերջո, երբ Եգիպտոսից Խոստմունքի երկիր գնալու ճանապարհին նրանք հասան Սինա լեռանը, ստացան Տասը պատվիրանները՝ ծածկագրված տեսքով, որոնցից երկուսը վերաբերում էին ուրիշ աստվածների: Առաջին պատվիրանը խոսում է Աստծո և Իր ժողովրդի բացառիկ փոխհարաբերության մասին. «Բացի Ինձնից ուրիշ աստվածներ չունենաս» (Ելից 20.3): Սա արգելում է փոխհարաբերությունը որևէ այլ (օտար) աստծո հետ: Երկրորդ պատվիրանն արգելում է ստեղծել նման «աստվածների» պատկերներ կամ երկրպագել դրանց՝ անկախ նրանից՝ դրանք գոյություն ունեն երկնքում, ջրում, թե երկրի վրա (4-րդ և 5-րդ խոսքեր): Իսրայելցիները չպետք է ստեղծեին նման պատկերներ կամ կուռքեր, ոչ էլ ծնկի իջնեին նրանց առջև:

Ամենուրեք, որտեղ Աստված պատվիրում է ապրել և հետևել Իր ճանապարհներին, կան մարդիկ, որոնք ցանկանում են վերադառնալ Եգիպտոս, վերադառնալ երկրպագության մարդկային ձևերին: Սա հենց այն է, ինչ եբրայեցիներն արեցին, երբ Աստված ազատեց նրանց Եգիպտական գերությունից: Նրանք հեռացան Եգիպտոսից, բայց Եգիպտոսը չհեռացրին իրենցից: Նրանք իրենց հետ տարան Եգիպտացիների վստահության սուտ համակարգը և կռապաշտությունը:

Թեև կռապաշտության գաղափարը պետք է խորթ լիներ նրանց, սակայն մինչև Ելից նրանք դարերով ապրեցին Եգիպտական հասարակության մեջ՝ շրջապատված բազմաթիվ աստվածներով: Սա է պատճառը, որ Աստծո ձեռքով Եգիպտոսից հեռանալուց հետո՝ կարճ ժամանակ անց, նրանք հեշտությամբ դրդեցին նույնիսկ Ահարոնին, որ իրենց համար մետաղյա կուռք շինի: Մովսեսի բացակայության ժամանակ, որը տևեց մոտավորապես վեց շաբաթ, և որի ընթացքում նա ստացավ Տասը պատվիրանները, մեզ հայտնի է դառնում, որ «...սպականվեց... ժողովուրդը... իրենց համար ծուլածո հորթ շինեցին և նրան երկրպագություն արեցին...» (Ելից 32.7,8):

Պատմության ընթացքում Աստված ունեցել է տղամարդիկ և կանայք, որոնց գործածել է սատանայական գաղտնախորհուրդ (օկուլտային) ուժերի դեմ վճռական մարտ վարելու համար:

Պատմության ընթացքում Աստված ունեցել է տղամարդիկ և կանայք, որոնց գործածել է սատանայական գաղտնախորհուրդ (օկուլտային) ուժերի դեմ վճռական մարտ վարելու համար: Եղիան հակադրվեց Հեզաբելին, Բահադի մարգարեներին, սեռական անբարոյականության և երեխաներին զոհաբերելու մահվան պաշտամունքին: Մովսեսը մեծացավ որպես փրկիչ ընդդեմ Եգիպտոսի, երբ Աստված լսեց ժողովրդի աղաղակը և ասաց. «Բանց թող Իմ ժողովրդին»: Եգիպտական աստվածներին ծաղրի առարկա դարձնող պատուհասների միջոցով ակնհայտ դարձավ, որ Մովսեսի Աստվածը ճշմարիտ և կենդանի Աստվածն էր:

Մեր երկրի և եվրոպական պատմության մեջ գաղտնի հասարակությունները, որոնք ներառում էին քրիստոնեության մասնիկ-

ներ՝ միախառնված եգիպտական կռապաշտության և օկուլտիզմի հետ, փորձել են ստեղծել կրոնական ծեսեր: Եգիպտացիները երկրպագում էին Իսիդային, Օսիրիսին և բազմաթիվ սուտ աստվածների: Մասունները որդեգրեցին խորհրդանշանագիտությունը (սիմվոլիզմ) և օկուլտային ծեսերը անեծքների հոչակման և տարօրինակ ընծայումների համար: Յեյլի համալսարանում հիմնված «Գանգ և ոսկրեր» կազմակերպությունն ընտրում է իր 15 խիստ գաղտնի անդամներին կրտսեր ուսանողներից՝ հատուկ ուշադրություն դարձնելով շրջանավարտների երեխաներին: Գերեզմանում կատարվում է ընծայում գտածո իրերով և ֆիզիկական ծեծերով: Այնուհետև ընծայվածներին տրվում է նոր անուն, և հրապարակվում են գաղտնիքներ: Ջորջ Հ. Ու. Բուշը, Ջոն Քերին, Էռլ Գրեյվս կրտսերը, ԿՀՎ-ի (Կենտրոնական հետախուզական վարչություն) և Գերագույն դատարանի դատավորները և մեդիա ներկայացուցիչներից շատերը ներգրավված են եղել «Գանգ և ոսկրեր» կազմակերպությունում:

Ադամ Վեյսհաուպտ անունով մի մարդ Գերմանիայի Բավարիա երկրամասից 1776 թվականի մայիսի 1-ին հիմնադրեց Լուսավորյալների գաղտնի հասարակությունը, որը հետագայում զարգացավ՝ դառնալով Իլյումինատների կազմակերպություն՝ հեռակա նմանություն ունենալով մասոնների աստիճանակարգմանը, դասերին և կարգերին: Նա անմիջականորեն վերահսկում էր անդամների ուսուցումը և ժամանակի ընթացքում, իլյումինատների շարքերում նրանց առաջադիմությանը զուգահեռ, հաղորդում էր հատուկ օկուլտային գիտելիքներ: Նրա առաջին նորակոչիկները իրավագիտության ուսանողներ էին, որոնք այլ անուն էին ստացել: Խումբը դանդաղ էր աճում մինչև այն պահը, երբ նրանց շարքերը համալրեց վարպետ (3-րդ աստիճանի) մասոնական օկուլտիստ Ադոլֆ Ֆրեյդեր ֆոն Կնիգեն, որը խմբում հավաքագրեց թագավորական ընտանիքի անդամների և ազդեցիկ քաղաքական գործիչների, այդ թվում՝ Բրունսվիկի դուքս Ֆերդինանդին, որը եվրոպական մասոնության նշանավոր գործիչներից էր, և գրող Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեին: Անդամության կազ-

մում ընդգրկվեց ավելի քան 3,000 հավատացյալ, և օթյակներ հաստատվեցին Գերմանիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Իտալիայում և այլուր:

Մեր երկրի հիմնադիրներից մի քանիսը, որոնք ներգրավված են եղել այս արտասովոր հասարակություններում, լինելով անկեղծ քրիստոնյաներ, Սուրբ գիրքը զուգակցել են մասոնության և եվրոպական հասարակությունների տեխնաժին ծեսերի հետ: Գերմանիայում և այլ շրջաններում իլյումինատների շուրջ ծագած բազմաթիվ հակասություններից ու վեճերից հետո՝ 1798 թվականի օգոստոսին, Ջորջ Վաշինգտոնը՝ այն ժամանակ շարքային քաղաքացի և երբեմնի վարպետ մասոն, Մերիլենդի Ֆրեդերիկթաուն քաղաքում բնակվող Ջ.Ու. Մնայդերից ստացավ մի նամակ և Ջոն Ռոբիսոնի՝ «Բոլոր կրոնների և Եվրոպայի կառավարությունների դեմ մասոնների, իլյումինատների և ընթերցանության հասարակությունների գաղտնի ժողովներին մշակված դավադրության ապացույցները» գրքի կրկնօրինակը: Մնայդերը մտահոգություն էր հայտնում այն մասին, որ որոշ մասոնական օթյակներ Ամերիկայում կարող էին վարակված լինել իլյումինատների ծրագրով՝ տապալելու բոլոր կառավարությունները և բոլոր կրոնները՝ նույնիսկ բնական:

Իր պատասխանում Վաշինգտոնը պնդեց. «Ես շատ եմ լսել իլյումինատների ստոր և վտանգավոր ծրագրերի և ուսմունքների մասին»: 1780-ականների վերջին Թոմաս Ջեֆերսոնը մեղադրվում էր առեղծվածային գաղտնի հասարակությանը պատկանելու համար: Ջոն Քուինսի Ադամսը՝ մեկ այլ մասոն, որը հետագայում՝ 1825 թվականին, դարձավ Միացյալ Նահանգների 6-րդ նախագահը, իր գրվածքներում Ջեֆերսոնին մեղադրում էր մասոնական օթյակները հանուն իլյումինատների կործանարար նպատակների օգտագործելու համար:

Ինչ դեր էլ խաղացած լինեն մասոնությունը, օկուլտիզմը և իլյումինատները մեր պատմության մեջ, նրանց գաղտնի ծեսերը

և խորհրդանշանագիտությունը այսօր գործում են: ԲաՖումետին՝ այծի գլխով և ոտքերով հեթանոսական հերմաֆրոդիտ թևավոր մարդկային կերպարանքին, կարելի է տեսնել այնպիսի արվեստագետների երաժշտական տեսահոլովակներում, համերգներում և կատարումներում, ինչպիսիք են Լեդի Գազան, Ջասթին Բիբերը, Ջեյ Ջին, Բեյոնսեն: Կատարողների ցանկն այնքան մեծ է, որ այստեղ հնարավոր չէր այն սպառել: Բուրգի վրայի ամենատես աչքը, որը պատկերված է Միացյալ Նահանգների Մեծ կնիքին և ԱՄՆ դոլարի թղթադրամի հետևի կողմում, վկայում է այն մասին, որ իլյումինատների ազդեցությունը թափանցել է հիմնադիր հայրերի և ապագա կառավարության որոշում կայացնողների շարքերը: Հավերժական բոցը խորհրդանշում է իլյումինատների անմահությունը, և, ըստ մի քանիսի, կրակը ներկայացնում է Արուսյակին՝ կյանք բերողին: Խորհրդանիշը հայտնվում է «Ստանդարտ օյ» և «Կոլումբիա փիքչերս» ընկերություններին վերաբերող պատկերներում: Ծոված խաչը, շրջված խաչը կամ կրկնակի խաչը ենթադրաբար ներկայացնում են իլյումինատների զրպարտանքը Քրիստոսի Խաչին և հենց Աստծուն:

Հաղորդվում է, որ 1871 թվականի օգոստոսի 15-ին Ալբերտ Փայլը՝ իլյումինատների ամերիկյան առաջնորդը և շոտլանդական աստիճանակարգի մասոնական ղեկավարը, նամակ է գրել իտալացի հեղափոխական առաջնորդ Ջուզեպպե Մացինիին, որտեղ ասվում է, որ հուդա-քրիստոնեությունը պետք է պարտվի, և հաստատվի Նոր աշխարհակարգ.

«Մենք սանձազերծելու ենք նիհիլիստներին և աթեիստներին և հրահրելու ենք հասարակական մեծ հեղաշրջում, որն իր ամբողջ սարսափով բոլոր ազգերին հստակ ցույց կտա բացարձակ աթեիզմի ազդեցությունը՝ վայրենության և ամենարյունալի անկարգության ակունքները: Այնուհետև ամենուրեք մարդիկ հարկադրված կլինեն պաշտպանվել համաշխարհային հեղափոխականներից և կոչնչացնեն քաղաքակրթության այդ կործանողներին, և քրիստոնեությունից հիասթափված բազմությունները, որոնց հոգիներն այդ պահից կլինեն առանց ուղղորդման և առաջնորդության և կծգտեն իդեալի՝ չիմանալով, թե ուր ուղղեն իրենց երկրպա-

գությունը, կստանան ճշմարիտ լույսը Արուսյակի անաղարտ ուսմունքի համընդհանուր դրսևորման միջոցով, որը վերջնականապես ի ցույց կդրվի ամբողջ հանրությանը»:

Փայլի դիտողությունները, որոնց ճշգրիտ աղբյուրը հակասական է, համահունչ են նրա սատանայական և օկուլտային աստվածաբանությանը: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես էր նա նկարագրում սատանային. «ԱՐՈՒՍՅԱԿ՝ *Լուսակիր*: Տարօրինակ և առեղծվածային անուն, որ տրվում է Խավարի Ոգուն: Արուսյակ՝ առավուտվա որդի: Մի՞թե սա նա է, որ կրում է *Լույսը* և իր անհանդուրժելի շքեղություններով կուրացնում տկար, զգայական կամ եսասեր հոգիներին: Չկասկածե՞ք»:

Անաղարտ հուդայականության կամ քրիստոնեության այս վաղ այլասերումներից և խեղաթյուրումներից առաջացան աշխարհի մյուս հավատուրաց կրոններն ու գաղտնի հասարակությունները: Մորմոնիզմը ստեղծվել է 1830 թվականի ապրիլի 6-ին Ջոզեֆ Սմիթի կողմից Օհայոյի Քիրթլենդ քաղաքում և շարժվել է դեպի արևմուտք: Այն ներառում էր Աստվածաշնչի ուսմունքները, բայց ավելացրեց Մորմոնի գիրքը և այլ հերձվածական ուսմունքներ, որոնք կամ դուրս էին Աստվածաշնչից և/կամ հակաստվածաշնչյան էին, այդ թվում՝ հանգուցյալ հարազատների համար գոհաբերությունները և մասոնության շատ տարրեր: Ջոզեֆ Սմիթն ինքը մասոն էր: Մորմոնները չեն գիտակցում, որ իրենց տաճարի ընծայման ծիսակատարությունն ուղղակիորեն կրկնօրինակվել է մասոնության օկուլտային ծեսերից:

Մորմոնների տաճարի ծիսակատարությունը որևէ հիմք չունի քրիստոնեության մեջ: Մասոնության ամենատեսալից Յուրթի Սոլթ Լեյք Սիթիում կանգնեցված տաճարի ակնառու առանձնահատկությունն է: Տաճարի շենքի վրա նաև շրջված հնգանկյուն աստղ կա: Կարևոր է նշել, որ ազնիվ նպատակներ հետապնդող շատ քրիստոնյաներ, որոնք միացել են այս խմբերին, սկսել են Աստծո և Հիսուս Քրիստոսի մասին որոշ գիտելիքներով կամ հավատքով, սակայն ժամանակի ընթացքում մոլորության մեջ են ընկել: Մի քիչ թթխմորը (կամ սուտը) թթվեցնում է խմորը:

Համաշխարհային տարբեր կրոններից կտորներ ու մասնիկներ վերցնելով՝ նոր դարաշրջանի (կամ օկուլտային) կրոնական

պաշտամունքները, որոնց արմատները տանում են դեպի դասական հինդուական փիլիսոփայական միտք, վերջին 45 տարում պայթյունավտանգ աճ են ունեցել: Այսօր Ամերիկայում բառացիորեն հարյուրավոր մեծ ու փոքր պաշտամունքներ կան՝ արևելյան գաղափարներով և ծիսակարգերով: Տարբեր հինդուական աղանդներ, թեև գործնականում թվում են տարբեր կրոններ, ըստ էության, իրենց համարում են Հնդկաստանի Մեկ հավիտենական կրոնի աղանդներ և ճյուղեր:

Հոլիվուդը կառչել է այս հինդու աղանդներից և «Նյու Էջ» (Նոր դարաշրջան) կրոնական շարժումից: Գուրուները, ինչպիսին Ռաջնիշն է, որի ուսմունքները մերժվել են հայրենիքում, եկել են ԱՄՆ և ազդեցություն թողել արևմտյան «Նյու Էջ» շարժման վրա: Նրա հետևորդները ներգրավված էին հանցավոր գործունեության, թունավորումների, կառավարությանն ուղղված սպառնալիքների մեջ, և նա արտաքսվեց Հնդկաստան՝ 58 տարեկանում կնքելով իր մահկանացուն: Այսօր նրա մեդիտացիայի կենտրոնները շարունակում են գործել, իրենց խոսքերով, «ազատելով ապագա սերունդների միտքը կրոնականության և հարմարվողականության կապանքներից»: Այժմ հոլիվուդյան և բոլիվուդյան շատ գործիչներ հետևում են նրա ուսմունքներին:

Համաձայն «Փյու» հետազոտական կենտրոնի՝ աշխարհի առաջատար կրոններն են՝ 1) քրիստոնեություն (2.3 միլիարդ), 2) իսլամ (1.8 միլիարդ), 3) անկախ կրոններ (1.2 միլիարդ), 4) հինդուիզմ (1.1 միլիարդ), 5) բուդդիզմ (500 միլիոն), 6) ժողովրդական կրոններ (400 միլիոն), 7) այլ կրոններ (100 միլիոն) և 8) հուդայականություն (10 միլիոն): Երեք կրոնները, որ երկրպագում են մեկ աստծո՝ մի քանիսի փոխարեն, քրիստոնեությունը, իսլամը և հուդայականությունն են: Այս խմբերը սերում են Աբրահամից՝ շատ ազգերի հորից: Հուդայականությունը և քրիստոնեությունը կապված են Աբրահամի հետ Իսահակի՝ խոստումի որդու միջոցով: Իսլամի արմատները կապված են Աբրահամի առաջին որդու՝ Իսմայելի հետ, որ ծնվեց աղախնից: Մյուս կրոնական խմբերը կան առաջացել են այս միաստվածական հավատքներից, կան երկրպագում են բազմաթիվ աստվածների՝ որպես սատանայից ծնունդ առնող տարբեր հավատալիքների, հասարակությունների և նույնիսկ օկուլտային ծիսակարգերի համազդեցություն:

Հուդայականությունը և քրիստոնեությունը երկուսն էլ հավատում են Մեսիային (Փրկչին), որի մասին գրված է Հին կտակարանի մարգարեություններում: Հնարավոր է, որ ինչ-որ մեկը կեղծի մեսիական մարգարեություններից մեկը կամ երկուսը, բայց անհնար կլինի, որ որևէ անձնավորություն ծրագրի և իրականացնի այս բոլոր մարգարեությունները: Հրեաները սպասում են Մեսիային, որը, ինչպես հավատում են քրիստոնյաները, արդեն եկել է Յեշուայի՝ Հիսուս Քրիստոսի կերպարով, որի կյանքն ու ծագումը լիովին համապատասխանում են Հին կտակարանի բոլոր մարգարեություններին. հարյուր տոկոս հավանականություն 48 մեսիական մարգարեությունների դիտարկումից: Մեսիայի մասին կա 456 մարգարեություն: Յեշուան (Հիսուսը) իրականացնում է բոլոր 456 մարգարեությունները, որոնք գրվել են Հին կտակարանում նախքան Հիսուսի ծնվելը, այդ թվում՝ Նրա ծնունդը Բեթլեհեմում: Մի ռաբբի կատակով ասել էր. «Նրա գալուստին հրեաները կասեն. «Ինչո՞ւ այդքան ուշացար», իսկ քրիստոնյաները կասեն. «Բարի վերադարձ»»:

Ինչպիսի՞ն էր հոգևոր մթնոլորտը, երբ Հիսուսն իրականացնում էր Իր ծառայությունը: Այն դարաշրջանը, որը տեսավ Հիսուս Քրիստոսի գալուստը, կրոնով հեղեղված դարաշրջան էր՝ սկսած աշխարհի զգալի մեծամասնության տգետ անիմիզմից (ոգեպաշտություն) և սեռական պաշտամունքից մինչև հռոմեական պանթեոնի աստվածները և հունական առեղծվածային կրոնները: Հռոմեացիներն ունեին աստվածների ու աստվածուհիների բազմազանություն, փիլիսոփայություն և լուսավորված հայացքներ: Բաբելոնի և Եգիպտոսի բազմաստվածության ազդեցությունը Հռոմում անժխտելի էր: Այսպիսին էր մշակույթը Հիսուսի երկրային կյանքի և ծառայության ժամանակ, որը հայելի է մեր ժամանակներում կատարվելիք բաների:

Հիսուսը Մատթեոսի 7.15-23-ում ասաց, որ զգուշանանք սուտ մարգարեներից, որ կգան մեզ մոտ ոչխարների հանդերձով, բայց ներքուստ հափշտակող գայլեր են: «Իրենց պտուղներից կճանաչեք նրանց», - հիշեցրեց Նա: «Ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում: ...Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և կրակի մեջ զգվում: ...Ոչ թե ամեն Ինձ Տեր, Տեր ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, որ կատարում է

Իմ Հոր կամքը, որ երկնքում է: Շատերը կասեն Ինձ այն օրը. «Տեր, Տեր, չէ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով շատ զորություններ գործեցինք: Եվ ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձ-նից դեն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»:

Ես անձամբ այցելել եմ Պոմպեյի ավերակներ, որոնք Իտալիայում են՝ Նեապոլի մոտակայքում: Պոմպեյն ավերվել է մ.թ. 79 թվականին Վեզով լեռան ժայթքումից: Ինչպես Ղովտի կինը վերածվեց աղե սյան Սոդոմից ու Գոմորից փախչելիս, այնպես էլ Պոմպեյի բնակիչները բառացիորեն քարացան առօրյա գործունեության մեջ քաղաքի արագ ավերման պատճառով: Պոմպեյի ավերակները վկայում են հաճույքապաշտական էրոտիկ խանութների և փողոցների ֆալիկ գծանշումների մասին: Ասում են, որ աշակերտները եկել են Քրիստոսին քարոզելու և զգուշացրել են, որ քաղաքն ապաշխարի, բայց բնակիչները չեն ապաշխարել: Ժամանակի սեռական պաշտամունքները և հեթանոսությունը բերեցին դատաստանի կրակը՝ անսպասելիորեն ամեն բան թաղելով մոխրի գրեթե 3 մետր շերտի տակ:

1970-ականներին Ամերիկայում գրանցվեց սատանիզմի անհավանական աճ, որն ուղեկցվեց ԼՍԴ տեսակի թմրանյութի և հոգեմետ դեղերի գործածությամբ: ԱՄՆ բանակի սպա Մայքլ Ակինոն, որը 1968 թվականին հոգեբանական պատերազմի մասնագետ էր, այցելեց Վիետնամ: Նա վերադարձավ պատերազմից որպես սատանիզմի հետևորդ: Նրան ուղղորդողը սատանայի եկեղեցու հիմնադիր Անտոն Լավեյն էր: Նրանց ընկերակցությունից դժգոհ՝ Ակինոն խզեց կապերը Լավեյի հետ և հիմնեց իր՝ Սեթի տաճարը: 1975 թվականին նա փնտրեց գործելու նոր լիազորություն՝ կանչելով սատանային. սատանան պատասխանեց նրան՝ հայտնվելով Սեթի՝ հին եգիպտական աստվածության տեսքով: Ակինոն կնոջ հետ հիմնեց ցերեկային խնամքի կենտրոն: Մեղադրվելով մանկատարփության համար՝ նա և կառավարական շարքեր ներթափանցած օկուլտիզմի այլ անդամներ կարծես խույս էին տալիս ամեն տեսակի պատասխանատվությունից: 1970-ականներին օկուլտային գործունեությունը լրատվամիջոցներում հասավ փառաբանման բարձր մակարդակի:

Բայց դրությունը փոխվեց, և 1980 թվականին նախագահ

դարձավ պահպանողական Ռոնալդ Ռեյգանը: Վերստին ծնունդի փորձառությունը տիրապետող դարձավ, բայց այն լիովին չուղեկցվեց ազգային ապաշխարությամբ: Ըստ էության՝ մարքսիստական օկուլտային գաղափարախոսությունը շարունակեց իր անարգել գոյությունն այն ժամանակ, երբ քանդվեց Բեռլինի պատը: Սուրբ գիրքը խոսում է «ցավերի սկզբի» մասին, և մենք տեսնում ենք, թե ինչպես է ի հայտ գալիս հանուն մեկ աշխարհի չար դավադրությունը, մի փորձ, որ սատանան անում է Բաբելոնից սկսած: Բաբելոնյան, եգիպտական և կոապաշտական պաշտամունքը վերադարձել է և ավելի ուժեղ ու բացահայտ է, քան երբևէ: Հարկ չկա հեռու գնալու, որպեսզի տեսնենք, թե ինչպես են հոլիվուդյան աստղերն ու ժամանցային միջոցառումները պարծենում բուրգերով, իլյումինատների խորհրդանշաններով, արյունով և սեռական ծեսերով, որոնք թվագրվում են հին եգիպտական բուրգերի ժամանակաշրջանին:

Եգիպտոսում Աստծո ժողովուրդը ծանր ստրկության մեջ էր և աղյուսներ էր պատրաստում փարավոնի համար: Այսօր սատանան փորձում է հալածել Աստծո ժողովրդին այնպես, ինչպես երբեք, որովհետև իր օրերը կարճ են: Քրիստոնյաները հենց մեր դարաշրջանում ենթարկվել են տանջալի վերաբերմունքի: Վերջին 100 տարում ավելի շատ քրիստոնյաներ են մահացել իրենց հավատքի համար, քան մյուս բոլոր դարերում՝ միասին վերցրած: Հրեաների հալածանքները նույնպես ահռելիորեն աճում են, զուգահեռ ավելանում են համաշխարհային առաջնորդների հարձակումները հուդայականության դեմ, հատկապես՝ ՄԱԿ-ի և նրա հանձնագրերի միջոցով: Հիսուսն ասաց. «Ամեն, ով որ սպանի ձեզ, կկարծի, թե Աստծուն պաշտոն է մատուցում» (Հովհաննես 16.2):

Մենք ականատես ենք լինում, թե ինչպես են ազգերը վերադասավորվում Աստծո և Նրա ժողովրդի դեմ: Մարգարեական կանխատեսումներն իրականանում են մեր առջև: Երբ Իսրայելը կրկին դարձավ պետություն, և նրա ցրված ժողովուրդը հավաքվեց, ինչպես գրված է Սուրբ գրքի մարգարեություններում, սկսեցինք ականատես լինել մի արագընթաց գնացքի, որ շարժվում է դեպի մեկ աշխարհակարգ, որտեղ ոչ ոք չի կարող գնել կամ վաճառել առանց նշանի՝ Հակաքրիստոսի 666 նշանի:

Ինչպե՞ս է կրոնական աշխարհը ճանապարհի հարթում Նոր

աշխարհակարգի համար: Ֆրանցիսկոս պապը՝ պատմության մեջ Պապի պաշտոնը զբաղեցրած առաջին ճիզվիտ քահանան, ավելի քան ապշեցրել է: Ճիզվիտների կարգի կաթոլիկ քահանաները բարեգործական և կրթական աշխատանքը միավորեցին ռազմական հիերարխիկ կազմակերպության հետ այնպես, որ Մարքիզ դը Լաֆայետը, որը մարզել էր ամերիկյան մայրցամաքային բանակը Վաշինգտոնի օրոք, նշում էր. «Իմ կարծիքով, եթե այս երկրի (Ամերիկայի Միացյալ Նահանգների) ազատությունները ոչնչացվեն, ապա դա տեղի կունենա հռոմեական կաթոլիկ ճիզվիտ քահանաների ճարակությամբ, քանի որ նրանք քաղաքացիական և կրոնական ազատության ամենախորամանկ, վտանգավոր թշնամիներն են: Նրանք են հրահրել Եվրոպայի պատերազմների մեծ մասը»: Բարեգործական և կրթական աշխատանքի քողի ներքո ճիզվիտ քահանաները կարողացան անցնել այնպիսի գործողությունների, որոնք հիմնականում քաղաքական էին: Կղեմես 14-րդ պապը ցրեց ճիզվիտների միաբանությունը՝ նշելով, որ կնքեց իր մահվան հրամանը, և ամիսներ անց նա մահացավ:

Ճիզվիտների միաբանությունը 1555-1931 թվականներին վտարվեց ավելի քան 83 երկրներից քաղաքական և քայքայիչ դավադրություններում ներգրավվելու համար, ինչպես հաղորդվում է ճիզվիտ քահանա Թոմաս Զ. Քեմփբելի երկերում: Ճիզվիտները ստեղծեցին ռազմական աստիճանակարգություն (հիերարխիա), որն օգտագործեցին Եվրոպայի բողոքականների դեմ: Երբ վտարվում էին կամ բռնվում քաղաքական քայքայիչ գործունեության մեջ, նրանք փոխում էին մարտավարությունը և կրկին մտնում ասպարեզ բարեգործության և կրթության միջոցով: Հիտլերն ասել է. «Ես ճիզվիտներից շատ բան եմ սովորել մինչև հիմա երկրի վրա երբեք չի եղել ավելի վիթխարի բան, քան կաթոլիկ եկեղեցու աստիճանակարգային կազմակերպվածությունը: Այս կազմակերպվածությունից շատ բան ես փոխանցել եմ իմ կուսակցությանը: Ես ձեզ գաղտնիք կբացեմ... ես հիմնում եմ միաբանություն (կարգ)... Իմ միաբանության «բուրգերում» մենք կդաստիարակենք երիտասարդների, որոնք կստիպեն աշխարհին դողալ»: Հիտլերի դիվանագետը Ֆրանց ֆոն Պապենն էր՝ չարական մի նացիստ, որն օգնեց նրան գալու իշխանության:

Ֆյուրերը իշխանության էր եկել Կաթոլիկական կենտրոնի (կենտրոնամետների) ձայների շնորհիվ, որոնց վերահսկում էր ճիզվիտ Լյուդվիգ Կասար: Բացի դրանից՝ ճիզվիտների աստիճանակարգության և «Օրդո Նովի Թեմփիլ»՝ ընտրասերմանը և բարձրագույն ռասային հավատացող թեոսոֆիկական օկուլտային խմբի փոխներգործությունն էր, որ ազդեց Հիտլերի գաղափարախոսության և առասպելաբանության վրա:

Այսօրվա ճիզվիտական քահանայությունը ղեկավարում է համալսարաններ և քոլեջներ, որոնցից են Ջորջթաունի համալսարանը, Բոստոնի քոլեջը, Սուրբ խաչի քոլեջը, Սան Ֆրանցիսկոյի, Լոյոլայի համալսարանները և շատ ուրիշներ՝ շեշտը դնելով գործարարության, տնտեսագիտության, հոգեբանության և այնպիսի գաղափարախոսությունների վրա, որոնք ծախսական են Կաթոլիկ եկեղեցու համար:

Լիբերալ ճիզվիտ կաթոլիկ քահանա հայր Ջեյմս Մարտինը սուր քննադատության է ենթարկվել այն բանի համար, որ հանդես է եկել ի պաշտպանություն տրանսգենդեր ճանաչված երեխաների սեռական հասունացումն արգելակող միջոցների: Մարտինը, որը նաև «Ամերիկյան ամսագիր» ճիզվիտական հրատարակության գլխավոր խմբագիրն է, արժանացավ քննադատության, երբ մարտահրավեր նետեց Տեխասի փաստաբան Քեն Փաքստոնի այն պնդումներին, որ սեռափոխության վիրահատությունները և սեռական հասունացումն արգելակող միջոցները, որոնք նշանակվում են երեխաներին, մանկական բռնություն են:

Ֆրանցիսկոս պապը սուր քննադատության է ենթարկվել շատերի, այդ թվում՝ արքեպիսկոպոս Վիգանոյի կողմից, այն հայտարարությունների համար, որոնք կարծես ավելի շատ վերաբերում էին մեկ համաշխարհային կառավարությանը, քան Աստծո Թագավորությանը: Վիգանոն առավել խիստ է դատապարտում այն առաջնորդներին, որոնք ուրանում են իրենց մանդատը՝ որպես Քրիստոսի սպասավորներ, և գործում որպես Նոր աշխարհակարգի գործակալներ: Իրենց մանդատն ուրացող քահանաները, որոնք գրեթե միշտ նույնքան ապականված են վարդապետության մեջ, որքան բարոյականության, զբաղեցրել են Քրիստոսի եկեղեցին, որպեսզի վերածեն այն պետական եկեղեցու՝ Նոր աշխարհակարգի նախանձախնդիր սպասավորի և

հավատուրացի: Նա շարունակում է քննադատել կաթոլիկական կրթական հաստատությունները և եկեղեցիները՝ ասելով. «Փորձարարական պատվաստանյութով պատվաստվելու դիրքորոշումը՝ որպես սիրո և պարտականության դրսևորում, հերքում է փաստերի ապացույցները, բայց նաև համաշխարհային ծրագրի գոյությունը, որը միտումնավոր առաջացրել է այս հոգեվարակը, որպեսզի դաժանաբար կրճատի աշխարհի բնակչության, հատկապես տարեցների թիվը և ներմուծի քաղաքացիների բնական իրավունքների վերահսկման և սահմանափակման ձևեր»:

Նպատակ չունենալով քննադատելու հանուն ձևականության՝ Վիգանոն գրում է. «Զարմանալի չէ, որ խորքային եկեղեցին լիովին ենթարկվում է խորքային պետությանը, որ Բերգոզլիոն (Ֆրանցիսկոս պապը) ցանկանում է իրեն առաջադրել որպես մարդկության կրոնի նախագահության թեկնածու, որը Նոր աշխարհակարգը մտադիր է հաստատել»: Այնուհետև նա նշում է, որ «նրանք, ովքեր քողարկվել են որպես մարդկության

**Գալիս է նոր
Թագավորություն, բայց
այն չի ավարտվի այնպես,
ինչպես ծրագրել են
գլոբալիստները, և վստահ
են, որ չի հիասթափեցնի
այն հավատարիմներին,
որոնք այս ժամանակում
կանգնում են ճշմարտության
և արդարության համար:**

փրկիչներ, իրականում ձգտում են հպատակեցնելու աշխարհի ժողովուրդներին և բնաջնջելու քաղաքացիներին կամ դարձնելու նրանց քրոնիկ հիվանդներ»: Ինչպես խոնարհ, բայց համարձակ արքեպիսկոպոսը մեղադրեց Ֆրանցիսկոս պապին երեխաների համասեռամոլական բռնությունը և մանկապղծությունը քողարկելուն մասնակցելու համար, այնպես էլ Վիգանոն մի ծայն է, որ աղաղակում է ճշմարտության և Քրիստոսի վերադարձի համար:

Գալիս է նոր Թագավորություն, բայց այն չի ավարտվի այնպես, ինչպես ծրագրել են գլոբալիստները, և վստահ են, որ չի հիասթափեցնի այն հավատարիմներին, որոնք այս ժամանակում կանգնում են ճշմարտության և արդարության համար: Հիսուսը հաստատեց Թագավորություն, որը տարբերվում էր նրանից, ինչ

ակնկալում էին աշակերտները: Հռոմեական կառավարությունը դաժան ու ճնշող էր, հատկապես Աստծո ժողովրդի հանդեպ: Հիսուսի հետևորդներն ակնկալում էին, որ այս «Թագավորությունը», որի մասին Նա խոսում էր, կհաստատվի որպես կառավարություն երկրի վրա և կտապալի հռոմեացիներին: Նա փորձում էր բացատրել նրանց, որ Իր Թագավորությունն այս աշխարհից չէ: Դանիելն ասում է.

«...երկնքի Աստվածը մեկ թագավորություն է վեր կացնելու, որ հավիտյանս չի ավերվի, և նրա տերությունը ուրիշ ազգի չի տրվի. նա պիտի փշրի և վերջացնի այս բոլոր թագավորությունները. իսկ նա ինքը կմնա հավիտյանս: Որովհետև նրա տեսար, որ սարից մի քար կտրվեց առանց ձեռքի...»:

– Դանիել 2.44,45

Հիսուսի Թագավորությունը այն քարն է, որ փշրում է նախկին թագավորություններն իրենց սուտ կրոններով: Սա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Հիսուսը եկավ և հոգևոր իմաստով հաստատեց Իր Թագավորությունը: Նա եկավ որպես նորածին և մահացավ որպես տղամարդ՝ դառնալով մեր Փրկիչը: Բայց երբ վերադառնա, Նա կգա որպես մեր թագավորների Թագավոր և տերերի Տեր, կնվաճի երկրի թագավորությունները, կփշրի նրանց և կհաստատի Իր երկրային Թագավորությունը: Աշակերտները

**Տիրոջ սարը գեղեցիկ
կլինի և կբարձրանա բոլոր
սարերից: Մենք գնում ենք
երկինք ոչ թե մեր գործերի,
այլ Հիսուսի կատարած
գործի շնորհիվ, բայց
«սար նվաճելը» վարձքի
հատուցում ունի:**

հույս ունեին, որ Հիսուսը կտապալի Հռոմեական կառավարության դաժան ճնշումը և կհաստատի երկրային Թագավորություն: Բայց Նա շատ ավելի լավ բան արեց: Առաջին անգամ, երբ Նա եկավ, հիմնեց հոգևոր Թագավորություն՝ փրկագնելով ամբողջ մարդկությանը, նրանց, ովքեր

կընդունեին Իրեն: Երբ Նա գա երկրորդ անգամ, կհիմնի թե՛ հոգևոր և թե՛ ֆիզիկական Թագավորություն երկրի վրա: Սա այն է,

ինչ աշակերտները փափագում էին: Մենք այդ օրվա նախապատրաստության ակննատեսն ենք: Իմանալով սա՝ մենք՝ որպես հավատացյալներ, այժմ հոգևոր առումով ունենք Թագավորություն և օգտագործում ենք մեր ձայնը, որպեսզի նախքան Նրա վերադարձը մարդկանց խլենք խավարից և բերենք լույսի մեջ:

Տիրոջ սարը գեղեցիկ կլինի և կբարձրանա բոլոր սարերից: Մենք գնում ենք երկինք ոչ թե մեր գործերի, այլ Հիսուսի կատարած գործի շնորհիվ, բայց «սար նվաճելը» վարձքի հատուցում ունի:

Ես մի փոքր զբաղվել եմ բասկետբոլով և եղել եմ մարզիչ, ուստի սիրում եմ մտածել այս ժամանակի մասին չորրորդ խաղակեսի տեսանկյունից: Ժամանակը մոտենում է ավարտին: Մենք միաժամանակ պետք է վարենք ուժեղ պաշտպանություն և հարձակում: Մենք ճնշման տակ ենք ամբողջ դաշտում այն ամենով, ինչ ունենք:

Մենք կինոնկարի ամենալարված մասում ենք: Ամեն բան զարհուրելի է թվում, արագությունն ու ուժգնությունը՝ հսկայական: Աստված սիրում է զգայացունց ավարտ և խոստանում է չհիասթափեցնել: Նրանք, ովքեր հանցանքներ են գործում Աստծո տղամարդկանց, կանանց և երեխաների դեմ, անպատասխան չեն մնա: Երբ աշխարհի գորքերը պատերազմ մղեն Իսրայելի դեմ, Հիսուսը (Քրիստոսը, Օծյալը) աննկարագրելի բանակով կիջնի մարտի դաշտ և կջախջախի Իր թշնամիներին: Արյունը կհեղվի և կպաշտպանի Աստծո սուրբերին: Ոչ մի չար արարք անպատիժ չի մնա:

Երբ Հիսուսը գա, կհաստատի Իր հազարամյա թագավորությունը երկրի վրա: Որտեղ ենք մենք ժամանակացույցում: Սուրբ գիրքն ասում է, որ մեկ օրը հազար տարվա պես է Տիրոջ մոտ: Արարչության օրերը յոթն էին. վեց օր՝ աշխատելու համար, և մեկ օր՝ Աստծո հանգստի: Ադամից մինչև Աբրահամ 2,000 տարի է, ևս 2,000 տարի՝ Աբրահամից մինչև Հիսուս, և շուրջ 2,000 տարի՝ Հիսուսի մահից մինչև այսօր: Հաշվարկները ցույց են տալիս, որ այդ 2,000 տարին կավարտվի մոտավորապես 2030 թվականին: Վերադառնալով Հիսուսը կհաստատի Իր Թագավորությունն այս երկրի վրա, և երկիրը կապրի խաղաղությամբ 1,000 տարի: Այս օրերի գումարը 7,000 տարի է՝ արարչության յոթ օրերը: Սա

**Երբ Հիսուսը վերադառնա,
Նա կհիմնի Իր երկրային
Թագավորությունը: Քրիստոսի
թագավորելը երկրի
վրա՝ որպես Թագավորի,
կլինի հանգստության օր
Ֆիզիկական տիրույթում,
ինչպես եղավ հոգևոր
տիրույթում Նրա առաջին
գալստյան ժամանակ: Սա
հիասքանչ ժամանակ է
ապրելու և սարերը նվաճելու
համար, որպեսզի ձեր կյանքով
ազդեցություն ունենաք
ուրիշների վրա հանուն
Քրիստոսի: Ձեր կյանքը և
ժամանակը որոշված էին
Աստծուց, և Նա ընտրեց ձեզ
այս ժամանակի համար:**

հայտնություն տվող պատասխանն է: Շատերն այսպես են կարծում: Մենք չգիտենք օրը և ժամը, բայց Սուրբ գիրքը հստակ է. մենք կիմանանք ժամանակաշրջանը:

Երբ Հիսուսը վերադառնա, Նա կհիմնի Իր երկրային Թագավորությունը: Քրիստոսի թագավորելը երկրի վրա՝ որպես Թագավորի, կլինի հանգստության օր ֆիզիկական տիրույթում, ինչպես եղավ հոգևոր տիրույթում Նրա առաջին գալստյան ժամանակ: Սա հիասքանչ ժամանակ է ապրելու և սարերը նվաճելու համար, որպեսզի ձեր կյանքով ազդեցություն ունենաք ուրիշների

վրա հանուն Քրիստոսի: Ձեր կյանքը և ժամանակը որոշված էին Աստծուց, և Նա ընտրեց ձեզ այս ժամանակի համար:

Միայն մեզ շրջապատող չարիքը տեսնելու փոխարեն մենք պետք է տեսնենք մեր գոյության նպատակը, որը համընկնում է այս օրվա հետ: Սուրբ գիրքը Հիսուսի փոխհարաբերությունը համեմատում է եկեղեցու հետ: Հարսանեկան խնջույքը նախապատրաստվում է: Գալիլեական հարսանիքը և Գառան ամուսնական ընթրիքը նախապատրաստվում են այն օրվա համար, երբ Հայրը կթափափացնի Որդու ուսին, որպեսզի Նա գնա և բերի Իր հարսնացուին՝ Իր Եկեղեցուն:


Հայտնության գրքի յոթ եկեղեցիներում ոմանք կորցրին իրենց սերը, և նրանց կյանքն արատավորվեց, նրանք դարձան գաղջ հավատքում և նույնիսկ ուրացան հավատքը՝ թույլ տալով մեղա-

վոր արարքներ: Բայց երկու եկեղեցու՝ հավատարիմ եկեղեցուն և հալածված եկեղեցուն, տրվեց խոստում՝ փրկվելու ահեղ օրվանից: Հիսուսը կոչ արեց մյուս հինգ եկեղեցիներին ապաշխարել, այլապես նրանց ճրագակալները կշարժեր: Վերջին դատաստանին Նա կբաժանի ոչխարներին այծերից և այծերին կասի. «Հեռացե՛ք Ինձնից, ղվ անօրինություն գործողներ: Ես ձեզ երբեք չեմ ճանաչել»:

Իմ ցանկությունն է լսել. «Ապրեն, բարի և հավատարիմ ծառա: Մտի՛ր այն ամենի մեջ, որ Ես պատրաստել եմ քեզ համար աշխարհի սկզբից»: Աստված կամենում է տալ ձեզ Իր Թագավորությունը: Նա հրահանգել է մեզ խնդրել Իրենից, և Ինքը կտա մեզ ազգերը որպես ժառանգություն: Նվաճե՛ք սարերը հայրենիքում, ազգերի մեջ, երկրագնդի յուրաքանչյուր անկյունում: Որովհետև Արքայության այս Ավետարանը կբարոզվի ամբողջ աշխարհում, և այն ժամանակ հաստատ կգա վերջը:



ԵՐԿՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Կան ուժեր և մարդիկ, որոնք վարում են Նոր աշխարհակարգի օրակարգը: Նախքան Քովիդ-19 համավարակի շահագործումը՝ 1970-ականներին, գլոբալիզմի կողմնակիցները մշակեցին «բնապահպանական Արմազեդոնի» սպառնալիքի դեմ նոր մարտավարություն՝ «կլիմայի փոփոխության» միջոցով: Համաշխարհային կառավարման շարժման ուժեղագույն պաշտպաններից մեկը՝ Հոուսի ակումբը, ասել է. «Մարդկության ընդհանուր թշնամին մարդն է: Մեզ միավորելու համար նոր թշնամի փնտրելիս մենք հանգեցինք այն մտքին, որ աղտոտումը, համաշխարհային տաքացման սպառնալիքը, ջրի պակասը, սովը և նման այլ խնդիրներ կծառայեն մեր նպատակին: Այս բոլոր վտանգներն առաջացել են մարդու միջամտությունից, և միայն փոխված դիրքորոշումների ու վարքագծի միջոցով է հնարավոր հաղթահարել դրանք: Այսպիսով՝ իրական թշնամին հենց մարդկությունն է»:

Օգտվելով այս գաղափարից՝ նախկին խորհրդային առաջնորդ և կոմունիստ Միխայիլ Գորբաչովն արագ դիրքորոշվեց՝ խթանելու այս Նոր աշխարհակարգը: Նա «Աշխարհի վիճակը» համաժողովի ժամանակ բացատրեց. «Մեր քաղաքակրթության ի հայտ եկող «միջավայրապաշտությունը» և բուռն գործողությունների անհրաժեշտությունը՝ ի շահ համաշխարհային ամբողջ հանրության, անխուսափելիորեն կունենան բազմաթիվ քաղաքական հետևանքներ: Հավանաբար դրանցից ամենակարևորը կլինի ՄԱԿ-ի կարգավիճակի աստիճանական փոփոխությունը:

Անխուսափելիորեն, այն պետք է ընդունի համաշխարհային կառավարության որոշ մոտեցումներ»:

ՄԱԿ-ը սկսեց հովանավորել մի շարք միջազգային ժողովներ՝ մասնավորապես նվիրված շրջակա միջավայրին և Երկիր մոլորակը փրկելու միջոցներին: 1992 թվականին ավելի քան 50,000 հասարակական կազմակերպություններ, դիվանագետներ և 179 համաշխարհային առաջնորդներ, այդ թվում՝ ԱՄՆ նախագահ Ջորջ Հ. Ու. Բուշը, հանդիպեցին «Երկրագնդի գազաթնաժողովին», որը տեղի ունեցավ Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում: Այստեղ հայտնի դարձան չորս կարգավորող փաստաթղթեր և պայմանագրեր, որոնք ուրվագծում էին, թե ինչպես էր ՄԱԿ-ը գլխավորելու մոլորակի փրկությունը: Դրանցից ամենակարևորը կոչվեց «Օրակարգ 21»: Դրա աջակիցներն առաջ քաշեցին այն որպես «Համապարփակ նախագիծ մարդկային հասարակության վերակազմակերպման համար»: Բոլոր 179 համաշխարհային առաջնորդները, այդ թվում՝ նախագահ Բուշը, ստորագրեցին և ընդունեցին փաստաթուղթը՝ համաձայնելով դրա նպատակները ներդնել ազգային քաղաքականության մեջ՝ «յուրաքանչյուր ոլորտում, որտեղ մարդն ազդում է միջավայրի վրա»: «Օրակարգ 21»-ն ավելացվեց ՄԱԿ-ի 2030 թվականի օրակարգին, որը ստորագրվեց Օբամայի կողմից և առավել մանրամասն ներկայացնում է, թե ինչպես է այն իրականացվելու՝ նախաբանում նշելով, որ «բոլոր երկրները և բոլոր շահագրգիռ կողմերը, որոնք գործում են համատեղ գործընկերության մեջ, **կիրականացնեն** այս ծրագիրը»:

«Օրակարգ 21»-ի հիմքում ընկած է բնակչության հսկայական զանգվածների աղքատացումը և զարգացած երկրների թուլացումը հողօգտագործման, օդի, էներգիայի, արդյունաբերության, ջրի, գյուղատնտեսության և մարդկանց ազդեցությունը կրող ցանկացած այլ բնագավառի նկատմամբ սահմանափակումների կիրառմամբ: Վերջնանպատակներն են արմատախիլ անել փոքր բիզնեսը, մրցակցությունը, սահմանները, օրենքները, մասնավոր սեփականությունը և կենտրոնացնել հարստությունը համաշխարհային կառավարության մեջ՝ խոշոր ընկերությունների կարգադրությամբ, այսինքն՝ օժանդակել Մեկ համաշխարհային կառավարության ստեղծմանը:

Ինչո՞ւ շրջակա միջավայրի միջոցով: Համաձայն ՄԱԿ-ի Կեն-

սարգամազանության պայմանագրի, որը ներկայացվել է 1990 թվականի ՄԱԿ-ի Երկրագնդի գազաթնաժողովին՝ «Բնությունն ունի տարբեր արժեքների (մշակութային, հոգևոր և նյութական) անբաժանելի հավաքակազմ, որտեղ մարդիկ բաղկացուցիչ մաս են բնության ցանցում, և բոլոր կենդանի արարածները համարվում են հավասար: Հետևաբար բնական ճանապարհը ճիշտ ճանապարհն է, և մարդու գործունեությունը պետք է ձևավորվի բնության ուղիներով»: Միջավայրը չի հետևում պետական սահմաններին, գետերը չեն գլխավորում սահմանները, մի երկրի օդը դառնում է մյուս երկրի օդը, և օվկիանոսները ենթակա չեն մարդու վերահսկողությանը: Հետևապես, եթե ՄԱԿ-ը և մյուս գլոբալիստները կարողանան վերահսկել բնությունը, նրանք կկարողանան վերահսկել մարդկանց:

Սակայն եթե նույնիսկ բնապահպանական շարժման հետևում կանգնածները չլինեին այնքան չարակամ, ինչպես ես հենց նոր նկարագրեցի (որքան կցանկանայի, որ դա ճշմարիտ լիներ), և հետապնդեին բնապահպանական ազնիվ նպատակներ, աշխարհի իրադարձությունների վերաբերյալ նրանց հասկացողությամբ մոլորակը և արարչությունն ավելի կարևոր են, քան մարդիկ, որոնց Աստված ստեղծել է Իր պատկերով՝ Երկրի վրա բնակվելու համար: Մարդկության կյանքի, նպատակի և կացության վերաբերյալ նրանց տեսակետը խեղաթյուրվել է մի աշխարհայացքով, որն իրենց և մոլորակի փրկությունը համարում է առաջնահերթություն և բարձրացնում է իրենց կարևորությունը: Անկախ այն բանից՝ նրանք իրենց համարում են աթեիստներ, թե վերստեղծել են Աստծուն իրենց պատկերով, ինչպես որոշ քրիստոնեական աղանդներում և համաշխարհային կրոններում, նրանք իրականում հավատարիմ են ինչ-որ թագավորության, բայց դա Աստծո Թագավորությունը չէ: Հիսուսը շատ հստակ արտահայտեց սա, երբ ասաց. *«Ով որ Ինձ հեպ չէ, Ինձ հակառակ է, և ով որ Ինձ հեպ չի ժողովում, ցրվում է»* (Մատթեոս 12.30):

Այս գաղափարական առաջնորդներն ինքնուրույն չհորինեցին «մեկ աշխարհի» գաղափարը, որքան էլ փայլուն ներկայացնեին իրենց: Նրանք պարզապես միացել են դարավոր պայքարի սխալ կողմին: Հակամարտության մեջ երկու թագավորություններ են, և տղամարդկանց, կանանց ու երեխաների կյանքը թիրախավորվել

է երկնքի թշնամու՝ սատանայի կողմից: Նա շարտվեց երկնքից այն բանից հետո, երբ առաջնորդեց մի ապստամբություն, որին մասնակցեց երկնքի հրեշտակների մեկ երրորդը՝ ամբարտավանության հպարտ ցուցադրմամբ: Սատանան մեծ խաբեբա է: Նա Աստծո դեմ դավադրություն կազմեց երկնքում: Նա Աստծո դեմ դավադրություն կազմեց, որպեսզի ձեռք բերի առաջին ընտանիքի՝ Ադամի ու Եվայի հավատարմությունը: Նա Աստծո դեմ դավադրություն կազմեց Նոյի ժամանակ, որի հետևանքը եղավ ջրհեղեղով դատաստանը Երկրի վրա, և նա Աստծո դեմ դավադրություն կազմեց Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ: Նա դավադրություն կազմեց Աստծո Որդու՝ Հիսուսի դեմ, որպեսզի խաչեր Նրան, բայց դա հակառակ ազդեցությունն ունեցավ՝ ի հեճուկս նրա ամենավառ գաղտնի ծրագրերի:

Աստծո դեմ բացարձակ անհնազանդությունը սատանայի գործելաոճն է, և նրա վերջնանպատակը Աստծո սիրո և նվիրվածության առարկային՝ քեզ, ոչնչացնելն է: Այո՛, երկրագնդի վրա ստեղծված ցանկացած «բանից» վեր Աստված տեսավ քեզ և ինձ՝ որպես արարչագործության պատճառի: Հայրը տուն է կառուցում իր ընտանիքի համար: Մայրը կարող է արձակուրդ ծրագրել իր զավակների համար: Աստված Իր բարությանմբ տղամարդկանց և կանանց տվեց իշխանություն՝ Իր առաջնորդությամբ կառավարելու այն երկիրը, որը ստեղծեց նրանց համար: Նրանք ընտրեցին լսել մեկ այլ ձայն և հրաժարվել իրենց նվերից, բայց Աստված ուներ ծրագիր՝ փրկագնելու նրանց Իր Որդու միջոցով: Սատանայի վախճանը կնքված է, և եթե նա կարողանա իր հետ տանել Աստծո սիրելիներին, շատ ավելի լավ կիրագործի սպանելու, գողանալու և ոչնչացնելու վրեժխնդրության իր ծրագիրը:

Հակամարտությունը սրվում է, և ամեն օր մենք դիտում ենք հոգևոր աշխարհի ազդեցությունը, որը դրսևորվում է ֆիզիկական աշխարհում՝ լուրերի խորագրերի, պատերազմների, պատերազմների համբավների, սովի, համաճարակների և մեր հասկացողությունից վեր չարիքի տեսքով: Որպեսզի հասկանանք, թե ինչ է տեղի ունենում մեր ժամանակներում, պետք է գիտակցենք, որ ոչ միայն կա երկու թագավորություն, այլև յուրաքանչյուր մարդ այս կամ այն թագավորության մասնիկ է: Կախված նրանից, թե որին ենք ընտրել հարել, մենք հավատարիմ ենք Աստծուն կամ

աստանային: Արդյո՞ք մենք հավաքվում ենք Աստծո շուրջը, թե՛ ցրվում ենք և նպաստում դիվային քաոսին: Այլ տարբերակներ չկան՝ համաձայն Հիսուսի խոսքերի, որոնք հաստատում են, որ մենք կամ Նրա կողմից ենք, կամ Նրան հակառակ: Ա Հովհաննեսի 4.6-ը նկարագրում է երկու թագավորություններին տարբեր արտահայտություններով՝ ճշմարտության Հոգի և ստի կամ խաբեության հոգի:

Ինչպե՞ս ճանաչենք Ճշմարտության հոգին, որպեսզի չխաբվենք:

«Բայց շնչավոր մարդն Աստծո Հոգու բաները չի ընդունում, որովհետև նրանք հիմարություն են նրա համար, և չի էլ կարող գիտենալ, որովհետև հոգևոր կերպով են քննվում...»:

– Ա Կորնթացիների 2.14-16

Աստծո Խոսքը ճշմարտությունն է, սակայն նրանք, ովքեր վերստին ծնունդի փորձառությամբ չընդունեն Նրա Հոգին, չեն զանազանի այն, ինչ Աստված անվանում է բարի, և այն, ինչ Աստված անվանում է չար: Հիսուսն ասաց. *«Եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել»* (Հովհաննես 3.3բ):

Աստվածաշնչյան տեսանկյունից Աստված ստեղծեց երկիրը տղամարդու և կնոջ համար, և Նա սահմանեց պատվիրաններ ու սկզբունքներ՝ կառավարելու կյանքը Իր աստվածային առաջնորդությամբ, բայց գլոբալիստների տեսանկյունից երկիրը պետք է մեծարել, թերևս նույնիսկ երկրպագել՝ վեր դասելով այն արարածներից, որոնք ստեղծվել են Աստծո պատկերով և բնակեցնում են այդ երկիրը: *«Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին և երկրպագեցին ու պաշտեցին ստեղծվածներին, քան թե՛ Ստեղծողին, որ օրհնյալ է հավիտյանս, ամեն»* (Հռոմեացիների 1.25): Այս մտածելակերպները համոզմունքների համակարգեր են, որոնք սկիզբ են առնում ո՛չ Աստծուց և թելադրում են ամեն բան՝ բարոյականությունից, քաղաքականությունից, հասարակական կառուցվածքներից, արհեստական վիժեցումներից, գենդերային անկայունությունից և արմատական բնապահպանությունից մինչև սոցիալիզմ և կոմունիզմ:

Որքան ավելի ենք շեղվում աստվածաշնչյան տեսանկյունից

կամ Աստծո Թագավորությունից, այնքան ավելի ենք խաբվում, իսկ որքան շատ է խաբեությունը, այնքան շատ է հնարավորությունը սատանայի համար, որպեսզի ազդի Աստծո սիրո առարկաների՝ մարդկանց վրա, և ոչնչացնի նրանց: Ովքեր ցանկանում են նախագծել կյանքը և որոշել դրա արդյունքները, խաղում են Աստծո դեր և որոշում, թե ինչն է գնահատվում, և ինչը՝ ոչ, ով կամ ինչն է համապատասխանում ապագայի համար իրենց ծրագրերին, և ում կարելի է զոհաբերել: Հետևա՛նքը: Օրինակ բերենք արհեստական վիժեցումները: Միացյալ Նահանգներում 63 միլիոն երեխա է սպանվել մոր արգանդում այն ժամանակվանից, երբ 1973 թվականին օրինականացվեց արհեստական վիժեցումը: Ըստ «Վորլդումետր»-ի տրամադրած տվյալների՝ 2021 թվականին արհեստական վիժեցումը եղել է մահացության հիմնական պատճառն ամբողջ աշխարհում. գրեթե 43 միլիոն չծնված երեխա է սպանվել մոր արգանդում:

Հուսով եմ, որ այդ թիվը ստիպում է ձեզ հառաչել, ինչպիսին որ իմ արձագանքն էր: Բայց հառաչանքի փոխարեն այս գլոբալիստ առաջնորդները ծափահարում են ի նշան հավանության, որովհետև բնակչության նվազումն օգնում է առաջ մղելու իրենց սոցիալական և բնապահպանական նպատակները: Ինչպե՛ս հասանք այստեղ: Այս խաբեության հիմքն ավելի պարզ է դառնում, երբ ուսումնասիրում ենք այս որոշումները խթանող ներկայիս համաշխարհային առաջնորդների ընտանիքի կենսագրությունը:

Բիլ Գեյթսի հայրը՝ Բիլ Հ. Գեյթս Ավագը, եղել է «Ընտանիքի պլանավորման» կազմակերպության խորհրդի անդամ: Բիլ և Մեյլինդա Գեյթսերի հիմնադրամն իր կայքում պարծենում է, որ 1.7 միլիոն դոլար է հատկացնում «Ընտանիքի պլանավորման» ծրագրին: Ըստ էության՝ Գեյթսերի հիմնադրամը և Ուորեն Բաֆետը (Գեյթսերի հիմնադրամի հոգաբարձու և Սյուզան Թոմփսոն Բաֆեթ հիմնադրամի հիմնադիր) «Ընտանիքի պլանավորման» կազմակերպության խոշորագույն նվիրատուներից են: Իհարկե, Ջորջ Սորոսն իր կազմակերպության՝ Բաց հասարակության ինստիտուտի միջոցով նույնպես նշվում է որպես «Ընտանիքի պլանավորման» հիմնական ֆինանսական աջակից: «Ընտանիքի պլանավորման» կազմակերպությունն իրականացնում է Ամերիկայի արհեստական վիժեցումների 30 տոկոսից ավելին. օրական 887

արհեստական վիժեցում, յուրաքանչյուր 97 վայրկյանը մեկ՝ մեկ արհեստական վիժեցում, և ավելի քան 320,000 արհեստական վիժեցում միայն անցյալ տարում: Պրպտելով համաշխարհային բազմաթիվ առաջնորդների կենսագրությունը՝ դժվար չէ տեսնել, որ նրանց գաղափարախոսություններից շատերի հիմքում ընկած է ծնողների ազդեցությունը:

Խաբեությունը, որ երկրագունդն ավելի կարևոր է, քան նրա մարդիկ, այս ազդեցիկ անձանց տալիս է բարոյական պատճառ՝ ոչնչացնելու մարդկային կյանքը՝ «մոլորակը փրկելու» համար: Ցեղասպանության այս տեսակետը (և դա այն է, ինչ կա, մի՛ սխալվեք) արդարացվում է նրանց հակաաստվածաշնչյան այն աշխարհայացքով, որ ավելի մեծ բարիքն արժե մարդկային կյանքի ոչնչացմանը: Նրանք կրթվել են գլոբալիստական հայացքներով. նրանք պետք է վերահսկեն մոլորակը, նրա մարդկանց և ռեսուրսները, որովհետև ունեն ավելի բարձր հասկացողություն, քան դուք և ես:

«Ասելով, թե իմաստուն են, հիմարացան, և անեղծ Աստուծո փառքը փոխեցին եղծանելի մարդու ... պատկերի նմանության հետ»:

– Հռոմեացիների 1.22,23

Սուրբ գրքում մեզ զգուշացվում է, որ վերջին օրերին թանձր խավարը կպատի երկիրը: Մարդիկ կլինեն փողասեր, պարծենկոտ, ամբարտավան, հպարտ, ավելի եսասեր, քան աստվածասեր: Նրանք կլինեն անբարեսեր, ծնողներին անհնազանդ... (Բ Տիմոթեոս 3.1-5): Հիսուսը նրանց, ովքեր կընտրեն մերժել Աստծուն, ասաց.

«Դուք ձեր սատանա հորիցն եք և կամենում եք ձեր հոր ցանկություններն անել. նա սկզբից մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև ճշմարտություն չկա նրանում: Երբ որ սուրն է խոսում, իրեններիցն է խոսում, որովհետև ստախոս է և ստության հայրը»:

– Հովհաննես 8.44

Կա միայն երկու թագավորություն, և երբ մարդիկ մերժում են Աստծուն և Նրա Խոսքը՝ որպես ճշմարտություն, ընտրում են լսել մեկ այլ ձայն և ապրել խավարի թագավորության համար: Այն դառնում է նրանց մտքերի և որոշումների սկզբնաղբյուրը, այնուհետև ծնում է ստեր և, վերջին հաշվով, սպանություն:

Մշակութային ազդեցության յոթ սարերը, որոնց մեջ գերիշխում է մարդու ամբարտավանությունը, հաճախ համագործակցության մեջ են Տիրոջ դեմ, բայց մենք ունենք հուսադրող խոստում, որ գրված է Եսայի 2-րդ գլխում.

«Եվ կլինի օրերի վերջում, որ հաստատվի կլինի Տիրոջ տան սարը՝ սարերի գլխին, և կբարձրանա բլուրներից, և հորդելով նրա մոտ կգնան բոլոր ազգերը: Եվ շատ ժողովուրդներ կգնան և կասեն. «Եկեք վեր գնանք Եհովայի սարը»»:

– Եսայի 2,2,3ա


Անկախ այն չարիքից, որ մենք նկատում ենք, Աստծո սարը կբարձրանա մարդու կառուցած յուրաքանչյուր աշտարակից և հիվանդագին յուրաքանչյուր գաղափարից վեր: Աստված կհաստատի նրանց, ովքեր իրենց կյանքը կառուցել են Իր Թագավորության հիմքի վրա:

Սա մի օր է, որի նմանը չկա, խաբեության օր, բայց նաև մեծ հնարավորության օր: Մենք չպետք է խաբվենք այս ժամանակներում: Հակամարտությունը մեծ է, բայց Աստված ավելի մեծ է ձեր մեջ, քան նա, որ այս աշխարհում է: Մենք պետք է զանազանենք այն օրերը, որոնցում ապրում ենք, և հասկանանք դրանց կարևորությունը: Մենք չենք կարող որոշել, թե որն է ճիշտ կամ սխալ առանց Աստծո Խոսքի՝ որպես մեր բարոյական կողմնացույցի: Ճշմարտության միակ հիմքը բխում է անսասան չափանիշից, երբ կյանքին նայում ենք Աստծո աչքերով և Նրա Խոսքի միջոցով: Սա մարդկության կողմից մեկ համաշխարհային կառավարում ստեղծելու առաջին փորձը չէ, որտեղ վերևում կանգնածները առանց Աստծո ղեկավարում և որոշում են, թե որն է ճիշտ կամ սխալ, բայց այս փորձերը մշտապես վատ ավարտ են ունենում: Աստծո Թագավորությունը և աստվածային ապրելակերպը կբերեն կյանք և ճշմարտություն և կարծակեն Աստծո

օրինությունը: Առանց Նրա մենք չենք կարող անել որևէ բան, որ ունենա հարատև դրական ազդեցություն:

Աստծո Թագավորությունը ճշմարիտ սիրո և լույսի Թագավորություն է, որովհետև Աստված սեր է, և Նրա Խոսքն ու ճանապարհները լույս են: Հիսուսը հայտարարեց. «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհաննես 8.12), և Մատթեոս 4.16-ն ասում է. «Ժողովուրդը, որ խավարի մեջ նստած էր, մեծ լույս տեսավ»:

Խավարի թագավորությունը կեղծում է սիրո և լույսի իրական աղբյուրը կեղծ տեսարանով, որը փայլում է, բայց ավարտվում է խառնաշփոթով և կործանմամբ: Երբեմն դժվար է տեսնել արտաքին տեսքից այն կողմ: Մենք երկնային օգնության կարիք ունենք, որպեսզի չխաբվենք դրա փայլից:



Խավարի թագավորությունը կեղծում է սիրո և լույսի իրական աղբյուրը կեղծ տեսարանով, որը փայլում է, բայց ավարտվում է խառնաշփոթով և կործանմամբ: Երբեմն դժվար է տեսնել արտաքին տեսքից այն կողմ: Մենք երկնային օգնության կարիք ունենք, որպեսզի չխաբվենք դրա փայլից:

Բ Կորնթացիների 4.4ա-ում ասվում է. «Սատանան, որ այս աշխարհի աստվածն է, կուրացրեց նրանց սրտերը, որոնք չեն հավատում: Նրանք անկարող են տեսնել Բարի լուրի փառավոր լույսը» (NLT): Աշխարհի համակարգը ժամանակավոր է և, ինչպես Բաբելոնի աշտարակաշինությունը, երկարաժամկետ հաջողություն չի ունենա: Ցավոք, ովքեր օժանդակում են դրան, մեծ դժբախտություն և ավերածություն են առաջացնում մարդկանց համար՝ միաժամանակ փորձարկումներ կատարելով նրանց կյանքի հետ: Սուրբ գիրքը մեզ հիշեցնում է, որ մենք տեսնում ենք ամբարիշտներին, և այնուհետև նրանք այլևս չկան: Թեպետ նրանք գուցե մեծ ճանաչում ունեն երկրի վրա, բայց նրանց կյանքը վերջանում է բարոյական սնանկությամբ: Սատանան իր կործանարար նպատակների համար պարզապես օգտագործում է մարդկանց՝ որպես իր կամակատարների:

Հիսուսն ասաց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ»

(Հովհաննես 18.36): Մենք գիտենք, որ Հիսուսը Հոր կամքի և Նրա բարության օրինակն էր: Երբ Մովսեսը խնդրեց, որ Աստված ցույց տա նրան Իր փառքը, Աստված ասաց. «Ես քեզ ցույց կտամ Իմ փառքը Իմ բարության մեջ»: Աստված սիրող Հայր է, և Նա վերահսկում է հավիտենությունը: Սատանան չար բռնակալ է, որն «այս աշխարհի աստվածն» է (Բ Կորնթացիների 4.4)՝ աշխարհի համակարգերը մոլորեցնելու սահմանափակ ժամկետով: Աստծո անսահման լույսի մեջ ապրելու և Նրա ճանապարհներին հետևելու արդյունքը լիարժեքությունն է: Նրա հավատարիմ հետևորդներին տրված է իշխանություն՝ տիրելու և թագավորելու Քրիստոսի հետ ամբողջ հավիտենություն: Սա հակադրվում է սատանայի՝ խավարի սահմանափակ թագավորությանը, որի հետևանքն այն է, որ վերջինիս հետևորդները կառավարվում են բռնակալի՝ սատանայի կողմից և վերջում ենթարկվում են նույն հավիտենական դատաստանին: Սրանք ընտրություններ են, որ մարդիկ կատարում են, և նրանց որոշման հետևանքները կարող են հստակ երևալ նրանց կյանքում:

ԿՅԱՆՔԸ ԱՍՏՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
 Կառավարել և թագավորել Քրիստոսի հետ

Օգուտներ

- Փրկություն
- Լիարժեքություն
- Խաղաղություն
- Կարգուկանոն
- Առողջություն
- Մատակարարում
- Երազանքներ
- Նպատակ
- Սեր
- Ընդունելություն
- Ներում
- Լիարժեք կյանքի կառուցում
- Ուրախություն
- Օրհնություններ
- Երջանկություն
- Ընտանիքի նախազօի վերականգնում
- Թիմային աշխատանք
- Տիրոջ օրհնության կրկնօրինակումը երեխաների կյանքում
- Հավիտենություն մեր սիրող Հոր հետ


**ԿՅԱՆՔ ԱՌԱՆՑ ԱՍՏՈՒ/
ՍԱՏԱՆԱՅԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**
Կառավարվել սատանայի կողմից

Անեծքներ

- | | | |
|--|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Խորտակված կյանքեր • Վախ • Անհանգստություն • Սարսափ • Տանջանք • Վերահսկողություն • Անիշխանություն • Հիվանդություն • Տկարություն • Ցավ • Խաթարված ընտանիքներ • Երեխաներ, որոնց գաղափարապես ուսուցա- | <ul style="list-style-type: none"> նում են և գործածում իր օրակագերի համար • Անհավատարմություն • Կիրք • Վիճաբանություն • Բարկություն • Ջայրույթ • Ջայրույթի նուպաներ • Չներում • Դատապարտություն • Մեղքի զգացում • Դառնություն • Կախվածություններ | <ul style="list-style-type: none"> • Կապանքներ • Բերդեր • Պարտքի գերություն • Աղքատություն • Երկրպագություն նյութական բաներին և բուռն ցանկություն ավելին ունենալու • Մահ • Կործանում • Առնետավազք • Միշտ չբավարարված • Երբեք բավական չէ |
|--|--|---|

Երբ ես երիտասարդ ուսանող էի Օրալ Ռոբերթսի համալսարանում, պետք է դիտեինք Ֆրենսիս Շեֆերի «Ուրեմն ինչպե՞ս պիտի ապրենք» գրքի ֆիլմաշարը: Դոկտոր Շեֆերը խոսում էր այն մասին, թե ինչպես են Աստծո և Նրա արժեքների մասին քաղաքակրթության հոգևոր գիտելիքներն արտացոլվում մշակույթի ոլորտում: Նա ցույց էր տալիս, թե պատմության ընթացքում հասարակության կրոնը և Աստծուն ընդունելը կամ մերժելը ինչպես

են արտացոլվում արվեստի/ժամանցի, կառավարության/քաղաքականության, մեդիայի, կրթության, առողջապահության, ընտանիքի և կրոնի մեջ: Որքան հասարակությունն անբարոյական է դառնում, այնքան նրա արվեստն ու ժամանցի ձևերը ցուցադրում են մարդկանց մեղանչած վիճակը: Օրենքները դառնում են անարդար, և մարդիկ տառապում են ապիկար ղեկավարության պատճառով: Ավելանում են աղքատությունն ու հետևանք հանդիսացող հիվանդությունները, քանի որ մարդկանց հետ վատ են վերաբերվում նրանք, ովքեր ունեն բացարձակ բռնապետական իշխանություն նրանց կյանքերի վրա:



Սատանան առաջին բռնապետն է, և բոլոր նրանք, ովքեր անաստված են, կհետևեն իրենց առաջնորդին: Նրանք արտադրում են իրենց տեսակից, ինչպես սերմն է արտադրում իր տեսակից: Նրանց մեջ սերմանվել է այն մոլորությունը, որ մարդն ինքն իր աստվածն է: Շեֆերն ասում էր. «Աստված կարգել է պետությունը որպես լիազորված իշխանություն. այն ինքնավար չէ: Պետությունը պետք է լինի արդարադատության գործակալ, զսպիչ արը՝ պատժելով չարագործներին, և պաշտպանի հասարակության մեջ եղած բարին: Երբ այն անում է հակառակը, չունի պատշաճ իշխանություն: Այնժամ դա յուրացված իշխանություն է և, որպես այդպիսին, դառնում է անօրինական և համարվում բռնապետություն»: Մենք այսօր ականատես ենք այս բռնապետությանը, և առանց Աստծո մարդիկ կստանանք ղեկավարություն՝ համարելով իրենց աստվածներ, ինչպես սատանան վարվեց, երբ փորձեց յուրացնել իշխանությունը:

Սուրբ գրքի և Հիսուսի վերադարձի մարգարեական նշանների լույսի ներքո կարող ենք ասել, որ մենք ապրում ենք վերջին ժամանակներում: Մենք պետք է հարցնենք, ինչպես Եզեկիել 33.10-ում է գրված. «Ուրեմն ինչպե՞ս պիտի ապրենք»: Այնուհետև պիտի հարցնենք. «Արդյո՞ք ես անձնապես նվիրված եմ Աստծուն և ունեմ Նրա «սպառազինությունը», որպեսզի մտնեմ իմ անձնական պատերազմի մեջ և հաղթեմ»: «Արդյո՞ք ես վարվում եմ Աստծո խոս-

քի համաձայն» և «Ինչպե՞ս եմ իրականացնելու իմ նախասահմանությունը ինքս ինձ համար և նրանց համար, ովքեր հույս են դրել ինձ վրա իմ ընտանիքում, համայնքում, երկրում և աշխարհում»:

Կա միջոց՝ խուսափելու այս աշխարհի ապականությունից և ապրելու Նրա աստվածային բնությամբ: Սա երկակի է այն իմաստով, որ մենք ունենք հոգևոր փախուստի հնարավորություն, բայց միաժամանակ ունենք խոստումներ, որոնք տալիս են մեզ պատասխաններ կյանքի, նրա իմաստի վերաբերյալ և, որ ավելի կարևոր է, այն մասին, թե ինչպես ապրենք: Եվ մենք ունենք կոչում՝ ոչ միայն փախչելու աշխարհի ապականությունից, այլև ասելու ուրիշներին, թե ինչպես դա անեն:

Իմ ամուսինը՝ Գարին, Աստծո Թագավորության և նրա գործառնությունների մասին ունի հայտնության այնպիսի պարզև, ինչպիսին չունի որևէ մեկը, ում ես լսել եմ: Ես հիանում եմ և խոնարհաբար քայլում նրա կողքին՝ նույնիսկ լինելով նրա կինը: Հիմնականում Գարին հասարակ անձնավորություն է, առանձնակի խնամք չպահանջող, և նրան դուր են գալիս միանգամայն հասարակ բաներ: Սակայն երբ սկսում է սովորեցնել Աստծո Թագավորության մասին, մարդկանց, այդ թվում՝ իմ ծնոտները կախվում են: Ես կտամ շատ պարզ, բայց խոր հասկացողություն, որ ստացել եմ Գարիից Բ Պետրոս 1.3,4-րդ խոսքերի վերաբերյալ.

Նրա աստվածային գորությունը շնորհեց ԻՆՁ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է Նրա մասին ԻՄ գիտությունով, որ կանչեց ԻՆՁ Իր փառքով և առաքինությունով (բարությամբ), որ նրանցով հաղորդակից լինեմ աստվածային բնությանը և փախչեմ աշխարհի ապականությունից, որ առաջացել է չար ցանկություններից:


Աստված տվել է մեզ այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքի և աստվածապաշտության համար, և քաոսային աշխարհում դա շատ մխիթարիչ խոսք է: Հակառակ դեպքում ինքնապահպանումը և վախը կարող են տիրել մեր կյանքին: Ինչպե՞ս եմ ստանում այն ամենը, ինչ անհրաժեշտ է: Նրա մասին իմ գիտությունով՝ համաձայն Սուրբ գրքի: Ո՞ւմ մասին մեր գիտությունով: Նրա, Ով կանչեց մեզ: Իսկ ինչպե՞ս Նա կանչեց մեզ լինելու Իրենը: Իր փառքով և

առաքինությամբ (բարությանբ): Աստծո փառքը Նրա ցուցադրած զորությունն ու բարությունն են: Այլ խոսքերով՝ Նա ունի զորություն՝ անելու այն, ինչ խոստացել է: Մենք պետք է հավատանք, որ Նա ունի զորություն, և նույնպես պետք է հավատանք Նրա բարությանը: Այլ կերպ ասած՝ Նրա կամքը քեզ համար բարի է: Սա Նրա բարությունն է: Եթե մենք հավատում ենք, որ Նա ունի փառք (կարողություն), և հավատում ենք, որ Նա ունի բարի մտադրություններ, այն ժամանակ մենք պետք է ընտրենք մասնակից լինել խոստմանը: Այս սկզբունքը որոշում է, թե արդյոք մենք կընդունենք խոստումները կամ, կարող ենք ասել, «փորձառությունները», որոնք նկարագրված և խոստացված են Աստծո խոսքում:


Տարիներ առաջ կրտսեր դուստրս ցանկացավ, որ երկարատև թռիչք կատարեի անկարգելով (պարաշյուտով) Ավստրալիա կատարած մեր ծառայողական ուղևորության ժամանակ: Այնքան էլ վստահ չէի, բայց ուզում էի իրագործել այն դատերս համար, որին շատ եմ սիրում, և այդ գաղափարն ինձ էլ մի փոքր ոգևորեց: Երկու հարց տվեցի հրահանգչին, որը ցատկելու էր ինձ հետ: «Քանի՞ ցատկ եք կատարել»: Ես պարզում էի, թե արդյոք նա ուներ կարողություն կամ զորություն՝ անելու դա: Նա պատասխանեց՝ 2,500: Ես գոհ էի: Երկրորդ հարցս այսպիսին էր. «Ուզում եք այսօր մահանալ»: Նա քթի տակ ծիծաղեց և ասաց՝ ո՛չ: Ես փորձում էի գնահատել, թե արդյո՞ք նրա կամքն ինձ համար բարի էր: Արդյո՞ք նա ցանկանում էր հաջողությամբ իրականացնել ցատկը (նրա բարությունը իմ և թերևս իր հանդեպ): Երբ իմացա, որ նա ունի փառք (կարողություն) և բարություն (բարի ցանկություն), ես պետք է ընտրեի մասնակցությունը: Ես պետք է ասեի՝ այո՛, նաև պետք է գրանցվեի՝ հայտնելով իմ համաձայնությունը, և ստորագրեի իրավական փաստաթղթերի վրա՝ ընդունելով իմ պատասխանատվությունը:

Աստված դեր ունի խաղալու, և մենք՝ նույնպես: Արդյո՞ք մենք՝ որպես անհատներ, որոնք սիրում են Հիսուսին, կստորագրենք, կհամաձայնենք Աստծո հետ և պատասխանատվություն կստանանք փախչելու աշխարհի ապականությունից, այն աշխարհի, որը Նա տվել է մեզ՝ զբաղեցնելու համար, մինչև Ինքը գա: Նա տվել է մեզ Իր խոստումները, սպառազինությունը, զենքերը և մեծ սխրանքներ կատարելու զորություն այնպիսի ժամանակում, ինչ-


պիսին սա է, եթե ընտրենք հավատալ և ներգրավվել Նրա Թագավորության մեջ:



1 Հավատա՛, որ Աստված ունի զորություն:
(ՓԱՌՔ)




2 Հավատա՛, որ Նրա կամքը քեզ համար բարի է:
(ԲԱՐՈՒԹՅՈՒՆ)



3 Ընտրի՛ր մասնակից լինել խոստմանը:
(ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ/ՀԱՎԱՏՔ)

Մենք կմոտենանք Աստծուն և Նրա Խոսքին այլ կերպ, եթե ընդունենք, որ Նրա կամքը (Նրա Խոսքը) բարի է մեր հանդեպ, և Նա ունի զորություն և իշխանություն՝ իրականացնելու այն, ինչ խոստացել է: Աստծո գերբնական ներկայությունն ու զորությունն են, որ տալիս են մեզ հույս և քաջություն խելագար աշխարհում: Մենք բաժնեկից ենք այս աստվածային գիտությանը, և դա փոխում է ամեն բան: Մենք անձնապես ունենք հազարավոր պատմությունների աստվածային միջամտության մասին, որը պատասխանում է կյանքի յուրաքանչյուր կարիքի և ստիպում Աստծո Խոսքին հավատացողներին փախչել այս աշխարհի ապականությունից: «Նա տվել է մեզ այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքի և աստվածապաշտության համար», և մենք կարող ենք խուսափել ապականված աշխարհից: Սրանք ձեզ լիազորող խոսքերն են հանուն Քրիստոսի աշխարհը գլխի-



Աստծո գերբնական ներկայությունն ու զորությունն են, որ տալիս են մեզ հույս և քաջություն խելագար աշխարհում:


վայր (իսկապես ոտքերը վեր) շրջելու համար: Ընտրելով ապրել Աստծո Թագավորության մեջ՝ դուք կարող եք վերականգնել ձեր կյանքն այնպես, ինչպես Աստված նախատեսել էր, այնուհետև ասեք ճշմարտությունն ուրիշներին:

«Այսպես է ասում Տերը. «Իմաստունը իր իմաստությունով չպարծենա, և զորավորը իր զորությունով չպարծենա, հարուստը իր հարստությունով չպարծենա, այլ սրանով պարծենա, ով որ պարծենում է, թե հասկանում և ճանաչում է Ինձ, որ ես եմ Տերը, որ երկրի վրա ողորմություն, իրավունք և արդարություն եմ անում, որ ես սրանց եմ հավանում», - ասում է Տերը»:

- Երեմիա 9.23,24

4

ԱՂԴԵՅՈՒԹՅԱՆ ՅՈԹ ՍԱՐԵՐԸ



Մայքը և Նորան Ուզբեկստանից տեղափոխվեցին Միացյալ Նահանգներ: Նրանք չունեին ընկերներ, չէին խոսում անգլերեն, և նրանց հաշվեհամարին կար ընդամենը 2,000 դոլար: Մայքը գտավ ցածր վարձատրվող աշխատանք, որը հազիվ էր բավականացնում՝ կատարելու վճարումները, և այդպես նա աշխատեց ինը տարի: Նրանք ապրում էին երկուսենյականոց փոքրիկ բնակարանում իրենց չորս երեխաների հետ: Նորան հույս էր փայփայում, որ մի օր կկարողանան վարձել երեքսենյականոց բնակարան, բայց ինքնիրեն ասում էր, որ դա այն ամենն է, ինչ կարող են երբևէ իրենց թույլ տալ: Նախքան Ամերիկա տեղափոխվելը նրանք իրենց երկրում հաճախում էին գաղտնի եկեղեցի: Նույնիսկ հաճախելը վտանգավոր էր: Նրանք գտան եկեղեցիներ ԱՄՆ-ում, որոնք հիասթափեցնող էին, քանի որ դրանցից շատերը կարծես նվիրված չէին Աստվածաշնչին կամ չէին ապրում հավատքի կյանքով: Մայքն ասում էր՝ մեծ մասամբ նրանք պարզապես առաջարկում էին կաթ և ոչ թե միս, բայց նա ցանկանում էր, որ իրենց հավատքն աճեր:

Նրանք այցելեցին մեր եկեղեցի, քաջալերվեցին՝ լսելով, թե ինչպես ենք սովորեցնում Աստծո Ռազավորության մասին և ծանոթանալով ուրիշների կյանքի վերափոխման պատմություններին: Նրանք հասկացան, թե ով են իրենք Քրիստոսում, սովորեցին Ռազավորության սկզբունքները և ճանաչեցին իրենց ներուժը՝

որպես Աստծո զավակների: Մայքը որոշեց խնդրել, որ Աստված իրեն ավելի լավ աշխատանք տա: Նա թողեց իր աշխատանքը՝ այդպես էլ չունենալով տարիներ շարունակ խոստացված առաջ-խաղացումը և չիմանալով, թե ուր պիտի գնա: Նա գտավ բեռնատարի վարորդի աշխատանք, որի համար վճարվեց ավելի, քան երբևէ վաստակել էր: Մայքն ու Նորան սկսեցին երազել այն օրվա մասին, երբ կկառուցեն իրենց տունը: Ամուսինները հավատում էին, որ Աստված կբերի այդ գումարը, և նրանք տնտեսում էին: Նրանք այնքան հուզված էին, երբ վերջապես ավարտեցին իրենց տան կառուցումը 465 քառ. մ տարածքի վրա: Սա նշանակում էր հասնել երազանքին: Թեև նրանց կյանքը փոխվում էր, Մայքը շարունակ ճանապարհներին էր: Քանի որ նա ընտանիքին քիչ ժամանակ էր հատկացնում, նրանք կրկին աղոթեցին և որոշեցին սկսել իրենց գործը: Ի վերջո նա սկսեց վարձել վարորդների և հիմնեց իր բեռնափոխադրող ընկերությունը:

Ընդամենը չորս տարում փոքր բնակարանի անհարմարություններից և սահմանափակ ապագայի հեռանկարից Մայքը հասավ նրան, որ այժմ ունի աշխատակիցներ, որոնք օգնում են նրան փոխադրելու բեռները և պայմանագրեր կնքելու խոշոր ընկերությունների հետ: Նրա անգլերենը գուցե մի փոքր կոտրված է, բայց նա կոտրված չէ: Նա կարողանում է ժամանակ անցկացնել իր երեխաների և կնոջ հետ, քանի որ աշխատում է տնից: Նրանց կերպարանափոխումը քաջալերել է ուրիշներին՝ բացահայտելու Աստծո Թագավորությունը: Նրանք ազդեցություն են թողել շատերի վրա իրենց պատմությամբ, թե ինչպես Աստծո Թագավորությունը վերափոխեց իրենց ֆինանսական վիճակը, ընտանիքը և կյանքը: Նրանց կյանքի պատմությունը ծառայություն է, որ քարոզում է առանց ամբիոնի: Մենք ունենք հազարավոր այսպիսի պատմություններ կյանքի բոլոր բնագավառներում: Վաղ եկեղեցին բուռն աճ ունեցավ կերպարանափոխման և հրաշքների շնորհիվ, որ տեղի ունեցան նաև Մայքի ու Նորայի կյանքում:

Մարդկանց պատմությունները լավագույն քարոզներն են: Երբ մարդիկ վերապրում են Աստծուն իրենց կյանքում, դա գրավում է ուրիշներին: Հաճախ ենթադրվում է, որ ծառայությունն իրականացնում են հոգևոր ծառայողները կամ եկեղեցու հովիվները: Կարծիք կա, որ միայն գերլուրջ քրիստոնյաներն են մտնում ծա-

ռայության մեջ, իսկ մնացած քրիստոնեական աշխարհը նստում է մի կողմում՝ համարվելով երկրորդ կարգի հոգևոր, և կատարում «աշխարհիկ դերեր»։ Խոսքը վերաբերում է հատկապես գործարար առաջնորդներին։ Հովիվներին վարձատրում են «ծառայությունը» ղեկավարելու համար։ Սա շատ հեռու է վաղ եկեղեցու օրինակից, որն աշխարհը գլխավայր շրջեց։ Հիսուսն Իր աշակերտներին կանչեց ձկնորսներից, մաքսավորներից և նորադարձներից։ Պողոս առաքյալն իր ծառայությունը ֆինանսավորում էր վրանագործությամբ։ Իր գործի բերումով էր, որ նա հարաբերություններ հաստատեց Պրիսկիլայի և Ակիդասի հետ, որ շարունակվեցին ամբողջ կյանքի ընթացքում։ Նա նույնիսկ նշեց, որ եկել է անհատույց ծառայելու և իր ծառայությունը ֆինանսավորում է իր իսկ ձեռքի աշխատանքով։

Պարզ հիշում եմ մեր իրավիճակը, երբ ամուսինս ավարտեց Օրալ Ռոբերթսի համալսարանը և որոշեց մտնել ֆինանսական ծառայությունների ոլորտ, ինչի կապակցությամբ ընտանիքի անդամները ազնիվ նկատառումներով զգուշացրին, որ նա անախորժության մեջ կհայտնվի «Աստծո կոչումը բաց թողնելու» համար։ Գարին իր տասնիններորդ տարեդարձի օրը փորձառություն ունեցավ Աստծո հետ, որը փոխելու էր նրա կյանքի հետագիծը։ Տեսիլքի մեջ նա լսեց մի ձայն, որն ասում էր. «Դու կանչված ես քարոզելու Իմ Խոսքը», և միաժամանակ տեսավ, թե ինչպես էր սովորեցնում մարդկանց, որոնք նստած էին ծալովի աթոռներին։ Քոլեջն ավարտելիս նա խնդրեց, որ Աստված ցույց տա, թե ինչ անի և որտեղ իրագործի այդ տեսիլքը։ Նրան առաջարկվեց պաշտոն ֆինանսական ծառայությունների ոլորտում, և նա խորապես զգաց, որ պետք է հետևի այդ առաջնորդությանը։ Դա նոր տարածք էր և մի փոքր վախեցնող, բայց մի հետաքրքիր բան տեղի ունեցավ։ Նա գտավ Աստծո կոչումը ֆինանսական ծառայությունների ոլորտում աշխատելիս։

Ֆինանսական անհավասարությունը, որ ինքներս վերապրեցինք աշխարհի համակարգի չափանիշներով «ֆինանսներ վաստակելու» բնականոն ճանապարհին, զգեց մեզ մեծ պարտքերի մեջ։ Մենք կասկածի տակ դրեցինք «պարտքերի համակարգը», որին մեզ սովորեցրել էին վստահել։ Սա ստիպեց մեզ Սուրբ գրքում փնտրել պատասխաններ և բացահայտել, որ իրականում

կա երկու թագավորություն, որոնք գործում են բոլորովին տարբեր կերպ, և արդյունքները նույնպես տարբեր են: Թեև մենք հավատացյալներ էինք, բայց վստահել էինք մի ֆինանսական ուղեցույցի, որը չէր համապատասխանում Աստծո Խոսքի խորհրդին: Մենք որոշեցինք «փոխել թագավորությունները» ոչ միայն հոգևոր առումով, այլև մեր ֆինանսական գործերում: Մեր վստահությունն ուղղեցինք Աստծո սկզբունքներին՝ Նրա ճանապարհներով մատակարարում ստանալու համար: Աստվածաշնչյան սկզբունքները հակառակ են նրան, ինչ մենք սովորել ենք դպրոցում, տանը և զանգվածային տեղեկատվության միջոցներով: Մենք սկսեցինք տեսնել, որ կա լուրջ խզում և անհամապատասխանություն Աստծո հրահանգների և այն ամենի միջև, ինչին հարմարվել ենք հավատալ կյանքի ամեն բնագավառում:

Այս ուսմունքները դարձան մեր աշխատանքի և ծառայության հիմքը: Մինչ օրս մեծ եկեղեցում հովվություն անելուն զուգահեռ մենք ղեկավարում ենք մի ընկերություն, որը հիմնել ենք ավելի քան 30 տարի առաջ: Մեր ընկերությունն օգնում է ընտանիքներին ազատվելու պարտքերից և կատարելու անվտանգ ներդրում: Բիզնեսն օգնել է ընտանիքներին՝ հասկանալու Աստծո Թագավորության աստվածաշնչյան մատակարարումը, և մենք մշակում ենք անվճար ծրագրեր՝ ցույց տալով նրանց, թե «ինչպես» ազատվեն պարտքերից: Սա կենսունակ ծառայություն է, սակայն ներկայացվում է բիզնես փաթեթով: Մեր բիզնեսում մարդիկ անկեղծանում են մեր առջև և պատմում իրենց խնդիրների ու ընտանեկան իրավիճակների մասին, որովհետև ֆինանսներն ինչ-որ կերպ դիպչում են բոլորին: Նրանք հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնք քչերն են պատրաստ պատմելու իրենց հովիվներին: Սա անհավանական հնարավորություն է՝ տարածելու Աստծո Թագավորությունը, մինչ օգնում ենք նրանց կառավարելու իրենց ֆինանսները:

Բարձրանալով բիզնեսի սարը՝ մեր մատակարարի հետ մենք դարձանք 5,000 գրասենյակներից համար մեկը: Մեր ծառայությունը սկսվեց շուկայի բնագավառից և, վերջին հաշվով, տարածվեց նաև այլ ոլորտներում: Պարտադիր չէ, որ հոգևոր ազդեցությունը վերագրվի միայն ստանդարտ ծառայությանը: Աստված գործածում է բոլորիս տարբեր ձևերով մարդկանց դիպչելու հա-

մար: Ուրիշների հետ ձեր ընդհանուր գործերը կամ ձեր առաջարկած բիզնես ծառայությունները կարող են դառնալ ձեր միսիոներական դաշտը: Աստված կանչում է մարդկանց ազդեցության տարբեր ոլորտներ և կոչ անում, որ Թագավորությունը տանեն իրենց հետ: Ձեր անձնական օրինակը բարձր է խոսում, և դուք կարող եք կիրառել Աստծո կյանքի սկզբունքները՝ ձևավորելով այլ կենսակերպ:

Նման հայտնություն եղավ ամուսնության մեջ: Ֆինանսների հարցում մարդկանց օգնելուն զուգահեռ մշտապես ի հայտ էին գալիս նրանց ամուսնական խնդիրները: Ինչպես ֆինանսների, այնպես էլ ամուսնության և ընտանիքի վերաբերյալ Աստված ունի բոլորովին այլ չափանիշներ և մոտեցում, քան այն, որ թելադրում է հայտնիների մշակույթը: Աստվածաշնչին հակասող գաղափարախոսությունները թափանցում են մեդիա, հոգեբանություն և կրթություն: Սեռական մտերմությունը սրբություն չունի, և սովորական է դառնում մինչամուսնական սեռական հարաբերությունների, մեկ գիշերով սեռական հարաբերությունների և սեռական անբարոյության յուրաքանչյուր երևակայելի ձևի ընդունումը: Վերջին 40 տարիներին տղամարդկանց և կանանց միջև հարաբերությունները փոփոխվել են. ամուսնության վերաբերյալ աստվածաշնչյան հայացքները զիջել են ժամանակակից ընտանիքի կառույցի ցանկացած տեսակի, որ հնարավոր է պատկերացնել: Վերջին հաշվով, սա հաջողությամբ չի պսակվում, և մարդիկ վսասվում են: Որտեղ կա վսասվածք, այնտեղ կա հույսի և օգնության կարիք ու ցանկություն: Դա հնարավորություն է:

Ես գրել եմ և խոսել այս թեմաների մասին ամուսնությանը նվիրված համաժողովներին՝ փոխանցելով Աստծո նախագիծը ընտանիքի համար: Երբ մեր ընտանիքում ապրեցինք այս սկզբունքներով և ներկայացրինք դրանք ուրիշներին, ինչպես որ ֆինանսական բնագավառում ունեցանք հաջողություններ, ամուսնության բնագավառում էլ տեսանք անհավատալի կերպարանափոխումներ: Մենք հասկացանք, որ եկեղեցու արդյունավետության պակասը մասամբ պայմանավորված էր փոխզիջումներով: Տարածված մշակույթին համապատասխան կենցաղավարելը գողանում է հավատացյալներից այն կյանքը, որն արտացոլում է Աստծո, այլ ոչ թե աշխարհի սկզբունքները: Մարդիկ փնտրում

են պատասխաններ և ցանկանում են արդյունքներ, բայց, չգիտես ինչու, ուղերձները չեն տալիս իրական պատասխաններ և չեն օգնում մարդկանց՝ հաղթահարելու կյանքի դժվարությունները և ունենալու իրական արդյունքներ: Դրանք դարձել են կրոնական, բայց ոչ կերպարանափոխող:

Որոշ առումներով եկեղեցին թողել է մյուս վեց սարերը հոգուտ միայն կրոնի: Բիզնեսը, կառավարությունը, ընտանիքը, մեդիան, արվեստը/ժամանցը, կրթությունը և կրոնը ազդում են մեր հասարակության վրա: Այն, ինչ ազդում է հասարակության վրա, բաց թողած հնարավորություն է, եթե չենք ներգրավվում այնտեղ: Ես հավատում եմ, որ սա այն է, ինչ ակնարկեց Հիտուսը, երբ ասաց. «Բանեցրեք, մինչև գամ»: Սա ռազմական հրահանգ է «տարածք գրավելու, ներխուժելու և տիրելու» մասին: Այն ինձ համար հնչում է ինչպես ազդեցություն աշխարհի վրա: Սխալ ընկալումներն այն մասին, որ ծառայությունը միայն հոգևորականների համար է, հավատացյալներին հետ են պահում «բանեցնելուց», ինչպես նաև Հիտուսին հետևելու արդյունքներն ուրիշներին «ցույց տալուց»:

Ինչ պետք է բանեցնենք: Ամեն ինչ, կյանքի ամեն բնագավառը, բոլոր յոթ սարերը: Մեզնից յուրաքանչյուրն ունի տարբեր հետաքրքրություններ, լինի մասնագիտական, ժամանցային թե գեղարվեստական: Աստված ստեղծել է քեզ յուրահատուկ կարողություններով և հետաքրքրություններով, բայց պատկերացրո՞ւ, քեզ նման ուրիշներն էլ կան: Դու կարող ես զբաղեցնել այս բնագավառները և քեզ հետ բերել քո հավատքը, որպեսզի ազդեցություն թողնես մարդկանց վրա Թագավորության նպատակների համար: Եվ մեր ջանքերում պետք է լինի ուրախություն: Եթե դու չես վայելում քո հավատքը, ինչո՞ւ մեկ ուրիշը պիտի ցանկանա այն:

Եկեղեցին դարձել է կրոնական և ոչ գործնական: Նվիրվածությունը նվազելով ավելի ու ավելի է դուրս մղել հավատքը ազդեցության հիմնական ոլորտներից՝ վերջին 25 տարում կրճատելով եկեղեցու հաճախելիությունը: Անշուշտ, ես չեմ ասում, որ եկեղեցին դարձնենք աշխարհիկ, բայց այն պետք է գրավի լինի: Սատանան ավելի լավ մարքեթինգային արշավ է անցկացնում անորակ արտադրանքի համար: Հավատքի հանդեպ սխալ վերաբերմունքը և թերևս ուսուցման պակասը ներթափանցել են եկեղեցիներ և բաժանել ծառայությունն ամենօրյա կյանքից, որտեղ

մարդիկ ապրում են, աշխատում, հանգստանում, խաղում, դեկավարում, սովորում և հոգ տանում առողջության կամ ֆինանսների համար: Թեև չկա աստվածաշնչյան վկայակոչում ազդեցության յոթ սարերի մասին, սակայն մեզ հանձնարարված է «գնալ ամբողջ աշխարհը և քարոզել Ավետարանը»: Մենք պետք է դիտարկենք սա որպես «գնալ յուրաքանչյուր մարդու աշխարհը» և լինել ներկայացուցիչ, «Քրիստոսի դեսպան» այդ ասպարեզում:

Ցավոք, երբ բաց ենք թողնում այս հնարավորությունները կամ թույլ ենք տալիս, որ աճող թշնամական մշակույթը նվազագույնի հասցնի մեր ներգրավվածությունը, երբեմնի կենդանի և կենսատու հավատքի տարածությունը լցնում է կրոնը, բայց՝ սուտ կամ մեռած կրոնը: Երկուսն էլ դատարկ են: Եթե մենք փոխզիջման

գնանք Աստծո Թագավորության ուսմունքների հարցում, որպեսզի «հասնենք» մարդկանց, մեր լսարանը կլցվի նրանցով, բայց չեն լինի կյանք փոխող ուղերձներ կամ Աստծո ճանապարհներով գործելու արդյունքներ: Ճշմարտության հանդեպ նվիրվածության պահպանումը և դրա համապատասխան կիրառումը կյանքում ու մշակույթում ստեղծում են հավասարակշռություն:

Մեր հավատքին պետք է միացած լինի նպատակ, և յուրաքանչյուր հավատացյալ պետք է իրականացնի Թագավորության որևէ հանձնարարություն այս կամ այն ազդեցության ոլորտում:

Մեր հավատքին պետք է միացած լինի նպատակ, և յուրաքանչյուր հավատացյալ պետք է իրականացնի Թագավորության որևէ հանձնարարություն այս կամ այն ազդեցության ոլորտում: Առաջնորդները պետք է սովորեցնեն մարդկանց, որ իրենց առաքելությունն է տարածել Թագավորությունը օրինակով և իրենց եզակի հանձնարարություններով, լինի բիզնեսի կառավարում, պաշտոնավարում, դասավանդում, խաղավարություն կամ խմբակների անցկացում: Երբ կա կյանքի կերպարանափոխություն, մենք ցանկանում ենք պատմել դրա մասին որևէ մեկին: Մենք պետք է հարցնենք. «Ինչպես կարող եմ տարածք նվաճելու համար նպատակաուղղված գործածել այն, ինչից բավականություն եմ ստա-

նում կամ ինչով ապրուստի միջոցներ եմ վաստակում»:

Անտարբերությունը, փոխզիջումը և քրիստոնեության դեմ մշակութային դիմադրությունը խլացրել են մեր ծայները, բայց դեռևս չափազանց ուշ չէ մեր խոսափողները վերադարձնելու համար: Քանի որ թույլ ենք տվել, որ չար ուժերի հարձակումները լռեցնեն և կտրեն մեր ծայները, մենք կորցրել ենք հսկայական տարածք՝ քրիստոնեությունը դարձնելով հականշակույթ: Բայց դա ինքնին հնարավորություն է: Խոշոր ընկերությունները և կրթական հաստատությունները որդեգրել են քաղաքականություն՝ արգելելու և սահմանափակելու հավատքի մարդկանց, որպեսզի վերջիններս չտարածեն իրենց տեսակետները և համոզմունքները: Դա կարող է վերաբերել հագուստին, որն արտացոլում է իրենց հավատքը, Աստվածաշնչին, որը մանկավարժը դնում է իր գրասեղանին, կամ դասարանում հավատքի ցանկացած վկայակոչմանը: Բարձր ծայները խլացրել են երգչախմբի ծայնը: Մեծ մասամբ կրոնական հայացքների արտահայտման հանդեպ այս վերաբերմունքը հավասարապես չի կիրառվել այլ հավատքների հանդեպ:

Մասնավորապես առանձնացվել է քրիստոնեական հավատքը, և ծաղրի են ենթարկվել սովորողները իրենց հավատքի համար: Գրաքննության է ենթարկվել արտահայտման ազատությունը, հատկապես՝ «քրիստոնեական հայացքների»: Արտասովոր ոչինչ չկա, երբ բացում ես գրավիչ, գեղեցիկ ձևավորմամբ ամսագրերի էջերը տան, առողջության կամ նորաձևության մասին, որոնք հեղեղված են մեդիտացիոն կեցվածքով մարդկանց շքեղ տեսարաններով կամ Բուդդայի և այլ աստվածների պատկերներով, ինչպես նաև օկուլտային կերպարներով ու խորհրդանշաններով զարդարված սենյակներով, և բոլորն էլ ներկայացնում են «լավ կյանքը»: Քրիստոնեական խորհրդանշաններն ու արտահայտությունները հազվադեպ են երևում և համարվում են վիրավորական, երբ ցուցադրվում են: Երկրով մեկ ամեն օր մեդիտացիայի խմբերն ու դասարանները հավաքվում են յոգայով և մարտարվեստի ձևերով զբաղվելու համար: Դա կարող է ոգեկանչության առիթ տալ՝ հնարավորություն ընձեռելով դատարկվելու և լցվելու այլ հոգևոր ուժերից: Սրանք դարձել են առօրյա կենսաձև մշակույթում, այդ թվում՝ շատ քրիստոնյաների համար: Առողջ սննդի խանութները, մարզասրահները, նորաձևությունը, ժամանցը, մեդիան և ար-

վեստը բացահայտ ցուցադրում են աշխարհի կրոնների և օկուլտային «պաշտամունքի» աստվածներին, և ոչ ոք չի դժգոհում:

Երաժշտությունը և արվեստի բոլոր տեսակները, առանց այք թարթելու, ներառում են օկուլտիզմի պատկերներ և խորհրդանշաններ, բայց այդպես չէ քրիստոնեական պատկերների դեպքում: Դրանք ենթարկվում են գրաքննության՝ համարվելով վիրավորական: Ուղեղների վացման միջոցով մեդիան հետևողականորեն նշում է, թե որքան նեղմիտ և անհանդուրժող են քրիստոնեական հայացքները, և շատերին ամաչեցնում է ու ստիպում լռել: Մեր հայացքներն անհանդուրժող չեն: Դրանք պարզապես տարբերվում են աշխարհի հայացքներից: Մեր աշխարհը գովաբանում է տարբերությունները, բայց ո՛չ մեր հավատքի արտահայտումներում:

Մի հողված նույնիսկ գովաբանում էր մահմեդական հավատքը և պաշտպանում օրենսդրությունը վերահսկելու նրա «իրավունքը», որովհետև ի տարբերություն քրիստոնեության՝ այն և՛ կրոնական հավատք է, և՛ օրենքների համակարգ, որ պետք է թույլատրվի մեր կառավարման համակարգերում: Իսկ ի՞նչ կասեք Մովսեսի Ղևտական օրենքի և Աստվածաշնչի հավատքի վրա հիմնված մեր Ամերիկյան Հանրապետության, նրա օրինական համակարգի, բարոյական օրենսգրքի և Տասը պատվիրանների մասին: Հուդա-քրիստոնեությունը դուրս է մղվում հանրային հրապարակից և կրթության սրահներից: Միտումնավոր ջանքեր են արվում հեռացնելու քրիստոնեական ուսուցումը, սկզբունքները և հավատքը բոլոր յոթ բնագավառներից:

Ասում են. «Փողն է ստիպում աշխարհին պտտվել»: Վերահսկելու և կառավարելու ցանկությունը տարածվել է հասարակության բոլոր բնագավառներում՝ ազդելով ամբողջ մշակույթի վրա: Պատմականորեն, արվեստի և ժամանցի արդյունաբերությունները հիմնականում ֆինանսավորվում և հովանավորվում են հարուստների կողմից, և բարերարների կտակով է որոշվում, թե ինչ պատվիրվի, և ինչը հանրաճանաչություն ձեռք բերի: Քաղաքականությունը թելադրում են հզոր ընտրախավային ուժերը, որոնք ունեն բանկային կապեր և ֆինանսավորում՝ թեկնածուների ներգրավելու համար, ինչպես նաև իշխանություն՝ նրանց ներկայացնելու կամ վատաբանելու այն լրատվամիջոցներով, որոնք կրկին ֆինանսավորվում են խոշոր կոնգլոմերատների գովազ-

դային արշավներով: Սոցիալիստական կորպորատիվը կուլ է տալիս փոքր ընկերություններին և տնտեսություններին: Առողջապահությունը վերահսկվում է այս նույն խոշոր կորպորատիվ ուժերի կողմից: Կառավարության ղեկավարները հեշտությամբ կարող են դառնալ խամաճիկներ համաշխարհային առաջնորդների և սոցիալական ինժեներների խմբի համար, որոնք կառուցում են այն աշխարհը, որին իշխում են:

Իսկ եկեղեցու ազդեցությունը: Քրիստոնեական հրատարակչական և երաժշտական ընկերությունների մեծ մասը գնվել է աշխարհիկ ընկերությունների կողմից, և ուղերձները, որոնք խնամքով մշակվել են «ներառական» լինելու համար, այլևս չեն արտացոլում Աստծո բացառիկ պատվիրանները հավատքի, սեռական վարքագծի, ընտանիքի, տնտեսության և բարոյականության վերաբերյալ: Որոշ եկեղեցիներ փակել են իրենց դռները, իսկ այլ կրոնական կազմակերպություններ թողել են հավատքը և միավորվել համաշխարհային հզոր դաշինքների, որպեսզի օգնեն հավասարության օրակարգերի իրականացմանը և քաղաքական իշխանության կիրառմանը: Այս կազմակերպություններն օգնում են ի հայտ եկող առաջնորդներին՝ ամրապնդելու գլոբալ օրակարգերը կրոնի քողի տակ, սակայն դրանք զուրկ են ճշմարտությունից:

Հիսուսը զգուշացրեց աստվածապաշտության կերպարանքի մասին, որը չուներ Իր զորությունը: Կրոնը պարզապես կմախքն է այն բանի, ինչը մի ժամանակ կենդանի էր: Երբ Աստված այլևս եկեղեցու կենտրոնում չէ, մարդն ու նրա ծրագրերը գլուխ են բարձրացնում և ստեղծում ուրացող եկեղեցի: Հիսուսն ասաց. «Քանի որ ո՛չ տաք ես, ո՛չ սառը, Ես կփսխեմ քեզ Իմ բերանից»: Արքեպիսկոպոս Վիգանոն մեղադրել է հենց իր՝ կաթողիկ եկեղեցուն այն բանի համար, որ զբաղվում է նման գլոբալիստական հարցերով՝ առանց սուրբգրային սկզբունքների պահպանման: Նրա գործերը և խոսքերը շատ ճշմարտություններ են պարունակում և արժանի են ուշադրության: Նա ենթարկվել է գրաքննության, ինչպես Երեմիա մարգարեն, որին նետեցին գուբը՝ ճշմարտությունն ասելու համար: Բարեբախտաբար, կան մարդիկ, որոնք պատրաստ են վտանգելու հետևանքները հանուն ազատության և երկնային նպատակի: Մենք ամուր ենք ճշմարտության զորությամբ: Եկե՛ք կիրառենք

մարտավարություն և գործենք միասին՝ ճշմարտությունը հռչակելու համար:

Կա մեծ հնարավորություն՝ չնայած բոլոր ճնշումներին: Գուցե մենք չափից շատ բան ենք սովորական համարել և ընդհանուր առմամբ հարմարվել ենք մեր հավատքին: Ի տարբերություն Նորայի և Մայքի, որոնք ստիպված էին գաղտնի երկրպագել Աստծուն, մենք երբեք չենք զգացել այդ աստիճանի ճնշումներ և հալածանք: Ես տեսնում եմ, որ արթնություն է սկսվել ազգերի մեջ: Ծնողները գիտակցում են, որ իրենց երեխաների կրթությունը վերցրել են իրենցից և փոխարինել սոցիալական օրակարգերի գաղափարական ուսուցմամբ: Կառավարության վարկանիշներն ամենացածրն են բոլոր ժամանակների համեմատ: Մարդիկ փոփոխություն են ցանկանում, և մենք գիտենք, որ փոփոխությունը,

որի կարիքը նրանք ունեն, և որը կարող է կերպարանափոխել մշակույթը, ինչպես տեղի է ունեցել պատմության ընթացքում, կենսունակ, կրակոտ հավատքն է, որը փոխում է կյանքերն ու ընտանիքները:

Մարդիկ փոփոխություն են ցանկանում, և մենք գիտենք, որ փոփոխությունը, որի կարիքը նրանք ունեն, և որը կարող է կերպարանափոխել մշակույթը, ինչպես տեղի է ունեցել պատմության ընթացքում, կենսունակ, կրակոտ հավատքն է, որը փոխում է կյանքերն ու ընտանիքները:

Եթե ջերմեռանդորեն աղոթենք այս բնագավառների համար, խնդրենք Աստծուց Իր մարտավարությունները՝ ավելի մեծ ազդեցություն ունենալու համար, և մեր աղոթքներին ավելացնենք նվիրում, գոր-

ծողություն և ներգրավվածություն, մենք կկարողանանք պայքարել հավատքի համար և հասնել ազդեցության մեր անձնական ոլորտներում, որպեսզի բերենք փոփոխություն: Դուք կանչվել եք Աստծո Թագավորության մեջ այս ժամանակի համար: Մենք կարող ենք կրկին ներթափանցել յոթ սարերը ճիշտ մտածելակերպով և վերադարձնել կորցրած կամ բաց թողած հնարավորությունները: Մենք ունենում ենք հիասքանչ արդյունքներ, երբ

օգտագործում ենք մեդիան, որպեսզի պատմենք կերպարանափոխման պատմություններ, որոնք ցուցադրում են Աստծո Թագավորությունը և այն փոփոխությունները, որ տեղի են ունենում մարդկանց կյանքերում ճիշտ այնպես, ինչպես Մայքի ու Նորայի կյանքում: Մենք պետք է հասնենք մարդկանց իրենց կարիքի մեջ և տանք գործող պատասխաններ, որոնք ունեն և՛ հոգևոր, և՛ գործնական կիրառություն: Նվաճե՛ք բոլոր սարերը:



ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞ՒՄ ԵՍ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ



Աստված ուներ ծառաներ, հրեշտակներ, բայց Նա ընտանիք էր ցանկանում: Դու սիրող Հոր երազանքն ես, մտահղացումը և արարչությունը: Դու միակն ես քո տեսակի մեջ, անփոխարինելի քո Հոր սրտում: Մեզ համար դժվար է հասկանալ այն պատերազմը, որի մեջ ներգրավված ենք՝ առանց իսկապես հասկանալու, թե ինչի համար է այն մղվում: Այն քեզ համար է մղվում: Պատկերացրո՛ւ, որ դու ունես երեխա, որի մասին երազում էիր նախքան նրա ծնունդը: Դու պահում ես այդ երեխային քո սրտում և վերջապես քո ձեռքերում: Քո սերն այդ երեխայի հանդեպ անսահման է: Դու ունես այլ երեխաներ, բայց չկան երկու միանման երեխաներ: Յուրաքանչյուրն ունի ամենահարազատ տեղը քո սրտում: Նրանք յուրահատուկ են բոլոր առումներով, և դու խորապես սիրում ես նրանց և փափագում լինել նրանց հետ: Բայց մի օր նախկին թշնամին ամենաչար մտադրություններով ներխուժում է քո տուն, մինչ դու տանը չես, և քո սիրելի զավակին գայթակղելով նստեցնում իր մեքենան՝ խոստանալով նրան մի նվեր, որը նա շատ է ցանկանում: Առևանգված երեխան անհետանում է և դառնում անհասանելի քեզ համար: Դու կարող ես ազատել նրան՝ միայն քո կյան-

**Աստված ուներ
ծառաներ,
հրեշտակներ, բայց
Նա ընտանիք էր
ցանկանում:**

քը որպես փրկագին առաջարկելով: Ինչ կվտանգես նրա կյանքի համար:

Հիսուսը վտանգեց ամենը և արեց դա այն ընտանիքի համար, որն Աստված ստեղծեց՝ քեզ համար, որ Նրա աչքի բիրն ես: Աստծուն հետաքրքրում է ընտանիքը: Կրոնը կարող է սխալ մեկնաբանել Աստծո սերը մեր հանդեպ՝ ստիպելով մեզ մտածել, որ Աստծուն միայն հետաքրքրում է այն, թե ինչ կարող ենք անել Իր համար, և մեզ պատկերելով որպես ծառաների կամ ստրուկների՝ որդիների և դուստրերի փոխարեն: Աստված ստեղծել է քեզ՝ տալով ընտրություն՝ հետևելու քո նախասահմանությանը կամ մերժելու Նրա սերը և հետևելու քո ծրագրին: Նա ստեղծել է քեզ՝ մտքում ունենալով հստակ նպատակ: «Ես գիտեի քեզ նախքան քո մոր որովայնում լինելը»: Դու չես ստեղծվել ստրուկ լինելու համար: Դու ստեղծվել ես Նրա նմանությամբ և Նրա պատկերով և ունես Նրա առանձնահատկություններն ու ԴԼԹ-ն: Որդիներն ու դուստրերը ունեն ժառանգություն իրենց հոր հետ, և ժառանգությունը ընտանիքի մասնիկ լինելու, այլ ոչ թե որպես ստրուկ գործելու շնորհիվ է: Աստված ընտրեց մեզ, բայց մենք ենք որոշում ընտրենք Նրան, թե ոչ:

Սաղմոս 8-ում հրեշտակները հարցնում են.

«Երբ որ տեսնում եմ Քո երկինքը, Քո մալաների գործը՝ լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր, ինչ է մարդը, որ Դու հիշում ես նրան, և մարդու որդին, որ Դու խնամք ես փանում նրա համար:

Եվ մի քիչ ցածրացրիր նրան Աստուց, բայց փառքով ու պատվով պսակեցիր նրան. Դու իշխան կարգեցիր նրան Քո ձեռքի գործերի վրա. ամեն բան նրա ուրբերի տակ դրեցիր»:

– Սաղմոս 8.3-6 (AMP)

Սատանան քեզ շատ է ասում, որովհետև Աստված ստեղծել է քեզ ավելի բարձր, քան հրեշտակներին, և, ինչպես Խոսքն է ասում, քեզ «մի քիչ ցածրացրեց Էլոհիմից (Աստուց)»: Երեխաները ստեղծված են իրենց հոր նմանությամբ և պատկերով, և դու ստեղծված ես Նրա պատկերով ու նմանությամբ: Հրեշտակները

առանձին արարչություն են և որդիներ չեն:

Սատանան արհամարհեց Աստծո կողմից մարդկության արարչությունը և փորձեց բարձրացնել իրեն Բարձրյալից վեր: Երբ նա գլխավորեց Աստծո դեմ ապստամբությունը երկնքում և արտաքսվեց Երկիր, դավաճանությամբ դարձավ Աստծո Թագավորության ոխերիմ թշնամին: Նա Աստծո դեմ նույն դավաճանության մեջ առաջնորդեց նաև Ադամին ու Եվային: Նա երկրում չունեի իշխանություն նրանց վրա, մինչև որ նրանք չտվեցին այդ իշխանությունը: Նրա միակ ուժը խաբելն էր, որի միջոցով ստիպեց նրանց իրեն հանձնել երկրի ղեկավարությունը: Դա է պատճառը, որ Սուրբ գիրքը նրան անվանում է այս աշխարհի աստված: Երկնքում Աստծո դեմ նա գործեց նույն խորամանկ, նենգ և մոլագար ստերով, որոնք նա օգտագործեց նրանց խաբելու և դավաճանության մեջ ներքաշելու համար:

Աստծո դեմ սատանայի հետ ապստամբած հրեշտակների բազմությունը այժմ խավար ոգիներ են, որոնք գործում են մարդկանց խաբելու և նույն դավաճանությանը դրդելու համար: Ամբողջ աշխարհը այս խավարի իշխանության կամ ազդեցության տակ է: Մարդիկ հայիոյում են Աստծուն և փորձում են վերացնել Նրա ազդեցությունը աշխարհից և կյանքի յուրաքանչյուր բնագավառից: Կան համատարած ստեր, որոնք ստեղծվել են, որպեսզի խորամանկորեն ներքաշեն մարդկանց գերության և ցավի մեջ, այնուհետև մեղադրեն Աստծուն պատերազմների, մահվան, հիվանդության և ավերածության համար: Սատանան ստեղծում է սարսափ այն քողի ներքո, որ մեղավորը Աստված է:

Հակոբոս 1.17-ը հաստատում է, որ ամեն բարի և կատարյալ պարգև վերևից է՝ երկնային լույսի Հորից, որում ոչ մի սովեր, ոչ մի փոփոխում, ոչ մի խավար չկա: Սա ինչ-որ մեկի պատկերը չէ, ով չարիք է գործում: Ինչո՞ւ է Աստված տալիս ձեզ բարի պարգևներ: Որովհետև սիրում է ձեզ: Աստված տվել է Իր զավակներին այն ամենը, ինչ վերաբերում է կյանքին և աստվածապաշտությանը, ինչպես որ բարի և սիրող ծնողը տալիս է իր զավակներին կյանքի համար անհրաժեշտ միջոցները, բայց Աստված տալիս է էլ ավելի:

«Եթե դուք, չար լինելով (ապականված մեղքից), գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որքան ավելի ձեր Հայրը, որ

երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ խնդրում են Իրենից»: Եվ բացի դրանից. «Նա ուրախանում է նրանց բարգավաճմամբ, ովքեր ծառայում են Իրեն»: Եվ ավելին. «Ես քեզ կտամ քո սրտի ցանկությունները»: Սա մեր Հոր սիրտն է, ով սիրում է քեզ և պարուրում Իր սիրով: Մեր երկրպագությունը պարտադրված չէ. այն մեր արձագանքն է Նրա սիրուն:

Սատանան և դիվային ուժերի մի հրոսակախումբ համաձայնության են եկել մարդկության դեմ և թիրախավորում են նրանց, ովքեր գալիս են Քրիստոսի մոտ և ընտրում տեղափոխվել Աստծո Թագավորություն: Մենք դառնում ենք նոր արարածներ Քրիստոսում, երբ ընդունում ենք Հիսուսին՝ ազատող Փրկչին, և Աստծո Հոգին մուտք է գործում մեր մեջ ու մեր ներսը լցնում նոր կյանքով ու զորությամբ, որ ի սկզբանե ստեղծված էինք ունենալու: Ինչպես որ Աստված կյանքի շունչ փչեց Ադամի ու Եվայի մեջ, երբ նրանց ստեղծեց, այնպես էլ Նրա կյանքի ուժը գալիս է մեր կյանքի մեջ, և մենք «վերստին ծնվում» ենք Նրա Հոգու՝ Սուրբ Հոգու նոր շնչով:

Մեր նոր վերստեղծված հոգով, որ կենդանի է Աստծո համար, մենք կարող ենք իմանալ, թե ով ենք մենք Նրանում, ինչ ժառանգություն և ինչ կոչում ունենք: Մինչ այդ մենք պարզապես սատանայի խաղաքարեր էինք, որ գործում էինք նրա խավարի թագավորության մեջ և ունեինք որոնման սահմանափակ կյանք: Մենք պետք է իմանանք մեր զենքերը և սովորենք, թե ինչպես գործածենք դրանք, որպեսզի հոգևորապես պայքարենք երկնային տիրույթներում, որոնք չենք կարող տեսնել ֆիզիկական աչքերով, բայց հայտնվում են մեզ Նրա Հոգուց: Այս զենքերը գործածելով է, որ հասնում ենք այն հաղթանակին, որն արդեն ձեռք է բերվել մեզ համար՝ որպես Աստծո ժառանգների և Նրա Թագավորության մեջ թագավորական ընտանիքի բարերարների: Երկնային մթնոլորտում կան իշխանություններ, զորություններ և գերիշխող ուժեր, որոնք այս ընկած դիվային ոգիներն են, որ փորձում են պատերազմել մարդկանց և Թագավորության դեմ: Մենք Աստծուն պետք է հանձնենք մեր սրտերն ու տկարությունները, այն ժամանակ Նա կտա մեզ զորություն՝ դիմադրելու նրանց Իր ուժով, որը գալիս է Սուրբ Հոգու միջոցով: Այս զենքերը նման չեն այն զենքերին, որոնք գործածվում են ֆիզիկական հակամարտության ժամանակ. դրանք հոգևորապես տարբեր են և զորավոր: Դրանք

տապալում են ցանկացած հզոր ուժի, որ դուրս է գալիս մեր դեմ, և կործանում են այն ստերը, որ մեզ գերության մեջ են պահում: Սուրբ գիրքն ասում է, որ մենք նստած ենք Նրա հետ երկնային վայրերում՝ Նրա իշխանության դիրքում, բայց մենք պետք է սովորենք, թե ինչպես հավատքով և ազդեցիկ զորությամբ գործածենք այդ իշխանությունը:

Աստծո սերը քո հանդեպ շատ ավելի ուժգին է, քան ցանկացած հարձակում քո դեմ: Մեր նոր կյանքով մենք ունենք գերակայություն և իշխանություն սատանայի և նրա հրեշտակների նկատմամբ: Քեզ տրվել է իշխանություն սատանայի ամբողջ զորության վրա, և ոչինչ որևէ կերպ չի փսափ քեզ: Սատանան ասում է, որ դու իրենից ավելի բարձր դիրքում ես Քրիստոսում:

Կարևոր է, որ դու հասկանաս, թե որքան մեծ է Աստծո սերը քո հանդեպ: Այլապես դու կարող ես ուշաթափվել մարտի ժամանակ, երբ հանգամանքները դասավորվեն քեզ հակառակ, և գայթակղվես անձնատուր լինելու վախին: Մենք չենք ապրում վախով, որովհետև Աստծո սերը, երբ կատարյալ է դառնում մեր մեջ, քշում է վախը: Ավելի մեծ է Նրա սերը քո մեջ և քո հանդեպ: Ավելի մեծ է Նա, որ քո մեջ է, քան նա, որ աշխարհում է: Աստված սեր է, և դու չես կարող պատկերացնել, թե որքան խորն է այդ սերը քո հանդեպ, բայց Նա հայտնում է դա քեզ Իր Հոգով: Աստծո սերը քո մեջ ավելի մեծ է, քան քո շուրջն ընթացող բոլոր պատերազմները:

Սատանան ցանկանում է խեղաթյուրել Աստծո բնավորությունը, հավատացնել քեզ, որ Աստված վատն է, որ Նա զայրացած է քեզ վրա, և Նա է վատ վարվում մարդկանց հետ, որպեսզի դաս տա նրանց: Սրանք դևերի վարդապետություններ են: Թշնամին գողանում է, այնուհետև մարդկանց հավատացնում, որ Աստված արեց դա: Մեր առաքելությունն է մերկացնել թշնամու ստերը կյանքի յուրաքանչյուր բնագավառում և ազդեցություն թողնել մարդկանց վրա՝ ուղղորդելով նրանց դեպի ազատություն Աստծո Թագավորության մեջ:

Երբ ունես ճիշտ փոխհարաբերություն Աստծո հետ, խաղաղություն և ուրախություն Սուրբ Հոգով, դու արտահայտում ես Աստծո բարությունը: Սա ամենակարևոր հիմքն է ուրիշների վրա

ազդելու համար: Մենք պետք է ունենանք բուռն փոխհարաբերություններ: Աստված ցանկանում է բարիքներ պարգևել նրանց, ովքեր հետևում են Իր ճանապարհներին: Երբ դու ապահովված ես և առողջ, ինչպես քո հոգին է հաջող, Աստված մեծարվում է: Զավակների փառքը հայրերինն է: Հոր հոգատարությունն արտացոլվում է նրանում, թե որքան լավ են ապահովված նրա զավակները, ուստի ինչո՞ւ սա նույնպես չլինի նրանց հանդեպ Հոր հոգատարության արտացոլումը, ովքեր հետևում են մեր կյանքին: Ոչինչ, որ ամեն բան չունենանք, բայց մարդիկ իսկապես հետևում են մեր կյանքին և մեր արդյունքներին: Հիսուսը հռչակեց. «Նրանց պտղից կճանաչեք նրանց»: Երբ անցնում ենք դժվարության միջով, այնուհետև դուրս գալիս դրանից, Աստված փառավորվում է: Հարձակումներ և խնդիրներ բոլորն են ունենում, բայց այն, թե ինչպես ենք վարվում բախումների և մեր կյանքի վերջնարդյունքի հետ, տեսանելի է մարդկանց և ունի մեծ ազդեցություն: Մենք չենք կարող որևէ մեկին տալ այն, ինչ ինքներս չունենք:

Լինել քրիստոնյա չի նշանակում, որ դու չես ունենա որևէ խնդիր. դա նշանակում է, որ դու ունես հաղթանակ՝ չնայած խնդիրներին: Սատանան լայնածավալ պատերազմ է վարում՝ փորձելով գողանալ մարդկանց սրտերը Աստծուց: Աշխարհը թշնամու ազդեցության տակ է:

«Գիտենք, որ Աստծուց ենք, և ամբողջ աշխարհը չարի իշխանության տակ է»:

– Ա Հովհաննես 5.19 (NKJV)

Մարդկանց կուրացրել է մշակույթը:

«Որոնցում այս աշխարհի աստվածը այն անհավատների սրտերը կուրացրեց, որ Քրիստոսի փառավոր ավետարանի լուսավորությունը չծագի նրանց վրա, որ աներևույթ Աստծո պատկերն է»:

– Բ Կորնթացիների 4.4

Մեր՝ յուրաքանչյուրիս կոչումն է ներկայացնել ճշմարտությունը նրանց և Աստծո Թագավորությունը ցուցադրել մեր հավատքում,

ընտանիքներում և մեր ձեռքերով աշխատելու կոչման մեջ, որպեսզի տալու բան ունենանք, և ուրիշները տեսնեն մեր Հոր բարությունը:

Սատանան ցանկանում է կողոպտել քեզ: Լակմուսի թեստը, որ որոշում է՝ տվյալ բանն Աստծուց է, թե սատանայից, սա է. արդյո՞ք այն գողանում, սպանում կամ կործանում է:

«Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի. Ես եկա, որ կյանք ունենան, և էլ ավելի ունենան»:

– Հովհաննես 10.10

Մեկ այլ թարգմանության մեջ գրված է՝ «լիարժեքորեն»: Աստծո ցանկությունն է, որ դու լիարժեք կյանքով ապրես:

Թշնամին գիտի, որ եթե կարողանա օգտագործել մշակույթում եղած ազդեցությունները, որպեսզի մարդկանց ներքաշի անհնազանդության մեջ, և նրանք գործեն բացասական իմաստով ցանքի և հունձքի (ցանելու և հնձելու) օրենքով, ապա, ցանելով մեղք, նրանք բաց կլինեն սատանայի համար: Նա փորձում է գողանալ մարդկանցից հարձակումների, ֆինանսական խնդիրների, գայթակղությունների, հիասթափության, բաժանման, հիվանդության և ապստամբության, ցանկացած բանի միջոցով, որով կստիպի նրանց հակառակվել Աստծուն և դառնալ իր գոհը: Հիշիր, սատանան ատում է քեզ, որովհետև քեզ տրվել են դիրք, ժառանգություն և իշխանություն, որոնց նա փափագում է:

Մեղքը սատանայի թակարդն է՝ Քրիստոսում քո իշխանությունը գողանալու համար: Նա փորձում է բերել քեզ նեղություն, որպեսզի խանգարի քեզ և հետ պահի այն հրաշալի կյանքից ու ծրագրից, որ Աստված ունի քեզ համար: Ահա թե ինչու է Սուրբ գիրքն ասում. «Արթուն եղեք. ձեր թշնամին որոնում է, թե որին կույ տա: Հակառակ կանգնեք նրան՝ հավատքով հաստատված»: Մենք պետք է հաստատ մնանք Աստծո սիրո մեջ՝ գիտենալով, որ սիրված ենք: Երբ փորձվում ես, որ ընկնես կյանքի խնդիրների ծանրության տակ, մի՛ մոռացիր լինել համբերատար նեղության մեջ, մնալ անդրդվելի և հրաժարվել փոխզիջումներից: Դու ապահով ես Հոր և Նրա Որդու՝ Հիսուսի սիրո մեջ, Ով վտանգեց ամեն բան:



ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ



Եթե մենք պատերազմի մեջ ենք. և անկասկած այդպես էլ կա՝ համաձայն նշանների, ուրեմն խիստ կարևոր է, որ ոչ միայն ճանաչենք մեր թշնամուն և նրա գործելակերպը, այլև հասկանանք հիմունքները, թե ինչպես գործածենք մեր զենքերը, և թե ինչպես է Աստծո Թագավորության Առաջնորդը գործում: Սա կարող է ակնհայտ թվալ, բայց ինձ համար ցնցող է այն, թե որքան շատ հավատացյալների չեն սովորեցրել պատերազմի հիմունքները: Նշանավոր մարզիկները, գործարարները և արտիստները գիտեն՝ որ հիմունքներն է անհրաժեշտ յուրացնել և հասկանալ ձեռնարկումներում հաջողության հասնելու համար:

Ամենաանհրաժեշտ հիմնարար ճշմարտությունը, որ պետք է ըմբռնենք յոթ սարերը վերադարձնելու համար, վերաբերում է այս չորս հիմնական սկզբունքներին.

- Աստված բարի է:
- Սատանան չար է:
- Աստված ունի իշխանություն թշնամու վրա:
- Նա տվել է քեզ Իր իշխանությունը սատանայի վրա:

Աստված բարի է

30 տարվա ծառայության ընթացքում ես շատ շփոթեցնող խոսակցություններ եմ լսել նման պարզ թեմայի շուրջ: Ցանկացած

**30 տարվա ծառայության
ընթացքում ես
շատ շփոթեցնող
խոսակցություններ եմ
լսել նման պարզ թեմայի
շուրջ: Ցանկացած տեսակի
պատերազմի մեջ մտնելու
համար ես պետք է
իմանամ, թե ովքեր են «լավ
տղաները», և ովքեր են
«վատ տղաները»:**

տեսակի պատերազմի մեջ մտնելու համար ես պետք է իմանամ, թե ովքեր են «լավ տղաները», և ովքեր են «վատ տղաները»: Յուրաքանչյուր զինվոր գիտի, որ պետք է հստակ պատկերացում ունենա, թե ում թիմից է ինքը, և հասկանա, որ այն կառավարությունը կամ ուժը, որի համար կռվում է, արժանի է հավատարմության: Որքան շատ քրիստոնյաներ են շփոթում Աստծո

գործերը և սատանայի գործերը: Նրանք տեղի ունեցող վատ բաները հաճախ վերագրում են Աստծուն, թե Նա է անում դա իրենց ինչ-որ բան սովորեցնելու նպատակով: Աստված Իր զավակներին չի տալիս հիվանդություն կամ ստեղծում վատ իրավիճակներ, որ սովորեցնի նրանց, ինչպես որ բարի ծնողն այս բաները չէր անի իր զավակին: Մենք կհամարեինք մանկական բռնություն, եթե ծնողը միտումնավոր իր զավակին հիվանդացներ: Սակայն հաճախ սա այն դիմակն է, որ սատանան դնում է Աստծուն սխալ ներկայացնելու համար, ինչպես որ Նա արեց Եդեմի պարտեզում, երբ գայթակղեց Եվային՝ կասկածելու Աստծո բնավորությանը:

Եթե մենք վստահ չենք, որ Աստված բարի է և բարի է միշտ, Նրան կվերագրենք չարությունն ու անիրավությունը և, անշուշտ, չենք կարողանա գտնել մեզ հուզող հարցերի պատասխանները կամ կարիքի ժամանակ անհրաժեշտ օգնությունը Նրանից, ով, մեր կարծիքով, չարիք է բերել մեզ վրա: Ու եթե մենք հավատում ենք, որ Աստված է անիրավության աղբյուրը, այդ դեպքում ընդհանրապես ինչո՞ւ պետք է հակառակվենք այն ամենին, ինչ առաջին հերթին եկել է Աստծուց: Սա այն շփոթությունն է, որ ստեղծվել է կրոնի և նրանց կողմից, ովքեր չունեն պատասխաններ: Նրանք ինչ-որ կերպ ավելի հարմար են համարում մեղադրել Աստծուն այն ամենի համար, ինչ սխալ է ընթանում, քան քննել իրական մեղավորին կամ խոստովանել, որ գուցե իրենք չեն կարողացել

կատարել իրենց դերը մարտական ծրագրում (Աստծո Խոսքում): Հնարավոր է՝ նրանք պատրաստ չեն եղել պատերազմին կամ չեն իմացել, թե ինչպես գործածեն իրենց սուրը, բայց ամեն դեպքում մենք չենք կարող կյանքի խնդիրները, հարձակումները կամ պատերազմի ձախողումները վերագրել մեր Թագավորին կամ զորքերի Հրամանատարին:

Հակոբոս 1.17-ն ասում է.

«Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևիցն է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա»:

Աստված միայն տալիս է բարի պարգևներ, և մենք կարող ենք վստահել Նրան պատերազմում: Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված բարի է մշտապես՝ ամեն ժամանակ: Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Անկախ նրանից, թե ինչ կարող է պատահել աշխարհում, մեր Հայրը հավատարիմ է, և Նրա Խոսքը ճշմարիտ է: Ցանկացած հակառակ միտք սուտ է, խաբեություն, որ ստիպում է մեզ կասկածել Նրա բնավորությանը:

Սատանան չար է


Սա հանգեցնում է երկրորդային ճշմարտություններից ամենահիմնականին: Սատանան չար է: Սատանան գալիս է, որ գողանա, սպանի և կործանի (Հովհաննես 10.10): Սուրբ գիրքը սատանային անվանում է ստի հայր հենց սկզբից (Հովհաննես 8.44), Աստծո ժողովրդին մեղադրող (Հայտնություն 12.10), կործանիչ և խառնաշփոթության, աղքատության ու հիվանդության հեղինակ: Հիսուսը ման էր գալիս՝ բարիք գործելով և բժշկելով բոլոր նրանց, ովքեր *հարստահարված էին թշնամուց*, որովհետև Աստված Նրա հետ էր (Գործք առաքելոց 10.38): Հստակ է, որ թշնամին է հարստահարում հիվանդությամբ, իսկ Հիսուսը եկավ, որ շտկի կամ բժշկի այն, ինչը թշնամուց էր: Հովհաննեսի 8.44-ում Հիսուսը դիմեց նրանց, ովքեր կրոնական ոգու ազդեցության տակ էին և շփոթեցնում էին ժողովրդին Աստծո բնավորության վերաբերյալ և օգտագործում էին կրոնը՝ որպես աստվածապաշտության ձև, բայց առանց զորության:

«Դուք ձեր սաքանա հորիցն եք և կամենում եք ձեր հոր ցանկություններն անել: Նա սկզբից մարդասպան էր և ճշմարտության մեջ չի մնում, որովհետև ճշմարտություն չկա նրանում: Երբ որ սուր է խոսում, իր էությունից է խոսում, որովհետև ստախոս է և ստության հայրը»:

– Հովհաննես 8.44 (MEV)

Աստված ունի իշխանություն թշնամու վրա

Եվ երրորդ՝ Աստված ունի իշխանություն թշնամու վրա: Շատ հաճախ մեզ ստիպում են հավատալ, որ Աստված և թշնամին հավասարազոր են այս պատերազմում, և մենք հանգում ենք այն



Շատ հաճախ մեզ ստիպում են հավատալ, որ Աստված և թշնամին հավասարազոր են այս պատերազմում, և մենք հանգում ենք այն կարծիքին, թե թշնամին ունի Աստծո հնարավորությունները կամ հավասար է Նրան:

կարծիքին, թե թշնամին ունի Աստծո հնարավորությունները կամ հավասար է Նրան: Թշնամուն փառաբանող պատմությունները ստեղծում են այնպիսի մտապատկեր, որ կարծես Աստված և սատանան մենամարտում են հաղթանակի համար: Սա ավելի հեռու չէր կարող լինել ճշմարտությունից: Սա ան-

հեթեթություն է և ակնհայտ սուտ, որ մոզոնել է հենց թշնամին, սակայն, ցավոք, շատ-շատ եկեղեցիներ նպաստել են տարածելու այն վերաբերմունքը, որը մեծարում է սատանային՝ որպես մեկի, ումից պետք է վախենալ, և բարձրացնում է նրա դիրքը, երբ իրականում Հիսուսը բացահայտորեն խայտառակեց նրան և նրա հիերարխիային:

Թշնամին պարտվել է Հիսուսի կողմից: Աստծո համար մեծ սխրանք չէր երկնքից նետել հպարտ հրեշտակապետ Արուսյակին (սատանայի նախկին ինքնությունը): Սատանայի ստերը և դավաճանությունը հանգեցրին այն բանին, որ հրեշտակների մեկ երրորդը միացավ նրան Ամենակարող Աստծո դեմ ապստամբության մեջ: Եվ երբ թշնամին խաբեց երկրի նոր թագադրված-

ներին, որպեսզի երկիրը հանձնեն իրեն, Աստծո ծրագիրն արդեն գոյություն ուներ, որի նպատակն էր փրկել Ադամին ու Եվային և ապագա մարդկությանը այն վշտից ու ցավից, որ նրանք բերեցին իրենց վրա անհնազանդության պատճառով: Հիսուսը վերցրեց մահվան ու դժոխքի բանալիները և նրան (սատանային) դարձրեց անզոր:

Այո՛, սատանան օդի իշխանության իշխանն է, և նա ունի սահմանափակ իշխանություն այս երկրային տիրույթում, որը տվեցին նրան առաջին տղամարդն ու կինը... բայց Հիսուսը՝ երկրորդ Ադամը՝ ծնված Աստուծուց, հաղթեց այս ախոյանին. սատանան պարտված է Հիսուսի արյունով:

Աստված ունի իշխանություն թշնամու վրա, և քեզ տրվել է նույն իշխանությունը

Եթե եկեղեցին կամ հավատացյալն ըմբռնում է պատերազմի առաջին երեք սկզբունքները, չորրորդը հաճախ շրջադարձային է լինում: Այն հստակ շարադրված է. Նա տվել է քեզ Իր իշխանությունը թշնամու վրա:

- Ահա իշխանություն տվեցի ձեզ ... թշնամու ԲՈԼՈՐ գործության վրա, և ձեզ ՈԶԻՆԶ չի վսասի (Ղուկաս 10.19):
- Այս գործերը և դրանցից ավելի մեծ գործեր կգործեք, որովհետև Ես իմ Հոր մոտ եմ գնում (Հովհաննես 14.12):
- Ինչպես Նա (Հիսուսն) է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում (Ա Հովհաննես 4.17):

Դու իրավասու ես գործածելու «իրավապահ մարմնի» նույն իշխանությունը, ինչ Հիսուսը գործածեց, երբ ման եկավ բարի անելով և կործանելով թշնամու գործերը: Մենք ունենք թանկ ընկեր, որ աշխատում է մեզ հետ մեր Թագավորության առաջխաղացման ծրագրում: Նա իրավապահ մարմնի ներ-

Դու իրավասու ես գործածելու «իրավապահ մարմնի» նույն իշխանությունը, ինչ Հիսուսը գործածեց, երբ ման եկավ բարի անելով և կործանելով թշնամու գործերը:

կայացուցիչ է: Նա աշխատում է քաղաքային որոշակի տարածքում, ունի իրավասություն՝ ապահովելու օրենքի պահպանումը և թույլ չտալու օրինախախտներին խոչընդոտել տեղական ձեռնարկությունների ամենօրյա գործունեությունը և խանգարել քաղաքացիներին իրենց առօրյա գործերում: Նրան հանձնարարված է կատարել գրքերում գրված օրենքները: Նա գործում է նույն իշխանությամբ, ինչ նրանք, ովքեր հանձնարարել են նրան ներկայացնելու իշխանությունը, և նրան պաշտպանում է հենց կառավարությունը: Ինքնին նա չունի իշխանություն՝ կանգնեցնելու բեռնատարին, բայց բեռնատարի վարորդը կանգ է առնում ոչ թե այն պատճառով, որ վախենում է նրանից, այլ այն կառավարության պատճառով, որ այդ մարդու կրծքանշանը ներկայացնում է: Լիազորված իշխանությունն է, որ նրան իրավասու է դարձնում ասելու. «Կանգնիր օրենքի անունից»:

Համենայն դեպս այդպես էին գործում օրենքը և կարգուկանոնը, մինչև որ վերիններից անօրինությունը չթափանցեց մեր կառավարություն: Վերիններում գտնվող մարդկանց կողմից օրենքը խախտելու և դրա պահպանումը կասեցնելու այս փորձերի միջոցով է, որ թշնամին ջանում է խափանել քո դիրքը և դնել իրեն այնպիսի դիրքում, որ սխալ մեկնաբանի օրենքը և գողանա եկեղեցու (քո) իշխանությունը: Եթե նա կարողանա անպատիժ մնալ կողոպուտի և գողության համար, կշարունակի իր «կրկեսը»: Սատանան լույսի հրեշտակի կերպարանքն է առնում և մոնչում է՝ որոնելով, թե ում կուլ տա: Մեզ պատվիրված է հակառակվել նրան՝ հավատքով հաստատված:

Հիսուսը տվել է քեզ Իր նույն դիրքը՝ լիազորված իշխանությամբ որպես Իր Թագավորության քաղաքացու: Նա նշանակել է քեզ Իր Թագավորության գործակալ: Մենք պարզապես Աստծո զավակներ չենք հարաբերությունների առումով: Մենք ժառանգակիցներ ենք և կառավարում ենք Աստծո կառավարության անունից՝ զբաղեցնելով ազդեցիկ պաշտոն: Աստվածաշունչն ասում է, որ դու նստած ես Քրիստոսի հետ երկնավորներում՝ ամեն իշխանությունից, զորությունից և տերությունից վեր (Եփեսացիների 2.6, 1.20, 21): Այս չար իշխանությունները դիվային ուժերի հիերարխիա են, որ փորձում են հակառակվել մարդկությանը և խախտել օրենքը: Այս օրինախախտները քառս են սեր-

մանում ոչինչ չկասկածող քրիստոնյաների մեջ, որոնք չեն հասկանում Քրիստոսում ունեցած իրենց իշխանությունը կամ Նրա Թագավորության օրենքները: Նրանք աղաչում և աղերսում են Աստծուն, որ օգնի իրենց, երբ Հիսուսն արդեն պարտության է մատնել թշնամուն և տվել է նրանց Իր Թագավորության բանալիները:

Եթե ոստիկանական ուժերում ծառայող մեր ընկերը ամեն օր գնար աշխատանքի և աղաչեր իր սերժանտին, որ իրեն ոստիկան լինելու իշխանություն տար, իսկ ինքը նստեր գրասենյակում և սուրճ խմեր, ինչ-որ պահի նա կկորցներ իր դիրքը, թեև նրա ղեկավարն արդեն տվել էր նրան հանձնարարություն և իշխանություն: Թերևս նրա իրավասության ներքո գտնվող «վատ տղաները» կօգտվեին իրավիճակից և կգողանային իշխանության նրա դերը: Կարգուկանոնի և խաղաղության փոխարեն նրանք կհրահրեին հանցագործություններ մարդկանց դեմ: Մինչդեռ ոստիկանն արդեն ուներ իրավունք՝ գործածելու իրեն տրված իշխանությունը և կանգնեցնելու չարիքը: Դա եկեղեցին է՝ դու և ես: Մենք Հիսուսից ստացել ենք բանալիները՝ գործի դնելու Իր Թագավորությունը, բացելու դռները և արգելելու չարիքը:

Հիսուսն ասաց.

«Եվ ես կտամ քեզ երկնքի արքայության բանալիները, և այն, որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում, և այն, որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում»:

— Մատթեոս 16.19

«Ահա իշխանությունը տվեցի ձեզ կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու բոլոր զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի»:

– Ղուկաս 10.19

Մենք ունենք մեր անձնական պատմությունները, թե ինչպես Աստված ազատեց մեզ պարտքի գերությունից, ազատագրեց իմ ամուսնուն վախից, բժշկեց մեր դստերը քայքայիչ հիվանդությունից և կառուցեց հրաշալի կյանք մեր ընտանիքի համար՝ հա-

**Մենք պետք է տեսնենք
այն ճշմարտությունը,
թե ով ենք մենք և ինչ
ունենք Քրիստոսում, և այն
ժամանակ մենք կարող
ենք ոչնչացնել մեր կյանքի
հոգևոր թշնամիներին:**

արդեն իրավամբ պատկանում էր իրենց: Մենք պետք է տեսնենք այն ճշմարտությունը, թե ով ենք մենք և ինչ ունենք Քրիստոսում, և այն ժամանակ մենք կարող ենք ոչնչացնել մեր կյանքի հոգևոր թշնամիներին:

Եթե մեզ տրվել է այս իշխանությունը թշնամու վրա, ինչո՞ւ են այդքան շատ մարդիկ ապրում իրենց ներուժից ցածր՝ տառապելով աղքատության և հիվանդության անեծքի տակ: Ինչո՞ւ են վատ բաներ տեղի ունենում մարդկանց կյանքում: Ուսումնասիրելով այս աշխարհի օրինաչափությունները՝ մենք սկսում ենք հասկանալ, թե ինչու է Սուրբ գիրքը հորդորում մեզ. *«Մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվեք ձեր մտքի նորոգությամբ»* (Հռոմեացիների 12.2): Այն բնագավառները, որոնք ամենաշատ ազդեցություն են ունենում կյանքի վրա, նվաճվել են, որպեսզի ստեղծվեն պատրանքներ, ապատեղեկատվություն և խարդախ միջոցներ մարդկանց թակարդի մեջ գցելու համար: Սա սատանային և նրա դիվային ոգիների հրոսակախմբին տալիս է հնարավորություն՝ դիպչելու մեր ընտանիքներին, ֆինանսներին, առողջությանը և խաղաղությանը:

Տնտեսագիտության վերաբերյալ սահմանափակ գիտելիքները և այն համակարգը, որին մենք սովորել էինք վստահել, արմատավորված էին պարտքի մեջ. «վարկային պատմություն ձևավորելը» և գնումներ կատարելը բավականին պարզ էին թվում, սակայն հետագայում 23 տոկոս տոկոսադրույքը ի հայտ բերեց մեր անտեղյակության հետևանքը: Վերջին հաշվով, այս դրամական սխեմաները գողանում են մարդկանց նախասահմանությունը, ժամանակը և փոխհարաբերությունը ընտանիքի հետ, քանի որ նրանք իրենց վաճառում են ֆինանսական ստրկության:

Մարդիկ կործանվում են, քանի որ չունեն գիտություն (Ովսեե 4.6) այն մասին, թե ինչպես է Աստված նախատեսել, որ ապրեն իրենց կյանքը, և դառնում են հակառակորդի հնարքների զոհը: Մեզ զգուշացվում է. «Անտեղյակ մի՛ եղեք սատանայի խորհուրդների» (Բ Կորնթացիների 2.11): Մեր ժամանակների վտանգավոր խաբեությունն այն է, որ թվում է, թե չկան հետևանքներ անիրավության համար, բայց կան ծանր հետևանքներ, որոնք կարող են հանգեցնել մահվան:

«Գիտենք, որ մենք, ով որ Աստուծոց է ծնված, մեղք չի գործում, բայց նա, որ Աստուծոց է ծնված, իր անձը պահում է, և չարը չի մոտենում նրան»:

– Ա Հովհաննես 5.18

Ինչպե՞ս ենք պահում մեր անձը: Դադարում ենք անիրավության և մեղքի կյանքով ապրելուց, որը դուռ է բացում մեր կյանքի կործանման համար: Մեղքը կամ անիրավությունը սատանային օրինական իրավունք է տալիս մեր կյանքերի մեջ, ինչպես դա կատարվեց Ադամի և Եվայի հետ: Եվ նշանակություն չունի, որ մենք անտեղյակ ենք Աստծո ճանապարհներին. մենք ունենում ենք նույն վերջնարդյունքը, ինչ այն մարդը, որը գիտեր անիրավության մասին, սակայն խախտեց Աստծո օրենքը: Հետևանքները նույնն են:

Աշխարհի համակարգերում ներկայացված ստերն ու ծուղակները հիմնականում ուղղված են կյանքի ամբարտավանությանը, աչքերի ցանկությանը և մարմնական ցանկությանը: Մենք այնքան ուժգին ենք ցանկանում ինչ-որ բան, որ խախտում ենք Աստծո սկզբունքները և առողջ դատողությունը՝ այն ձեռք բերելու համար: Մենք կարող ենք ավելի լավ հասկանալ մեզ վնասելու թշնամու ծրագիրը, եթե բացահայտենք, թե ինչպես է նա գործում կյանքի ազդեցության ոլորտներում: Աստված ցանկանում է, որ մենք ապրենք Իր սիրառատ իշխանության ներքո, Իր ազատ գոտում, որտեղ կա խաղաղություն, ուրախություն և մատակարարում, և իշխենք ու թագավորենք որպես որդիներ և դուստրեր Քրիստոսի հետ:

Յուրաքանչյուր գլխում ես կմերկացնեմ խավարի գաղտնի

ծրագրերն ու գործերը, այնուհետև այդ որոգայթներին կհակադրեմ Աստծո խոստումներով, ճշմարտությամբ լի սկզբունքներով և գործնական կիրառություններով, որպեսզի հաղթենք և ապրենք այն կյանքով, որ Աստված ծրագրել է մեզ համար Քրիստոս Հիսուսում: Եկե՛ք սկսենք:

Պատերազմական հռչակումներ

Աստված կենդանացրել է ինձ Քրիստոսի հետ, հարություն է տվել ինձ Նրա հետ և նստեցրել է Նրա հետ երկնային վայրերում՝ Քրիստոս Հիսուսում, որպեսզի եկող դարերում ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը՝ Քրիստոս Հիսուսում իմ հանդեպ ցույց տված քաղցրությունով (Եփեսացիների 2.6,7):

Ես նստած եմ Քրիստոսի հետ, Ով նստած է Հոր աջ կողմում երկնային վայրերում՝ ամեն իշխանությունից, պետությունից, զորությունից և տերությունից վեր, և Նրա անունը վեր է ամեն անունից, որ անվանվում է ոչ միայն այս դարաշրջանում, այլև այն, որ գալու է: Եվ Աստված ամեն բան դրեց Նրա ոտքերի տակ և Նրան գլուխ դրեց եկեղեցուն՝ բոլոր բաների վրա (Եփեսացիների 1.20-22):

Քանի որ Քրիստոսը նստած է բոլոր չար ուժերից վեր, և ես նստած եմ Նրա հետ, բոլոր ուժերը, որ Նրա ոտքերի տակ են, իմ ոտքերի տակ են Քրիստոս Հիսուսում:



ՅՈՒԹ ՍԱՐԵՐԸ՝ ԱՊԱԿԱՆՎԱԾ ԽԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ



Մինչ մենք կողմնորոշվում ենք Քովիդ-19-ի սահմանափակումների այս տարիների մեջ և փորձում վերականգնել կյանքն ու տնտեսական կայունությունը, ավելի շատ ցնցումներ են տեղի ունենում և զարգանում. պատերազմներ, պատերազմների համբաժներ, սով, հիվանդություն, կառավարության կողմից տրվող նույնականացման քարտեր, թվային արժույթներ և պետական վերահսկողության ավելացում: Ինչ է սպասվում ապագայում: Յուրաքանչյուրը ցանկանում է իմանալ, և միայն մեկ գիրք՝ Աստվածաշունչը, ունի այդ հարցի պատասխանը: Թեև մենք աղոտ ենք տեսնում, և շատերը տարբեր կերպ են մեկնաբանում մանրամասները, համընդհանուր ապագան շարադրված է Հայտնության, Դանիելի գրքերում, Եզեկիելի 37-39-րդ գլուխներում և Մատթեոսի 24-րդ գլխում: Այս գրքերը նկարագրում են վերջին օրերի և վերջին ճակատամարտի պատկերը, որում երկրի ազգերը դաշինք են կազմում գազանի ուժերի ներքո, որոնք ձգտում են հակադրվելու Աստծուն: Սատանայի հետ համաձայնեցված՝ քաղաքական գործիչը, Հակաքրիստոսը, Սուտ մարգարեն և կրոնական գործիչը օգտագործում են իրենց զորությունը, որպեսզի իրականացնեն խաբեության և դավաճանության միջոցով մարդկանց կործանելու սատանայի վերջին փորձը և վերջին պատերազմը: Մշակույթի յոթ սարերը հմտորեն կառավարվում են գազանի կողմից. սուտ մարգարեն և Հակաքրիստոսի կառավա-

րությունն ազդում են մարդկանց վրա, քանի որ նրանք կապված են մեր մշակույթը ձևավորող այս ոլորտների հետ և դրանց ազդեցության տակ են:

Սարերն ինքնին չարիք չեն, բայց քանի որ մեղքով ապականված ազդեցության ոլորտներ են, գրավվել և հղկվել են այնպես, որ ազդեն մարդկանց վրա, ցավոք, սխալ ուղղությամբ: Մենք տեսել ենք ազդեցության այս ոլորտների համագործակցությունը և համաձայնեցվածությունը: Կարծես կա մեկ օրակարգ, և բոլոր ճանապարհները տանում են դեպի նույն նպատակակետը: Մենք չպետք է վախենանք, այլ պետք է գիտակցենք և զգուշանանք այն ճանապարհից, որը տանում է սխալ ուղղությամբ:

Աշխարհի համակարգերը, անկախ դրանց անուններից, ունեն ազդեցության հիմնական աղբյուր: Դա պետք է լիներ եկեղեցին, բայց, ցավոք, այս պահին այդպես չէ: Սակայն եկեղեցին արթնանում է և բարձրանում դեպի իր նախասահմանությունը: Ամբողջ աշխարհում տղամարդիկ և կանայք կայացնում են որոշումներ այս կամ այն ազդեցության ներքո: Ինչպե՞ս է այս համախմբվածությունն իրականացնում աստվածաշնչյան մարգարեությունը մեր ժամանակներում:

Տնտեսական ցնցումները, գնաճը և սակավությունը, անշուշտ, մեր ժամանակների և Սուրբ գրքում կանխատեսված նշաններն են: Ֆինանսական կանխատեսումները, արժեթղթերի շուկաները և խնայողությունները ստվերվում են ֆինանսական վերագործարկման և թվային արժույթի ծրագրերով: Թվում է, թե ազդեցության բոլոր յոթ սարերը ապականվել և համախմբվել են վերջին ժամանակների համար: Արվեստը, մեդիան, տնտեսությունը, կառավարությունը, կրթությունը, բժշկությունը և նույնիսկ կրոնական ուժերը, ապականված սատանայի կողմից, ամբողջ երկրագնդով մեկ համախմբվել են Աստծո դեմ հայիոյության համար: Միթե սա Հայտնության էջերում գրվածն է, որ քննվում է աստվածաշնչյան մարգարեություններում:

Հայտնության չորս ձիավորները

Հայտնության 6.2-7-րդ խոսքերում նկարագրվում են չորս ձիավորներ: Դրանք ներկայացնում են աշխարհում գործող ուժերին և

սուրհանդակներին: Սպիտակ ձին ներկայացնում է իշխանության/կառավարության հանդեպ հավատարմության կեղծ համակարգը կամ աշխարհի համակարգը: Կարմիր ձին ներկայացնում է քաղաքացիական պատերազմը և հակամարտությունը, որը վերացնում է խաղաղությունը: Սև ձին տնտեսական անկման խորհրդապատկեր է: Եվ վերջին՝ չորրորդ ձին, խորհրդապատկեր է մահվան, որը սակավության, պատերազմի և սովի հետևանք է:

Հիսուս Քրիստոսի՝ վերջին ժամանակների Հայտնության գրքի 6-րդ գլխի 1-6-րդ խոսքերում ասվում է.

«...Եկ և տես: Եվ տեսա, և ահա մի սպիտակ ձի, և նրա վրա նստողը մի աղեղ ուներ, և մի պսակ տրվեց նրան, և նա դուրս եկավ հաղթելով և հաղթելու համար... մի ուրիշ ձի դուրս եկավ կարմիր, և նրա վրա նստողին տրվեց, որ խաղաղությունը վեր առնի երկրից, և որ իրար մորթեն... Եվ տեսա, և ահա մի սև ձի, և նրա վրա նստողը մի կշեռք ուներ իր ձեռքում: Եվ չորս կենդանիների միջից մի ձայն լսեցի, որ ասում էր. «Մի կապիճ ցորենը մի դինարի, և երեք կապիճ գարին մի դինարի...»:

Այս հատվածը հայտնում է սաստիկ գնաճի մասին. ինչպես նկատվում է, սննդամթերքի կամ գազի գինն այսօր բարձր է: Աշխարհի որոշ մասերում սակավությունն այնքան զգալի է, որ կարող է սով սկսվել: Սուրբ գիրքն ասում է. «Մի կտոր հացը՝ մեկ պարկ ոսկու դիմաց»: Սննդամթերքը և լայն սպառման ապրանքները դառնում են առաջնահերթություն:

Սև ձիուց հետո՝ գունատ, դեղնականաչ չորրորդ ձիուց անմիջապես առաջ, որը խորհրդապատկերում էր սովի, հիվանդության և պատերազմի հետևանքով առաջացած մահը, կա զգուշացում. «Ձեթին և գինուն վնաս չտաս»: Ոմանք մեկնաբանել են ձեթը և գինին որպես շքեղություններ՝ ցույց տալով, որ սակավությունը չի տարածվի ամբողջ աշխարհում: Բայց աստվածաշնչյան տեսանկյունից ձեթը կամ յուղն օգտագործվում է սրբագործման համար՝ որպես օծման յուղ: Յուղը նշանակում է օծություն, վերականգնում, ուրախություն, բժշկություն և լիություն: Սա Սուրբ Հոգու աշխատանքն է՝ մեր փրկագնման յուղը և կնիքը: Գինին ներկայաց-

նում է Նոր ուխտի՝ Հիսուս Քրիստոսի՝ Մեսիայի՝ մեր քավությունը փրկագնողի արյունը: Ձեթին և գինուն մսաս չտաք: Արդյո՞ք ձեթը (յուղը) և գինին այն օծյալները չեն, որոնք գնվել են Հիսուսի արյունով և կնքվել Սուրբ Հոգով: Ես այդպես եմ հավատում: Վնաս մի՛ տվեք այն ամենին, որ պատկանում է Նրան:

Կա ուժեղ կապ այս ձիերի կամ սուրհանդակների միջև, և մեզնից յուրաքանչյուրն ականատես է եղել իշխանության, պատերազմի, տնտեսության և մահվան այս ուժերի ազդեցությանը, որոնք գործում են միասին՝ մի քանիսն ավելի ակտիվ, քան մյուսները: Դրանք փոխկապակցված են: Մեծ իշխանությունը կամ

Աշխարհի համակարգը խաբում է, ու եթե մենք հարմարվենք ընդունելու այն որպես մեր աղբյուրի, ի վերջո բաց կթողնենք Աստծուն և Նրա ծրագրերը:

նրանք, ովքեր փորձում են վերահսկել և օգտագործել այդ իշխանությունը, հրահրում են պատերազմներ, որոնք հանգեցնում են տնտեսական ցնցումների և մահվան, որի պատճառը սովս է, հիվանդությունը կամ պատերազմը: Խաղաթոյթերից մեկը կարող է դրվել առաջինը՝ մյուսին միավորներ բերելու համար, բայց երբ առաջին խաղաթուղթը դրվի, մյուսները ցույց

կտան իրենց խաղաթոյթերը: Աշխարհի համակարգը խաբում է, ու եթե մենք հարմարվենք ընդունելու այն որպես մեր աղբյուրի, ի վերջո բաց կթողնենք Աստծուն և Նրա ծրագրերը:

«Որտեղից են պատերազմունքներ և կոհիմներ ձեր մեջ. չէ՞ որ այստեղից է, այսինքն՝ ցանկություններից, որ պատերազմում են ձեր անդամներում: Ցանկանում եք և չունեք. սպանում եք և նախանձում եք և չեք կարողանում հասնել. պատերազմում եք՝ կռվում եք, բայց չունեք, որովհետև չեք խնդրում ... չգիտեք, որ աշխարհիս սերը թշնամություն է Աստծո դեմ. արդ, ով որ կարողանա աշխարհի բարեկամ լինել, իր անձը Աստծո թշնամի կանի»:

– Հակոբոս 4.1-4

Մենք ցանկանում ենք բարեկամանալ և ընդունված լինել, բայց աշխարհի հետ բարեկամությունը նշանակում է, որ բաց ենք թող-

նում Աստծո ծրագիրը մեզ համար: Գայթակղությունն այն է, որ ընդունենք աշխարհի համակարգում ընթացող գործունեությունը, ընդունենք այն «այնպիսին, ինչպիսին որ կա», և զիջենք մեր արժեքները և ճիշտ ու սխալի աստվածաշնչյան հանձնագրերը՝ ընդունելություն, առաջխաղացում, ֆինանսներ և հաջողություն գտնելու համար: Սա է վերահսկողության առանցքը, որը համակարգերը համախմբում է մեկ աշխարհակարգի մեջ, որն այնքան ճշմարտանման է նրանց համար, ովքեր չեն տեսնում խաղի ավարտը: Կա ճանապարհ, որ ուղիղ է թվում, բայց նրա վերջը կործանում է:

Կարևոր է հասկանալ պատմությունը, թե ինչպես է թշնամին մանևրում, որպեսզի օգտագործի մարդկանց, ընտանիքներին և պարտքը՝ ազդեցության ոլորտները վերահսկելու համար: Դիվային ներգործությունը կարող է մոլորեցնել և կողմնորոշել դեպի բացասական նպատակներ: Երբ սկսեցին կազմավորվել համաշխարհային այս դաշինքները, և ինչպես են նրանք միավորվում:

Մի հողվածում ասվում է, որ ավելի ու ավելի փոխկապակցված և փոխկախյալ աշխարհում որոշ հիմնախնդիրներ չափազանց մեծ են, որպեսզի երկրներն ինքնուրույն լուծեն դրանք, ուստի նրանք պետք է աշխատեն միասին և մասամբ անեն դա միջազգային կազմակերպությունների միջոցով, որոնք քաջալերում են համագործակցությունը և դիվանագիտական լուծումները՝ գլոբալ խնդիրները հաղթահարելու համար:

Սա, անշուշտ, խելամիտ է հնչում, բայց երբ այս կազմակերպությունները սկսում են համատեղ աշխատել այն նպատակների ուղղությամբ, որոնք Ամերիկայի և ազատ ժողովրդավարական պետությունների քաղաքացիների մեծամասնությունը նողկալի կհամարի, մենք ունենք խնդիր: Այս կազմակերպություններն արժե ուսումնասիրել, որպեսզի տեղյակ լինենք, թե ինչպես է նրանց համագործակցությունն ազդում ազդեցության բոլոր յոթ ոլորտների վրա:

Միավորված ազգերի կազմակերպությունը և Նոր աշխարհակարգը

Այս կազմակերպությունները ձևավորվել են պատերազմներից և նշանավոր իրադարձություններից հետո, «Հիտլերների» գերիշ-

խանութունից աշխարհը պաշտպանելու «վախից» և ձեռք են բերել այնպիսի ապշեցուցիչ վերահսկողություն, որ հավանաբար կարող է թվալ, թե դա հակասում է իրենց սահմանած սկզբնական առաքելությանը: Այս կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը (Միավորված ազգերի կազմակերպություն, 1945 թ.), ԵՀԽ-ն (Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, 1948 թ.), ԱՀԿ-ն (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 1948 թ.), ՆԱՏՕ-ն (Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն, 1949 թ.), ՀՏՖ-ն (Համաշխարհային տնտեսական ֆորում, 1971 թ.), ԵՄ-ն (Եվրոպական միություն, 1993 թ.), ԱՀԿ-ն (Առևտրի համաշխարհային կազմակերպություն, 1995 թ.), «Մեծ քսանյակը» (G-20, Քսանի խումբ, 1999 թ.), Ինտերպոլը (Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն, 1938 թ., այնուհետև թարմացվել է 2001 թ.) և ՄԲԴ-ն (Միջազգային քրեական դատարան, 2002 թ.), շարունակել են գործել համաշխարհային նպատակների և միջազգային հանձնագրերի շուրջ՝ ժողովրդավարական երկրներից ավելի շատ իշխանություն փոխանցելով համաշխարհային տերություններին:

Այս կազմակերպություններից ՄԱԿ-ը աշխարհի կարևորագույն միջազգային կազմակերպությունն է 193 անդամ պետություններով և 5.81 միլիարդ դոլարի ընդհանուր բյուջեով: Այն ընդգրկում է աշխարհի բոլոր ազգերը և տարածքները՝ բացի Պաղեստինից և Վատիկանից: Միացյալ Նահանգները երրորդ ամենամեծ երկիրն է՝ 328 միլիոն բնակչությամբ և 21.43 տրիլիոն դոլար ՀՆԱ-ով, և այն նաև աշխարհի ամենաազդեցիկ երկրներից մեկն է:

Նյու Յորքը ՄԱԿ-ի նստավայրն է, և Մանհեթենում է գտնվում 154 մետր բարձրություն ունեցող երկնաքերը՝ ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի ամենաականառու կառույցը: Սա երկրագնդի խաչմերուկն է: Այն նաև Նոր աշխարհակարգի գլխավոր գրասենյակն է և մարգարեական կերպով ներկայացնում է աշխարհը: Հողատարածքը, որի վրա տեղակայված է երկնաքերը, Թերթլ Բեյ շրջանում է և համարվում է ՄԱԿ-ի տարածք, թեև Միացյալ Նահանգների մաս է կազմում: ՄԱԿ-ն ունի երեք այլ գրասենյակներ ժնևում (Շվեյցարիա, բացվել է 1946 թ.), Վիեննայում (Ավստրիա, բացվել է 1980 թ.) և Նայրոբիում (Քենիա, բացվել է 1996 թ.): ՄԱԿ-ն ունի համաձայնագիր Միացյալ Նահանգների հետ, և շեն-

քերը գտնվում են ՄԱԿ-ի միանձնյա կառավարման ներքո: Այնտեղ են գտնվում նաև ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների, ինչպիսին ՅՈՒՆԻՍԵՖ-ն է, գլխավոր գրասենյակները:

ՄԱԿ-ի բյուջեի մեծ մասը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի կողմից: Կազմակերպությունն ունի ընդհանուր առմամբ 37,000 աշխատակից ամբողջ աշխարհում: ՄԱԿ-ի նպատակն է լինել կենտրոնավայր ազգերի միջև, որտեղ հնարավոր է երկխոսություն վարել և հասնել համաշխարհային խաղաղության: Սա նշանակում է, որ ՄԱԿ-ը ձգտում է համատեղ որոշումների կայացման, բազմակողմ համաձայնագրերի և փոխզիջումների: Սա սահմանափակում է ՄԱԿ-ի իշխանությունը, քանի որ դա նշանակում է, որ այն պետք է գործի ի շահ ազգերի հավաքական խմբի:

Դրան հակառակ՝ ԱՄՆ-ը առանձին, անկախ պետություն է: Նրա միակ նպատակն է գործել ի շահ իր քաղաքացիների: Ըստ էության՝ Միացյալ Նահանգներն ունի ավելի պարզ նպատակ, քան ՄԱԿ-ը, այն է՝ հասնել Միացյալ Նահանգների բնակչության բարգավաճմանը և անվտանգությանը: Միակ միջոցը, որով ՄԱԿ-ը ազդում է Միացյալ Նահանգների վրա, օրենքներն ու պայմանագրերն են, որոնց ներքո ԱՄՆ-ը ստորագրել է, կամ էլ ՄԱԿ-ի բանաձևերից որևէ մեկը, որն ընդունվում է ԱՄՆ-ի դեմ: Թեև Միացյալ Նահանգները անկախ պետություն է, այն ենթակա է միջազգային իրավունքին:

Ինչպես է ՄԱԿ-ը հասել այդտեղ, և որ առավել կարևոր է, ինչպես է համապատասխանում այն մարգարեական ժամանակներին, որոնցում մենք ապրում ենք: Ջոն Դ. Ռոքֆելլերը տրամադրեց հողատարածք, որպեսզի հիմնվի Միավորված ազգերի կազմակերպությունը, որը, որպես կենտրոնական գրասենյակ, այլևս թույլ չէր տալու մեկ այլ համաշխարհային պատերազմ: Համենայն դեպս, դա էր վաճառքի փաստարկը: Սակայն Միավորված ազգերի կազմակերպությունը ակումբ է, որին կամավոր միանում են պետությունները և վճարում անդամավճարներ: ՄԱԿ-ի ստեղծման պահից ոմանք շատ ավելի խոշոր դեր էին կանխատեսում այդ կառույցի համար: Նրանք կանխատեսում էին անկախ ինքնիշխան պետությունների վախճանը, որոնց մեջ տեսնում էին պատերազմի, հակամարտության և աղքատության արմատը: Նրանք պնդում էին, որ իսկական ազատության համար ամեն

բան պետք է լինի հավասար՝ ներառյալ սնունդը, ունեցվածքը և հնարավորությունները: Դրան հասնելու համար առանձին պետություններ պետք է զիջեն իրենց ինքնիշխանությունը հանուն ավելի մեծ բարիքի՝ համաշխարհային կառավարման, որը կվերահսկվի ՄԱԿ-ի կողմից:

Շատերը ցանկանում են մերժել Նոր աշխարհակարգի գաղափարը՝ որպես դավադրության տեսություն, սակայն նախագահ Ջորջ Ու. Բուշը բազմիցս խոսել է Նոր աշխարհակարգի տեսլականի մասին, մասնավորապես՝ Պարսից ծոցի ճգնաժամի ժամանակ 1990 թվականի սեպտեմբերի 11-ի իր ելույթում.

«Սկսվել է պետությունների նոր գործընկերություն, և մենք այսօր կանգնած ենք եզակի ու արտասովոր պահի առջև: Պարսից ծոցի ճգնաժամը, որքան էլ ծանր լինի, նաև հազվագյուտ հնարավորություն է ընձեռում տեղափոխվելու համագործակցության պատմական շրջան: Այս անհանգիստ ժամանակներում կարող է ի հայտ գալ մեր հինգերորդ նպատակը՝ **նոր աշխարհակարգը**. Նոր դարաշրջան՝ առավել զերծ ահաբեկչության վտանգից, ավելի ուժեղ՝ արդարության հետապնդման մեջ և ավելի անվտանգ՝ խաղաղության որոնումներում: Դարաշրջան, որում աշխարհի ժողովուրդները՝ արևելքից արևմուտք, հյուսիսից հարավ, կարող են բարգավաճել և ապրել ներդաշնակության մեջ:

Հարյուրավոր սերունդներ որոնել են խաղաղություն տանող այս անորսալի ճանապարհը, մինչ հազարավոր պատերազմներ են մոլեգնել մարդկային ձգտումների ամբողջ ժամանակահատվածում, և այսօր այդ **նոր աշխարհը** պայքարում է, որ ծնվի: Աշխարհ, որը բոլորովին տարբերվում է մեզ հայտնի աշխարհից: Աշխարհ, որտեղ օրենքի գերակայությունը դուրս է մղում ջունգլիների տիրապետությունը: Աշխարհ, որտեղ ազգերն ընդունում են, որ ունեն ընդհանուր պատասխանատվություն ազատության և արդարության համար: Աշխարհ, որտեղ ուժեղները հարգում են թույլերի իրավունքները:

Սա այն տեսլականն է, որ ես ներկայացրի նախագահ Գորբաչովին Հելսինկիում: Նա և Եվրոպայի, Պարսից ծոցի և

ամբողջ աշխարհի ղեկավարները հասկանում են, որ այն, թե ինչպես կկառավարենք այսօրվա ճգնաժամը, կարող է կերտել եկող սերունդների ապագան: Մենք կանգնած ենք մեծ փորձության առջև:

Սա առաջին հարձակումն է **նոր աշխարհի** վրա, որին մենք ձգտում ենք, մեր արիության առաջին փորձությունը: Եթե այս առաջին սադրանքին չարձագանքեինք հստակ նպատակով, եթե չշարունակենք ցուցաբերել մեր վճռականությունը, սա ազդանշան կլինի աշխարհի իրական և հավանական բռնապետների համար»:

Այս հակամարտության ժամանակ Իրաքը վերահսկում էր աշխարհի նավթի տասը տոկոսը, իսկ Քուվեյթը՝ դրա կրկնակին: Իրաքի կողմից Քուվեյթը վերահսկելու սպառնալիքը կազդեր ամբողջ աշխարհի նավթարդյունաբերության վրա: Այս նույն մտահոգությունները կան այսօր:

Բոլորովին վերջերս՝ 2022 թվականի մարտի 21-ին, Ջո Բայդենը Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի և տնտեսության վերաբերյալ կլոր սեղանի շուրջը քննարկման ժամանակ ասաց, որ կլինի «նոր աշխարհակարգ», որը կստեղծվի և կղեկավարվի Միացյալ Նահանգների կողմից: Նա ասաց. «Գիտե՞ք, ես կարծում եմ՝ մենք գտնվում ենք շրջադարձային կետում համաաշխարհային տնտեսության մեջ, և ոչ միայն տնտեսության, այլև աշխարհում: Սա տեղի է ունենում ամեն երրորդ կամ չորրորդ սերնդի հետ: Ինչպես վերջերս ինձ ասաց բարձրաստիճան զինվորականներից մեկը անվտանգության հարցերով հանդիպման ժամանակ, 60 միլիոն մարդ է մահացել 1900-1946 թվականներին, և այդ ժամանակվանից ի վեր մենք հիմնել ենք **ազատական աշխարհակարգ**, և նման բան վաղուց չէր եղել»: Նա շարունակեց. «Շատ մարդիկ մահացան, բայց ոչ մի տեղ քաոս չէր լավ, և հիմա այն ժամանակն է, երբ շատ բաներ փոխվում են: Լինելու է **նոր աշխարհակարգ**: Մենք պետք է առաջնորդենք այն և այս գործում պետք է միավորենք ազատ աշխարհի մյուս երկրներին»:

Միավորված ազգերի կազմակերպության դիմաց կա ավելի բարձր աշտարակ, քան ՄԱԿ-ի շենքն է, և կոչվում է Թրամփի աշտարակ, և հավանեք Դոնալդ Թրամփին, թե ոչ, նա ահագանգ

Է հնչեցրել Նոր աշխարհակարգի կամ, գուցե առավել հայտնի, խորքային պետության մասին: Նրա նախագահության մեկ կարճատև ժամկետի ընթացքում «խորքային պետության» դեմ պայքարի շնորհիվ Ամերիկյան դարձավ էներգետիկ անկախ պետություն, բայց ավելի պակաս, քան մեկ տարում Բայդենի վարչակազմը ամբողջովին շրջեց այս ուղին՝ Ամերիկային կրկին կախման մեջ դնելով համաշխարհային նավթից: Ինչո՞ւ: Թրամփի վարչակազմի օրոք նաև պարտվեց Իսլամական պետությունը, իսկ տնտեսությունն ու դոլարն աճեցին: Շատերը համարում են, որ սա մարգարեական նշան էր՝ ցույց տալու ամերիկացիներին, որ ազատությունն ավելի վեր է, քան Բաբելոնի համաշխարհային աշտարակը: Ակնհայտ է, որ Թրամփի նախագահական ժամկետը մերկացրեց այն սուտն ու խաբեությունը, թե մենք չենք կարող ունենալ էներգետիկ անկախություն կամ չենք կարող խուսափել մշտական տարածաշրջանային պատերազմներից և հակամարտություններից, որոնց մասնակցել ենք Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր: Մենք ունեցանք խաղաղություն և բարգավաճում, և Երուսաղեմը ճանաչվեց Իսրայելի մայրաքաղաք. մարգարեությունն իրականացավ:

Աստվածաշնչյան մարգարեություն գալիք թագավորությունների մասին

Հայտնության 13-րդ գլխում Հովհաննես առաքյալը նկարագրում է մի գազանի, որը դուրս եկավ ծովից: Այս արարածն ուներ ընծառյուծի մարմին, արջի ոտքեր և առյուծի բերան (Հայտնություն 13.2): Հովհաննեսը նկարագրում էր, որ այն «*յոթ գլուխ ուներ և տասը եղջյուր, և նրա եղջյուրների վրա տասը թագ, և նրա գլուխների վրա հայհոյության անուն*» (Հայտնություն 13.1): Հովհաննեսի տեսիլքը գրեթե նույնական էր այն տեսիլքին, որ Դանիելը տեսավ մոտավորապես 600 տարի առաջ: Նա տեսավ չորս արարածների՝ առյուծ, արջ, չորսգլխանի ընծառյուծ և զարհուրելի ծովային գազան՝ տասը եղջյուրով (Հայտնություն 13.2, Դանիել 7.1-7): Ինչ վերաբերում է վիշապին, որն այս գազանի զորության աղբյուրն է, Հայտնության 12.9-ում ասվում է. «...*մեծ վիշապը՝ այն առաջին օձը, որ Բանսարկու և սափանա է կոչվում, այն բովանդակ աշխարհը մոլորեցնողը...*»:

Հայտնության 17.9,10-րդ խոսքերում գազանի յոթ գլուխները նույնացվում են «յոթ սարերի» կամ «յոթ թագավորների» հետ: Համաձայն Դանիելի 7.24-ի և Հայտնության 17.12-ի՝ եղջյուրները խորհրդանշում են թագավորներ կամ թագավորություններ:

Աստվածաշնչյան մարգարեությունը կանխատեսում է թագավորությունների վերելքը և անկումը: Բաբելոնը կործանող մարերի մասին Երեմիան ասում է.

«Փայլեցրե՛ք նեպտրը, վահանները լցրե՛ք, Տերը զարթնեցրեց մարաց թագավորների հոգին. որ նրա մրաժմունքը Բաբելոնի վրա է՝ նրան փչացնելու համար. որովհետև Տիրոջ վրեժխնդրությունն է սա՛՛ Իր փաճարի վրեժը»:

– Երեմիա 51.11

Այս յոթ գլուխները եկել են, և մի քանիսը գնացել: Չորս խոշոր կայսրությունները, որոնք Դանիելի երազի մասն էին Դանիելի 2-րդ և 7-րդ գլուխներում, և որոնք նախորդում են վերջին ժամանակներին, հետևյալն են՝ Բաբելոնյան կայսրություն, Մարաց և Պարսից կայսրություն, Հունական կայսրություն և, ոմանց պնդմամբ, Հռոմեական կայսրություն (Դանիել 8.3,4, 8.20):

Ըստ աստվածաշնչագետների մեծամասնության՝ Բաբելոնյան կայսրությունը Դանիելի տեսիլքի ոսկե գլուխն է: Այն նվաճվեց ավելի փոքր թագավորության՝ Մարաց թագավորության (արջը) կողմից, այնուհետև Պարսից կայսրությունը, միանալով նրան, մեծացավ ինչպես ընձառյուծ չորս թևերով՝ ներկայացնելով Պարսկաստանի չորս թագավորներին: Որովայնը և ազդրերը ներկայացնում են Հունաստանը, իսկ երկաթե ոտքերը մատնացույց են անում Հռոմին:

Աստվածաշնչյան մարգարեությունը հայտնում է, որ այս ամենից հետո կբարձրանա քաղաքական, ռազմական և տնտեսական հզոր գերուժ՝ Հակաքրիստոսը, և կհաստատի մեկ համաշխարհային կառավարման համակարգ:

Հովհաննեսը Հայտնության գրքում գրում է.

«Եվ մի ուրիշ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. «Դուրս եկեք դրանից, ո՛վ իմ ժողովուրդ, որ մասնակից չլինեք դրա

մեղքերին, և որ դրա պատուհասից չընդունեք. որովհետև դրա մեղքերը հասան մինչև երկինքը, և Աստված հիշեց դրա անհրավությունները»:

– Հայտնություն 18.4,5

Այս վերջին համաշխարհային կառավարությանը կսատարի ոչ թե Հիսուս Քրիստոսը, այլ կեղծ իշխանությունը, որը կգլխավորի «վիշապը»՝ սատանան: Բարի լուրն այն է, որ, ինչպես ցույց տրվեց Նաբուգոդոնոսորի երազում, արձանը, որ ներկայացնում էր աշխարհին իշխող ուժը, քանդվեց: Դանիելն այսպես բացատրեց Նաբուգոդոնոսոր թագավորին.

«Դու տեսնում էիր, մինչև որ մի քար կտրվեց՝ առանց ձեռքի, և զարկվեց արձանի ոտներին, որ երկաթից ու կավից էին, և նրանց փշրեց: Այն ժամանակ փշրվեցին միասին երկաթը, կավը, պղինձը, արծաթը և ոսկին և ամառվա կալերի մղեղի պես եղան, և քամին տարավ նրանց, և բնավ տեղ չգտնվեց նրանց համար. բայց այն քարը, որ զարկեց արձանին, մեծ սար եղավ և լցրեց բոլոր երկիրը»:

– Դանիել 2.34,35

Քարը, որ կործանեց մարմնավոր կայսրությունները, ներկայացնում էր Աստծո գալիք Թագավորությունը: Ինչպես Դանիելը հռչակեց.

«Եվ այն թագավորների օրերում երկնքի Աստվածը մեկ թագավորություն է վեր կացնելու, որ հավիտյանս չի ավերվի, և նրա տերությունը ուրիշ ազգի չի տրվի. նա պիտի փշրի և վերջացնի այս բոլոր թագավորությունները. իսկ նա ինքը կմնա հավիտյանս»:

– Դանիել 2.44

Ամենակարևոր եզրահանգումն այն է, որ մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսը գալիս է հաստատելու Իր Թագավորությունը՝ այն քարը, որ փշրում է նրանց բոլորին և աշխարհի թագավորությունները դարձնում է մեր Աստծո թագավորություններ: Նա

արեց դա առաջին անգամ, երբ եկավ, և ավարտին կհասցնի Արմագեդոնի պատերազմում՝ Իր երկրորդ գալուստին:

Հրեա ժողովուրդը՝ Իսրայելը, ամբողջ Հին կտակարանում ներկայացվում է որպես Աստծո ժողովուրդ, որովհետև Նա ընտրեց նրանց: Բայց երբ գա մեր Փրկիչ Հիսուսը, կատեղծվի նոր կառավարություն, նոր Թագավորություն, որը կքարոզվի աշխարհին, բոլոր ժողովուրդներին, բոլոր ցեղերին ու ազգերին մինչև ժամանակների վախճանը: Հիսուսի աշակերտները մտածում էին, որ Նա տապալելու է Հռոմեական կայսրությունը, բայց փոխարենը Նա հոգևոր առումով տապալեց աշխարհի բոլոր թագավորությունները և հաստատեց Քրիստոսի մարմինը: Երբ Նա վերադառնա, նույնը կանի ֆիզիկապես՝ երկրի վրա: Ըստ էության՝ մենք կարող ենք ասել, որ մեդիայի միջոցով Ավետարանն այժմ քարոզվում է աշխարհի բոլոր մասերում, իրականանում է վերջին ժամանակներին վերաբերող մեկ այլ մարգարեություն, թեև բոլորը չեն լսել Ավետարանը: Եվ մենք մեծ արագությամբ ջերմեռանդորեն պետք է շարունակենք գործել:

Ամենակարևոր եզրահանգումն այն է, որ մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսը գալիս է հաստատելու Իր Թագավորությունը՝ այն քարը, որ փշրում է նրանց բոլորին և աշխարհի թագավորությունները դարձնում է մեր Աստծո թագավորություններ: Նա արեց դա առաջին անգամ, երբ եկավ, և ավարտին կհասցնի Արմագեդոնի պատերազմում՝ Իր երկրորդ գալուստին:

ԵԳԻՊՏՈՍ (մոտ մ.թ.ա. 2100 – մոտ մ.թ.ա. 1400): Քամի որդին Եգիպտոսի առաջին թագավորն էր: Երբ Հովսեփը գնաց Եգիպտոս, հնարավոր է, որ այնտեղ օտար «հովիվ թագավորներ» էին տիրում: Քամի հետևորդները վերադարձան իշխանության Ելիցի ժամանակ:

ԱՍՈՐԵՍԱՆ (մոտ մ.թ.ա. 1100 – մ.թ.ա. 606): Հնագույն քաղաք Նինվեին վերջապես բարձրացավ իշխանության իր պիտանի՝ Բաբելոնի նկատմամբ: Ասորիները ղեկավարում էին աշխարհը ուժով ու վախով և մեծ տուրքեր էին պահանջում:

ԲԱԲԵԼՈՆ (մ.թ.ա. 606 – մ.թ.ա. 538) Բաբելոնն ավելի հին էր, քան Նինվեին: Դանիելն ապրում էր մեծ, անառիկ քաղաքում և տեսավ նրա անկումը մարաց և պարսից զորքերի կողմից (Դանիել 2.37,38, 7.4, 5.1-31)

ՄԱՐԱՑ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (մ.թ.ա. 538 – մ.թ.ա. 333) Մ.թ.ա. 538 թվականին Կյուրոս Մեծը ազատ արձակեց հրեաներին, որպեսզի նրանց վերադառնան և վերակառուցեն Տաճարը: Մտավորապես մ.թ.ա. 445 թ-ին Արտաշեսը թույլ տվեց նրանց վերակառուցել Երուսաղեմը (Դանիել 9.25):

ՀՌԻՆԱՏԱՆ (մ.թ.ա. 333 – մ.թ.ա. 146) Ընդամենը 10 տարում Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց աշխարհը: Հունական մշակույթը և լեզուն հետագայում մեծապես օգնեցին Ավետարանի տարածմանը (Դանիել 2.39, 7.6, 8.5-8):

ՀՌՈՄ (մ.թ.ա. 44 – մ.թ. 445) Մինչև Հիսուսի ծնվելը Օգոստոս կայսրը տիրում էր ամբողջ Միջերկրական աշխարհում գրեթե լիարժեք վերահսկողությամբ: Համաշխարհային խաղաղության այս ժամանակաշրջանը թույլ տվեց, որ Ավետարանի ուղերձն առավել հեշտությամբ տարածվի:

ԱՅՍՕՐ, երկաթե և կավե ուրքերը խորհրդանշում են ժամանակակից երկու գերտերությունները (Եվրամիություն(՝) և Ռուսաստան(՝)), որոնց կառավարությունները ռազմատենչության և խոշոր բիզնեսի խառնուրդ են (Դանիել 2.41-43):

Աշխարհի վերջին կայսրությունը Այս դարաշրջանի վերջին օրերին Սուտ մարգարեն և Հակաքրիստոսն իր ուրքերի տասը մատներով (նրա կայսրությունից ձևավորված պետություններով) կկատավարեն արարչության պատմության ամենասուկալի ժամանակաշրջանում, սակայն կտեսնեն նաև մեծագույն վախճանը Հիսուս Քրիստոսի վերադարձով, Ով կկատավարի երկիրը Իր տուրքերի հետ հաջորդ հազար տարին (Դանիել 2.44,45):

ՅՈՒՐ ՀԱՄԱՄԵՆԱՐԱՅԻՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 13 և 17

1. Եգիպտոս
2. Ասորեստան
3. Բաբելոն
4. Մարաց և Պարսից թագավորություն
5. Հունաստան
6. Հռոմ
7. Հակաքրիստոս



ՈՍԿԵ ՎԼՈՒՄ ԲԱԲԵԼՈՆ



Այդում արձվի թևերով

ԱՐՄԱՅԵ ԿՈՒՐՔ ԵՎ ՁԵՒՔԵՐ ՄԱՐԱՑ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ



Այդ՝ բարձրագույն ման կուրի վրա: Կուրուքներ, երեք նվաճված թագավորությունները:



Խոյր երկու եղջյուրով (Պարսից և Մարաց թագավորություններ)

ԲՐՈՆՔԵ ՈՐՈՎԱՅՆ ԵՎ ԱԶԳԻՐԵՐ, ՀՌՈՒՆԱՏԱՆ



Չորսզվախանի ընձառյուծ (Եգիպտոս, Ասորեստան, Թուրքիա, Հունաստան), թևեր, արագ նվաճում



Մեծ եղջյուր, կենցաղային Մակեդոնացի

Փոքր եղջյուր, Հակաքրիստոս

Չորս եղջյուրներ, Ալեքսանդրի հաջորդները (Եգիպտոս, Ասորեստան, Թուրքիա, Հունաստան)

ԵՐԿՎԱՅԵ ՈՏՔԵՐ, ԳՈՐՍ

(ԲԱԾԱՄԱԿԱՏԸ ԱՐԵՎԵԼՏԱՆԻ ԵՎ ԱՐԵՎԱՏՅԱՆԻ)



ՀԱՎԱՋԵՐԻՍՏՈՍԻ ԳԱԶԱՆԸ

10 եղջյուր/պետություններ, 3-րդ՝ Հակաքրիստոսի կուրված «փոքր եղջյուրով» Աշխարհը կերկրապագի նրան: Բերանը խոտում է հայիությունները: Աշխարհի ամենավտանգավոր պատերազմողը (Դանիել 7.7,8, 19-25, Դայտոս, 13.1-10)

ԵՐԿՎԱՅԵ ԵՎ ԿԱՎԵ ՈՏՔԵՐ

ՎԱԽՃԱՆԸ



ՔԱՐԸ

Քրիստոսի Թագավորությունը խորտակվում է աշխարհի բոլոր կառավարությունները



ՍՈՒՑ ՄԱՐԳԱՐԵՆ ԳԱԶԱՆԸ

2 եղջյուր գառան նման խոտում է վիշապի պես խաբեության վարպետ Վերահսկում է աշխարհի տևտեսությունը (Հայտնություն 13.11-18)

Սատանայի ազդեցության պատմությունը արևմտյան աշխարհում

Ավետարանի քարոզչության արդյունքում մի խումբ, որը ձգտում էր կրոնական ազատության, նորաստեղծ Ամերիկայի պետությունն ընծայեց Աստծուն՝ ընտրելով Նրա Խոսքը դնել որպես պետության հիմք: Աստված ընտրեց Իսրայելին, իսկ Ամերիկան ընտրեց Աստծուն: Սակայն այդ ընտրության դեմ մշտապես գործել են փոխզիջումային մոտեցումներ և պայքարի ձևեր, որոնք երիտասարդ պետությանը ենթարկել են ստրկության ծուղակն ընկնելու վտանգին: Դրանք էին փողը, իշխանությունը և սատանայական ազդեցությունը: Սա մի պատմություն է, որի մասին մենք հաճախ չենք լսում, քանի որ այն հայտնում է, թե ինչպես է սատանան մշտապես՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, գործի դրել բոլոր հնարավոր միջոցները ազգերին և աշխարհին ղեկավարելու համար:

Ամերիկան պայքարում էր անկախության համար, գրեթե միաժամանակ նույնն անում էր նաև Ֆրանսիան, բայց նրանց պայքարը տարբեր նպատակներ էր հետապնդում: Ամերիկայի հեղափոխական պատերազմը պայքար էր Բրիտանիայի բռնապետությունից անկախանալու համար: Ամերիկացիների գլխավոր դժգոհություններից էր այն, որ ժողովուրդը հարկվում էր՝ չունենալով ընտրված ներկայացուցչություն: Առանց ընտրված ներկայացուցիչների համաձայնության նրանք ունեին չհարկվելու իրավունք: Երբ անհնար դարձավ լուծել այս խնդիրը Բրիտանական կայսրության շրջանակում, ամերիկացիները հռչակեցին իրենց անկախությունը, այնուհետև նվաճեցին այն կովի դաշտում: Այսինքն՝ ամերիկացիները պայքարում էին շոշափելի նպատակների համար. նրանք պայքարում էին իրենց իրավունքները պահելու համար, այլ ոչ թե տապալելու հաստատված հասարակական կարգը: Այն ավելի շատ հեղափոխություն էր ինքնակառավարման համար, քան նրա, թե ով պետք է կառավարի երկրի ներսում: Ամերիկան ձգտում էր հաստատելու ազատություն Բրիտանիայից և ստեղծելու ինքնիշխան պետություն՝ հանրապետություն: Հանրապետության և ժողովրդավարության միջև տարբերությունն այն է, որ հանրապետությունում կանոնները հաստատում է սահ-

մանադրությունը, մինչդեռ ժողովրդավարության մեջ կանոնները որոշվում և հաստատվում են լայն հանրության կողմից՝ մեծամասնական սկզբունքով:

Ֆրանսիացիները, ընդհակառակը, մրցման հրավիրեցին Բանականությանը՝ այն վեր դասելով ոչ միայն փորձառությունից, այլև կրոնից և աստվածային հայտնությունից: Ավելին՝ նրանք Աստվածամոր տաճարը վերածեցին Բանականության տաճարի և անցկացրին կեղծ կրոնական փառատոներ՝ ի պատիվ այս նոր աստվածության: Պարզվեց, որ պատմությամբ և փորձառությամբ չսահմանափակվող և չառաջնորդվող Բանականությունն անկարող էր հաստատել կայուն կառավարություն կամ ապահովել Ֆրանսիայի ազատությունը: Փոխարենը այն առաջնորդեց նրանց դեպի Սարսափի թագավորություն, Նապոլեոնի կայսերական իշխանություն և, վերջին հաշվով, միապետության վերականգնում:

Ֆրանսիայի պայքարը ֆինանսավորվում և բորբոքվում էր նրանց կողմից, ովքեր ցանկանում էին վերացնել միապետությունը՝ օգտագործելով խռովարարների և խառնակիչների այլ, մասնավորապես՝ ֆինանսական նպատակներով: Հետաքրքիր է, որ Մեծ Բրիտանիայի ֆինանսական առաջնորդներն էին, որ խաղադրույքներ կատարեցին ֆրանսիական պատերազմի հետ կապված բաժնետոմսերի վրա և առաջին իսկ օրերից դարձան բանկային գործունեությունը վերահսկող ուժեր:

Գլխավոր անուններից մեկը Ռոտշիլդների տոհմն է, որը դեկավարում էր իրեն պատկանող Արևելահնդկական առևտրային ընկերությունը: Ընկերությունն օգտագործվում էր բրիտանական իմպերիալիզմն ընդարձակելու նպատակով՝ նվաճելով և վերահսկելով տարածքներ ամբողջ աշխարհում: Ստրկությունը և մարդկանց հանդեպ սոսկալի վերաբերմունքը ընկերությանը պատկանող և շահագործման ենթարկվող ասիական, հնդկական և աֆրիկական տարածաշրջաններում ժամանակի ընթացքում խայտառակություն բերեցին:

1600 թվականին Նապոլեոնի դեմ Վաթեռլոոյի ճակատամարտի ժամանակ Բրիտանական կայսրությունը անդունդից դուրս եկավ: Այս կայսրությունը հարություն առավ Վաթեռլոոյի ճակա-

տամարտում, երբ Նապոլեոնը պարտություն կրեց: Պատմության մեջ լուրեր էին պատվում, որ Մայեր Ռոտշիլդ անունով մի մարդ տեղեկացավ պատերազմի ելքի մասին ավելի շուտ, քան ուրիշները, և ենթադրվում է, որ նա վաճառեց իր բրիտանական բաժնետոմսերը, բայց դա խորամանկ քայլ էր մյուս առևտրականների բաժնետոմսերը գնելու համար: Մինչ ուրիշները հետևեցին նրա օրինակին և վաճառեցին իրենց բաժնետոմսերը, նա վստահված անձի միջոցով գաղտնի գնեց դրանք: Ռոտշիլդը զգալիորեն հարստացավ և իր անսպասելի հաջողության շնորհիվ դարձավ ֆինանսական ոլորտի և բանկային գործի վարպետ ամբողջ Եվրոպայում: Բրիտանիայի վարչապետ դարձավ Վելինգտոնի դուքսը, և իշխանությունը ենթադրաբար կենտրոնացավ միապետական կառավարության ձեռքում, սակայն ավելի շատ արտաքնապես էր այդպես, և միապետը պարզապես ձևական ղեկավար էր:

Բրիտանական թագավորական իշխանությունն իրականում «Սիթի» անունով մի կորպորացիա է՝ 2,6 կմ տարածքով, որտեղ տեղակայված են կորպորացիայի տնօրինության ներքո գտնվող ամենամեծ բանկերը և կարողությունը: Այսօր էլ այնտեղ գործում են Ռոտշիլդների ընտանիքին պատկանող ձեռնարկությունները: Շատերը կարծում են, թե Բրիտանիան կառավարվում է միապետության կողմից, բայց իշխանության կենտրոնը Սիթին է, որ գտնվում է Լոնդոնում: Թագավորական հրամանի համաձայն՝ Սիթին հաստատվել է որպես կորպորացիա: 950 տարվա ընթացքում Սիթին ստացել է չլսված լիազորություններ և արտոնություններ... բայց Բրիտանիան դարձել է ժամանակակից խորհրդարանական ներկայացուցչական ժողովրդավարության հիմքը: Սիթին շարունակում է առանձնանալ Միացյալ Թագավորության մյուս մասերից: Թագավորական ընտանիքի գործակցությունը «Լիվերի» ընկերությունների հետ ամենևին էլ նոր երևույթ չէ: Նշանավոր միապետներ, ինչպիսիք են թագավոր Ջեյմս I-ը, Հենրիխ VIII-ը և Եղիսաբեթ I-ը, բոլորն էլ եղել են «Լիվերի» ընկերության անդամներ: «Լիվերի» ընկերությունները Լոնդոնյան Սիթիի հավաստագրված ընկերություններ են, որոնք առաջացել են արհեստագործական գիլդիաներից: Արդի ժամանակներում Թագավորական իշխանությունը առանձնահատուկ հարաբերություններ է պահպանում Սիթիի հետ: Իրականում միապետը միակ մարդն է,

որն ավելի բարձր դիրք ունի, քան Սիթիի լորդ քաղաքապետը, և նույնիսկ այս դեպքում միապետի՝ Սիթի մտնելուց առաջ հայցվում է լորդ քաղաքապետի թույլտվությունը: Թագավորական ընտանիքի շատ անդամներ ակտիվորեն գործում են Սիթիի «Լիվերի» ընկերություններում:

Ասում են, որ ազդեցիկ բանկիր Մայեր Ռոտշիլդն ասել է. «Թույլ տվեք ինձ վերահսկել փողը և արժույթը, և ինձ չի հետաքրքրում, թե ով է կրում թագը»: Նրա որդին՝ Նաթան Ռոտշիլդը, ժառանգել էր բիզնեսի հանդեպ հոր հակվածությունը և գիտեր բանկային գործի բոլոր նրբությունները: «Պարտք կտաս, բայց պարտք չես վերցնի»: Նրանք պարտքով փող էին տալիս թագավորներին՝ ֆինանսավորելով պատերազմներն ու նախաձեռնությունները, և նրանց ընտանեկան բանկերը չափազանց հարստացան:

Պատմության ընթացքում շատ պատմություններ են շրջանառվել Ռոտշիլդների ընտանիքի մասին, և դժվար է տարբերել ճշմարտությունը կեղծիքից: Ըստ եղած տեղեկությունների՝ ընտանիքի մասին գրվել և տարածվել է մի գրքույկ, որը տարիներ անց ոմանք համարեցին հակահրեական քարոզչություն: Հետագայում այն կասկածի տակ դրվեց, բայց այդ տեղեկությունը ներառվեց 1931 թվականի «Բրիտանիկա» հանրագիտարանում, որը ես աչքի եմ անցկացրել:

Ռոտշիլդների ընտանիքի կայքում տեղադրված ապացուցելի ընտանեկան պատմության մեջ ներկայացվում է նրանց ներգրավվածությունը գաղտնի հասարակություններում, ինչպիսին մասոնությունն է.

«Ռոտշիլդների ընտանիքի անդամները ներգրավված են եղել մասոնության մեջ, որ եղբայրական կազմակերպություն է, որի անդամները հետաքրքրված են բարոյական և հոգևոր արժեքներով, ինքնակատարելագործմամբ և բարեգործական նախաձեռնությունների միջոցով իրենց համայնքների աջակցությամբ: Մինչև 1900 թվականը ընտանիքի տարբեր ճյուղերին և սերունդներին էին պատկանում հազարավոր հեկտարներ, այնպես որ Էյլսբերիի հովիտը գրեթե դարձավ Ռոտշիլդների անկլավ (երկրի ներսում գտնվող տարածք), ամենահայտնի կալվածքը Վադեսդոն

Մենորն է, որը կառուցել է բարոն Ֆերդինանդ դե Ռոտշիլդը (1839-1898 թթ.): Ֆերդինանդ դե Ռոտշիլդի օթյակը՝ համար 2420, հիմնադրվել է էլյաբերիում 1892 թվականին: Այն օծվել է 1892 թվականի մայիսի 30-ին Վադետոնի «Ֆայլ էրոուս» հյուրանոցում: Օթյակի հիմնադրումը մասունականությանը բերեց Վադետոնի շրջան, նրա անունը ծագում էր բարոն Ֆերդինանդի անունից, որը պետք է դառնար առաջին վարպետ մասունը:

Կոնկորդիայի օթյակը օծվեց 1893 թվականին, և մասունները հանդիպեցին Լիքոմոնի «Ռեդ լայոն» հյուրանոցում (Վենդովեր, Բաքինգհեմշիր): Կոնկորդիայի օթյակի կրծքանշանի վրա պատկերված է Ռոտշիլդների հինգ նետերի խորհրդանիշը: Կոնկորդիայի օթյակի անվանումը հնարավոր է, որ ներշնչված լինի տեղի Ռոտշիլդների ընտանիքից, որի կարգախոսն է «Կոնկորդիա, Ինտեգրիտաս, Ինդուստրիա», թեև «Կոնկորդիա»-ն, որ նշանակում է ներդաշնակություն, եղել է տարածված անուն մյուս մասունական օթյակների համար, որոնք կապ չեն ունեցել Ռոտշիլդների հետ: Եվ Ֆերդինանդ դե Ռոտշիլդի, և Կոնկորդիայի օթյակները գործում են մինչ օրս:

Ռոտշիլդների արխիվը պահպանում է պատմական տեղեկություններ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում և Իտալիայում Ռոտշիլդների հիմնական բնակավայրերի մասին: Ռոտշիլդներն ավելի քան 75 կալվածք և սեփականություն ունեն Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում և Նիդերլանդներում: Ռոտշիլդների՝ արվեստի ստեղծագործությունների և արվեստի առարկաների հավաքածուները լավագույններից են, որ երբևէ հավաքվել են: Անկախ շրջանառվող տեղեկություններից՝ մենք կարող ենք հաստատել, որ եվրոպական բանկային գործունեությունը և իմպերիալիզմը բերեցին հսկայական հարստություն, և դրանց կապը մասունության հետ գոյություն ունի մինչ օրս:

1931 թվականի «Բրիտանիկա» հանրագիտարանը նշում է.

Ռոտշիլդների ընտանիք. եվրոպական բոլոր բանկային

դինաստիաներից ամենահայտնին, որը շուրջ 200 տարի մեծ ազդեցություն է թողել Եվրոպայի տնտեսական և անուղղակիորեն քաղաքական պատմության վրա: Տոհմը սերում է Մայեր Ամշել Ռոտշիլդից (ծնվ. 1744 թ. փետրվարի 23-ին Ֆրանկֆուրտում) և նրա հինգ որդիներից ... Մայերը և նրա որդիները դարձան միջազգային բանկիրներ՝ հիմնելով մասնաճյուղեր Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում և Նեապոլում մինչև 1820-ականները... Մտադրվելով ընդգրկվել Գլխավոր ռաբբիության շարքերը՝ Մայերը կարճատև ուսում ստացավ, բայց ծնողների վաղաժամ մահը ստիպեց նրան աշակերտել բանկային գրասենյակում: Վիլյամ IX-ի արքունիքի ներկայացուցիչ դառնալուց կարճ չանցած՝ Մայերը սահմանեց այն օրինակը, որին այնքան հաջողությամբ պետք է հետևեր իր ընտանիքը. գործնական հարաբերություններ հաստատել թագավորական ընտանիքների հետ ըստ նախապատվության...

Մայերը և նրա որդիները, վերջին հաշվով, դարձան բանկիրներ, որոնց համար 1792-1815 թվականների Ֆրանսիական հեղափոխությունը և նապոլեոնյա պատերազմները դարձան «ճակատագրի նվեր»: Մայերը և նրա ավագ որդին՝ Ամշելը, վերահսկեցին աճող բիզնեսը Ֆրանկֆուրտից, Նաթանը մասնաճյուղ հիմնեց Լոնդոնում, Հակոբը հաստատվեց Փարիզում 1811 թվականին, իսկ Սողոմոնն ու Կառլը գրասենյակներ բացեցին Վիեննայում և Նեապոլում 1820-ականներին: Ռոտշիլդների համար պատերազմները նշանակում էին փոխառությունների տրամադրում պատերազմող ղեկավարներին և մաքսանենգություն, ինչպես նաև հիմնական ապրանքների՝ ցորենի, բամբակի, գաղութային արտադրանքի և զենքի օրինական առևտուր: Խաղաղությունը փոխակերպեց Ռոտշիլդների աճող բիզնեսը. բանկային խումբը շարունակեց իր միջազգային գործառնությունները, բայց ավելի ու ավելի շատ վերածվեց պետական արժեթղթերի գործակալի ... Բանկային խումբը շարունակեց ընդլայնվել 1850-ականներից հետո և, մասնավորապես, կարևոր դիրք գրավեց նավթի և գունավոր մետաղների համաշխարհային առևտրում...

Ռոտշիլդների ընտանիքի հաջորդ սերունդները նույնպես ակտիվ են եղել միջազգային ֆինանսական հարաբերություններում և քաղաքականության մեջ:

Ռոտշիլդները մեծ պատիվ էին վայելում: Մայերի հինգ որդիները դարձան Ավստրիական կայսրության բարոններ, Ռոտշիլդն առաջին հրեան էր, որ մտավ բրիտանական խորհրդարան, իսկ մեկ այլ Ռոտշիլդ առաջինն էր, որ ստացավ բրիտանական պերի կոչում: Ընտանիքի բրիտանական ճյուղի գլխավորը մշտապես համարվել է բրիտանական հրեաների ոչ պաշտոնական ղեկավարը: Բրիտանական և ֆրանսիական ընտանիքների անդամները, որոնք միակն էին, որ դեռևս զբաղվում էին բանկային գործով նացիստների կողմից ավստրիական տան գրավումից հետո, աչքի էին ընկնում որպես գիտնականներ և հաճախ որպես բարերարներ: 2003-2008 թվականներին բրիտանական և ֆրանսիական տոհմերը միավորվեցին՝ գրեթե երկու հարյուրամյակում առաջին անգամ նշանավորելով Ռոտշիլդների ընտանեկան բիզնեսի վերամիավորումը»:

Բրիտանական պատմության թանգարանում պահպանվում են հասանելի մնացած քիչ գրառումներ, ինչպես նաև Ռոտշիլդների Արևելահնդկական ընկերության պատմությունը: Բրիտանական իմպերիալիզմը ծաղկեց Արևելահնդկական ընկերության օրոք, մինչև որ նրա հարձակումը Չինաստանի վրա և «նպատակն արդարացնում է այն միջոցները, որոնք անհրաժեշտ են աշխարհակարգ ստեղծելու համար» վերաբերմունքը նրա հեղինակության արատավորման պատճառ դարձան: Ընկերության բռնի և դաժան վարքագծի վերաբերյալ հանրային դժգոհության ֆոնին Արևելահնդկական ընկերությունը լուծարվեց, և Ռոտշիլդներն ավելի շատ ներդրումներ կատարեցին նավթի և այլ ոլորտներում:

Համաշխարհային գերիշխանություն ունենալու նրանց նպատակը խափանվեց այս հարվածից, բայց նրանք ունեին հովանավորյալ, որը կրթվել էր նրանց ասոցիացիաների խմբում, որը պատրաստում էր այնպիսի մարդկանց, ինչպիսին Կարլ Մարքսն է՝ կոմունիզմի հայրը: Վերջինս Նաթանի զարմիկն էր և աշխատանքի ընդունվեց նրանց ընկերությունում: Կարլ Մարքսը մշա-

կեց գաղափարախոսություն, համաձայն որի՝ ամբողջատիրական կառավարման համակարգում պետությունը բացարձակապես գերիշխելու է մարդկանց բոլոր գործերում՝ վերացնելով միջին խավը: Ըստ Մարքսի՝ «Կրոնը ժողովրդի ափիոնն է: Այն ճնշված արարածի հառաչն է, անսիրտ աշխարհի սիրտը և մեր անհոգի վիճակների հոգին»:

Չարլզ Դարվինը նույնպես Արևելահնդկական տան անդամ էր: Դարվինի ներդրումը նոր աշխարհակարգի ստեղծման գործում նրա վարկածն էր ամբողջ կյանքի ծագման գիտական բացատրության մասին: Նա էվոլյուցիայի իր տեսությունը ձևակերպեց 1859 թվականին իր «Տեսակների ծագումը» գրքում: Այս տեսությունը հեռացրեց Աստծուն մարդու արարչագործությունից և նախասահմանությունից: Դարվինի ուսմունքները մարդկանց օգնեցին արդարացնելու ընտրասերումը (էվգենետիկա), որը մշակեց Ռոտշիլդների մեկ այլ հովանավորյալ՝ Թոմաս Մալթուսը: Մարքսը չափազանց խանդավառված էր Դարվինի «Տեսակների ծագումը» գրքով: 1860 թվականի դեկտեմբերին նա նամակ գրեց [Ֆրեդերիկ] Էնգելսին՝ հայտարարելով, որ «Տեսակների ծագումը» «այն գիրքն է, որ պարունակում է բնական պատմական հիմք մեր հայացքների համար»:

Ընտրասերման վերաբերյալ նրա հայացքները ոգեշնչեցին Մարգարիտ Սենգերին (Ընտանիքի պլանավորում), որը պաշտպանում էր Մալթուսի համոզմունքները: Նա առաջ քաշեց ծնելիության վերահսկման և արհեստական վիժեցման ծրագիրը հատկապես սևամորթ բնակչության համար: Նրա ռասիստական համոզմունքների համակարգն ընդունելի էր դարվինյան համոզմունքների համար, քանի որ մարդկային կյանքն այլևս չէր դիտվում որպես սուրբ և Աստծուց ստեղծված: Այս ամենը արմատավորված էր հումանիստական հայացքներում և այն համոզմունքում, որ առանց Աստծո մարդը կարող է ստեղծել իր ցեղը և Բաբելոնի աշտարակը՝ մեկ աշխարհ, որը կառավարվում է մարդու կողմից՝ առանց Աստծո:

Ադոլֆ Հիտլերը նույնպես ոգեշնչվել է ընտրասերման այս ուսմունքներով և կատարյալ ցեղի որոնումներում իրագործել հրեաների, հրեա բանկիրների համակարգված սպանություններ: Վերջիններիս նա ատում էր Գերմանիայի վրա ազդող պատերազմական դժգոհությունների պատճառով:

Ջոն Ռասկին անունով մի մարդ զարգացրեց քրիստոնեական սոցիալիզմը և օրինականացրեց սոցիալիզմը քրիստոնեական շրջանակներում՝ սովորեցնելով սոցիալական արդարության այնպիսի ձև, որը ներառում էր սոցիալիստական և կոմունիստական դոգմաներ: Սեսիլ Ռոդսը դարձավ Ռասկինի բացահայտ կողմնակիցը: Ռոտշիլդը ֆինանսավորել է Ռոդսի ադամանդի հանքերը Ռոդեսիայում, որը կոչվել է նրա անունով, ինչպես նաև Ռոդսի կրթաթոշակը, որի նպատակն էր ֆինանսավորել և բարձրացնել առաջնորդներ մեկ համաշխարհային նախաձեռնության համար: Այսօր այս խումբը ձևավորվել է և կոչվում է «Չեթեմ Հաուս»: Համաշխարհային առաջնորդները, որոնք կրթվել են բանկային գործի, պատերազմների ֆինանսավորելու, ընտրասերման կամ բնակչության վերահսկման ռազմական խաղերում, ինչպես նաև հանցավոր են երկրներին ու քաղաքացիներին ստրկացնելու մեջ, այսօր էլ շարունակում են գործել:

Ինչպե՞ս է սա ազդել Ամերիկայի Միացյալ Նահանգների վրա: Ամերիկայի սկզբնավորման պահից կային ուժեր, որոնք փորձում էին թույլ չտալ, որ նորաստեղծ ազատ երկիրն առանձնանա Բրիտանիայից: Երեք հիմնական իրադարձություններ երկարատև ազդեցություն են ունեցել Ամերիկայի և մեր բանկային համակարգի վրա:

Եթե փոխառուն դառնում է փոխատուի ստրուկը, ինչպես գրված է Առակաց 22.7-ում, ապա Ամերիկային պարտքերի տակ գցելը կլինի ազատությանը և ինքնավարությանը վերջ տալու, այնուհետև նրա հոգևոր ժառանգությունը գողանալու ամենահավանական ուղին: Հիսուսն ասաց. «Չեք կարող երկու տիրոջ ծառայել: Մեկին կսիրեք, մյուսին կատեք»:

Բենեդիկտ Առնոլդ անունով հայտնի մի դավաճան՝ թաղված Լոնդոնի Սբ Մարիամ եկեղեցում, բրիտանական լրտես էր ընդդեմ Ամերիկայի: Նրա ընկերը՝ Ահարոն Բերը, որը նույնպես լրտես էր, դարձավ Միացյալ Նահանգների փոխնախագահ, և ենթադրվում էր, որ նա ենթարկվում էր բրիտանական բանկային տիրակալների ազդեցությանը: Բերը բրիտանական գաղտնի գործակալ էր և ցանկանում էր, որ բրիտանական բանկը վերահսկեր Ամերիկան: Ալեքսանդր

Համիլթոնը կտրականապես դեմ էր Բրիտանիայի հետ ցանկացած բանկային կապի. նա ցանկանում էր ունենալ կենտրոնական բանկ ԱՄՆ-ում: Ի նշան անհամաձայնության՝ Բերը սպանեց Համիլթոնին:

Արևելահնդկական ընկերությունն օգտագործեց Ալբերտ Գալատինին, որը ծնվել էր Շվեյցարիայում, բայց դարձել էր ամերիկացի: Նա ստեղծեց Բյուջետային հանձնաժողով և թուլացրեց ամերիկյան բանակի որոշ ուժերի՝ հրաժարվելով ռազմածովային նավատորմի կառուցումից, ինչը, շատերի կարծիքով, ճանապարհ հարթեց 1812 թվականի պատերազմի համար: Միայն աստվածային միջամտության շնորհիվ Ամերիկյան հաղթեց և գոյատևեց: Քաղաքացիական պատերազմը նույնպես խթանվեց ընտրախավային բանկիրների կողմից: Նրանց նպատակն էր պառակտել մարդկանց և հաղթել նրանց ներսից: Հերթական անգամ Աբրահամ Լինքոլնի ամուր սկզբունքները և հավատքը թույլ չտվեցին օգտվել նրանց փոխառություններից՝ պատերազմը ֆինանսավորելու համար:

«Ոսկե շրջանի ասպետներ» կոչվող մի խումբ ֆինանսավորում էր և՛ հարավը, և՛ հյուսիսը Քաղաքացիական պատերազմի ժամանակ, ուստի ցանկացած դեպքում նրանք շահում էին՝ անկախ այն բանից, թե որ կողմը կհաղթեր: Լինքոլնը հրաժարվեց նրանցից գումար փոխառելուց կամ պարտք վերցնելուց, և վերջիններս վերացրին նրան իրենց անդամներից մեկի՝ Ջոն Ուիլքս Բուրթի միջոցով: Վեճի առարկան պարզապես ստրկությունը չէր, այլ պարտքերը, բանկային գործը, փողը և նահանգների իրավունքները, որոնք ազդում էին ստրկության վրա: Աբրահամ Լինքոլնի սպանության հետևում կանգնած էին այս ինտերնացիոնալիստները: Արևելահնդկական ընկերությունը և ընտրախավների կոալիցիան գործում էին վարագույրների հետևում, ինչպես Օգի Կախարդը, և աշխարհն ավելի խորն էր ընկնում նրանց պարտքի վերահսկողության տակ:

1890-ականներին բանկային տները կնքեցին վարկային համաձայնագրեր և ստեղծեցին անմխիթար տնտեսական պայմաններ՝ ի վերջո տեղի տալով 1907 թվականի Դեպրե-

սիային և տնտեսական հող նախապատրաստելով կենտրոնական բանկի ստեղծման համար: Ջորջիա նահանգի Ջեքիլ կղզում մշակվեց Դաշնային պահուստային համակարգի մասին օրենսդրական որոշումը, և Կոնգրեսը ներկաների քիչ քանակությամբ Սուրբծննդյան նախօրեին ընդունեց այն: Նախագահ և պրոֆեսոր Վուդրո Վիլսոնը, որին առաջադրել էին բանկիրները, չկարողացավ արգելք դնել Դաշնային պահուստային համակարգի օրենսդրական որոշման վրա: Այն դարձավ օրենք 1913 թվականին: Սա նպաստեց արտաքին ուժերի նկատմամբ Ամերիկայի պարտքի ավելացմանը:

Դրան հետևեց Առաջին համաշխարհային պատերազմը՝ առաջինն իր տեսակի մեջ, որն ուղեկցվեց Ավստրիայի արքրուքսի սպանությամբ: Հայտնության կարմիր ձին թափահարեց պատերազմի իր սուրը և պատերազմի միջոցով երկրից վերցրեց խաղաղությունը: Բրիտանական կայսրությունը սկսեց քայքայվել: Առաջին համաշխարհային պատերազմը շարունակվում էր, երբ Վուդրո Վիլսոնը կրկին նախընտրական խոստում տվեց, որ մեր երկիրը պատերազմից դուրս կմնա, բայց ընտրվելուց շաբաթներ անց նա Միացյալ Նահանգները ներքաշեց պատերազմի մեջ՝ մեծ գումարներ փոխառելով Դաշնային պահուստային կենտրոնական բանկից: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ցանկալի էր ստեղծել գերկառավարություն՝ աշխարհում խաղաղություն պահպանելու համար: Դաշնակիցները և պատերազմի պատվիրակները հանդիպեցին Վերսալում, որպեսզի բաժանեն ավարը և մշակեն տասնչորս կետ Ազգերի լիգայի, ոմանց խոսքերով՝ Նոր աշխարհակարգի համար: Ազգերի լիգան ստեղծվեց Եվրոպայում, բայց Վուդրո Վիլսոնին չհաջողվեց համոզել Կոնգրեսին ընդունել այն, քանի որ հանրապետական սենատորները մերժեցին այդ գաղափարը:

Նրանց հաջորդ ծրագիրը ներգրավելու էր սոցիալիզմի վերաբերյալ մարքսիստական հայացքներ ունեցող մի մարդու՝ Ադոլֆ Հիտլեր անունով: Ուոլ Սթրիթի բանկիրները հիացմունքով ընդունեցին նրան, և մտադրությունն այն էր, որ կրկին պատերազմ հրահրվեր Եվրոպայում, և վերահաստատվեր մեկ աշխարհի ծրագիրը: Նրանք օգտագործեցին

նրան որպես գործիքի, բայց չգիտեին, որ նա իշխանատենչ էր և Ճապոնիային ու Իտալիային կներքաշեր պատերազմի մեջ: Վերջին հաշվով նա փորձեց ոչնչացնել հրեա բանկիրներին և բոլոր հրեաներին: 1939 թվականին նա հարձարկվեց Լեհաստանի վրա: Ճապոնիան հարձակվեց Պեոլ Հարբորի վրա: Չերչիլը դիմադրեց բռնապետությանը, և դաշնակից զորքերի Եվրոպա ներխուժելու օրը Ամերիկայի միջամտության շնորհիվ ծրագիրը խափանվեց:

Ինչո՞ւ է այս պատմությունը կարևոր: Ազգերին պատերազմների մեջ ներքաշելու և նրանց ֆինանսավորելու այս մարտավարությունը շարունակվել է և շահարկվել է անհատներին ու պետություններին պարտքերի մեջ գցելու և նրանց ճակատագիրն ու գաղափարախոսությունը վերահսկելու համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմում 80 միլիոն զոհից հետո ոչ մի դիմադրություն չեղավ ԱՄՆ-ում Միավորված ազգերի կազմակերպության ստեղծման համար: Բրիտանիան գրեթե դադարել էր գոյություն ունենալուց, բայց դաշնակիցների օգնությամբ ոտքի կանգնեց պարտության մոխիրներից: Հնարավոր է, որ սա լինի կայսրությունների ութերորդ գլուխը, որ դուրս եկավ այն յոթից՝ համաձայն Հայտնության 17-րդ գլխի: Հայտնության 17.11-ն ասում է. *«Եվ այն գազանը, որ կար և չկա, նա էլ ութերորդն է և այն յոթիցն է և կորուստն է գնում»:*

Միավորված ազգերի կազմակերպությունը տեղակայվեց ոչ այլ տեղ, քան Նյու Յորքի Մանհեթեն շրջանում: Այս իրադարձությունները կանխատեսված են Հայտնության գրքում: Բարձրանում է սուտ մարգարե՝ այս Նոր աշխարհակարգը ղեկավարելու համար: Ամեն օր մենք ականատես ենք լինում միջոցառումների, որոնք կազմակերպվում են Մեծ վերագործարկումը մշակելու և Նոր աշխարհակարգը քննարկելու նպատակով:

Արդյո՞ք սա այն գազանն է, որ կույ է տալիս աշխարհը և խաբում նրա մարդկանց՝ գլխով նշան անելով Սուրբ գիրքը. «Երբ Նա վերադառնա, արդյո՞ք հավատք կգտնի երկրի վրա»: Ազդեցության յոթ սարերի միաձուլումը և մարգարեության ութերորդ կայսրության առաջացումը տեղի են ունենում մեր աչքերի առջև: «Նա, ով ականջներ ունի լսելու,- ասաց Հիսուսը,- թող լսի»:


Հիսուսի երկար սպասված գալուստը մոտ է: Մարգարեական իրադարձությունները «բոլորը տեղում են»: Հիսուսը եկավ խոնարհությամբ և մահացավ, բայց Նրա հաջորդ գալուստը կլինի ինչպես թագավորների Թագավորի հաղթական մուտք, երբ Նա կհայտնվի որպես Հաղթող՝ գլխավորելով երկնքի զորքերը:

Այն ժամանակ յոթերորդ հրեշտակը փչեց իր փողը, և երկնքում բարձր ձայներ լսվեցին, որ ասում էին. «Աշխարհի թագավորությունները մեր Տիրոջը և նրա Քրիստոսինը եղան, և Նա կթագավորի հավիտյանս հավիտենից» (Հայտնություն 11.15):

Հիսուսի երկար սպասված գալուստը մոտ է: Մարգարեական իրադարձությունները «բոլորը տեղում են»: Հիսուսը եկավ խոնարհությամբ և մահացավ, բայց Նրա հաջորդ գալուստը կլինի ինչպես թագավորների Թագավորի հաղթական մուտք, երբ Նա կհայտնվի որպես Հաղթող՝ գլխավորելով երկնքի զորքերը:

8

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԻՆԵՄԱՆԵՐ



Ասում են. «Արեգակի տակ ոչ մի նոր բան չկա»: Ամենավաղ ժամանակներից մարդիկ պայքարում են ֆինանսական ստրկության երկրային անեծքի համակարգի ներքո՝ փորձելով ծայրը ծայրին հասցնել, մինչդեռ նրանք, ովքեր ավելի խելացի են կամ թերևս ավելի ճարպիկ, գտնում են միջոցներ՝ մարդկանց բարձր տոկոսադրույքների և հարկերի մեջ ստրկացնելու համար: Հարուստներն իշխում են աղքատներին, և փոխառուն դառնում է փոխատուի ստրուկը: Ամերիկան մինչև ակնագունդ (այն ակնագունդը, որ պատկերված է մեր դաշնային պահուստային թղթադրամի հետևի կողմում տպված բուրգի գագաթին) խրված է ավելի քան 30 տրիլիոն դոլար պարտքի մեջ և հասել է 31.4 տրիլիոն փոխառության շեմին: Աճող տոկոսների ուժը և բանկային ոլորտի նենգությունները, ինչպես գիտենք, սպառնում են մեր գոյությանը: Խորամանկ ուժերը պատրաստում են Ամերիկային ֆինանսական փլուզման և Մեծ վերագործարկման: Բայց կա Աստված: 20-րդ դարում երեք բեկումնային իրադարձությունների հետևանքով Ամերիկան հայտնվեց իր ամենախոնավի վիճակում՝ Քաղաքացիական պատերազմից ի վեր: Դրանք են. (1) Դաշնային պահուստային համակարգի ստեղծումը, (2) ոսկու և արծաթի ստանդարտներից հրաժարումը, (3) Սահմանադրության 16-րդ փոփոխության վավերացումը (եկամտահարկի վերաբերյալ): Այստեղ ես մանրամասն չեմ խոսի 16-րդ փոփոխության մասին,

անհերքելի է, որ եկամտահարկը անսուրբ երրորդության մասն է՝ միջին խավի հարստությունը վերացնելու մարքսիստական դավադրության պարտադիր մասը:

Ամերիկյան ոսկու ստանդարտից հրաժարվեց 1933 թվականին, իսկ արծաթի ստանդարտից՝ 1968 թվականին: Սա կառավարությանը տվեց անխտիր փող տպելու ազատություն՝ առանց ներքին արժեքի, և գների աճի պատճառ դարձավ: Մինչև 1980 թվականը գնաճը հասավ 12.3 տոկոսի և սպառնում էր ոչնչացնել տնտեսությունը: 1971 թվականին նախագահ Նիքսոնը խախտեց Միացյալ Նահանգների՝ օտարերկրյա կառավարություններին պատկանող ԱՄՆ դոլարները ոսկով գնելու խոստումը: Ի պատասխան՝ ՆԱԵԿ-ի (Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) երկրները հրաժարվեցին Ամերիկային նավթ վաճառելուց, ինչը պատճառ դարձավ 1972-1975 թվականներին բենզինի գների գրեթե կրկնապատկման: Հիշում եմ, թե ինչպես էի երեխա ժամանակ նայում բենզալցակայանի երկար հերթերին: Հայրս ժամերով բացակայում էր՝ բենզին գնելու համար:

1972 թվականին Նիքսոնը դարձավ ԱՄՆ առաջին գործող նախագահը, որն այցելեց Չինաստան: Նա գնաց առևտրային մի գործարքի շուրջ բանակցելու: 1980 թվականին Չինաստանին շնորհվեց «Առևտրի առավել բարենպաստ երկրի» կարգավիճակ (որն ամեն տարի վերանայվում էր), իսկ 2000 թվականին տրվեց մշտական ԱԲԵ (առավել բարենպաստ երկրի) կարգավիճակ: 1980-2004 թվականներին ԱՄՆ-ի և Չինաստանի միջև առևտուրը տարեկան 5 միլիարդ դոլարից աճեց մինչև 231 միլիարդ դոլար: 2006 թվականին Չինաստանը գերազանցեց Մեքսիկային՝ դառնալով մեր երկրորդ խոշոր առևտրային գործընկերը:

Ցավոք, այս ընթացքում մենք հսկայական թվով աշխատանքներ և արտադրական ձեռնարկություններ արտահանեցինք Չինաստան: Ըստ հաշվարկների՝ Ամերիկյան կորցրեց 5.8 միլիոն աշխատատեղ 67,000 արտադրական ձեռնարկության հետ ԱՄՆ - Չինաստան առևտրային դեֆիցիտի հետևանքով:

Այսօր այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է, դեղորայքից մինչև նավթ, կախված է օտարերկրյա պետություններից, հատկապես այնպիսի երկրներից, ինչպիսին Չինաստանն է, որն այժմ ունի

իշխանություն՝ վերահսկելու մեզ ապրանքների առումով: Որպես պետություն՝ մենք բեկումնային կետում ենք: Մեր երկիրն աներևակայելի պարտքի տակ է, ավելին՝ ամերիկացիների ավելի քան 66 տոկոսն ապրում է աշխատավարձից աշխատավարձ, իսկ 40 տոկոսը բանկում չունի 400 դոլար՝ չնախատեսված հաշիվ փակելու համար: Ինչ ապահովություն կամ խաղաղություն կա նման լարվածության ներքո ապրելու մեջ: Ոչ մի: Հետևյալ պատմությունը հիանալիորեն լուսաբանում է ամերիկյան ընտանիքի վիճակը:

Մի կին խնդրեց Գարիին, որ այցելի իրեն: Նա ասաց, որ ուզում էր՝ Գարին օգներ իրեն՝ կազմելու իր պարտքը մարելու ծրագիր: Մենք գնացինք նրա տուն և հրավիրվեցինք նստելու խոհանոցի սեղանի շուրջը, որտեղ նա սկսեց պատմել իր պատմությունը: Նա խոստովանեց, որ 30-ից ավելի վարկային քարտ ունի, բոլորն էլ՝ ժամկետանց, և վերջինը հենց նոր էր դադարել գործելուց, ինչն էլ նրան ստիպել էր զանգել Գարիին: Արցունքն աչքերին՝ նա ասաց, որ չի կարող շարունակել այդպես ապրել և պետք է ազատվի պարտքերից: Գարին նրան ասաց, որ եթե իսկապես ցանկանում է ազատվել պարտքերից, պետք է դադարի վարկային քարտեր գործածելուց և ապրի ընթացիկ եկամուտով: Երբ նա ասաց դա, կարծես ինչ-որ մեկն ապտակեր այդ կնոջ դեմքին: Նա հանկարծ աղաղակեց. «Ինչպես եմ կոշիկներ գնելու»: Այնուհետև սկսեց անզուսպ հեկեկալ: Մենք ապշած էինք նրա ասածից: Կոշիկներ գնել: Դժ էր նրա մտահոգությունը: Հավատացե՛ք, նա ուներ բոլոր կոշիկները, որ իրեն անհրաժեշտ էին: Իրականում վարկային քարտերի քաղվածքներից Գարին կարող էր ասել, որ նա հավանաբար ուներ մի ամբողջ պահարան՝ դրանցով լցված:

Կամ օրինակ բերեմ այն հաճախորդին, որը զանգեց Գարիին և արցունքն աչքերին խնդրեց, որ այցելի իրեն, որովհետև ուզում էր ազատվել պարտքերից: Նրա կինն այլևս չէր կարող թողնել երեխային ցերեկային խնամքի կենտրոնում և ուզում էր կես դրույքով աշխատել: Երբ Գարին նստեց նրանց կողքին, նրանք արտասվելով ասացին, որ դաս են քաղել: Պարտքը խեղդում էր նրանց, և նրանք պետք է վերջակետ դնեին: Գարին տվեց նրանց իր սովորական հարցերը ֆինանսական խնդիրների վերաբերյալ,

կատարեց նշումներ, որոնք բերեց գրասենյակ՝ քննելու և ծրագիր կազմելու համար: Նա խանդավառված էր՝ տեսնելով, որ նրանք կարող էին ազատվել պարտքերից, այդ թվում՝ տան հիվորթեքից, մոտավորապես հինգ տարում: Մենք գիտեինք, որ նրանք այն-քան կուրախանային, երբ տեսնեին դա:

Մեկ շաբաթ անց Գարին կրկին այցելեց նրանց՝ ծրագրի շուրջ խոսելու համար, և տան մոտակայքում նկատեց բոլորովին նոր, առաջնակարգ «Կադիլակ» մակնիշի ավտոմեքենա՝ ժամանակավոր համարանիշով: Նա ուշադրություն չդարձրեց դրան՝ կարծելով, որ հավանաբար նրանց ընկերն է այցելել: Բայց երբ նստեց, նրանք խոստովանեցին, որ դրսում կանգնած նոր «Կադիլակն» իրենցն է: Նա պարզապես չէր կարող հավատալ: Նրանք պետք է վճարեին ամսական 600 դոլարից ավելի: Գարին հարցրեց, թե ինչու մտան այդպիսի պարտքի տակ և ծանրաբեռնեցին իրենց ընտանիքը ևս մեկ պարտքի վճարումով, երբ արցունքներն աչքերին խնդրել էին իրեն, որ օգնի իրենց ազատվելու պարտքերից: Նրանք ասացին, որ գիտեին, որ երբ նա վերադառնար, ասելու էր, որ դադարեին պարտքեր անելուց: Ուստի նախքան այդ որոշումը կայացնելը նրանք ցանկացել էին գնել ևս մեկ բան: Կատակոմ էին: Գարին պարզապես չէր կարող հավատալ դրան:

Որքան էլ անմիտ լինեն այս երկու դեպքերը, դրանք այնքան էլ անսովոր չեն: Ավելի քան 30 տարիների ընթացքում մենք անձնապես խորհրդատվություն ենք անցկացրել տասնյակ հազարավոր ընտանիքների հետ՝ օգնելով նրանց ֆինանսական հարցերում, և թույլ տվեք պարզապես ասել այսպես. պարտքը դարձել է ապրելակերպ Ամերիկայում: Կամ թույլ տվեք ձևակերպել այսպես. ստրկությունը դարձել է ապրելակերպ Ամերիկայում:

Մի ժամանակ մեր ընտանիքն ապրում էր այդ ֆինանսական ստրկության մեջ, մինչև որ հասկացանք, թե ինչ էր կատարվում, և վերջապես իջանք կարուսելից: Մեր պատմությունը շատ առումներով բնորոշ է միջին խավի ամերիկացիներին, որոնք փորձում են հասկանալ, թե ինչպես գոյատևեն ֆինանսապես, հուսահատությունից հայտնվում են ֆինանսական սխեմաների կամ գաղտնի ծրագրերի մեջ և ճանապարհին կորցնում իրենց երազանքը: Մենք բազում ցավալի սխալներ թույլ տվեցինք, և մեր ամուսնությունն ու ընտանիքը հրաշքով պահպանվեցին: Եվ թերևս դա տե-

ղի չունենար, եթե թույլ չտայինք Աստծուն սովորեցնել, թե ինչպես պետք է կյանքն ընթանա, և չսովորեինք վարվել փողի հետ՝ համաձայն Աստծո ճանապարհների: Ի վերջո մենք սովորեցինք և կիրառեցինք Աստծո սկզբունքները և բարգավաճեցինք ավելի, քան երբևէ պատկերացրել էինք: Մեր պատմությունը թարմ, իրական և ոչ հաճելի պատմություն է, բայց մենք պատմում ենք այն, որպեսզի օգնենք ուրիշներին՝ խուսափելու թակարդներից և ունենալու քաջություն՝ ընդունելու իրենց խառնաշփոթը և ստանալու օգնություն:

Իմ ամուսինը՝ Գարին, ամենից լավ է պատմում մեր պատմությունը.

Դրենդան ու ես մեր ամուսնական կյանքը սկսեցինք առանց ֆինանսական միջոցների: Իրականում ընկերներից մեկից 500 դոլար պարտք վերցրինք ամուսնանալու համար, այնպես որ, ըստ էության, մեր համատեղ կյանքը սկսվեց պարտքով: Մենք ապրում էինք միջնորդավճարներով. ես աշխատում էի ապահովագրական ընկերությունում, որին իսկապես հավատում էի, սակայն չափազանց ամաչկոտ էի և վախենում էի մարդկանց հետ խոսելուց, ինչը, պատկերացնում եք, լավ չէր անդրադառնում ապահովագրական ոլորտում իմ աշխատանքի վրա: Բայցևայնպես ես հաղթահարեցի իմ վախերը, սկսեցի զանգեր կատարել և որոշակի հաջողությունների հասա ապահովագրական փաթեթներ վաճառելու գործում: Ես բավարար գումար էի աշխատում և Դրենդայի հետ ունենում էի ազատ ժամանակ, քանի որ ինքս էի նշանակում իմ հանդիպումները, և դրանց մեծ մասը երեկոյան էր:

Սակայն շատ ժամանակ չանցավ, մինչև ես պարզեցի, որ փող և շատ փող է անհրաժեշտ ինչ-որ բաներ ունենալու, ինչ-որ բաներ անելու և կյանքում որևէ գործունեություն ծավալելու համար: Իմ միջնորդավճարները բավարար չէին կյանքին համաքայլ ընթանալու համար: Չիմանալով ավելի լավ ճանապարհ՝ մենք սկսեցինք գործածել վարկային քարտեր, որպեսզի գնենք այն, ինչ մեզ անհրաժեշտ է, այնուհետև երբ դա բավարար չէր, գործածեցինք ֆի-

նանսական ընկերությունների կողմից տրամադրվող վարկեր՝ այդ քարտերը միավորելու համար: Երբ փողը կրկին չէր բավականացնում, մենք ձեռք էինք բերում նոր վարկային քարտ: Մենք ունեինք նաև երկու մեքենայի վարկ, այնուհետև, իհարկե, գնեցինք տուն, որը չէինք կարող մեզ թույլ տալ, և իրականում մեր ֆինանսական կարգավիճակն իրավունք չէր տալիս դիմելու այդ քայլին: Դրենդայի ծնողները պարտքով տվեցին կանխավճարը, իսկ իմ դեկավարը բանկին նամակ գրեց, որտեղ չափազանցված ներկայացրեց մեր եկամուտը: Վարկը հաստատվեց, բայց սահմանված ժամկետում մենք անկարող էինք կատարել առաջին վճարումը:

Հազիվ էինք ծայրը ծայրին հասցնում: Երբ ինչ-որ բան էր փչանում, ավելի մեծ պարտքեր էինք անում: Մենք չունեինք գումար հարկերի համար, ուստի ես չէի ներկայացնում հարկային հայտարարագիր՝ մտածելով, որ կանդրադառնամ դրան, երբ գումար լինի: Գումարն այդպես էլ չհայտնվեց, և մենք ստիպված եղանք ներկայացնել հարկային հայտարարագիր: Մեր պարտքը կազմում էր հազարավոր դոլարներ, ինչը հանգեցրեց հարկային արգելանքների և ծայրահեղ լարվածության: Մի խոսքով՝ ընդամենը վեց տարվա ամուսնությունից հետո մենք ունեինք 10 սպառված և անվավեր վարկային քարտ, երկու մեքենայի վարկ հին և անսարք մեքենաների համար, ֆինանսական ընկերությունների երեք վարկ 28 տոկոս տոկոսադրույքով, մեր դեմ դատական հայցեր և հազարավոր դոլարների հարկային արգելանքներ: Բացի դրանից՝ մենք պարտք էինք մեր ծնողներին հազարավոր դոլարներ, որոնք վերցրել էինք պարզապես գոյատևելու համար:

Կյանքը սարսափելի լարված էր, և այդ ամենը հանգեցրեց նրան, որ ես սկսեցի խուճապի նոպաներ ունենալ և հակադեպրեսսանտ դեղամիջոցներ օգտագործել: Լարվածությունը պատճառ դարձավ, որ ես պայքարեմ նաև հիպոգլիկեմիայի դեմ, և բժիշկներն ասացին, որ դա կհանգեցնի շաքարային դիաբետի: Մի օր արթնացա և հայտնաբերեցի, որ մարմինս կաթվածահար է եղել. վախը պա-

տեց ինձ: Ես այնքան լարված էի, որ վախենում էի տնից դուրս գալուց: Կինս սկսեց ծրագրել, թե ինչպես են ինքն ու երեխաներն ապրելու՝ մտածելով, որ գուցե ստիպված լինի վերադառնալ տուն՝ Ջորջիա: Թույլ տվեք ասել, որ դա պարզապես դժոխք էր երկրի վրա: Դա կյանք չէր:

Ջանգվածային տեղեկատվության միջոցները շարունակ ստել են ձեզ: Նույնիսկ ձեր ծնողները գուցե սովորեցրել են ձեզ վստահել պարտքին: Հնարավոր է, որ նրանք առաջարկել են երաշխավոր լինել ձեր առաջին մեքենան գնելու համար: Բայց պարտքը պատահականություն չէ: Այն հմտորեն մշակված դավադրություն է՝ գողանալու ձեր տեսիլքի և ուժի ամեն մասնիկը: Հիշում եմ այն ժամանակը, երբ սպասում էի շուրջ 2,000 դոլարի չեկի մի ապահովագրական գործարքից, որ կնքել էի: Ինձ անհրաժեշտ էր այդ 2,000 դոլարը. այն ժամանակ դա մեծ գումար էր ինձ համար, իսկապես մեծ գումար: Ծանոթ լինելով ապահովագրական ընկերության վճարման փուլերին և իմանալով, որ ապահովագրական վկայականն արդեն տրվել է՝ ես գիտեի, որ չեկը կհասներ մոտավորապես հինգ օրից: Ուստի ես դուրս գրեցի չեկեր շուրջ 2,000 դոլարի հաշիվների համար և փոստով ուղարկեցի դրանք՝ մտածելով, որ ժամանակի ճիշտ հաշվարկ եմ կատարել: Բայց եկավ ուրբաթը, և այդ չեկը դեռ չկար, ու ես գիտեի, որ իմ գրած չեկերի մեծ մասը բանկային հաշվից հանվելու էին ուրբաթ երեկոյան: Չգիտեի ինչ անել, և ահա մի փայլուն միտք ծագեց: Ես կբացեի նոր ընթացիկ հաշիվ մոտակա բանկում և 2,000 դոլարի չեկ դուրս կգրեի այդ նոր, դատարկ ընթացիկ հաշվին և կդնեի այն բանկային հաշվին, որից այդ երեկո պետք է հանվեին իմ գրած չեկերը:

Երկուշաբթի առավոտյան ստուգեցի հաշվեհամարս, և իմ ծրագիրը հիանալիորեն աշխատեց: Ուրբաթ օրվա բոլոր չեկերի վճարումները կատարվել էին: Վստահ լինելով, որ իսկական չեկը փոստում կլիներ, ես գնացի այնտեղ, բայց ի սարսափ ինձ, այնտեղ ոչ մի չեկ չկար: Ես մտածեցի, որ նույն մարտավարությունը կգործի հակառակ ուղղությամբ, ուստի այս անգամ չեկ դուրս գրեցի իմ իսկական բանկա-

յին հաշվից և դրեցի այն նոր ընթացիկ հաշվին, որը բացել էի միայն իմ մտահղացումն իրականացնելու համար: Ինչպես կախարդանք, ամեն ինչ կրկին հաջողվեց: Ինչ-որ պատճառով այն չեկը երկու շաբաթ չհայտնվեց: Այդ ընթացքում այլ վճարումների հաշիվներ եկան, և, իհարկե, անհրաժեշտ էր սննդամթերք գնել: Այսպիսով՝ 2,000 դոլարի չեկը դարձավ 2,600 դոլարի չեկ՝ տեղաշարժվելով բանկերի միջև: Ամեն բան սահուն ընթանում էր, մինչև որ մի առավոտ հեռախոսազանգ ստացա բանկերից մեկից: Ես անմիջապես ճանաչեցի բանկի աշխատակցի ձայնը: Դա մասնաճյուղի կառավարիչն էր, որի հետ մշտապես խոսում էի, երբ գումար էի մուտքագրում իմ հաշվին: Ես այդ կնոջը պատմում էի այն մասին, թե ինչպես Հիսուսին ճանաչելը կարող է փոխել նրա կյանքը: Իմ չեկերից մեկի վրա նույնիսկ քրիստոնեական պատկեր էի տպագրել: Նա սկսեց խոսակցությունն առանց որևէ նախաբանի, պարզապես ասաց. «Ես գիտեմ, թե ինչ եք Դուք անում: Ես փակել եմ Ձեր հաշիվը, և Դուք պետք է վճարեք ամբողջական մնացորդը, որ պարտք եք բանկին, այլապես մենք մեղադրանք կներկայացնենք: Եվ իմիջիայլոց, Դուք այլևս չեք կարող ունենալ հաշվեհամար մեր բանկում»:

Ձեռն կարող ասել, թե որքան շփոթված, որքան նվաստացած էի: Բարեբախտաբար այդ օրը վերջապես չեկը հայտնվեց, և ես կարողացա վճարել բանկին այն, ինչ պարտական էի: «Ամոթը» միակ բառն է, որով կարող էի նկարագրել իմ զգացողությունը, երբ հետ գնացի այդ բանկ և հանդիպեցի այդ կնոջը: Ես նրան ասացի, որ դա իմ մտահղացումն էր, և Աստված որևէ առնչություն չունեի դրա հետ: Դա իմ հիմարությունն էր, և ես նրանից ներողություն խնդրեցի: Իմ կյանքը լի էր այսպիսի իրադարձություններով, ամոթով և ֆինանսական անելանելիությամբ:

Ես ատում էի, որ պարտքերի մեջ էի, և երազում էի պարտքից ազատ լինելու մասին: Ես չէի կարողանում պատկերացնել, թե ինչ զգացողություն է դա: Ժամանակի ընթացքում իրավիճակն ավելի էր վատանում: Սննդամթերքի բացակայություն, սնունդ գնելու նպատակով տանը եղած

իրերի գրավադրում, հարկային տեսչության արգելանքներ, ամեն օր հեռախոսազանգեր հարկային մարմիններից, սննդի պակաս, ձմռանը ջեռուցման համար վառելիքի պակաս և շատ ավելին: Երանի կարողանայի ասել, որ այս ամենը պարզապես ճանապարհից մի կարճ շեղում էր: Բայց դա մեր կյանքն էր՝ ինը տարի շարունակ:

Վերջապես զանգեց մի իրավաբան և ասաց, որ իր հաճախորդը երկար է սպասել վճարմանը, և նրա անունից դատական հայց է ներկայացնում: Երբ ստացա այդ հեռախոսազանգը, հասկացա, որ անելանելի վիճակում եմ: Պարտք վերցնելու տարբերակներ այլևս չէին մնացել, չկար հարազատ, որը կտար ինձ գեթ մեկ դրամ: Ես պարզապես չունեի ոչ մի տարբերակ:

Վախի և հուսահատության մեջ՝ աստիճաններով բարձրացա մեր կիսախարխուլ գյուղական տան փոքրիկ ննջարանը, պառկեցի մահճակալին և աղաղակեցի Աստծուն: Զարմանալիորեն Նա շատ արագ պատասխանեց: Հոգուս մեջ լսեցի Նրա խոսքերը. «Ես գործ չունեմ այս խառնաշփոթի հետ: Պատճառը, որ հայտնվել ես այս խառնաշփոթի մեջ, այն է, որ դու ժամանակ չես հատկացրել սովորելու, թե ինչպես է Իմ Թագավորությունը գործում»: Այդ օրը Նա ավելի շատ բաներ ասաց ինձ, բայց ես հասկացա ուղերձը: Իմ սխալն այն էր, որ ես փորձում էի բարգավաճել աշխարհի ճանապարհով՝ գործածելով պարտքը, իսկ դա չէր գործում: Աստված ցանկանում էր սովորեցնել, թե ինչպես է Ինքը վճարում իրերի համար: Անշուշտ, ես գաղափար չունեի, թե ինչ Նա նկատի ուներ՝ ասելով, որ պետք է սովորեմ, թե ինչպես է գործում Իր Թագավորությունը, բայց ես պատրաստ էի սովորելու: Ես գնացի, բռնեցի Դրենդայի ձեռքը և ապաշխարեցի նրա առջև, և մենք աղոթեցինք ու խնդրեցինք Աստծուն սովորեցնել, թե ինչպես է Իր Թագավորությունը գործում, քանի որ ակնհայտորեն գաղափար չունեինք դրա մասին:

Իրավաբանը, որ զանգեց այդ օրը, ասաց, որ դատական հայցից խուսափելու համար երեք օրից պետք է վճարեմ նրան 1,500 դոլար: Այդ ժամանակ մենք չունեինք գումար,

և չկար որևէ կնքված գործարք, որի միջոցով ժամանակին կվճարեի այդ գումարը, ուստի ես չունեի պատասխան, թե ինչպես կարող էր այդ գումարը հայտնվել: Հաջորդ օրը՝ երեկոյան, ապահովագրության պայմանագիր պետք է կնքեի մի ընտանիքի հետ: Մեր հին մեքենայով հասա հանդիպման վայրը: Մեքենան հազիվ էր ընթանում և ճանապարհին սպիտակ ծխի ահռելի քուլաներ էր արձակում: Այդ պատճառով սովորաբար փորձում էի մեքենան կայանել հաճախորդի տնից մի քանի փողոց այն կողմ, որպեսզի նա չտեսներ իր ֆինանսական խորհրդատուի տրանսպորտային միջոցի վիճակը: Այս անգամ էլ ամեն ինչ նույնն էր՝ բացի նրանից, որ հեռանալիս իմ հաճախորդն ուղեկցեց ինձ դեպի մեքենան: Ես վախենում էի շարժիչը միացնելուց, քանի դեռ նա կանգնած էր այնտեղ՝ իմանալով, որ օդը կլցվեր խիտ, սպիտակ ծխով: Այդպես էլ եղավ: Իմ հաճախորդը արագ խնդրեց, որ անջատեմ շարժիչը և բացեմ առջևի ծածկը: Նա մի փոքր գննեց, այնուհետև մոտեցավ իմ պատուհանին և ասաց. «Յուրի խողովակի միջադիրը վնասված է: Գնացե՛ք տուն և նորոգե՛ք, որքան հնարավոր է շուտ»: Ես կարիք չունեի, որ ինչ-որ մեկն ասեր, որ շարժիչը խնդիր ունի, իհարկե, դա ակնհայտ էր: Ակնհայտ էր նաև այն, որ ես մի լուրջ չունեի վերանորոգման համար:

Տան ճանապարհին աղոթեցի և խոսեցի Տիրոջ հետ Թագավորության և իմ մեքենայի մասին: Ես բարձրաձայն ասացի. «Տեր, ես փող չունեմ այս մեքենան վերանորոգելու համար: Ավելի լավ կլիներ, որ այն պարզապես այրվեր, և ես ազատվեի դրանից»: Անշուշտ, չէի ակնկալում, որ այն կայրվեր. ես պարզապես արտահայտում էի իմ հուսախաբությունը: Բայց երբ ասացի այդ խոսքերը, առջևի ծածկի վրա նկատեցի մի պղպջակ, որը, որքան հիշում էի, նախկինում չկար: Մինչ վարում էի մեքենան, այն դանդաղորեն մեծանում էր: Որոշ ժամանակ անց հասկացա, որ իրականում շարժիչն այրվում է: Երբ հասա գրասենյակ և կայանեցի մեքենան, կրակի բոցը ելավ շարժիչի խցիկից և վեց մետր բարձրացավ առջևի ծածկից: Ես ցնցված վազեցի դեպի շենք և զանգեցի հրշեջ ծառայություն: Կարճ ասած՝

մեքենան հավասարվեց գետնին: Ապահովագրության ընկերությունը վճարեց փոխհատուցում, և վարկը մարելուց հետո մնաց շուրջ 2,500 դոլար, որն ավելի քան բավական էր իրավաբանին 1,500 դոլար վճարելու համար, ինչը և արեցի: Մեզ մնաց որոշակի գումար սննդամթերք գնելու և մի քանի այլ կարևոր հաշիվներ վճարելու համար:

Երբ այդ գիշեր նստեցինք ճաշի սեղանի շուրջը, մենք դեռևս ցնցված էինք, բայց շուտով հասկացանք, որ, միևնույնն է, մեզ մեքենա է անհրաժեշտ: Իմ փոքր, հին սեղանը կարող էր տեղավորել ընդամենը չորս մարդու, իսկ մեր ընտանիքն այդ ժամանակ բաղկացած էր վեց անդամից: Հայրս իմացավ, որ մեր մեքենան այրվել է, և զանգեց ինձ: Նա ասաց, որ առավոտյան գնամ իր տուն, և մենք կգնանք մեքենա փնտրելու: Իմ հույսերը մեծացան: Հայրս հարուստ էր և հեշտությամբ կարող էր չեկ գրել նոր մեքենայի համար: Այդ առավոտ մենք գնացինք ավտոսրահ, նայեցինք բոլոր տարբերակները և գտանք այն մեքենան, որը մեզ դուր եկավ: Այն արժեր շուրջ 19,000 դոլար: Հայրս ինձ մի կողմ տարավ և ասաց, որ եթե հավանում եմ մեքենան, կտա ինձ 5,000 դոլար այն գնելու համար: Այդ պահին չգիտեի ինչ անել: Հայրս գաղափար չունեի մեր սոսկալի ֆինանսական վիճակի մասին: Ես գիտեի, որ չունեի վարկային պատմություն, որ վարկ ստանալի մնացած գումարի համար: Ուստի ստիպված եղա պատմել նրան ճշմարտությունը: Նա արագ ասաց, որ կստորագրի որպես երաշխավոր:

Իմանալով, որ չեմ ցանկանում պարտք վերցնել այն ամենից հետո, ինչ Տերն ասաց ինձ, սակայն զգալով, որ չունեմ ընտրություն՝ ես առաջ գնացի և լրացրի վարկի դիմումը: Մեզ ասացին, որ առավոտյան կտեղեկացնեն պատասխանի մասին: Այդ գիշեր Դրենդան ու ես չկարողացանք քնել: Մենք հասկանում էինք, որ չէինք կարող կատարել այդ գնումը, բայց մեքենայի կարիք ունեինք: Առավոտյան արդեն գիտեինք, որ չենք կարող դա անել, և զանգեցինք ավտոսրահ ու ասացինք, որ չենք կարող վերցնել մեքենան: Այնուհետև զանգեցինք հորս և նույնն ասացինք

նրան: Ինչ էինք անելու: Մենք չգիտեինք:

Մեր կյանքի այս ժամանակահատվածում Դրենդան հաճախ կանգ էր առնում բակային վաճառքի կետերում՝ փնտրելով իրեր, որոնք կարող էինք գնել և վերավաճառել կանխիկ գումար վաստակելու համար: Նրա ծնողները կենցաղային իրերի ամենամսյա աճուրդ էին կազմակերպում Ջորջիայում և հաճախ ուղևորվում էին Օհայո՝ իրեր գնելու և այնուհետև դրանք Ջորջիայում վաճառելու համար: Այնպես որ, Դրենդան մշտապես իրեր էր փնտրում վաճառքի համար:

Մեքենան այրվելուց մի քանի օր հետո նա հեռախոսազանգ ստացավ մի մարդուց, որին հանդիպել էր ամիսներ առաջ: Նա հիշել էր Դրենդային, ինչ-որ ձևով պահել էր նրա հեռախոսահամարը: Այդ մարդն աշխատում էր ծերանոցում: Նա ասաց, որ ունեն երկու սենյակ՝ լեփ-լեցուն իրերով, որոնք պետք է վաճառեին, և սենյակներն ազատեին: Հարցրեց, թե արդյոք Դրենդային հետաքրքրում են այդ իրերը: Դրենդան ասաց՝ այո՛: Եվ զանգեց ծնողներին, և նրանք գումար փոխանցեցին՝ ամբողջ ապրանքը գնելու համար: Նրանք եկան բեռնատարով, ամբողջ ապրանքը տեղափոխեցին Ջորջիա և վաճառեցին այն իրենց աճուրդում: Աճուրդն այնքան լավ անցավ, որ խոստացան Դրենդային տալ միջնորդավճար: Որպես միջնորդավճար՝ մենք ստացանք շատ խնամքով օգտագործված երկծավալ թափքով ավտոմեքենա: Մենք ցնցված էինք: Կյանքում առաջին անգամ ունեցանք մեքենա, որի գումարը վճարված էր:

Մենք մարել էինք նախորդ մեքենայի պարտքը և դաս քաղել, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում: Մենք պարզեցինք, որ ազատությունը հրաշալի զգացում է: Աստված մեզ սովորեցնում էր, որ Իր ճանապարհները բարի են և ազատ: Այդ պահից մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում մենք սկսեցինք կիրառել այն, ինչ Աստված սովորեցնում էր: Մենք լիովին ազատվեցինք պարտքերից երկուսուկես տարում: Սկսեցինք կանխիկով վճարել մեր նոր մեքենաների համար, կառուցեցինք մեր երազանքի տունը, որի համար նույնպես վճարեցինք և սկսեցինք բար-

գավաճել այնպես, որ կարողացանք հարյուր հազարավոր դոլարներ նվիրաբերել տարբեր ծառայողական ծրագրերի աշխարհով մեկ: Մեր կյանքն արմատապես փոխվեց, բայց այդ ինը մութ տարիների հիշողությունը տվեց մեզ եռանդ՝ սովորեցնելու Աստծո Թագավորության մասին: Մենք ատում ենք աղքատությունն ու պակասությունը:

Ահա պատմության տխուր մասը. բոլորովին հարկ չկար, որ մենք անցնեինք ստրկության և լարվածության այդ ինը տարիների միջով: Բոլորովին հարկ չկար, որ դժվար ճանապարհով սովորեինք, թե ինչպես են ֆինանսները գործում: Մենք կարող էինք հենց սկզբից սովորել Աստծո համակարգը և բարգավաճել: Մեր աղոթքն է, որ դուք սովորեք, թե ինչպես է կյանքն ընթանում առանց ցավի և լարվածության: Աստված կյանքի Հեղինակն է, և Նա գրել է հրահանգների ձեռնարկ՝ Աստվածաշունչը: Նրանում դուք կգտնեք պատասխաններ և օրինակ կյանքի համար: Դժվար ճանապարհը չափազանց ծանր է և ունի ահռելի գին, գին, որը դուք երբեք չէիք նախատեսել վճարելու:

Ինչ վերաբերում է ֆինանսներին, կա մեկ այլ համակարգ, մեկ այլ Թագավորություն՝ իր օրենքներով և սկզբունքներով, որոնք կազատեն ձեզ ստրկությունից և անհուսությունից, որ աշխարհը կարող է առաջարկել: Հավատացե՛ք, ես ունեցել եմ այդ փորձառությունը:

Մենք դրժեցինք Աստծո Խոսքը՝ փորձելով հասկանալ կյանքը, բայց այսօր նվիրել ենք մեր կյանքը, որպեսզի օգնենք ուրիշներին՝ գտնելու ազատություն և, հուսով ենք, խուսափելու այն լուրջ սխալներից, որոնք կարող էին խորտակել մեր կյանքը: Ամուսնությունները լուծարվում են պարտքերի պատճառով, իսկ երեխաները դառնում են զոհ: Չարժե դա: Ազատությունն ավելի լավ է, քան ցանկացած «բան», որ կարող

**Ազատությունն
ավելի լավ է, քան
ցանկացած «բան»,
որ կարող եք
ունենալ: Այն տիրում
է ձեզ, եթե խլում է
ձեր խաղաղությունը,
ընտանիքը և նախա-
սահմանությունը:**

եք ունենալ: Այն տիրում է ձեզ, եթե խլում է ձեր խաղաղությունը, ընտանիքը և նախասահմանությունը:

Ես համաձայն եմ, որ կան դրամական շատ սխեմաներ, որոնք մշակվել են, որպեսզի մարդկանցից գողանան նրանց նախասահմանությունը և մտցնեն նրանց խավարի թագավորության և նրա դրամական համակարգի գերության մեջ: Ոչ ոք չի մտնում պարտքի տակ՝ հույս ունենալով կործանել իր կյանքը: Շատ անգամներ մարդիկ փորձում են պարզապես գոյատևել՝ չգիտակցելով, որ խաղն ուղղված է իրենց դեմ: Նախապես հաստատված վարկային քարտերը փոստով ուղարկվում են մեզ նման ոչինչ չկասկածող մարդկանց, որոնք կարծում են, թե դա օրհնություն է, մինչև որ չեն գիտակցում իրական արժեքը՝ 28 տոկոս տոկոսադրույքը: Ոչ ոք իրականում չի հասկանում, որ եթե պարզապես կատարի նվազագույն վճարումը, ապա քարտը մարելու համար կպահանջվի ավելի քան 22 տարի: Բանկերն ու հաստատությունները հստակ գիտեն, թե ինչ են անում: Նրանք շուկայում ոչ մի տեղ չեն կարող նման շահույթ ստանալ:

Պարտքն այնքան գայթակղիչ է: Ոմանց համար գայթակղություն է գնել այնպիսի շքեղ բան, ինչպիսին սպորտային ավտոմեքենան է կամ ադամանդը, որոնք նրանք իրականում չեն կարող իրենց թույլ տալ: Ուրիշները գործածում են վարկային քարտ և ասում իրենք իրենց, որ կմարեն այն հաջորդ ամիս, բայց քչերն են երբևէ այդպես վարվում: Անձեռնմխելի չեն բարձր եկամուտ ունեցողները: Մենք եղել ենք ամենագեղեցիկ առանձնատներում և պարզել, որ այդ ընտանիքներում պարտքի նույն սցենարն է՝ պարզապես ավելի բարձր մակարդակով: Դուք պետք է գիտակցեք, որ կան լավ մտածված ծուղակներ, որոնց նպատակն է տեղափոխել ձեզ աղքատ տներ: Նույնիսկ վարձակալած պահեստային տարածքներն ավելի շատ եկամուտ են ստանում բռնագրավված իրերի վաճառքից, երբ անձն այլևս ի վիճակի չէ վճարելու պահեստի ամսական վարձավճարը: Երբ մարդիկ այլևս չեն կարողանում վճարել պարտքերը, փոխատուն գալիս և վերցնում է այն գույքը, որ նրանք կարծում էին, թե իրենցն է: Ճշմարտությունն այն է, որ այն երբեք էլ նրանցը չի եղել: Աստվածաշունչը հաստատում է. «...փոխ առնողը ծառա կլինի փոխ տվողին» (Առակաց 22.7):

Իսրայելցիներն աղյուսներ էին պատրաստում Եգիպտոսի փարավոնի համար և շատ քիչ բան էին տեսնում իրենց բռնի ստրկության մեջ: Մեդիան համոզում է մեզ գնել նոր և փայլուն իրեր, որոնք պարտավոր ենք ունենալ, իսկ բանկերը վարկով տրամադրում են անհրաժեշտ գումարը, և մենք զրկվում ենք մեր ամուսնությունից, ընտանիքից, փոխհարաբերություններից, խաղաղությունից և ազատությունից այն զարդարանքների համար, որոնք վաղը դառնում են աղբ: Ինչպես մեր երկրին է սպասվում «վճարման օր» իր պարտքերի դիմաց, այնպես էլ յուրաքանչյուր ընտանիք հաշիվ է տալու իր պարտքերի համար: Պատասխաններ կան, բայց դրանք չեն խոստանում արագ կամ հեշտ շտկումներ:

Սուրբգրային խոսքեր ֆինանսական հիմքերի համար.

«Բայց մեծ շահավաճառություն է իրավ սստվածապաշտությունը բավականության հետ միասին: Որովհետև ոչինչ չենք բերել աշխարհս, և հայտնի է, որ ոչինչ էլ չենք կարող դուրս տանել: Բայց եթե կերակուր և հագուստ ունենք, նրանցով բավականանանք: Իսկ նրանք, որ կամենում են հարստանալ, փորձության և որոգայթի և շատ անմիտ վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որ ընկղմում են մարդկանց սատակումի և կորուստի մեջ: Որովհետև արծաթասիրությունը ամեն չարիքների արմատն է, որին մի քանիսը անձնատուր լինելով հավաքքից մոլորվեցին և իրենց անձերը շատ ցավերով խոցեցին: Բայց դու, ո՛վ Աստծո մարդ, փախիր սրանցից և հետևիր արդարության, ստվածապաշտության, հավաքքի, սիրո, համբերության, հեզության»:

– Ա Տիմոթեոս 6.6-11

«Որովհետև ձեզնից ո՛վ է, որ կամենա աշտարակ շինել և առաջ չնստի և ծախսը հաշվի, թե ավարտելու համար բավական բան ունի»:

– Ղուկաս 14.28

«Որովհետև քո Եհովա Աստվածը քեզ պիտի օրհնի, ինչպես որ քեզ ասել է, և դու շատ ազգերի փոխ կրասս, բայց

դու փոխ չես առնի, և դու շատ ազգերի վրա կտիրես, բայց նրանք քեզ վրա չեն տիրի»:

– Երկրորդ Օրինաց 15.6

«Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց, որովհետև ընկերին սիրողը օրենքը կատարել է»:

– Հռոմեացիների 13.8

«Ուրեմն ամենին վճարեք եղած պարտքը. ում որ հարկ պարտ էք՝ հարկը, ում որ մաքս՝ մաքսը, ում որ հարգանք՝ հարգանքը, ում որ պատիվ՝ պատիվը»:

– Հռոմեացիների 13.7 (ESV)

«Հարուստը աղքատներին կտիրի, և փոխ առնողը ծառա կլինի փոխ փվողին»:

– Առակաց 22.7

«Ամբարիշտը փոխ է առնում և չի վճարում, բայց արդարը ողորմած է և տալիս է»:

– Սաղմոս 37.21



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ



Ինչպես տեսաք, շատ տարիներ առաջ ամուսինս՝ Գարին, և ես բախվեցինք մեր ֆինանսական ճգնաժամին: Մենք տեղափոխվել էինք Օհայո՝ անելու այն, ինչ Աստված պատվիրել էր մեզ, և դա լինելու էր վերջին ժամանակների մեր աշխատանքը: Մենք մտածում էինք, որ եթե հնազանդվեինք այն Խոսքին, որ Աստված տվել էր մեզ իրավիճակի վերաբերյալ, կհայտնվեինք հեշտ ճանապարհին: Սակայն մենք չափազանց միամիտ էինք, որպեսզի հասկանայինք, որ Աստծո Խոսքի համար մշտապես պայքար է ընթանում, հատկապես այնտեղ, որտեղ հարցը վերաբերում է ֆինանսներին: Մենք պարտքի և ավելի ցածր եկամուտի ճիրաններում էինք, երբ Օհայոյում ամեն բան նորից սկսեցինք: Հաջորդ մի քանի տարիները լինելու էին խոչընդոտներով լի, որոնք ուղեկցվելու էին մեծ ճնշումներով թե՛ ֆինանսների և թե՛ ամուսնության մեջ:

Մի օր՝ մեծ նեղության մեջ, քննարկեցինք մեր բիզնեսից հրաժարվելու հարցը: Այն առաջ չէր ընթանում, որքան էլ քրտնաջան աշխատում էինք: Գրեթե մեկ տարի անց երկուսս էլ մոռացության էինք մատնել մեր տեղափոխվելու նպատակը, ինչպես նաև այն երազանքները, թե ինչպիսին է լինելու մեր հաջողությունը... և, ամենակարևորը, Աստծո Թագավորության ինչպիսի օրինակ ենք ցույց տալու մեր ընտանիքի անդամներին:

Արտասվելով աղոթեցինք և հարցրինք Աստծուն, թե ինչ անենք: Արդյո՞ք բաց էինք թողել Նրա կամքը: Որտե՞ղ էր մեր

խոստումը: Կար որևէ հույս, որ մենք հաջողություն կունենանք: Մինչ լուրջ քննարկման մեջ էինք, փոստային առաքման մեքենան կանգ առավ, և մեզ մի փաթեթ հանձնեցին: Մենք բացեցինք փաթեթը՝ հասկանալով, որ այն մի ծառայությունից էր, որին երբեմն խնդրում էինք աղոթել և զոհաբերություններ էինք ուղարկում, երբ կարողանում էինք: Փաթեթում ուսուցողական նյութերի մի շարք էր՝ «Մի հանձնվիր» խորագրով: Ավելի կատարյալ ժամանակ չէր կարող լինել:

Հաջորդ օրը լսեցինք այն, քաջալերվեցինք և չհանձնվեցինք, և Աստված նոր ուժ ու նոր տեսիլք ներարկեց մեր սրտերի մեջ: Մենք պարզապես որոշակի մատակարարում ստացանք տեսիլքի համար, որպեսզի շարունակեինք այն խոստումի ճանապարհը, որ Աստված տվել էր մեզ: Երբեմն մենք ակնկալում ենք, որ խոստումն անմիջապես կատարվի, բայց պետք է անցներ որոշակի ժամանակ, մինչև որ մեր գործը սկսեր թափ հավաքել: Հաճախ Աստված ուղղորդում է Իր զավակներին տեսիլքով կամ հրահանգով, բայց նրանք միայն գիտեն գործել այնպես, ինչպես իրենց սովորեցրել է երկրային անեծքի համակարգը: Մենք ստանում ենք հրահանգներ, բայց ոչ ռազմավարություն: «Ժողովուրդը կորչում է գիտություն չլինելու պատճառով»: Սար նվաճելու համար ձեզ անհրաժեշտ է ռազմավարություն:

Մենք որոշեցինք հավատարիմ մնալ և համառել: Ամուսինս, որպես կողմնակի աշխատանք, սկսեց զազավորված ըմպելիք առաքել իր հոր տեղական ռեստորան՝ միաժամանակ շարունակելով կառուցել մեր ընկերությունը: Դա մի փոքր կանխիկ գումար էր՝ պարտքերի տակ չընկնելու համար: Բայց մենք մեր աչքերը չէինք կտրում տեսիլքից, մինչ նա աշխատում էր կես դրոյքով՝ տեսիլքը ֆինանսավորելու համար:

Դրանից շատ չանցած՝ մի գիշեր ես որոշեցի, որ չեմ քնի, մինչև Աստված չխոսի ինձ հետ: Ես հիշում եմ, որ մտածում էի. «Եթե Հակոբը կարողացավ գոյեմարտել հրեշտակի հետ, որպեսզի սրանսար իր ուզածը, ես էլ կարող եմ նույնն անել, մինչև որ Աստուծոց խոսք լսեմ իմ իրավիճակի մասին»: Ի զարմանս ինձ՝ ես հայտնաբերեցի, որ Աստված նույնչափ ցանկանում էր ժամանակ անցկացնել և խոսել ինձ հետ, որչափ ես ցանկանում էի լսել Նրանից: Ես վերցրի իմ Աստվածաշունչը և սկսեցի աղոթել ու փնտրել

Աստծո խոսքը: Սկսեցի կարդալ Անգեի մարգարեությունը: Աստված խոսեց ինձ հետ Աստվածաշնչի այդ փոքրիկ գրքից:

Անգեի գրքում Իսրայելի սակավության նկարագրությունն է, որովհետև ժողովուրդն ավերակների մեջ էր թողել Աստծո տունը: Աստված ասաց, որ չի օրհնել նրանց աշխատանքը կամ նրանց կյանքը, քանի որ Իր տունն ավերակ է, իսկ նրանք կառուցում են իրենց կյանքը:

Ես չէի կարող չմտածել այն մասին, թե որքան քրտնաջան էինք աշխատում, որպեսզի կառուցեինք մեր բիզնեսը, ընտանիքը և կյանքը՝ առանց նախևառաջ իսկապես փնտրելու Աստծուն: Մենք կանոնավոր հաճախում էինք եկեղեցի, բայց մի ոտքով Աստծո Թագավորության մեջ էինք, մյուսով՝ մեր: Մենք փնտրում էինք Աստծուն որոշ ժամանակով, այնուհետև հանգամանքներն այնպես էին ճնշում, որ կրկին ապավինում էինք մեր հին ճանապարհներին: Երբեմն տասանորդ էինք տալիս, երբեմն՝ ոչ: Անշուշտ, աղոթում էինք և հաճախում եկեղեցի, բայց դա ավելի շատ այն պատճառով էր, որ զգում էինք, որ պետք է անենք դա, և ոչ թե ընտրել էինք առաջին հերթին պատվել և փնտրել Նրան:

Ես շարունակեցի կարդալ Անգեի մարգարեությունը, որտեղ Աստված ասում է. «Միթե սերմը դեռ ամբարում է»: Օրալ Ռոբերթսի համալսարանում ուսանելու տարիներին փոքր-ինչ գիտելիք էի ձեռք բերել ֆինանսական սերմեր ցանելու մասին, բայց մենք բառացիորեն փող չունեինք Աստծո տան մեջ ցանելու համար: Ես ասացի. «Աստված, ես ոչինչ չունեմ Քեզ տալու՝ բացի ինձնից: Ես տալիս եմ Քեզ իմ կյանքը, ինչպիսին որ այն կա, և ինչ ցանկանաս, որ անեմ Քո Թագավորությունը կառուցելու համար, ես կանեմ»: Աստված խոսեց իմ սրտում. «Ես օգտագործելու եմ քեզ և Գարիին, որպեսզի օգնեք Իմ ժողովրդին ամուսնության և ֆինանսների հարցերում, և դուք Իմ ժողովրդին կհանեք ֆինանսական գերությունից»: Ես պատկերացրի, թե ինչպես Աստված օգտագործեց Մովսեսին՝ իսրայելցիներին Եգիպտոսից հանելու համար, բայց մենք մարդկանց հանելու էինք պարտքերից և առաջնորդելու էինք դեպի իրենց խոստմունքի երկիրը:

Խանդավառված ես արթնացրի Գարիին խոր քնից: «Աստված օգտագործելու է մեզ, որ օգնենք մարդկանց իրենց ֆինանսների

և ամուսնության հարցերում»: Ոչ այնքան երջանիկ ճայնով նա ասաց. «Կուզեի, որ նախ և առաջ Նա ինձ ցույց տար»: Նա այնքան հիասթափված էր, որ դժվարանում էր դա տեսնել, իսկ ես լցված էի խանդավառությամբ, որ աղոթեի և կրկին հավատայի Աստծո խոսքին: Ես ստացա այն պատասխանը, որ փնտրում էի: Ուրիշներին օգնելու այս տեսիլքը առաջ էր մղելու մեզ ապագա դժվարությունների միջով և ուրվագծելու էր մեր պայքարի նպատակը մինչև վերջնագիծ:

Մի քանի շաբաթ անց Աստված Գարիին երազ տվեց: Երազում մի թրթուր էր սողացել տերևակոթի վրա և բոժոժ հյուսել: Բոժոժից դուրս էր եկել մի մեծ և գեղեցիկ թիթեռ: Այնուհետև նա լսել էր այս խոսքերը. «Այսպես կլինեն քո բիզնեսը և կյանքը: Հետևիր Իմ ծրագրին և տո՛ւր քո բիզնեսն Ինձ»:

Մենք հեռացանք այն ընկերությունից, որի հետ աշխատել էինք ութ տարի, և Աստված նոր նպատակակետ տվեց մեր բիզնեսի համար, ինչը մղեց մեզ Նրա խոսքը ներառելու բիզնեսի վարման մեթոդներում: Մենք ավելի ու ավելի էինք խանդավառվում՝ տարածելու Աստծո խոսքը, և այն ժամանակ մեր բիզնեսն ավելի շատ կարծես առաքելություն էր, քան բիզնես: Մենք ուրախանում էինք յուրաքանչյուր նոր օրով, և Աստված սկսեց տալ մեզ մտքեր այն մասին, թե ինչպես կառուցենք մեր ընկերությունը և օգնենք մարդկանց: Աստծո խոսքը կենդանացավ, և մենք խոսքի մեջ տեսանք ֆինանսներին, կյանքին և առաջնահերթություններին վերաբերող բաներ, որոնք նախկինում չէինք տեսել: Պայքարող բիզնեսը սկսեց նոր կերպարանք ստանալ: Դեռևս մի քանի տարի էր անհրաժեշտ, մինչ մենք կտեսնեինք, թե ինչպես է մեր ընկերությունը թափ հավաքում և վեր սլանում, այնուհանդերձ, այն ճիշտ ճանապարհին էր: Ի հայտ եկան նորանոր խոչընդոտներ, որոնք պետք է հաղթահարեինք, կարևորն այն էր, որ մենք սովորել էինք փնտրել Նրա կամքը մեր կյանքի համար, այլ ոչ թե շարժվել մեր ճանապարհներով և ակնկալել Նրա օրհնությունը:

Մի քանի տարի անց մեր ընկերությունը դարձավ համար մեկը երկրի 5,000 գրասենյակների մեջ, և համազգային մի համաժողովում Գարիին խնդրեցին պատմել իր հաջողության մասին: Մենք չէինք պայքարում այս նպատակի համար, այլ պարզապես ջերմեռանդորեն հետևում էինք այն ծրագրին, որ Աստված ուներ

մեզ համար: Այսօր այդ բիզնեսը և այն սերմը, որ ցանել ենք դրանից, բերել են հունձք, որն այն ժամանակ անկարող էինք պատկերացնել:

Մենք սովորեցինք, որ դու չես կարող ծառայել երկու տերերի: Մեկին կսիրես և մյուսին կատես: Թշնամին ցանկանում է, որ դու ծառայես փողին, այլ ոչ թե Աստծո նպատակին: Եթե նա կարողանա ճնշել քեզ ֆինանսների մեջ, նա կկարողանա գողանալ քո ժամանակը, որը պետք է հատկացնեիր՝ փնտրելու Աստծուն և իրականացնելու քո կյանքի համար Նրա կոչումը: *Ծառայելը* բայ է, այնպես որ, թույլ տուր հարցնել. ո՞ւմ կամ ինչքին ես ծառայում՝ Աստծո՞ւն, թե՞ փողին:

Մենք հասկացանք, որ երբ Թագավորության առաջխաղացման աստվածային առաքելությունն իսկապես դարձրինք առաջնահերթություն, մենք ապահովվեցինք անհրաժեշտ ֆինանսական միջոցներով մեր ասպարեզը վազելու համար: Փող ունենալը կամ դրանով նյութական բաներ գնելը նպատակ չէ, թեև դա դառնում է շատերի կյանքի ձգտումը: Փողը նպատակը՝ Աստծո նպատակները, ֆինանսավորելու համար է: Ֆինանսապես բարգավաճելու համար գտիր քո նպատակը Աստծո Թագավորությունն առաջ տանելու մեջ, և այնժամ քո ջանքերը, աշխատանքը և կյանքը բոլորովին նոր եռանդով կլցվեն:

Նույն Աստված, որ քո քայլերն ուղղորդում է դեպի քո նպատակը, կտա քեզ ստեղծարար գաղափարներ և ուղղություն՝ ֆինանսավորելու և առաջ մղելու քեզ այդ նպատակի մեջ: Աստված առաջնորդել է մեզ ներդրումներ կատարելու այնպիսի ընկերություններում և ոլորտներում, որոնք բարգավաճել են: Մենք ունեցել ենք եկամտի վտակներ, որոնք տարիների ընթացքում չորացել են, բայց երբեք չի եղել, որ Աստված չտանի մեզ նոր վտակի մոտ, որն ավելի շահավետ է եղել: Մի՛ զարմացիր, եթե աղոթում ես աճի համար, և Աստված փակում է դուռը ներկա աշխատանքի դիմաց կամ առաջնորդում նոր բիզնեսի մեջ: Կամ Նա կարող է տալ նոր շրջադարձ քո ընթացիկ բիզնեսի մեջ: Քանի որ Աստծո Թագավորությունը քո ներսում է, տնտեսական ծանր ժամանակներում բարգավաճելու քեզ անհրաժեշտ ուղղությունը կբխի քո հոգուց: Աստծո Թագավորությունը ենթակա չէ այս աշխարհի տնտեսությանը, բայց քեզ անհրաժեշտ են ռազմավարություններ Հոգուց՝

դժվար ժամանակներում բարգավաճելու համար:

Մեր երկիրը երկար ճանապարհ պետք է անցնի տարիների ընթացքում պարտքերով ծանրաբեռնված կենսակերպից, սոցիալական օգնության ծրագրերի ոչ ճիշտ օգտագործումից և դոլարի չափից շատ տպագրությունից վերականգնվելու համար: Մենք արդեն տեսնում ենք ֆինանսական անորոշության ճանապարհի անհարթությունները և դոլարի անկայունությունը համաշխարհային շուկաներում: Քանի որ, որպես պետություն, մենք շրջվել ենք Աստծո Խոսքի սկզբունքներից, անձնական ազատությունների կորուստ ենք ունեցել: Մեր հսկայական գերծախսերի հաշվարկման օրը Վաշինգտոնում մոտենում է: Ինչևէ, Աստված կպաշտպանի և կօգնի Իր զավակներին՝ գործելու Իր Թագավորության մեջ, և նրանք, ովքեր կգործեն, նման կլինեն Եղիային, որ սովի ժամանակ կերակրվեց ագռավների միջոցով: Մենք չպետք է վախենանք, այլ ավելի շուտ Աստծո Հոգով *նախապատրաստվենք*, ինչպես Հովսեփն արեց: Եվ մենք պետք է ապրենք հավատքով:

Ես նշեցի, որ Գարին ու ես հիմնեցինք նոր ընկերություն, երբ առաջնորդություն զգացինք թողնելու մեր գործատուին, սակայն ես պետք է ասեմ, թե ինչ արեց մեր ընկերությունը: Գիտեմ, որ սա խենթ կինչի հիմա, քանի որ դուք գիտեք, թե ինչպիսի խառնաշփոթի մեջ էր մեր ֆինանսական ոլորտը, սակայն այդ ընկերությունը ստեղծվեց, որպեսզի մարդկանց ցույց տար, թե ինչպես նրանք ազատվեին պարտքերից և պաշտպանեին իրենց ներդրումները: Անձնական փորձառությունից մենք գիտեինք, թե որքան կործանարար կարող է լինել պարտքը, և Սուրբ Հոգու օգնությամբ, ինչպես նաև մեծ թվով ուսումնասիրությունների շնորհիվ բացահայտեցինք մի զարմանալի փաստ: Մենք պարզեցինք, որ Միացյալ Նահանգների ընտանիքների 86%-ը կարող է ազատվել պարտքերից, այդ թվում՝ տան հիփոթեքից՝ առանց ընթացիկ եկամտի փոփոխության: Որքան էլ անհավատալի թվա, դա ճշմարիտ է: Երբ բացահայտեցինք սա, հասկացանք, որ ոչ ոք հաճախորդին չի ասում, որ դա հնարավոր է: Ուստի մենք որոշեցինք հիմնել ընկերություն, որը կզբաղվեր հենց դրանով: Այդ ընկերությունն այժմ 29 տարեկան է և շարունակում է հաջողությամբ գործել:

Ես հարցրի Գարիին, թե արդյոք նա չի պատմի որոշ բաների

մասին, որոնք նա սովորել է տարիների ընթացքում, և որոնք ձեզ կարող են օգնել հաղթահարելու լավ մտածված մարքեթինգային արշավը, որի նպատակն է գողանալ ձեր վաստակած յուրաքանչյուր դրամը՝ զգելով ձեզ պարտքերի գերության մեջ:

«Դրենդան ու ես շատ բան ենք սովորել երեսուն տարվա ընթացքում՝ մարդկանց օգնելով ազատվելու պարտքերից: Առաջին բանը, որ կարծում եմ, պետք է հասկանաք, այն է, որ ինչ-որ մեկն ուզում է, որ դուք հայտնվեք պարտքերի մեջ: Օրինակ, համոզված եմ, որ ձեր փոստային արկղը ռմբակոծվում է վարկային քարտի առաջարկների մշտական տարափով: Եվ ես համոզված եմ, որ դուք նկատել եք, որ շարունակ առաջարկներ եք ստանում նույն ընկերություններից: Երբևէ չե՞ք մտածել, թե ինչու են այս ընկերությունները շարունակում ուղարկել դրանք, երբ դուք վերջին տասը առաջարկներին հրաժարվել եք որևէ հետաքրքրություն ցուցաբերելուց: Կարծում եմ, հետևյալ փոքրիկ ֆինանսական պատկերավոր օրինակը կպատասխանի այդ հարցին:

Ենթադրենք՝ դուք 20 տարեկան եք և ունեք ամսական 25 դոլար, որ ցանկանում եք ներդնել ձեր կենսաթոշակի համար, որի կարիքը, ձեր կարծիքով, հավանաբար կունենաք 70 տարեկանը բոլորելիս: Այսպիսով՝ դուք պատրաստվում եք ներդնելու ամսական 25 դոլար 50 տարի ժամկետով:

Եթե ամսական ներդնեք այդ 25 դոլարը հնգամյա ավանդի ընթացիկ տոկոսադրույքով, որն այս պահին 2.25 տոկոս է, ապա ձեր գումարը կաճի մինչև 27 հազար 692.98 դոլար: Բայց ի՞նչ է բանկն անելու ձեր փողի հետ: Կռահեցիք: Վարկ է տալու և ոչ թե 2.25 տոկոսով, այլ, կարելի է ենթադրել, հավանաբար 18 տոկոսով: Այժմ, ստուգե՛ք: Եթե այդ 25 դոլարը ամսական ներդնեցիք 18 տոկոս տոկոսադրույքով, ապա 50 տարվա ընթացքում այն կաճեր մինչև 12 մլն 630 հազար 390 դոլար: Այո՛, ճիշտ կարդացիք: Իսկ ի՞նչ կասեք, եթե ձեր բանկը ձեր փողը վարկ տար մեկին, որն օգտագործում է մանրածախ խանութի վարկային քարտ: Այդ քարտերը ձեզնից չեն գանձում 18 տոկոս, այլ

միջինում 24-27 տոկոս: 24 տոկոսի դեպքում ձեր ամսական 25 դոլարը կաճի մինչև 1.8 միլիարդ դոլար: Այժմ եկեք մտածենք: Բանկը վճարելու է ձեզ 27 հազար 692 դոլար, և այդ գումարը փոխառություն է տալու և վաստակելու է միլիոններ: Այժմ հասկանո՞ւմ եք, թե ինչու են նրանք իրենց թույլ տալիս շարունակ ուղարկել այդ առաջարկները: Ոչ ոք ձեզ վարկ չի տալիս, որովհետև դուք նրան դուր եք գալիս: Աշխարհը լի է պարտքի ծուղակներով: Գնում եք ապրանքը և վճարում իննսուն օրվա ընթացքում, ինչպես կանխիկի դեպքում, ոչ մի վճարում մեկ տարվա ընթացքում. այս ամենը լավ գործարք է թվում, բայց այս առաջարկներն ընդունող մարդկանց 85 տոկոսը չի վճարում իր վարկերը պարապուրդի ժամանակահատվածում: Այնուհետև այն վերածվում է ոչ թե 18 կամ 24, այլ 36 տոկոսադրույքով վարկի: Ես նույնիսկ չեմ փորձի ասել, թե որքան արագ է գումարն աճում այդ տոկոսադրույքով, բայց համոզված եղեք, բանկի աշխատողը գիտի: Ոչ ոք չի փնտրում 36 տոկոսադրույքով վարկ, բայց մարդկանց մեծ բազմություն ունի այն: Ծուղակն այն է, որ դուք մտածում եք. «Ես կմարեմ այս քարտը հաջորդ շաբաթ կամ հաջորդ ամիս»: Կանգ առեք: Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչ անսպասելի հաջողություն եք ունենալու, որը գայթակղում է ձեզ մտածելու այդպես: Ո՛չ, ավելի լավ է սպասել, մինչև ունենաք կանխիկ գումար, այնուհետև գնեք այն, ինչը գրավում է ձեր ուշադրությունը: Փաստ է, որ մարդկանց մեծամասնությունը երբեք չի ազատվում պարտքերից, այլ պարզապես գործածում է պարտքը որպես ապրելակերպ և թոշակի անցնում սնանկացած:

Այսպիսով՝ ինչպե՞ս ենք մենք ազատվում պարտքերից: Առաջինը՝ դադարեք պարտքին ապավինելուց: Դադարեք ձեր գումարն ուրիշներին տալուց, որպեսզի նրանք գործածեն այն իրենց շահույթի համար. դուք պետք է պահեք կանխիկ գումարը և կառուցեք ձեր ապագան դրանով: Գուցե մտածում եք. «Ես չունեմ հավելյալ կանխիկ գումար»: Առանց վիճաբանելու՝ ես կտրականապես համաձայն չեմ: Ավելի քան երեսուն տարի օգնելով մարդկանց ազատվե-

լու պարտքերից՝ ես հայտնաբերել եմ, որ միջին ընտանիքը ամսական 500-700 դոլար հավելյալ գումար ունի, եթե իմանա, թե որտեղից գտնի այն: Եվ դա է բանալին, ուստի որտեղ է այն: Հավատացե՛ք, այն կա: Շատ պարզ բացատրությամբ՝ այդ գումարը կարելի է գտնել այն ամենում, ինչի վրա ծախսում եք այն:

Թույլ տվեք բացատրել պարզ օրինակով: Ենթադրենք՝ դուք ամսական 300 դոլար եք ծախսում ձեր ընտանիքի բջջային հեռախոսների սակագնային պլանի համար: Եթե գտնեք ամսական 150 դոլարով էժան սակագնային պլան, ապա հենց նոր դուք գտաք ամսական 150 դոլար: Եթե շարունակեք այս օրինակն օգտագործել այն ամենում, ինչի վրա ներկայում ծախսում եք ձեր ֆինանսները, ապա կապշեք, թե ինչ կհայտնաբերեք: Ես կարող եմ երաշխավորել, որ դուք կորցնում եք գումար՝ գերավճարելով ձեր հարկերը կամ չափազանց շատ վճարելով ձեր տարբեր ապահովագրական ծրագրերի համար: Դուք գերավճարում եք ձեր բջջային հեռախոսի սակագնային պլանի համար, ձեր սննդամթերքի կամ բազում այլ բաների համար, որոնց վրա ծախսում եք ձեր գումարը: Այս բոլոր ծախսերը կարելի է կարգավորել՝ պարզապես ձեռք բերելով մի փոքր գիտելիք և հատկացնելով ժամանակ՝ համեմատելու գները, որպեսզի համոզված լինեք, որ ունեք լավագույն սակագինը լավագույն ապրանքի համար, և հստակ իմանաք, թե արդյոք այդ ապրանքի կարիքն ընդհանրապես ունեք:

Ամփոփելով ասեմ, որ ձեզ պարտքերի մեջ գցելու և պահելու խարդախություններն ու ծրագրերն անվերջ են: Դուք պետք է վճռական լինեք, եթե ցանկանում եք մնալ ազատ: Առաջին բանալին սովորելն է, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում ֆինանսների ոլորտում, և երկրորդ՝ սովորել, թե ինչպես են ֆինանսները գործում այստեղ՝ երկրի վրա: Եթե դուք հետաքրքրված եք, մեր ընկերությունը կքննի և կտափ պարտքերից ազատվելու անվճար, անհատականացված ծրագիր ձեզ համար: Այս ծրագիրը ձեզ հստակ ցույց կտա, թե ինչպես կարող եք ազատվել պարտքերից, այդ թվում՝ հիփոթեքային վարկից, ավելի պակաս,

քան յոթ տարում՝ առանց եկամտի փոփոխության:

Ես գիտեմ, որ խենթություն է թվում, բայց մենք սա անում ենք արդեն 30 տարի: Եվ ամենահաճելի լուրն այն է, որ ծրագիրն անվճար է: Նույնիսկ եթե դուք պարտքեր չունեք, հավելյալ գումար գտնելը միշտ էլ իմաստուն է և նպատակահարմար: Ու եթե ունեք խնայված գումար և մտածում եք, թե ինչն է անվտանգ, և ինչը՝ ոչ, կ'սպաստատեք մեզ հետ: Մենք կենտրոնանում ենք ներդրումային տարբերակների վրա, որոնք ապահով են, և որտեղ դուք չեք կարող կորցնել որևէ լումա շուկայի տատանումների պատճառով: Երկրորդ՝ մենք խորհուրդ ենք տալիս, թե որտեղ կարելի է ներդրումներ կատարել բանկային արդյունաբերության սահմանափակ գործունեությունից դուրս՝ առաջարկելով բազմաթիվ խելամիտ ներդրումային տարբերակներ: Մենք կարող ենք օգնել ձեզ նաև գնելու ոսկի և արծաթ: Կրկին, մեր խորհրդատվությունն անվճար է: Դուք կարող եք զանգել մեզ 1-(800)-815-0818 հեռախոսահամարով կամ այցելել մեր կայք՝ forwardfinancialgroup.com:

Ահա մի քանի գործնական սկզբունքներ և առաջարկներ.

1. Նախ փնտրեք Աստծո Թագավորությունը:
2. Կանոնավորապես տասանորդ տվեք և զոհաբերություն կատարեք հավատքով՝ հստակ կարիքների համար:
3. Ազատվեք պարտքից և հեռու մնացեք պարտքից (ձեռք բերեք անվճար ծրագիր «Ֆորվարդ ֆայնենշլ գրուպից» (Forward Financial Group)):
4. Փնտրեք կարիքի բավարարման Աստծո ճանապարհը՝ պարտքին ապավինելու փոխարեն:
5. Վաճառեք ոչ պետքական իրերը և ստեղծեք պահուստային կանխիկ դրամական ֆոնդ (վեց ամսվա եկամուտը նպատակն է, բայց սկսեք նվազագույնը 2,000 դոլարից):
6. Սկզբում տվեք Աստծուն տասանորդը, այնուհետև ձեր խնայողական հաշվին փոխանցեք ձեր եկամտի առնվազն 10 տոկոսը, մնացածով ապրեք:

7. Այսպիսի անկայուն ժամանակներում ներդրում կատարեք ոսկու և արծաթի, ինչպես նաև այնպիսի ապրանքների մեջ, ինչպիսիք են սնունդը և կյանքի անհրաժեշտ միջոցները, քանի որ դրանց արժեքը շարունակելու է աճել, իսկ ոչ պետքական իրերի անհրաժեշտությունը նվազելու է: Դիտարկեք կրիպտոարժույթ գնելու հնարավորությունը՝ ձեր ներդրումները բազմազան դարձնելու համար:
8. Դիտարկեք գումարները ազգային բանկերից հանելու գաղափարը, մտածեք տարածաշրջանային կամ պահպանողական նահանգներում պետության կողմից հավաստագրված բանկերի կամ վարկային միությունների մասին:
9. Մտածեք գործունեության ասպարեզի փոփոխության մասին, եթե ձերը կայուն չէ ետաճի/գնաճի նկատմամբ:
10. Բիզնեսի աճի կանխատեսվող ոլորտներն են ընդհանուր բժշկական գործունեությունը և հարակից բիզնեսները, ֆինանսական խորհրդատվությունը, վերանորոգման աշխատանքները (ավտոմեքենաներ, տուն և այլն), լայնածավալ գյուղատնտեսությունը, արհեստները, ոչ թանկարժեք ռեսուրսները և մանրածախ առևտուրն ընդդեմ բարձրակարգի:
11. Բիզնեսի սեփականատերերի համար. բարձրացրեք հաճախորդների սպասարկման որակը, որպեսզի ձեր բիզնեսը գերազանցի մրցակիցներին հաճախորդների բավարարման և գործարքների կրկնման առումով, ձեր արտադրանքն ավելի հասանելի դարձրեք և գրավեք ավելի մեծ թվով հաճախորդների:
12. Եղեք առատաձեռն և վստահեք Աստծուն՝ կատարելու Իր Խոսքը ձեզ համար:

Աստված մշտապես մատակարարել է Իր ժողովրդին սովի, ազգային արհավիրքի և նեղությունների ժամանակ: Կառուցեք ձեր կյանքը Նրա Թագավորության և ոչ թե այս աշխարհի հավակարգերի անորոշության մեջ, որոնք փլվում են մեր աչքերի առջև: Այս աշխարհի բոլոր ցնցումների դրական կողմն այն է, որ շատերը կընդունեն, որ Փրկչի կարիք ունեն: Կարգի բերեք ձեր ֆինանսական բնագավառը, որպեսզի պատրաստ լինեք հաս-


Այս աշխարհի բոլոր ցնցումների դրական կողմն այն է, որ շատերը կընդունեն, որ Փրկչի կարիք ունեն:

իրականանան: Աստված խոստանում է հոգ տանել ձեր գործի համար, երբ դուք օգնեք Նրան հոգ տանելու Իր գործի համար՝ առաջինը փնտրելով Աստծո Թագավորությունը:

Մենք պետք է պատվենք գործարար մարդկանց և երբեք չվերաբերվենք նրանց որպես երկրորդական պարգևների Քրիստոսի մարմնում: Աստված ստեղծեց ազատ ձեռնարկատիրությունը: Եթե մարդը չի աշխատում, թող չուտի էլ (Բ Թեսաղոնիկեցիների 3.10), բայց եթե տղամարդը կամ կինն աշխատում է և իր ֆինանսները ներդնում Աստծո Թագավորության գործի մեջ, դա իրականում բարձր կոչում է: Գործարար մարդկանց պետք է քաջալերել՝ նվաճելու այդ սարը և այնուհետև օգտագործելու այդ ֆինանսները և իմաստությունը շատ այլ սարեր նվաճելու համար: Ամեն բան գումար արժե, շատ գումար, այդ թվում՝ ծառայությունը: Մենք պետք է վերջ տանք ժլատությանը, եթե ցանկանում ենք հասնել խոցված աշխարհին:

10

ԴԵՂԱՄԻՋՈՅՆԵՐ, ՇԱՀՈՒՅԹ ԵՎ ՎԱԽ



Կարծում եմ, որ կարևոր է հասկանալ, թե ինչ փոքրիկ պատմություն կա թաքնված առողջապահության սարի հետևում, կամ ավելի ճշգրիտ կարող ենք անվանել այն դեղանյութերի, դեղամիջոցների, պատվաստանյութերի և վիրաբուժության սար: Եթե մտածում ենք, որ տնտեսական և բանկային համակարգը հմտորեն բանեցվել է նրանց կողմից, ովքեր շարժվում են ազախությամբ և տարբեր մտադրություններով, եկեք չկարծենք, որ այս նույն ապականված ոգիները չեն թափանցել առողջապահության և բժշկության ոլորտ: Ավանդաբար, բժշկությունը կենտրոնացած էր ամբողջական մոտեցման վրա և ներառում էր դեղաբուսական և բուսական ծագում ունեցող բուժամիջոցներ, որոնք փոխանցվում էին սերնդեսերունդ, բայց դարասկզբին գործադրվեցին համատեղ ջանքեր, որպեսզի լուրջ չընդունվեին այդ «տատիկի հեքիաթները» և դրանք փոխարինվեին տեխնաձին քիմիական նյութերի առավել բարդ ձևերով, այնպիսի նյութերի, որոնք կարող էին արտոնագրվել: Արտոնագրերը բերում են մեծ շահույթ, բնական նյութերը՝ ոչ:

Միասին մեծ եռյակը՝ Սննդամթերքի և դեղորայքի վարչությունը, բժշկական կազմակերպությունները և դեղագործական արդյունաբերությունը, եռակի ջանքեր են գործադրում ազդելու օրենսդիրների վրա, որպեսզի խթանեն տեխնաձին դեղերի օգտագործումը և սահմանափակեն ոչ դեղորայքային միջոցները:

1910 թվականին Աբրահամ Ֆլեքսներին վարձեց Ջոն Ռոքֆելլերը, որն արդեն վերահսկում էր երկրում նավթի մենաշնորհը: Ֆլեքսները գնահատեց բժշկական հաստատություններում ուսուցանվող թերապիաների և ընթացակարգերի արդյունավետությունը, պատրաստեց այս ընթացակարգերը քննադատող զեկույց և եզրակացրեց. «Բժշկական հաստատության արտոնություններն այլևս չեն կարող հասանելի լինել պատահական շրջմոլիկներին»:

Այդ զեկույցի արդյունքում Ամերիկյան բժշկական ասոցիացիան (ԱԲԱ) իրավունք ստացավ լինելու քաղաքականության և բժշկական ընթացակարգերի դոնապան հանուն հանրային պաշտպանության: Նրան տրվեց լիազորություն՝ հավաստագրելու կամ հավաստագրումից զրկելու բժշկական հաստատությունները, ինչպես նաև հաստատելու բժշկական ընթացակարգերն ու դեղամիջոցները: Գործող բժշկական հաստատությունները կտրուկ պակասեցին, և փակվեցին այն հաստատությունները, որոնք չէին հետևում նրանց հրամաններին: Եվ դուք հավանաբար կարող եք կռահել, թե որտեղից էին սկիզբ առնում հրամանները: Բնական կամ հոմեոպաթիկ դեղամիջոցները փոխարինվեցին դեղագործական պատրաստուկների օգտին անցկացվող բուժման կուրսերով: Դեղագործական խոշոր ընկերություններից մեծ գումարներ հատկացվեցին բժշկական հաստատություններին, և սա վերածվեց շահադիտական պայմանավորվածության:

Դոկտոր Զ.Վ. Հոդջն այսպես էր նկարագրում բժշկության մենաշնորհը. «Բժշկության մենաշնորհը կամ բժշկական միավորումը, որը մեղմասացորեն կոչվում է Ամերիկյան բժշկական ասոցիացիա, ոչ միայն երբևէ կազմակերպված ամենաստոր մենաշնորհն է, այլև ամենաամբարտավան, վտանգավոր և բռնապետական կազմակերպությունը, որ երբևէ ղեկավարել է ազատ ժողովրդին այս կամ այլ դարաշրջանում: Հիվանդներին անվտանգ, պարզ և բնական միջոցներով բուժելու բոլոր մեթոդները, անշուշտ, խիստ քննադատվելու և դատապարտվելու են ԱԲԱ բժիշկների միավորման ամբարտավան ղեկավարների կողմից՝ որպես կեղծում, խարդախություն և բարբաջանք»:

Պաշտոնական դարձած բժշկությունն օգտագործում է թունավոր նյութեր (դեղեր) ոչ մահացու չափաբաժիններով՝ ախտահարված հատվածներում ախտանշաններն ընկճելու համար: Այս մո-

տեցումը չի անդրադառնում հիվանդագին վիճակի պատճառին, ոչ էլ պատասխանատու է հիվանդի բուժման համար: Ավելին՝ դեղերի օգտագործումը հաճախ ժամանակավորապես քողարկում է հիվանդության արտաքին դրսևորումները, սակայն միաժամանակ հիվանդությունն ավելի խորն է մղում մարմնի մեջ, որպեսզի ավելի ուշ այն կրկին հայտնվի որպես առողջության ավելի լուրջ և քրոնիկական վիճակի սպառնալիք:

Հետաքրքիր է, որ այս դեղագործական ընկերություններն ուսումնասիրել են բուսական բնական դեղամիջոցները, այնուհետև փորձել են նմանակել դրանք քիմիական դեղանյութերով, որոնք կարող են արտոնագրվել և վաճառվել հիվանդներին շատ ավելի թանկ գնով: Որո՞նք են հիվանդներին թունավոր նյութեր ներարկելու հետևանքները՝ բնական ծագման նյութերի համեմատ: Կողմնակի ազդեցություններ՝ հայտնի և անհայտ: Այս մոտեցումը պահպանվում է վերջին 70 տարվա ընթացքում, և մենք չենք տեսնում բուժումներ, այլ, ավելի շուտ, թերապիաների, դեղերի և պատվաստանյութերի կիրառում, որոնց կողմնակի ազդեցությունները լիովին քողարկվում են, կամ դրանց մասին միայն լսում ենք գովազդային հոլովակների վերջում՝ թույլտվում 144 կմ արագությամբ հնչող խոսքերից: Միթե սա շահույթ չի հետապնդում:

Մայք Գասկինսը 2019 թվականին լույս տեսած իր «Հանուն դեղահաբի» գրքում բացահայտում է հակաբեղմնավորիչ հաբի կասկածելի պատմությունը: Նրա հետազոտությունը լույս է սփռում գիտականորեն փաստագրված ապացույցների վրա, որոնք դեղահաբը կապում են արյան թրոմբոզների, կրծքագեղձի քաղցկեղի, գայլախտի, ցրված սկլերոզի, Կրոնի հիվանդության և 10 այլ ազդեցությունների հետ, և, այդուհանդերձ, ավելի քան հիսուն տարի է՝ դեղահաբն ունի բժշկական վկայագիր:

Դեղահաբը սերտորեն կապված էր 1960-ականների և 1970-ականների կանանց ազատագրության շարժման հետ, և մարդիկ չէին ցանկանում շարժումը քննադատող երևալ: Երկրորդ՝ դեղահաբը հայտնվեց այն ժամանակ, երբ աշխարհի գերբնակեցումն ահռելի խնդիր էր, ինչի համար երեկոյան լուրերում հաճախակի «ողբում էին» Վոլտեր Կրոնկայտը և նրա նմանները: Ֆեմինիստական շարժման վաղ ներկայացուցիչներից ոմանք

կարծում էին, որ իրենց շարժումն օգտագործվում էր դեղահաբը խթանելու համար:

Առավել ցնցող է այն, որ հակաբեղմնավորիչ հաբեր ընդունած կանանցից վերցրած նմուշներում և դոնացիաներում սկսեց հայտնվել կանաչ պլազմա. բժիշկները նախկինում նման բան չէին տեսել: Կարմիր խաչը հրապարակեց ուղեցույցներ՝ բացահայտելու կանաչ պլազման, որպեսզի այն հեռացվեր արյան բանկերից: Մեկ այլ հետաքրքիր կողմնակի ազդեցություն էր այն, որ մայրերը, որոնք կերակրում էին կրծքով, հակաբեղմնավորիչ հորմոնալ հաբեր ընդունելուց հետո իրենց երեխաների՝ թե՛ տղաների, թե՛ աղջիկների մարմնում նկատեցին կրծքագեղձի երկկողմանի աճ, որը հետ քաշվեց այն ժամանակ, երբ նրանք դադարեցրին կրծքով կերակրումը: Պարզվեց, որ մոր կաթը փոփոխված էր և ավելի քիչ էր արտադրվում: 2009 թվականին «Յազ» հակաբեղմնավորիչ միջոցների գովազդը հանվեց շուկայից. դեղամիջոցը խոստանում էր նվազեցնել նախադաշտանային համախտանիշը և բուժել պզուկները: Որքան երիտասարդ կանայք էին ընդունել այս դեղահաբերը՝ պզուկները բուժելու համար:

Հակաբեղմնավորիչ դեղահաբերն ընդհատում են կնոջ դաշտանային ցիկլը: Կանայք արյունահոսություն են ունենում դեղահաբից հրաժարվելու դեպքում, բայց դա դաշտանային արյունահոսություն չէ: Շատ բժիշկներ օգտագործում են այս դեղահաբերը նաև ձվարանների պոլիկիստոզ հիվանդության կամ էնդոմետրիոզի բուժման համար, սակայն դա խնդիրը չի լուծում, այլ միայն քողարկում է այն: Երկար ժամանակ դադարեցնելով օրգանիզմում հորմոնների բնական արտադրությունը՝ օրգանիզմը, ըստ էության, թուլանում է և կնոջը դարձնում անպտուղ:

«Բայեր» դեղագործական ընկերությունը վճարել է ավելի քան 1.02 միլիարդ դոլար՝ «Յազ» և «Յասմին» հակաբեղմնավորիչներից առաջացած 10,000 թրոմբոզների պատճառած վնասների հարցը կարգավորելու համար: Արդյո՞ք այսօր շատ կանանց անպտղության ցուցանիշները կապված չեն այս հակաբեղմնավորիչների հետ: Տեսադաշտում նույնիսկ ուսումնասիրություններ չկան, քանի որ Սննդամթերքի և դեղորայքի վերահսկման վարչության կողմից հաստատված դեղերը կասկածի տակ չեն դրվում:

Տեսնում ենք արդյոք նման համատեղ ծրագրեր բժշկության և քաղաքական խմբերի միջև: Ամենուրեք, ուր շրջվում ենք: Նման համատեղ ջանքեր գործադրվում են սեռափոխության դեղերի և վիրահատությունների ոլորտում, մինչ սոցիալական և քաղաքական օրակարգերը անաչառություն և հավասարություն են հռչակում գենդերային հարցերի շուրջ քննարկումներում: Շատերը ենթադրում են, որ այս իրավունքները կապված են կանանց իրավունքների կամ ռասայական հավասարության հետ, սակայն արտաքին քողի տակ նրանց ծրագրի իրական նպատակն է սպորտի ասպարեզում կանանց կենսաբանական տղամարդկանցով փոխարինելու ձգտումը, ինչպես նաև երիտասարդության ամլացումը և անցումը դեպի սեռական ինքնության բազմազանություն: Դեղագործական ընկերությունները շահույթ են ստանում, միաժամանակ իրենց ցանկությունների ցանկն են բավարարում նրանք, ովքեր առաջ են մղում քաղաքական օրակարգերը և դեպոպուլյացիան (բնակչության քանակի նվազում):

Հաջորդը Քովիդ-19-ի և պատվաստումների վերջին գործողություններն են: Որտեղից նույնիսկ սկսենք բացահայտել: Այն, ինչ տեղի ունեցավ ազգային մակարդակով բժշկության ոլորտում, խաղացվեց միջազգային մասշտաբով սահմանափակումների և շտապ բժշկական օգնության հրամանների միջոցով, որոնք չեն հաստատվել Կոնգրեսի կողմից: Հակառակ աշխարհի բժիշկների խորհուրդների՝ պատվաստանյութերը մոլորակով մեկ սեղմեցին մարդկանց կոկորդներին կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ներարկեցին թևերի մեջ՝ բացառությամբ նրանց, ովքեր աշխատում էին դեղագործական ընկերություններում, Կոնգրեսում և ընտրախավային խոշոր ընկերություններում:

Բժիշկները, որոնք ցանկանում են անանուն մնալ, ինձ պատմեցին, որ որպեսզի ցատկեին «պատվաստանյութի գնացք» և հանդես գային ի պաշտպանություն պատվաստանյութի, պետք է ստորագրեին վեցանիշ համաձայնագիր, և դա չէր ներառում պաստվաստանյութերի կիրառումից ստացած շահույթը: Բազմաթիվ հայտնի բժիշկներ, գիտնականներ և համաճարակաբաններ միացան հակաքայլի՝ ստորագրելով «Մեծ Բարինգթոնի հռչակագիր» կոչվող փաստաթուղթը, որում ասվում էր. «Ամենասրտացավ մոտեցումը, որը հավասարակշռում է կոլեկտիվ իմունիտե-

տի հասնելու վտանգներն ու առավելությունները, այն է, որ թույլ տրվի մահվան նվազագույն վտանգի տակ գտնվողներին ապրել բնականոն կյանքով, որպեսզի վերջիններս ձևավորեն իմունիտետ վիրուսի նկատմամբ բնական վարակման ճանապարհով, միաժամանակ ավելի լավ պաշտպանելով նրանց, ովքեր ավելի բարձր վտանգի տակ են»: Փաստաթուղթը դաշնային կառավարության կողմից արժանացավ սուր քննադատության և արձագանքների:

Ամեն շաբաթ մեզ տրվում էին այլընտրանքային ցուցումներ, պահանջներ և փոփոխվող «փաստեր»: Գիտությունն այդպես կտրուկ չի փոխվում: Քաղաքականությունը փոխվում է: Գիտությունը քաղաքականացվել է: Մենք պետք է անջատենք գիտությունը քաղաքականությունից: Այն շահարկվում է հավաքական և քաղաքական ծրագրերին ծառայելու համար: Գիտությունը քննադատողներին կոպտորեն լռեցնում են: Դրանց թվում են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են պրոֆեսոր Ջոն Լոանիդիսը Սթենֆորդի համալսարանից, դոկտոր Ջոզեֆ Մերկոլան, դոկտոր Վլադիմիր Ջելենկոն (որը բուժեց նախագահ Թրամփին) և մեր ընկեր դոկտոր Էյվերի Ջեքսոնը՝ հարգված նյարդավիրաբույժ, որին նկատողություն արեցին այն բանի համար, որ նա ներկայացրեց հանձնարարականներ, որոնք, ինչպես նա հայտնաբերեց, փրկում էին այն հիվանդներին, որոնք, ըստ կանխատեսումների, պետք է մահանային: Նա ասաց. «Երբվանից են հրահանգները դարձել ավելի կարևոր, քան մարդկային կյանք փրկելը»: Շատ լավ հարց է:

Դոկտոր Փոլ Մարիկը՝ «Առաջնագծի բժիշկներ» կազմակերպության հիմնադիրը և արյան վարակման բուժման համար միջազգային ճանաչում ստացած բժիշկ, պարզևատրվեց Վիրջինիայի պատվիրակների պալատի կողմից այն բանի համար, որ «զգուշորեն գործելու և, այսպես կոչված, ավանդական կարծիքին հետևելու փոխարեն ... համարձակվել է ճշգրիտ գիտական մոտեցում ցուցաբերել և կյանքեր փրկել»: Ընդամենը օրեր անց այս նույն բժիշկը հրավիրվեց հարցաքննության Նորֆոլկում գործող «Սենտարա հեյթքեր» ընկերության կողմից: Մարիկի համաժամանակյա գովասանքի և հետաքննության հակասությունը ցույց է տալիս, որ կառավարական վարչակազմերն արագ փոխել են

իրենց ուղղությունը, որպեսզի ճնշում գործադրեն բժշկի և հիվանդի ընտրության և ինքնավարության վրա: Բազմաթիվ այլ բժիշկներ կանգնել են պաշտոնից հեռացման կամ արտոնագրերի և հիվանդանոցային արտոնությունների կորստի առջև, որովհետև համարձակվել են հիվանդին հրահանգներից և հանձնարարագրերից վեր դասել:

Չինաստանում պատվաստանյութի ներդրումից ի վեր 84.4 միլիոն երեխա է պատվաստվել, և շատ ծնողների մտահոգում է անվտանգության վերաբերյալ տվյալների բացակայությունը, այդուհանդերձ, ոմանց վրա պատվաստումները թողել են ծանր հետևանքներ: Ծնողներին հարկադրում էին ենթարկվել, այլապես նրանց երեխաները չէին կարողանա հաճախել դպրոց: «Քովիդ-19-ի պատվաստանյութի նախնական չափաբաժինը ստանալուց հետո իմ չորսամյա դուստրը սկսեց ջերմել և հազալ... Երկրորդ ներարկումից հետո հայրն ասում էր, որ ինչ-որ բան այն չէր: Դստեր աչքերի շուրջը հայտնվեց այտուց և պահպանվեց: Շաբաթներ շարունակ երեխան գանգատվում էր ոտքերի ցավից, և ոտքերին հանկարծ սկսեցին կապտուկներ ի հայտ գալ: Հունվարին՝ երկրորդ չափաբաժինն ընդունելուց մի քանի շաբաթ անց, ախտորոշվեց, որ երեխան ունի լեյկոմիա հիվանդություն» (Իվա Ֆու, «Չինաստանում երեխաները հիվանդանում են լեյկոմիայով պատվաստումից հետո» <https://www.theepochtimes.com>, մարտի 11, 2022): Երեխաները Քովիդ-ին առնչվող խնդիրների այնպիսի նվազագույն ռիսկ ունեն, որ սա շատերին ստիպել է տալ այս հարցերը. «Միթե բուժումը վիրուսից վատ է: Ինչո՞ւ է ճնշում գործադրվում երեխաներին պատվաստելու համար»:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի վերջին տվյալները ցույց են տալիս, որ 1980-ից հետո ծնվածների՝ 25-44 տարեկանների շրջանում 2021 թվականի վերջին չորս ամիսների ընթացքում գրանցվել է վաղաժամ մահերի ռեկորդային 84 տոկոս աճ: Ընդհանուր առմամբ, վաղաժամ մահերը ավանդաբար ամենաառողջ ամերիկացիների շրջանում աճել են ապշեցուցիչ 84 տոկոսով: Ըստ էության՝ 1980-ից հետո ծնված սերնդի ներկայացուցիչները վերապրեցին Վիետնամի պատերազմը 2021 թվականի երկրորդ կեսին: Վիետնամի պատերազմում զոհվեց 58 հազար ամերիկյան զինվոր, այնպես որ

այս սերունդը վերապրեց Վիետնամի պատերազմը: Սա երբևէ գրանցված վաղաժամ մահացության ամենավատ ցուցանիշն է: Վաղաժամ մահվան ալիքն ամենից ուժեղ հարվածեց 1980-ից հետո ծնվածներին՝ հավանաբար այն պատճառով, որ պատվաստվելը միակ միջոցն էր աշխատանքը պահպանելու համար: Օրինակ՝ վաղաժամ մահվան դեպքերը գրեթե յոթ անգամ ավելի շատ էին, քան 85 տարեկան և ավելի տարեցների շրջանում:

Արդյո՞ք երբևէ կիմանանք իրական ճշմարտությունը Քովիդ-19-ի մասին: Տեղեկատվության ազատության մասին օրենքի շնորհիվ հրապարակվել են Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) փաստաթղթերը, որոնք հայտնում են, որ «կազմակերպությունը լաբորատորիայի խնդրանքով ջնջել է Չինաստանի կոմունիստական կուսակցության վիրուսի գենետիկական հաջորդականության տեղեկությունները Ուիանի վիրուսաբանության ինստիտուտից»: Սա կեղծ վստահություն հաղորդեց այն լեգենդի նկատմամբ, թե վիրուսն առաջացել է բացօթյա շուկայում, այլ ոչ թե փաստացիորեն ստեղծվել է կենսաբանական լաբորատորիայում՝ ակամա ֆինանսավորվելով մեր իսկ ԱԱԻ-ի կողմից: Սենատոր Ռոջեր Մարշալը կոչ արեց հետաքննելու այս մտահոգիչ բացահայտումը: «Ամերիկացի ժողովուրդն արժանի է իմանալու ճշմարտությունը Քովիդ-19-ի ծագման վերաբերյալ, ինչպես նաև այն, թե ինչպես մենք կարող ենք լավագույնս պատրաստ լինել ապագա համավարակներին, կանխել դրանք և ապաքինվել դրանցից...»: Այս պատճառով ավելի քան կարևոր է հասկանալ այս ջնջված տվյալների էությունը:

Այս մտահոգություններն առաջացրել են նույնքան, եթե ոչ ավելի շատ, անհանգստություն և վախ, որքան բժշկական խնդիրները: Հոգեկան առողջությանն առնչվող խնդիրները կտրուկ աճել են, իսկ ինքնասպանության տեմպերն ամենաբարձրն են: Բացի 1980-ից հետո ծնվածների շրջանում գրանցված այս անհանգստացնող թվերից՝ ԱՄՆ-ում 12 ամսվա ընթացքում գերդեղաքանակից մահերի թիվն աճել է 28.5 տոկոսով և այժմ գերազանցում է 100,000-ը: Օփիոիդներից և սինթետիկ օփիոիդներից (ֆենտանիլ) մահացության դեպքերը 12 ամսվա ընթացքում հասել են 75,673-ի: Այս մահերի 12,000-15,000-ի պատճառը դեղատոմսով դուրս գրվող դեղերն են:

Բոլոր ստերից, ֆինանսական ավերածություններից, հիվանդություններից, վնասներից և Քովիդ-ի պատվաստանյութերից առաջացած մահերից էլ ավելի անհանգստացնող է այն, թե որքան հեշտությամբ աշխարհի մեծ մասը խաբվեց և վերածվեց «կոտրվող կենդանիների», որպեսզի իրականացվեին գլոբալիստների տրանսհումանիստական ծրագրերը: Ինչպես ասել է Հարարին. «Երբեք թույլ մի՛ տվեք, որ լավ ճգնաժամն անօգուտ վատնվի: Ճգնաժամը հնարավորություն է՝ անելու այն, ինչ սովորական ժամանակներում մարդիկ երբեք չեն համաձայնի անել, իսկ ճգնաժամի ժամանակ մենք տարբերակ չունենք»: Քովիդ-ի պատվաստանյութի զանգվածային կիրառման միջոցով նույնիսկ ժողովրդավարական երկրներում «հսկողությունը սկսեց անցնել մաշկի տակ»: Ի վերջո, ըստ Հարարիի, «ազատ կամքին վերջ դրվեց»: Սա այն գենետիկական մշակումն է, որը, ինչպես խոստանում են Շվաբն ու ՀՏՖ-ն, «կփոխի ոչ թե այն, ինչ անում եք, այլ կփոխի Ձեզ»:

2022 թվականի մարտի 29-ին «Սաբստեկ» լրատվական հարթակի հոդվածներից մեկում Զո Ալենը քննարկում է տրանսհումանիզմի արագ մոտեցումը, որը նախաձեռնել են «անպատասխանատու կորպորացիաները, որոնք բացահայտորեն ստիպում են, որ մեր մարմիններ ներմուծվեն առաջադեմ տեխնոլոգիաներ», ինչպիսիք են պատվաստումների կարգավիճակին և բժշկական հրահանգների կատարմանը հետևող նանոսարքերը:

«Այս սարսափելի պատմության հիմքում ընկած են երեք տեխնոլոգիաներ,- գրում է Ալենը,- մՌՆԹ գենային թերապիա, քվանտային կետերով դաջվածքներ և արհեստական բանականություն: Առաջադեմ մեքենայական ուսուցումը, որն օգտագործվում է համակարգչի միջոցով («ին սիլիկո») մՌՆԹ մուտացիաների հետևանքները կանխատեսելու համար, թույլ է տալիս կայծակնային արագությամբ պատվաստանյութի մշակում, այդ թվում՝ կարգավորող օրգանի հաստատում: Բացի դրանից՝ ներկառուցված ենթամաշկային հետագծման համակարգերը կարող են երաշխավորել, որ Երկիր մոլորակի յուրաքանչյուր մարդ տեղյակ լինի իր պատվաստումներից: Միասին վերցրած՝ այս նորամուծություններն արագորեն մոտենում են վաղուց սպասված նպատակին՝ կորպորացիաների կողմից իրականացվող անխուսափելի պետա-

կան վերահսկողությանը, որում համաշխարհային բնակչությունը ենթարկվում է շարունակական բժշկական գիտափորձերի»:

Արդյո՞ք սրանից որևէ բան իրագործելի է, թե՛ այս ամենը պարզապես իշխանատենչության անիրականանալի երազանք է: Խոշոր դեղագործական ընկերություններն ունեն բացահայտ հավակնություն՝ ստեղծելու անվերջանալի մՌՆԹ պատվաստանյութեր՝ օգտագործելով արհեստական բանականությունը: Տեխնոկրատները, ինչպիսիք են Բիլ Գեյթսը և Ռոբերտ Լանգերը, ցանկանում են, որ «մարդկային կենդանիները» դաջվեն ֆյուրեսցենտային նանոմասնիկներով, որպեսզի հնարավոր լինի հետևել նրանց պատվաստանյութի կարգավիճակին, և դա պետք է սկսել երրորդ աշխարհից: Հեշտ է պատկերացնել, որ հաջորդը մենք ենք:

Ինչպես հստակ հայտարարել են ՀՏՖ-ն, Սիլիկոնային հովիտը և Չինաստանի կոմունիստական կուսակցությունը. «Սա համաշխարհային գաղտնի համաձայնություն չէ. սրանք հրապարակավ հայտարարված ծրագրեր են: Արհեստական բանականությամբ ստեղծված պատվաստանյութերը և ենթամաշկային հետագծման տեխնոլոգիաներն արդեն գոյություն ունեն, և դրանք արագորեն բարելավվում են: Մանրէներից վախեցող զանգվածներն այժմ հարմարեցված են ենթարկվելու ցանկացած տեխնոլոգիայի, որը համարվում է անվտանգ և արդյունավետ: Այս սարսափած ամբոխը նաև պատրաստ է պնդելու, որ դուք նույնպես ենթարկվեք»:

Կեղծ դրական թեստերի և Քովիդ-19-ի հետ կապված խուճապն ու վախերը կառավարության վերահսկողությունը մղեցին բոլորովին նոր մակարդակի: Մեզ ասացին, որ չպատվաստվելը սոցիալական անպատասխանատու վերաբերմունք է, և ով կհամարձակվի կասկածի տակ առնել փորձառական, չստուգված պատվաստանյութը, հանցագործ է և պատվաստումների հակառակորդ: Եթե որևէ մեկը կասկածում էր, որ այս պատվաստանյութը օրգանիզմում գենետիկական փոխող մՌՆԹ փորձառական տեխնոլոգիայով նման չէ մեկ ուրիշի, նրան ծաղրում էին: Բժիշկներն այլևս չէին կարող բուժել իրենց հիվանդներին առանց կառավարության վերահսկողության և հանձնարարականների: Մարդիկ թշնամացան միմյանց հանդեպ դիմակների, պատվաստանյութերի և բազում այլ խնդիրների պատճառով. պահպանել 2 մետր հեռավորություն, ո՛չ, մեկ մետր, հազացե՛ք ձեռքի ափի մեջ, հազացե՛ք ան-

ձեռոցիկի մեջ, դրեք այդ կեղտոտ դիմակը և օդանավում ծածկեք ձեր դեմքը կու՛մ անելուց և կու՛լ տալուց հետո, բայց ամբողջ թռիչքի ընթացքում նստե՛ք իրար կողքի:

Արդյո՞ք այս կենսաբանական և հոգեբանական պատերազմները միավորվեցին, որպեսզի մարդկանց ստիպեին հրաժարվել իրենց ազատությունից և «ազատ կամքից» և միայն կառավարությունից և նրա գործակալություններից փնտրել պատասխաններ և հանձնարարագրեր այն մասին, թե ինչպես վարվեն իրենց մարմինների հետ: Հեշտ է ղեկավարել տգետ զանգվածների, որոնց զրկում են ճշմարիտ հաղորդումներից, քննարկումներից և երկխոսությունից՝ լավագույն պատասխանները գտնելու համար: Սա սովորական է ամբողջատիրական ռեժիմներում, որտեղ աղքատների օրգանները հավաքվում են հարուստների համար, բայց նույնը կատարվի Ամերիկայում:

Հոգեբանության և հոգեբուժության պատմության մեջ նույնպես կա մի պահարան՝ կմախքներով լի: Դիտե՛ք «Հոգեբանություն. մահվան արդյունաբերություն» փաստագրական ֆիլմը: Հարկ չկա

Արդյո՞ք այս կենսաբանական և հոգեբանական պատերազմները միավորվեցին, որպեսզի մարդկանց ստիպեին հրաժարվել իրենց ազատությունից և «ազատ կամքից» և միայն կառավարությունից և նրա գործակալություններից փնտրել պատասխաններ և հանձնարարագրեր այն մասին, թե ինչպես վարվեն իրենց մարմինների հետ: Հեշտ է ղեկավարել տգետ զանգվածների, որոնց զրկում են ճշմարիտ հաղորդումներից, քննարկումներից և երկխոսությունից՝ լավագույն պատասխանները գտնելու համար: Սա սովորական է ամբողջատիրական ռեժիմներում, որտեղ աղքատների օրգանները հավաքվում են հարուստների համար, բայց նույնը կատարվի Ամերիկայում:

հեռուն նայելու, որպեսզի պարզենք, որ մտքի տարբեր «հիվանդություններ» կապված են դեղագործական ծագման «ստեղծագործությունների» հետ: Ոչինչ չկասկածող ծնողներն ու երեխաները նույնպես դարձել են նրանց զոհը: Ուշադրության պակասի համախտանիշի և անալիզի ու դեղորայքային բուժման ուղեգրված երեխաների ուսումնասիրությունը սառցաբեկորի գազաթն է: Բայց դրա հետ համեմատած՝ ապշեցուցիչ է այն, թե ինչ է կատարվել երեխաների հետ Քովիդ-ի ընթացքում՝ սկսած սահմանափակումներով և անհուսությամբ պայմանավորված հոգեկան խուճապից և ինքնասպանություններից մինչև սոցիալական մեկուսացում և կորսված հնարավորություններ դպրոցում ու սպորտային մրցումներում: Ո՞րն է բժշկական հանձնարարականների, պատվաստումների և պատվաստման անձնագրերի վերջնանպատակը, որը բժիշկներին և հիվանդներին զրկեց իրենց իրավունքներից: Դուրսորդ Ջոն Քեմփբելը ներկայացրել է Բրիտանական բժշկական ամսագրում հրատարակված մի ուսումնասիրություն՝ մեջբերելով փիլիսոփա Կառլ Փոպերին, որը նշում է, որ «հիվանդները մահանում են առևտրային շահերի անբարենպաստ ազդեցությունից, որոնք առկա են հետազոտական ծրագրում, համալսարաններում, պարտադիր որոշումներում, հանրային կապերում և քարոզչության մեջ և վեր են դասվում գիտական ազնվությունից»:

Բրիտանական բժշկական ամսագրի մեկ այլ ուսումնասիրության մեջ Ջոն Ջուրեյդինին և Լիմոն Բ. ՄաքՀենրին հաղորդում են հետևյալը.

«Ապացուցողական բժշկության հայտնվելը տեսական հիմքերի տեղաշարժ էր, որը նախատեսված էր ապահովելու ամուր գիտական հիմք բժշկության համար: Սակայն այս նոր հարացույցի հիմնավորումը կախված է կլինիկական փորձարկումների հուսալի տվյալներից, որոնց մեծ մասն իրականացվում է դեղագործական արդյունաբերության կողմից և հաղորդվում է ավագ գիտնականների անունից: Դեղագործական արդյունաբերության նախկինում գաղտնի փաստաթղթերի հրապարակումը հանրային տիրույթում բժշկական հանրությանը արժեքավոր պատկերացում է տվել այն մասին, թե որքանով են խեղաթյուրված արդյունաբերության

կողմից հովանավորվող կլինիկական փորձարկումները:

Մինչև այս խնդիրը չլուծվի, ապացուցողական բժշկությունը կմնա պատրանք: Կարգավորող մարմինները ֆինանսավորվում են արդյունաբերությունից և օգտագործում են արդյունաբերության կողմից ֆինանսավորվող և իրականացվող փորձարկումները՝ դեղամիջոցները հաստատելու համար, մեծ մասամբ, առանց չմշակված տվյալները տեսնելու: Որքանով ենք մենք վստահում մի համակարգի, որում դեղագործական ընկերությունները թույլտվություն են ստանում «գնահատել իրենց իսկ տնային աշխատանքը», այլ ոչ թե հանձնում են իրենց արտադրանքը անկախ փորձագետների կողմից ստուգման՝ որպես պետական կարգավորման համակարգի մաս»:

Մենք ունենք դեղահաբ յուրաքանչյուր հիվանդության համար և ներարկում վարակների համար, բայց դրանք պատրաստված չեն գիտական ապացույցների հիման վրա, այլ ավելի շուտ ստեղծված են շրջանառու համակարգի կողմից, որի շարժառիթն է մեծ շահույթ ստանալը: Արդյունաբերությունը վերահսկում է հետազոտությունը, իսկ գիտական համայնքը ֆինանսավորվում է դեղագործական արդյունաբերությունից: Ապացուցողական գիտությունը և անկախ հետազոտությունը հաճախ անտեսվում են: Դեղագործական արդյունաբերությունը վերահսկում է հետազոտությունները և գործում է հրապարակումների հիման վրա: Այն ճնշում է տեղեկատվությունը և չի հաղորդում անբարենպաստ ազդեցությունների մասին: Ֆինանսական շահերը գերակշռում են ընդհանուր բարիքի համեմատ: Բժիշկներին տրվում են հանձնարարականներ, որոնց պետք է հետևել, և այդ հանձնարարականները գալիս են, ինչպես կռահում եք, արդյունաբերությունից: Սա մի ցիկլ է, որը չունի զսպումներ և հակակշիռներ: Անմշակ տվյալները հազվադեպ են հրապարակվում առանց դատարանի որոշումների: Դոկտոր Քեմփբելն ասում է, որ սա կեղծավորություն է, և մենք պետք է բաժանենք հետազոտությունը, ֆինանսավորումը և արդյունաբերությունը, որպեսզի ապահովենք ազնվություն ու կանխարգելում զուտ շահույթի փոխարեն:

Բարեփոխումների առաջարկները ներառում են՝ կարգավորող

մարմինների ազատում դեղագործական ընկերությունների ֆինանսավորումից, հարկումներ դեղագործական ընկերություններից՝ անկախ փորձարկումների պետական ֆինանսավորում թույլ տալու համար և, թերևս ամենակարևորը, համապատասխան հասանելի կայքերում առանձին հիվանդների փորձարկման անանուն տվյալների տեղադրում՝ ուսումնասիրության արձանագրությունների հետ մեկտեղ, որպեսզի ինքնաառաջադրված կամ առողջապահական տեխնոլոգիական գործակալությունների կողմից նշանակված երրորդ կողմերը կարողանան խստորեն գնահատել մեթոդաբանությունը և փորձարկման արդյունքները: Շատերը, որոնք կամավոր մասնակցում են այս ուսումնասիրություններին, վտանգում են իրենց կյանքը, և նրանց զոհաբերությունը և նվիրումը հարգելու համար անհրաժեշտ է ցուցաբերել ազնվություն:

2015 թվականին Սատոշի Օմուրան և Ուիլյամ Քեմփբելը Նոբելյան մրցանակներ ստացան Ավերմեկտինի հայտնաբերման գործում ունեցած դերի համար, որը հետագայում քիմիական ձևափոխումների ենթարկվեց և վերածվեց ավելի ազդեցիկ միացության՝ Իվերմեկտինի՝ որպես բարձր արդյունավետություն ունեցող հակավիրուսային միջոցի: Եղան բժիշկներ, որոնք օգտագործեցին այս հակավիրուսային միջոցը Քովիդ-ի դեմ, սակայն նրանք հանդիպեցին անհավանական դիմադրության, գրաքննության և «ոչնչացման»: Ինչո՞ւ: Քանի որ Իվերմեկտինի արտոնագրի ժամկետը լրացել էր, և դրա պատճառով չկար նշանակալից շահույթ: Երբ բժիշկները, որոնք հսկայական հաջողություններ էին ունենում Իվերմեկտինի կամ հիդրոքսիխլորոխինի գործածության մեջ, դիմեցին հետազոտություն անցկացնելու խնդրանքով, քանի որ համաշխարհային միտումները նույնն էին ցույց տալիս. նրանց ասացին, որ կլինիկական փորձարկումներ կատարելու մտադրություն չկա: Չկա շահույթ, չկա փորձարկում, չկա հանձնարարական:

Ինքնապահպանումը հզոր բնազդ է, և դուք կարող եք ստիպել մարդկանց անել ցանկացած բան, երբ նրանք վախենում են: Ի լրումն մեր կյանքի բժշկական մանիպուլյացիայի (նենգավարման), որը բնաջնջում է հասարակություններն ամբողջ աշխարհում, ես չեմ կարող չնշել մարդկանց թիվ մեկ մարդասպանին՝ արհեստական վիժեցմանը:

Ինչպես նշեցի 3-րդ գլխում, «Ռոուն ընդդեմ Ուեյդի» դատա-

կան գործից ի վեր 62.4 միլիոն երեխա է սպանվել արգանդում, իսկ 2021 թվականին արհեստական վիժեցումը մահացության առաջատար պատճառն է եղել ամբողջ աշխարհում, որի միջոցով սպանվել է շուրջ 43 միլիոն չծնված երեխա: Այս անձնավորություններն այս մոլորակի վրա չեն, որովհետև նրանց սպանել են արգանդում:

Մենք կարող ենք տեսնել, թե ինչպես է ճգնաժամի ժամանակ օգտագործվում վախը, որպեսզի մարդիկ ստիպված լինեն անելու այն, ինչ կառավարություններն ու համաշխարհային կազմակերպությունները ծրագրում են հասարակության համար: Արհեստական վիժեցման ոլորտն ավելի ընդունելի դարձավ գերբնակեցման ենթադրյալ «ճգնաժամի» պատճառով, որն առաջ քաշվեց 1970-ականներին հակաբեղմնավորիչ հաբերի հետ, որոնք վաճառվեցին կանանց իրավունքների շարժմանը զուգահեռ: Ես լավ հիշում եմ միջնակարգ դպրոցի իմ դասերը, երբ ուսուցիչներն ասում էին, որ մինչև այն պահը, երբ չափահաս դառնանք, ստիպված կլինենք ապրել 182x182x182 չափի խցերում գերբնակեցման պատճառով: Արհեստական վիժեցումն անմիջապես ներառվեց քննարկումների մեջ որպես խնդրի պատասխան: «Ուշադրություն մի՛ դարձրեք այդ չծնված երեխաներին. նրանք ընդամենը հյուսվածքի կտորներ են»: Սա հենց այն է, ինչ ասում էին մեզ մեր ուսուցիչները, ինչպես նաև լրատվամիջոցները նախքան ուլտրաձայնային հետազոտության ի հայտ գալը: «Մենք պետք է հոգ տանենք մեզ համար և արդարացնենք նրանց մահը», ու երբ երեխաները լսում են ուսուցիչներին, որոնք տարածում են այս սարսափելի գաղափարախոսությունները, հավատում են: Հավատում են նաև մեծահասակները:

Նախագահ Ռոնալդ Ռեյգանն ասել է. «Մենք չենք կարող նվազեցնել մարդկային կյանքի մեկ տեսակի՝ չծնվածի արժեքը՝ չնվազեցնելով ամբողջ մարդկային կյանքի արժեքը... մենք չենք կարող գոյատևել որպես ազատ երկիր, երբ որոշ մարդիկ որոշում են, որ մյուսները հարմար չեն ապրելու համար և պետք է հանձնվեն արհեստական վիժեցմանը կամ մանկասպանությանը»:

ԱՀԿ-ն վերջերս հրապարակել է նոր ցուցումներ արհեստական վիժեցման վերաբերյալ: Նրանց քարոզչությունը հրաշալի է հնչում ձախականների ականջներին. «Արհեստական վիժեցման

համապարփակ խնամքը ներառում է տեղեկության տրամադրում, արհեստական վիժեցման կառավարում (այդ թվում՝ հղիության արհեստական ընդհատում և վիժման հետ կապված խնամք) և խնամք արհեստական վիժեցումից հետո»: Իրականում ինչ են պահանջում այս ցուցումները: Արհեստական վիժեցում անչափահասների համար ցանկացած տարիքում՝ առանց ծնողի թույլտվության, նորածնի կյանքի ընդհատում և կառավարությունների կողմից ցանկացած պատճառով ցանկացած ժամանակ բոլոր արհեստական վիժեցումների ֆինանսավորում: Այս երեխաների մարմնի մասերը վաճառվում և հանձնվում են բժշկական հետազոտությունների, և, ինչպես վերջերս իմացանք, նրանց օրգաններն ու գլուխներն օգտագործվում են մկներին մարդացնելու համար՝ դեղամիջոցների և արտադրանքների հետազոտման և մշակման նպատակով: Սա մեծ բիզնես է: Հետաքրքիր է, թե որքան կանայք կվիժեցնեին իրենց երեխաներին՝ արժանի ընտանիքների որդեգրման հանձնելու փոխարեն, եթե իմանային, որ իրենց երեխաներին կօգտագործեին նման ձևով:

Ինչպես նշվեց 1-ին գլխում. «Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը և Մեծ վերագործարկումը կախված են համավարակների ստեղծումից (կամ իրական, կամ երևակայական), որոնք նախանշում են տրանսհումանիզմի և մտավոր, հուզական ու ֆիզիկական վերահսկողության համակարգի սկիզբը»:

«Գուգլի» նախկին գործադիր տնօրեն, ինչպես նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի երիտասարդ համաշխարհային առաջնորդ Էրիկ Շմիդտը ազդեցություն է ձեռք բերել ԱՄՆ գիտական քաղաքականության մեջ և նախագահում է Ազգային անվտանգության հանձնաժողովը: Վերջինս առաջ է մղում արհեստական բանականությունը, և թե ինչպես է այն օգտագործվում գիտության և առողջապահության մեջ: «Գուգլը» վերահսկում է բոլոր որոնումների 91.56 տոկոսը: Ինչպես է դա ազդում այն տեղեկատվության վրա, որն օգտագործում եք, որպեսզի որոշեք, թե որն է լավագույնը ձեր մարմնի և առողջության համար:



ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ



Ինչպէս գերծ մնալ բոնակալ գլորալիստների, բժշկական կորպորատիվաւ (մեկուսախմբայնության) և բիոհաքինգի (կենսաներխուժման) թուլացնող ազդեցություններից և ապրել առողջ:

«Տեխնոկրատական քաղաքականության միջոցով իրականացվող տրանսհումանիստական ծրագիրը հավակնում է տեխնոլոգիայի միջոցով վերափոխել մարդկությանը: Դա կատարելության զառանցական որոնում է, որքան էլ մոտավոր այն լինի. կատարյալ առողջություն, կատարյալ իմացություն, կատարյալ մեքենաներ: Այս հավակնությունը երբեք չի անհետանա: Բայց ինչպես սատանան, որ շղթայված է անդրաշխարհում, այն կարող է զսպվել: Առաջին քայլը հանրային իրազեկումն է: Երկրորդը՝ համարձակ անձնական դիրքորոշումը: Երրորդը՝ համայնքային գործողությունը: Վերջինը և ամենատևականը մեր իրավունքների, մեր անձնական կյանքի և մեր մարմնի անկախության համակարգային պաշտպանությունն է: Մեքենայի դեմ այս պայքարը չի ավարտվի, մինչև վերջին մարտկոցը չսպառվի: Պատրաստվե՛ք հավերժական պատերազմի: Չի կարող լինել անիրատեսական մտածողություն, կա միայն մեկ վերաբերմունք, որ պետք է ընդունել. մենք կհաղթենք սրան (Զո Ալեն, «Պատվաստվել մեքենաների միջոցով, հետապնդվել մեքենաների միջոցով», <https://joebot.substack.com>, մարտի 29, 2022):

Սատանան հենց սկզբից փորձել է իր սերմը ցանել մարդու ԴՆԹ-ի մեջ:

Որքան էլ նոր հնչի տրանսհումանիզմի գաղափարը, արեգակի տակ նոր բան չկա: Սատանան հենց սկզբից փորձել է իր սերմը ցանել մարդու ԴՆԹ-ի մեջ: Ծննդոց գիրքը բացահայտում է նման դավադրություն հնագույն օրերում, երբ ընկած հրեշտակներն ապականում էին մարդկանց սեռական հարաբերություններ ունենալու միջոցով, որոնք ծնունդ տվեցին հսկաների՝ նեֆիլիմների ցեղի: Համաձայն Ծննդոց 6-րդ գլխի.

«Եվ եղավ, երբ որ մարդիկ սկսեցին շարանալ երկրի վրա և աղջիկներ ծնեցին իրենց, Աստուծո որդիները, տեսնելով մարդկանց աղջիկներին, որ գեղեցիկ էին, ամեն իրենց հավանածներից իրենց համար կանայք էին առնում: Եվ Եհովան ասաց. «Իմ հոգին մարդու վրա միշտ չմտա, այն պատճառով, որ նա մարմին է, այլ նրա օրերը հարյուր քսան տարի լինեն:

Եվ հսկաներ (նեֆիլիմներ) կային այն օրերը երկրի վրա, և այնուհետև էլ, որ բոլոր Աստուծո որդիները մարդկանց աղջիկների մոտ էին մտնում, և նրանք նրանց համար ծնում էին. սրանք այն զորավորներն էին, որ վաղուց անվանի մարդիկ էին:

Եվ Եհովան տեսավ, որ շարացել էր մարդկանց չարությունը երկրի վրա, և նրանց սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր: Այն ժամանակ Եհովան զղջաց, որ երկրի վրա մարդը սպեղծեց, և իր սրտի մեջ տրտմեց: Եվ Եհովան ասաց. «Երկրի երեսից ջնջեմ մարդը, որ սպեղծեցի, մարդից մինչև անասունը, մինչև սողունը և մինչև երկնքի թռչունը, որովհետև զղջում եմ, որ նրանց սպեղծել եմ: Բայց Նոյը Եհովայի առաջ շնորհք գտավ»:

– Ծննդոց 6.1-8

Մասնակից չլինելով սատանայի այլասերված ծրագրին՝ Նոյը հավատարմորեն վարվեց Աստծո հետ և գնահատվեց Նրա կողմից որպես արդար և անարատ իր ժամանակի մարդկանց մեջ:

Ուստի Աստված զգուշացրեց Նոյին.

«...Բոլոր մարմնի վերջը եկել է Իմ առաջ, որովհետև երկիրը նրանց պատճառով անիրավությանը լցված է, և ահա ես նրանց պիտի փչացնեմ երկրի հետ: Արդ դու քեզ համար ... մի տապան շինիր...»:

– Ծննդոց 6.13,14

Նոյը և նրա ընտանիքը փրկվեցին կործանիչ ջրհեղեղից: Նրանք Ադամի ԴՆԹ-ի վերջին ներկայացուցիչներն էին, որ կենդանի մնացին այդ օրերին:

Մարդկային ցեղը պետք է ոչնչացվեր այն բանից հետո, երբ հրեշտակները հարաբերություններ ունեցան մարդկանց հետ և ապականեցին նրանց գեները: Նրանք այլևս մարդիկ չէին՝ ստեղծված Աստծո պատկերով, այլ ծնեցին հսկաների իրենց գերցեղը և իրենց բիրտ ուժով մարտահրավեր նետեցին Աստծո արարչությանը: Նրանք վերստեղծվեցին ընկած հրեշտակների պատկերով Աստծո պատկերի փոխարեն: Աստված պետք է կործաներ նրանց, որովհետև նրանք պղծել էին Իր մտահղացումը և Իր աստվածային պատկերը տղամարդու և կնոջ մեջ: Հակառակ դեպքում մարդկային ցեղն ամբողջովին կկործանվեր:

Միթե սա այն չէ, ինչ տրանսհումանիստները փորձում են անել, երբ միջոցներ են հնարում փոփոխելու մարդու ԴՆԹ-ն մարդկանց «գենետիկական խմբագրման» և նրանց «կոտրելու» կամ նրանց մեջ «ներխուժելու» միջոցով կամ անելու այնպես, որ նրանք այլևս չլինեն տղամարդ կամ կին: Էլ ավելի սահմուկեցուցիչ է այն, երբ նրանք պնդում են, որ մարդկային արարածները, ինչպես *նեֆիլիմները*, կարող են հասնել անմահության, և «Մենք կարիք չունենք սպասելու, որ Հիսուս Քրիստոսը վերադառնա երկիր, որպեսզի հաղթի մահվանը: Մի քանի շեղվածներ լաբորատորիայում կարող են անել դա»: Ո՛չ, մեր ԴՆԹ-ն մեր Աստծո դրոշմն է, և հավիտենական կյանք կարելի է գտնել միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:

Անկասկած կգա մի օր, երբ Աստված կտա մեզ նոր փառավորված մարմին, որպեսզի վերականգնենք այն ամենը, ինչ կորավ անկման ժամանակ, երբ աշխարհ մտավ մահը, բայց տրանս-

հումանիզմը սատանայի կեղծիքն է: Մենք չպետք է ընդունենք կեղծիքը. մենք երբեք չպետք է թույլ տանք, որ չարը «ներխուժի» մեր մեջ, «նախագծի» կամ ժառանգափոխի մեզ:

Ի լրումն այն ամենի, ինչ կարող ենք անել քաղաքական և բարոյական առումներով, ինչպես նաև աղոթքի միջոցով այս խավարի դեմ կանգնելու համար՝ մենք պետք է հետևենք Սուրբ Հոգու ուղղորդմանը, որպեսզի կողմնորոշվենք լրատվական քարոզչության մեջ, զանազան ենք այն, ինչ իրականում տեղի է ունենում՝ հակառակ նրա, ինչ լսում ենք: Մենք չենք կարող կուրորեն առաջնորդվել, ինչպես արդեն բացահայտեցինք: Փոխարենը պետք է լսենք Աստծո ձայնը և զգուշանանք նրանցից, ովքեր պարտադրում են օրակարգեր: Երբ հասկանում եք նրանց վերջնանպատակը, պառակտիչ և չհիմնավորված պնդումներն ու ճնշումն

Մեր մարմնի համար պատասխանատվություն ստանձնելը և առողջապահական թակարդներից, ճիշտ այնպես, ինչպես պարտքի թակարդներից, զերծ մնալու մեր ընտրություններն ինքնուրույն կառավարելը կօգնեն մեզ ունենալու հաջողություն և լինելու առողջ, ինչպես մեր հոգին է հաջող:

ավելի պարզ են դառնում: Մեր մարմնի համար պատասխանատվություն ստանձնելը և առողջապահական թակարդներից, ճիշտ այնպես, ինչպես պարտքի թակարդներից, զերծ մնալու մեր ընտրություններն ինքնուրույն կառավարելը կօգնեն մեզ ունենալու հաջողություն և լինելու առողջ, ինչպես մեր հոգին է հաջող:

Դոկտոր Էյվերի Ջեքսոնն իր «ԱՍՏՈՂ դեղատարմանը» գրքում Աստվածաշունչը միախառնում է գիտությանը՝ ցուցադրելով, թե ինչ հզոր ազդեցություն է դա ունենում ֆիզիկական տկարությունների և վնասվածքների բուժ-

ման գործում՝ շեշտը դնելով եռամսա անձի՝ հոգու, շնչի (միտք, կամք և զգացմունքներ) և մարմնի վրա: Բժշկական համալսարաններում բժիշկներին սովորեցնում են ուսումնասիրել միայն հիվանդությունների և տկարությունների ախտաբանությունը: Հոգևոր, մտավոր և հուզական առողջության ազդեցությունը ֆիզիկական առողջության

վրա սովորաբար չի ուսումնասիրվում: Դոկտոր Զեքունը ներկայացնում է փորձով հաստատված ապացույցներ, հետազոտության արդյունքներ և իր բուժած հիվանդների հետ կապված մեկնաբանող օրինակներ, որպեսզի ցուցադրի նշանակալից կապը այս երեք բաղադրիչների միջև:

Աստված ստեղծեց մարմինը՝ ինքն իրեն բուժելու համար: Մեր իմունային համակարգը բարդ է և զարմանահրաշ: Սովորելով ավելի լավ հոգ տանել մեր մարմինների համար, շատ ջուր խմել, մարզվել, ճիշտ սնվել և ընդունել բնական հավելումներ, ինչպիսիք են վիտամին D-ն և C-ն՝ մեր իմունային համակարգը և օրգանիզմը կարող ենք ավելի առողջ պահել և ավելի արագ բուժվել:

Արդյո՞ք Աստված բժշկում է այսօր: Մեր դուստր Էմին ունի բժշկության զարմանահրաշ պատմություն, որին ես անձամբ ականատես եմ եղել: Նրա որովայնում գրեթե 6 կիլոգրամանոց ուռուցք կար, որը ծռել էր նրա ողնաշարը, դուրս էր ցցել գոտկատեղը և առաջացրել մարսողության բազմաթիվ խնդիրներ ու ցավեր: Մի քանի բժիշկների այցելելուց հետո նա հուսահատվեց՝ չստանալով բժշկական լուծում: Վիրահատությունը կարող էր լրջորեն ազդել երեխաներ ունենալու նրա ապագա հնարավորությունների վրա: Նա սկսեց փնտրել Աստծո Խոսքը պատասխաններ ստանալու համար և սովորել բժշկության մասին աստվածաշնչյան խոսքերը: Մենք աղոթեցինք նրա համար, և երկու շաբաթ անց նա արթնացավ բոլորովին նոր մարմնով՝ առանց վիրահատության: Երբ նա նայեց հայելու մեջ, ի զարմանս իրեն և ամուսնու, բոլորովին այլ տեսք ուներ: Խոշոր ուռուցքն անհետացել էր, մինչ նա քնած էր եղել: Դրան չկար ոչ մի բացատրություն՝ բացի նրանից, որ Աստված արեց դա այն բանից հետո, երբ նա հատուկ թիրախավորեց իր հավատքը՝ Նրանից բժշկություն ստանալու համար: Ես երբեք չեմ մոռանա այն հեռախոսագանգը, որ ստացա նրանից, երբ արցունքն աչքերին նա ուրախությամբ հայտնեց իր հետ կատարվածը: Ես անմիջապես ցատկեցի մեքենայի մեջ և սլացա նրանց տուն: Դա ամենազարմանահրաշ ակնթարթային փոփոխությունն էր, որին ես ականատես եմ եղել: Մենք լաց եղանք, ծիծաղեցինք և այդ երեկո ամբողջ ընտանիքով հավաքվեցինք՝ Աստծուց գոհանալու համար. զարմանքը պատել

էր բոլորիս: Նրա պատմությունը և գիրքը օգնել են շատերին՝ ստանալու իրենց բժշկությունը (amyfreudiger.com):

Աստվածաշնչում կար արյունահոսող մի կին, որը նման փորձառություն ունեցավ: Հիսուսն Իր ծառայության մեծ մասն անցկացրեց՝ բժշկելով սատանայից բոլոր կեղեքվածներին, որովհետև Աստված Նրա հետ էր: Աստվածաշունչը մեզ հորդորում է. «...հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան» (Մարկոս 16.18):

Հակոբոսն ասում է.

«Եթե ձեզնից մեկը հիվանդ է, թող եկեղեցու երեցներին կանչի, որ նրա վրա աղոթք անեն, նրան յուղով օծեն Տիրոջ անունով: Եվ հավատքով աղոթքը կփրկի այն հիվանդին...»:

– Հակոբոս 5.14, 15ա


Նա կապաքինվի և կառողջանա՝ համաձայն Աստծո Խոսքի: Դա կարող է լինել ակնթարթային կամ աստիճանական ապաքինում, բայց դա Աստծո խոստումն է: Մենք պետք է խառնենք հավատքը առողջ սկզբունքների հետ և ստանանք այն, ինչ Աստված ասում է, որ մերն է: «Սիրելի՛, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է» (Գ Հովհաննես 1.2):

Շատ եկեղեցիներ իրենց համայնքներին այլևս չեն քարոզում Աստծո բժշկության ուխտը կամ ձեռքները չեն դնում հիվանդների վրա՝ ակնկալելով, որ հիվանդը կառողջանա: Ձեռք դնելը համարվում է հիմնական ուսմունքներից մեկը Եբրայեցիների 6-րդ գլխում: Դեղահաբերին, պատվաստանյութերին և վիրահատություններին վստահելու փոխարեն նախևառաջ մենք պետք է վստահենք Աստծուն, և Նա կուղղորդի մեզ դեպի ճիշտ պատասխաններ և բուժման պլաններ: «Բժշկությունը երեխաների հացն է»: Եկեղեցիներն ու հավատացյալները պետք է վերադառնան բժշկության աստվածաշնչյան ուսմունքներին, որոնք պահանջում են վստահություն Աստծո և Նրա զորության հանդեպ՝ զուգորդված բուժման առողջ մեթոդներով: Ծանոթացե՛ք բժշկության բազմաթիվ պատմությունների՝ սկսած անբուժելի քաղցկեղից մինչև միկրոֆտալմիա, faithlifechurch.org կայքում:

Անշուշտ, բժշկություն ստանալուց ավելի լավ աստվածային առողջության մեջ ապրելն է: Սա ֆիզիկական, հուզական և, որ ավելի կարևոր է, հոգևոր առողջություն է: Ներում ստանալը և ուրիշներին ներելը օգնում են զերծ մնալու աղտոտված մտքերից և անառողջ մտորումներից: Եթե գիշեր ու ցերեկ մտորենք Նրա Խոսքի շուրջ, մեր ճանապարհը հաջողակ կդարձնենք: Մենք ընտրում ենք հավատալ, որ առողջությունը և բժշկությունը Նրա կամքն են մեզ համար, այնուհետև գործում ենք այդ համոզմունքների հիման վրա: Մեր մարմինը Աստծո Սուրբ Հոգու տաճար է, և մենք պետք է վարվենք նրա հետ՝ առ Աստված ունեցած պատվից ու հարգանքից ելնելով: Նա կարող է տալ մեզ ուժ և ուղղություն՝ դա անելու համար: «Ամեն բան չափավորությամբ» սկզբունքը մեծ նշանակություն ունի սննդակարգի, կարգապահության և աշակերտության միջոցով առողջության պահպանման համար: Եթե մենք վերահսկողությունից դուրս ենք գալիս մի քանի ոլորտներում, ապա համարվում ենք անվերահսկելի: Հնարավորինս բնական և հնարավորինս չփոփոխված մթերք ուտելը, քայլելու և ֆիզիկական այլ գործունեության միջոցով մարզվելը, ինչպես նաև պատշաճ հանգստանալը (ինչը նշանակում է անջատել հեռախոսն ու հեռուստացույցը՝ իսկապես հանգստանալու համար) մեծ նշանակություն ունեն մեր առողջության բարելավման համար: Գտնեք այլընտրանքային աղբյուրներ ձեր առողջության մասին տեղեկություններ ստանալու համար՝ բացի հիմնական տեղեկատվության միջոցներից, որոնք գնվում և վաճառվում են դեղագործական խոշոր ընկերությունների կողմից: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր առողջությունը կամ ազատությունը տրվի նրանց, ովքեր ցանկանում են չարաշահել իրենց իշխանությունը շահույթի համար:

12

ԿՐԹՎԵԼ՝ ՈՒՍՈՒՑՉԻՆ ՆՄԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Գրեթե ինը տարի լինելով երիտասարդական ավագ՝ ես ականատես եմ եղել ամերիկացի երեխաների արմատական փոփոխությանը առավել փոքր մասշտաբով: Սկզբում դա տեղի ունեցավ քաղաքներում, այնուհետև տարածվեց գյուղական բնակավայրերում: Որպես կանոն, ցանկացած խնդիր, որ ունենում էին երիտասարդները, կապված էր ակոհոլ օգտագործելու, երբեմն՝ ծնողներին ստելու, և հազվադեպ՝ թերևս սեռական գործողությունների մասնակցելու կամ պոռնկագրություն դիտելու գայթակղության հետ:

Տասը տարվա ընթացքում ես ունեցել եմ ընդամենը մի քանի կարճ հանդիպում այն երեխաների հետ, որոնք պայքարի մեջ էին իրենց սեռական ինքնության համար: Այս իրավիճակում հայտնված պատանիներից մեկը չէր մեծացել մեր երիտասարդական ծառայության մեջ, և նա արդեն 16 տարեկան էր, երբ պատմեց, որ ծրագրում է համասեռամոլության փորձ կատարել, որովհետև համոզված չէ, որ ինքն ունի ճիշտ սեռական կողմնորոշում: Նա ինձ ասաց, որ դպրոցի ուսուցիչներից մեկը քաջալերել է իրեն փորձել այն, որպեսզի «չափսոսա»: Չափսոսմ: Ես ապշած էի, որ դպրոցը դրդում է երեխաներին համասեռամոլության փորձեր կատարելու: Ես մեր երիտասարդներին սովորեցնում էի Աստծո ծրագիրը ամուսնության համար՝ նշելով, որ սեռական մտերմությունը պետք է պահվի ամուսնության համար, որը տղամարդու և

կնոջ միջև սուրբ ուխտ է ամբողջ կյանքի համար: Ես գիտեի, որ սեռական անառակությունն աճել է վերջին 30 տարիներին, բայց որ ուսուցիչները դրդեն նույնասեռական փորձերի, դա արդեն չափն անցնում էր:

Ես փորձեցի բացատրել այս տղային, որ նա հաստատ կափտոսա, եթե իսկապես համասեռամոլության փորձ կատարի: Ես աղոթեցի նրա հետ և փորձեցի օգնել նրան: Բայց, անկեղծ ասած, ինչ-որ առումով լիովին զինված չէի զգում դիմակայելու ստերի այն տարափին, որ ամեն օր դպրոցում հրամցնում էին նրան: Ցավոք, նա սայթաքեց, ու երբ 18 տարեկան էր և ապրում էր որպես համասեռամոլ, կրկին եկավ ինձ հետ խոսելու: Նա ասաց, որ զգում է, որ Աստված թողել է իրեն: Այնուհետև պատմեց, որ իրականում համասեռամոլությանն իրեն ծանոթացրել է հիմնական դպրոցի բարձր դասարանների ուսուցիչներից մեկը, ով մի քանի այլ տղաների իր հետ տանում էր «դպրոցական ճամփորդությունների» և նրանց հետ զբաղվում նույնասեռականությամբ: Ես կրկին ցնցվեցի և աղաչեցի նրան գնալ իշխանությունների մոտ՝ խոստանալով, որ կուղեկցեմ իրեն, եթե ցանկանա, բայց նա շատ էր ամաչում և խնդրեց, որ թույլ տամ իրեն լուծել այդ հարցերն իր ժամանակին: Մյուս աշակերտները չէին ենթարկվել այդ ուսուցչի ազդեցությանը, քանի որ նա արդեն թռչակի էր անցել:

Ես շատ տխրեցի այդ շփոթված երիտասարդի համար և խոսեցի նրա հետ Աստծո սիրո ու ներման մասին: Փորձեցի օգնել նրան հասկանալու, որ Աստված հուսախաբ չի արել իրեն. հուսախաբ են արել դպրոցը և ուսուցիչը: Նա բռնության էր ենթարկվել, և բռնության մեջ ներգրավված ոգիները շփոթեցրել ու խորապես ցավեցրել էին նրան: Տարիներ շարունակ նրա կենսակերպը կոտրում էր նոր մոր սիրտը: Ես մեծ ցավ էի զգում մոր համար և ափսոսանք՝ որդու համար:

Գրեթե 30 տարվա հովվական խորհրդատվությունից հետո ես հայտնաբերել եմ, որ իրենց սեռական ինքնության համար պայքարող երեխաները կամ մեծահասակները սովորաբար սեռական ոտնձգության և բռնության են ենթարկվել իրենցից տարիքով մեծի՝ հաճախ չափահասի կողմից: Պեդոֆիլիան (մանկատարփություն) բռնություն է՝ անկախ նրանից, թե որքան են մեր մշակույթն ու մեդիան փորձում արդարացնել և բնականոն դարձնել

այն: Հարկ չկա հեռու նայելու, որպեսզի տեսնենք այնպիսի կազմակերպությունների երկակի չափանիշները, ինչպիսին Դիսնեյն է, որոնք հավակնում են պաշտպանել երեխաներին՝ միաժամանակ պայքարելով հանրակրթական դպրոցներում երեխաներին ԼԳԲՏՔ+ ծրագրերի ուսուցումից պաշտպանելու օրենսդրության դեմ: Այս այլասերվածության աճը աստղաբաշխական է եղել մեր խիստ սեռականացված մշակույթում, քանի որ մեր երկիրն ավելի ու ավելի է հեռանում Աստծուց և մեր հուղա-քրիստոնեական արմատներից և սնվում է օկուլտային զվարճանքներով: Մշտապես կապ կա հոգևոր աշխարհի և այս վարքագծի միջև: Կիրքը երբեք չի բավարարվում, այն տեղի է տալիս ավելի փորձառական վարքագծի և, վերջին հաշվով, վերածվում լուրջ սեռական և ընտանեկան բռնության: Ես ունեցել եմ հնարավորություններ՝ ծառայելու նրանց, ովքեր բռնության են ենթարկվում ընտանիքի կամ ծնողների կողմից և փնտրում են օգնություն: Մշակույթի յոթ սարերի միջոցով տարածվող ամոթն ու սուտը մարդկանց կապված են պահում, բայց Քրիստոսում կա ազատություն:

«...Որովհետև ամեն, ինչ որ աշխարհումն է՝ մարմնի ցանկությունը, աչքերի ցանկությունը և այս կյանքի ամբարտապանությունը, Հորից չէ, այլ աշխարհիցն է» (Ա Հովհաննես 2.16):

Տեղափոխվենք մեր օրեր. իմ երիտասարդական ավագության ժամանակներից անցել է մեկ տասնամյակ, և եղել է մի տեղաշարժ, որն ավելի քան ցնցող է: Երիտասարդության առջև ծառայած խնդիրները սովորական, առավել անմեղ հարցերից վերածվել են չափազանց լուրջ հարցերի, հատկապես այն երիտասարդների համար, որոնք չեն մեծացել եկեղեցում: Երիտասարդական ավագներն այսօր առնչվում են երեխաների հետ, որոնք ունեն երկու սեռի բազմաթիվ սեռական զուգընկերներ և այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են պոռնկագրությունից կախվածությունը, գենդերային խանգարումները, ինքնավնասումը, թմրադեղերի օգտագործումը, ինքնասպանության միտումները, մարմնավաճառությունը, սեռական թրաֆիքինգը, զարգացման հապաղումը: Քիչ չեն նաև այն երիտասարդները, որոնք կրում են անպատասխանատու մեծահասակների բեռը՝ փորձելով մեծացնել իրենց եղբայրներին ու քույրերին, մինչ նրանց մայրն ու սիրեկանը թմրադեղեր են ընդունում:

**Այսօր երեխաները
մեդիայի, դպրոցների
և հիվանդանոցների
կողմից ենթարկվում
են գենդերային
անկայունության, և
խրախուսվում է կատարել
փորձարկումներ, ավելին՝
գոյություն ունեն լիարժեք
ուսումնական ծրագրեր,
որոնք փառաբանում
են ԼԳԲՏԲ+ ծրագրերը՝
մանկապարտեզից
սկսած:**

Հիսուսն ասաց. «Աշակերտն
իր ուսուցչից բարձր չէ. բայց
լիովին կրթվածը իր ուսուցչի
պես կլինի» (Ղուկաս 6.40, NIV):

Այն երիտասարդը, որը դար-
ձավ համասեռամուլ, սովորել
էր իր ուսուցչից: Այսօր երե-
խաները մեդիայի, դպրոցների
և հիվանդանոցների կողմից
ենթարկվում են գենդերային
անկայունության, և խրախուս-
վում է կատարել փորձարկում-
ներ, ավելին՝ գոյություն ունեն
լիարժեք ուսումնական ծրագ-
րեր, որոնք փառաբանում են
ԼԳԲՏԲ+ ծրագրերը՝ մանկա-
պարտեզից սկսած: Սպիտակ

տան մամուլի քարտուղար Ջեն Փասկին «Սիէնէն»-ի հաղորդա-
վար Քրիս Ուոլեսին ասել է, որ, իր կարծիքով, ուսուցիչները իրա-
վունք պետք է ունենան իրենց աշակերտների հետ քննարկելու
սեռային ինքնությունը արդեն մանկապարտեզում:

Տրանսվեստիտները գրադարաններում երեխաների համար
կարդում են պատմվածքներ՝ բնականոն դարձնելով և քաջալե-
րելով այս վարքագիծը: Երեխաները փնտրում են սեր և ընդունե-
լություն, իսկ հայտնի մարդիկ ուշադրության են արժանացնում
նրանց, որին ձգտում են բոլոր երեխաները, հատկապես նրանք,
ովքեր չեն ստանում այն ընտանիքում: Ստեղծվում են գրավիչ
անուններով ակումբներ, և ուսուցիչները, որոնք դրսևորում են
այնպիսի վարքագիծ, որ ընդամենը 40 տարի առաջ համարվում
էր սեռական խանգարում, այժմ նույնը սովորեցնում են երեխա-
ներին:

Երեխաները բնականաբար նայում են մեծահասակներին, որ-
պեսզի նրանք սովորեցնեն իրենց, թե ինչպես ապրեն: Նրանք
չունեն կշռադատման հմտություններ՝ բարին չարից կամ վնասա-
կար ու բռնարար վարքագծից զանազանելու համար: Երեխանե-
րը վստահում են: Պարզապես սարսափելի է, որ անմեղ երեխա-

ները, որոնք ունեն վստահող սիրտ և փնտրում են ուղղորդում, այս կերպով բռնության են ենթարկվում ուսուցիչների, ինչպես նաև խաղային ու ժամանցային խոշոր ընկերությունների կողմից: Այնպիսի աստղեր, ինչպիսիք են Ջոջոն, իսկ նրանից առաջ՝ «Հանա Մոնտանա» հեռուստասերիալի դերասանուհի Մայլի Սայրուսը, «դուրս են գալիս» և բարեպաշտ երեխա հետևորդներին առաջնորդում իրենց ապրելակերպի և ծրագրերի մեջ:

Դպրոցն այլևս կարդալու, գրելու և թվաբանության մասին չէ, այլ տեղեկատվական- հոգեբանական գրոհի և քաղաքական ծրագրերի: 2020 թվականին Աբիգեյլ Շրիերը՝ ծնող և Օքսֆորդի ու Յեյլի համալսարանների իրավաբանության գիտական աստիճաններ ունեցող լրագրող, գրեց վիճահարույց «Անդառնալի վնաս. տրանսգենդերային մտազարություն, որ գայթակղում է մեր դուստրերին» գիրքը: Իր գրքում Շրիերը բացահայտում է «տրանսգենդերային ինքնության հաստատման հանկարծակի, կտրուկ աճ դեռահաս կենսաբանական աղջիկների շրջանում» 2010-ականներին: Նա սա բացատրում է «բարձր անհանգստություն ունեցող, ընկճվածության ենթակա (գլխավորապես սպիտակամորթ) աղջիկների շրջանում սոցիալական վարակով, որոնք նախորդ տասնամյակների ընթացքում դարձել էին անորեքսիայի և բուլիմիայի կամ բազմակի անհատականության խանգարման զոհ»: Ոչինչ չկասկածող ծնողներն արթնանում են՝ հայտնաբերելով, որ իրենց դուստրերին համոզել են յուրօրյան գործիչները, ուսուցիչները և թերապևտները, որոնք անդառնալի միջամտություններ են անում, այդ թվում՝ երկկողմանի ստինքահեռացում, սեռափոխության վիրահատություններ և սեռական հասունացումն արգելակող միջոցների կիրառում, ինչը կարող է անպտղության պատճառ դառնալ:

Ինչ վերաբերում է դպրոցներին, Շրայերը նշում էր, որ Կալիֆոռնիայի կրթական խորհուրդն իր վիրտուալ գրադարանների միջոցով տրամադրում է մի գիրք, որը նախատեսված է մանկապարտեզի ուսուցիչների համար, որպեսզի կարդան իրենց սաներին: Այն գրել է Բրուք Փենսին-Ուեդբին, կոչվում է «Ո՛վ ես դու. մանկական ուղեցույց գենդերային ինքնության վերաբերյալ»: Հինգ տարեկանների համար նախատեսված այս գիրքը պնդում է, որ «Երեխաները չեն կարող խոսել, ուստի մեծահասակները

ենթադրություններ են անում՝ նայելով նրանց մարմնին. սա քեզ վերագրված սեռն է ծննդյան ժամանակ՝ արական կամ իգական»։ Գիրքը շարունակում է. «Սրանք ընդամենը մի քանի բառեր են, որ մարդիկ գործածում են. տրանս, գենդերքուիթ, ղչ երկբևեռ, գենդերային փոփոխական, տրանսգենդեր, գենդերային չեզոք, ագենդեր, նեյտրոիս, բիգենդեր, երրորդ սեռ, երկհոգի...»։ Թեև գենդերային գաղափարախոսները պնդում են, որ Փեսին-Ուեդբիի գրքերի նման գրքերը պարզապես ներկայացնում են օբյեկտիվ փաստեր, ինչպես նշում է Շրիերը, պարզ է, որ կա հույս, որ երեխաներն իրենց համար կընտրեն զվարճալի «գենդերային-ստեղծագործական» տարբերակ։

2020 թվականի նոյեմբերին առցանց քննադատության պատճառով «Թարգեթ» խանութները կարճ ժամանակով դադարեցրին Շրայերի գրքի վաճառքը, բայց մեկ օր անց այն կրկին հասանելի դարձրին գնման համար։ Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միության (ACLU) փաստաբան Չեյս Տրանցիոն «Թվիթեր»-ում գրեց, որ «այս գրքի և այս գաղափարների շրջանառության 100%-ով դադարեցումը մի բարձունք է, որի համար ես պատրաստ եմ զոհվելու»։

Վերջերս Շրայերը նաև գրեց «Ինչպես են ակտիվիստ ուսուցիչները հավաքագրում երեխաներին» հոդվածը՝ բացահայտելով, թե ինչպես են ակտիվիստ ուսուցիչները հավաքագրում երեխաներին Կալիֆոռնիայի ուսուցիչների ասոցիացիայի՝ նահանգի ամենամեծ ուսուցչական արհմիության ժողովից տարածված ձայնագրությունը ստանալուց հետո։


«Անցյալ ամիս Կալիֆոռնիայի ուսուցիչների ասոցիացիան (CTA) անցկացրեց համաժողով՝ ուսուցիչներին ծանուցելով գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման հարցերում ծնողներին, պահպանողական համայնքներին և դպրոցի տնօրեններին տապալելու լավագույն մեթոդների մասին», - գրում էր Շրիերը։ «Բանախոսներն այնքան հեռու գնացին, որ պարտադրեցին վերահսկել աշակերտների որոնումները «Գուգլում», նրանց համացանցային ակտիվությունը և միջանցքներում խոսակցությունները, որպեսզի թիրախավորեն վեցերորդ դասարանցիներին՝ ԼԳԲՏՔ ակումբներ անձնական հրավերներ ուղարկելու համար՝ միաժամանակ ակտիվորեն թաքցնելով այս ակումբների ան-

դամության ցուցակները մասնակիցների ծնողներից»: Որպեսզի խուսափեին նյութերի հանդեպ ծնողների դիմադրությունից, այս ուսուցիչները բացահայտորեն հայտնեցին իրենց լսարանին, որ «Հաջորդ տարի մենք պատրաստվում ենք անցկացնելու մի փոքր մտքի հնարք մեր վեցերորդ դասարանցիների հետ: Նրանք վերջինն էին, որոնց անդրադարձանք այս զեկույցում, իսկ գենդերային հարցերը վերջին բանն էին, որի մասին խոսեցինք: Այնպես որ, հաջորդ տարի առաջինը կսկսենք այս զեկույցով, և գենդերային հարցերը առաջինը կքննարկվեն: Հուսանք, ինչ-որ կերպ կմեղմացնենք արձագանքները»:

«Գենդերբրեդ մարդուկն» այժմ լայնորեն գործածվում է որպես միջոց՝ սովորեցնելու երեխաներին, թե ինչպես ճանաչեն ԼԳԲՏՔ տարբեր ինքնությունները: Thesafezoneproject.com կայքէջը տրամադրել է անվճար դասի ծրագիր «Գենդերբրեդ» գործունեության թերթիկի հետ միասին:

Չեղդերի մարդուկ 4

ևս itspronouncedmetrosexual.com կայքի



🚫 Աշանակում է այն բանի բացակայությունը, ինչն աջ կողմում է

🧠 **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՅՑՈՒՆ**

- 🚫 → Կին-ուրջյուն
- 🚫 → Մղանարդ-ուրջյուն



ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՐՏԱՆՇԱՅՏՈՒՄ

- 🚫 → Կանաչիություն
- 🚫 → Առնականություն



ԿԱՅՍՄՈՒՈՒՍԱԿԱՆ ՍԵՆ

- 🚫 → Էգ-իգական
- 🚫 → Արու-արական

Ինքնություն ≠ Արտահայտում ≠ Սեռ
Սեռ ≠ Սեռական կողմնորոշում

ՍԵՆ՝ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԾՆԵՂՑԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Իգական Վիջանային Արական

❤️ **ՍԵՆԱԿԱՆՈՐԵՆ ՉՐԱՎՈՒՄ ԵՆ... ԵՎ/ԿԱՄ (ԵՎ/Կ)**

- 🚫 → Կանաչի և/կ կանաչի և/կամ իգական սեռի մարդիկ
- 🚫 → Գրգամարդիկ և/կ առնական և/կ արական սեռի մարդիկ

❤️ | **ԳԿԱՅՄՈՒՆՔԱՅՆՈՐԵՆ ՉՐԱՎՈՒՄ ԵՆ**

- 🚫 → Կանաչի և/կ կանաչի և/կամ իգական սեռի մարդիկ
- 🚫 → Գրգամարդիկ և/կ առնական և/կ արական սեռի մարդիկ



«Չեղդերի մարդուկ», տարբերակ 4, ինդիանական իրավունքների պաշտպանության շեմ, 2017, Սեռ Կրթություն

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք www.genderbread.org կայք

Նմանապես, Գենդերային միաեղջյուրը՝ ստեղծված Տրանս ուսանողների կրթական ռեսուրսների (TSER) կողմից, գործածվում է երեխաներին սեռի և գենդերային ինքնության մասին սովորեցնելու համար: Նրա ստեղծողները Գենդերային միաեղջյուրին առանձնացրին Գենդերբերեղ մարդուկից, որովհետև նրանք «ցանկանում էին» ճանաչել սեռերը արևմտյան գենդերային երկբևեռությունից դուրս, ինչը Գենդերբերեղ մարդուկը չի ճանաչում: Ոչ բոլոր տրանսգենդեր մարդիկ գոյություն ունեն կնոջ և տղամարդու հատկանիշների սանդղակում: Կազմակերպությունն օժանդակում և ներկայացնում է մի քանի սեմինարներ համաժողովներում, միջոցառումներում, դպրոցներում, քոլեջներում, համալսարաններում և այլն:

Գենդերային միաեղջյուր

Graphic by:
TSER
Trans Student Educational Resources



Ավելի իմանալու համար այցելե՛ք
www.transstudent.org/gender

Նախագծված Լենդին Փենի և Աննա Մուրի կողմից

Երեխաների այս գաղափարախոսական ուսուցումը սարսափելի է և թողնում է կյանք փոխող հետևանքներ. ամլացում, հոգեկան հիվանդություն և ինքնասպանություն: Անցումային փուլում գտնվող մարդկանց շրջանում ինքնասպանության հավանականությունը 40 տոկոս է: Միայն սա բավական է աղաղակ բարձրացնելու համար, որ այս ամենը սխալ է: Սեռական այս վարքագծերի ընդունումը և կրթումը չեն օգնել երեխաներին, փոխարենը կործանել են նրանց անմեղությունը և կյանքը: Մենք պետք է վերադառնանք «Կենսաբանություն 101» դասընթացին և Հիսուսի հայտարարությանը. «*Չե՞ք կարդացել, թե Նա, որ սկզբիցն ստեղծեց, արու և էգ ստեղծեց նրանց...*» (Մատթեոս 19.4):

Սուրբ գիրքը շատ հստակ է. Աստված ոչ միայն «արու և էգ ստեղծեց» նրանց, այլև դա անելով՝ Նա փնտրում էր աստվածապաշտ երեխաների, որ կծնվեին նրանց միությունից: «*Եվ այն մեկն էլ չարամվ... Եվ ի՞նչ էր փնտրում այն մեկը. Աստված սերունդ...*» (Մաղաքիա 2.15):

ԱՄՆ-ը ունի աշխարհում միայնակ ծնողների հետ ապրող երեխաների ամենաբարձր ցուցանիշը: Երեխաների մեկ չորրորդն ապրում է միայնակ ծնողի հետ՝ պայմանավորված ամուսնությունների թվի նվազմամբ և արտամուսնական ծնունդների աճով: Համեմատե՛ք սա Չինաստանի հետ, որտեղ երեք տոկոսն է ապրում միայնակ ծնողի հետ, իսկ Նիգերիայում՝ 4 տոկոսը: Կանադայում այս ցուցանիշը 15 տոկոս է: Իսկ չափահաս զավակները՝ 18-34 տարեկան, որոնք ապրում են իրենց ծնողների հետ ԱՄՆ-ում, կազմում են ահռելի 27 տոկոս: Հնարավոր է, որ այս երիտասարդները նույնպես օրինակ են նրա, ինչ սովորել են ամուսնության մասին իրենց ուսուցիչներից, մայրերից ու հայրերից:

1980-ից հետո ծնվածները ռեկորդային թվերի պատմություն են կերտում՝ ասելով ո՛չ ավանդական ամուսնությանը, և նրանք կարող են արմատապես փոխել այս դարավոր ինստիտուտը: Թեև ավանդական ամուսնությունը սերունդների ընթացքում անկման հետագիծ է ունեցել, այս խմբի դեպքում, որում ամենամեծն այժմ 40 տարեկան է, այն կարծես կտրուկ անկում է ունենում: Ըստ «Փյու» հետազոտական կենտրոնի զեկույցի՝ 1980-ից հետո ծնվածներն ավելի դանդաղ են ստեղծում իրենց տնային տնտեսությունը, տասից ավելի քան չորսը չի ապրում իր հարա-

զատ ընտանիքի հետ: Նրանցից շատերը նախընտրում են փորձ-նական ամուսնանալ: «Փյու»-ի գեկույցներում նշվում է, որ նրանց զգալի մասն ապրում է սիրեկանի հետ:

Ես մշտապես հանդիպում եմ իմ տարիքի կանանց, որոնք տխուր են, որ չունեն թոռներ, և շատերն ասում են, որ ապագայում թոռ ունենալու քիչ հույսեր ունեն, որովհետև նրանց չափա-հաս զավակները նախընտրում են չունենալ երեխաներ և ամուս-նանալու փոխարեն կենակցում են: Մի մայր ողբում էր՝ ասելով, որ երանի կարիերան վեր չդասեր ընտանիքից, իր որդուց և դուստ-րից: Հեշտ է ենթարկվել հայտնիների և բարձրագույն կրթության ազդեցությանը և, վերջին հաշվով, կորցնել կյանքի լավագույն պարզները:

Երեխաները ռմբակոծվում են սեռական տեղեկատվությամբ, բռնի և սեռական պատկերներով, ԼԳԲՏՔ օրակարգերով, օկուլ-տային գործելակերպերով և ըմբոստ վերաբերմունքով՝ միա-ժամանակ ընտանիքում զրկված լինելով առողջ տղամարդ/կին ամուսնական փոխհարաբերություններից: Եթե դրան ավելաց-նեք այն ժամանակը, որ նրանք անցկացնում են սոցիալական ցանցերում, բախվում ՏիկՏոկ-ի մարտահրավերներին՝ իրենց համեմատելով սոցցանցերի հազարավոր կերպարների հետ, ինչ-պես նաև սեռահասունացման բնականոն մարտահրավերներին, ապա երեխաների համար սա միայնակ, կորած աշխարհ է: Հա-ճախ նրանց ծնողները, եթե անգամ նրանց հետ են, չափազանց զբաղված են՝ տեսնելու նրանց վերքերը և իմանալու նրանց ամե-նախոր, ամենածածուկ ցավն ու պայքարը:

Այս ցավերն ու վերքերը կարող են մահացու հետևանքներ ունե-նալ: Ինքնասպանությունը մահվան թիվ երկու պատճառն է 15-19 տարեկան երիտասարդների շրջանում: Հոգեկան առողջության խնդիրները երիտասարդների և նույնիսկ երեխաների շրջանում կտրուկ ավելանում էին, իսկ համավարակով պայմանավորված սահմանափակումները պատճառ դարձան դրանց թռիչքաձև աճին: Չորս երիտասարդներից մեկն ասում է, որ 2021 թվակա-նին ունեցել է ինքնասպանության մտքեր: Ինքնասպանության ցուցանիշները 2007-2018 թվականներին 10-24 տարեկանների շրջանում աճել են 60 տոկոսով՝ նույնիսկ նախքան սահմանափա-կումները: Այս թվերը պետք է լինեն ահազանգ յուրաքանչյուրի

համար, ով ուսումնասիրում է դժբախտության, ընկճախտի և հոգեկան խնդիրների մակարդակը երիտասարդության շրջանում:

Վերջերս ինձ մոտեցավ մի բուժքույր, որը լրացնում է հոգեբուժարաններում բուժվող այն երեխաների բժշկական քարտերը, որոնք պայքարում են տագնապի, ինքնասպանության մտքերի և այլ հոգեկան/հուզական խնդիրների դեմ: Նա ինձ պատմեց, որ բազմիցս նկատել է, որ այս երեխաները գրեթե միշտ ունեցել են նույն վերապրումները: Նրանք տեսնում էին մութ, մռայլ պատկերներ կամ ամպեր, լսում խորհրդավոր ձայներ, որոնք ասում էին նրանց սխալ վարվել կամ վերջ տալ իրենց կյանքին: Երեխաները գործ ունեին դիվային դրսևորումների հետ, բայց բժշկության ոլորտի մասնագետները միայն դեղամիջոցներով էին բուժում նրանց և անկարող էին լուծել հոգևոր և ընտանեկան հարցերը, որոնք էլ նրանց խնդիրների բուն արմատն էին: Դեղամիջոցները կարծես չէին օգնում: Նա ասում էր, որ ինքնասպանության փորձերից հետո այս երիտասարդներից շատերին խորհուրդ էին տալիս, որ գուցե իրենք սխալ մարմնում են և պետք է մտածեն սեռափոխության մասին: Հիվանդանոցն ունի մի ամբողջ բաժանմունք, որը ղեկավարվում է նրանց կողմից, ովքեր ենթարկվել են սեռափոխության, և պատրաստ են «օգնելու» այս երիտասարդներին:

Ինչո՞ւ են ծնողները հաշտվում այս ամենին: Ոմանք ոչինչ չգիտեն այնքան ժամանակ, մինչև որ չափազանց ուշ է լինում: Բժիշկներն ու հոգեբանները նրանց ասում են. «Ավելի լավ է, որ նրանք սեռափոխություն կատարեն, քան ինքնասպանություն գործեն», կարծես դրանք միակ երկու տարբերակներն են: Նույնիսկ որոշ հոգևոր ծառայողներ ծեսի միջոցով օգնում են նրանց «անցում կատարելու» դեպի իրենց «նոր և կատարելագործված» սեռական ինքնությունը, անուրը և դերանունը: Երիտասարդներն իրենց սեռական օրգանները կապում են իրենց մարմիններին, որպեսզի թաքցնեն դրանք, մինչև որ կարողանան ստինքահեռացում և ամորձատում կատարել: Վերքերը դառնում են սարսափելի, և հիվանդանոցի անձնակազմը պետք է սովորի խնամք տանել նրանց համար: Ավելի ցնցող բան կարող է լինել:

Հնարավոր է, որ այս երեխաները գաղափարապես կրթվել են դպրոցում, սոցցանցերի հայտնիների մշակույթի, խաղերի և զվարճանքների միջոցով՝ միաժամանակ զրկվելով անվտանգությունից,


սիրուց և հոգատարությունից, որոնք պետք է ստանային իրենց ծնողներից: Արդյո՞ք բժշկական համայնքն օգուտ է քաղում բացակա ծնողների անհոգությունից և երեխաներին վերաբերող այն ծրագրերից, որոնք իրականացվում են դպրոցներում և բժշկական հաստատություններում: Արդյո՞ք ինչ-որ մեկը գումար չի աշխատում հակադեպրեսանտ դեղամիջոցներից, խորհրդատությունից, սեռափոխության վիրահատություններից, դեղահաբերից, հիվանդանոցային բուժօգնությունից և ինքնասպանության բուժումներից: Ակնհայտ է, որ ես դեմ չեմ մանկավարժներին կամ բժշկական համայնքին, բայց ինչ-որ բան շատ սխալ է և ընթացել է շատ վատ ուղղությամբ: Այս երեխաները պարզապես նմանակում են այն, ինչ իրենց ծրագրավորել են հավատալ կյանքի, իրենք իրենց, իրենց ինքնության և շրջապատող աշխարհի մասին: Մենք չենք արդարացրել նրանց սպասելիքները, բայց կա հույս:

Հիսուսը Մատթեոսի 18.6-ում ասաց.

«Եվ ով որ գայթակղեցնի այս փոքրերից մեկին, որ հավատում են Ինձ, ավելի լավ է նրան, որ մի էշի ջաղացի քար նրա վզից կահավի, և նա ծովի անդունդում ընկղմվի»:

Երբ պատանիները մեծանում են և դրսևորում իրենց զարգացման հնարավորությունները, գոյություն ունեն իրավիճակային փոփոխական մեծություններ, որոնք նպաստում կամ խանգարում են այդ գործընթացին: Դրանք հաճախ անվանվում են պաշտպանիչ և վտանգավոր գործոններ:

Պաշտպանիչ և վտանգավոր գործոնների առկայությունը, բացակայությունը և տարբեր զուգակցությունները խթանում են երիտասարդների հոգեկան առողջությանը: Երիտասարդների կյանքում պաշտպանիչ և վտանգավոր գործոնների բացահայտումը կարող է ուղղություն տալ նրանց հետ իրականացվող կանխարգելման և միջամտության ռազմավարություններին: Պաշտպանիչ և վտանգավոր գործոնները կարող են նաև ազդել հոգեկան առողջության խանգարումների ընթացքի վրա, եթե դրանք կան:



ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ, ՀՈՒՉԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Տիրույթ. անհատ

Վտանգավոր գործոններ

- Իգական գենդեր
- Վաղ սեռահասունացում
- Բարդ խառնվածք. Ճկունության պակաս, ցածր դրական տրամադրություն, ամոթխածություն, թույլ կենտրոնացում
- Ցածր ինքնագնահատական, գիտակցված անկարողություն, բացատրական և եզրակացնելի բացասական ոճ
- Տազնապ
- Թույլ դեպրեսիվ ախտանշաններ և թախծություն
- Անապահով կապվածություն
- Թույլ սոցիալական հմտություններ. հաղորդակցման և խնդիրներ լուծելու հմտություններ
- Հավանության և սոցիալական աջակցության ծայրահեղ կարիք
- Ցածր ինքնագնահատական
- Ամաչկոտություն
- Հուզական խնդիրներ մանկության շրջանում
- Վարքի խանգարում
- Բարեհաճ վերաբերմունք թմրամիջոցների նկատմամբ
- Ապստամբություն
- Հոգեակտիվ նյութերի վաղ օգտագործում
- Հակասոցիալական վարք
- Գլխի վնասվածք
- Մարիիուանայի գործածում
- Մանկության շրջանում կապարի կամ սնդիկի (նեյրոտոքսիների) ազդեցություն

Պաշտպանիչ գործոններ

- Դրական ֆիզիկական զարգացում
- Ուսումնական առաջադիմություն/մտավոր զարգացում
- Բարձր ինքնագնահատական
- Հուզական ինքնակարգավորում
- Հաղթահարման և խնդիրների լուծման հմտություններ
- Ներգրավվածություն և կապ հետևյալ երկու կամ ավելի միջավայրերի հետ. դպրոց, հասակակիցների հետ շփում, սպորտ, աշխատանք, կրոն, մշակույթ

ԴԵՌԱՀԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ, ՀՈՒՋԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԻ ԽԱՆՊԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Տիրույթ. ընտանիք

Վտանգավոր գործոններ

- Ծնողական ընկճախտ
- Ծնող-երեխա բախում
- Թույլ ծնողավարություն
- Բացասական ընտանեկան միջավայր (կարող է ներառել հոգեակտիվ նյութերի չարաշահում ծնողների կողմից)
- Մանկական բռնություն/վատ վերաբերմունք
- Միայնակ ծնողով ընտանիք (միայն աղջիկների համար)
- Ամուսնալուծություն
- Ամուսնական ընդհարումներ
- Ընտանեկան ընդհարումներ
- Անհանգիստ ծնող
- Ծնողական/ամուսնական ընդհարումներ
- Ընտանեկան ընդհարումներ
- հարումներ (ծնող-երեխա, ինչպես նաև երեխա-երեխա փոխազդեցություն)
- Ծնողի կողմից թմրանյութերի/ալկոհոլի օգտագործում
- Ծնողների գործազրկություն
- Ծնողների կողմից հոգեակտիվ նյութերի օգտագործում
- Մեծահասակի վերահսկողության բացակայություն
- Ծնողների հետ թույլ կապվածություն
- Անառողջ ընտանիք
- Շիզոֆրենիայով տառապող ընտանիքի անդամ
- Թույլ ծնողական վերահսկողություն
- Ծնողական ընկճախտ
- Սեռական բռնություն

Պաշտպանիչ գործոններ

- Ընտանիքն ապահովում է կառուցվածք, սահմաններ, կանոններ, վերահսկողություն և կանխատեսելիություն
- Աջակցող փոխհարաբերություններ ընտանիքի անդամների հետ
- Հստակ ակնկալիքներ վարքագծի և արժեքների հարցում

ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ, ՀՈՒՋԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Տիրույթ. դպրոց, շրջապատ և համայնք

Վտանգավոր գործոններ

- Հասակակիցների մերժում
- Սթրեսային իրադարձություններ
- Ուսումնական թույլ առաջադիմություն
- Աղքատություն
- Համայնքային մակարդակի սթրեսային կամ տրավմատիկ իրադարձություններ
- Դպրոցական մակարդակի սթրեսային կամ տրավմատիկ իրադարձություններ
- Համայնքային բռնություն
- Դպրոցական բռնություն
- Աղքատություն
- Տրավմատիկ իրադարձություն
- Հետընթաց ուսման մեջ
- Ցածր նվիրվածությոն
- յուն դպրոցին
- Քոլեջի հետ կապվածության բացակայություն
- Ագրեսիա հասակակիցների հանդեպ
- Թմրամիջոցներ օգտագործող հասակակիցների հետ շփում
- Հասարակական/համայնքային նորմերը բարենպաստ են ակտիվի և թմրանյութերի գործածության համար
- Քաղաքային միջավայր
- Աղքատություն
- Շեղված հասակակիցների հետ շփում
- Մտերիմ հարաբերության կամ ընկերների կորուստ

Պաշտպանիչ գործոններ

- Վստահելի ուսուցիչների ներկայություն և հմտությունների ու հետաքրքրությունների զարգացման աջակցություն
- Դպրոցում և համայնքում ներգրավվելու հնարավորություններ
- Դրական նորմեր
- Վարքագծի հարցում հստակ ակնկալիքներ
- Ֆիզիկական և հոգեբանական անվտանգություն

(Վերամշակված է Մ.Ի. Օ'Քոնելի, Թ. Բոտի և Կ. Ի. Ուոնների «Երիտասարդների շրջանում մտավոր, հուզական և վարքային խանգարումների կանխարգելումը. առաջընթաց և հնարավորություններ» գրքից, Ազգային ակադեմիայի մամուլ, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 2009):

Անկեղծ ասած՝ այս վտանգավոր և պաշտպանիչ գործունե-
րը զարմանալի չեն, քանի որ դրանք կարելի է գտնել հենց Աստ-
ծո Խոսքում: Այս աղյուսակը կրոնը նշում է որպես նպաստավոր
պաշտպանիչ գործոն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս,
որ ուժեղ հոգևոր ներգրավվածություն ունեցող երիտասարդնե-
րը, որոնք հաճախում են եկեղեցի և եկեղեցական ճամբարներ և
ունեն խոր արմատացած հավատք, շատ ավելի քիչ հավանական
է, որ կներքաշվեն թմրանյութերի, ալկոհոլի օգտագործման մեջ
կամ կունենան հոգեկան կամ հուզական խանգարումներ կամ
ինքնասպանության միտումներ:

Աստված վստահել է ծնողնե-
րին դաստիարակել երեխանե-
րին պաշտպանության և սիրո
մեջ: Երբ կանգնենք Նրա առջև,
նշանակություն չի ունենա, թե
որքան գումար ենք աշխատել
կամ ինչ ենք ձեռք բերել երկրի
վրա եղած ժամանակ կամ նույ-
նիսկ որքան հանրաճանաչ ենք
եղել: Արդյո՞ք հանրաճանաչ ենք
եղել մեր երեխայի համար: Արդ-
յո՞ք սիրել ենք նրան այնքան, որ
համբերությամբ և հեզությամբ
խրատել ենք:

Ինչպե՞ս մեր հասարակութ-
յունը հայտնվեց այնտեղ, որտեղ ծնողներն անտարբերությամբ
իրենց երեխաներին հանձնում են ժամանցի «դայակներին», խե-
լացի հեռախոսներին և հայտնի անձնավորություններին, որոնք
գործում են դժոխքից դուրս եկած օրակարգերով: Ո՞վ է կրթել
դպրոցներում և բժշկական համայնքներում այս օրակարգերն
առաջ մղող ուսուցիչներին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և քոլեջնե-
րի շենքերը ներծծվել են հակաստվածային, հակաժողովրդա-
վարական գաղափարախոսություններով: Մեր առաջնորդների
և մանկավարժների շեղումը բարոյական կողմնացույցից քայ-
քայում է ընտանիքի, հավատքի կառուցվածքը և ֆինանսական

**Ինչպե՞ս մեր
հասարակությունը
հայտնվեց այնտեղ,
որտեղ ծնողներն
անտարբերությամբ
իրենց երեխաներին
հանձնում են ժամանցի
«դայակներին», խե-
լացի հեռախոսներին և հայտնի
անձնավորություններին,
որոնք գործում են
դժոխքից դուրս եկած
օրակարգերով:**

համակարգի անբասիրությունը մեր երկրում և նրա երիտասարդության շրջանում:

1960-ականներից ծախականները, առաջադեմները, սոցիալիստները և մարքսիստները գաղթել և պաշտոններ են զբաղեցրել հանրակրթական դպրոցների և բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ Կրթության ազգային ասոցիացիայում (ուսուցիչների ազգային միություն), հանրակրթական դպրոցների ուսուցչական կազմում, հանրակրթական դպրոցների վարչական կազմում, համալսարանների դասախոսական կազմում, բաժնի ղեկավարների, դեկանների, խորհուրդների անդամների և կրթության նախարարության կառավարական տարբեր հաստիքներում:

2007 թվականին ԱՄՆ չորս կոմունիստական խմբավորումներ կազմեցին դաշինք, որպեսզի փորձեն վերահսկողության տակ վերցնել Դեմոկրատական կուսակցությունը Կալիֆոռնիայում, այնուհետև՝ մյուս նահանգներում՝ վերջնական նպատակ ունենալով վերահսկողության տակ վերցնել Ազգային դեմոկրատական կոմիտեն: Երկարաժամկետ ծրագիրը ներառում էր սովորողների գաղափարախոսական ուսուցում ամբողջ երկրի հանրակրթության բոլոր մակարդակներում և համալսարաններում, որպեսզի միլիոնավոր սովորողների համոզեն, որ Սահմանադրական Հանրապետությունը հսկայական ծախողում է եղել՝ միաժամանակ նկարագրելով սոցիալիզմի դրական պատկերը: Նպատակն էր ստանալ միամիտ ուսանողների սերնդի աջակցությունն այն ակնկալիքով, որ նրանք վերջին հաշվով կօգնեն կոմունիստներին վերահսկողություն ձեռք բերելու տեղական, նահանգային և դաշնային կառավարության նկատմամբ: Նրանց մանրամասն ծրագրերը շարադրված են «Ներսում/դրսում» նախագծում:

«Տվե՛ք ինձ երիտասարդների ընդամենը մեկ սերունդ, և ես կվերափոխեմ աշխարհը»:

– Վլադիմիր Լենին


Ավանդաբար, ավելի քան 200 տարի հանրակրթական դպրոցներում և պետական համալսարաններում ուսումնական ծրագիրը մշակվել և վերահսկվել է տեղական դպրոցական խորհրդի և առանձին պետական կրթական բաժինների կողմից: 2008 թվականին Արիզոնայի այն ժամանակվա նահանգապետ Ջանեթ Նապոլիտանոն ղեկավարում էր Ընդհանուր աշխատանքային խումբը, որը կազմված էր կրթության հանձնակատարներից, նահանգապետներից, կորպորատիվ գլխավոր գործադիր տնօրեններից և բարձրագույն կրթության ոլորտում ճանաչված փորձագետներից: 2008 թվականի դեկտեմբերին այդ խումբը մշակեց այն, ինչ հայտնի դարձավ որպես «Ընդհանուր հիմնական պետական չափորոշիչներ»: Դրանք այն չափորոշիչներն են, որ ընդունվեցին 45 նահանգների և Կոլումբիայի շրջանի կողմից:

Երբ ես փոքր էի, հեռուստատեսային մի գովազդ կար, որն ասում էր. «Ժամը 10-ն է. դուք գիտե՞ք, թե որտեղ են ձեր երեխաները (և ղվ է ազդում նրանց վարքի ու համոզմունքների վրա)»: Նրանք կդառնան իրենց ուսուցիչների պես:

«Ձգո՞ւյշ կացե՞ք՝ միգուցե մեկը հափշտակի ձեզ փիլիսոփայությունով և դատարկ խաբերայությունով՝ մարդկանց ավանդության պես, աշխարհիս սկզբունքների պես և ոչ թե Քրիստոսի պես»:

– Կողոսացիների 2.8

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ. ԱՎԵԼԻ ԼԱՎ ՃԱՆԱՊԱՐՀ



Սահմանափակումների ընթացքում ծնողները ստիպված եղան տանը կրթել իրենց երեխաներին, և այստեղ քողարկված օրհնությունն այն է, որ շատ ծնողներ վերադարձրին իրենց պատասխանատվությունը իրենց երեխաների հանդեպ, և երկրորդ՝ նրանք իրականում տեսան, թե ինչ զարհուրելի բաներ են սովորեցնում իրենց երեխաներին: Որոշ ծնողներ դպրոցների վերաբացումից հետո շարունակեցին տնային կրթությունը: Մյուսները դարձան ակտիվիստներ և ոտքի կանգնեցին ուսուցիչների միությունների և դպրոցական խորհուրդների դեմ, որոնք քարոզում են անմեղ երեխաներին ստիպողաբար հրամցվող օրակարգեր: Սա հիանալի և հուսադրող ահազանգ է, և ես չէի կարող չքաջալերել այս ծնողներին: Մենք հասկացանք, թե որքան լուրջ էր դարձել իրավիճակը, որ ծնողների մասնակ-

**Մենք հասկացանք,
թե որքան լուրջ էր
դարձել իրավիճակը,
որ ծնողների
մասնակցությունն
իրենց երեխաների
կրթությանը դաշնային
կառավարության
կողմից համարվեց
«ահաբեկչական
վարքագիծ», և ՀԴԲ
(Հետաքննությունների
դաշնային բյուրո)
կանչվեց:**

ցությունն իրենց երեխաների կրթությանը դաշնային կառավարության կողմից համարվեց «ահաբեկչական վարքագիծ», և ՀԴԲ (Հետաքննությունների դաշնային բյուրո) կանչվեց: Ծնողներ, եղեք ծնողներ և պայքարե՞ք ինչպես երկինքը, երբ խոսքը վերաբերում է ձեր երեխաներին: Ոչինչ, և ես ընդգծում եմ, ոչինչ ձեզ համար ավելի կարևոր չի լինի ձեր կյանքի վերջում, քան ձեր երկնային հավիտենական կոչումը:

Իմաստությունը նպատակն է

«Իմաստությունը գլխավոր բանն է. ուրեմն, իմաստություն ստացիր և քո ամեն ձեռքբերման հետ հասկացողություն ստացիր» (Առակաց 4.7, NKJV): Իմաստությունը գիտելիքներն ու սկզբունքներն են, որոնք հաստատում են ճշմարտությունը, և հասկացողությունը դրանք կիրառելու խոհեմությունն է: Կարևոր չէ, թե ինչ կրթություն կամ քանի դիպլոմ ունենք, եթե չենք կարողանում իմաստուն լինել և չունենք արդյունավետ, լավ և ազնիվ կյանքով ապրելու բնավորություն: Մտավոր և բարոյական հիմքերն ավելի կարևոր են, քան «գրքային գիտելիքները»: Այսօրվա բարձրագույն կրթության մեծ մասը կապված է անիմաստ ուսումնասիրությունների հետ, որոնք չունեն իրական արժեք կամ ֆինանսական հեռանկար: Պողոս առաքյալն այս մասին զգուշացրեց իր հոգևոր որդուն՝ Տիմոթեոսին, և մենք նույնպես պետք է զգուշացնենք մեր երիտասարդությանը. *«Ո՛վ Տիմոթեոս, պահիր քեզ տրված ավանդը և եր կաց պիղծ ունայնաբանություններից և սուտանուն գիտության հակառակություններից»* (Ա Տիմոթեոս 6.20):

Սա պատվիրան է Աստծուց՝ սովորեցնելու մեր զավակներին այն, ինչ Նա ասում է նրանց մասին, կյանքի մասին և Իր բարության մասին:

«Եվ այս խոսքերը, որ ես այսօր քեզ պատվիրեցի, քո սրտի մեջ լինեն: Եվ կրկնիր նրանք քո որդիներին, խոսիր նրանց մասին քո տան մեջ նստած ժամանակդ և ճանապարհ գնացած ժամանակդ և պառկելիս և վեր կենալիս»:

– Երկրորդ Օրինաց 6.6,7

Սա հազվադեպ է շեշտվում, բայց Երկրորդ Օրինացի առաջին մասը նշում է, որ այս խոսքերը պետք է լինեն մեր սրտում (այնուհետև դուք պետք է խոսեք դրանց մասին): Մեր սրտերն են թելադրելու, թե ինչ ասենք և ինչպես առաջնորդենք: Այն, ինչ կարևոր է մեզ համար, կդառնա մեր օրվա խոսակցությունը, և ինչ էլ անենք, մեր առաջնահերթություններն ի հայտ կգան: Անկախ այն բանից՝ ծնողներն իրենց երեխաների բարոյական դաստիարակությունը առաջնահերթություն են դարձրել, թե ոչ, եթե նրանց երեխաները օրական 7-9 ժամ մնում են կրթական հաստատություններում, ապա հաստատությունները ճնշում են նրանց մտադրությունները: Ինչպես տեսանք, կրթության համակարգին առնչվող խնդիրը դուրս է վերահսկողությունից:

Դպրոցական համակարգի ստեղծման սկզբում առաջնահերթությունը երեխաներին Աստվածաշունչ սովորեցնելն էր: Բոլոր դասերը վերցված էին Աստվածաշնչից՝ որպես հիմք իմաստության և հասկացողության համար: Պատմության մեծանուն մարդիկ, որոնք ձևավորեցին այս երկիրը, ունեին Աստվածաշնչի խոր իմացություն, եթե ոչ անձնական հարաբերություններ Հիսուս Քրիստոսի հետ: Ուսուցիչներն ընտրվում էին աստվածաշնչյան գիտելիքների, ինչպես նաև հմտությունների համար:

Ես մտածում էի, որ Ա Կորնթացիների 15.33-ը՝ *«Մի՛ խաբվեք. չար ընկերակցություններն ապականում են բարի վարքերը»*, վերաբերում է ընկերությանը, և այդպես էլ կա: Բայց դա նաև վերաբերում է մեր երեխաներին կրթող մարդկանց: Եթե նրանց բարոյական բնութագիրը հակասաստվածային է, նրանք կապականեն/կայլասերեն իրենց աշակերտներին մոլորության նույն ոգիներով:

Ձեռքը, որ օրորում է օրորոցը, ոչ միայն օրորում է օրորոցը, այլև կրթում և մարզում է ուղեղը. զարգացնում է սիրտը և ուղղորդում հոգին: Մենք այնտեղ ենք, որտեղ այսօր կանք, երիտասարդներին կրթելու շնորհիվ: Երիտասարդները կձևավորեն այն աշխարհը, որտեղ մենք կապրենք վաղը: Մեր երկրում այսօրվա հիմնախնդիրները երիտասարդության կրթության պատճառով են: Երիտասարդները դառնում են մեծահասակներ: Մեծահասակները քվեարկում են ղեկավարության համար: Ղեկավարները ձևավորում են քաղաքականություն և օրենքներ: Օրենքները վերահսկում են այն համայնապատկերը, որտեղ մենք ապրում ենք:

Ձեր ամենագորեղ ընտրությունը և ազատությունը ձեր քվեն է կամ ձայնը և ձեր երեխայի ձայնի ուժը: Թշնամին ցանկանում է լռեցնել երկուսն էլ: Մեր երկիրն այս վիճակում է կրթական համակարգի պատճառով: Երկիրը դառնում է այն, ինչին նրա ժողովուրդը հավատում է, թե ճշմարտություն է: Դպրոցական համակարգն օգտագործվել է ծրագրեր նախագծելու համար: 1962 թվականին աղոթքը և Աստված հանվեցին դպրոցներից: Այն ժամանակվանից պատմությունը վերաշարադրվել է, իսկ Աստված և մեր հիմքերի հանդեպ հավատքը հանվել են մեր ամերիկյան պատմությունից: Երիտասարդներին ծրագրավորել են ընդունել հանդուրժողականությունը ճշմարտությունից վեր: Նրանք արժևորում են հանդուրժողականությունը: Խոսեք ցանկացած երիտասարդի հետ, ով հանրային կրթություն է ստացել, և դուք դժվարությամբ կգտնեք շատերի, որոնք ընդունում են Աստծո Խոսքը: Նրանք սովորական են ընդունում ամեն տեսակի այլասերվածություն, բայց մերժում են Աստծուն և կարծում, որ կրոնը պետք է հեռու պահվի հանրային կյանքից: Դա հանդուրժողականություն է ճշմարտությունից դուրս:

Երեք սուտ ուղղություններ, որոնք Իսրայելն ընդունեց իր պաշտամունքի մեջ, կործանում բերեցին իր ազգին և բոլոր կայսրություններին, որոնք ընկան. 1) Բահադի պաշտամունք. հաճույքներ և մամոնա, նյութական իրեր և շվայտություն, 2) Աստարովթի պաշտամունք. սեռական անբարոյություն և այլասերվածություն, և 3) Մոդոքի պաշտամունք. երեխաների զոհաբերություն՝ ընդհուպ մահ (տե՛ս Դատավորաց 2.12,13, 3.7 և Գ Թագավորաց 11.5-10):

Սրանք նույն ոգիներն են, որ գործում են այս դարաշրջանում և տարածվում մեր աշխարհի համակարգերում:

Շատ ծնողներ հարմարվել են այն բանին, որ կարելի է իրենց երեխաներին հանձնել այս անաստվածային կրթական «ուղեղի

վլացմանը»: Քրիստոնյա ծնողները ցնցվում են, երբ իրենց երեխաները մերժում են Աստծուն, բայց ինչ են նրանք ակնկալում, երբ իրենց երեխաներին հանձնել են սուտ աստվածների գաղափարախոսությամբ կրթվելու: Եթե քննեք այն ժամանակը, երբ դպրոցական համակարգն աշակերտներին «ներարկում է» սոցիալական օրակարգեր իրական կրթական հմտությունների և ուսուցման փոխարեն, ապա զարմանալի չէ, որ մենք տեսնում ենք այս իսկապես բացասական հետևանքները մեր երիտասարդների մեջ:

Այն ժամանակ Հիսուսն ասաց Իր աշակերտներին. *«Որովհետև ինչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհը ստանա և իր անձը կորցնի, կամ ինչ գին կտա մարդ իր անձը փրկելու համար»* (Մատթեոս 16.26):

Ակնհայտ է, որ կյանքում ավելի կարևոր բաներ կան, քան կարիերան և աշխատավարձը: Աշխարհիկացված ուսումը, որ մերժում է Աստծուն, ոչ մեկին չի պատրաստում աշխարհի համար և հատկապես չի նպաստում այն բանին, որ որևէ մեկը հաջողություն ունենա երկնքի աչքում կամ երկրային փոխհարաբերություններում: Ամբարիշտների խորհուրդն իսկապես վատ խորհուրդ է: Աստծո բարեհաճության մեջ աճել նշանակում է ավելացնել բարեհաճությունը մեր ընտանիքում, աշխատանքում և կյանքում:

«Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մեջ չի գնում և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում: Այլ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու գիշեր Նրա օրենքի վրա է մտածում: Եվ նա ջրերի գնացքում փնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը չի թափվում, և ամեն ինչ որ անում է, հաջողվում է նրան: Այսպես չեն ամբարիշտները, այլ ինչպես դարմանի մղեղ, որ քամին ցրիվ է տալիս»:

– Սաղմոս 1.1-4

Եթե ցանկանում ենք հաջողակ լինել և նույնը ցանկանում ենք մեր երեխաների համար, մենք պետք է կատարենք որոշ արմատական փոփոխություններ: Հիսուսն ասաց. *«...Եթե մեկը վերստին չձնվի, կարող չէ Աստծո արքայությունը տեսնել»* (Հովհաննես 3.3):

Վերստին ծնունդը կյանքի արմատական փոփոխություն է, որը վերադասավորում է մեր առաջնահերթություններն Աստծո առաջնահերթությունների հետ և պետք է ազդի մեր առաջնահերթությունների, երեխաների և կրթության հարցերում մեր տեսակետի արմատական փոփոխության վրա:

Յավոք, պետք է նշեմ, որ հանրակրթական համակարգը, ինչպիսին այն այսօր է, այլևս չի կարող լինել ընտրության մեթոդ երեխաներին կրթելու համար: Քրիստոնեական դպրոցները կամ տնային կրթությունն այլևս պարզապես ընտրովի չեն: Նախորդ գլխում մենք քննարկեցինք, թե ինչու: Վտանգները չափազանց մեծ են: Բոլոր ծնողներին՝ միայնակ թե ամուսնացած, աղքատ թե հարուստ կամ միջին կարգավիճակի, տրվել է նույն վստահությունը՝ դաստիարակելու իրենց երեխաներին այն ճանապարհով, որով նրանք պետք է գնան: Եթե քրիստոնեական դպրոց է, ապա պետք է ստուգեք, թե ինչ է ուսուցանվում, և մեծապես ներգրավված լինեք: Մինչ դուք լուծում եք փոխադրամիջոցի հարցը, նախապատրաստում երեխային և օգնում նրան՝ կատարելու տնային առաջադրանքը, նույն ժամանակի ներդրումը կարելի էր օգտագործել ձեր երեխայի տնային կրթության համար (օրական առավելագույնը 2-2,5 ժամը միջին ժամանակն է, իսկ ցածր դասարաններում՝ ավելի քիչ): Նրանց ժամանակի մնացած մասը կարելի է ներդնել կյանքի հմտությունների և առանձնահատուկ պարգևների ու կոչումների զարգացման մեջ (երաժշտություն, ձայն, սպորտ, գործարարություն, արվեստ, բանավեճ, քաղաքականություն, ճամփորդություն, համակարգիչ և այլն): Հետազոտելը և գործնական աշխատանք կատարելը շատ ավելի լավ են, քան պարզապես գրքերում ժամանակ անցկացնելը: Սոցիալական շփումը հեշտորեն կարելի է իրականացնել եկեղեցու, ընտանեկան կրթության ընդհանուր խմբերի և առօրյա գործունեության միջոցով: Ընտանեկան կյանքը վերականգնվում է, և, ամենակարևորը, կառուցվում են փոխհարաբերություններ:

Ծնողները նույնպես պետք է մասնակցեն իրենց նահանգի օրենսդրության մշակմանը, որպեսզի առաջ տանեն օրինազներ, որոնք կստիպեն, որ գումարներն ուղղվեն հարկատուների երեխաների կրթությանը՝ ծնողներին իրավունք տալով ծախսելու այդ գումարներն իրենց ընտրած դպրոցում: Այսպիսով՝ կստեղծվի

ազատ ձեռներեցության համակարգ, որը կհարկադրի դարոցներին ուսուցիչների միությունների փոխարեն լսել ծնողներին, երբ որոշվում է, թե ինչ պետք է սովորեն աշակերտները: Օրինագծերի շնորհիվ, որոնցից մեկը զետեղված է backpackbill.com կայքում, ընտրության իրավունքը և ֆինանսները հետ են հանձնվում ծնողներին և աշակերտներին:

Ձեր երեխաներին կրթելու համոզմունքը

Տնային կրթություն չի նշանակում, որ մենք միայն պաշտպանում ենք երեխաներին վնասակար ուսումնական ծրագրերից, այլ ավելի շուտ մենք՝ ծնողներս, ներդրում ենք կատարում նրանց բնավորության և զարգացման մեջ գիտամանկավարժական անձնակազմի ուղեկցությամբ: Մենք հավատքի վրա հիմնված կյանքի օրինակ ենք ցույց տալիս և հետևաբար կրթում մեր երեխաներին աստվածաշնչյան աշխարհայացքով: Նրանք հասկանում են կյանքի պարտականությունները և սովորում այն, ինչ պետք է կարդան գրքերում օրական երկու ժամ: Ինչ էլ անելիս լինեք, կարող եք ներգրավել ձեր երեխաներին: Իրական «կյանքի ուսուցումը» տեղի է ունենում վայրկյան առ վայրկյան, լինի դա մթերային խանութում թե բանկում: Կյանքը դառնում է էքսկուրսիա, և այս աշակերտները առաջադիմում և սովորում են ավելի, քան տալիս է ցանկացած գիրք: Դուք կարող եք նաև կրթությունը հարմարեցնել ձեր ժամանակացույցին, իսկ եթե ունեք բիզնես, էլ ավելի լավ: Ներգրավեք նրանց որքան հնարավոր է շատ: Կան բազմաթիվ ուսումնական ծրագրեր և առցանց ուսման հնարավորություններ ու առաջադրանքը կատարելու հազարավոր միջոցներ: Եթե ընդունեք հետևյալը՝ որպես առաջնորդող սկզբունքներ, հաջողություն կունենաք ձեր երեխաներին կրթելու գործում.

1. Ընդունեք, որ մեր երեխաներին կրթելը պատասխանատվություն է ԱՍՏՕՈՒՑ՝ կոչում:
2. Որտեղ Նա կանչում է, գինում է: Եթե կա կոչում, ուրեմն կա սպառազինում, շնորհք Աստծուց՝ իրականացնելու այն, ինչը ուրիշ ոչ ոք չի կարող անել այնպես, ինչպես դուք՝ որպես ծնող:
3. Եթե չհնազանդվեք կոչմանը, կլինեն հետևանքներ, որոնք ավելի մեծ են, քան այն գինը, որ կվճարեիք տնային կրթութ-

յան կամ քրիստոնեական դպրոց ուղարկելու համար: Դուք կրթում եք ձեր երեխաներին ամբողջ կյանքում: Ինչի՞ն են նրանք սովորում հավատալ և ի՞նչ են սովորում անել:

4. Ամեն օրը կատարյալ չէ, ո՛չ էլ կյանքն է կատարյալ: Նույնիսկ բացթողումները կամ խառնաշփոթ իրավիճակները կարող են լինել սովորելու հրաշալի հնարավորություններ և ծնողի, և՛ երեխայի համար:
5. Աճե՞ք և սովորե՞ք միասին, ինչպես Աստված է նախատեսել, բնական, սակայն նպատակաուղղված կերպով:

Շատերը վախենում են, որ անկարող են կրթել իրենց երեխաներին, սակայն, որպես ծնող, դուք սովորեցրել եք նրանց կյանքի ամենադժվար հմտությունները՝ խոսել և քայլել: Դուք դա արել եք միանգամայն բնական ձևով, և հենց այդպես է ամենից լավ իրականացվում ցանկացած ուսուցում: Դուք բավականաչափ հոգացել եք այն մասին, որ ցույց տաք նրանց ճանապարհը, և համբերատար սովորեցրել եք, թե ինչպես վարվեն: Սրանք նույն նախադրյալներն են տնային կրթության համար:

Երկրորդ՝ ծնողները ժամանակի կամ ռեսուրսների պակաս են զգում, բայց դուք ունեք երկուսն էլ, եթե գիտակցեք, որ ժամանակի փոքր քանակով կարելի է իրականացնել մեծ գործեր, և ձեր շուրջը կան ցածր կամ ոչ մի արժեք չունեցող ռեսուրսներ՝ դաշտ կամ առու: Մեր հիմնադիրներից մեկի՝ Աբիգեյլ Ադամսի (ԱՄՆ մի նախագահի կնոջ և մյուսի մոր) մասին հայտնի պատմություններն ասում են, որ նա տանը վեց երեխա է կրթել: Նրա կրթված երեխաները դարձել են պետական գործիչներ, իրավաբաններ, բժիշկներ և նախագահ: Ինչպե՞ս է նա հասել դրան: Նա ձևավորել է նրանց բնավորությունը, փոխանցել իմաստություն և հասկացողություն, դրել հիմք՝ դիմելու Աստծուն մնացած հարցերում էլ օգնություն ստանալու համար: Միթե մենք չենք սովորել, որ դա է լավագույն միջոցը կյանքում կողմնորոշվելու համար:

**ՏՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՑԱԾ ՀԱՅՏԻ
ՄԱՐԴԻԿ, ԹՎԱՐԿԵՆՔ ՄԻ ՔԱՆԻՍԻՆ.**

ԳԵՆԵՐԱԼՆԵՐ

- Սթոունվել Ջեքսոն
- Ռոբերտ Ի. Լի
- Դուգլաս ՄաքԱրթուր
- Ջորջ Փաթոն

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐ

- Ալեքսանդր Գրեհեմ Բել
- Թոմաս Էդիսոն
- Ռայթ եղբայրներ. Օրվիլ և Ուիլբուր Ռայթ

**ՔԱՐՈՉԻՉՆԵՐ
ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ**

- Ժաննա դը Արկ
- Ջոնաթան Էդվարդս
- Չարլզ Ուեսլի
- Ջոն Ուեսլի

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ

- Ջոն Քուինսի Ադամս
- Ուիլյամ Հենրի Հարիսոն
- Թոմաս Ջեֆերսոն
- Աբրահամ Լինքոլն
- Ջեյմս Մեդիսոն
- Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ
- Թեոդոր Ռուզվելտ
- Ջոն Թեյլոր
- Ջորջ Վաշինգտոն

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

- Ջորջ Վաշինգտոն Բարվեր
- Պիեռ Կյուրի
- Ալբերտ Էյնշտեյն
- Բուքեր Թ. Վաշինգտոն

Արդյո՞ք համալսարանն արդարացնում է ներդրումների շահութաբերության տեսանկյունից

«Որովհետև ձեզնից ո՛վ է, որ կամենա աշտարակ շինել, և առաջ չնստի և ծախսը հաշվի, թե ավարտելու համար բավական բան ունի՞» (Ղուկաս 14.28):

Արդյո՞ք համալսարանը ճիշտ տարբերակ է: Հետևյալ վիճակագրական տվյալները և ծախսերը ցույց են տալիս, որ համալսարանի ծախսերը, համեմատած աշխատաժամանակի կորստի հետ, ձեռնտու չեն: Թերևս ամենամեծ գինը, համաձայն մի ուսումնասիրության, այն է, որ բարձր դասարանցիների մոտավորապես 70 տոկոսը համալսարան ընդունվելիս պնդում է, որ վերստին ծնված է, բայց համալսարանից հետո թողնում է իր հավատքը: Սա մի գին է, որը չափազանց բարձր է՝ վճարելու համար: Երբ ընտրում ենք, թե արդյո՞ք համալսարանն է ճիշտ տարբերա-

կը, թե՛ այլընտրանքները, ինչպիսիք են արհեստների ուսուցումը, անհատ ձեռներեցությունը, աստվածաշնչյան դպրոցները կամ քրիստոնեական համալսարանները կամ էլ առցանց դպրոցները, շատ դեպքերում այլընտրանքային տարբերակներն ավելի լավ ընտրություն են:

2021 թվականի հոկտեմբերին Հավասար հնարավորությունների հետազոտության հիմնադրամը հրապարակեց մի ուսումնասիրություն՝ «Արդյո՞ք համալսարանն արդարացնում է. ներդրումների շահութաբերության համապարփակ վերլուծություն» թեմայով: Ընդունելով, որ աշակերտների մեծ մասն ընտրում է հաճախել համալսարան ավելի լավ, ավելի շահավետ աշխատանք ձեռք բերելու նպատակով՝ զեկույցում արվեց հետևություն,

որ ներդրումների շահութաբերությունը զգալիորեն տարբերվում է՝ կախված հաճախած հաստատությունից և ուսումնասիրված ակադեմիական ծրագրերից: Մասնավորապես՝ ուսումնասիրությունը հանգեց այն եզրակացության, որ.

միջինում բակալավրի կրթությունն արժե 306,000 դոլար այն ուսանողների համար, որոնք ժամանակին ավարտում են: Բայց միջին վիճակագրական տվյալները հսկայական տատանումներ են թաքցնում: Ուսումնառության որոշ բնագավառներ, այդ թվում՝ ճարտարագիտությունը, համակարգչային գիտությունը, բուժքույրությունը և տնտեսագիտությունը, կարող են բերել մեկ միլիոն կամ ավելի եկամուտ: Մյուսները, այդ թվում՝ արվեստը, երաժշտությունը, կրոնը և հոգեբանությունը, հաճախ ունեն գրո կամ նույնիսկ բացասական զուտ ֆինանսական արժեք: Հաշվի առնելով այն ռիսկը, որ ուսանողից կպահանջվի ավելի քան չորս տարի համալսարանն ավարտելու համար, կամ նա ամբողջովին կթողնի ուսումը՝ ներդրումների միջին շահութաբերությունն ընկնում է մինչև 129,000 դոլար: Բակալավրի կրթական ծրագրերի քսանութ տոկոսն ունի ներդրումների բացասական շահութաբերություն, երբ գնահատվում է չավարտելու ռիսկը: Եթե ներդրումների շահութաբերությունն արտահայտի կրթության հիմքում ընկած ծախսերը, ոչ թե միայն ուսման վարձերը, ապա չաշխատող ծրագրերի մասնաբաժինը բարձրանում է մինչև 37 տոկոս:

Որքան է համալսարանական կրթության միջին ընդհանուր արժեքը: Ուսման տարեկան արժեքը վերաբերում է ուսման վարձի և վճարների, գրքերի և օժանդակ նյութերի, ինչպես նաև համալսարանական տարածքում ապրող ուսանողների կացարանի և սնունդի ընդհանուր արժեքին: Այն չի ներառում տրանսպորտի ծախսը, առօրյա կենցաղային ծախսերը, ուսանողական վարկի տոկոսները և այլն: Ըստ «Կրթության տվյալների նախաձեռնություն» հետազոտական թիմի, որի առաքելությունն է հավաքել տվյալներ և վիճակագրություն ԱՄՆ կրթական համակարգի վերաբերյալ՝ միջին բակալավրի կրթության առավելագույն արժեքը կարող է հասնել մինչև 400,000 դոլարի: Դիտարկեք հետևյալ վի-

ճակագրությունը 2022 թվականի հունվարի 27-ի դրությամբ.

- Նահանգային չորսամյա պետական ուսումնական հաստատությունում սովորող և հաստատության տարածքում ապրող ուսանողի ուսման վարձը միջինում տարեկան 25,487 դոլար է կամ 101,948 դոլար չորս տարվա համար:
- Այլ նահանգներից եկած ուսանողները վճարում են տարեկան 43,161 դոլար կամ 172,644 դոլար չորս տարվա համար, ավանդական մասնավոր համալսարանների ուսանողները վճարում են տարեկան 53,217 դոլար կամ 212,868 դոլար չորս տարվա համար:
- Թեև բակալավրի աստիճան ստանալու համար ավանդական ժամկետը չորս տարի է, ուսանողների միայն 39 տոկոսն է ավարտում այն չորս տարում:
- Բակալավրի աստիճան ստացողների վաթսուն տոկոսն ավարտում է վեց տարում, այս դեպքում ուսման արժեքը միջինում 152,922 դոլար է:
- Ուսանողները, որոնք չեն կարողանում լրիվ դրույքով աշխատել, կորցնում են տարեկան 40,612 դոլար եկամուտ:
- Ուսանող վարկառուները ամեն տարի վճարում են միջինը 1,898 դոլար տոկոսագումար, և ուսանող վարկառուն միջինում մոտավորապես 20 տարի է հատկացնում վարկերը մարելուն:
- Հաշվի առնելով կորցրած եկամուտը և վարկի տոկոսները՝ միջին բակալավրի կրթության վերջնական արժեքը կարող է հասնել մինչև 400,000 դոլար:

Ուսանողական վարկերի պարտքի վիճակագրություն

- 44.7 միլիոն ամերիկացի ուսանող վարկառուների ընդհանուր պարտքը 1.56 տրիլիոն է:
- Բոլոր մեծահասակների 30 տոկոսն ունի կրթական այս կամ այն տեսակի պարտք:
- Այդ մեծահասակների 93 տոկոսը ժամկետանց պարտավորության հետ ունի ուսանողական վարկի պարտք:

- Երկրում անհատական ուսանողական վարկի միջին պարտքը 32,731 դոլար է:
- Ուսանողական վարկի միջին վճարումը 393 դոլար է:
- 85 միլիարդ դոլար կազմող ընդհանուր ուսանողական վարկի պարտքը մարված է:
- Ուսանողական վարկ ունեցող մարդկանց 20 տոկոսն ուշացնում է վճարումները:
- Ուսանողական վարկերի 10.8 տոկոսը ժամկետանց է կամ պարտազանց (ժամկետանց 90 և ավելի օրեր):
- Ազգային մակարդակով չմարված պարտքը միջինը 22,500 դոլար է մեկ անձի հաշվով:
- Ուսանողական վարկի չմարված պարտք ունեցող մարդկանց 30 տոկոսը երկարաձգել է վարկի մարման ժամկետը նախքան Քովիդ-19 համավարակի սկսվելը:
- Չափահասների 23 տոկոսը, որը պարտք է վերցնում արտաքին ֆինանսական օգնությունից, օգտագործում է այն՝ ուսանողական վարկերի դիմաց վճարումներ կատարելու համար:
- 404 դոլարը ամսական միջին գումարն է, որ 40 տարեկանից ցածր ընտանիքի գլուխը ծախսում է ուսանողական վարկի մարման համար, ինչը գերազանցում է այն գումարը, որը միջին ընտանիքն ամսական ծախսում է մթերքի վրա:
- Ուսանողական վարկ ունեցողների 96 տոկոսը հայտնում է, որ հետաձգում է կյանքի/ֆինանսական առնվազն մեկ խոշոր իրադարձություն ուսանողական վարկի պատճառով, օրինակ՝ տուն գնելը, ընտանիք կազմելը և երկարաժամկետ խնայողությունները:
- Վարկառուների 68 տոկոսը նշում է, որ ուսանողական վարկի պարտքը իր ֆինանսական պայքարի պատճառն է:
- Մեծահասակների 30 տոկոսն ունի այս կամ այն տեսակի ուսման վարձի պարտք:
- Երիտասարդների 54 տոկոսը, որ հաճախում է համալսարան, ավարտում է այս կամ այն տեսակի պարտքով, սովորաբար ուսանողական վարկի պարտքով:
- Համալսարանական կրթություն ստացած մինչև 30 տա-

րեկան չափահասներն ավելի շատ ուսանողական վարկի պարտք ունեն, քան ցանկացած այլ տարիքային խումբ:

- Համալսարանական կրթություն ստացած 60-ից բարձր տարիքի մարդիկ ունեն ուսանողական վարկի նվազագույն պարտք:
- Մինչև 30 տարեկան գիտական աստիճան ունեցողների 73 տոկոսն ունի չմարված կրթական պարտք:
- 30-44 տարեկան գիտական աստիճան ունեցողների 68 տոկոսն ունի չմարված ուսման վարձի պարտք՝ ի տարբերություն 45-59 տարեկանների 48 տոկոսի:

Արհեստների ուսուցման և այլընտրանքային մյուս տարբերակների դերը

Եթե այն հմտությունը, որն ուսանողը ցանկանում է յուրացնել, չի պահանջում գիտական աստիճան, շատ աստիճաններ ոչ մի առավելություն չեն տալիս աշխատողին: Անհատ ձեռներեցները և վաճառքի գործակալները ֆինանսապես ավելի լավ արդյունքների են հասնում, ուստի ավելի լավ չէ դպրոցում ներդրված ֆինանսական միջոցները ծախսվեն ձեռներեցության կամ այլ ներդրումների մեջ: Շատ պաշտոններում գործնական հմտություններն ավելի լավ են, քան գիտական աստիճանը: Եթե դուք ծրագրում եք իրականացնել ուղեղի վիրահատություն, այո՛, գիտական աստիճանն անհրաժեշտ է: Մենք պետք է վերաիմաստավորենք կրթությունը և ներդրումներ կատարենք ոչ թե համալսարաններում դասավանդվող գաղափարախոսությունների, այլ հմտությունների մեջ: Շատերի համար արհեստների ուսուցումը կարող է լինել ժամանակի և ֆինանսների լավագույն ներդրումը:

Արհեստների ուսուցումը անմիջապես աշխատելու հնարավորություն է տալիս, հետևաբար դուք պետք է, որքան հնարավոր է, արագ սովորեք պահանջվող հմտությունները: Ամեն օր դուք մշտապես ենթարկվում եք աշխատանքային միջավայրի ազդեցությանը, և սա օգնում է ձեզ ձեռք բերելու աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքը: Համալսարանը, սակայն, տալիս է գիտելիքի ավելի լայն շրջանակ:

Որպես աշակերտ՝ դուք ստանում եք հնարավորություն սովորելու «աշխատելով», ինչը կարող է տալ ձեզ ավելի հարուստ և ավելի լավ պատկերացում ձեր դերի գործնական կողմերի մասին: Աշխատանքի ընթացքում աշակերտները մշտապես նոր հմտություններ են յուրացնում և ունեն հնարավորություն՝ ամեն օր կիրառելու իրենց սովորածը:


Համալսարանը պատրաստում է ձեզ աշխատուժի համար, բայց սովորաբար դուք տարիներով սպասում եք, մինչև կարողանում եք կիրառել ձեր հմտությունները: Համալսարանը ներառում է մեծ քանակությամբ տեսական գիտելիքի ուսուցում, որոնք կարող են տարբերվել ըստ ձեր ոլորտում կիրառելիության: Սա սովորաբար իրականացվում է դասախոսությունների և ընթերցանության ձևով և գնահատվում է բանավոր և գրավոր հանձնարարությունների միջոցով: Ստուգարքներ անցկացվում են նաև դասարանական աշխատանքների մեծ մասի համար՝ կախված ձեր ուսումնասիրության առարկայից, և դրանք ձեր գնահատականի զգալի մասն են:

Մի կարծեք, թե «Գնա՛ համալսարան և ձեռք բեր լավ աշխատանք» հին ասացվածքը կիրառելի է այսօր: Մենք պետք է պատրաստենք երիտասարդներին՝ տալով նրանց ամուր հիմք Աստծո Խոսքի մեջ, զարգացնելով նրանց բնավորությունը ընթերցանության, գրավոր խոսքի և թվաբանության հիմունքների ուսուցման հետ մեկտեղ, ինչպես նաև ուսումնասիրելով գիտությունը աստվածաշնչյան տեսանկյունից: Վերջին քայլը արհեստների ուսուցումն է, մասնագիտական կամ բարձրագույն կրթությունը, երբ նրանց՝ Աստծուց տրված պարգևներն ակնհայտ են դառնում: Երբ փնտրում ենք մասնագիտություն մեզ կամ մեր երեխաների համար՝ հիմնվելով միայն փողի, այլ ոչ թե Աստծո կոչման վրա, մենք առաջինը չենք փնտրում Աստծո Թագավորությունը, իսկ դա սխալ է դասավորում առաջնահերթությունները: Աստված գիտի ապագան, և Նա յուրաքանչյուր մարդու ստեղծել է պարգևներով, որպեսզի նա աշակերտի և պատրաստվի իր նախասահմանությանը: Կյանքին նախապատրաստվելը սկսվում է ընտանիքում, շարունակվում է դասարանում, դրսևորվում է կյանքում

հետևողական ջանքերով և ավարտվում է առաջխաղացմամբ: Ֆինանսական պարզևները հետևում են առաջին հերթին Աստծո Թագավորությունը փնտրելուն, ինչպես գրված է, «այս բոլոր բաները կավելանան ձեզ»: Նպատակը միշտ ավելի կարևոր է, քան ֆինանսները, և այն կբերի լիարժեքություն, հավասարակշռված կյանք և ֆինանսական բավարարություն:

14

ԽԵԼԱԳԱՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Քանի որ չկա ազատություն առանց պատասխանատվության, ինչպես եք զրկում մարդկանց իրենց ազատությունից: Ստիպում եք նրանց հրաժարվել իրենց պատասխանատվությունից, դադարել հոգատարություն ցուցաբերելուց, վերացնում եք նրանց նպատակը և տալիս բավականաչափ հնարավորություն իրենք իրենց կործանելու համար: Հեռացրե՛ք տղամարդկանց՝ որպես պաշտպանների, հեռացրե՛ք կանանց՝ որպես դաստիարակների, երեխաներին դարձրե՛ք խոցելի, երիտասարդներին կախվածության մեջ գցե՛ք թմրադեղերից և վճարե՛ք նպաստներ՝ օգնելու կոտորված մարդկանց, մինչև որ երկիրը փլուզվի: Դարձրե՛ք նրանց պարտքերի ստրուկը: Վերցրե՛ք նրանց իրավունքները. հաստատե՛ք ամբողջատիրական պետություն:

Սա կարճ ցուցակն է այն ամենի, ինչ տեղի է ունեցել Ամերիկայում: Մենք վերջին երկու կետերում ենք: Վերցրե՛ք նրանց իրավունքները: Եթե մենք ցանկանում ենք ուղղել այն, ինչ սխալ է, պետք է վերականգնենք մեր պատասխանատվությունը, հոգածությունը և նպատակը, ինչը հնարավոր է միայն Աստծո միջոցով: Չաշխատելն անբարոյականություն է: Աստվածաշունչը պատվիրում է, որ աշխատենք մեր երկու ձեռքերով, որպեսզի տալու բան ունենանք: Ավելին՝ պատվիրում է, որ եթե մարդը չի աշխատում, թող չուտի էլ: Ամեն անգամ, երբ կառավարությանը կամ որևէ մեկին տալիս ենք մեր պատասխանատվությունը, մենք կորցնում

ենք ազատությունը: Չկա ավելի մեծ նվեր, քան ազատությունը:

Որպեսզի ժողովրդավարությունը լինի արդյունավետ, մարդիկ պետք է հակված լինեն քաղաքացիական առաքինության և ունենան որոշակի բարոյական չափանիշներ: 1960-ականներից ի վեր Միացյալ Նահանգները նմանվել է հիվանդի, որը չի կարողանում բացահայտել իր ցավի պատճառը: Պարամարքսիստական գաղափարները խորապես տնկվել են ամերիկյան հասարակության մեջ և, ըստ էության, անարգել տարածվում են:

1960-ականների խռովությունից հետո հեղափոխություն պահանջող ապստամբները սկսեցին մուտք գործել ակադեմիական շրջանակներ: Նրանք ներթափանցեցին և ապականեցին այն կազմակերպությունները, որոնք վճռորոշ են արևմտյան հասարակության բարոյականության պահպանման համար, այդ թվում՝ եկեղեցին, կառավարությունը, կրթական համակարգը, օրենսդիր և դատական մարմինները, արվեստի աշխարհը, մեդիան և ՀԿ-ները:

1966 թվականին Կոլումբիայի համալսարանի սոցիոլոգների մի զույգ՝ «Ամերիկայի դեմոկրատ սոցիալիստներ» կազմակերպության անդամներ, ռազմավարական ծրագիր մշակեցին: Հիմնական հայեցակարգն էր փչացնել հանրային բարեկեցության համակարգը և նահանգներին հասցնել սնանկության: Նրանք գիտեին, որ կարող են սպառել պետական միջոցները՝ խրախուսելով մարդկանց զանգվածաբար դիմել նպաստների համար, քանի որ դրանք ստացող մարդիկ զգալիորեն գերազանցում էին հասանելի նպաստների չափաքանակը: Եթե հնարավոր լիներ նահանգներին հասցնել փլուզման եզրին, կառավարությունը կարող էր փրկել նրանց և բարեփոխել համակարգը՝ ձեռք բերելով ավելի շատ վերահսկողություն և վերածվելով սոցիալականացված համակարգի: Սա իրագործվեց Ազգային բարեկեցության կազմակերպության կողմից 1966-1975 թվականներին, և այդ ընթացքում նպաստառու միայնակ ծնողով ընտանիքների թիվը կտրուկ աճեց՝ 4.3 միլիոնից հասնելով 10.8 միլիոնի: Նյու Յորքում նպաստառուների թիվը 200,000-ից հասավ 1.1 միլիոնի տասը տարվա ընթացքում:

Միաժամանակ վերահսկողությունից սկսեց դուրս գալ ամերիկյան ընտանիքը: Ամուսնալուծությունները նույնպես կրկնապատկվեցին, և շատ դեպքերում երեխաները հայտնվեցին պետության խնամակալության ներքո: Որքան պահանջում ենք, որ կառավարությունը «վճարի» մեր երեխաների համար կամ «մատակարարի» և կերակրի նրանց, այնքան նրանք դառնում են սեփականությունը այն կառավարության, որը կերակրում և հոգ է տանում նրանց համար: Ծնողները հանձնեցին իրենց ամենամեծ պարզևը՝ երեխաներին, և նահանգները չափազանց երջանիկ էին, որ կկարողանան գաղափարապես ուսուցանել նրանց սոցիալիստների կողմից վերահսկվող ուսուցիչների միությունների միջոցով:

Կոմունիզմի քառասունհինգ նպատակներից մեկը Միացյալ Նահանգներում քաղաքական կուսակցություններից մեկերկուսին «գրավելն» է: Կոմունիստական կուսակցությունը տեսավ, որ դրան հնարավոր է հասնել փոքրաթիվ մարդկանց միջոցով, որոնց կօգտագործեն «ճգնաժամեր» և «հեղափոխություններ» ստեղծելու համար, իսկ այդ ամենը կարող է շահավետ լինել կուսակցության համար: Մի անգամ Լենինն ասել է, որ արհմիությունները կոմունիստական կուսակցությունից դեպի զանգվածներ փոխանցող գոտիներ են: Կոմունիստները հայտնաբերեցին, որ քանի դեռ վերահսկում էին արհմիությունները, վերահսկում էին ընտրաձայների մեծ քանակ: Քանի դեռ վերահսկում էին ընտրաձայները, նրանք կարող էին ստիպել ընտրված պաշտոնյաներին և օրենսդիրներին կատարել իրենց պատվերները: Հասարակ աշխատողները ստիպված էին միանալ արհմիություններին, որպեսզի պահպանեին իրենց հիմնական իրավունքները և շահերը, և դրանով դառնում էին արհմիությունների «զինվորները»: Ճիշտ նույն սկզբունքն է գործում կազմակերպված հանցավոր խմբավորումներին պաշտպանության վճարներ վճարելիս:

Չափազանց երկար ժամանակ շարքային քաղաքացին կմերժեր այս գաղափարները որպես դավադրություն կամ կհամարեր, «որ դրանք երբեք տեղի չեն ունենա»: Սա հիմնականում այն պատճառով է, որ մենք այնքան երկար ենք ապրել ազատության մեջ, որ այն սովորական ենք համարում, ինչպես ամուսնական զուգրնկերոջը: Մենք հանձնվում ենք աստիճանաբար և քիչ-քիչ, ուստի դա այնքան էլ նկատելի չէ: Սակայն վերջերս իրավիճակ-

ներն արագ են զարգանում, և մարդիկ սկսում են նկատել: Համավարակով պայմանավորված սահմանափակումները, պահանջները, գրաքննությունը, կառավարությունը՝ բացահայտ կամ մեզ դիմակներ հագցնելով, բացել են մեր աչքերը: Պատճառներից մեկը, որ դժվարանում ենք հավատալ, այն է, որ մենք չէինք մտածի նման չարիքի մասին, բայց համոզված ենք, որ այս ներգործությունները բնական չեն:

«Գիտենք, որ Աստուծոց ենք, և բոլոր աշխարհը չարության մեջ է կենում» (Ա Հովհաննես 5.19):

Ջորջ Վաշինգտոնի երդմնակալությունը տեղի ունեցավ Ներքին Մանհեթենի Դաշնային դահլիճում: Այնտեղ նա մարգարեական կերպով ասաց. «Երկնքի բարեհաճ ժպիտները երբեք չեն կարող ակնկալվել մի երկրի համար, որն արհամարհում է կարգապահության և իրավունքի հավիտենական կանոնները, որոնք սահմանել է հենց Երկինքը»:

Սեպտեմբերի 11-ին, երբ երկնաքերները վայր ընկան, հարվածի ալիքը «Գրաունդ Ջերո» կոչվող վայրից տարածվեց մինչև Դաշնային դահլիճ, և ճեղքեր բացվեցին այդ պատմական շենքի հիմքում:

Զուգադիպություն էր, թե՛ այլաբանական ճեղքի խորհրդապատկեր մեր պետության հիմքում:

Համաձայն Կոնգրեսի արձանագրության՝ 1789 թվականին նորաստեղծ կառավարության առաջին պաշտոնական գործողությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Կոնգրեսի՝ պատմության մեջ առաջին համատեղ նիստը նախագահի պաշտոնակատարի մասնակցությամբ սկսվեց երկիրն Աստծուն նվիրելու աղոթքով: Իսկ որտե՞ղ դա տեղի ունեցավ: Սուրբ Պողոսի մատուռում, որը գտնվում է «Գրաունդ Ջերոյի» անկյունային հատվածում: Այդ ժամանակ եկեղեցուն էր պատկանում այն հողատարածքը, որտեղ Երկվորյակ աշտարակներն ի վերջո խոյացան Նյու Յորքի երկնակամարում: Այսպիսով՝ մեր երկրի մեծ ողբերգություններից մեկը, որը, ինչպես գիտենք, իսկապես փոխեց կյանքը, տեղի ունեցավ հենց այն հողի վրա, որտեղ

երկիրը հիմնադրվեց և նվիրաբերվեց

Սուրբ Պողոսի մատուռի ներկայիս մուտքը հակադիր է այն մուտքին, որով ներս են մտել Վաշինգտոնն ու Կոնգրեսը: Նրանք անցել են այն կողմով, որն այժմ բակ է և բառացիորեն նայում է «Գրաունդ Ջերոյին»: Սա համապատասխանում է նրան, ինչը, Կանի համոզմամբ, աստվածաշնչյան սկզբունք է. «Երկրի նվիրաբերման հիմքը կդառնա նրա դատաստանի հիմքը»:

2001 թվականին փոքրիկ մատուռը կոչվեց «9/11– ի հրաշք», որովհետև այն «Գրաունդ Ջերոյի» շուրջը գտնվող շինություններից մեկն է, որ չի կործանվել: Ինչպես էր դա հնարավոր, երբ հարձակման հետևանքով փլվեցին շատ ավելի մեծ շենքեր: Որովհետև այն փրկվեց վնասից մոլաթզենու շնորհիվ, որն արմատախիլ եղավ այնպես, ինչպես արմատախիլ եղան Եսայի 9.10-ում նկարագրված մոլաթզենիները ահաբեկչական հարձակման ժամանակ: Ծառը կլանեց թռչող բեկորների մեծ մասը:

Եսայի 9-րդ գլխում ներկայացվում է Իսրայելի դատաստանը, որը վրա հասավ նրա մեղքի պատճառով.

«...որոնք ամբարտապանությամբ և սրտի հպարտությամբ ասում են. «Աղյուսներն ընկան, բայց մենք սրբաբաշք քարերով կշինենք, մոլաթզենիները կփրվեցին, բայց մենք նրանց տեղ եղանիներ կդնենք»:

– Եսայի 9.9-10

Իմ ընկերներից մեկը՝ ռաբբի Ջոնաթան Կանը, բազմիցս խոսել է մեր եկեղեցում և իր գրքերում գրել այն մասին, որ Աստված փորձում է արթնացնել մեզ և զգուշացնել, ինչպես ինքն է անվանում, «նախանշանների» միջոցով: Նա հավատում է, որ «Գրաունդ Ջերոյի» մոլաթզենին նշան էր նախանշան սիրող Աստծուց՝ զգուշացնելու և փրկելու Սուրբ Պողոսի եկեղեցին: Այն վայրում, որտեղ մեր երկիրը նվիրաբերվեց Աստծուն, երկվորյակ աշտարակները վայր ընկան, և մոլաթզենին կտրվեց՝ պաշտպանելով մեր երկրի նվիրաբերման վայրը: Իսկ ի՞նչ տնկեցին նրա

փոխարեն: Մայրի (եղևնի): Մայրին չապրեց: Ամեն անգամ, երբ մարդկությունը փորձում է տնկել իր ծրագրերը՝ Աստծո ծրագրերի փոխարեն, մենք դատապարտված ենք մահվան:

Ես շրջել եմ այս փոքրիկ, խաղաղ մատուռում և տեսել պատմական նկարները այն փրկարարների, որոնք ծառայում էին մարդկանց նրա պատերի ներսում: Այն դարձավ հույսի խորհրդանիշ, որ եթե մենք վերադառնանք և նվիրաբերվենք Աստծուն, կկարողանանք վերադարձնել մեր հոգևոր ժառանգությունը և մեր երկիրը:

Եթե այս ամենն իսկապես ավելի քան զուգադիպություն է, ինչպես հայտարարում է Կանը, այդ դեպքում՝ ինչո՞ւ: Ո՞րն է հնագույն Իսրայելի և ժամանակակից Ամերիկայի միջև համեմատության հիմքը: Կանը փաստարկում է, որ մարդկության պատմության մեջ միայն երկու պետություն է հիմնվել աստվածաշնչյան սկզբունքների վրա և հատկապես նվիրաբերվել Սուրբ Աստվածաշնչի Աստծուն՝ Իսրայելը և մենք:

Հետաքրքիր է, որ Քովիդ-ի մարտահրավերների և «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման անկարգությունների ու «Անտիֆա» հակառասիստական շարժման խռովությունների ժամանակ 2020 թվականի հունիսին նախագահ Դոնալդ Թրամփը Աստվածաշունչը պահեց ձեռքում և հայտարարեց, որ հավատքը կանցկացնի մեզ այս անկարգությունների միջով: Այն բանից հետո, երբ գիշերը ցուցարարները հրկիզեցին եկեղեցու շենքը, նա կանգնեց Վաշինգտոնի (Կոլումբիայի շրջան) Սուրբ Հովհաննես եկեղեցու առջև և նշեց, որ եկեղեցին հրդեհվել է նկուղում, և որ Լինքոլնի հուշահամալիրը և Երկրորդ համաշխարհային պատերազմի հուշահամալիրը պղծել են փողոցային որմնանկարներով: Նա նաև խոսեց բողոքող ամբոխի կողմից մահու չափ ծեծի ենթարկված մի մարդու և սևամորթ դաշնային սպայի՝ Պատրիկ Անդերվուի մահվան մասին: «Սրանք բողոքի խաղաղ գործողություններ չեն: Սրանք ներքին ահաբեկչության գործողություններ են: Անմեղ կյանք կործանելը և անմեղ արյուն թափելը վիրավորանք են մարդկությանը և հանցանք Աստծո դեմ», - ասաց նա: Թրամփը երդվեց վերականգնել օրենքի գերակայությունը և պաշտպանել ձեռնարկատերերին, որոնք տուժել են թալանի հետևանքով:

Նախագահն արժանացավ բուռն քննադատության, որը հարուցվեց մեդիայի և նույնիսկ Եպիսկոպոսական եկեղեցու կողմից: Վաշինգտոնի Եպիսկոպոսական թեմի եպիսկոպոս Վերապատվելի Մարիան Բուդեն ասաց, որ Թրամփը «վերցրեց մեր ավանդույթի համար սուրբ խորհրդանիշները և կանգնեց աղոթքի տան առջև՝ լի այն սպասումով, որ դա կլինի տոնական պահ»: Սպիտակ տան մամուլի քարտուղար Քեյլի Մաքինանին ասաց, որ նախագահը ցանկանում էր ուղարկել «շատ հզոր ուղերձ այն մասին, որ մեզ չեն հաղթի թալանը, խռովությունը, հրդեհները», և համեմատեց Թրամփի այցը Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի քայլի հետ, երբ վերջինս մեկնեց ռմբակոծման վայր՝ զննելու այն մասը, որ առաջացել էր լոնդոնյան կայծակնային ռմբակոծությունից Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

Անկեղծ ասած՝ սա հենց այն մոտեցումն է, որ, իմ կարծիքով, որդեգրած կլինեին մեր երկրի հիմնադիրները, այդ թվում՝ Վաշինգտոնը, որոնք հաճախակի հանդիպում էին եկեղեցիներում: Սակայն այսօրվա մթնոլորտում սա արժանացավ ոստիկանության և նախագահի հասցեին հնչող քննադատությանը և ոստիկանության բյուջեն կրճատելու և նախագահի նկատմամբ պաշտոնանկության գործընթաց հարուցելու ճիչերին, որոնք փաստացի հնչեցին հոգևորականների կողմից: Մեզնից շատերը ցնցված են կառավարություններից և նաև այն եկեղեցիներից, որոնք ընդունում են հակաաստվածաշնչյան գաղափարախոսությունները և օրակարգերը, անմեղների նկատմամբ բռնությունը, արհեստական վիժեցումը և ԼԳՏԲ մշակույթը: Հիսուսը զգուշացրեց, որ եթե գուլ լինենք, կփսխի մեզ Իր բերանից: Հարկ չկա, որ եկեղեցիները զբաղվեն քաղաքականությամբ, բայց բարոյականությունը պարտադիր է, և հակաաստվածային գործողությունների բացահայտումը հիմնարար է հավատքի համար:

Երբեմն եկեղեցիները շփոթվում են մշակութային փոթորիկների մեջ կողմնորոշվելիս և իրական պատասխաններ որոնելիս: Շատ հովիվներ բարի մտադրություններով հավատացել են «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման խոսույթին՝ առանց քննելու շարժման կայքը, որում հստակ շարադրված են նրա նպատակները՝ կազմաքանդել լիարժեք ընտանիքը և առաջ քաշել

կառավարության մարքսիստական համակարգը, ինչպես հստակ հայտարարել են երեք հիմնադիրներից երկուսը, որոնք նույնասեռական են: Ինքս բախվելով այս որոշումներին՝ ուսումնասիրեցի նրանց կայքը, և ականհայտ էր, որ դա ծրագիր էր՝ ուղղված հավատքի և ընտանիքի խաթարմանը և մարքսիզմի տարածմանը: Դա բացահայտորեն տեղադրված էր նրանց կայքում, բայց հովիվները, առանց հիմքերը ստուգելու, միացան մարքսիստական գաղափարախոսության բանակին, որի նպատակն է քանդել բոլոր ազգությունների ընտանիքները: Ես խրախուսում եմ այն, որ հովիվները ցանկացան կանգնել սևամորթ համայնքի կողքին, բայց սա լիովին հակառակ էր օգնությանը: Լիարժեք ընտանիքը պատասխան է, ոչ թե խնդիր: Այս նույն եկեղեցիները շատ քիչ բան են արել իրենց անդամների մեջ աստվածաշնչյան Թագավորության աշխարհայացք ձևավորելու համար, և էլ ավելի խճճելով իրավիճակը՝ նրանք կազմել են ծրագրեր՝ հիմնվելով քարոզչության, ոչ թե փաստերի վրա, այն փաստերի, որոնք հայտնվել են «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման կայքում և այլ մեդիա հարթակներում:

2015 թվականին հրապարակված հարցազրույցներից մեկում «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման երեք համահիմնադիրներից մեկը հայտարարեց, որ ինքը և ևս մեկ համահիմնադիր կրթված մարքսիստներ են: Համահիմնադիր Պատրիս Կուլորսը «Կոսմո» ամսագրին պատմել է, որ Ասատա Շակուրը առաջնորդներից մեկն է, ով ոգեշնչել է իրեն: Շակուրի իսկական անունը Ջոան Չեզիմար է, և նա հետախուզվում է ՀԴԲ-ի կողմից՝ որպես ներքին ահաբեկիչ ոստիկանի սպանության, բանտից փախչելու և Կուբայում տասնամյակներ շարունակ թաքնվելու համար: Նախքան հանրային կերպարանափոխումը «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման կայքը հաստատում էր, որ «նպատակ է նույնասեռականների ցանցի ստեղծմանը և դեմ է հետերոնորմատիվ մտածողության անառարկելի պահպանմանը» (եթե ձեզ հետաքրքիր է, հետերոնորմատիվ նշանակում է «հիմնված լինել այն վերաբերմունքի վրա, որ հետերոսեքսուալությունը սեռականության միակ բնականոն և բնական արտահայտությունն է»): Նրանք չեն ընդունում, որ ընտանիքում բնականոն է հայր և մայր ունենալը: Կազմակերպությունը խոստանում է աշխատանք

կատարել՝ վերացնելու ցիսգենդերային արտոնությունները (ցիսգենդեր համարվում է այն մարդը, որի գենդերային ինքնությունը և ծննդյան ժամանակ վերագրված սեռը նույնն են): Այս ամենը ձախական կուսակցությունների օրենսգիրքն է հակաընտանեկան ծրագրի համար: «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման համահիմնադիրն ասել է. «Մենք խախտում ենք Արևմուտքի սահմանած լիարժեք ընտանիքի կառուցվածքի պահանջը»: Միթե սա այն է, ինչին հովիվներն աջակցում են: Կամ ավելին, մի՞թե Աստծո Խոսքն աջակցում է դրան:

Խոշոր ընկերությունները միլիարդներ են ներդրել այս կազմակերպության մեջ, սակայն ոչ մի սևամորթ համայնք հավանաբար երբեք չի տեսնի այդ միջոցների օգուտը: Համոզված եղեք, որ ամբողջ աշխարհում համախմբվող մարքսիստները կլինեն միակ բարերարները: Հովիվների աջակցությունն Ավետարանի տարածման գործում ավելի հեռու կգնար, եթե իրենց տեղական համայնքներում ստեղծեին ուժեղ ծրագրեր, որոնք կսովորեցնեին մարդկանց զարգացնել անհրաժեշտ հմտություններ հաջողության հասնելու համար, մինչդեռ ֆինանսավորելով այնպիսի կազմակերպությունների, ինչպիսին «Սևամորթների կյանքը կարևոր է» կազմակերպությունն է՝ վերջին հաշվով նրանք հարստացնում են մարքսիստական հիմնադիրներին, այլ ոչ թե օգնում այն երեխաներին, որոնք տառապում են իրենց համայնքներում: Ցավոք, փոքր բիզնեսի հազարավոր ձեռնարկություններ ոչնչացվեցին «Սևամորթների կյանքը կարևոր է» շարժման անկարգությունների և «Անտիֆա» հակառասիստական շարժման խռովությունների ժամանակ: Սա հենց այն էր, ինչ որդեգրել էին մարքսիստները՝ բաժանել և քանդել, այնուհետև թալանել:

Երբ յոթ սարերից մեկ բնագավառ առանձնապես չի կատարում իր դերը, մեկ այլ սար ոտք է դնում այդ բնագավառ և պետք է բարձրանա, որպեսզի լրացնի բարձիթողի վիճակը: Երբ ծնողները չեն ստանձնում իրենց պատասխանատվությունը, հրաժարվում են դրանից՝ հօգուտ կառավարության: Երբ եկեղեցիները ոտքի չեն կանգնում աստվածաշնչյան ճշմարտության համար և հրապուրվում են ցուցադրական առաքինությամբ՝ Աստծո Թագավորության փոխարեն, Բարի լուրը չի քարոզվում, և կյանքերը չեն վերափոխվում: Եվ նույնքան սխալ է այն, երբ մարդկանց առաջ-

Երբ ծնողները չեն ստանձնում իրենց պատասխանատվությունը, հրաժարվում են դրանից՝ հոգուտ կառավարության: Երբ եկեղեցիները ոտքի չեն կանգնում աստվածաշնչյան ճշմարտության համար և հրապուրվում են ցուցադրական առաքինությամբ՝ Աստծո Թագավորության փոխարեն, Բարի լուրը չի քարոզվում, և կյանքերը չեն վերափոխվում:

Նորդում են ստի և մոլորության մեջ, որովհետև դրանք մշակութային առումով հանրաճանաչ են, եթե նույնիսկ մտադրությունը կրոնական ազատությունները լռեցնելն է: Մի սխալվեք, մարքսիզմը մշտապես թշնամի է եղել Հիսուս Բրիստոսի ճշմարիտ Ավետարանին:

Աստծո Թագավորությունը հիմնված է արդարության վրա: Աստված արդար է, և Հիսուսը հրաշալի կերպով հավասարեցրեց բոլորին: Չկան ո՛չ հրեա, ո՛չ հույն, ո՛չ տղամարդ, ո՛չ կին... կամ որևէ այլ ազգություն, որ ավե-

լի բարձր դիրք զբաղեցնի Թագավորության մեջ: Հավասարությունը հիմնարար է Թագավորության համար: Կա միայն երկու թագավորություն: Մենք կամ Հիսուսի հետ ենք, կամ Նրան հակառակ: Մեկը հավաքում է, մյուսը ցրում: Բոլոր ազգությունները սիրող Հայր Աստծո արտահայտումներն են, և Նա տվել է մեզ Իր հրաշագեղ արտահայտումները մեր եզակիության մեջ: Մենք չպետք է բաժանվենք: Մարդիկ մարդիկ են, և բոլորս ունենք նույն կարիքները՝ անկախ մաշկի գույնից: Հավասարության մասին օրենքը և նմանատիպ օրենսդրություններ փորձում են մաշկի գույնը հավասարեցնել մեղքին: Սևամորթ համայնքի համար վիրավորանք է, որ չարագործները փորձում են քաղաքացիական իրավունքների համար պայքարը շահարկել ԼԳԲՏՔ իրավունքների պայքարով: Ցավոք, կան մարդիկ, որոնք ընդունում են մեղավոր սեռական վարքագիծը և օգտագործում են ցանկացածի, ում կարող են, որպեսզի առաջ տանեն իրենց օրակարգը և հարկադրեն Աստվածաշնչին հավատացող մարդկանց վարձել տրանսգենդերների և նույնասեռականների իրենց ծառայության մեջ:

Մեր պայքարը պետք է լինի հանուն Աստծո Խոսքի ճշմար-

տության և Նրա հաստատած կանոնների, որոնք վերաբերում են հավասարությանը, ազատությանը և ընտանիքին: Մեղիան և մեր դատարանները խճճել և կարծրացրել են արդարադատությունը: Մարդիկ կորցրել են վստահությունը մեղիայի կամ դատարանների հանդեպ, որոնք պետք է որոշումներ կայացնեն օրենքի անունից և կանգնեն ճշմարտության կամ հավասարության կողքին: Դիսնեյի կերպարներում չարագործները փառաբանվում և արդարացվում են որպես «չհասկացվածներ»: Այլևս չկա ճիշտ ընդդեմ սխալի կամ ճշմարտություն ընդդեմ ստի: Այսպես երեխաները շփոթվում են՝ չիմանալով, թե ինչպես ապրեն կյանքը, և թե արդյոք կան բացարձակ արժեքներ: Նրանք մերժում են Աստծո Խոսքը, որովհետև նրանց սովորեցրել են այդպես անել, քանի որ այն իսկապես առաջարկում է արժեքներ, որոնք անհաստատ չեն: Դու չես կարող գնալ քո ճանապարհներով կամ սահմանել քո կանոնները և հետևել Քրիստոսին: Չարագործի հենարանն այն է, թե ինչպես է մեղիան մեր մշակույթը տանում փոխզիջումների և անօրինության: Եվ այն հովիվները, որոնք հստակորեն չեն պաշտպանում Աստծո ճշմարտության տեսակետը, անում են նույնը:

Հիշեք, որ Ամերիկայի նվիրաբերման ժամանակ.

Վաշինգտոնի զգուշացումն էր, որ եթե մենք սկսենք հեռանալ Աստծուց, Նա կհեռացնի Իր օրհնությունները, Իր բարգավաճումը և Իր պաշտպանությունը մեր երկրից: Վաշինգտոնի ելույթից հետո կառավարությունը, Ներկայացուցիչների պալատը, Սենատը և Ամերիկայի առաջին նախագահը ոտքով գնացին Սուրբ Պողոսի մատուռ: Ոչ ոք հստակ չգիտի, թե ինչ ասվեց ներսում, բայց մենք գիտենք, որ ամբողջ կառավարությունը ծնկած աղոթեց և նվիրաբերեց այս երկիրն Աստծուն: Մատուռում՝ Վաշինգտոնի նստարանի վերևում, կա մի հուշատախտակ հետևյալ խոսքերով. *«Ամենակարող Աստված, ջերմեռանդ աղոթում ենք, որ Սուրբ պաշտպանությամբ պահես Միացյալ Նահանգները»:*

Ամերիկայի առաջին նախագահական երդմնակալությունը՝ նախագահ Ջորջ Վաշինգտոնի երդմնակալությունը, ներառում էր յոթ հստակ կրոնական գործողություն, այդ թվում՝ (1) Աստվածաշնչի գործածում երդումը տալու համար, (2) երդման հոգևոր քննյթի հաստատում՝ ավելացնելով «Թող օգնի ինձ Աստված»

աղոթքը, (3) երդմնակալության աղոթքներ՝ արված նախագահի կողմից, (4) կրոնական բովանդակություն երդմնակալության ելույթում, (5) քաղաքացիական առաջնորդների կողմից մարդկանց ուղղված աղոթելու կամ Աստծուց գոհանալու կոչ, (6) երդմնակալության պաշտամունքային ծառայություններ, որոնց զանգվածաբար մասնակցում է Կոնգրեսը՝ որպես Կոնգրեսի գործունեության պաշտոնական մաս, և (7) հոգևորականների առաջնորդությամբ երդմնակալության աղոթքներ:

Մենք շատ ենք հեռացել այս սկզբունքներից, և որքան հեռացել ենք Աստծուց, այնքան ամեն բան ավելի է փոտել: *«Մի՛ խաբվեք. Աստված չի ծաղրվի: Որովհետև ինչ որ մարդ սերմի, այն էլ կհնձի...»* (Գաղատացիների 6.7, 8): Սա վերաբերում է նաև ազգերին: Աստված չի կարող օրհնել մեզ ավելի, քան կարող էր օրհնել Իսրայելին, երբ նա ընտրեց մերժել Աստծուն և ընդունել կուռքերի պաշտամունքը: Մենք պետք է աղոթենք Ամերիկայի համար և գործենք:

15

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ



«Ամերիկայում օրենքն է թագավոր»:

– Թոմաս Փեյն

Պողոս առաքյալը խնդրանքով դիմեց իր կառավարությանը՝ պահանջելով իր իրավունքները որպես Հռոմի քաղաքացի, երբ պատրաստվում էին մտրակելու իրեն: «Օրինական է, որ դուք մտրակեք Հռոմի քաղաքացու, որը մեղավոր չի ճանաչվել»: Երբ իշխանավորները հասկացան, որ նա իրավունքներ ունեցող քաղաքացի է, անմիջապես հետ քաշվեցին: Չափազանց երկար ժամանակ մենք ուրիշներին ենք վստահել մեր կյանքի ընթացքը և իրավունքները: Հաճույքը և հարմարավետությունը կարող են գողանալ չափանիշներն ու բարոյականությունը: Մենք պետք է իմանանք մեր իրավունքները որպես Աստծո Թագավորության և մեր երկրի քաղաքացիներ և բարձրաձայնենք: Որպես Ամերիկայի քաղաքացի՝ մենք պետք է օգտագործենք մեր ընտրաձայնի և խնդրագիր ներկայացնելու իրավունքը և կապ հաստատենք նահանգային օրենսդիրների հետ, քանի որ նրանք են օրենքներ ընդունում մեր նահանգում և տեղական կառավարման մարմիններում: Սրանք մեր քաղաքացիական իրավունքներն են: Մի օրենսդիր նշել էր. «Մենք չենք վախենում վարձատրվող լոբբիստներից կամ նույնիսկ շարքային քաղաքացիներից, բայց մեծապես վախենում ենք մայրարջերից, իսկ տատիկ-արջերն էլ ավելի կատաղի են»:

Որպես հավատացյալ՝ ձեր քաղաքացիությունը Աստծո Թագավորությունում է: Թեև մենք այս աշխարհից չենք, բայց դրա մեջ ենք, և այն կառավարման համակարգը, որի մեջ ապրում ենք, իսկապես ազդեցություն ունի: Ես շրջել եմ աշխարհում և նկատել կոմունիստական երկրների և բռնապետությունների փողոցներով քարշ եկող մարդկանց դատարկ, սառը և անկենդան դեմքերը: Մարդիկ ունեն քիչ հույս և չունեն երազանքներ, ինչն արտացոլված է նրանց դատարկ դեմքերին:

Մենք ծառայում էինք մի երկրում, որը հինգ տարով բանտարկել էր մի քանի հովվի: Նրանք ազատ արձակվեցին և ի վերջո հնարավորություն ստացան անցկացնելու հավաքույթ և սովորեցնելու մարդկանց ընտանիքի ու ֆինանսների մասին: Աստվածաշունչը թույլ տրվեց օգտագործել որպես տեղեկատվության աղբյուր դասընթացների համար: Ի նշան երախտագիտության՝ ուսուցումներն ուղեկցվեցին երկիրը ներկայացնող լուսային պատկերներով՝ հավաստիացնելով կառավարությանը, որ մեծ պատիվ է ունենալ քրիստոսակենտրոն հավաքույթներ անցկացնելու հնարավորություն: Մեծ դահլիճը լցվեց հազարավոր երիտասարդներով, որոնք ջերմեռանդորեն երկրպագում էին Աստծուն: Երկրպագելու ազատությունը մի միջավայրում, որտեղ նրանց երբեք չէր թույլատրվել դա անել, առաջացրեց այնպիսի արձագանք, ինչպիսին ես երբեք չէի տեսել:

Նրանք, ովքեր եկել են ցավից ու տառապանքից, գնահատում են ազատությունը: Կառավարությունները կարող են փորձել ճնշել և նույնիսկ տանջել եկեղեցու անդամներին, բայց չեն կարող վերացնել մարդկային հոգին, երբ Աստծո Թագավորությունը ներխուժում է տղամարդկանց, կանանց և երեխաների սրտերը: *«Արդ այն ազգությունով, որ Քրիստոսը մեզ ազգայեց, հասարակ կացեք և դարձյալ ծառայության լծի տակ մի՛ մտնեք»* (Գաղատացիների 5.1):

Աստծո Թագավորությունը և օրենքները գերազանցում են բոլոր կառավարման համակարգերին: Սուրբ գիրքը հստակ ասում է, որ Աստված կարգադրում է մեզ հնազանդվել երկրի օրենքներին, աղոթել առաջնորդների համար և «կայսրինը կայսրին» տալ: Հստակ է նաև այն, որ Աստծունը Աստծուն պետք է տանք և թույլ չտանք, որ կայսրը կամ կառավարությունը վերցնի այն,

ինչ Աստծունն է: Եվ այն, ինչ չի պատկանում կառավարությանը, ձեր երկրպագությունն է, այլապես հարկադրված եք ոտնահարելու ձեր խիղճը կամ բարոյական ու կրոնական համոզմունքները, որոնք հիմնված են Սուրբ գրքի վրա: Մենք նույնպես չպետք է թույլ տանք լռեցնել մեր ձայները, երբ խոսքը վերաբերում է Աստծո Թագավորության տարածմանը: Սա հստակ լուսաբանվում է այն պատմության մեջ, երբ աշակերտները մերժեցին կառավարական պահանջները՝ դադարեցնելու Ավետարանի քարոզչությունը: Պետրոսին և մյուս առաքյալներին բերեցին Սինեդրիոնի (խորհրդի) առջև:

«Եվ ասաց. «24՞ որ պատվիրելով պատվիրեցինք ձեզ, որ չսովորեցնեք այդ անունով, և ահա Երուսաղեմը լցրիք ձեր ուսմունքով և կամենում եք այն մարդու արյունը մեզ վրա բերել: Պետրոսը և առաքյալները պատասխանելով ասացին. «Աստծուն պետք է ավելի հնազանդվել, քան թե մարդկանց»:

– Գործք առաքելոց 5.28,29

Աստծուն պետք է ավելի հնազանդվել, քան թե մարդկանց: Պողոսը նույն համարձակությունն ուներ, երբ հռչակեց.

«Բայց ինձ համար ոչինչ բան է, որ ձեզնից դատվեմ կամ մարդկային դատաստանից. այլ ես իմ անձն էլ չեմ դատում: Որովհետև իմ անձի համար ես բան չգիտեմ, բայց սրանով չեմ արդարանում, որովհետև ինձ դատողը Տերն է»:

– Ա Կորնթացիների 4.3,4

Վերջին հաշվով, մենք կանգնելու ենք Աստծո գահի առջև և հաշիվ ենք տալու մեր կյանքի և ընտրությունների համար, և նույնն անելու է յուրա-

**Վերջին հաշվով,
մենք կանգնելու
ենք Աստծո գահի
առջև և հաշիվ ենք
տալու մեր կյանքի
և ընտրությունների
համար, և
նույնն անելու է
յուրաքանչյուր
բռնապետ, բռնակալ
և կառավարության
ղեկավար:**

քանչյուր բռնապետ, բռնակալ և կառավարության ղեկավար:

Մեր հիմնադիրները չէին նախատեսել, որ կոնգրեսական առաջնորդները կամ նախագահը կդառնան արհեստավարժ քաղաքական գործիչներ: Նրանք, ովքեր ծառայում էին, ժամանակ պետք է նվիրեին պետական ծառայությանը, իսկ հետո վերադառնային իրենց քաղաքացիական կյանքին՝ ապրելու իրենց ընդունած օրենքներով: Դժբախտաբար, քաղաքական գործիչները կառուցել են կարիերա՝ ընդունելով օրենքներ, որոնցից իրենք կարծես ազատված են: Ժամկետային սահմանափակումները երկար ժամանակ կծառայեն որպես լուծում՝ ապահովելու պետական ծառայողների հաշվետվողականությունը:

Նմանապես պետք է վերանայել քարոզարշավների ֆինանսավորումը, որպեսզի ամենաշատ գումար ունեցողները չլինեն միակ քաղաքական հավակնորդները: Բացի դրանից՝ շատ քաղաքական գործիչներ մեծ գումարներ են փոխառում մասնավոր անձանցից կամ որոշակի ծառայություններ են մատուցում իրենց քարոզարշավները ֆինանսավորելու համար: Սա առաջացնում է շահերի բախում և շատ հաճախ ուղղորդում է նրանց քվեարկությունը, ոչ թե նպաստում նրան, ինչը լավագույնն է Ամերիկայի հասարակության համար: Քաղաքական գործիչները գոհացնում են իրենց պարտապաններին և ներդրողներին ավելի, քան իրենց ընտրողներին: Այս կերպ Քաղաքական գործողությունների հանձնաժողովները, դոնորները և պարտքերը դառնում են պաշտոնյաների ընտրության վերահսկիչ գործոն: Փոխառում դառնում է փոխատուի ծառան: Լոբբիստները և կորպորացիաներն ուղղորդում են քվեարկությունները և գնում քվեներն ու օրենսդիրներին:

Լոբբիստները և անազնիվ անհատներն ու կառավարություններն օգտագործում են իրենց ազդեցությունը, որպեսզի զբաղեցնեն, գնեն կամ շանտաժի ենթարկեն այն թեկնածուներին, որոնք հայտնվում են փոխզիջումային իրավիճակներում՝ ներկա լինելով այնպիսի երեկոներում կամ հավաքույթներում, որոնք նպատակ ունեն ծուղակի մեջ գցելու քաղաքական գործիչներին: Հարկ չկա հեռու փնտրելու, քանի որ վերջին տարիների գլխավոր լուրերը լի են խայտառակ իրադարձություններով և բռնություններով՝ սկսած Էփշտեյնից և նրա պիղծ կապերից ու սեռական թրաֆի-

քինգի կղզուց մինչև դեմոկրատ կոնգրեսական Էրիկ Սվոլվելի գործակցությունը Չինաստանի կոմունիստական կուսակցության չինացի լրտեսի հետ: Մեր առաջնորդները, որոնցից շատերը փոխզիջման են գնացել, հրաժարվել են ամերիկյան շահերից հոգուտ իրենց կյանքի, հիմնադրամների և այլ երկրների: Իսկ ազնիվները ենթարկվում են այնպիսի դաժան հարձակման, որ բազմաթիվ առաքինի մարդիկ ցանկանում են քիչ առնչություն ունենալ պետական ծառայության հետ: Մենք պետք է փոխենք սա, որպեսզի պաշտպանենք մեր օրինական համակարգը:

Վերջին մի քանի տարիներին կառավարության հանձնարարագրերն ու պահանջները հանրային ընդվզում են առաջացրել ամբողջ աշխարհում: Մենք խոսել ենք առաջնորդների հետ աշխարհով մեկ և ամեն անգամ լսում ենք հետևյալը. «Դուք զոնե Սահմանադրություն ունեք»: Բարեբախտաբար, ունենք: Շատ մեծ տարբերություն կա ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող երկրների և Ամերիկայի միջև, որը գոյություն ունի որպես Հանրապետություն և ունի Սահմանադրություն: Մենք պետք է իմանանք տարբերությունը և մեր իրավունքները, այլապես դրանք կվերցվեն մեզնից:

«Մենք՝ ժողովուրդը», պաշտպանված ենք Սահմանադրությամբ, և մեզ տրված են իրավունքներ, որոնք ավելի մեծ են, քան մեր նախագահը, Կոնգրեսը կամ պաշտոնյաները: Սա մեծամասնական սկզբունք չէ: Մենք պետք է արթնանանք և գիտակցենք, որ Սահմանադրությունը լուծարվելու վտանգի տակ է: Հանրաճանաչ «Վյու» զրույց-հաղորդման հաղորդավարները կոչ են արել հանել Սահմանադրությունը, նույն կարծիքն է արտահայտում «Ատլանտիկ»-ում տպագրված հոդվածը՝ «Իսկապես մենք Սահմանադրության կարիք ունենք»: Ես միանշանակ ասում եմ. «Այո, ունենք՝ բռնապետներից

«Իսկապես մենք Սահմանադրության կարիք ունենք»: Ես միանշանակ ասում եմ. «Այո, ունենք՝ բռնապետներից մեզ պաշտպանելու համար»: Առանց դրա որ կուսակցությունն էլ լինի իշխանության, նրա քվեները որոշիչ են: Իսկ դա վտանգավոր է, ինչպես արդեն ականատես ենք եղել:

**Վերականգնե՛ք
ոչ թե ամբոխի
գերիշխանությունը,
այլ օրենքի
գերակայությունը, և թույլ
մի՛ տվեք, որ մեդիայի
նենգությունները
շփոթեցնեն և խաբեն
մեր ժողովրդին, ինչպես
սատանան արեց Եդեմի
պարտեզում՝ գողանալով
ազատությունը և
փոխարինելով այն
բռնապետությամբ:**

մեզ պաշտպանելու համար»։ Առանց դրա որ կուսակցությունն էլ լինի իշխանության, նրա քվեները որոշիչ են։ Իսկ դա վտանգավոր է, ինչպես արդեն ականատես ենք եղել:

Համոզված եղեք, որ հասկանաք հետևյալը և սովորեցնեք այն ձեր երեխաներին: Վերականգնե՛ք ոչ թե ամբոխի գերիշխանությունը, այլ օրենքի գերակայությունը, և թույլ մի՛ տվեք, որ մեդիայի նենգությունները շփոթեցնեն և խաբեն մեր ժողովրդին, ինչպես սատանան արեց Եդեմի պարտեզում՝ գողանալով ազատությունը և փոխարինելով այն բռնապետությամբ:

Սահմանադրությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների գերագույն օրենքն է: Ըստ էության՝ այն ամենաերկար գոյատևած պետական հրովարտակն է աշխարհում: Սահմանադրությունը դիմակայել է ժամանակի փորձությանը, որովհետև այն կազմողները խելամտորեն տարանջատել են և հավասարակշռել կառավարական լիազորությունները՝ պաշտպանելու մեծամասնության կառավարման և փոքրամասնության իրավունքների, ազատության և հավասարության, ինչպես նաև դաշնային ու նահանգային կառավարությունների շահերը: Այս հիմնադիր փաստաթուղթը սահմանում է մեր կառավարության ազգային կառուցվածքը՝ իշխանության երեք ճյուղերի ստեղծումից մինչև իր 27 փոփոխությունները: Այն փաստը, որ հենց Սահմանադրությունն է ստեղծել ժողովրդի կառավարություն, ժողովրդի միջոցով և ժողովրդի համար, երևում է իր առաջին երկու բառերում՝ «Մենք՝ ժողովուրդը»:

Ի պաշտպանություն Սահմանադրության վավերացման՝ Ալեքսանդր Համիլթոնը «Ֆեդերալիստ» ամսագրի 33-րդ համարում գրել է.

«Բայց ասում են, որ Միության օրենքները պետք է լինեն երկրի ԳԵՐԱԳՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ: Բայց ինչ եզրակացության կարելի է հանգել սրանից, կամ ինչ նշանակություն կունենային այդ օրենքները, եթե չլինեին գերագույն: Ակնհայտ է, որ դրանք ոչ մի նշանակություն չէին ունենա: ՕՐԵՆՔԸ հենց եզրույթի իմաստով ենթադրում է գերակայություն: Այն կանոն է, որին պարտավոր են հետևել նրանք, ում այն վերագրվում է: Սա արդյունք է յուրաքանչյուր քաղաքական միավորման: Եթե անհատները մտնում են հասարակության կառուցվածքի մեջ, այդ հասարակության օրենքները պետք է լինեն նրանց վարքագծի գերագույն կարգավորիչը»:

Օրենքի գերակայությունը, որը Սահմանադրության անբաժանելի մասն է, այն առանցքային սկզբունքն է, որով բոլոր անձինք, հաստատությունները և կազմակերպությունները պատասխանատու են հրապարակայնորեն հայտարարված, հավասարապես պահպանվող, ինքնուրույնաբար որոշված և մարդու իրավունքների միջազգային սկզբունքների համապատասխանող օրենքների առջև: Օրենքի գերակայությունը, համաձայն իր սահմանադրության, սահմանափակում է կառավարության լիազորությունները՝ բռնապետությունը կանխելու և ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար: Նույնիսկ Միավորված ազգերի կազմակերպությունը ճանաչել է Օրենքի գերակայությունը և սահմանել այն գրեթե նույնականորեն.

Կառավարման սկզբունք, որով բոլոր անձինք, հաստատությունները և կազմակերպությունները՝ պետական և մասնավոր, այդ թվում հենց պետությունը, պատասխանատու են հրապարակայնորեն հայտարարված, հավասարապես պահպանվող, ինքնուրույնաբար որոշված և մարդու իրավունքների միջազգային նորմերին ու չափանիշներին համապատասխանող օրենքների առջև: Այն նույնպես պահանջում է միջոցներ՝ ապահովելու օրենքի գերակայության սկզբունքների, օրենքի առջև հավասարության, օրենքի առջև պատասխանատվության, օրենքի կիրառման արդարացիության, իշխանությունների տարանջատման, որոշումների կայացմանը մասնակցության,

իրավական հստակության, կամայականության խուսափման և ընթացակարգային ու իրավական թափանցիկության պահպանումը:

Սահմանադրությունը պատասխանատվություն է դրել դատարանների վրա՝ մեկնաբանելու Սահմանադրության նշանակությունը, ինչպես նաև Կոնգրեսի կողմից ընդունված ցանկացած օրենքի նշանակությունը: «Ֆեդերալիստ»-ի 78-րդ համարը հաստատում է, որ եթե Կոնգրեսի ընդունած որևէ օրենք հակասում է Սահմանադրությանը.

Սահմանադրությունը պետք է գերադասել կանոնադրությունից, ժողովրդի մտադրությունը՝ իր ներկայացուցիչների մտադրությունից: Այս եզրակացությունը ոչ մի ձևով չի ենթադրում դատական իշխանության գերակայություն օրենսդիր իշխանության նկատմամբ: Դա միայն ենթադրում էր, որ ժողովրդի իշխանությունը գերակա է երկուսի նկատմամբ էլ, և այն դեպքում, երբ օրենսդիր մարմնի կամքը, որը հայտարարված է իր կանոնադրության մեջ, հակադրվում է Սահմանադրությամբ հայտարարված ժողովրդի կամքին, դատավորները պետք է ղեկավարվեն ոչ թե առաջինով, այլ վերջինով:

Օրենքի գերակայության կարևորությունը թերևս լավագույնս արտացոլված է բոլոր դաշնային ծառայողների, այդ թվում՝ նախագահի, Գերագույն դատարանի դատավորների և Կոնգրեսի անդամների երդումներում: Համաձայն Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին բաժնի 8-րդ կետի (շեշտադրումն ավելացված է)՝

Նախքան իր պաշտոնի կատարմանն անցնելը նա տալիս է հետևյալ երդումը կամ հանդիսավոր հայտարարությունը. Ես հանդիսավոր կերպով երդվում եմ (կամ հայտարարում), որ հավատարմորեն կկատարեմ Միացյալ Նահանգների նախագահի պարտականությունները և իմ հնարավորության սահմաններում **կպահպանեմ, կպահեմ և կպաշտպանեմ Միացյալ Նահանգների Սահմանադրությունը:**

Նույն ձևով հետևյալ երդումն են տալիս Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի դատավորները.

Ես՝ _____, հանդիսավոր կերպով երդվում եմ (կամ հայտարարում), որ կիրականացնեմ արդարադատություն՝ անաչառորեն, և հավասար իրավունքներ կներկայացնեմ աղքատներին ու հարուստներին և **հավատարմորեն ու անաչառորեն կստանձնեմ և կկատարեմ բոլոր պարտականությունները, որոնք վերապահված են ինձ՝ որպես _____՝ համաձայն Միացյալ Նահանգների Սահմանադրության և օրենքների:** Թող օգնի ինձ Աստված:

Բացի նախագահից՝ այս երդումն այժմ տալիս եմ նաև բոլոր դաշնային ծառայողները.

Ես՝ _____, հանդիսավոր կերպով երդվում եմ (կամ հայտարարում), որ **կպահեմ և կպաշտպանեմ Միացյալ Նահանգների Սահմանադրությունը** բոլոր թշնամիներից՝ արտաքին և ներքին, կցուցաբերեմ ճշմարիտ հավատք և նվիրվածություն նրա հանդեպ, այս պարտավորությունը ստանձնում եմ ազատորեն՝ առանց որևէ մտավոր վերապահման կամ խուսափելու նպատակի, և բարեխղճորեն ու հավատարմորեն կկատարեմ այն պաշտոնի պարտականությունները, որը պատրաստվում եմ ստանձնելու: **Թող օգնի ինձ Աստված:**

Ամերիկյան կառավարման համակարգը մեծամասնության կառավարման համակարգ չէ: Օրենքի գերակայությունը պնդում է, որ հիմնարար սահմանադրական ազատությունները, մասնավորապես՝ կրոնի, խոսքի, հավասար վերաբերմունքի և օրենքի պատշաճ գործընթացի ազատությունները, համարվում են այնքան կարևոր, որ նույնիսկ մեծամասնությանը չպետք է թույլ տրվի փոխել դրանք: Ավելին՝ Օրենքի գերակայությունը մարմնավորում է այն սկզբունքը, որ բոլոր մարդիկ և հաստատությունները ենթակա և հաշվետու են օրենքին, որն արդարացիորեն կիրառվում և պահպանվում է: Ոչ ոք վեր չէ օրենքից, ո՛չ նախագահը, ո՛չ Գերագույն դատարանի դատավորները և ո՛չ էլ Կոնգրեսի անդամները:

Իրավունքներ՝ տրված Աստծուց.

Մենք համարում ենք, որ այս ճշմարտություններն ինքնին

ակնհայտ են, որ բոլոր Մարդիկ ստեղծված են հավասար, որ նրանք իրենց Արարչի կողմից օժտված են որոշակի անօտարելի Իրավունքներով, որոնցից են Կյանքը, Ազատությունը և Երջանկության ձգտումը. այս իրավունքներն ապահովելու համար մարդիկ ստեղծում են Կառավարություններ՝ իրենց արդար լիազորությունները բխեցնելով Կառավարողների Համաձայնությունից, ըստ որի՝ ամեն անգամ, երբ Կառավարման որևէ Ձև դառնում է կործանարար այս Նպատակների համար, Ժողովրդի Իրավունքն է փոխել կամ վերացնել այն և հաստատել նոր Կառավարություն՝ նրա Հիմքում դնելով այնպիսի Սկզբունքներ և նրա Լիազորությունները կազմակերպելով այնպիսի Ձևով, որ, ըստ իրենց, ամենայն հավանականությամբ կնպաստեն իրենց Անվտանգությանը և Երջանկությանը:

Սահմանադրությունը և Անկախության հռչակագիրը ներշնչված էին Աստծուց, քանի որ ներկայացնում էին նույն աստվածաշնչյան սկզբունքները.

«Որովհետև Տերն է Հոգին. որտեղ որ Տիրոջ Հոգին է, այնտեղ է ազատություն»:

– Բ Կորնթացիների 3.17

«Ուրեմն եթե Որդին ազատի ձեզ, հիրավի ազատ կլինեք»:

– Հովհաննես 8.36

«Արդ այն ազատությունով, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստատ կացեք և դարձյալ ծառայության լծի տակ մի՛ մտեք»:

– Գաղատացիների 5.1

«Նրանում և Նրան հավատարիվ մենք կարող ենք մոտենալ Աստծուն ազատությամբ և վստահությամբ»:

– Եփեսացիների 3.12 (NIV)

«Ես ազատության մեջ կքայլեմ, որովհետև Քո պատվիրանները խնդրեցի»:

– Սաղմոս 119.45 (NIV)

«Որովհետև դուք ազատության համար եք կանչվել, եղբայրներ. միայն թե ձեր ազատությունը պատճառ չտա մարմնին, այլ սիրով ծառայեք իրար»:

– Գաղատացիների 5.13

«Բայց հիմա, որ մեղքիցն ազատված և Աստծո ծառա եղած եք, ձեր պտուղն ունեք սրբանալու համար, և նրա վերջը հավիտենական կյանքն է»:

– Հռոմեացիների 6.22

«Ինչպես ազատներ և ոչ թե ազատությունն ինչպես չարության ծածկոց ունեցողներ. այլ ինչպես Աստծո ծառաներ»:

– Ա Պետրոս 2.16

«Ես ունեմ իրավունք՝ անելու ամեն բան, - ասում եք դուք, - բայց ամենն օգուտ չէ: Ես ունեմ իրավունք՝ անելու ամեն բան, բայց ես չպիտի որևէ բանի իշխանության տակ լինեմ»:

– Ա Կորնթացիների 6.12 (NIV)


Չի կարող լինել ազատություն առանց պատասխանատվության: Մենք պետք է միջամտենք, որպեսզի կարողանանք ազատ երկրպագել Աստծուն՝ առանց կառավարության կողմից ոտնձգությունների, և դաստիարակենք մեր երեխաներին՝ պաշտպանելով մեր ծնողական իրավունքները: Մենք չենք կարող մատների արանքով նայել մեր ազատությունների պահպանմանը կամ հանձնել այն նրանց, ովքեր չեն պատվում Աստծուն կամ Նրա Խոսքը: Աստծուց տրված մեր իրավունքն ու պարտականությունն է քվեարկել այն թեկնածուների օգտին, որոնք լավագույնս արտացոլում են Աստծո կամքն ու Նրա Խոսքը: Մենք պետք է իմանանք, թե ինչ է կատարվում, և լինենք տեղեկացված: Նայեք ընտրողների ուղեցույցներին և զանգեք կամ էլեկտրոնային նամակ ուղարկեք ձեր օրենսդիրներին: Նրանց հեշտությամբ

կարելի է գտնել senate.gov և house.gov կայքերում: Տեղական ինքնակառավարումը չափազանց կարևոր է, և ձեր նահանգում հարցերին կողմ կամ դեմ քվեարկելը կարող է որոշել, թե ինչպես է ապրում ձեր համայնքը, և ինչ սխալ վարքագիծ է արգելվում կամ թույլատրվում: Արդար և ազնիվ ընտրությունները վճռական են մեր հանրապետության համար: Ընտրատեղամասի կամավոր անդամ լինելը և իշխանություններին հսկողության տակ պահելը կրկին մեր պատասխանատվությունն են:

Մենք կանչված ենք աղոթելու մեր երկրի համար և բարձրաձայնելու արդարության համար: Մեր Սահմանադրությանն ուղղված սպառնալիքները երբեք ավելի մեծ չեն եղել: Ներգրավվե՞ք կառավարության մեջ: Առաջադրվե՞ք պաշտոնի համար կամ աջակցե՞ք նրան, ով առաջադրվում է: Տեղական ինքնակառավարումը և դպրոցական խորհուրդները չափազանց կարևոր են: Այն, ինչ տեղի է ունենում տեղական համայնքում, ազդում է երկրի վրա: Մենք պետք է դադարենք ազատությանը թեթև վերաբերվելուց և կրկին մշակույթով գրավենք այս ամենակարևոր սարը հավատքի և ընտանիքի սարի կողքին: Ժամանակն է, որ մեր լույսը լուսավորի Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս:

16

ՄԵԴԻԱ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ



Ամեն ինչ գործածված բառերի մեջ է: Բառերն ունեն ուժ, և դրանք կարող են արդարացնել, դատապարտել, մեղադրել և ներել: Դրանք կարող են գեղեցիկ պատկերներ նկարել, որպեսզի մարդասպանն արդար երևա, կամ սուրբը՝ խաբեբա: Դրանք կարելի է շրջել այնպես, որ տեղեկությունը խեղաթյուրվի, և ձևավորվեն համապատասխան կարծիքներ: Մեր հոգևոր հակառակորդի մարտավարություններից մեկն է գործածել բառերը անմեղներին մեղադրելու և մեղավորներին արդարացնելու, մարդկանց չարիքով վսասելու, այնուհետև Աստծուն մեղադրելու համար: Նպատակն է խճճել ճշմարտությունը և դժվարացնել «լավ տղաներին» «վատ տղաներից» տարբերելը: Եթե կա որևէ խումբ, որ զբաղվում է ապատեղեկատվությամբ, ստերով, քարոզչությամբ և ճշմարտությունը լռեցնելով, ապա դա մեդիան է:

Այսօր մեդիայի սարը միայնակ չէ, այն ներառում է արվեստի և ժամանցի սարը: Անցյալում արվեստը կարող էր գոյություն ունենալ առանց մեդիայի: Բայց այլևս այդպես չէ: Մեդիան այժմ այն մեքենան է, որով ճամփորդում են ժամանցի միջոցները: Ժամանցի քողով քաղաքական օրակարգերը և չեղարկման մշակույթը առաջ են մղվում հայտնի մարդկանց, մարզիկների և նույնիսկ կատակերգուների կողմից, իսկ կատակերգությունն այլևս ծիծա-

ղելի չէ: Լրագրությունն ավելի շատ նմանվել է ժամանցի, քան փաստերի վրա հիմնված հետաքննական լրագրության: Քովիդ-ի սահմանափակումները պատճառ դարձան, որ բեմական արվեստի շատ տեսակներ փակվեն կամ տեղափոխվեն համացանց ներկայացումների և դիտումների համար: Չեղարկման մշակույթը հրահրվել է արվեստի և մեդիայի համատեղ ջանքերով՝ վերահսկելով արդյունաբերությունն այնպիսի մենաշնորհով, ինչպիսին նորաձևությունն է:

Մեդիա արդյունաբերությունը ներառում է ոլորտների լայն բազմազանություն. գովազդ, հեռարձակում և ցանցեր, նորություններ, տպագրություն և հրատարակություն, թվային տեխնոլոգիաներ, ձայնագրություն և տեսաֆիլմեր, և յուրաքանչյուրն ունի իր հարակից ենթակառուցվածքը: Խոշորագույն ընկերություններն են՝ «Էփլ» (2.74 տրիլիոն դոլար), «Դիսնեյ» (238.21 միլիարդ դոլար), «Քոմքասթ» (213.75 միլիարդ դոլար), «Նեթֆլիքս» (152.77 միլիարդ դոլար), «Էյթի ընդ Թի» (140.11 միլիարդ դոլար) և «Սոնի» (114.10 միլիարդ դոլար):

Բացի այդ՝ համացանցի և սոցցանցերի հսկաները վերահսկում են տեղեկատվությունը, լուրերը և նույնիսկ այն, թե ինչ տեղեկություն է հայտնվում որոնման արդյունքում: «Գուգլը» գերիշխում է որոնման համակարգերի շուկայում՝ պահպանելով շուկայի 92.47 տոկոսը 2021 թվականի դրությամբ: Ցանկանում եք բացառել կարծիքները տեղեկատվության կամ գաղափարների վերաբերյալ: Վերահսկեք հասանելի տեղեկատվության հոսքը, և դուք կարող եք վերահսկել խոսույթը: Փայլուն մարքեթինգային արշավների միջոցով ուղեղի լվացումից մինչև հարվածներ նրանց դաստակներիին, ովքեր համաձայն չեն «իրենց» կանոններին, կանոններ, որոնք թույլ են տալիս ահաբեկչական խմբերին հրապարակումներ անել, բայց գրաքննում են ազատ աշխարհի մայրաքաղաքի գործող նախագահին. ահա այսպիսին է մեդիան, որը պատասխանատվություն է կրում այն խոսքերի համար, որոնցով տեղեկություն է հաղորդվում:

Խոսքերի միջոցով գովազդվում են արգանդում միլիոնավոր երեխաների սպանող այնպիսի կազմակերպություններ, ինչպի-

սին «Ընտանիքի պլանավորումն» է: Նրանք ստեղծում են բառեր, որոնք առաջացնում են հույզեր՝ զուգակցված մարդկային պատմությունների հետ, որպեսզի առաջ տանեն իրենց գեղեցիկ ձևակերպած արտահայտությունները, ինչպիսիք են արդարության իրավունքը, ներառականությունը, բազմազանությունը, բարությունը, սերը, և նոր իմաստ հաղորդեն դրանց: Մարգարետ Սենգերի «Ընտանիքի պլանավորում» գիրքն այնքան էլ լավ չէր վաճառվում, երբ այն կոչվում էր «Ծնելիության վերահսկման ամերիկյան լիգա» և ամլացման շարժման մականուն էր ստացել: Այն հանրային կերպարանափոխման կարիք ուներ, և ահա «Ընտանիքի պլանավորումը» դարձավ նրա նոր անունը: Նրանք, ովքեր ստրկության վաճառքով են զբաղված, սովորել են հորինել բառեր՝ ո՛չ միանշանակ ուղերձներ հաղորդելու համար:

Ամեն օր մենք ցնցվում ենք՝ հայտնաբերելով, որ տեղեկատվությունը, որը մեզ վստահեցրել էին, որ պարզապես դավադրության տեսություն է կամ ապատեղեկատվություն, վերջին հինգ տարիներին ոչ միայն վավերականություն է ստացել, այլև վավերական լինելու պատճառով ճնշվել է: Ովքեր փորձել են հանրային քննարկումներում, սոցցանցերում և այլ մեդիա ձևաչափերում տարածել այս «արգելված» տեղեկությունը, անվանվել են դավադրության տեսության տեսաբաններ կամ, առավել վատ, «ահաբեկիչներ», և նրանց հաշիվներն արգելափակվել են, իսկ տեղեկությունը՝ լռեցվել: Նույնիսկ «Ֆոքս Նյուզ»-ի պես թվացյալ պահպանողական լրատվամիջոցն ընդհատեց և հանկարծակի լռեցրեց սենատոր Նյուտ Գինզբրիչին՝ 2020 թվականի սեպտեմբերին ցանցում Ջորջ Սորոսի անունն օգտագործելու համար:

- Գինզբրիչը պնդում էր, որ միլիարդատեր առաջադեմ ակտիվիստ Սորոսի տրամադրած գումարներն օգնում էին ամռան ընթացքում անկարգություններ հրահրելու ԱՄՆ-ի բազմաթիվ քաղաքներում Մինեապոլիսում ոստիկանության կողմից Ջորջ Ֆլոյդի սպանությունից հետո:
- Առաջադեմ տարածքային դատախազները հակաոստիկանական են, հանցագործության կողմնակից և մեծ մասամբ ընտրված են Ջորջ Սորոսի փողերով: Եվ նրանք հիմնական

պատճառն են այն բռնության, որին մենք ականատես ենք լինում, որովհետև նրանք շարունակում են փողոց դուրս հանել դաժան հանցագործներին,- հայտարարեց Գինգրիչը չորեքշաբթի:

- Վստահ չեմ, որ Ջորջ Սորոսին պետք է ներգրավենք այս ամենում,- ասաց համահաղորդավարուհի Մելիսա Ֆրենսիսը:
- Ես պատրաստվում էի ասելու, որ ձեզ տրվում է վերջին խոսքը,- ասաց Ֆոլկները:
- Նա վճարել է դրա համար: Նկատի ունեմ, ինչո՞ւ մենք չենք կարող քննարկել այն փաստը, որ միլիոնավոր դոլարներ...- ասաց Գինգրիչը, նախքան համահաղորդավար Մարի Հարֆը կընդհատեր նրան:
- Ո՛չ, նա չի վճարել: Ես համաձայն եմ Մելիսայի հետ: Հարկ չկա, որ Ջորջ Սորոսին ներգրավենք այս գրույցի մեջ,- ասաց Հարֆը:
- Լավ, ուրեմն սա արգելված է,- պատասխանեց Գինգրիչը:
- Լավ, մենք պատրաստվում ենք առաջ շարժվելու,- ասաց Ֆոլկները:

«Ֆորքս»-ի այս շփոթությունը ահռելի բացասական արձագանք առաջացրեց, և ի վերջո Ֆոլկները ներողություն խնդրեց:

Ով վճարում է հաշիվները, նա էլ վերահսկում է խոսույթը, լինի դա դեղագործական ընկերություն, որի գովազդը ցուցադրվում է հաղորդման ընթացքում, թե միլիարդատերեր, որոնք ականա վճարում են, որպեսզի ձևավորեն մշակույթի, քաղաքականության, հասարակության այն պատկերը կամ իրենց այն կերպարը, որ ցանկանում են:

2016 թվականին Հիլարի Քլինթոնի նկատմամբ Թրամփի հաղթանակից առաջացած ցնցումը առաջացրեց Օբամայի վարչակազմի և «Ֆեյսբուքի» գլխավոր տնօրեն Մարկ Յուկերբերգի, ինչպես նաև այլ շուկայագետների բացասական արձագանքը, որոնք սկսեցին ստվերային արգելքներ դնել և գրաքննության ենթարկել համացանցային հաշիվները, որպեսզի վերահսկեն խոսույթը և վերջին հաշվով ազդեն 2020 թվականի ընտրութ-

յան արդյունքների վրա: Նրանք մեկ քայլ առաջ գնացին և նույնիսկ վճարեցին փոստով քվեատուփերի համար, ինչը նման էր փողերի լվացման սխեմային, և «արդար ընտրությունների» քողի տակ վարակեցին երկրի ընտրությունները: Ինչն է արդար այն ընտրություններում, որոնցում մուտքագրվել են ավելի շատ քվեաթերթիկներ, քան շրջաններում ապրող անձանց քանակն է: Չպետք է անհանգստանալ ճշմարտության համար, «արդար» բառն արդարացնում է խաբեությունը:

Երբ խոսքը վերաբերում էր «Ռուսական խաբեությանը», նրանք թաքցնում էին ցանկացած հաղորդագրություն, որը կասկածի տակ էր առնում այն, թե արդյոք Քլինթոնի քարոզարշավը հնարավոր մասնակցություն ունի քաղաքական շահի համար կեղտոտ գործերի թղթապանակի (դոսյե) ստեղծմանը: Այնուհետև նախկին կոնգրեսական Դևին Նունեսն առաջիններից էր, որ ստվերային արգելափակման ենթարկվեց «Ֆեյսբուքի» կողմից, քանի որ փորձեց բացահայտել ճշմարտությունը «Ռուսական խաբեության» և կեղտոտ գործերի թղթապանակի մասին՝ բացատրելով, որ այն գնված և վճարված էր, հորինված Քլինթոնի քարոզարշավի վարձկանների և հաքերների կողմից հանուն քաղաքական շահի:

Եվ հակառակը, երբ բացահայտվեց Հանթեր Բայդենի՝ դժոխքից եկած նոութբուքի պատմությունը, որը լցված էր սարսափելի սեռական տեսարաններով և «Ջո Բայդենի ու Հանթերի միջոցով բարեհաճություն ստացող օտարերկրյա կառավարությունների» միջև կապերով, այն արագորեն լռեցվեց հիմնական լրատվամիջոցների և սոցցանցերի կողմից: Յուրաքանչյուրը, ով փորձեց

**Ով վճարում է
հաշիվները, նա էլ
վերահսկում է խոսույթը,
լինի դա դեղագործական
ընկերություն, որի
գովազդը ցուցադրվում է
հաղորդման ընթացքում,
թե միլիարդատերեր,
որոնք ակամա
վճարում են, որպեսզի
ձևավորեն մշակույթի,
քաղաքականության,
հասարակության այն
պատկերը կամ իրենց
այն կերպարը, որ
ցանկանում են:**

տարածել տեղեկությունը, ենթարկվեց գրաքննության, այդ թվում՝ կոնգրեսական առաջնորդները և պահպանողական լրատվամիջոցները, և այս ամենը տեղի ունեցավ ընտրություններից անմիջապես առաջ: Այն պիտակավորվեց ապատեղեկատվություն, սակայն տեղեկությունը կար, պարզապես թույլտվություն էր պետք այն տարածելու համար: Գործադիր տնօրեն Դևին Նյունեսն ասաց. «Մենք այստեղ քարոզչական պատերազմի մեջ ենք, և դուք չեք կարող հաղթել ցանկացած տեսակի պատերազմում՝ լինի դա կինետիկ թե քարոզչական, առանց կապի համակարգերի»:

Հատուկ դատախազ Ջոն Դարիեմի վերջին հետազոտություններից արված բացահայտումները ցույց են տալիս, որ Քլինթոնի նախընտրական շտաբը հավաքել է տեղեկություններ Դոնալդ Թրամփի մասին նախքան ընտրությունները, այնուհետև Սպիտակ տանը նախագահ եղած ժամանակ, և թերևս մրցանակ պետք է շնորհել մեր կյանքում, եթե ոչ Ամերիկայի պատմության մեջ խոշորագույն հանցավոր նախաձեռնության համար: Սա, անշուշտ, ավելի կարևոր նորություն է, քան ռուսական գաղտնի համաձայնության պատմությունը, որը պարզվեց խաբեություն էր: Քլինթոնի նախընտրական շտաբը, վաճառված ոստիկանները և պետական պատվերով գործող մարդիկ փորփրում էին գործող նախագահի տվյալները, և, իհարկե, մեղիան նույնպես ահռելի կերպով մեղսակից էր խոսքերը համոզիչ դարձնելու գործում:

Իրավական վերահսկողական «Ջուդիշիալ Ուոչ» խումբը ձեռք է բերել փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ Դարիեմի հետաքննության մեջ հիշատակված անանուն տեխնոլոգիական փորձագետներն աշխատել են Պենտագոնի՝ Պաշտպանության նախարարության առաջադեմ հետազոտական նախագծերի գործակալությունում 2016-2021 թվականներին: Պաշտպանության նախարարության այդ ստորաբաժանումը պատասխանատու է նոր ռազմական տեխնոլոգիաների մշակման համար: Այս բացահայտումը նշանակում է, որ Քլինթոնի նախընտրական շտաբի կողմից վարձված պետական կապալառուն շարունակել է աշխատել կառավարության համար Թրամփի վարչակազմի կառավարման ամբողջ ընթացքում:

Այսքան շատ կազմակերպությունների և պետական կառույցների, քաղաքական գործիչների և մեդիայի գաղտնի համաձայնությունը ցնցող է և պետք է սարսուռ առաջացնի ցանկացած ազատասեր ամերիկացու մեջ: Սա զգալիորեն գերազանցում է Նիքսոնի նախընտրական շտաբի ուղղորդչության խայտառակությունը, սակայն հիմնական լրատվամիջոցները շարունակում են ճնշել և հանրությունից թաքցնել այս և ավելի շատ տեղեկություններ:

Առանց խոսքի ազատության չի կարող լինել ազատություն: Մենք կարող ենք ակնկալել նման գործունեություն կոմունիստական երկրներում և բանանային հանրապետություններում, բայց սա տեսնել Ամերիկայում: Դարհեմի հետաքննության արդյունքում ՀԴԲ-ի տասնյոթ գործակալներ հեռացվեցին աշխատանքից, և մենք շարունակում ենք տեսնել ավելի շատ մեղադրական եզրակացություններ, սակայն մեդիան սպանեց և թաղեց այսպիսի կարևոր պատմությունը և «շեղեց» շատերի դեմ արված մեղադրանքներն առանց որևէ ապացույցի:

«Նախագահի դեմ դավադրություն» ֆիլմը մանրամասն ներկայացնում է սարսափելի հարձակումը մեր գործող նախագահի դեմ: Ջոն Դարհեմը հետևել է գումարներին և բացահայտել վտանգավոր գործիչների Քլինթոնի փաստաբաններից, Մայքլ Սասմենին «Փերքինս և Քո» իրավաբանական ընկերությունից, «Ֆյուժն» հետազոտական ընկերությանը և շատ ուրիշների, որոնք ներգրավված են եղել Թրամփի նախընտրական շտաբ և Սպիտակ տուն ներթափանցելու գործում: Արդյո՞ք արդարատուությունը կհասնի նրանց, ովքեր վերջին հաշվով պատասխանատվություն են կրում: Եթե ոչ այս կյանքում, մյուսում՝ հաստատ:

Անձնական հարձակումները կոնգրեսական Նյունեսի և նրա ընտանիքի դեմ հանգեցրին այն բանին, որ Նյունեսը հեռացավ Կոնգրեսից և օգնեց ձևավորելու և ղեկավարելու այլընտրանքային սոցիալական մեդիա հարթակ («Թրուֆ սոշլ»)՝ տեղեկատվության խոշոր տեխնոլոգիական վերահսկողության դեմ պայքարելու համար: Ցավոք, մեդիան ի զորու է կործանելու մարդու կյանքը, կարծես այլևս չկա ոչինչ, որ արգելադրվի, և ճշմարտությունը կարևոր չէ դավաճանների համար:

**Պատերազմ է ընթանում,
բայց շատերը չգիտեն,
որ դա քարոզչական
պատերազմ է մեր
ազատությունները
գողանալու և դեպի Նոր
աշխարհակարգ մեզ
տանելու համար:**

Մենք տեղեկատվական պատերազմի մեջ ենք, և տեխնոլոգիայի զարգացումը վերածել է այն տեխնոպատերազմի: Պատերազմ է ընթանում, բայց շատերը չգիտեն, որ դա քարոզչական պատերազմ է մեր ազատությունները գողանալու և դեպի Նոր աշխարհակարգ մեզ տանելու համար: Աշխարհի մի անկյունում կրակ են վառում, որ-

պեսզի մեզ շեղեն մեր քթի տակ վառվող իրական կրակից: Ոսկոր են նետում հակառակ ուղղությամբ, որպեսզի մեր ուշադրությունն ուղղեն այլ բանի վրա: Վազելով դեպի այդ կողմ՝ ականայից տարածք ենք հանձնում նրանց, ովքեր երկար տարիներ ծրագիր են մշակել՝ գողանալու մեր խոսքի ազատությունը: Մեզ անընդհատ խայծում են քաղաքական գործիչներն ու մեդիան: Նրանց «Երբեք մի՛ վատնիր ճգնաժամը» կարգախոսը վերածվել է «Ստեղծիր ճգնաժամ, այնուհետև քամի՛ր դրանից ամբողջ արժեքավորը» կարգախոսի: Այս տեղեկատվական պատերազմը վարելու համար օգտագործվող քարոզչությունը և մարտավարությունը մանրամասն նկարագրված են Ջենիֆեր Կարնևալի դասախոսության մեջ հետևյալ կերպ.

Թեև պատերազմը հիմնականում ընթանում է մարտի դաշտում, մարդկանց մտքերում նույնպես մարտեր են ընթանում, որոնք հայտնի են «հոգեբանական պատերազմ» անվամբ: Պատերազմի դաժանությունը մեկ բան է, բայց ինչ կասեք պատերազմի մեկ այլ տեսակի մասին, որը չեք կարող նույնիսկ տեսնել: Սա է հոգեբանական պատերազմի գործողությունը:

«Հոգեբանական պատերազմը» լայն եզրույթ է, բայց փաստագրված բոլոր դեպքերում հայեցակարգը ենթադրում է գործողություններ, որոնք ուղղված են հակառակորդի բարոյականության կամ մտավոր բարեկեցության թուլացմանը: Նպատակը մարդուն կամ մարդկանց վախեցնելու

կամ համոզելու նպատակով մանիպուլյացիոն մարտավարություն գործածելն է: Այս գործընթացը սովորաբար իրականացվում է քարոզչության, գաղափարների կամ պնդումների միջոցով, որոնք կեղծ կամ չափազանցված են և միտումնավոր տարածվում են զանգվածների վրա ազդելու համար: Հոգեբանական պատերազմի նպատակը միտումնավոր քարոզչության օգտագործումն է մեկ ուրիշին հմտորեն ղեկավարելու և նրա կամքը կոտրելու համար առանց ֆիզիկական ուժի կիրառման:

Ավելի հստակ պատկերացում կազմելու համար նայենք մի քանի հնարքների, որոնք գործածվել են պատմության ընթացքում:

Հոգեբանական պատերազմն օգտագործում է վախը, որպեսզի խախտի հակառակորդի հոգեբանական բարեկեցությունը: Ահա մի քանի հնարքներ, որոնք կարող են գործածվել հոգեբանական անորոշություն, վախ և սարսափ տարածելու համար:

Լրատվությունը տեղեկատվության խոշոր աղբյուր է, որից կարող են օգտվել բոլորը: Անկախ նրանից՝ պետական է, թե մասնավոր, այն կարող է իր ընտրությամբ տարածել ցանկացած տեղեկություն: Լրատվության աղբյուր ներթափանցելով՝ բնակչությունը կարող է աղտոտվել անկայուն տեղեկատվությամբ:

Բռնության սպառնալիքները, ազատության սահմանափակումները և վերահսկողությունը կարող են օգտագործվել մարդկանց մեջ վախ սերմանելու համար: Դրանք կարող են լինել դատարկ սպառնալիքներ կամ սպառնալիքներ իրական մտադրությամբ: Այսպես թե այնպես, մարդկանց մի խմբին կամ խմբերին ուղղված սպառնալիքը ժամանակի ընթացքում կարող է հոգեբանական վնաս հասցնել նրանց՝ դնելով մշտական վախի, անհանգստության և սարսափի վիճակում...

Շեղող հնարք է, երբ որևէ խումբ հրապարակում է կեղծ տեղեկություն կամ իրականացնում է կեղծ ահաբեկչություն՝ մարդկանց մեջ վախ ներարկելու համար: Սակայն մեղքը բարդվում է մեկ այլ խմբի կամ կազմակերպության

վրա՝ զանգվածների նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու և կարծիքը փոխելու համար:

Թեև կարող է այդպես չթվալ, բայց ֆիլմերը, երաժշտությունը և գրքերը կարող են գործել որպես հոգեբանական պատերազմի գործիքներ: Մեդիայում հայտնված հաղորդագրությունները կարող են վերաշարադրել պատմությունը նոր տեսանկյունից և/կամ նոր գաղափարներ ներդնել բնակչության ուղեղներում:

Այն, թե ինչպես վարվեց մեդիան Քովիդ-19-ի ժամանակ՝ լռեցնելով և գրաքննության ենթարկելով ամբողջ աշխարհի բժիշկներին, մեկ այլ պատմություն է, որին անդրադարձանք առողջապահության և բժշկության սարին վերաբերող գլխում: Ավելորդ է ասել, որ այս նույն քարոզչական հնարքները կիրառվել են վախ առաջացնելու, շտապ հրամաններ տալու, ինչպես նաև ստեղծելու այնպիսի օրենքներ, որոնք ազդեցություն կունենան հետագա տարիներին:

Ինչ պատահեց ազատ խոսքի և իրական հետաքննական լրագրության հետ: Մեր գաղափարները, քննարկումները և նույնիսկ մեր հավատքը ենթարկվել են գրաքննության և ստվերային արգելափակման սոցցանցերի, «Յութուբ»-ի, «Ֆեյսբուք»-ի, «Թվիթեր»-ի և «Գուգլ»-ի որոնման համակարգերի կողմից: Ես գիտեմ: Ինքս «Յութուբ»-ի կողմից ենթարկվել եմ ստվերային արգելափակման և հարձակումների՝ հաշիվս հեռացնելու նախազգուշացմամբ: Ազատ խոսքի ճնշումն իրական է և իսկապես վտանգավոր:

Լրագրությունը փոխարինվել է տեղեկատվական զվարճանքով, ինչպես նկարագրեց «Սիէնէն»-ի նախկին ղեկավարը, որի հետևանքով նա հրաժարական տվեց:

«Սիէնէն»-ի 25-ամյա ղեկավարը միացավ «Վերիտաս» նախագծին որպես գործադիր տնօրեն: Անցյալ շաբաթ հրապարակված բացառիկ հարցազրույցի ժամանակ Պատրիկ Դևիսը բացատրեց, թե ինչու հեռացավ «Սիէնէն»-ից՝ իր ամբողջ ուժն ու կարողությունը ցանցին նվիրաբերելուց հետո: Նա «Վերիտաս» նախագծի հիմնադիր Ջեյմս Օ'Քիֆիին ասաց, որ հարցերի մի լայն շարան ստիպեց իրեն հեռանալ «Սիէնէն»-ից, բայց շեշտեց, որ ՀԴԲ-ի արշավանքը վերջին

քայլն էր «Վերիտաս» նախագծի լրագրողների տների դեմ: «Գիտե՞ք, թե ինչը ստիպեց ինձ գալ այստեղ: ՀԴԲ-ի արշավանքը,- բացատրեց Դևիսը,- ես մտածեցի, որ դա Սահմանադրության առաջին փոփոխության կիրառման ամենամեծ սահմանափակումն էր հավանաբար այս երկրի ամբողջ պատմության ընթացքում: Չլսված բան էր, որ ՀԴԲ-ն ներխուժեր լրագրողների տներ»:

Դևիսը, որ նախկինում աշխատել էր «Սիէնէն»-ի-ի վաշինգտոնյան բյուրոյում, ասում էր, որ լրագրությունը դարձել է ավելի շատ տեղեկատվական զվարճանք, քան իրական լրատվություն, և էթիկական հաղորդումներին վերադառնալու խիստ անհրաժեշտություն կա: Նա կարծում է, որ ժամանակն է վերադառնալու լրագրության հիմունքներին՝ միաժամանակ նշելով, որ լրատվամիջոցները լուրերը պետք է հաղորդեն առանց մեկնաբանության: Նա ավելացրեց. «Ամերիկացիներն իրենք կարող են որոշել, թե ինչ մտածեն»:

Մենք տեսել ենք, թե ինչպես է մեդիան վերահսկում և շահարկում տեղեկատվական հոսքը և ազդում քաղաքականության ու խոսքի ազատության վրա, բայց նույն լրատվականները նաև ունեն հնարավորություն՝ օգտագործելու հզոր ուղերձներ, որպեսզի բավարարեն մարդկանց ցանկությունները, ազդեն նրանց վրա այնպես, որ նրանք կայացնեն որոշումներ, կատարեն գնումներ, գործեն անբարոյական արարքներ և ուսումնասիրեն նոր գաղափարներ սեռականության, ընտանիքի և ամուսնության մասին, հատկապես ներգործություն ունենան երեխաների վրա:

Օրինակ՝ ամբողջ աշխարհում «արդարության իրավունքի» և ԼԳԲՏԲ+ համայնքի վերաբերյալ ուղերձների աճը հրահրվել է մեդիայի, քաղաքականության և կրթական հաստատությունների կողմից՝ բժշկական համայնքի հետ համատեղ, որի հետևանքով տազնապալի թվով երիտասարդներ այժմ նույնականացվում են որպես այլ գենդեր: Շատ եկեղեցիներ և միջեկեղեցական ծառայություններ նույնպես ընդունել են այս գաղափարախոսությունները՝ պնդելով, որ ներկայացնում են «Հիսուսի հանդուրժողականությունը»: Միթե Հիսուսը հանդուրժում էր մեղքը: Ո՛չ: Նա մա-

հացավ դրա համար և ասաց, որ գնանք և այլևս մեղք չգործենք:

Համաձայն նոր հետազոտության՝ երիտասարդների թիվը, որոնք նույնականացվել են որպես այլ գենոներ, այդ թվում՝ տրանս-գենոներ, ոչ երկբևեռ և գենոերքուր, կարող է զգալիորեն ավելի բարձր լինել, քան նախկինում կարծում էին: Պիտսբուրգի հետազոտողները պարզել են, որ մեկ տասնյակից ավելի ավագ դպրոցների 10 աշակերտից 1-ը նույնականացվել է որպես այլ գենոներ, ինչը հինգ անգամ գերազանցում է ներկայիս պաշտոնական թվերը: Ըստ Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի՝ գենոերային բազմազանությունը վերաբերում է այն մարդկանց, որոնց գենոերային ինքնությունը կամ գենոերային արտահայտումը տարբերվում է ծննդյան ժամանակ նրանց վերագրված սեռից:

Ինչո՞ւ են ավելի շատ երիտասարդներ հակված գենոերային բազմազանության: Այդ գաղափարախոսությունը նրանց մեջ ներարկել են մեծահասակները մեդիայի, բժշկության և կրթության միջոցով: Ազդեցության մի քանի սարեր միավորել են իրենց ուժերը համընդհանուր շարժման մեջ՝ ստեղծելով միասնական ձայն, որը բնակչությանը կորդի ընդունելու և ուսումնասիրելու գենոերային բազմազանությունը՝ հանկարծակիի բերելով ծնողներին, բազմաթիվ ընդդիմադիր մանկավարժների և բժշկական մասնագետների: Գործի դրվելով՝ մեդիայի մեքենան անպատվել է ցանկացած ձայն, որը համարձակվում էր կասկածի տակ առնել, թե արդյոք դա բխում է երիտասարդների լավագույն շահերից (տես Գլուխ 12. Կրթվել ուսուցչին նմանվելու համար): Երեխաների ամլացման և մտավոր ու ֆիզիկական առողջության հետևանքների վերաբերյալ լուրջ էթիկական նկատառումները լռեցվեցին սոցիալական մեդիայի հարթակների զգուշացումներով և, վերջին հաշվով, դիտարկվեցին որպես ատելության խոսք:

Նույնիսկ 2020 թվականին ԼԳԲՏՔ պաշտպանների կատարած ուսումնասիրության համաձայն՝ ԼԳԲՏՔ հարցման ենթարկվածների 40 տոկոսը լրջորեն մտածել է ինքնասպանության փորձ կատարելու մասին վերջին 12 ամիսներին, իսկ տրանսգենոներ և ոչ երկբևեռ երիտասարդների ավելի քան կեսն է լրջորեն մտածել ինքնասպանության մասին:

Մեկ այլ ուսումնասիրություն պարզել է, որ տրանսգենդերները հոգեկան առողջության բազմաթիվ խնդիրների առավել բարձր վտանգի տակ են, քան ոչ տրանսգենդեր բնակչությունը: Համաձայն այս ուսումնասիրության՝ հատկապես ահազանգ է հնչեցնում այն փաստը, որ ամբողջ կյանքի ընթացքում բոլոր տարիքի տրանսգենդերների ինքնասպանության փորձերի հաճախականությունը գնահատվում է 41 տոկոս՝ համեմատած ԱՄՆ-ի ընդհանուր բնակչության 5 տոկոսի: Համեմատած ընդհանուր բնակչության հետ՝ սեռափոխության վիրահատության ենթարկված մեծահասակները շարունակում են ունենալ հոգեկան առողջության բացասական հետևանքների առավել բարձր ռիսկ: Հատկանշանական է, որ սեռափոխված անձինք մոտ 5 անգամ ավելի հաճախ են փորձել դիմել ինքնասպանության և մոտ 19 անգամ ավելի հաճախ են ինքնասպանություն գործել: Ինչհի հիմնական լրատվամիջոցները չեն հայտնում այս կործանարար հետևանքների մասին:

Ցավոք, «Գուգլ»-ը և այլ որոնման համակարգեր ներկայացնում են վերահսկվող տեղեկատվություն, այնպես որ ավելի ու ավելի է դժվարանում իրական փաստեր և տվյալներ գտնել: Փաստերի ստուգման ծառայությունները հենց նրանց վարձակալած և դուստր ընկերություններն են: Մտքիդ գալիս է «ուղեղի լվացում» եզրույթը, որը «ինչ-որ մեկին ճնշելու գործընթացն է՝ ուղղված արմատապես այլ համոզմունքների ընդունմանը՝ գործածելով համակարգված և հաճախ բռնի միջոցներ»: Որպեսզի տեսնեք «արդարության իրավունքի» և ազատ խոսքի բազմազանության բացակայությունը՝ փաթաթված ներառականության թիկնոցով, պարզապես կարդացե՛ք «Յութութ»-ի կամ «Ֆեյսբուք»-ի ուղեցույցները:

Որտեղ է «արդարության իրավունքը» կամ պաշտպանությունը, երբ լռեցվում են պահպանողական այլընտրանքային տեսակետները՝ միաժամանակ թույլ տալով, որ բարգավաճեն մյուսները, որոնք շատ ավելի վստասկար ազդեցություն ունեն երիտասարդության և մեծահասակների վրա: Ֆիլմերում, խաղերում, երգերի բառերում, տեսանյութերում պոռնկագրական տեսարանների լայն տարածումը և նույնիսկ սոցցանցերում անհատների կողմից ծեծի ու սպանության գործողությունների ցուցադրումը լուսաբանում են մեր մշակույթի այլասերվածությունը: «ՏիկՏոկ»-ի մարտահրավեր-

ները հանգեցրել են երեխաների մահվան, ծանր հաշմանդամության և երեխաների մեջ վնասակար գաղափարախոսությունների ներարկման: Մենք ականատես ենք այն մշակույթին, որն արտացոլված է Հռոմեացիների 1.26-32-րդ խոսքերում.

«Նրա (ճշմարտությունը մերժելու) համար Աստված մատնեց նրանց անարգ կիրքերի, և նրանց էգերը բնական գործածությունը փոխեցին անբնականի հետ: Այնպես էլ արունները, կնոջ բնական գործածությունը թողնելով, իրենց ցանկություններով իրար հետ բորբոքվեցին: Արուներն արունների հետ խայտառակություն էին գործում և այն փոխարենը, որ արժան էր իրենց մոլությանը, իրենց անձերում ընդունում էին:

Եվ ինչպես որ չընտրեցին Աստծուն ունենալ իրենց գիտության մեջ, Աստված մատնեց նրանց անարգ մտքի, որ անարժան բաներ գործեն. որոնք լցված են ամեն անիրավությունով, պոռնկությունով, անզգամությունով, ագահությունով, չարությունով, լիքը նախանձով, մարդասպանությունով, կոլով, նենգությունով, չարաբարությունով, քսուներ, բամբասողներ, աստվածաբողներ, թշնամանողներ, ամբարտապաններ, գոռոզներ, չար բաներ հնարողներ, ծնողներին անհնազանդներ, անմիտներ, ուխտադրուժներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ, որ Աստծո իրավունքները հասկանալով, թե այսպիսի բաներ գործողները մահի արժանի են, ոչ թե միայն այս բաներն անում են, այլ գործողներին էլ կամակից են լինում»:

Մեղիա հարթակները բացահայտ տեղեկատվական բովանդակության միջոցով ներգործում են վարքագծի վրա, ցանում անբարոյականության սերմեր և հավաքում տվյալների ու միլիարդների բերք՝ հետևում թողնելով հետևորդների, հատկապես երեխաների խաթարված կյանքեր: Կանանց և երեխաների համար մեկ այլ իրական վտանգ է մեղիայի միջոցով զոհերի հետապնդումը և երեխաների մասնակցությամբ տեղեկատվական բովանդակության տարածումը:

Համաձայն Անհայտ կորած և շահագործման ենթարկված երեխաների գործով ազգային կենտրոնի «Սայբեր Թիվայն» գեկուցման համակարգի նոր տվյալների՝ երեխաների շահագործման վերաբերյալ առցանց հաղորդումների ճնշող մեծամասնությունը հայտնաբերվել է «Ֆեյսբուք»-ում: Հետազոտությունը բացահայտել է 20.3 միլիոնից ավելի հաղորդված միջադեպեր սոցիալական ցանցերում՝ կապված մանկական պոռնկագրության կամ թրաֆիքինգի հետ (դասակարգված որպես «երեխաների նկատմամբ սեռական բռնության նյութ»): Ի հակադրություն՝ «Գուգլ»-ը վկայակոչել է 546,704 միջադեպ, «Թվիթեր»-ն ունեցել է 65,062, «Սնեփչաթ»-ը հաղորդել է 144,095, իսկ «ՏիկՏոկ»-ը գտել է 22,692 միջադեպ: «Ֆեյսբուք»-ին բաժին է ընկել 21,7 միլիոն հաղորդումների գրեթե 95 տոկոսը բոլոր հարթակներում:

Բացի այդ՝ այնպիսի հարթակներ, ինչպիսին «ՏիկՏոկ»-ն է, իրենց մարտահրավերներով քաջալերում են երեխաներին (և մեծահասակներին) ընդօրինակել նողկալի և վտանգավոր վարքագիծ: Սոցցանցերում հայտնված բազմաթիվ ցնցող տեսանյութերից վերջինը, թերևս, ամենաողբերգականն է: 2020 թվականի օգոստոսին մի մարդ «Ֆեյսբուք»-ում ուղիղ եթերով ցուցադրեց իր ակնհայտ ինքնասպանությունը: Ինքնասպանության տեսանյութը տարածվեց «ՏիկՏոկ»-ում և այլ սոցիալական ցանցերում: Երիտասարդները, որոնք արդեն տառապում էին ընկճախտով, անհանգստությամբ և այլ հոգեկան խանգարումներով, ինքնասպանության միջոցով վերջ տվեցին իրենց կյանքին, ինչը դարձավ մարտահրավեր: Ինքնասպանությունը 10-34 տարեկան պատանիների և երիտասարդների մահվան թիվ երկու պատճառն է:

Մեդիա հարթակները բացահայտ տեղեկատվական բովանդակության միջոցով ներգործում են վարքագծի վրա, ցանում անբարոյականության սերմեր և հավաքում տվյալների ու միլիարդների բերք՝ հետևում թողնելով հետևորդների, հատկապես երեխաների խաթարված կյանքեր:

Տվյալների հավաքումը ևս մեկ պատճառ է, որի մասին շատերն անտեղյակ են: «Ընդունել պայմանները» (որոնք ոչ ոք չի կարդում) կոճակը սեղմելը մեդիա ընկերություններին իրավունք է տալիս վերցնելու ձեր տվյալները և օգտագործելու դրանք այնպես, որ դուք, հնարավոր է, չիմանաք: Եթե դուք օգտագործում եք տեսանյութերի փոխանակման «ՏիկՏոկ» հարթակը, կարող եք տեղեկություն տրամադրել Չինաստանի կոմունիստական կուսակցության հետախուզական ծառայություններին, ինչպես զգուշացնում է կիբերանվտանգության փորձագետ և «ԲլեքՕփս Փարթներս» ռազմավարական խորհրդատվական ընկերության գործադիր տնօրեն Քեյսի Ֆլեմինգը:

2020 թվականին ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն զգուշացրեց, որ օգտատերերի տվյալներն ուղարկվում են Չինաստան: «Հնարավոր չէ, որ ձեր անձնական տեղեկություններն անցնեն չինական սպասարկիչով և չհայտնվեն Չինաստանի կոմունիստական կուսակցության ձեռքերում,- զգուշացրեց նա բրիտանական լրատվամիջոցին տված հարցազրույցում՝ ՉԿԿ-ն բնութագրելով որպես «չարի կայսրություն», - «ՏիկՏոկ»-ը հաստատապես Թրամփի վարչակազմի տեսադաշտում է և կշարունակի մնալ»:

Պիտեր Շվեյցերի՝ «Բռնված հանցանքի վայրում. ինչպես է ամերիկյան ընտրախաղը հարստանում՝ օգնելով Չինաստանին հաղթելու» գիրքը ներկայացնում է, թե ինչպես է ամերիկյան «Մայքրոսոֆթ» ընկերությունն օգնել և հրահրել չինական բանակին:

«Նյու Յորք Թայմս»-ի կողմից վեց անգամ հանրաճանաչ հեղինակ ճանաչված հետազոտողի և «Բրեյքարտ Նյուզ»-ի ավագ խմբագիր Պիտեր Շվեյցերի նախորդ գրքերում բացահայտվել են Քլինթոնների, Բայդենների և ամերիկյան իշխող դասի այլ անդամների կոռուպցիոն գործարքները:

«Բռնված հանցանքի վայրում» գրքից.

Մինչև 2010 թվականը «Մայքրոսոֆթ»-ը ևս մեկ քայլ կատարեց Չինաստանի կառավարության հետ իր կապերի ամրապնդման ուղղությամբ: Ընկերությունը Չինաստանում հիմնեց հետազոտական լաբորատորիա՝ Չինական

ռազմական համալսարանի հետ արհեստական բանակա-
նության (AI) ուղղությամբ աշխատելու համար. հետազո-
տության կարևոր ոլորտ, որը հսկայական ազդեցություն
կունենա տնտեսության վրա և մարտի դաշտում: «Մայքրո-
սոֆթ»-ը Ժողովրդական ազատագրական բանակից նույ-
նիսկ պրատիկանտների ընդունեց իր ասիական հետազո-
տական հաստատությունում:

Համաձայն գրքի՝ «Մայքրոսոֆթ»-ը նաև թույլ է տվել Ժո-
ղովրդական ազատագրական բանակի պաշտոնյաներին
վերահսկել «Սկայպ»-ում ընթացող զրույցները, որոնք կա-
րող էին օգտագործվել երկրում բողոքի ակցիաներ և այլա-
խոհ գործողություններ կազմակերպելու համար:

Խաղային արդյունաբերությունը, թերևս, ամենավտանգավոր
լրատվամիջոցն է սեռահարաբերության և բռնության հետ փոխ-
ներգործություն ունենալու պատճառով: Ցանկանում ես սպանել
կամ բռնաբարել կնոջ, սպանել ոստիկանի՞ կամ իրագործել ցան-
կացած սեռական երևակայություն: Խաղերը տալիս են հնարա-
վորություն՝ դառնալու այն, ինչ ցանկանում ես: «Մեզնից վերջի-
նը-2» խաղում սպանվեց «Մեզնից վերջինը-1»-ի գլխավոր տղա-
մարդ հերոսը, և ներմուծվեց տրանսլեսքի կերպար՝ որպես մար-
դասպան և նոր գլխավոր հերոս:

Նոր գործարկված «Մետավերս»-ը՝ Ցուկերբերգի նոր կայս-
րությունը, դերախաղը նոր մակարդակի է հասցնում:

Հետազոտողները պարզել են, որ օգտատերերը կնմանա-
կեն իրենց վիրտուալ անձնապատկերներին (ավատարնե-
րին) իրական կյանքում տեսքով, պահվածքով և, իհարկե,
վարքագծով: Եթե օգտատերը հետևողականորեն ստի-
պի իր անձնապատկերին վատ վարվել, այդ վարքագիծը,
հնարավոր է, փոխանցվի իրական կյանք: Այն, ինչ վտան-
գավոր է «Մետավերս»-ում, կարող է վտանգավոր լինել
իրական աշխարհում:

«Մետավերս»-ը գոյություն է ունեցել երկար ժամանակ,
բայց միայն հիմա է տիրապետող դառնում: «Մետավերս»-
ում հեշտ է մերժել չարաշահումը, քանի որ «այն իրական

չէ»։ Սակայն մենք մոռանում ենք, թե ինչպես այն կարող է հավանականորեն ազդել իրական աշխարհի վրա։ Թեև «Մետավերս»-ը ֆիզիկապես իրական վայր չէ, բայց այն ձևավորող մարդիկ իրական են։

Օգտատերերի կողմից ստեղծված այս անձնապատկերները կարող են հաճախել սթրիփ-ակումբներ և մասնակցել բիրտ և պատկերավոր սեռական հարաբերությունների։ Նրանք կարող են հարձակվել, բռնաբարել և վսասել ուրիշների անձնապատկերներին։ Նրանք կարող են նաև հետապնդել նրանց և դրսևորել սարսուռեցնող վարքագիծ այնպես, ասես «իրական աշխարհում» են։ Սա լուրջ վտանգ է այն մարդկանց համար, որոնք առցանց կրում են նրանց վատ վարմունքի ազդեցությունը, նաև մտավորապես ուժեղացնում է բռնարարի դերը բռնարարի մեջ և սաստկացնում անառողջ ցանկություններն ու վարքի ձևերը բավարարելու հաճույքը, որը վերջին հաշվով, ամենայն հավանականությամբ, կդրսևորվի իրական կյանքում։ Ընդհանուր առմամբ սա վերաբերում է խաղերին։

Եթե «Ֆեյսբուք»-ը լիներ մարդկային արարած, որտեղ կլիներ ներկայում։ Ամենայն հավանականությամբ՝ բանտում... շատ երկար ժամանակով։ Ընկերության խախտումները չափազանց շատ են թվարկելու համար։ Բայց «Ֆեյսբուք»-ը մարդ չէ, այն ընկերություն է և, ընդ որում, շատ շահութաբեր։ Իրականում այժմ այն աշխարհի ամենաշահութաբեր ընկերություններից է։ «Ֆեյսբուք»-ի շուկայական կապիտալացումը վերջերս գերազանցել է մեկ տրիլիոն դոլարի նշագիծը։

Երբ մտածում ենք «Ֆեյսբուք»-ի, ավելի ճիշտ՝ «Ֆեյսբուք» կորպորացիայի մասին, մենք հակված ենք մտածելու սոցիալական ցանցի մասին, որը որոշ չափով հնացած է։ Սակայն հարկ է հիշել, որ այս բազմազուլփ հիդրան խառնակույտ է, որին են պատկանում 78 տարբեր ընկերություններ, այդ թվում՝ «Վոքսափ»-ը և «Ինստագրամ»-ը։ Այլ խոսքերով՝ «Ֆեյսբուք»-ն ավելին է, քան կատուների մասին տեսանյութերը և դավադրության տեսությունները։ «Ֆեյսբուք» կորպորացիան, որը գլխավորում է ապխտած մսի պաշտպան Մարկ Յուկերբերգը, լավ համակարգված մեխա-

նիզմ է: Նրա ուժն անժխտելի է, և այդ ուժն աճում է: Ինչպես վերջերս նշել է «Ֆորտուն» ամսագիրը.

««Ֆեյսբուք»-ին, ինչպես երևում է, չեն կարող վնասել ո՛չ գովազդի խոշոր գնորդները՝ բոյկոտելով նրա ծառայությունները, ո՛չ նահանգային և դաշնային հետաքննությունները և ո՛չ էլ նույնիսկ համավարակը»:

Քովիդ-19 համավարակը գուցե ծնկի բերեց աշխարհին, բայց Մարկ Յուկերբերգը՝ «Ֆեյսբուք»-ի գործադիր տնօրենը, չզգաց դրա հետևանքները: Անցյալ տարի նա ուներ ընդամենը 82 միլիարդ դոլար կարողություն, իսկ այսօր այն գերազանցում է 130 միլիարդ դոլարը: Այժմ, երբ Յուկերբերգը փորձում է ստեղծել իր մետատիեզերքը, կարելի է ակնկալել, որ նրա արժեքը և ուժը զգալիորեն կավելանան:

ՄԵՏԱՎԵՐՍ

«Meta», որը նշանակում է «վեր, այն կողմ», և «universe» (տիեզերք) բառերի միախառնումից ստացված «metaverse»-ը (մետավերս) միավորում է ֆիզիկական աշխարհի տարրերը և միաձուլում դրանք վիրտուալ տարածությունների հետ: 1992 թվականին այս եզրույթը ներմուծեց ամերիկացի գրող և հեղինակ Նիլ Սթիվենսոնը: Երկու տասնամյակ անց, այլևս չսահմանափակվելով գիտաֆանտաստիկ տիրույթներով, «Մետավերս»-ը գրեթե հասավ մեզ:

Այս խիզախ նոր աշխարհում ֆիզիկական իրականության և թվային տիրույթների միջև գծերն աստիճանաբար ավելի մշուշոտ կդառնան: Անփոխարկելի թոքենները (NFT) և կրիպտոարժույթներն արդեն «Մետավերս»-ի փորձի մի մաս են, բայց առաջ գնալով՝ իրական «Մետավերս»-ում դրանք կկցվեն ձեզ՝ որպես օգտատերերի: Թեև մենք ներկայումս ապրում, հաղորդակցվում և գնումներ ենք կատարում համացանցով, երբ «Մետավերս»-ը հայտնվի, մենք լիովին կկարողանանք ապրել համացանցում: Մենք նույնիսկ կկարողանանք ձեռք բերել երբեմնի պատրանքային շքեղ նորաձև տեսք շնորհիվ այնպիսի դիզայներների, ինչպիսիք են Լուի Վիտոնը, Դույլե և Գաբանան, Կավալին և Թոմի Հիլ-

Ֆիզերը, որոնք ներդրում են կատարել անփոխարկելի թոքեններում և «Մետավերս»-ում՝ վիրտուալ նորաձևություն և գնումների փորձառություն առաջացնելու համար: Իլոն Մասկը ցանկանում է տեղափոխել մեզ Մարս, իսկ Ցուկերբերգը ցանկանում է տեղափոխել և տեղավորել մեզ համացանցում՝ բառացիորեն:

Վերջերս «Դը Վըրջ» կայքին տված հարցազրույցում Ցուկերբերգը նկարագրեց «Մետավերս»-ը որպես «մարմնավորված համացանց, որտեղ դուք ոչ թե պարզապես դիտում եք բովանդակությունը, այլ հենց դրա մեջ եք»: Մենք կլինենք վարձակալներ Ցուկերբերգի մշտապես ընդարձակվող տան մեջ: Վարձը կվճարվի տվյալների տեսքով: Սա մխիթարական միտք չէ: Ինչպես նշել է Թոբի Թրիմեյնը «Վայրդ» ամսագրում, խոշոր տեխնոլոգիական ընկերությունները, ինչպիսին «Ֆեյսբուք»-ն է, «դարձել են պարսպապատ այգիներ, որոնք ավելի ու ավելի են կենտրոնացվում և վերահսկվում կորպորատիվ շահերի կողմից: «Ֆեյսբուքն» արդեն ունի «Վոքսափ», «Ինստագրամ» և «Օկուլուս», ինչը նրանց տալիս է սեփականության իրավունք մեր ընկերների, մեր վարքագծի, քայլվածքի, աչքերի շարժման և հուզական վիճակի նկատմամբ: Շուտով, եթե Ցուկերբերգը հասնի իր ուզածին, «Ֆեյսբուք» կորպորացիան կունենա էլ ավելի մեծ վերահսկողություն մեր կյանքերի վրա: Դա, պնդում եմ, չպետք է մխիթարի ոչ մեկին՝ բացի Ցուկերբերգից»:

Խիստ սեռական բովանդակության լրատվանյութը մեդիայի բոլոր տեսակներում այլևս կարծես չի ապշեցնում, քանի որ Սուպերգավաթի ընդմիջումն ավելի շատ նման է սեռական օկուլտային ծեսի, իսկ ֆիլմերը, խաղերը և այժմ «Մետավերս»-ը լի են անզուսպ սեռական պատկերներով, որոնք ոչ միայն անպարկեշտ են, այլև փոխգործուն (ինտերակտիվ): Այն, ինչ անցյալ տարիներին համարվում էր կոշտ պոռնկագրություն, դարձել է լրատվական հիմնական ուղղություն: Սա մեծապես նպաստում է մշակույթում նկատվող ընտանիքի անկայունության խորացմանը: Մենք դառնում ենք այն պատկերները, որոնցով կերակրում ենք մեր միտքը: Գոյություն ունի հոգու/շնչի (միտք, կամք և զգացմունքներ) կապ մարմնի հետ: Մեր միտքը կարող է խաբվել՝ հավատալով քարոզչությանը, և դա ուղեղի վլացման ազդեցություն կունենա մեր կյանքի, առողջութ-

յան և մեր երեխաների վրա: Անբարոյական վարքագիծ դրսևորելը, լինի անձնապատկերով թե իրական կյանքում, առաջացնում է կոտորվածություն և կախվածություն: Հիսուսն ասաց. «Եթե մարդը նայի կնոջը՝ իր սրտում ցանկանալով նրան, դա նույնն է, եթե նա շնություն գործի», և սա վերաբերում է մեդիային և «Մետավերս»-ին՝ անկախ նրանից՝ ընդունում ենք դա, թե ոչ:


«Եվ ինքը խաղաղության Աստվածը ձեզ սուրբ անի բոլորովին, և ձեր բոլոր հոգին և շունչը և մարմինը անարապ պահվի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը»:

– Ա Թեսաղոնիկեցիների 5.23

Հանուն հարմարության ինչ խոսքեր և պատկերներ ենք հանդուրժում, որ կառավարեն մեր կյանքը կամ հագեցնեն մեր «ես»-ը: Ինչպե՞ս են այս պատկերներ ստեղծողները վերաարարում կյանքը, և արդյոք պատրաստ ենք կորցնելու մեր ազատությունը՝ թույլ տալով նրանց զվարճացնել և տեղեկացնել մեզ: Եթե նրանք կարող են վախեցնել կամ վերահսկել ցանկացած մարդու կամ մեր ազատ ընտրությունները, նրանք կարող են վերահսկել բոլորիս: Հենց սա է խնդիրը: Կոնգրեսը գրեթե ոչինչ չի արել, որպեսզի պատասխանատվության ենթարկի այս մեդիա ընկերություններին՝ վախենալով սեփական հաշիվներն ու կարգավիճակը կորցնելուց: Մենք պետք է բարձրացնենք մեր ձայները և քվեարկենք մեր ֆինանսներով որպես սպառողներ: Հուսանք՝ շատ չենք ուշացել:

17

ՄՏԱԾԵԼ ՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ



Այս մեդիա հսկաները կարող են ահռելի լինել, բայց մենք ունենք գորրություն, եթե մեզնից շատերն ընտրեն գործածել այն: Նրանց հաջողվել է կուլ տալ ցանկացած ավելի փոքր մրցակցություն, բայց մենք կարող ենք սրտապնդվել՝ գիտենալով, որ որքան մեծ են նրանք, այնքան ուժեղ է նրանց անկումը: Դիսնեյը վերջերս լարեց իր ժամանցային մկանները, որպեսզի կանգնեցնի Ֆլորիդայում առաջ քաշված մի օրինագիծ, որը նախատեսված էր պաշտպանելու երրորդ և ավելի ցածր դասարանի երեխաներին դպրոցում ԼԳՏԲԲ-ի մասին ուսուցումից: Խելամի՞տ օրինագիծ է: Դիսնեյի համար՝ ոչ: Դիսնեյի ղեկավարը խոստացել է իր առաջիկա «Ժամանցային ներկայացումներում» 50 տոկոս կերպարներում ներգրավել փոքրամասնություններին և տրանսգենդերներին և նույնն արտացոլել աշխատանքի ընդունման չափանիշներում: Նրա կայքը խոստանում է, որ Դիսնեյի տիեզերքում մշտապես կրկնվող կերպարների 50 տոկոսը լինելու է ոչ բավարար չափով ներկայացված խմբերից: Այս ամենը Դիսնեյի վերաիմաստավորման քարոզարշավի մասն է: «Մենք այլևս չենք ասում տիկնայք և պարոնայք, տղաներ և աղջիկներ: Մենք ասում ենք բոլոր տարիքի երագողներ»:

Ծնողները վրդովված են, որ Դիսնեյն ընդդիմացել է Ֆլորիդայում ծնողական իրավունքների մասին օրենքին. երեխաներին հանգիստ թողեք: Ամբողջ երկրում ծնողները հակադրվում են

Դիսնեյին այն բանից հետո, երբ վերջինս հրապարակավ դատապարտեց ծնողական իրավունքների մասին նոր օրենքը Ֆլորիդայում, որն արգելում է ուսուցիչներին մանկապարտեզից մինչև երրորդ դասարան քննարկել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին:

Դիսնեյը հրապարակավ դատապարտեց օրենքը այն ուժի մեջ մտնելուց հետո, երբ Դիսնեյի գործադիր տնօրեն Բոբ Չապելը հայտարարություն տարածեց՝ նշելով, որ այն երբեք չպետք է մտներ ուժի մեջ: Դիսնեյն ընդդիմանում է իր հիմնական սպառողներին՝ ծնողներին: Շատերը ջնջում են «Դիսնեյ+»-ը և նախընտրում չտանել իրենց երեխաներին Դիսնեյի զբոսայգիներ:

Միգուցե Դիսնեյին պետք է հիշեցնել, որ ԼԳԲՏԲ բնակչությունը ներկայացնում է աշխարհի բնակչության 4 տոկոսը, իսկ ծնողները ներկայացնում են նրա աջակցության համակարգի շատ ավելի մեծ մասնաբաժինը: Մեդիա և ժամանցային ընկերությունները, ինչպիսին Դիսնեյն է, ցանկանում են, որ ԼԳԲՏԲ կերպարների ներկայացվածությունը կազմի իրենց հաղորդումների 30-50 տոկոսը:

Մենք պետք է դեմ կանգնենք գերսեռականացված չեղարկման մշակույթին և հրաժարվենք մեր ժամանակով և ֆինանսներով նրանց ահաբեկչությանն աջակցելուց: Մենք պետք է ճանաչենք քարոզչական պատերազմը: Մենք պետք է ընդունենք հետևյալ մոտեցումը. եթե չափազանց հանդուրժող լինես, կկոտորվես:

Ինչո՞ւ: Սրանք ժամանցային արդյունաբերության ղեկավարների արժեքներն են, և աշխատակիցները պետք է ենթարկվեն դրանց, այլապես կբախվեն խտրականության: Հոսքային մեդիա հարթակները, ինչպիսին «Նեթֆլիքս»-ն է, նույնպես վերացրել են բոլոր վարկանիշային համակարգերը՝ առանց որևէ զգուշացման հանդիսատեսներին, հատկապես երեխաներին, ենթարկելով պոռնկագրության, բռնության և պղծության ազդեցությանը: Հետաքրքիր է, որ ավելի ու ավելի շատ են լսում այս բողոքները. «Այնքան շատ տարբերակներ կան, բայց դիտելու ոչինչ չկա»:

Մենք պետք է դեմ կանգնենք

գերսեռականացված չեղարկման մշակույթին և հրաժարվենք մեր ժամանակով և ֆինանսներով նրանց ահաբեկչությանն աջակցելուց: Մենք պետք է ճանաչենք քարոզչական պատերազմը: Մենք պետք է ընդունենք հետևյալ մոտեցումը. եթե չափազանց հանդուրժող լինես, կկոտրվես: Միջին դպրոցում ես մի գիրք եմ կարդացել քարոզչական հնարքների մասին: Այն տպավորվեց իմ մեջ, որովհետև առաջին անգամ գիտակցեցի՝ ամեն ինչ չէ, որ լսում էի կամ տեսնում, փաստ էր, և որ կային մարդիկ այնպիսի ծրագրերով, որոնք ո՛չ ազնիվ էին, ո՛չ էլ վստահելի: Դրանք դժվար դասեր են մի երիտասարդի համար, որը մեծ վստահություն ունի իշխանությունների, կառավարության, դպրոցի ուսուցիչների, բժիշկների և երկարամյա հաստատությունների նկատմամբ: Այս հաստատությունների թվում են ավանդական լրատվամիջոցները, որոնք մեզ սովորեցրել են, թե ինչին հավատանք և ինչպես մտածենք: Անցյալում մենք առնվազն ունեինք ինքնուրույն կարդալու, գրելու և մտածելու ազատություն: Ինչ-որ բան կտրուկ փոխվել է, սակայն կա հակադարձման այնպիսի ալիք, ինչպիսին երբեք չի եղել:

Կա հույս, քանի որ մենք տեսնում ենք, թե ինչպես են հազարավոր նոր ձայներ ի հայտ գալիս մեդիայում՝ պահպանողականից մինչև հակամշակութային: Այս ձայներից շատերը հավատքը և ընտանեկան արժեքները կրկին ընդգրկում են ընթացիկ իրադարձությունների քննարկումների մեջ: Սա գրավել է մեդիա ընտրախաձի և սոցցանցերի հսկաների ուշադրությունը՝ հանգեցնելով գրաքննության պատերազմի: Որքան ուժեղ են տեխնոլոգիական հսկաներն առաջ տանում իրենց գրաքննությունը, և որքան շատ են ավանդական լրատվամիջոցները թութակի պես կրկնում նույն խոսույթը մի ցանցից մյուսում, այնքան ավելի շատ մարդիկ են արթնանում և, ի նշան համերաշխության, ըմբոստանում նրանց վերահսկողության դեմ:

Հետագա պայքարներից մեկը վերաբերում է 230-րդ հոդվածին և պաշտպանության չեղարկմանը, որը, համաձայն այդ հոդվածի, տրամադրվում է խոշոր տեխնոլոգիական ընկերություններին:

230-րդ հոդվածը 1996 թվականի Հաղորդակցության պատշաճության մասին օրենքի դրույթն է, որը ընկերություններին, որոնք իրենց կայքերում տեղադրում են օգտատերերի կողմից ստեղծված տեղեկատվական բովանդա-

կություն, պաշտպանում է հրապարակումների դեմ հարուցված դատական հայցերից: Օրենքը պաշտպանում է և՛ համացանցային ծառայություն մատուցողներին, ինչպիսիք են «Էյթի ընդ Թի», «Քոմքասթ» և «Վերիզոն» ընկերությունները, և՛ սոցցանցերին ու համացանցային հարթակներին, ինչպիսիք են «Ֆեյսբուք»-ը, «Թվիթեր»-ը և «Գուգլ»-ը: 230-րդ հոդվածը չի ապահովում լիարժեք պաշտպանություն: Կան բացառություններ դաշնային հանցագործությունների կամ մտավոր սեփականության պահանջների համար: Ընկերությունը կարող է դեռևս պատասխանատվության ենթարկվել, եթե գիտակցաբար թույլ է տվել օգտատերերին հրապարակել անօրինական բովանդակություն:

Շատերը պնդում են, որ դա դժվար է ապացուցել՝ հաշվի առնելով այն անհավանական ուժը, որ կուտակել են այս տեխնոլոգիական ընկերությունները:

Օրենքը նախատեսում է լայնածավալ պաշտպանություններ սոցցանցերին՝ թույլ տալով նրանց ընտրել, թե ինչ տեղեկատվական բովանդակություն սահմանափակեն և ինչպես: Սա նշանակում է, որ սոցիալական հարթակներին չի կարելի դատի տալ տեղեկատվական բովանդակություն հեռացնելու կամ թողնելու համար:

Սակայն սա ավելի է խճճում իրավիճակը, քանի որ այս հարթակներն ունեն մենաշնորհային ֆինանսական իշխանություն:

230-րդ հոդվածին առնչվող խնդիրների մեծ մասը վերաբերում է նրան, թե սոցցանցերում որ հրապարակումներն են թույլատրելի, և որոնք են հեռացվում:

Դեմոկրատներին ամենից շատ մտահոգում է սոցիալական մեդիայի խոշոր ընկերությունների կողմից ատելության խոսքի, ագրեսիայի, ապատեղեկատվության և ահաբեկչության հետ կապված բովանդակության հեռացումը: Դեմոկրատները նույնիսկ մեղադրել են մեդիա ընկերություններին պատասխանատվության պաշտպանությունը որպես միջոց օգտագործելու համար՝ շահույթ ստանալու իրենց հարթակներում տարածվող ստից:

Հանրապետականները պնդում են, որ սոցցանցերը գրաքննության են ենթարկում պահպանողական տեսակետները: Սա խոսույթ է, որ Թրամփն օգտագործել է 2020 թվականի նախագահական ընտրություններից առաջ, երբ «Թվիթեր»-ը և «Ֆեյսբուք»-ը սկսեցին նախազգուշացնող պիտակներ փակցնել նրա հրապարակումների վրա՝ ոչ ճշգրիտ տեղեկություն պարունակելու համար:

Դեմոկրատների մտադրությունն է, որ ավելի շատ գրաքննություն իրականացվի հրապարակումների նկատմամբ՝ վերահսկելով խոսքը: Նրանց նպատակն է «Ֆեյսբուք»-ին պատասխանատու դարձնել այն հրապարակումների համար, որոնք նրանք համարում են կեղծ տեղեկատվություն: Բայց ղվ է դառնում ճշմարտության պահապանը: Միթե ժողովրդավարությունը մշտապես չի ունեցել ազատություն՝ տարածելու գաղափարներ և թույլ տալու, որ մարդիկ որոշեն, թե ինչին հավատան կամ ինչպես լավագույնս գործեն:

Եթե «Նյու Յորք Թայմս»-ը ճշմարտության պահապանն է, ուրեմն դատե՞ք 2020 թվականի փետրվարի 5-ին «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակված Քևին Ռոուզի հոդվածը, որը քննադատում է այլընտրանքային «Էպոք Թայմս» լրատվամիջոցը. «Անցյալ ամառ յուրօրյան օգտատերերը սկսեցին նկատել «Էպոք Թայմս» կոչվող քիչ հայտնի լրատվականի գովազդի հանկարծակի աճ: Գովազդային հոլովակներից մեկում խոսվում էր «Լրտեսական դարպաս» կոչվող դավադրության անհիմն տեսության բացահայտման մասին, որը պնդում էր, որ նախագահ Բարաք Օբաման և նրա դաշնակիցները լրտես են դրել նախագահ Թրամփի 2016 թվականի նախընտրական շտաբում»:

Միթե դա անհիմն դավադրության տեսություն էր: Հատուկ դատախազ Ջոն Դարիեմի փաստաթղթերը, որոնց մասին խոսեցի ավելի վաղ, ցույց են տալիս, որ այդպես չէ: «Էպոք Թայմս» լրատվամիջոցը շատ ավելի մոտ էր իրական պատմությանը, քան «Նյու Յորք Թայմս»-ը, որը պարծենում է, որ աշխարհի ամենախոշոր լրատվականն է: Սա է գրաքննության հետ կապված խնդիրը: Երբ իշխանություններին է տրված որոշելու, թե ինչ իրավունք ունի լսելու հանրությունը, և ինչն է ճշմարտություն, կամ ինչը՝ ոչ, պետք է լինի այդ խոսույթը «վերահսկող»: Եվ ինչպես տեսանք,

Երբ իշխանություններին է տրված որոշելու, թե ինչ իրավունք ունի լսելու հանրությունը, և ինչն է ճշմարտություն, կամ ինչը՝ ոչ, պետք է լինի այդ խոսույթը «վերահսկող»: Եվ ինչպես տեսանք, կան օրակարգեր և տեղեկատվություն, որն արգելված է, քանի որ այն ազդում է ֆինանսական կայսրությունների և ազդեցիկ ընտրախավերի վրա:

կան օրակարգեր և տեղեկատվություն, որն արգելված է, քանի որ այն ազդում է ֆինանսական կայսրությունների և ազդեցիկ ընտրախավերի վրա:

Կա օրենսդրություն՝ չեղարկելու 230-րդ հոդվածը սոցիալական մեդիայի ընկերությունների համար: Դրանք միայն տեխնոլոգիաներ չեն. դրանք մեդիա-հարթակներ են, նորություններ և տեղեկատվություն, մինչդեռ 230-րդ հոդվածը նախատեսում է կոմունալ այնպիսի ընկերությունների պաշտպանություն, ինչպիսին հեռախոսային ընկերությունն է: Բայց այս ընկերություններն ավելի շատ իրականացնում են տեղեկության փոխանակում և ազդում այդ փոխանակումներ

րի վրա՝ շահարկելով ալգորիթմները, որոնման համակարգերը և փաստերի ստուգումը (կասկածելի արդյունքներով) և, իհարկե, հանելով մարդկանց գրառումներն ու գովազդները:

Մեդիան ընդհանուր առմամբ սահմանվում է որպես զանգվածային հաղորդակցության (հեռարձակում, հրատարակում և համացանց) հիմնական միջոց: Սոցիալական մեդիայի ընկերությունները հրապարակում և գործում են առնվազն որպես խմբագիրներ և, ինչպես մյուս լրատվամիջոցները, պետք է ենթարկվեն նույն ուղեցույցներին՝ մարդկանց գաղտնիությունը և անձնական տվյալները պաշտպանելու հավելյալ կանոններով: Հանրապետական սենատոր Ջոշ Հոուլին ձեռնամուխ է եղել այս պայքարին, իսկ մյուսները դատական հայցեր են ներկայացրել իրենց կյանքի վրա սոցցանցերի ունեցած ազդեցության դեմ: Գերագույն դատարանը պետք է լսի այս գործերը և պաշտպանի մեր ազատ խոսքը՝ միաժամանակ պատասխանատվության ենթարկելով խոշոր տեխնոլոգիական ընկերություններին:

Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր ձայները լռեցվեն

Քովիդ-19-ի առնչությամբ հիստերիայի ժամանակ ամբողջ աշխարհում տեխնոլոգիական խոշոր ընկերությունների կողմից գրաքննության էին ենթարկվում առաջադեմ բժիշկներ, և խիստ գրաքննվում էր բժիշկների ներկայացրած այն տեղեկությունը, որը վերաբերում էր այլընտրանքային բուժման հաջողությանը կամ հանձնարարականներին, որոնք տարբերվում էին դեղագործական խոշոր ընկերությունների «հանձնարարականներից» (արհեստական շնչառության սարքեր, Ռեմդեսիվիր և մի քանի այլ դեղամիջոցներ): «Գուգլ»-ի որոնումները և լրատվականները հավանություն են տալիս իրենց սիրելի տեղեկատվության միջոցներին, որոնք համապատասխանում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Բիլ Գեյթսի՝ պատվաստանյութին վերաբերող խոսույթներին: Որոնումները բերում են այն բովանդակությունը, որը նրանք ցանկանում են, որ դուք տեսնեք, իսկ պահպանողական ձայներն աննկատ են մնում այդ որոնումներում: Նրանք բառացիորեն վերահսկում են այն, ինչ մենք տեսնում ենք և հավատում՝ մենաշնորհելով որոնման համակարգը:

Մարդիկ հակադարձում են: Այլընտրանքային ձայներն ավելի ուժեղացան, երբ քաղաքացիներն ականատես եղան կառավարական հրահանգների անհամապատասխանություններին և պահանջներն առաջ տանելու գործում տեղեկատվության միջոցների մեղսակից դերին: Նրանք չափազանց հեռու գնացին, և քաղաքացիները սկսեցին ատել նրանց իրենց իշխանական խաղերի համար: Վերջին ժամանակներում ոչինչ չի հուզել մեր երկրին այնպես, ինչպես վերջին մի քանի տարում հնչող ահազանգերը:

Մենք այլընտրանքային ձայների կարիք ունենք մեղիայում, և բարեբախտաբար դրանք սկսում են ի հայտ գալ: Տեղեկացե՛ք նորություններին այլ աղբյուրներից՝ բացի հիմնական ավանդական տեղեկատվության միջոցներից, որոնք այժմ ձախական ուղղվածություն ունեն: Այլընտրանքային տեղեկատվության միջոցները կաճեն, եթե կարողանանք թույլ չտալ, որ մալուխային ընկերություններն ու ցանցերը «չեղարկեն» դրանք: Ի հայտ են եկել «Էպոք Թայմս» թերթը, Սթիվ Բաննոնի «Ուոր ռում» ծրագիրը, «Ջո Ռոզան» հեռուստա-ռադիոծրագրերը, «Ուան Ամերիկա»

լրատվականը, «Դեյլի փոստ»-ը և շատ ուրիշներ: «Ուան Ամերիկա» լրատվական ցանցը պահպանողական լրատվական կայք է, որը ստեղծվել է ազատականների և պահպանողականների կողմից: Այս կայքը կենտրոնանում է Միացյալ Նահանգների վրա ազդեցություն ունեցող լրատվական նյութերի վրա և համարվում է խոշոր կայքերից մեկը համացանցում, որ հեռարձակվում է մալուխային ալիքով: Կայքում ներկայացված են փաստական հաղորդումներ, առաջադեմ քաղաքական վերլուծություններ և կոահողական մեկնաբանություններ հանրահայտ պատմությունների վերաբերյալ: Կայքի ուժեղ կողմերից է փաստացի և հավասարակշռված լուրեր ներկայացնելու կարողությունը:

Պայքար է ընթացել «Ուան Ամերիկա» լրատվականին կանգնեցնելու համար՝ վերացնելով նրա մալուխային պայմանագրերը և «չեղարկելով այն», բայց պահպանողականները հակադարձում են և ընդունում, որ մենք նույնպես կարող ենք համախմբել մեր ռեսուրսները: Դուք կարող եք տեղեկանալ լրատվամիջոցի նյութերին oan.com կայքի և ազգային մատակարարների, ինչպես նաև Միացյալ Թագավորությունում, Տրինիդադում, Պուերտո Ռիկոյում, Գերմանիայում, Լատվիայում, Կարիբյան ավազանում և Կանադայում գտնվող միջազգային օպերատորների միջոցով: Մեկ այլ հանրահայտ լրատվամիջոց է «Նյուզմաքս»-ը:

Ըստ տեղեկությունների՝ առաջատար պահպանողական տեղեկատվության միջոցներն են՝ «Դեյլի վայրը», «Բլեյզ», «ՕԷյԷն», «Նյուզմաքս», «Ֆեդերալիստ», «Նեշընալ ռիվյու», «Բրեյբարտ», «Ջիրո հեջ», «Թաունհոլ», «Վաշինգտոն իզգեմիներ», «Ուորլդ նեթ դեյլի», «Ջո Ռոգան» (լեզվի մասին), «Գեբ թրենդս», «Վաշինգտոն ֆրի բեկոն», «Լայֆ սայթ նյուզ», «Դեյլի սիգնալ», «Դրաջ ռիփորթ», «Ֆրի ռիփաբլիք», «Ամերիկըն թինքեր», «Ռեդ սթեյթ», «Գեյթուեյ փանդիթ», «Ֆլեշփոյնթ», իմ հաղորդումը՝ «Դրենդա օն գարդ» և այլն:

Ինչպես հետ վերցնել մեր կյանքի վերահսկողությունը և վերադարձնել մեր ինքնավարությունը

Մենք պետք է վերաուղղենք մեր ֆինանսներն այն կազմակերպություններին և ընկերություններին, որոնք չեն վիրավորում և գողանում մեր ազատությունները: Եթե թույլ տանք, որ հարմա-

րավետությունը և հաճույքը թելադրեն մեր որոշումները, մենք կկորցնենք այդ ազատությունները: Հրաշալի լուրն այն է, որ շատերը վերանայում են իրենց ընտրությունները՝ կապված տեղեկատվության միջոցների և այն ընկերությունների հետ, որոնց աջակցում են: Ես ընդունում եմ, որ «Ամազոն»-ը շատ հարմար է, բայց այն փաթեթները, որոնք ուղարկվում են մեզ, աջակցում են նպատակների և օրակարգերի և ունեն հետևանքներ, հատկապես տեղական ընկերությունների համար: Ի հայտ են եկել մի քանի պահպանողական կայքեր, որոնք սպառողներին հնարավորություն են տալիս ընտրություն կատարելու, թե ուր ուղղվեն իրենց ֆինանսները, և ով աջակցություն ստանա:

Պարզապես դժգոհելը բավական չէ: Մենք պետք է գտնենք կենսունակ այլընտրանքներ, այնուհետև աջակցենք այդ ընկերություններին: Որո՞նք են այդ պահպանողական ընկերությունները: Վստահ եմ, որ դրանք ավելի շատ են, բայց ներքոհիշյալ ընկերությունները դիմակայել են ծաղրուծանակին և նրանց, ովքեր փորձել են փակել իրենց դռները.

«Մայ փիլոու» (Մայք Լինդել), «Գոյա ֆուդս», «Հոբի լոբի», «Քրեքեր բարել», «Սինտաս» կորպորացիա, «Գեբ», «Փարլեր», «Ռեջիների փաբլիշինգ», «Դանիել դիֆենս», «Հոմ դեպո», «Բաս պրո շոփս», «Շից», «Սթարմ», «Ռուջեր ընդ Կո», «Լաս Վեգաս սանդս» կորպորացիա, «Դեյլի վայրը»:

Այն ընկերությունները, որոնք աջակցում են գրաքննությանը և արմատական մարքսիստական կազմակերպություններին, վտանգավոր են մեր ազատությունների համար: Դրանք վստահ են, որ մարդկանց մեծամասնությունը կհանդուրժի իրենց մարքսիստական նպատակները, որովհետև չի ցանկանա կորցնել իրենց ծառայությունները:

Համաձայն genzconservative.com կայքի՝ ահա տասներկու ընկերությունների ցանկ, որոնց անպայման պետք է բոյկոտել. 1) «Ֆեյսբուք», այլընտրանքներ են՝ «ՄիՎի», «Գեբ», «Գեթթ» և «Հեփի լայֆ սոշլ», 2) Ամերիկայի բանկ, փոխարենն օգտագործեք վարկային միությունները կամ պետության կողմից հավաստագրված բանկերը պահպանողական նահանգներում, 3) «Ջիֆի Մորգան Չեյս» (դադարեցրել է փոխգործակցությունը

պահպանողականների հետ և ապա զրկել նրանց հարթակից), 4) «Նեթֆլիքս» (բնականոն է դարձնում մանկատարփությունը), փոխարինեք այն «Ռամբլեր»-ով, կամ նույնիսկ «Հուլու»-ն ավելի լավ է, 5) «Գուգլ» (սպառնում է և հարթակներից զրկում պահպանողականներին), փոխարինեք «Դաք Դաք Գո»-ով, 6) «Դիսնեյ» (ԶԿԿ-ի ձայնը), ներբեռնեք «Մինո»՝ քրիստոնեական հավելված երեխաների համար, դիտեք «Դիսնեյ»-ի հին տեսասկավառակները, 7) «ԷնԲիԷյ» (թույլ է տվել չինացի հրահանգիչներին իրենց ճամբարներում բռնության ենթարկել երեխաներին), փոխարինեք ձեր որդու, դստեր կամ ընկերների հետ գնդակ խաղալով, 8) «Էփլ» (չինամետ, հակաամերիկյան, հրաժարվեց ահաբեկիչների ապացույցները հրապարակելուց), փոխարինեք «Սամսոնգ»-ով, «Սփոթիֆա»-ով, 9) «ԷնԷֆԷլ» (ակտիվացած քաղաքական հարցերում, հակաամերիկյան), փոխարինեք բակային ֆուտբոլով կամ գոլֆով, 10) «Լևի Սթրաուս» (բացարձակ դեմ է Օրենքի Երկրորդ փոփոխությանը), 11) «Նայք» (հակաամերիկյան): Կան շատ ուրիշներ, բայց սրանք ունեն ամենամեծ ազդեցությունը:

Ազատ աշխարհում առաջարկը և պահանջարկը կստիպեն, որ այս ընկերությունների մեծ մասը ֆինանսական կորուստներ ունենա՝ հասնելով փլուզման եզրին, ինչպես վերջերս կատարվեց «ՍիԷնԷն»-ի հետ, որը գնվեց վարկանիշի կտրուկ անկման վիճակում: Բայց երբ վերահսկում եք խոսույթը՝ որպես մենաշնորհ, դժվար է հասնել արդարադատության: Ըստ էության՝ սա է խնդիրը: Մենք պետք է շարունակենք բարձրացնել մեր ձայները՝ պայքարելու գաղափարների գրաքննության դեմ և հատկապես նրանց դեմ, որոնք ազդում են մեր կրոնի ազատության վրա:

Վերջապես, որոշ ցանցերում կարող է հատուցում լինել: Մեդիա կորպորացիաներն ու անձնավորությունները հսկայական ցնցումներ են տեսել: Քրիստոսի Կուռմոյի և նրա պրոդյուսերի մասնակցությամբ «ՍիԷնԷն»-ի սկանդալներից անմիջապես հետո Ջեֆ Յուկերի հեռանալը «ՍիԷնԷն»-ից միայն սկիզբն է: Խոշոր ներդրող Ջոն Մելոնը նշել է, որ, իր կարծիքով, ցանցը, որն իր նոր հոսքային ծառայության մեկնարկի շեմին է, դարձել է չափազանց բացահայտ ազատական: Եվ այս բոլոր փոփոխությունները հանգեցրել են այն բանին, որ որոշ առաջատար հաղորդավարներ և թղթակիցներ կասկածի տակ են դնում ցանցերի ամուր դեկավարության գո-

յությունը և զարմանում, թե ուր է այն շարժվում: Հատկանշական է, որ «Սիէնէն»-ի հոսքային ծառայությունը ծախողվեց գործարկումից մեկ ամիս անց: Ամբողջ աշխարհում ամեն բան մաղվում և ցնցվում է: Չարը բացահայտվում է, և մարդիկ արթնանում են: Վերջին հնարավորությունն է, բայց չափազանց ուշ չէ:

Մեդիա արդյունաբերության մեջ սխալներ գտնելը բավական չէ: Մեզ անհրաժեշտ են նորարարներ, որոնք կստեղծեն այլընտրանքներ նաև ժամանցի ոլորտում, ինչպիսին «Դրայ բար քոմեդի» հավելվածն է (մաքուր կատակերգություն), որը մեծ հաջողություն ունի: «Ընտրված» (The Chosen) ֆիլմաշարը դարձել է պատմության մեջ ամենահաջող մեդիա նախագիծը և գրավել է միլիոնավոր հեռուստադիտողների աշխարհով մեկ: Կենդանի ներկայացումները և համայնքային թատրոնը կրկին պետք է միանան արվեստին՝ պահպանելով մոտեցումը գեղեցիկի և տաղանդի նկատմամբ: Եկեղեցիները մասնավորապես պետք է զբաղվեն արվեստով և հաղթեն չարին բարիով: Հանգստացնող և հաճելի ժամանցի կարիք կա, այնպիսի ժամանցի, որը ներառում է ստեղծարարությունը և գնահատում պարկեշտությունը, և որին կողմնակից է ամերիկացիների մեծ մասը, ու եթե մեզ չենթարկեին գրաքննության, հավանաբար ավելի շատ մարդիկ կգիտակցեին այդ կարիքն ու պահանջը:

Ազատությունը շնորհված է Աստծո Խոսքով: Ազատությունը շնորհված է մեր Սահմանադրությամբ: Սուրբ գրքում Հիսուսն օգտագործեց ռազմական եզրույթներ և Իր եկեղեցու մասին խոսելիս նույնիսկ գործածեց «էկլեսիա» բառը, որը նշանակում է «վերափոխել կամ տիրանալ՝ ազդելով յուրաքանչյուր ոլորտի վրա»: Պայքարը, որի մեջ հայտնվել ենք, բարու և չարի միջև է: Կոմունիզմը չարիք է: Չարին դիմակայելու մեր պայքարում մենք կռվում ենք օտար հողում գտնվող թշնամիների և մեր երկրում առկա վախկոտության դեմ... Մենք պայքարում ենք չարի դեմ, որն արդարացնում և նույնիսկ գովաբանում է երեխաների սպանությունն արգանդում և լույս աշխարհ գալուց հետո... Չարի, որ ցանկանում է վերահսկել մեզ պառակտման միջոցով... Չարի, որ ապականում է երեխաներին և խեղաթյուրում նրանց մարմինները: Նահանջը չի կարող լինել տարբերակ նման չարիքի դիմաց: Մենք պետք է կռվենք կամ մահանանք և պայքարենք հավատ-

քի համար որպես բարի զինվորներ: Մեզ տրված է ազատություն Աստծուց և ազատություն մեր Սահմանադրությամբ և Իրավունքների մասին հռչակագրով:

Իրավունքների մասին հռչակագիր

Փոփոխություն 1-ում ասվում է.

Կոնգրեսը չպետք է ընդունի որևէ օրենք, որը վերաբերում է կրոնի հաստատմանը, կամ որով արգելվում է դրա ազատ դավանումը, կամ որով սահմանափակվում է խոսքի կամ մամուլի ազատությունը կամ մարդկանց խաղաղ հավաքներ անցկացնելու և Կառավարությանը բողոքներ ներկայացնելու իրավունքը:

Եթե մենք պատրաստակամ չենք նվաճելու այս սարը, ապա ի՞նչ կանի դա: Աշխարհը հետևում է, թե ինչ ենք մենք անելու, որովհետև մենք միակ երկիրն ենք այսպիսի Սահմանադրությամբ: Այն դիմակայել է, բայց կարող է շարունակել մնալ կանգուն միայն այն դեպքում, եթե ուղի կանգնենք նրա պաշտպանության համար:

18

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԿՈՒՄ



Մեր ընտանիքը շարժական տնակով ճամփորդություն կատարեց Այասկայում՝ փորձելով ավելացնել ևս մի քանի ազգային պարկեր մեր ցանկին, որը կազմել էր մեր 12-ամյա դուստրը (յուրաքանչյուր 12-ամյա երեխա պետք է ցանկ ունենա): Մենք ժամանեցինք Դենալի ազգային պարկ, որպեսզի տեսնեինք գեղեցիկ Մաքթինի լեռը: Բայց օրը մռայլ էր և ամպամած: Տեսադաշտում սար չկար: Մի փոքր վիատվելով՝ աղոթեցինք, որ այն երևար, և ոչինչ կարծես տեղի չունեցավ: Ինչպիսի հիասթափություն: Մենք ճաշակեցինք մեր տապակած սաղմոնը և կայանեցինք ամայի մայրուղուն հարակից տարածքում՝ գիշերելու համար:

Հաջորդ առավոտյան արևի մի գեղեցիկ ճառագայթ ընկավ մեր շարժական տնակի պատին և արթնացրեց մեզ՝ ընտանիքի յոթ անդամներիս, որ թեթևակի շարժվում էինք քաղցի զգացումից: Սողալով դուրս եկանք՝ շնչելով առավոտյան հրաշալի օդը, լսելով թռչունների դայլայլը և նկատելով գետինը ծածկած ցողը: Երբ վերև նայեցինք, ի զարմանս մեզ, տեսանք ամենահրաշալի, գեղեցիկ, մասամբ ձյունածածկ տպավորիչ լեռնագագաթը, որ երբևէ տեսել էինք՝ հսկայական իր ամբողջ փառքի մեջ: Ահռելի լեռը արևից ոսկեգույն էր դարձել: Մաքթինի լեռը չհիասթափեցրեց, և մենք անչափ ոգևորված էինք: Առավոտը կարծես նոր լիներ, և այդ օրը մենք զգացինք, որ ամեն բան հնարավոր է:

Ընտանիքը հաճախ այդպիսին է: Մենք թերանում ենք՝ տեսնելու գեղեցկությունը առօրյա ճնշումների մեջ: Կան հիասթափություններ, փորձություններ, հակամարտություն և շատ աշխատանք: Կյանքում ավելի ուշ մենք սկսում ենք գիտակցել, որ իսկական ոսկին և ամենամեծ գեղեցկությունն ընտանիքն է: Այն սարերից ամենաբարձրն է՝ Տիրոջ սարի կողքին:

Աստծո արարչագործության մեջ կյանքը սկսվեց գեղեցիկ Պարտեզում, և Աստծո արարչության ամենաբարձր կարգը արուն և էգն էին՝ տղամարդը և կինը: «Արու և էգ ստեղծեց նրանց»: Աստված սկսեց ընտանիքով: Աստծո հրահանգին չհնազանդվելու որոշումը բերեց խնդիրներ զույգին և նրանց ընտանիքին: Դեմառդեմ կանգնելով Աստծուն՝ Ադամը մեղադրեց իր կնոջը և Աստծուն. «Այս կինը, որին Դու տվեցիր, ասաց, որ ուտեմ, և ես այդպես էլ արեցի»: Նրանց որդի Կայենը, նախանձով և եղբայրական մրցակցության տենչով լցված, սպանեց իր եղբայր Աբելին: Նրանց գեղեցիկ կյանքը խավարեց, մռայլվեց: Ընտանիք ստեղծելու Աստծո ցանկությունն արագ վերածվեց հիասթափեցնող փորձառության:

**Աստված սկսեց
ընտանիքով, և
ես հավատում եմ,
որ Նրա վերջին
օրակարգը
կսկսվի ընտանիքի
արթնությամբ:**

Աստված սկսեց ընտանիքով, և ես հավատում եմ, որ Նրա վերջին օրակարգը կսկսվի ընտանիքի արթնությամբ: «Աստված հայրերի սրտերը կդարձնի դեպի զավակները»: Իմ երկու այլ գրքերում՝ «Նա հասկանում է. 11 տուր, որ կանանց պատանդ է պահում» և «Նողկալին մեզ ոչ մի

տեղ չի փանում. կանայք և տղամարդիկ հաջողության են հասնում միասին», փաստագրվում են, թե ինչպես են տղամարդիկ և կանայք դադարում միմյանց սիրելուց, և ինչպիսի կործանարար հետևանք է դա ունենում նրանց ամուսնության և, վերջին հաշվով, երեխաների վրա: Պարտեզում Աստված առաջին տղամարդուն և նրա ընկերոջն ու կնոջը՝ Եվային, տվեց այն ամենը, ինչ նրանց անհրաժեշտ էր կյանքի համար: Անհնազանդության միջոցով Ադամն ականջ դրեց այն մոլորեցնող ստերին, որոնք սատանան շնչացրել էր կնոջը, և կինն օգտագործեց իր ազդեցությունը՝

համոզելու Ադամին, որ կար ավելին, քան այն, ինչ Աստված տալիս էր իրենց: Սատանայի՝ թշնամու այս հայտնի խոսքերը՝ «Իրավ Աստված ասաց», ծանոթ են բոլորիս՝ անկախ այն բանից, թե ինչին ենք բախվում կյանքում: Միշտ կա գայթակղություն՝ գործելու «մեր ձևով» կամ այն «լավ գաղափարների» համաձայն, որոնք ներարկել են մեր մեջ շուկայավարները, հայտնի մարդիկ, մանկավարժները, կառավարությունները և բոլոր նրանք, որոնք ցանկանում են մեր ֆինանսներն ու ազդեցությունը:

40-ականների և 50-ականների ընտանեկան ամուր արժեքներն իրենց տեղը զիջեցին 60-ականների սեռական ապստամբությանը և անառակությանը, որին հաջորդեց թմրանյութերի մշակույթը և 70-ականների և 80-ականների «եթե լավ ես զգում, արև դա» փիլիսոփայությունը՝ զարգացնելով ամուսնալուծության ուժեղ մշակույթ: Հավանաբար 70-ականների կանանց շարժումն ապստամբություն էր, որ ծնվել էր այն ցավից, որը վերապրում էին բազմաթիվ կանայք, երբ նրանց ամուսինները թողնում էին իրենց և հարաբերվում ավելի երիտասարդ կանանց հետ: Այս շարժումը զուգորդվում էր 60-ականներին ազատ սեռահարաբերության մասին հնչող ուղերձներով: Ենթադրվում էր, որ կանանց կտրվի հավասար վարձատրություն հավասար աշխատանքի, իշխանության և ազատության համար, բայց սա հանգեցրեց կանանց ավելի մեծ դժգոհության, և ընտանիքի խաթարումը դարձավ նորմ: Սեռական հեղափոխության այլասերվածությունը մատուցվեց որպես ազատություն և բավարարում: Սատանան գիտի, թե ինչպես օգտագործի այնպիսի արդար շարժառիթ, ինչպիսին հավասարությունն է, և զուգակցի այն թունավոր գործողություններով, որոնք կյանքեր են կործանում:

Խնդիրը մեղքն է: Այդ մեղքը եսասիրությունն է: Ամեն անգամ, երբ մարդիկ սեռական մտերմություն են ունենում որևէ մեկի հետ, դա հոգևոր գործողություն է, որը երկուսին մեկ է դարձնում ոչ միայն բնական կամ ֆիզիկական, այլև հոգևոր առումով: Սեռահարաբերությունն ավելի քան ֆիզիկական է. այն նաև հոգևոր է: Երբ մարդիկ սեռական հարաբերություն են ունենում ինչ-որ մեկի հետ՝ հոգուց հոգի, այն ամենը, ինչ նրանք ունեն, միավորվում է կամ կապվում է զուգընկերոջ հետ: Աստված նախատեսել էր սեռական հարաբերությունը խոր մտերմության համար, որն ամուս-

նությամբ կկապեր երկու մարդու ամբողջ կյանքում: Ահա թե ինչու է Աստվածաշունչը զգուշացնում մեզ հեռու մնալ անառակ կնոջից: «Դժոխքի ճանապարհին է նրա տունը, որ իջնում է մահվան սենյակները»: Սա կործանարար է: Հոգևոր էակները տիրում են մեղավոր անհատների հոգիներին, և սեռական միությունը ստիպում է այս ոգիներին տիրել և տեղափոխվել այն անձանց մեջ, որոնք սեռականորեն «մեկ են դարձել» իրենց հետ: Ամուսնությունների և սեռական միությունների մեծ մասն առողջ չէ, որովհետև դրանք սկսվել են անհնազանդությամբ:

Ինչ հետևանք է ունենում ոգիների այս տեղափոխումը: Նայե՛ք այն շփոթությանը, որին այսօր բախվում են մարդիկ, հատկապես երեխաները: Այն դրսևորվում է անհատներին վերագրվող հոգնակի դերանուններով, ոչ երկբևեռ գենդերային հայտարարություններով, անվան և սեռի փոփոխություններով, սեռական անբարոյությամբ և ծաղրով, տրասնգենդերիզմով, սեռափոխության վիրահատություններով, ամլացմամբ, ինքնասպանությամբ և մահվամբ: Սրանք պետության, կրթական և բժշկական համայնքների կողմից գործի դրված գաղափարախոսություններ են, որոնք հրամցվում են երեխաներին, մինչ ծնողները թողնում են նրանց՝ ժամերով աշխատելով, որպեսզի վճարեն իրենց պարտքերը: Հիմքը թույլ է: Պոռնկագրությունը, սիրային կապերը (ինչպես երևակայական, այնպես էլ իրական), ճնշումները և կյանքի հոգսերը խեղդում են ընտանիքի սերը և գեղեցկության լույսը:

Ինչնու Աստված երկուսին մեկ դարձրեց: Որովհետև Նա փնտրում էր աստվածային սերունդ (երեխաներ): Սատանան բաժանում է ընտանիքը, որովհետև նա նույնպես աստվածային սերունդ է փնտրում: Ծնողները պետք է արթուն լինեն վտանգների համար և վերականգնեն Աստծուց տրված իրենց ծնողական իրավունքները, որպեսզի ուղղորդեն իրենց երեխաներին այն ճանապարհով, որով նրանք պետք է գնան, այլ ոչ թե այն, որը ցանկանում է պետությունը: Մենք պետք է հակադրվենք չարին, հատկապես երբ այն դիպչում է հասարակության ամենախոցելի շերտին:

Ո՞րն է խնդիրների լուծման ուղին: Մեկ բառ՝ տղամարդիկ: Մենք ավելի շատ լավ տղամարդկանց կարիք ունենք: Աստծո տղամարդիկ, որոնք պատրաստ են սիրելու իրենց կանանց և երեխաներին, ամենամեծ լուծումն են և, ցավոք սրտի, չափազանց քիչ են: Եթե

տղամարդիկ օրինակ ծառայեն, թե ինչպիսին է սիրող ամուսինը և հայրը, լավ կանայք կհետևեն նրանց օրինակին, և երեխաները՝ նույնպես: Տղամարդիկ այն կատալիզատորներն են, որոնք անհրաժեշտ են սխալներն ուղղելու, ընտանիքը պաշտպանելու և խավարն ու ամպերը քշելու համար: Երբ տղամարդիկ ապստամբում են Աստծո դեմ, կանայք նույնպես ապստամբում են, իսկ երեխաներն ապստամբում են ծնողների դեմ: Մեր որոշումները մշտապես ազդում են մեր իշխանության ներքո գտնվողների վրա: Մեզ խիստ անհրաժեշտ է տղամարդկանց արթնություն, որպեսզի նրանք իրենց սրտերը դարձնեն դեպի իրենց կանայք և, հատկապես, իրենց երեխաները: Ես չեմ կարող մտածել մշակույթի վրա ազդող ավելի մեծ գործոնի մասին, քան այս սարն է, և ավելի մեծ ուժի, քան հոր ուժն է: Մշակույթի ավերածության մեծ մասը կարող է անկասկած վերականգնվել հոր, լավ հոր միջոցով: Իսկ տղամարդիկ չեն կարող լինել լավը առանց Աստծո:

Աստված Ադամին ու Եվային տվեց ևս մեկ որդի իրենց որդուն կորցնելուց հետո: Նրա անունն էր Սեթ, և Հիսուս Քրիստոսի տոհմաբանությունը սկսվեց նրանով: Երբ ամեն բան մոխրագույն էր և ամպամած, Աստված ուղարկեց Իր պատասխանը, որպեսզի Որդին փայլեր, և մեծափառությունը հայտնվեր աշխարհում: Հայտնվեց մի գեղեցիկ սար՝ Տիրոջ սարը: Մենք տեսանք այն, և այն փառավոր էր:

Ոչ մի սար չի գերազանցում այս սարին: Ընտանիքը վիրավոր է, բայց հրաշագործ բժշկությունը հնարավոր է: Կանայք և երեխաները փափագում են աստվածապաշտ տղամարդկանց, որոնք ներկայացնում են մեր Հորը:

**Մենք ավելի շատ
լավ տղամարդկանց
կարիք ունենք: Աստծո
տղամարդիկ, որոնք
պատրաստ են սիրելու
իրենց կանանց և
երեխաներին, ամենամեծ
լուծումն են և, ցավոք
սրտի, չափազանց քիչ
են: Եթե տղամարդիկ
օրինակ ծառայեն, թե
ինչպիսին է սիրող
ամուսինը և հայրը,
լավ կանայք կհետևեն
նրանց օրինակին, և
երեխաները՝ նույնպես:**

«Կրթի՛ր երեխային իր ճանապարհի համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանա նրանից»:

– Առակաց 22.6

«Սրա համար մարդը կթողնի իր հորը և իր մորը և կհարի իր կնոջը, և մեկ մարմին կլինեն»:

– Ծննդոց 2.24

«Կինդ պողաբեր որթի պես է քո տան ներսերում. որդիներդ՝ տնկված ձիթենիների պես քո սեղանի չորս կողմով»:

– Սաղմոս 128.3

«Բայց եթե Տիրոջը ծառայություն անելը ձեզ անհաճո է, ընտրե՛ք այսօր ձեզ համար, թե ո՞րն եք պաշտելու. գետի այն կողմում ձեր հայրերի պաշտած աստվածներին, թե՞ ամորհացիների աստվածներին, որոնց երկրի մեջ դուք բնակվում եք. բայց ես և իմ տունը Եհովային ենք պաշտելու»:

– Հեսու 24.15

«Իր տանը բարի վերակացու լինող, որ որդիներ ունենա հնազանդության մեջ ամեն պարկեշտությունով»:

– Ա Տիմոթեոս 3.4

19

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ԵՐԱՋԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔ



Մեզ անհրաժեշտ են ամուր ամուսնություններ և ընտանիքներ Ամերիկյան փրկելու համար: Երեխաները կարիք ունեն անվտանգության և սիրո, որոնք տալիս են ամուր ընտանիքները: Գարին և ես շատ տարբեր անհատականություններ ենք, ինչպես ամուսնական զույգերի մեծ մասը: Հակադիր կողմերը ձգում են միմյանց: Բացի այդ՝ տղամարդկանց և կանանց ուղեղները, իրականում, ֆիզիոլոգիապես տարբեր են: Մեր տարբերություններով հանդերձ մենք ավելի լավ մարդիկ ենք և ունենք ավելի լավ կյանք մեր ամուսնության շնորհիվ: Մեր երեխաները նույնպես ավելի լավն են մեր տարբերությունների պատճառով: Մեր հույսն այն է, որ ամբողջ սրտով Քրիստոսին հետևելուն զուգընթաց մեր ավելի լավ որակներն ու բնավորության գծերը կգարգանան մեր երեխաների մեջ, և «*Երկուսը լավ է, քան թե մեկը, որ նրանք վարձք ունեն իրենց աշխատանքից*» խոսքը կիրականանա մեր երեխաների կյանքում (Ժողովող 4.9): Մենք միմյանց կարիքն ունենք ծանրությունը կրելու և ներդրում կատարելու համար. «*Որովհետև եթե վայր ընկնեն, մեկը մյուսին վեր կկացնի. բայց վայ մեկին, որ ընկնի, և մի երկրորդ չկա, որ նրան կանգնեցնի*» (Ժողովող 4.10): Միայնակ ծնողները նույնպես կարող են միանալ Աստծուն և ստանալ «օգնություն» և ցուցումներ Աստծո սկզբունքներով իրենց երեխաներին մեծացնելու համար: Ներգրավվեք նրանց Աստծո ընտանիքի մեջ եկեղեցու և տարբեր միջոցառումների մի-

ջոցով, որոնք օժանդակում են ձեր ջանքերին ամուսնու բացակայության պարագայում:

Աստծո և մեր ամուսնության հանդեպ նվիրվածությունն օգնել է մեզ հաղթահարելու կյանքի փոթորիկները և պայքարելու մեր ամուսնության համար... Անդադար աղոթքները և հաղորդակցությունը նույնպես մեծ դեր են ունեցել: Բախումներ լինում են յուրաքանչյուր ամուսնության մեջ, և ամենամարտունի ընտանիքները պետք է սովորեն հաղորդակցվել, որպեսզի ըմբռնումով լուծեն բախումները: Հասկացե՛ք դիմացինի վիճակը՝ ձեզ դնելով նրա փոխարեն: Եսասիրությունը հարցնում է. «Ինչպե՞ս սա կազդի ինձ վրա»: Սերը հարցնում է. «Ինչպե՞ս սա կազդի նրա վրա»: Իմացե՛ք, թե երբ հրաժարվե՛ք ինչ-որ բաներից: Խաղաղությունը կարող է ավելի լավ լինել, քան ճիշտ լինելը: Մենք կարող ենք սովորել հաղորդակցվել խոնարհությամբ՝ փոխանակ ապացուցելու, որ մենք ճիշտ ենք, իսկ նա՝ սխալ: Ոչ ոք չի հաղթում այդ խաղում: Մենք պետք է իմանանք նահանջելու ժամանակները: Ընտրե՛ք ճիշտ պահը և որոշե՛ք, թե որն է ամենակարևորը: Տղամարդիկ կենտրոնանում են մեկ բանի վրա, ուստի եթե փորձեք խոսել նրանց հետ, երբ նրանք կենտրոնացած են մեկ այլ բանի վրա, դա անօգուտ է: Եվ միշտ չէ, որ կանայք շարժվում են զուտ տրամաբանությամբ, իրենց գերզգայուն ընկալման կարողությունների շնորհիվ նրանք կարող են զգալ ավելին՝ այն, ինչ վարագույրի հետևում է: Մենք միմյանց հետ պետք է աշխատենք հաջողության համար, այլ ոչ թե հարձակվենք մեր տարբերությունների վրա: Երեխաները դիտում են մեր վարքագիծը, նվիրվածությունը և առաջնահերթությունները և սովորում:

Ministry-to-children.com կայքի անցկացրած մանկական ծառայության վերաբերյալ հարցման հինգ հիմնական արդյունքները ցույց են տվել, որ.

Մանկությունն այն ժամանակն է, երբ մարդկանց մեծ մասը գտնում է Հիսուսին: Անկախ նրանից, թե ով է անցկացնում հարցումը, գերակշռող է մեկ փաստ: Երբ մարդը դառնում է չափահաս, Քրիստոսին ընդունելն ավելի ու ավելի հազվադեպ է դառնում: Ավետարանչությունն ամենից արդյունավետ է մանկության և պատանեկության տարիքում: Քրիստոնյաների 2/3-ը եկել է հավատքի մինչև 18 տարեկանը:

43 տոկոսն ընդունել է Քրիստոսին նախքան 12 տարեկան դառնալը: Ներկայիս հավատացյալների 1/4-ից պակասը ընդունել է Քրիստոսին 21 տարեկանից հետո, և երկրորդ՝ ծնողներն ամենաշատ ազդեցությունն ունեն նրանց վրա: Յուրաքանչյուր ծնող ունի Աստծուց տրված արտոնություն՝ սովորեցնելու երեխաներին, թե ինչպես նրանք ապրեն: Մենք չպետք է զարմանանք, որ երիտասարդները հաճախ գալիս են Հիսուսի մոտ սիրող մոր կամ հոր շնորհիվ:

- Մեր ընթերցողների 50 տոկոսը նշել է, որ ծնողներն օգնել են, որ իրենք դառնան դեպի Քրիստոսը:
- Քրիստոսին ընդունած երեխաների կեսին առաջնորդել են իրենց ծնողները:
- Մեր ընթերցողների 24 տոկոսը նշել է ընտանիքի այլ անդամների՝ որպես գործոնի:

Երրորդ՝ մանկական ծառայությունը կարևոր է: Ծնողների դերը չի բացառում կամ նվազեցնում եկեղեցու առաքելությունը: Հիսուսը ուղղություն ցույց տվեց բոլոր հոգևոր համայնքների համար, որոնք կրում են Իր անունը, երբ ասաց. «Թո՛ղյլ տվեք, որ երեխաներն Ինձ մոտ գան»:

Աստվածաշունչը բազմաթիվ հզոր օրինակներ է բերում, որոնք հաստատում են երեխաների կարևորությունը եկեղեցու կյանքում և առաքելության մեջ: Դա սկսվում է փոխհարաբերություններից: Մեր հարցումը պարզեց, որ մանկական ծառայությունը և քրիստոնյա հասակակիցները կարևոր գործոն են այն բանում, թե ինչպես են մարդիկ գտնում Հիսուսին:

- Մեր ընթերցողների 29 տոկոսն ասաց, որ մանկական ծառայությունը (կամ մանկական ծառայության ավագը) օգնել է իրեն՝ ընդունելու Քրիստոսին:
- 26 տոկոսը, որպես գործոն, նշել է այլ երեխաների, այսինքն՝ ընկերների, որոնք քրիստոնյաներ են:

Մենք ծառայում ենք, որովհետև Հիսուսը սիրում է երեխաներին: Երբ մանկական ծառայության վերաբերյալ հարցում անցկացրինք մեր ավագների հետ, խնդրեցինք, որ նրանք նկարագ-

րեն իրենց ծառայության շարժառիթը:

Քրիստոսի սերը երեխաների հանդեպ նրանց գերակշռող պատասխանն էր:

- 86 տոկոսը պատասխանել է, որ Հիսուսը սիրում է երեխաներին:
- 23 տոկոսը զգում է, որ եկեղեցին կամ հովիվը հույսեր է կապում իրենց հետ:
- 23 տոկոսը, որպես շարժառիթ, հիշում է իր փրկությունը մանկության տարիներին:

Գոհություն Աստծուն, որ եկեղեցում կան մարդիկ, որոնք գնահատում են երիտասարդների և երեխաների համար ծառայությունը և ծառայում են նրանց: Կենսունակ եկեղեցին մեծ կարևորություն պետք է տա՝ հասնելու ամենափոքրերին, բայց ո՛չ նշանակությամբ, այլ տարիքով:

Երեխաները, որոնք ունեն հոգևոր ազդեցություն, շատ ավելի քիչ հավանական է, որ կախվածության մեջ կընկնեն թմրանյութերից կամ կունենան ընճվածություն կամ ինքնասպանության միտումներ: Համաձայն մի նոր ուսումնասիրության՝ պատանիները, որոնք կանոնավոր հաճախում են եկեղեցական ծառայությունների և բնութագրում իրենց որպես հավատացյալի, ավելի քիչ հավանական է, որ փորձարկումներ կանեն թմրանյութերի և ալկոհոլի հետ:

Բեյլորի համալսարանի Կրոնագիտության ինստիտուտի, Ակրոնի համալսարանի և Քեյս Վեսթերն Ռեզերվ բժշկական համալսարանի հետազոտողներն ուսումնասիրել են 195 անչափահաս հանցագործների: Այս ուսումնասիրության մասին գրված է «Հարբեցողության եռամսյա բուժում» ամսագրում:

Անչափահաս հանցագործները դատարանի, հոգեկան առողջության մասնագետի կամ բժշկի կողմից ուղղորդվել են երկամսյա ստացիոնար բուժման և գնահատվել են հետազոտողների կողմից ընդունման և դուրսգրման ժամանակ՝ հարցազրույցների, բժշկական քարտերի ուսումնասիրման, թմրանյութերի զննման, ինչպես նաև երիտասարդների, ծնողների և բժիշկների զեկուցումների միջոցով:

Ուսումնասիրության արդյունքները, որոնք օժանդակում են հետազոտությունների աճին, ցույց են տալիս, որ երիտասարդները, որոնք կապվում են «ավելի բարձր ուժի» հետ, ավելի նպատակասլաց են, և ավելի քիչ հավանական է, որ նրանց կանհանգստացնի անհամապատասխան լինելու զգացումը՝ համաձայն Բեյլորի համալսարանի Կրոնագիտության ինստիտուտի համատնօրեն, փիլիսոփայության դոկտոր, հետազոտող Բայրոն Ջոնսոնի:

Ծնողները զբաղված են, և կյանքն ավելի է ու ավելի բանուկ է դառնում. կարծես արագությունը դուրս է գալիս վերահսկողությունից: Ինձ հաճախ հարցնում են. «Ինչպե՞ս եք հասցնում և անում այն ամենը, ինչ անհրաժեշտ է անել»: Իմ կյանքի բանալիներից մեկը, և հավատում եմ, որ այն նաև ձերն է, ժամանակները զանազանելն է և ժամանակաշրջանի համաձայն ընտրություն կատարելը: Ժողովողն ասում է. «*Ամեն բանի ժամանակ կա*»: Գրեթե ինը տարի ես կարողացա աշխատել որպես մեր եկեղեցու երիտասարդական ծառայության ավագ և այդ ընթացքում օգնեցի իմ դեռահաս զավակներին՝ աճելու Քրիստոսում՝ միաժամանակ օգնելով մյուս դեռահասներին և ներդրում կատարելով Աստծո Թագավորության մեջ: Ես ոչ միայն կարողացա ժամանակ անցկացնել իմ երեխաների հետ և օգնել ուրիշներին աճելու, այլև ինքս աճեցի, և այս փորձառությունն օգնեց ինձ սահմանելու իմ կյանքի հաջորդ փուլերից մի քանիսը: Արդյո՞ք երբեմն դժվար էր կամ ժամանակատար: Այո՛, կարող եք վստահ լինել: Արժե՞ր դա: Միանշանակ: Ես չկորցրի այս ժամանակն իմ երեխաների հետ՝ հետամուտ լինելով իմ փառասիրական նպատակներին: Ես միավորեցի հնարավորությունները, որպեսզի ներդրում կատարեի նրանց մեջ՝ միաժամանակ հաճույք ստանալով այն բանից, որ օգտագործում եմ իմ պարզևները:

Ես տեսնում եմ իմ ներդրման պտուղը իմ չափահաս երեխաների, այլ երիտասարդների և իմ իսկ հոգևոր աճի մեջ: Շատ տարիներ առաջ ես թողեցի աղջիկների բասկետբոլային թիմի մարզչի աշխատանքը, որովհետև մեր երեխաները փոքր էին, և աշխատանքին հատկացված ժամանակը շեղում էր ինձ մեր աճող, երիտասարդ ընտանիքից: Դա ճիշտ ժամանակը չէր: Փոխհատուցումը պարզապես չարժեր այն ժամանակին, որ անցկացնում էի մեր փոքր երեխաներից հեռու: Տվյալ ժամանակաշրջանում ես

ճիշտ առաջնահերթություն ընտրեցի: Այնպես չէ, որ դուք չեք կարող ունենալ այդ ամենը, դուք պարզապես չեք կարող ունենալ այդ ամենը միաժամանակ:

Ինչ եք անում այս ժամանակաշրջանի և այն ժամանակի հետ, որ դուք ունեք: Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի հստակ և կարևոր պահանջներ, որոնք հիմք են դնում հաջորդ ժամանակաշրջանի հաջողության համար: Ես քաջալերում եմ մայրերին

Ես քաջալերում եմ մայրերին ներդրում կատարել իրենց երեխաների մեջ, քանի դեռ նրանք փոքր են, և չգնալ ամբողջ դրույքով աշխատանքների կամ ծառայության հետևից, բայց նաև որոշ ժամանակ հատկացնել իրենց պարզևներին գործածմանը:

ներդրում կատարել իրենց երեխաների մեջ, քանի դեռ նրանք փոքր են, և չգնալ ամբողջ դրույքով աշխատանքների կամ ծառայության հետևից, բայց նաև որոշ ժամանակ հատկացնել իրենց պարզևների գործածմանը: Դուք բաց չեք թողնի հնարավորության արագ անհետացող փոքրիկ պատուհանը նրանց հետ, և սա կօգնի, որ կյանքի հաջորդ ժամանակաշրջանները կառուցվեն ավելի ամուր հիմքի վրա:

Տվյալ ժամանակաշրջանում զբաղվեք այնպիսի գործունեության

ամբ, որը հնարավորություն կտա առավելագույն ժամանակ անցկացնելու ձեր երեխաների հետ, որպեսզի ուղղորդեք և կրթեք նրանց: Ժամանակը, որ օգտագործվում է նրանց բնավորության և սրտի մեջ ներդնելու, ինչպես նաև առօրյա կյանքում Աստծո Թագավորության օրինակը ցուցադրելու մեջ, անհավանական հատուցում է ունենում:

Հովիվներ և ավագներ, մենք պետք է համագործակցենք մեր երիտասարդների թշնամիների դեմ պայքարելու և նրանց սրտերը պաշտպանելու համար: Եթե ձեր եկեղեցին վճռականորեն չի ձգտում հասնելու երիտասարդների այս սերնդին, դուք պետք է սկսեք դա անմիջապես: Մենք կորցրել ենք ժամանակը, բայց դեռ ուշ չէ իրավիճակը արմատապես փոխելու համար: Երբ երիտասարդները վերապրում են Աստծուն և Նրա զորությունը, դա հակվածություն է առաջացնում, և Նրա հպումը կարող է կերպարա-

նափոխել նրանց: Ստեղծե՛ք մթնոլորտ, որտեղ կդրսևորվի Աստծո զորությունը, և ակտիվորեն մասնակցե՛ք եկեղեցում երիտասարդական և ընտանեկան ծառայությանը: Կերպարանափոխման սկզբունքները, որ փոխում են մեծահասակներին, փոխում են նաև երիտասարդներին:

Մեր երեխաները մեր կողքին էին, երբ մենք ծառայում էինք, և դա հնարավորություն տվեց նրանց ժամանակ անցկացնելու մեզ հետ և ձեռք բերելու նպատակ: Նրանք վարակվեցին մեր ջերմեռանդությամբ, որովհետև երեխաները նմանվում են նրանց, ովքեր «սովորեցնում են իրենց», առաջին հերթին՝ մեզ: Եթե մայրերն ու հայրերը և հովվական առաջնորդները լինեն երեխաների հիմնական ուղեկիցները և ուսուցիչները՝ կրթական գաղափարախոսությունների փոխարեն, երիտասարդները ստիպված չեն լինի ենթարկվել իրենց շրջապատող աշխարհի գայթակղություններին: Մեր հինգ երեխաներից ոչ մեկը չի ապստամբել մեր կամ Աստծո դեմ: Մենք այնքան լավը չենք, Աստծո ճանապարհներն են լավը:

Ուզում եմ պատմել մի քանի հուսադրող վկայություն մեր երիտասարդական հովիվ և հարս Ալեսիայից:

«Գրեթե տասներեք տարի ես ներգրավված եմ եղել երիտասարդական ծառայության մեջ որպես երիտասարդական ավագ և հովիվ: Տեսել եմ 12 դասարան ավարտած, ամուսնացած բազմաթիվ զույգերի, որոնք եղել են մեր երիտասարդական խմբում, այնուհետև հետևել եմ, թե ինչպես են նրանք սեփական գործ սկսել, երեխաներ ունեցել և անցել կյանքի շատ այլ կարևոր իրադարձությունների միջով: Ես անփորձ չեմ: Հեշտ է նայել քեզ շրջապատող աշխարհին և հիասթափվել: Արագ տարածվող մեղքը և արդարության հանդեպ բացարձակ արհամարհանքը հուսահատեցնող են, հատկապես եթե չունես որևէ կապ այս սերնդի հետ:

Սեփական փորձից կարող եմ ասել, որ եկող սերունդները զարմանալի են: Նրանք ստեղծագործող են, սրտացավ, ուժեղ, համարձակ և աշխարհը փոխելու հնարավորություն են փնտրում: Նրանք ունեն ուժեղ համոզմունքներ և չեն վախենում առաջ ցատկելուց և ուրիշներին պաշտպանե-

լուց: Այս սերնդի ամենամեծ խնդիրը ես ու դու ենք: Աշխարհը նոր սերունդներին հասնելու համար ներդնում է այն ամենը, ինչ ունի՝ փող, ժամանակ, ռազմավարություն, մարդիկ և ստեղծագործական կարողություններ: Մինչդեռ մեզնից շատերը Քրիստոսի մարմնում վերևից են նայում երիտասարդներին և արդարանում են, թե ինչու չեն աշակերտում նրանց:

Ես տեսել եմ պատանիների և քսանը բոլորած երիտասարդների, որոնք փրկվել են, ազատագրվել, ազատվել և բժշկվել: Բայց, որ ավելի կարևոր է, տեսել եմ, թե ինչպես են այս պատանիները ուղղվում և իրենց ընկերներին առաջնորդում դեպի այն նույն փրկությունն ու ազատագրումը, որ իրենք են վերապրել: Ես երեսունից ավելի պատանիների տարել էի միսիոներական ճամփորդության, որին մասնակցում էին նաև այլ միսիոներներ, և նրանց համար անհավատալի էր այն գորությունն ու իշխանությունը, որոնցով այդ պատանիները գործում էին: Այս երեխաներն անհետանում և գրեթե բաց էին թողնում ավտոբուսները, որովհետև շրջում էին գյուղերում՝ համոզվելու, որ չկա մեկը, ով չի լսել Թագավորության Բարի լուրը կամ չի ստացել բժշկություն: Ես տեսել եմ, թե ինչպես են երեխաներն ազատագրվել կախարդությունից՝ ճամբարից վերադառնալով տուն և այրելով «կախարդական» գրքերը:

Ես աշխատել եմ ավագ դպրոցականների հետ, որոնք գերադասում էին ժամեր անցկացնել երկրպագության մեջ, քան տեսախաղեր խաղալ կամ զվարճանալ աշխարհում: Նրանք գերադասում էին մինչև գիշերվա ժամը 1-ը ժամանակ անցկացնել իմ տանը և խոսել Աստվածաշնչի մասին, քան գնալ սրճարան: Նրանք Հիսուսի մասին խոսելու հնարավորություններ են փնտրում: Սա մեկ մարդու կյանք չէ, կամ միանգամյա, պատահական դեպքեր չեն: Սա ամենօրյա իրադարձություն է ինձ համար: Թեև ես երիտասարդական հովիվ եմ և ամեն օր երիտասարդների հետ աշխատելու արտոնություն ունեմ, բայց եթե օգտվեք նրանցից մի քանիսի հետ խոսելու հնարավորությամբ:

յունից, կոտեսնեք, որ սա հազվադեպ չէ, ինչպես կարծում եք: Իհարկե, կան տխուր պատմություններ, և ինքս կործանված կյանքերի ականատես եմ եղել, բայց այս երիտասարդների մեջ կա ավելի շատ հույս, քան դուք գուցե մտածում եք: Նրանք պարզապես փնտրում են մեկին, ով կհավատա իրենց, կսիրի իրենց, կլսի իրենց և ներդրում կկատարի իրենց մեջ:

Այս սերունդը վառվում է Աստծո համար և ծարավ է Նրան: Ինքս անթիվ անգամներ մարտահրավեր եմ ստացել այս սերնդից իմ հավատքի հարցում: Ցանկանում եմ մարտահրավեր նետել ծնողներին, հովիվներին, երիտասարդ չափահասներին և ցանկացած մարդու, որ կարդում է այս գիրքը. բացե՛ք ձեր կյանքը եկող սերունդների համար: Ներգրավվե՛ք ձեր տեղական երիտասարդական խմբում, քաջալերե՛ք նրանց ամեն հնարավորության դեպքում, աղոթե՛ք նրանց համար և աղոթե՛ք բոլոր երիտասարդական հովիվների համար: Մենք դրա կարիքն ունենք:

Աստված բոլորիս տվել է ժամանակի, տաղանդի և եռանդի պարգևներ: Խանդավառությունը բորբոքում է եռանդը:

Ես այնքան էլ եռանդուն չեմ այն բանի հանդեպ, ինչ չեմ ցանկանում կամ չեմ ցանկանում անել: Ես կարող եմ ուժասպառ լինել, բայց եթե մեր չափահաս զավակներից որևէ մեկից զանգ եմ ստանում, որ ինչ-որ տեղ գնամ կամ ինչ-որ բան անեմ, անմիջապես խանդավառվում եմ: Մենք ներդրում կկատարենք այն առաջնահերթությունների մեջ, որտեղ ունենք վառվող ցանկություն որևէ բանի, որևէ մեկի կամ ապրելակերպի համար: Մեր մշակույթը փոխելու և երիտասարդներին հասնելու համար մենք պետք է ունենանք վառվող ցանկություն՝ մղելու նրանց Աստծո հետ կենսական փոխհարաբերության մեջ:

Մենք նաև պետք է ներգրավվենք պայքարի մեջ, որպեսզի օրինականորեն և հոգևորապես պաշտպանենք երեխաներին կառավարական ոլորտներում գտնվող այն ուժերից, որոնք կփորձեն վնասել նրանց այնպիսի գաղափարախոսությամբ, որը գողանում է նրանց անմեղությունն ու մաքրությունը: Թշնամին գիտի ինչպես ապականել անմեղությունը, բայց արթուն

**Թշնամին գիտի
ինչպես ապականել
անմեղությունը, բայց
արթուն ծնողները կարող
են հասցնել պատասխան
հարված՝ պաշտպանելով
իրենց երեխաներին
և եկեղեցիները,
ինչպես նաև կարող են
հատկացնել ժամանակ
և միջոցներ հրաշքների
մթնոլորտ ստեղծելու
համար:**

Ծնողները կարող են հասցնել պատասխան հարված՝ պաշտպանելով իրենց երեխաներին և եկեղեցիները, ինչպես նաև կարող են հատկացնել ժամանակ և միջոցներ հրաշքների մթնոլորտ ստեղծելու համար: Երբ երիտասարդները վերապրում են Աստծո զորությունը և փոխհարաբերության միջոցով մոտենում Նրան, նրանց սրտերը բորբոքվում են, և դա փոխում է ամեն բան:

Մենք ունենք շատ պատմություններ երեխաների և երիտասարդների մասին, որոնք սովորում են կիրառել Թագավորության սկզբունքները և վերապրում Աստծո զորությունը: Նրանք մտնում են երկրպագության մեջ և ուսումնասիրում սուրբգրային խոսքերը, որպեսզի ստանան ավելին Նրա հետ կենդանի և շունչ տվող փոխհարաբերություններից:

Դարսիի պատմությունը

Երբ Դարսին իննուկես տարեկան էր, ծնողներին ասաց, որ ուզում է ձի ունենալ: Այդ ժամանակ նրանց հարևանները իրենց թոռների համար ձի էին գնել, և Դարսին սիրում էր այդ ձիուն: Նրա հայրն այնքան էլ վստահ չէր ձի պահելու հարցում: Իր խոսքերով՝ նա «քաղաքի տղա» էր և ոչինչ չգիտեր ձիերի մասին: Փոխարենը փորձեց համոզել Դարսիին վարել հողե ճանապարհների մոտոցիկլետ, բայց Դարսին տարված էր ձի ունենալու ցանկությամբ: Նա ասաց հորը, որ հովիվ Գարին ասել է, որ Տերը կարող է շարժել թագավորի սիրտը (Առակաց 21.1), և նշեց, որ ոչ միայն կաղոթի, որ իր հայրիկի սիրտը փոխվի, այլև կաղոթի և ֆինանսական սերմ կցանի ձիու համար: Մանկական հավատքը խոսում է վստահության մասին: Ինչպես կարող էր նրա հայրն ասել՝ ո՛չ: Չէ՛ որ նա քաջալերում և պաշտպանում էր այն ամենը, ինչ նրանք ամեն շաբաթ լսում էին եկեղեցում:

Ապրիլի 4-ին Դարսին տվեց եկեղեցուն 20 դուլար՝ որպես հավատքի սերմ ձիու համար, բայց ո՛չ ցանկացած ձիու: «Ես ցանեցի մուգ դարչնագույն զամբիկի համար, նկատի ունենալով նաև գույնը և սեռը, այնպես որ ես շատ հստակ էի: Եվ ես ցանկացա, որ այն լինի հրապուրիչ, հեծնելի, ենթարկվող և առողջ»: Շատ չանցած՝ նրանց զանգեց ընկերներից մեկը, որը ցանկանում էր ազատվել իր ձիուց, և դա հրաշալի ձի էր, հենց այն, ինչի համար Դարսին ցանել էր: Առաջին տարում Դարսին միացավ ակումբին և մասնակցեց մրցաշարերի, որոնցից վերադարձավ բազմաթիվ գավաթներով:

Այնտեղից նա տեղափոխվեց նոր դասարան, որը կենտրոնացած էր ցուցադրության, ցատկի և ձիասպորտի այլ ձևերի վրա: Երկրորդ տարում նա գնաց նահանգային ցուցահանդես, որտեղ մրցում էր այն մարդկանց հետ, որոնք 25-50 հազար դուլար էին ծախսել ձիերի համար: Դարսին իր ձին ստացավ անվճար՝ ցանած սերմի հիման վրա, և ես պետք է նշեմ, որ ո՛չ նա, ո՛չ էլ նրա գեղեցիկ զամբիկը նույնչափ չէին մարզվել, որքան մյուս մրցակիցները: Անկախ այդ փաստերից՝ Դարսին գիտեր, որ Աստված օգնելու էր իրեն գրավելու առաջին տեղը նահանգային ցուցահանդեսում: Երբ մրցավարը ոտքի կանգնեց, որ հայտարարի հաղթող մրցակիցների անունները, ասաց, որ սա եղել է ամենամրցակցային դասարաններից մեկը, որ երբևէ տեսել է նահանգային ցուցահանդեսում, և ավելացրեց, որ լավագույն տասնյակում տեղ զբաղեցնելը նշանակում է, որ մրցակիցը շատ լավ է հանդես եկել: Նա սկսեց հայտարարել հաղթողների անունները՝ 10-րդ տեղից սկսած, և վերջում տվեց Դարսիի անունը, որը զբաղեցրեց առաջին տեղը: Մինչ օրս նա ծառայում է Աստծուն և տեսել է Աստծո ձեռքը իր կյանքի բազմաթիվ այլ իրավիճակներում:

Դարսին տեսավ Աստծո մատակարարումը իր փափագած երազանքի համար: Այն անհնարին էր թվում, բայց նա հայտնաբերեց, որ հավատքով ամեն բան հնարավոր է:

Ինչպե՞ս է փոխվում երիտասարդի կյանքը, երբ նա հանդիպում է Աստծուն իր կարիքների, ցանկությունների և խոր ձգտումների մեջ: Երազանքներն իսկապես իրականանում են, բայց ո՛չ աստղերին նայելով և ցանկություն պահելով, այլ հետևելով Նրան, ով ստեղծեց այդ աստղերը: Այս գիտակցությամբ պետք է մեծացնել

երեխաներին: Նրանց հավատարմությունը ձևավորվում է ներգործությունների շնորհիվ: Դարսիի ծնողներն իմաստուն և զգույշ են եղել, որպեսզի պաշտպանեն նրա սիրտը և շրջապատեն նրան աստվածային օրինակներով:

Չինուեն պատմեց ինձ, թե ինչպես է երիտասարդական աշխույժ ծառայության մեջ ներգրավվածությունն օգնել իրեն տեսնելու ոչ միայն հոգևորապես, այլև ֆիզիկապես:

««ԻքսԷմ» երիտասարդական ծառայությունը և «ԻքսԷմ» ճամբարը փոխեցին ինձ և հետք թողեցին ինձ վրա շատ առումներով: Չեմ կարծում, որ ես կանեի այն բաների մեծ մասը, որ անում եմ հիմա, եթե չլինեի իմ ավագներն ու երիտասարդական հովիվները, որոնք վառվում են Աստծո համար և մշտապես մատնանշում էին ինձ այն, ինչ Նա ասում է: 2017 թվականը բեկումնային եղավ ինձ համար, բայց այդ տարվա ամենավառ իրադարձություններից մեկը «ԻքսԷմ» ճամբարն էր: Այդ տարի իմ աչքերը բժշկվեցին: Ճամբարի վերջին գիշերն էր, և ես չեմ հիշում այդ գիշերվա բոլոր մանրամասները, բայց հիշում եմ, որ խնդրեցի հովիվ Ալեսիային աղոթել իմ աչքերի համար, որ այլևս ակնոց չդնեի: Աղոթելուց հետո նա ասաց, որ տեսավ, թե ինչպես Աստված հանեց իմ ակնոցը և Ինքը դրեց: Դրանից հետո ես հանեցի ակնոցս և դրեցի մի կողմ: Դուրս եկա և սկսեցի երգել ու շնորհակալություն հայտնել Աստծուն: Քիչ անց հասկացա, որ կարողանում էի հիանալի տեսնել և նույնիսկ հեշտությամբ տեսնել հեռվում գտնվող առարկաները: Մինչ օրս գոհանում եմ Աստծուց, Նա փոխել է իմ կյանքը շատ առումներով»:

Երբ երիտասարդները հասկանում են, որ կա Աստված, որը սիրում է իրենց ֆիզիկապես և հուզականորեն, լցվում են հույսով և ստանում են պատասխաններ, որոնք չկան հաբերում, ակոհոլի մեջ կամ գիշերային միանգամյա հարաբերություններում:

Օթունը պատմեց այս պատմությունը.

«Ես երբեք չեմ եղել վատ երեխա և երբեք գործ չեմ ունեցել որևէ չափազանց լուրջ խնդրի հետ, ինչպիսին

բռնությունն է, ընկճախտը, պոռնկագրությունը կամ նման այլ բաներ: Մի քանի տարի առաջ ոտքիս տակ սուր ցավ զգացի: Այդ ժամանակ ես բասկետբոլ էի խաղում և մշտապես ծանրություն էի զգում ոտքերիս վրա: Գրեթե նույն ժամանակ ես ինքնատիրապետման խնդիրներ ունեի և արագ բարկանում էի: Երբ հոգնեցի և զզվեցի իմ այդ վիճակից, որոշեցի խնդրել, որ աղոթեն ոտքիս համար: Չորեքշաբթի առաջին ծառայությունից հետո մոտեցա հովիվ Էմիին, և նա աղոթեց ինձ համար: Նա ասաց, որ մինչ կկարողանայի բժշկվել, պետք է ազատվեի ինքնաատելությունից: Նա նաև բացատրեց, որ կան բաներ, որ կարող են խանգարել մեր բժշկությանը, եթե չլուծենք դրանց հարցերը: Եվ նրա համար դա ինքնաատելությունն էր: Այսպիսով, երբ աղոթեցինք, ես վերադարձա տուն և գոհացա Աստծուց, որ բժշկված եմ: Եվ ամեն անգամ, երբ ոտքս ցավում էր, գոհանում էի Աստծուց իմ բժշկության համար: Ես նաև սկսեցի աղոթել, որ բարկությունս հեռանա: Եվ այն հեռացավ: Հովիվ Էմիի հետ աղոթելուց մոտ երկու շաբաթ անց ոտքս բժշկվեց, նաև ազատագրվեցի բարկությունից: Ես փոխված եմ:

Մենք պետք է ձևավորենք տեսիլք մեր ընտանիքի համար և հետամուտ լինենք այդ տեսիլքին՝ որպես մեր վերին առաջնահերթության, Աստծո հետ մեր փոխհարաբերության կողքին: Եկեղեցիները, որպես միսիայի կարևոր մաս, նպատակ պետք է ունենան սովորեցնելու կարգապահության, սիրո, օրինակի և հավատքի սկզբունքները և այն, թե ինչպես մարդիկ կառուցեն ամուր ընտանիքներ՝ հաջողության հասնելու համար՝ ընտանեկան կյանքի կենտրոնում դնելով Հիսուսին:

Կյանքում շատ հնարավորություններ կան, բայց մենք պետք է ընտրենք ասել ո՛չ նրանց, որոնք կվնասեն մեզ կամ մեր ընտանիքներին: Աստվածաշունչը Հիսուսի մասին ասում է.

«Եվ երբ որ ցերեկ եղավ, դուրս եկավ գնաց անապատ քեղ, և ժողովուրդները որոնում էին Նրան և եկան մինչև Նրա մոտ և արգելում էին Նրան, որ չգնա իրենցից: Նա

էլ ասաց նրանց. «Ես ուրիշ քաղաքներին էլ պետք է Աստուծո արքայությունը ավերարանեմ, որովհետև իսկ սրա համար ուղարկվեցի»:

– Ղուկաս 4.43, 44


Եթե ցանկանում ենք, որ մեր ընտանիքները և եկեղեցիները ծաղկեն, պետք է կենտրոնացնենք մեր ժամանակը, տաղանդները և եռանդը այն ամենի վրա, ինչի համար ուղարկվել ենք: Եթե դու ծնող ես կամ ավագ, դու ուղարկվել ես քո երեխաների և ընտանիքի համար. ահա այն, ինչ քեզ պետք է:

Մեր մեծագույն ձեռքբերումները և ուրախությունը մեր ընտանիքում են, մեր երեխաների մեջ, և այն հիմքը, որ դրել ենք, անգին է: Մյուս բաները ոչինչ են՝ այդ ամենի համեմատ: Ես զգում եմ, որ երբ կանգնենք Աստծո առջև, մեծագույն ձեռքբերումը կլինի մեր ընտանիքը, քանի որ այն առաջացրել է շղթայական ներգործություն ազդեցության մյուս բոլոր ոլորտներում:

(Տես իմ և Գարիի՝ *«Ամուսնության խորհուրդը»* աստվածաշնչյան ուսումնասիրությունը, ինչպես նաև իմ՝ *«Նոր հին ընտանիք. հին հայացք ժամանակակից ընտանիքին»* գիրքը՝ ամուսնության և ընտանիքի թեման առավել ընդգրկուն ուսումնասիրելու համար:)

20

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՋ ԱՋԱՏ Է ԱՐՁԱԿՈՒՄ



Կանգնել չարին դեմ հանդիման

Վերջին մի քանի տարիներին մեր երեխաներին ու թոռներին մենք տանում ենք ընտանեկան կարճատև ճամփորդության՝ թարմանալու և ավելի մտերմանալու համար: Սա հաճելի ժամանակ է, բայց ամբողջ ընտանիքի համար ժամանցի վայր և հանգստացնող միջավայր գտնելը կարծես ավելի դժվար է, քան երբևէ: Այդ օրը ես լողում էի լողավազանում, այնուհետև նստում ընտանեկան տաք լոգարանում (ջակուզի) թոռնիկներիս և թոռնուհիներիս հետ, երբ նրանք դուրս էին գալիս լողավազանից: Երեսուն տարեկանին մոտ (ենթադրում եմ) մի կին՝ հազիվ նկատելի լողագգեստով, մեծահասակների լողավազանից/տաք լոգարանից եկավ մեր տաք լոգարան: Ես փորձեցի բարեհամբույր կերպով ողջունել նրան, բայց նա չարձագանքեց: Չէի ցանկանում, որ երեխաները հեռանային լոգարանից կամ չվայելեին իրենց արձակուրդը: Ես հետևում էի՝ թույլ չտալով, որ նա մենակ մնար երեխաների հետ, երբ նրանք վազվզում էին լողավազանի և տաք լոգարանի միջև:

Նա սկսեց հեռախոսով տեսագրել իրեն (և թոռներին, որոնք երևում էին հետին պլանում)՝ գրգռիչ պարելով և շուրթերը լիզելով (հավանաբար «ՏիկՏոկ»-ի տեսանյութ էր նկարում): Այնուհետև պառկեց փորի վրա, կռացավ տաք լոգարանի ծայրին՝ ամբողջությամբ ցուցադրելով հետույքը: Թոռնիկս մի քանի ոտնաչափ

հեռու էր նրանից: Միակ բանը, որ կարող էինք տեսնել, նրա հետույքն էր՝ մոտիկից և բաց: Ես ցնցված էի: Թռռնիկներս նայեցին ինձ՝ նույնպես ցնցված: Ես պետք է որոշեի՝ պաշտպանել նրանց լկտիությունից կամ անտեսել դա՝ համարելով ոչ մեծ խնդիր: Ինչո՞ւ ես պետք է թույլ տայի նրա լկտիությունը: Ինչո՞ւ պետք է հանդուրժեի նք այս անպարկեշտ վարքը և թույլ տայինք, որ այն բարկացնի մեզ ու ստիպի հեռանալ: Քանի որ նրա երաժշտությունն ավելի բարձր էր, քան իմ ձայնը, մի ակնթարթում ես ջուր շփեցի նրա միակ տեսանելի հատվածին, որպեսզի գրավեի նրա ուշադրությունը: Երբ նա հետ նայեց, ես հայտնեցի իմ դժգոհությունը երեխաների առջև իրեն ցուցադրելու համար և նշեցի, որ դա տեղին չէ: Ես զգուշացրի, որ եթե նա կանգ չառնի, ստիպված կլինեմ կանչել հյուրանոցի կառավարչին: Վերջին հաշվով, նա կարող էր վերադառնալ մեծահասակների լողավազան/տաք լոգարան:

Մենք կանչված ենք սիրելու մարդկանց, բայց ո՛չ հաշտ լինելու սատանայի և ոգիների հետ, որոնք փորձում են գործել մեր կամ ուրիշների դեմ: Արդյո՞ք եկեղեցին ճիշտն ընդդեմ սխալի ամուր, հարգալից դիրքորոշում ընդունելու փոխարեն ազատել է ազդեցության ոլորտները՝ թույլ տալով, որ սատանան ներխուժի այնտեղ: Երբ հանձնում ենք այս ոլորտները, դրանք գրավվում են չար ուժերի կողմից: Մենք կորցրել ենք մեր ազդեցությունը և թույլ ենք տվել, որ թշնամին տիրի: Վերջին տասնամյակում այնքան շատ ենք լսել հանդուրժողականության մասին, որ թույլ ենք տվել՝ չար գործողությունները, հատկապես երեխաների հանդեպ, անարգել մնան: Մենք կանչված չենք հանդուրժելու հանցագործությունը, այլ բացահայտելու խավարի գործերը: Պարզապես մարմինը և արյունը չեն դրդում այս գործողություններին, այլ խավարի իշխանություններն ու պետությունները: Դրանք դրսևորվում են մարդկանց և նրանց արարքների մեջ: Երբեմն մենք կարող ենք զրուցել և ճշմարտության սերմեր ցանել, իսկ երբեմն էլ պետք է համարձակ դեմ կանգնենք բացահայտ չարիքին հանուն ուրիշների, ինչպես նաև հենց չարագործին:

Անիրավության հանդիմանությունը սխալ վարքագիծը ճանաչելու սկիզբն է: Եթե մեզ երբեք չեն առերեսում, կամ ինքներս չենք առերեսվում անիրավությանը, ապա չկա անիրավության հանդիմանություն: Իմ կյանքում ես բազմաթիվ առիթներով հանդի-

պել եմ հակադրության, և դա խայթող հետք է թողել ինձ վրա, որ ինչ-որ բան սխալ եմ արել: Դա ստիպել է ինձ վերադառնալ Աստծո ճանապարհներին և վերջին հաշվով փոխել է իմ սիրտն ու արարքները:

Աղոթելուց հետո ես կասկած չունեի, որ այս կինը առերեսման կարիք ուներ, և իմ թոռները նույնպես պետք է իմանային, որ սա անընդունելի վարքագիծ էր: Թե՛ տղաները, թե՛ աղջիկները պետք է իմանային, որ նրա անպարկեշտ, սեռական պահվածքում շատ սխալ բան կար: Այդ կինը վեր կացավ, ծիծաղեց ինձ վրա և հեռացավ: Ես գիտեի, որ ոգիներն էին, որ նրա վարքի միջոցով ծաղրում էին մեզ:

Երբ ամուսնուս պատմեցի պատահածը, նա ասաց, որ նախկինում այդ կինը ոգիներ էր կանչում: Ես, անշուշտ, զգացի դիվային ներկայությունը, ինչն էլ դրդում էր նրան լինելու մեր լոգարանում մեծահասակների լոգարանի փոխարեն: Դա հստակ դիվային դրսևորում էր: Ես քթիս տակ մի քանի բույսեր աղոթեցի նրա համար: Ես նկատեցի, որ ամեն անգամ, երբ որևէ տղամարդ էր անցնում նրա կողքով, նա շրջվում էր հետույքով դեպի այդ տղամարդը՝ ջանալով ցուցադրել իրեն: Նրա միջի ոգիներն ուշադրություն էին ցանկանում: Որպես կին՝ ես ավելի լավ վիճակում էի՝ նրան հակադրվելու համար: Ես սրտացավ էի, բայց հաստատուն: Եթե նա առաջարկեր որևէ հնարավորություն կամ արտահայտեր որևէ ափսոսանք, ես կկարողանայի ծառայել նրան: Ես պառկեցի քնելու՝ աղոթելով նրա համար և հույս ունենալով, որ ճիշտ եմ վարվել: Մի ծառայող ընկեր հաստատեց իմ արձագանքը և օգնեց ինձ տեսնելու երեխաների առջև դա ուղղելու և չարի գործերը բացահայտելու բացարձակ կարևորությունը:

«Երբ որ ես ամբարշտիկն ասեմ՝ անպարճառ պետք է մեռնես, և դու նրան չզգուշացնես և չխոսես, որ զգուշացնես ամբարշտիկն իր չար ճանապարհից, որ ապրի, այն ամբարշտիկը իր անօրինությունով կմեռնի, բայց նրա արյունը քո ձեռքից կպահանջեմ: Իսկ եթե դու զգուշացնես ամբարշտիկն, և նա ետ չդառնա իր ամբարշտությունից և իր չար ճանապարհից, նա իր անօրինությունով կմեռնի, իսկ դու կազապես քո անձը»:

– Եզեկիել 3.18,19

Մեղքը սահմանվում է որպես «ամեն անիրավություն» (Ա Հովհաննես 5.17): Դրա սկզբնաղբյուրը Աստծո դեմ ապստամբությունն է: Սատանան մեղքի հայրն է, ստի հայրը: Ամեն մեղք սկսվում է ստով և այն խաբեությամբ, թե չկան հետևանքներ սխալ վարքի համար: Հետևանքներ կան, և դրանք կործանում են կյանքերը, անմեղ մարդկանց կյանքերը և, վերջին հաշվով, ապստամբողի կյանքը: Դրա հետևանքը զագրելի հանցագործություններն են երեխաների, անպաշտպանների, տարեցների և հասարակության ամենախոցելի շերտերի հանդեպ: Մեղքը տհաճություն պետք է պատճառի. մենք չպետք է փոխզիջման գնանք նրա ազդեցության հետ, թաքցնենք այն կամ մտածենք, որ այն կհեռանա: Մեղքը կանգ չի առնում, մինչև չես հակադրվում դրան: Աստված հաստատեց Տասը պատվիրանները և ստեղծեց օրենքներ մարդկանց պաշտպանելու համար: Այս օրենքները կարգ ու կանոնի հիմքերն են: Առանց օրենքների չկան ճիշտ ու սխալի չափանիշներ: Առանց չափանիշի մարդիկ անում են այն, ինչ հաճո է իրենց ուրիշներին վնասելու գնով: Առանց իրավապահ մարմինների անօրինությունը կշատանա: Կյանքերը և, վերջին հաշվով, երկրի կյանքը կկործանվեն, իսկ ազատությունը կգողացվի:

Հակոբոս 5.20-ում ասվում է. «...մեղավորին իր մոլորության ճանապարհից դարձնողը մի հոգի կփրկի մահից և մեղքերի շարությունը կծածկի»:

Երբ ես չփրկված դեռահաս էի, ինչ-որ մեկը հակադրվեց ինձ մի իրավիճակի վերաբերյալ, որը սխալ էր: Այն ժամանակ դա անհանգստացրեց ինձ, բայց նաև գիտակցել տվեց, որ նա չի ընդունում իմ արարքները: Այդ մերժումը կասկածի տակ դրեց իմ վարքագիծը, ինչն էլ վերջին հաշվով առաջնորդեց ինձ դարձի գալու և ընդունելու Քրիստոս Հիսուսին:

Առանց հանդիմանության չկա ապաշխարություն: Հանդիմանությունը գալիս է այն ժամանակ, երբ լսում ենք ճշմարտությունը: Այնուհետև անհատի ընտրությունն է ապստամբել կամ դառնալ դեպի Աստված՝ խոնարհությամբ ընդունելով սխալը: Հավատացյալը պատասխանատու է պաշտպանելու այն, ինչ մեր Հայրն ասում է, որ ճշմարիտ է և արդար՝ անկախ ամեն ինչից:

Հիսուսը չէր ընդունում մեղքը: Նա հասնում էր մեղավորներին,

բայց քշում էր դևերին: Եթե մարդիկ թույլ էին տալիս, Նա ազատում էր նրանց դևերից: Նա քշում էր դևերին՝ վերականգնելով մարդկանց զգոն միտքը: Նա հակադարձում էր մարդկանց իրենց մեղքի մասին ճշմարտությամբ, այնուհետև ասում, որ «գնան և այլևս չմեղանան»: Աստված այնքան է սիրում մարդկանց, որ ճանապարհի հարթեց այս աշխարհի մեղքից և ապականությունից փախչելու համար: Մենք պետք է աղոթենք մարդկանց համար, որպեսզի կուրացնող ոգիները հեռանան նրանցից, և նրանք կարողանան լսել ճշմարտությունը և ազատվել: Երբ կա հնարավորություն, պետք է բաց լինենք՝ առաջնորդվելու Սուրբ Հոգով, որպեսզի սիրով ասենք նրանց ճշմարտությունը: Երբեմն սերը խիստ պետք է լինի:

Մենք չպետք է փոխզիջման գնանք երեխաների հարցում կամ զիջենք դևերին, որոնք ցանկանում են տանջել կամ ապականել նրանց անմեղությունը: Եկեղեցիներում հանդուրժողականություն քարոզելու այնպիսի մշակութային շեշտ է դրված, որ անմեղներին պաշտպանելը բոլորովին մոռացվել է: Հիսուսը շատ խիստ խոսքեր ասաց նրանց մասին, ովքեր պատճառ կդառնան, որ այս փոքրերից մեկը գայթակղվի: «...ավելի լավ է նրան, որ մի էջի ջաղացի քար նրա վզից կախվի, և նա ծովի անդունդում ընկղմվի» (Մատթեոս 18.6):

Շատ ավելի սիրառատ վարմունք է ինչ-որ մեկին հակադարձելը և նրան իր արարքների հետևանքը հիմա հայտնելը, քանի դեռ նա ժամանակ ունի փոխվելու, քան «չարը հանդուրժելը և շոյելը» և թողնելը, որ նա հավիտենությունն անցկացնի դժոխքում: Եվ էլ ավելի վատ, անմեղներին էլ իր հետ տանի:

Եսայի 5.20-ում գրված է, որ «վայ» (որ նշանակում է մեծ վիշտ կամ նեղություն) նրանց, ովքեր ընտրում են այսպես վարվել. «Վայ նրանց, որ չարին ասում են բարի, և բարուն՝ չար. որ խավարը շինում են լույս, և լույսը՝ խավար. որ դառը քաղցր են շինում, և քաղցրը՝ դառը»: Մեծ վիշտ կամ նեղություն է գալիս նրա կյանքում, ով ապականում է կյանքը և խառնում չարը բարու հետ:

Հովհաննեսի 4-րդ գլխում կար մի կին, որի կյանքը վշտով էր լցված կատարած ընտրությունների պատճառով: Նա ջրհորից ջուր էր հանում, երբ Հիսուսը խոսեց նրա հետ: Նա դեմ կանգնեց

կնոջ սեռական մեղքին և խաթարված փոխհարաբերություններին: Կարևոր է նշել, որ Հիսուսը հարգանքով վերաբերվեց նրան: Կինն ապշեց, որ այս հրեա մարդն ընդհանրապես խոսեց իր հետ: Նա սովոր չէր դրան: Մշակույթում շատ սովորույթներ և մոտեցումներ արգելում էին դա: Նա սամարացի էր, որին հրեաները վերևից էին նայում, և կին էր, և ոչ միայն կին, այլև վատ համբավ ունեցող կին: Նրա հետ խոսելուց հետո Հիսուսը խնդրեց, որ հանդիպի նրա ամուսնու հետ: Նա ասաց. «Ես ամուսին չունեմ»: Հիսուսը հակադարձեց նրան ճշմարտությամբ՝ ասելով. «Ճշմարտությունն այն է, որ դու ունեցել ես հինգ ամուսին, և այն մեկն էլ, որի հետ հիմա ապրում ես, քո ամուսինը չէ»: Կինը զարմացավ, որ Հիսուսը գիտեր իր կյանքի մասին և ուներ իշխանություն՝ խոսելու ճշմարտությունը: Համոզված եմ, որ Հիսուսի խոսքերը հանդիմանեցին նրան, որպեսզի նա փոխվեր, և այդպես էլ եղավ:

Ճշմարտությունն իշխանություն ունի, իսկ սերը թափանցում է հոգու մեջ: Կինը Նրան կոչեց մարգարե և գնաց քաղաք, որպեսզի բոլորին, ովքեր պատրաստ էին լսելու, հրավիրի, որ գան և լսեն Հիսուսին: Նա ասաց. «Եկե՛ք և լսե՛ք այն մարդուն, որը պատմեց ինձ այն ամենը, ինչ արել եմ»: Եթե Հիսուսը հրաժարվեր նրա մեղքին հակադրվելուց, կինը չէր վստահի և չէր ընդունի Նրան կամ չէր վերապրի կերպարանափոխում: Հիսուսի հոգատարությունը մղեց Նրան հակադրվելու կնոջ ապրելակերպին, և վերջի-

նիս մեջ առաջացավ ցանկություն՝ ընդունելու Հիսուսին: Հիսուսի՝ կնոջը հակադրվելու համարձակությունը, ինչպես նաև նրան ընդունելու պատրաստակամությունը թույլ տվեցին, որ կինը ներգրավվեր Աստծո ծրագրի մեջ:

Իշխանությունն ունի պատասխանատվություն: Առանց ճշմարտության չկա իսկական իշխանություն:

Ճշմարտությունն է, որ մարդուն ազատագրում է ստի գերությունից:

Իշխանությունն ունի պատասխանատվություն: Առանց ճշմարտության չկա իսկական իշխանություն: Ճշմարտությունն է, որ մարդուն ազատագրում է ստի գերությունից: Բացահայտ հանդիմա-

նությունն ավելի լավ է, քան գաղտնի սերը (Առակաց 27.5): Ինչո՞ւ

պետք է մենք բացահայտենք չարը: Պաշտպանելու անմեղներին և տարանջատելու ճիշտը սխալից՝ որպես օրինակ երիտասարդներին: Դա նշանակում է կասկածի տակ դնել անհատի արարքը կամ չար գործունեությունը նաև հանուն իրեն և բերել նրան այն կետին, որ նա որոշում կայացնի իր ընտրությունների և Աստծո պատվիրանների միջև: Ինչպես կարող են ուրիշները ճանաչել և մերժել չարը, եթե ոչ ոք չի կամենում բացահայտել խավարը, որպեսզի նրանք իմանան, որ իրենց վստահությունն արմատացած է չարի, այլ ոչ թե Աստծո մեջ:

Հիսուսը չբղավեց այն կնոջ վրա կամ չմերժեց նրան մեղքի պատճառով, բայց նաև չթողեց նրան դրա մեջ և չխուսափեց նրա հետ քննարկում ունենալուց: Սերը սեր չէ, եթե այն չի ցանկանում «ճշմարտությանը հակառակվողներին հանդարտությունով խրատել» (Բ Տիմոթեոս 2.25): Կյանքը կնոջը դարձրել էր կոտրված, չսիրված և ընչազուրկ: Նա ջուր չէր հանում մյուս կանանց հետ, որովհետև նրան ճանաչում էին իր վարքի պատճառով: «Երեխան անգամ ճանաչվում է իր արարքից՝ թե մաքուր և թե ուղիղ է նրա գործը»: Հիսուսը գիտեր ամեն բան, սակայն նա այնքան էր մտահոգված, որ զրուցեց կնոջ հետ: Մյուսները զրուցում էին նրա մասին: Իսկական սերը կշռջանցի մեղքը, որպեսզի օգնի դրանով թակարդված մարդուն, սակայն մեղքն ընդունելի չի համարի:

Հանդուրժողականության դարաշրջան

Հաճախ մենք համարում ենք, որ հաճելի չէ մարդկանց ասել ճշմարտությունը անիրավության մասին: Մենք ցանկանում ենք, որ նրանք սիրված և ընդունված զգան և, փորձելով այդպես վարվել, փոխզիջման ենք գնում ճշմարտության հետ: Մենք ավելի շատ վստասում ենք նրանց՝ չներգրավելով նրանց երկխոսության մեջ և չօգնելով հասկանալու, թե ինչն է օգտակար և վստասակար իրենց կյանքի համար: Ավելի շատ քաջություն է պահանջվում ճշմարտությունը սիրո հոգով խոսելու, քան նրանց արարքներն ամբողջությամբ մերժելու և նրանց վստասակար վարքագծի մեջ թողնելու համար, որը հավերժացնում է նրանց կոտրվածությունը:

«Եկ, ինչպես կաս, և հեռացիր, ինչպես եկել ես» գաղջ ավետարանը չի օգնի, որ մարդիկ կերպարանափոխվեն: Մենք պետք է հրավիրենք բոլորին գալ, բայց երբ զրուցում ենք նրանց հետ,

«Ե՛կ, ինչպես կաս, և հեռացի՛ր, ինչպես եկել ես» գաղջ ավետարանը չի օգնի, որ մարդիկ կերպարանափոխվեն:

Մենք պետք է հրավիրենք բուրբիս գալ, բայց երբ զրուցում ենք նրանց հետ, չենք կարող ձևանալ, թե նրանց ապրելակերպն ընդունելի է, եթե այն խախտում է Աստծո հոսքը:

չենք կարող ձևանալ, թե նրանց ապրելակերպն ընդունելի է, եթե այն խախտում է Աստծո հոսքը: Շատ հավատացյալներ լուռ են, որովհետև ավելի շատ լցված են մարդկանցից մերժվելու վախով, քան Տիրոջ հանդեպ հարգանքով և չարությունից պաշտպանելու ցանկությամբ: *«Եվ մասնակից մի՛ եղեք խավարի անպտուղ գործերին, այլ մանավանդ հանդիմանե՛ք»* (Եփեսացիների 5.11):

Հիսուսն ավելի խիստ էր քաղաքական և կրոնական առաջնորդների հանդեպ, որոնք պնդում էին, թե ունեն պատաս-

խաններ, բայց ոչինչ չէին անում, որպեսզի օգնեին մարդկանց իրենց խնդիրների մեջ: Ում տրվել է ավելի շատ իշխանություն, ենթակա է ավելի խիստ դատաստանի: Հիսուսը փարիսեցիներին, որոնց տրվել էր և՛ կրոնական, և՛ քաղաքական առաջնորդություն, հակադրվեց իրենց կեղծավորության համար՝ անվանելով նրանց «ծեփած գերեզմաններ»: «Ո՛վ զգուշացրեց ձեզ, որ փախչեք գալիք դատաստանից»: Նա մերկացրեց նրանց՝ ասելով, որ «իրենց հորից են՝ սատանայից», և տաճարում շուռ տվեց մաքսավորների սեղանները: Նա նաև անվանեց նրանց իժերի զավակներ: Այս քաղաքական և կրոնական առաջնորդները կեղծավոր էին իրենց դատաստանում: Իսկ Հերովդեսին, որը նույնպես քաղաքական և կրոնական առաջնորդ էր, Նա անվանեց «աղվես», ինչը երբայերենում թարգմանվում է շնագայլ, անմաքուր կենդանի: Շատ հաճախ մենք լսում ենք, թե ինչպես է «մի՛ դատեք, որ չդատվեք» արտահայտությունը նետվում այս ու այն կողմ՝ մեղքի ցանկացած առերեսում լռեցնելու համար: Դրա ենթատեքստը «կեղծավորությամբ չդատելն է»: Ճիշտ ու սխալի չափանիշը պետք է լինի Աստծո հոսքը, ոչ թե մարդու արտաքին տեսքը, հարստությունը կամ դիրքը: Հովհաննեսի 7.24-ում ասվում է. *«Աչքի երևույթով մի՛ դատեք, այլ ուղիղ դատաստան արեք»:*

Մարդիկ են ընտրում՝ «ընդունեն արդյոք իրենց մեղքը, որ փրկվեն»: Հանդիմանությունը գալիս է առերեսման միջոցով: Այսպես թե այնպես մարդուն հանգիստ չի տա այն, որ ինչ-որ մեկն այնքան է անհանգստացել, որ հակադրվել է իր մեղավոր վարքին, որը վնասում է ոչ միայն իրեն, այլև անմեղներին: Հավանաբար մեր մշակույթը չէր վատթարանա այս աստիճանի, եթե լինեին այնպիսի մարդիկ, որոնք պատրաստ էին խոսելու ճշմարտությունը մեղքի դեմ, պաշտպանելու անմեղ երեխաներին կամ ականատեսներին: Երբ մենք հանցագործության ականատես լինենք, հուսամ, կմիջամտենք, եթե դա լինի մեր ուժերի սահմաններում: Ինչ կասեք երեխաներից անմեղությունը գողանալու հանցագործության մասին: Այս փոքրերին պաշտպանելն ավելի կարևոր պետք է լինի, քան մեր ինքնագոհությունն ու պատճառաբանությունները:

Շատ առաջնորդներ օգտագործում են ավետարանչությունը որպես լռելու պատճառ: Հրաշալի է, եթե դուք ընտրում եք մի կողմ դնել ձեր անձնական վիրավորանքը անօրինականության կամ անպարկեշտության հանդեպ՝ վիրավորողին հասնելու համար, բայց երբ իր ընտրություններով նա ոտնահարում է անմեղին, խիղճը կամ անմեղ արյուն թափում, լռելն ընդունելի չէ: Նրան հասնելն այլևս առաջնահերթություն կամ ընտրություն չէ. առաջնային է դառնում պաշտպանել օրենքը և նրանց, ովքեր տուժում են այսպիսիների օրինախախտ հանցանքից:

Կան ժամանակներ՝ զբաղվելու սեփական գործով, ծառայելու մեղքի մեջ գտնվող մարդուն, հակադրվելու չարին և նույնիսկ շուտ տալու շնացող կրոնի սեղանները՝ առ Աստված հավատքի մաքրությունը պաշտպանելու համար: Սրանք աստվածաշնչյան սցենարներ են՝ բերելու «Նրա կամքը Երկրի վրա, ինչպես որ այն երկնքում է»: Մենք պետք է աղոթենք և խնդրենք խորաթափանցություն այն բանում, թե ինչպես մատուցենք ճշմարտությունը: Նպատակը խավարը (վերջին հաշվով՝ սատանային) մերկացնելն է, օրինախախտներին զսպելը, թույլ չտալը, որ չարիքը և չարագործները վնասեն անմեղներին, և Աստուծուց ու Նրա Թագավորությունից արդարություն և վերականգնում բերելը:

Մենք ականատես ենք լինում, թե ինչ է տեղի ունենում, երբ իրականում ճնշվում է իրավապահների դերը: Հանցագործությ-

յունների քանակն ավելանում է, և չարիքը՝ շատանում: Երեխաները սպանվում են փողոցներում, և թմրամիջոցների չարաշահումն արագորեն աճում է: Օրենքները չկիրառելն ունի հետևանքներ, և կան հետևանքներ, երբ Աստծո առաջնորդները և մարդիկ չեն անդրադառնում եկեղեցում առկա մեղքին կամ մշակույթում առկա չարությանը:

Սաղմոս 94.16-ում ասվում է. *«Ո՛վ վեր կկենա ինձ հեպ չարերի դեմ. ո՞վ ինձ հեպ կկանգնի նրանց դեմ, որ անօրինություն են գործում»:*

Կրոնի և չարի կեղծավորությունն այն է, որ այն կառչում է մանրուքներից և չի տեսնում կարևորը: Սա նաև քաղաքական և կրոնական առաջնորդների կեղծավորությունն էր Հիսուսի օրերում: Մենք տեսել ենք, թե ինչպես է մարդկանց պարտադրվում դնել դիմակներ խոշոր քաղաքներում, բայց այդ նույն քաղաքներում մարմնավաճառությունն օրինական է: Օրինախախտներին դուրս են հանում փողոց: Նույնիսկ սպանությանը վերաբերվում են ավելի թեթև դատավճռով, քան պակաս ծանր հանցագործություններին: Օրեգոնում մարդկանց տուգանում էին դիմակ չդնելու համար, բայց հերոինի նման թմրանյութերն օրինական էին: Ո՞րն է ավելի վնասակար մարդկանց համար: Մեր տարածքում մի եկեղեցի ցուցանակի վրա համարձակ հայտարարել էր իր համոզմունքները. «Մենք հավատում ենք արդարության իրավունքին, սերը սեր է և այլն», բայց իր յոթ համոզմունքներից ոչ մեկում չէր նշվում, որ մենք հավատում ենք Աստծուն, Հիսուսին կամ

Աստվածաշնչին: Ահա թե ինչ է տեղի ունենում, երբ զսպող ուժը վերանում է. Սուրբ Հոգին, որ գործում է հավատացյալների մեջ, հեռացվում է եկեղեցուց և հասարակությունից: Չսպողը կամ խափանողը (Սուրբ Հոգին) կհեռացվի, նախքան Աստծո դատաստանը կիջնի վերջին օրերում, սակայն, ցավոք, որոշ եկեղեցիներ իրենց ընտրությամբ արդեն հեռացրել են Նրա ներկայությունը:

Սա դարձել է հանդուրժողակա-

**Սա դարձել է
հանդուրժողա-
կանության
դարաշրջան, որն
իրականում մեղքի
մեղմացում է՝ բարին
չար և չարը բարի
կոչելով:**

նության դարաշրջան, որն իրականում մեղքի մեղմացում է՝ բարին չար և չարը բարի կոչելով: Մշակույթի բարոյական կողմնացույցը խախտված է, և նրանք, ովքեր կհամարձակվեն վերանորոգել այն, կդառնան համար մեկ ռիսերիմ թշնամին: Դժբախտաբար, ոչ միայն չարագործների բարոյական կողմնացույցն է խախտվել, այլև նույն ուղղությամբ է շարժվել եկեղեցու չափանիշը:

Մենք աղ ենք, և մենք լույս ենք: Ես հավատում եմ, որ որպես աղ՝ մենք կանչված ենք համ տալու: Եթե ունեք վերք, աղը մրմռացնում է այդ վերքը, բայց այն սրբող, մաքրող և պահպանող հատկություն ունի: Գուցե ճշմարտությունը ցավեցնում է, բայց այն բուժում է վերքը, երբ լույսի մեջ է բերվում: Մենք կանչված ենք մերկացնելու խավարը, լույս սփռելու բարդ թեմաներին, մաքրելու վարակը և պահպանելու ճշմարտությունը, որպեսզի մարդը և հասարակությունը կարողանան բժշկվել:

Ճշմարտությունը մարդկանց ազատ է արձակում: Միթե այլևս չկան ճշմարտություն կրողներ: Թե՛ մեզ մնացել են միայն փափուկ եկեղեցիներ, որոնք ընդունում են Բաղասամի (մեղքի) ճանապարհը, հանդուրժում են Հեզաբելի ոգիներին և սեռական մեղքերը: Հիսուսն անդրադարձավ այս ամենին Հայտնության գրքում՝ խոսելով յոթ եկեղեցիների և վերջին օրերի մասին (Հայտնություն 1-4): Մենք կարող ենք տեսնել Սողոմ և Գոմոր քաղաքները որպես մեկ այլ օրինակ: Միթե մենք չենք քարոզում նույն Աստծուն, որ դատեց այս քաղաքներն իրենց սեռական մեղքի համար: Մարդկության պատմության ամբողջ ընթացքում Աստված դատել է մեղքով ողողված քաղաքներն ու մշակույթները: Մարգարեների պատասխանատվությունն էր զգուշացնել նրանց իրենց մեղքի համար և ապաշխարության ճանապարհ ցույց տալ: Նոր կտակարանում ավելի շատ զգուշացումներ կան մեղավոր վարքագծի մասին: Արդյո՞ք եկեղեցիներն ու հավատացյալները բավականաչափ ազնիվ են իրենց հավատքում, որպեսզի զգուշացնեն մարդկանց, որ մեղքի վարձքը դեռևս մահն է: Ճշմարտությունը մեզ ազատ է արձակում՝ ինչպես հավատացյալներին, այնպես էլ անհավատներին:

21

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ



Երբ խաղում էի իմ երեքամյա, գանգրահեր, անուշիկ թոռնուհու՝ Ջեռնիի հետ, նա ինձ հարցրեց, թե ես երբևէ տատիկ դառնալու եմ: «Ոմանց համար ես արդեն տատիկ եմ», - ծիծաղելով ասացի ես: Հստակեցնելով, թե ինչ նա նկատի ուներ, ասաց. «Ո՛չ, երբ քո պարանոցն այսպես է դառնում»: Նա երկար V-աձև ելուստ արեց պարանոցի տակ՝ նման եռակի կզակի: Ես ծիծաղեցի և ասացի. «Ես կփորձեմ չունենալ այդպիսի պարանոց, բայց դու դարձյալ կսիրես ինձ, եթե ունենամ, ճիշտ է»: Նա պատասխանեց. «Ո՛չ, ինձ դուր է գալիս քո պարանոցն այնպիսին, ինչպիսին կա»: Ես ավելի շատ ծիծաղեցի: Որոշեցի, որ թույլ չեմ տա, որ իմ կզակը եռապատկվի հանուն իմ թոռնուհու:

Ես չեմ կարող կասեցնել իմ ծերությունը, բայց կարող եմ վերահսկել ծերանալու ընթացքը: Կան բաներ, որոնց վրա ունենք վերահսկողություն, և բաներ, որոնք չենք կարող վերահսկել, բայց մենք, անշուշտ, կարող ենք առավելագույնը քաղել մեր կյանքից, մեր ազդեցությունից և ընտրություններից: Միշտ չէ, որ մենք կարող ենք կասեցնել մարտերը, բայց կարող ենք որոշել, թե ինչպես պայքարենք: Մենք կարող ենք կատարել այս ընտրությունը. «Ինչ վերաբերում է ինձ և իմ տանը, մենք ծառայելու ենք Տիրոջը»: Մենք պետք է հիշենք, որ մեր կյանքը և ժամանակը Աստծո ձեռքերում են: Նա ստեղծեց մեզ այսպիսի ժամանակի համար,

և ոչինչ Նրան անակնկալի չի բերում: Մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունները կարող են անլուծելի լինել, բայց մենք պետք է ընտրենք լինել երջանիկ, ապրել լավագույն կյանքը, որ կարող ենք՝ չնայած դժվարություններին: Մենք մեկ անգամ ենք ապրում այս կյանքում, և ամեն օր Աստծո ծրագրերին հետևելու և հավատարիմ մնալու ընտրությունը մերն է՝ անկախ նրանից, թե ուրիշներն ինչ են ընտրում: Մենք հետևողականորեն մեր սրերը պետք է դնենք մեր Հաղթողի՝ Նրա, Ով հավատարիմ է և ճշմարիտ, ոտքերի մոտ և հիշենք, որ սա Տիրոջ պատերազմն է:

Դու չես կարող վերահսկել քեզ շրջապատող ամեն բան կամ ամեն մեկին կամ էլ աշխարհի բոլոր լուրերի խորագրերը, բայց դու կարող ես վերահսկել քեզ և այն, թե ինչպես ես հակազդում և արձագանքում: Դու կարող ես վերահսկել, թե ինչ կանես քո ազդեցության ոլորտում: Դու կարող ես հավատքով աղոթել և խնդրել երկինքը ու հավատալ Աստծուն ճշմարտության, վստահ փոխհատուցման և բարեփոխման համար: Այնուհետև կարող ես անել քո մասը: Տղամարդիկ և կանայք վարվել են այսպես պատմության ամբողջ ընթացքում: Դու կարող ես ընտրել, թե արդյոք թողնես երազանքներդ, հրաժարվես Աստծուց և ինքդ քեզնից: Բոլորիս կյանքում կան բաներ, որոնք ցանկանում ենք կամ պետք է թողնենք, բայց մենք չպետք է դադարենք ճիշտ որոշումներ կայացնելուց և ճիշտ բաներ անելուց, նույնիսկ և հատկապես քառսային աշխարհում:

Կան անցյալի սխալներ, վիրավորանքներ և նեղություններ, որոնք պետք է թողնենք Աստծուն կյանքի վերելքների և վայրէջքների ժամանակ: Ես պատկերացնում եմ ինձ ջրային դահուկներ քշելիս և ինքս ինձ հիշեցնում, որ երբ ընկնեմ, ավելի լավ է բաց թողնեմ պարանը: Հակառակ դեպքում սա շատ խորդուբորդ ճանապարհ է և նույնիսկ կարող է խեղդել ինձ հոգսերի կամ վշտերի մեջ: Մենք պետք է մշակենք կյանքի հավասարակշռություն՝ պարանից ազատվելու համար: Մենք պետք է թողնենք ճնշումը և սովորենք Աստծո վրա զգել աշխարհի և մեր խնդիրները: Առաջին Պետրոսի 5.7-ում ասվում է. *«Ձեր բոլոր հոգսը Նրա վրա զցեք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»:*


Ինչպես ես քննարկում եմ իմ՝ *«Ավելի լավ, քան մտածում ես»* և *«Ավելի լավ, քան զգում ես»* գրքերում և սեմինարներում, մենք պետք է բաց թողնենք մեղքի զգացումը, ափսոսանքը, վատ սովորություն-

ները, սխալ համոզմունքները, բացասական ներքին զրույցը, պետք է բաց թողնենք նաև այս աշխարհի հոգսերը, նրա անհանգիստ ժամանակները և պարզապես հանգստանանք Աստծո մեջ: Հանգստացե՛ք Տիրոջ մեջ: Կան բաներ, որոնք երբեք չպետք է թողնել, օրինակ՝ Աստծո Թագավորության արժեքը, հիմքերը և սկզբունքները: Կան բաներ, որոնք պետք է թողնեք կամ դադարեցնեք, բայց երբեք չթողնեք առ Աստված ձեր հավատքը:

Ֆինանսների վերաբերյալ մեր առաջին համաժողովին այն, ինչ սովորեցրեց իմ ամուսինը՝ Գարին, վերածվեց գրքի՝ «Ձեր ֆինանսական հեղափոխությունը» վերնագրով: Շատերը դրա միջոցով ծանոթացան մեր ծառայությանը: Վերջին հաշվով այն տարածվեց ամբողջ աշխարհում: Դուք հավանաբար չգիտեք, որ նախքան Գարին կխոսեր համաժողովի բացման երեկոյին, մեր ծառայության խորհուրդն ինձ ասաց, որ մեզ 11,000 դոլար էր պակասում ընթացիկ հաշվեհամարում: Սա 25 տարի առաջ էր, և մեր ծառայությունը շատ ավելի փոքր էր: Այն ժամանակ դա հսկայական գումար էր թվում: Մենք ունեինք կես դրույքով աշխատող հաշվապահ և գումարներ էինք ներդնում մեր անձնական գործից՝ փորձելով սայլը տեղից շարժել: Ես խնդրեցի, որ Գարին չհայտնեն այդ մասին հենց այն ժամանակ, երբ նա պատրաստվում էր ասելու այն խոսքերը, որոնք դառնալու էին նրա բանալի ուղերձը: Ես հստակտորեն բնորոշեցի դա որպես մեզ հուսահատեցնելու հարձակում: Ժամանակը հստակ հայտնում էր դրա մասին:

Մենք չենք կարող մեզ թույլ տալ նետվել այս ու այն կողմ իրավիճակների և հանգամանքների պատճառով: Իսավարի ուժերը կփորձեն շահարկել/մանիպուլացնել աշխարհի ոլորտները և մարդկանց: Ամենից լավ է կենտրոնանալ Աստծո ասածի վրա և անտեսել շեղող հանգամանքները:

Հենց գիտակցում եք, որ ձեր լավագույն օրերն առջևում են, ձեր ամենամեծ ցատկահարթակին սովորաբար նախորդում են հոգևոր



**Հենց գիտակցում եք,
որ ձեր լավագույն
օրերն առջևում են,
ձեր ամենամեծ
ցատկահարթակին
սովորաբար
նախորդում են
հոգևոր պատերազմն
ու դժվարին
հանգամանքները:**

պատերազմն ու դժվարին հանգամանքները: Դուք սովորում եք հակառակվել «պոչը քաշելու» և փախչելու գայթակղություններին: Կա մի հին ասացվածք. «Ամենամութ ժամանակը լուսաբացից առաջ է»: Սա պարզապես շաբլոնային արտահայտություն չէ:

Այդ երեկո ես հասկացա, որ հանրային տիրույթում մարտահրավեր էր նետվում այն տարիներին, երբ մենք պայքարել էինք, և այն հողին, որ անձամբ ձեռք էինք բերել: Թշնամին չէր ցանկանում, որ մենք գրավեինք այս նոր տարածքը, և հաստատ չէր կամենում, որ կիսեինք ազատությունն ուրիշների հետ: Ամեն նոր հող գրավելիս դուք կհանդիպեք դիմադրության: Երբ հաղթում եք ճակատամարտը անձնական մակարդակում, պետք է օգնեք մեկ ուրիշի՝ կռվելու իր ճակատամարտում: Երբ այդպես վարվեք, կբախվեք պատերազմի մեկ այլ մակարդակի, բայց այն ավելի գոհացուցիչ հաղթանակ է բերում:

Առանձնանալով գրասենյակում՝ ես աղոթեցի մի պարզ աղոթք և խնդրեցի Աստծուն, որ այդ երեկո օգնի մեզ: Ես ասացի. «Ես չեմ շահարկի, ճնշի կամ աղաչի որևէ մեկին: Ես պարզապես կվստահեմ Քեզ այս երեկո» (Ես ավելացրի, որ երբեք կրկին չեմ կասկածի Նրան, եթե Նա օգնի մեզ, հմ-հմ): Չորեքշաբթի երեկոյան ծառայության զոհաբերությունը սովորաբար կազմում էր 1,500 դոլար կամ ավելի քիչ, այնպես որ, մեծ հավանականություն չկար 11,000 դոլար հավաքելու համար: Ես խնդրեցի Գարիին. «Կարելի է ծառայությանը ես խոսեմ զոհաբերության մասին»: Նա պատասխանեց՝ իհարկե: Իմ հավատքը միախառնվեց մեր կարիքին: Այդ երեկո հավաքվեց 12,000 դոլար: Դա կարծես անհնարին սխրանք լիներ: Ես չհայտնեցի կարիքը կամ չօգտագործեցի որևէ ճնշում: Ես խնդրեցի և աղոթքում ստացա մեզ անհրաժեշտ գումարը, և այն եկավ: Ես հիացած էի՝ տեսնելով, որ նույն սկզբունքները, որ սովորեցնում էինք ուրիշներին, ոչ միայն գործում էին մեր անձնական ֆինանսական ոլորտում, այլև ծառայության մեջ: Ես ասացի Աստծուն, որ այլևս չեմ կասկածի Նրան:

Հանգամանքները գալիս են գողանալու ձեր տեսիլքը և նախասահմանությունը ձեր երազանքների թռիչքից անմիջապես առաջ: Ինչպես օդանավի դեպքում, ամենաբարդ ժամանակը թռիչքն է: Պետք է լինի բավականաչափ արագություն՝ հաղթահարելու ծանրությունը և օդի դիմադրությունը, որպեսզի վերամբարձ ուժը

բարձրացնի օդանավը: Օդաչուն չի կարող շփոթվել, այլապես նա բաց կթողնի վերամբարձ ուժը և, հավանաբար, վթարի կենթարկվի: Իսկ ինչ, եթե: Իսկ ինչ, եթե ես խուճապի մատնվեի և անձնատուր լինեի վախին: Իսկ ինչ, եթե սկսեի անհանգստանալ և մեղադրել Աստծուն կամ որևէ մեկին: Իսկ ինչ, եթե մենք թողնեինք այն, ինչ Աստված ասել էր մեզ անել, որովհետև դրա համար պետք էր գին վճարել:

Մի թողեք ձեր երազանքները: Որպես երիտասարդ զույգ՝ մենք ցանկանում էինք ունենալ ֆինանսական ազատություն Աստծո հոսքը հոչակելու համար: Մենք նպատակ դրեցինք ունենալու սեփական ընկերություն, որը կֆինանսավորեր ծառայությունը և կօգներ կառուցելու հրաշալի ամուսնություն և ընտանիք, որոնք պատիվ կբերեին Աստծուն: Մեր երազանքն էր ունենալ ազատություն՝ տեսնելու աշխարհը, կառուցելու հրաշալի ընտանիք և փոխելու աշխարհը Քրիստոսի համար:

Քոլեջում ես երազ տեսա կոտրված կանանց մասին, և ես օգնում էի, որ նրանք ազատություն և բժշկություն գտնեին, ինչպես նաև փրկում էի երեխաներին չարիքից: Ես մշտապես ջերմեռանդ եմ եղել ամուսնության և ընտանիքի վերաբերյալ թշնամու ստերը բացահայտելու գործում: Իմ ցանկությունն է եղել օգնել մարդկանց տեսնելու, որ Աստծո ծրագրերն իրենց կյանքի համար բարի են, և որ միայն Նա կարող է բերել երջանկություն և խաղաղություն:

Ձեր տեսիլքը կարող է տարբերվել մեր տեսիլքից, բայց ինչ էլ լինի, մի՛ թողեք տեսիլքը և այն նախասահմանությունը, որ Աստված տվել է ձեզ: Ես եղել եմ ցավի ու տանջանքի մեջ, որտեղ Աստծո խոստումները շատ հեռու են թվացել: Երբ մեր ֆինանսական միջոցները քիչ էին, հիշում եմ, որ մտածում էի, թե արդյոք կարող ենք Սուրբ Ծննդին մեր երեխաներին «Ուրախ ընթրիք» գնել: Եթե դա չէր հաջողվում, 39 ցենտով երեխաներին գնում էինք բուրգեր և ջուր ու գրեթե երբեք չէինք կարողանում ընթրել սովորական ռեստորանում:

Նույն ճնշումը, որ ունեինք մեր ծառայության սկզբում, կար նաև այն ժամանակ, երբ սկսում էինք մեր բիզնեսը: Ըստ էության՝ մենք հազիվ էինք ծայրը ծայրին հասցնում՝ փորձելով սովորել ֆինանսական ծառայությունների գործը և կառուցել մեր երիտա-

սարդ ընտանիքը: Մենք մշտապես հետընթաց էինք ունենում անհաջողության պատճառով և երբեմն ստիպված էինք լինում դիմել հարազատների օգնությանը:

Մի քանի տարի այսպես ապրելուց հետո մենք զգացինք, որ Աստված պատվիրում է մեզ տեղափոխվել Օհայո: Այդ օրը Գարին եկավ իր ամենօրյա վազքից և ասաց, որ տեղափոխվում ենք: Ես ասացի. «Ես գիտեմ, բայց ո՞ր»: Տեղափոխվելու նույն զգացողությունն Աստված առաջացրել էր իմ ներսում: Նա ասաց. «Աստված խոսեց ինձ հետ, մինչ ես աղոթում էի, և մենք պետք է տեղափոխվենք Օհայո»: Գարին մեծացել էր Օհայոյում, և ես չէի զարմանում, որ Աստված կտաներ նրան այնտեղ, որպեսզի նա վկայեր իր ընտանիքին, որը չէր ճանաչում Տիրոջը: Ես աղոթեցի, և Աստված ինձ էլ հաստատեց, որ տեղափոխվելու ենք Օհայո և անելու ենք մեր՝ վերջին ժամանակների աշխատանքը: Քանի որ մենք ստացել էինք Աստծո կարգադրությունը, ես կարծում էի, որ երբ հասնենք այնտեղ, ամեն բան հեշտ կլինի, բայց եղավ ճիշտ հակառակը: Մենք ոչ միայն ամեն ինչ նորից սկսեցինք նոր տարածքում, այլև ունեինք պարտք, որ կուտակել էինք մի քանի տարի՝ պարզապես փորձելով գոյատևել: Ամուսինս շատ հուսահատվեց՝ փորձելով նորից բիզնես սկսել, երբ արդեն ուներ երկու երեխա, իսկ երրորդն էլ շուտով պիտի ծնվեր:

Մենք վարձակալում էինք երկու ընտանիքի համար նախատեսված բնակարան, որի համար դժվարությամբ էինք վճարում, և նույնիսկ սննդամթերքի պակասություն ունեինք: Մի երեկո դրսում սնվելու ցանկություն ունեցա, և մի միտք ծագեց: Եթե կարողանայինք բավականաչափ գումար հավաքել մեծահասակի մեկ բաժին կերակուրի համար, որը կարող էինք կիսել, ապա հնարավոր կլիներ սնվել քաղաքի կենտրոնում տեղակայված սպագետի մատուցող ռեստորանային ցանցերից մեկում, որից օգտվելու համար ես ունեի մանկական ընթրիքի երկու անվճար կտրոն: Նկատի ունեցեք, որ մենք դեռ չէինք եղել քաղաքի կենտրոնում և չգիտեինք ճանապարհը: Փնտրեցինք գրպաններում, հին պայուսակների մեջ, բազմոցի բարձերի տակ և մեքենայի մեջ և վերջապես կարողացանք գտնել այնքան մանրադրամ, որ կբավականացներ մեկ ընթրիքի և սպասարկման թեյավճարի համար: Մթերային խանութում մեր մանրադրամները թղթադրամի

վերածելուց հետո շարժվեցինք դեպի քաղաքի կենտրոն: Ռեստորանին մոտենալով՝ արագ պարզեցինք, որ ստիպված էինք մեկ ժամից ավելի սպասել: Երեխաներն հոգնել էին, և բոլորս այնքան քաղցած էինք, որ որոշեցինք հեռանալ: Կտրոնների ժամկետը լրացավ այդ օրը, և փոխարենը մենք ընտրեցինք արագ պատրաստվող սնունդ: Դա այն չէր, ինչ ես ակնկալել էի:

Քաղաքի կենտրոնից դուրս գալու ճանապարհին ոռք համերգ էր, և փողոցները լեփ-լեցուն էին մարդկանցով: Գարին նյարդայնացած վարում էր՝ դիտելով և փորձելով առաջ ընթանալ հարյուրավոր մարդկանց միջով, որոնք բղավելով և երգելով հատում էին մութ փողոցները: Իրարանցման մեջ և անձանոթ փողոցներում նա չնկատեց լուսացույցի կարմիր լույսը, որի դիմաց կանգնած էր ոստիկանության աշխատակիցը, որն անմիջապես կանգնեցրեց մեզ:

Գարին մոտեցավ ոստիկանության աշխատակցի մեքենային, այդ ընթացքում մեր փոքրիկները սկսեցին լաց լինել՝ վախենալով, որ ոստիկանությունը կտանի հայրիկին: Ես հանգստացրի նրանց և աղոթեցի՝ ինքս էլ վստահ չլինելով, որ նրան չեն ձերբակալի: Որովհետև, բացի արգելիչ նշանը չպահպանելուց, մենք ֆինանսապես ի վիճակի չէինք եղել Օկլահոմայում ամբողջությամբ վճարել մեր մեքենայի գումարը, ուստի չէինք կարողացել ձեռք բերել Օհայոյի տրանսպորտային միջոցի տեխանձնագիր: Օհայոյում պահանջվում էր տրանսպորտային միջոցի տեխանձնագիր՝ նոր համարանիշ ձեռք բերելու համար, բայց Օկլահոմայում գործում էր այլ օրենք, ուստի մենք հայտնվել էինք փակուղում՝ չունենալով որևէ միջոց նոր համարանիշներ ձեռք բերելու համար:

Գարիին բաց թողեցին ոստիկանության աշխատակցի մեքենայից, բայց տվեցին վճարման երկու անդորրագիր, և մենք լաց եղանք արվարձան (որտեղ ապրում էինք) վերադառնալու ամբողջ ճանապահին: Երբ նստեցինք արագ պատրաստվող սնունդ ուտելու, մենք լուռ էինք ու պարտված: Ես չեմ մոռացել այդ գիշերը, որովհետև դա ամենացավոտ օրերից մեկն էր, որը մինչև հիմա հիշում եմ: Երբեք հանձվելու այդպիսի խոր զգացում չեմ ունեցել: Դա ցավոտ երեկո էր, բայց մենք չիրաժարվեցինք մեր երազանքներից:

Ի վերջո մենք դարձանք ֆինանսապես ազատ, հիմնեցինք բազմամիլիոն դոլարանոց ընկերություններ և շարունակեցինք հովվություն անել մեծ, ծաղկող, մի քանի մասնաշենք և ամբողջ աշխարհում մեդիահարթակներ ունեցող եկեղեցում: Այսօր մեր հինգ երեխաները ծառայում են Աստծուն, որովհետև նրանք ականատես եղան մեր կյանքի վերափոխմանը:

Իմացեք, որ երբ անհավանական քայլեր անեք, հաղթեք պարտքի կամ հիվանդության դեմ մղվող պայքարում, աշխարհի հսկաները ձեզ ընդմիշտ մենակ չեն թողնի: Մենք տեսել ենք շատ ազատագրումներ, և Աստծո ձեռքն օգնել է մեզ ստանալու ազատություն բոլոր հնարավոր ձևերով, բայց երբ գրավում ենք այդ հողը, պետք է պաշտպանենք այն, որպեսզի մնանք ազատ:

Եբրայեցիներն ազատվեցին փարավոնից և նրա ստրկական աշխատանքի գերությունից, քաղաքական ու կրոնական հալածանքներից: Այն, որ փարավոնը դաժան աղետներից հետո ազատ արձակեց նրանց, Աստծո ազատագրման գործողությունն էր: Փարավոնն անմիջապես զղջաց, որ արեց դա: Ելից 14.5-ում նշվում է, որ նա և նրա ծառաները հրապարակավ զղջացին.

«Եվ Եգիպտոսի թագավորին պատմվեց, թե ժողովուրդը փախավ, և փարավոնի և նրա ծառաների սիրտը ժողովրդի դեմ փոխվեց, և ասացին. «Սա ի՞նչ արինք մենք, որ Իսրայելին մեզ ծառայություն անելուց թող չվեցինք»»:

Թշնամին միշտ կփորձի երկրորդ անգամ հասնել իր ուզածին այն բանից հետո, երբ դուք ազատվեք Եգիպտոսից (աշխարհի համակարգից): Անկախ նրանից՝ դուք բժշկվել եք, ունեցել եք ֆինանսական ճեղքում, ազատագրվել եք մեղավոր արարքներից, վերադարձել եք ձեր ընտանիքին և երեխաներին կամ ճաշակել եք ճշմարտությունը կամ որևէ հաղթանակ, կա պայքար, որ պետք է մղեք այն պայքարից հետո, որն արդեն հաղթել եք: Դուք չեք կարող հաջողություններ ունենալ և մնալ անցյալում: Ճշմարտությունն ազատ է արձակում, բայց դրա մեջ մնալով եք դուք ազատ մնում: Նույն Աստվածը, որ հանեց ձեզ երեկվա խառնաշփոթից, ակնկալում է, որ դուք հավատարիմ կմնաք Իր հետ փոխհարաբերությանն այսօր: Մեր մարդկային էությունը հակված է լինելու

ուշադիր այն ժամանակ, երբ օգնության կարիք ունենք, երախտապարտ՝ այն ժամանակ, երբ ինչ-որ բան ենք ստանում, և այն հակված է ժամանակի ընթացքում մոռանալու, թե որտեղից ենք եկել, և որքան շատ բան է Աստված արել մեզ համար: Թերևս ոչ ոք չի տեսել սա այնպես, ինչպես հովիվները:

Իսրայելի զավակներին որոշ ժամանակով թվաց, թե ազատվել են փարավոնից, բայց.

«Եվ իր կառքը պատրաստեց և իր ժողովուրդն իր հետ առավ: Եվ վեր առավ վեց հարյուր ընտիր կառքեր և Եգիպտոսի բոլոր կառքերը և նրանց ամենի վրա ոստիկաններ: Եվ Եհովան Եգիպտոսի փարավոն թագավորի սիրտը կարծրացրեց, և նա Իսրայելի որդիների ետևիցն ընկավ, և Իսրայելի որդիները բարձր ձեռքով դուրս եկան»:

– Ելից 14.6-8

Երբ փարավոնը մոտեցավ, իսրայելցիները վեր նայեցին և տեսան Եգիպտացիներին, որոնք գալիս էին իրենց հետևից: Նրանք սարսափեցին և աղաղակեցին Տիրոջը:

Թշնամին օգտագործում է վախը, որպեսզի մեզ կաթվածահար անի, այնուհետև վերադարձնի այն ոլորտ, որտեղ մենք ազատություն ենք ձեռք բերել: Նա գայթակղում է մեզ վերադառնալու հին օրինաչափություններին և հետ բերելու հին համոզմունքների համակարգը՝ ապրելով Եգիպտոսի երեկվա ճանապարհներով:

Ժողովուրդը, երբ բախվեց կրկին ու կրկին ի հայտ եկող խնդիրների, որոնց, ենթադրում էր, որ հաղթել է, վախեցավ և մեղադրեց իր առաջնորդին: Իսրայելցիները մեղադրեցին Աստծուն, մեղադրեցին Մովսեսին, մեղադրեցին ինչ-որ մեկին՝ փոխանակ ուսերն ուղղելու և դեմառդեմ կանգնելու իրական թշնամու՝ սատանայի և նրա սուրհանդակների առջև: Քանի դեռ մենք փոխզիջման ենք գնում և գոյակցում կռվարարի հետ, մշտապես կապրենք նրա հետ: Մեղադրելը ոչինչ չի փոխի: Միայն Աստված և Նրա Խոսքը, որ ազատեցին մեզ նախկինում, կպահեն մեզ ազատության մեջ:

«Եվ ասացին Մովսեսին. «Մի՞թե Եգիպտոսում գերեզմաններ չկային, որ մեզ բերեցիր անապատի մեջ մեռնելու»:

սա ինչ է, որ մեզ արեցիր, որ մեզ Եգիպտոսից հանեցիր: Սա այն խոսքը չէ, որ քեզ ասում էինք Եգիպտոսում, թե թող փոր մեզ, որ եգիպտացիներին ծառայություն անենք, որովհետև ավելի լավ է մեզ համար եգիպտացիներին ծառայություն անել, քան թե անապատում մեռնել»:

– Ելից 14.11,12

Հակառակվեք թշնամու գայթակղությանը՝ ձեր խնդիրների համար մեղադրելու առաջնորդներին և ուրիշներին: Սա շեղիչ գործողություն է և չի բերի ազատություն կամ չի պահի ձեզ ազատության մեջ: Իսրայելցիները զղջացին, որ հավատացին: Ես տեսել եմ մարդկանց, որոնք այսպես են վարվում: Հեշտ է ճիշտ որոշումներ կայացնել արևոտ օրերին, բայց ինչ է տեղի ունենում, երբ պատերազմը վերսկսվում է: Ինչպես ենք վարվում մեր վախերի և տկարության հետ, որոնք գայթակղում են մեզ վերադառնալու աշխարհի օրինաչափություններին, որոնց մեջ մեծացել ենք:

«Եվ Մովսեսն ասաց ժողովրդին. «Մի՛ վախեցեք, կանգնեք և տեսեք Եհովայի փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար, որովհետև ձեր այսօրվա տեսած եգիպտացիներին այլևս չպիտի տեսնեք հավիտյան: Եհովան ձեզ համար պիտի պատերազմի, և դուք լուռ կացեք»:

– Ելից 14.13,14

Աստված կհիշեցնի, թե ով եք դուք կանչված լինելու և կհորդորի չվախենալ: Մի անգամ ինձ վրա հարձակվեցին պիտբուլ ցեղատեսակի երկու վայրագ շներ, որոնք վազում էին դեպի ինձ երեսուն մետր հեռավորությունից: Մոտակայքում ոչ ոք չկար ինձ օգնելու համար: Ես մենակ էի: Այդ պահին ես պետք է կատարեի կանգնելու ընտրություն. անշարժ կանգնել, երբ նրանք ամբողջ ուժով հարձակվում էին ինձ վրա՝ ատամները մերկացնելով և գռմալով: Դա զարհուրելի պահ էր, բայց երբ ես կանգնեցի, նրանք կանգ առան: Դադարեք և կանգնեք: Երբ այն ամենը, ինչ գիտեք, արել եք, կանգնեք: Կանգնեք հավատքում: Կանգնեք ճշմարտության մեջ: Կանգնեք հաղթանակի և ազատության դիրքում: Դուք այլևս չեք տեսնի չարի հեղինակներին, երբ հաղթեք նրանց, և այլևս թույլ

չտաք, որ նրանք երբևէ նորից ստրկացնեն ձեզ:

«Եվ Եհովան ասաց Մովսեսին. «Ինչո՞ւ ես ինձ աղաղակում: Ասա՛ Իսրայելի որդիներին, որ չվեն» (Ելից 14.15):

Տերն այսօր ասում է ձեզ. «Դադարե՞ք աղաղակելուց: Առաջ շարժվե՞ք»:

Ես եղել եմ ամենածանր իրավիճակներում, բայց երբ դադարեցի աղաղակելուց և իմ նեղությանը նայելուց, լսեցի իմ Հոր ձայնը, Ով, գիտեմ, որ սիրում է ինձ: Նա զորացրեց ինձ, որ կանգնեմ և օգտագործեմ իմ իշխանությունը իմ հոգևոր թշնամու դեմ և կանգնեցնեմ նրա հարձակումը: Աստված նույնն ասաց Մովսեսին: «Եվ դու գավազանդ բարձրացրո՞ւ և ձեռքդ մեկնիր ծովի վրա և ճեղքիր նրան, և Իսրայելի որդիները ծովի միջով ցամաքով գնան» (Ելից 14.16):

Ես եղել եմ ամենածանր իրավիճակներում, բայց երբ դադարեցի աղաղակելուց և իմ նեղությանը նայելուց, լսեցի իմ Հոր ձայնը, Ով, գիտեմ, որ սիրում է ինձ: Նա զորացրեց ինձ, որ կանգնեմ և օգտագործեմ իմ իշխանությունը իմ հոգևոր թշնամու դեմ և կանգնեցնեմ նրա հարձակումը:

Պողոս առաքյալը նման իրավիճակում էր: Որտեղ էլ նա քարոզեր, հուդայականները հետևում էին նրան: Նրանք ծաղրում էին նրան, խայթում, երբեմն էլ ծեծում: Երեք տարբեր անգամներ Պողոսն ազատագրում խնդրեց Աստծուց, բայց Տերն ասաց. «Բավական է քեզ Իմ շնորհքը»: Այլ խոսքերով՝ Ես քեզ տվել եմ շնորհք՝ քայլելու քո ծառայության մեջ, վազելու քո ասպարեզը հալածանքների, թշնամիների, խոտորված և այլասերված սերնդի մեջ: Ես քեզ տվել եմ զորություն՝ կանգնելու և շարունակելու հավատքի բարի պատերազմը, պայքարելու ինչպես երկինքը:

Աստված կսովորեցնի, թե ինչ անեք, երբ բախվեք խնդիրների, որոնք սովորաբար ի հայտ են գալիս կյանքի փարավոնների միջոցով: Մեր Հայրն Իր Հոգով խորհուրդ կտա մեզ մեր ներսում: Նա ասում է. «Արա՛ այն, ինչ ասում եմ, և գործն ավարտին հասցրու»:

Աստված Մովսեսին հայտնեց, թե ինչ է Ինքն անելու, և ինչ պետք

է անի Մովսեսը: Հիշէք, մենք ունենք մեր, իսկ Աստված՝ Իր մասը:

«Եվ ես ահա եգիպտացիների սիրտը պիտի կարծրացնեմ, և նրանց երևից պիտի գնան, և ես փարավոնի և նրա բուլոր զորքերի վրա՝ նրա կառքերի և նրա ձիավորների վրա պիտի փառավորվեմ: Եվ եգիպտացիները կիմանան, թե ես եմ Եհովան, երբ որ ես փարավոնի և նրա կառքերի և նրա ձիավորների վրա փառավորվեմ:

Եվ Աստծո հրեշտակը, որ Իսրայելի բանակի առաջ գնում էր, ելավ և նրանց երևից գնաց, և ամպի սյունը ելավ նրանց առջևից և կանգնեց նրանց երբին: Եվ եգիպտացիների բանակի և Իսրայելի բանակի մեջտեղը եկավ, ու ամպ ու խավար եղավ, բայց գիշերը լույս էր փալիս, և բուլոր գիշերը միմյանց չմոտեցան»:

– Ելից 14.17-20

Նույն Սուրբ Հոգին, որ առաջնորդեց ձեզ, կկանգնի ձեր և թշնամու միջև, որը ցանկանում է հարվածել ձեզ երկրորդ անգամ:

«Եվ Մովսեսը մեկնեց իր ձեռքը ծովի վրա, և Եհովան սաստիկ արևելյան հովով քշեց ծովը բոլոր գիշերը և ծովը ցամաքեցրեց, և ջրերը ճեղքվեցին: Եվ Իսրայելի որդիները ծովի միջով ցամաքով գնացին, և ջրերը նրանց աջ կողմից և ձախ կողմից պարիսպ եղան: Եվ եգիպտացիները նրանց երևից ընկան, և փարավոնի բոլոր ձիերը, կառքերը և ձիավորները նրանց երևից ծովի մեջտեղը գնացին»:

– Ելից 14.21-23

Ես տեսել եմ, թե ինչպես է Աստծո ձեռքը չարագործներին գայթակղելով պահում ծուղակը, այնուհետև բռնում նրանց իրենց չարագործությունների մեջ: Նա Աստված է, և Նրա Խոսքը մեզ հիշեցնում է. «Նա ծիծաղում է ամբարիշտների վրա»: Նրանք խորագիտությամբ չեն գերազանցի Աստծուն կամ այն ծրագրերին, որ Նա ունի ձեր կյանքի համար: Քանի դեռ մենք հրաժարվում ենք Աստծուն թողնելուց, Նա չի թողնի մեզ: Մովսեսը վստահեց և հնազանդվեց Աստծուն, և Աստված կատարեց այն Խոսքը, որ խոսել էր: Աստված դեռ կատարում է Իր Խոսքը ձեզ համար:

«Եվ եղավ առավոտյան պահին, որ Եհովան եգիպտացիների բանակին նայեց կրակի ու ամպի սյունից և եգիպտացիների բանակը խռովության մեջ գցեց: Եվ նրանց կառքերի անիվները հանեց, որ դժվարությամբ էին առաջ գնում, այնպես որ եգիպտացիներն ասում էին. «Փախչենք Իսրայելի երեսից, որովհետև Եհովան նրանց համար պատերազմում է եգիպտացիների հեփ»:

– Ելից 14.24,25

Երբ մենք հնազանդվում ենք և կանգնում Աստծո խոստումների վրա, Նա մեր թշնամուն խռովության մեջ է գցում:

«Եվ Եհովան ասաց Մովսեսին. «Ձեռքդ մեկնիր ծովի վրա, որ ջրերը եր դառնան եգիպտացիների վրա՝ նրանց կառքերի և նրանց ձիավորների վրա: Եվ Մովսեսը մեկնեց ձեռքը ծովի վրա, և առավոտյան դեմ ծովն իր ընթացքին դարձավ, և եգիպտացիները նրա դիմացից փախան, և Եհովան թոթափեց եգիպտացիներին ծովի մեջ»:

– Ելից 14.26,27

Տերը կտա ձեզ գործողությունների ծրագիր: Աստված բացեց պատուհան, այս դեպքում՝ ծովը, և փախուստի ճանապարհ ապահովեց Աստծո զավակների համար:

«Եվ ջրերը դարձան և ծածկեցին փարավոնի կառքերը և ձիավորները և բոլոր զորքերը, որոնք նրանց երկից ծովի մեջ մտան, և նրանցից մեկն էլ չմնաց: Բայց Իսրայելի որդիները ծովի միջով ցամաքով գնում էին, և ջրերը նրանց աջ կողմից և ձախ կողմից պարիսպ էին նրանց համար: Եվ Եհովան այն օրը եգիպտացիների ձեռքից ազատեց Իսրայելին, և Իսրայելը մեռած տեսավ եգիպտացիներին ծովի եզերքում: Եվ Իսրայելը տեսավ այն մեծ ձեռքը, որ Եհովան ցույց տվեց եգիպտացիների վրա, և ժողովուրդը վախեցավ Եհովայից և հավատաց Եհովային և նրա ծանա Մովսեսին»:

– Ելից 14.28-31

Անկախ պատերազմներից, պատերազմների համբավներից, չարագործներից, ծաղրողներից, գրաքննությունից, ցնցումներից, քարկոծումներից, տեղաշարժերից, ժանտախտից կամ որևէ այլ խնդրից՝ հիշե՛ք. «Ոչինչ չի կարող բաժանել ձեզ Աստծո սիրուց Քրիստոս Հիսուսում»: Վստահե՛ք Աստծուն ձեր երազանքները և տեսիլքները, և Նա կտա ձեզ զորություն, շնորհք՝ անելու այն, ինչ ասել է ձեզ, այն Խոսքը, որ տվել է ձեզ: Ձեր հավատքն ուղղե՛ք Նրան և վստահորեն ակնկալե՛ք հաղթել ցանկացած պատերազմում, որ գլուխ է բարձրացնում: Վստահե՛ք, որ Աստծո Խոսքը ձեզ համար ճշմարիտ է, և Նրա ծրագիրը չի վնասի ձեզ, այլ բարիք կբերի ձեր կյանքի բոլոր օրերում: Սա ձեր պահն է: Պատահական չէ, որ դուք այստեղ եք: Դուք պետք է որոշում կայացնեք կոտրելու վախը և կասկածը: Փիլիպպեցիների 1.28-ում (NASB) ասվում է. *«Եվ ոչ մի ձևով մի՛ զարհուրեք հակառակորդներից, որ դա նրանց համար նշան է կորուստի, բայց ձեզ համար՝ փրկության, և դա նույնպես Աստծուց է»*: Աղոթե՛ք խիզախության համար: Պատերազմե՛ք ինչպես երկինքը և հետ վերցրե՛ք ձեր կյանքը:

22

ԱՊՐԵԼ ԱՐԹՈՒՆ



Ես հանքաքարերի սիրահար եմ: Մանկությունից հաճույք եմ ստացել հանքաքարեր և գեղեցիկ քարեր հավաքելուց: Մի անգամ իմ սիրելի ամուսինն ինձ համար մի շատ խոշոր հանքաքար բերեց: Այն բյուրեղյա գեոդ էր, որն ուներին դրած նա քայլել էր գրեթե 1,6 կմ, մինչև որ հասներ մեր ճամբար: Իմ բակում կա քարացած փայտ, որը բերվել է մեկ այլ ճամփորդությունից: Եթե Այլասկայի 12,000 գետերից մեկում ոսկի եք լվացազատում, ապա ոսկին նստվածքից կամ կեղտից զատելու համար հանքանյութերը պետք է թափահարեք թավայի մեջ: Նստվածքը կմաղվի և կհեռացվի, իսկ ոսկին, քանի որ ավելի ծանր նյութ է, կմնա անփոփոխ և կիջնի հատակը: Ոսկին հայտնաբերում են թափահարելու և մաղելու միջոցով:

«Որովհետև այսպես է ասում Ջորաջ Տերը. «Մեկ անգամ էլ, մի քիչ հետո կշարժեմ երկինքն ու երկիրը... Եվ կշարժեմ բոլոր ազգերը, և կգան բոլոր ազգերի ցանկալիքը և կլցնեմ այս տունը փառքով»,- ասում է Ջորաջ Տերը»:

– Անգե 2.6,7

Փառքը ծանր է: Աստծո փառքը դիմանում է ցնցումներին և լցնում է տաճարը: Դու և ես Սուրբ Հոգու տաճար ենք: Երբ շեղող

գործոնները և անկարևոր հարցերը պոկվում են մեզնից, փառքը լցնում է մեր կյանքը: Ահա թե որտեղ ենք մենք այս օրերին: Աստծո փառքը՝ Նրա ներկայությունը, բնակվում է յուրաքանչյուր մարդու ներսում, ով ճանաչում է Նրան: Երբ այս ցնցումը տեղի ունենա աշխարհում, ոսկին կառանձնանա նստվածքից, և կհայտնվի Նրա փառքը՝ այն ամենի շքեղությունը, որ Նրանն է:

«...Տերը ճանաչում է նրանց, որ Իրենն են, և թե ետ կենա անհրավությունից այն ամենը, որ Քրիստոսի անունը կանչում է»:

– Բ Տիմոթեոս 2.19

Մենք եկեղեցի չենք հենց այնպես: Մենք անցել ենք ցնցումների միջով, և ամեն բան շարունակելու է ցնցվել մինչև Տիրոջ վերադարձը: «Բնականոն վիճակը չի վերադառնա. Հիսուսը կվերադառնա»: Մենք պետք է խարսխված լինենք միակ ժայռին, որ կարող է օգնել մեզ կանգուն մնալու փոթորիկների և ցնցումների մեջ՝ գիտենալով, որ արեգակը դուրս կգա, հենց որ այս ժամանակաշրջանն ավարտվի: Մինչ այդ մենք ունենք այս հույսը՝ որպես հաստատուն և ապահով խարիսխ մեր անձերի համար: Անհնար է, որ Աստված սուտ խոսի (Եբրայեցիների 6.18, 19): Այս ժամանակներում ակնհայտ կդառնա, թե որտեղ ենք ներդրել և դրել

Մենք եկեղեցի չենք հենց այնպես:

Մենք անցել ենք ցնցումների միջով, և ամեն բան շարունակելու է ցնցվել մինչև Տիրոջ վերադարձը:

«Բնականոն վիճակը չի վերադառնա. Հիսուսը կվերադառնա»:

մեր գանձերը և մեր վստահությունը: Նրանք, ովքեր սիրում են Նրան և կանչված են Նրա նպատակի համաձայն, կանցնեն այս կրակի միջով և կմաղվեն, որպեսզի դառնան մաքուր ոսկի: Աստծո փառքը բերում է հրաշքներ, խաղաղություն և ուրախություն:

Դ Թագավորաց 4-րդ գլխում կար մի կին, որը երեխա չէր կարող ունենալ: Նա ամուսնացած էր հարուստ մարդու հետ և կարող էր շատ բաներ իրեն թույլ տալ, բայց դա չէր բավա-

րարում երեխա ունենալու նրա փափագը: Նա հետաքրքրված էր Աստծո Խոսքով, ուստի Եղիսե անունով մի մարգարեի հրավիրեց իր տուն՝ ճաշելու: Մարգարեի այցելությունների ժամանակ կինը լսում էր Աստծո Խոսքը: Այնուհետև նա համոզեց ամուսնուն մի վերնատուն կառուցել մարգարեի համար, որպեսզի նա օթևաներ այնտեղ, երբ գալիս էր քաղաք: Այսպես նա հյուրընկալեց Աստծո փառքը և այն ամենը, ինչ Նա անում էր երկրի վրա: Մարգարեն ցանկացավ օրհնել նրան իր մեծահոգության համար: Նա աղոթեց և մարգարեացավ, որ մեկ տարի հետո կինը մի որդի կգրկի:

Մեկ տարի անց նա գրկեց խոստացված որդուն, և որդին մեծացավ ու դարձավ պատանի: Աստծո փառքը մշտապես իրականություն է դարձնում այն, ինչ անհնարին է: Այն ժամանակ հարձակում եկավ Աստծո պարգևի վրա: Մի օր դաշտում հոր հետ աշխատելիս տղան ցավից գլուխը բռնեց և վայր ընկավ: Նրան տարան մոր մոտ, և նա մահացավ մոր ձեռքերում: Երբեմնի ուրախ մայրը կորցրեց իր երագանքը՝ իր որդուն: Ապագան կորսված թվաց: Բայց հուսահատության փոխարեն նա շարունակ կրկնում էր այս խոսքերը. «Ողջ առողջ»: Անցնելով ծանր փորձության միջով՝ նա վերադարձավ Եղիսե մարգարեի մոտ, որպեսզի պատմեր կատարվածը: Նա նայեց Եղիսեին և Աստծո Թագավորությանը, որովհետև իր վստահությունն այնտեղ էր կառուցել: Գալով մարգարեի մոտ՝ նա պատմեց իր իրավիճակի մասին: Եղիսեն գնաց պատանու մոտ, աղոթեց նրա համար՝ կռանալով նրա վրա, և տղան կենդանացավ:

Որոշ ժամանակ անց Եղիսեն կարգադրեց կնոջը վերցնել իր որդուն և գնալ մեկ այլ երկիր, քանի որ յոթ տարի Իսրայելում ավերիչ սով էր լինելու: Նա թողեց իր ամբողջ ունեցածը և որդու հետ յոթ տարով հեռացավ: Երբ սովը դադարեց, նա վերադարձավ և գնաց թագավորի մոտ, որպեսզի խնդրեր, որ իրեն վերադարձնեին իր թողած ստացվածքը: Սուրբ Հոգին աստվածային ռազմավարություն մշակեց կնոջ կորուստները վերականգնելու համար: Այն պահին, երբ կինը ներկայացավ թագավորին, թագավորը լսում էր նրա պատմությունը, որ կարդում էր Եղիսեի նախկին օգնականը մարգարեի օրագրերից: Աստված արդեն ճանապարհ էր պատրաստել նրա համար, որպեսզի նա հետ ստանար կորցրածը: Թագավորը

վճռեց հետաքննել գործը և վերադարձնել նրա տունն ու հողերը, ինչպես նաև յոթ տարվա կորցրած բերքը:

Սա զարմանահրաշ օրինակ է, թե ինչպես Աստված շարժվեց ազդեցության ոլորտում՝ շնորհ անելով նրան, ով վստահեց Իրեն: Կինը հավատքի ճանապարհ անցավ: Անիծված աշխարհի հիվանդության համակարգը փորձեց խլել նրա տեսիլքը, աշխարհի սովի համակարգը փորձեց խլել նրա մատակարարումը, բայց Աստված ապահովեց նրան ընտանիքով, տեսիլքով և մատակարարմամբ: Թագավորությունը, որին վստահել էնք, կլինի այն թագավորությունը, որին կապավիենք կարիքի և դժվարությունների ժամանակ: Երբ կյանքում բախվենք խնդիրների, կդիմենք այն համակարգին, որն առաջնահերթ է մեզ համար: Նա իր կյանքում առաջնահերթ դարձրեց Աստծո Խոսքը և կոչումը և այնտեղից էլ ստացավ օգնություն վշտի ժամանակ:

Աստված մատակարարեց նրան Սունամում, այնուհետև տարավ հեռու՝ փրկելով գալիք սովից: Նա վերադարձրեց նրան այն ամենը, ինչ թշնամին փորձեց խլել նրանից՝ նրա ընտանիքը և նրա ֆինանսները: Բայց նա իր վստահությունը հաստատել էր Աստծո համակարգում: Նա չտրվեց վախին, այլ կանգնեց ճշմարտության վրա: «Ողջ առողջ», - ասում էր նա: Դա առ Աստված հավատքի ծայնն է: Այն համակարգը, որին նա վստահել էր, դարձավ ամեն ինչ նրա համար: Նեղության մեջ նա դիմեց Խոսքին, որով կերակրվել էր իր տանը, և որը զբաղեցրել էր իր տունը: Այն դարձավ նրա ամենը՝ նրա պատասխանը:

Աստված հեռու տարավ նրան յոթ տարով, այնուհետև նա վերադարձավ, որպեսզի կրկին տիրի իր ունեցվածքին և նույնիսկ ստանա այն, ինչ բաց էր թողել, որովհետև նա վստահում էր Աստծուն՝ որպես իր աղբյուրի, լավ և վատ ժամանակներում: Նրա սիրտը հաստատված էր Աստծո Խոսքի մեջ ավելի, քան աղետի, ավելի, քան սովի, ավելի, քան կառավարության մեջ: Թագավորությունը, որին նա վստահում էր, ուներ իշխանություն այդ ամենի վրա:

Պարտեզում Ադամը և Եվան կերան բարու և չարի գիտության ծառից, այլ ոչ թե կյանքի ծառից, օգտվեցին թշնամու անկայուն համակարգից, այլ ոչ թե Աստծո առատությունից: Մեզ նույնպես վար-

ժեցրել են այնպիսի բաներում, որոնք հակառակ են Աստծո Խոսքին: Այս ժամանակներում մենք առանձնապես պետք է հասկանանք սա և թույլ տանք, որ ճշմարտությունը՝ այն, ինչ Աստված ասում է, վարժեցնի մեր զգայարանները՝ զանազանելու բարին չարից:

Թշնամին գիտի, թե որքան զորավոր ես դու՝ որպես վերստին ծնված, նոր արարած Քրիստոսում, հասկապես, երբ լցված ես Սուրբ Հոգով և դրսևորում ես Նրա փառքը: Սատանան փորձում է մեզ դուրս պահել Աստծո ճանապարհից վիրավորանքի և խաբեության միջոցով: Ինձ համար հետաքրքիր է, որ Սուրբ գիրքը զգուշացնում է, որ վերջին օրերում շատերի սերը կսառչի նրանց սրտի խստության պատճառով: Անիրավությունը և վիրավորանք չներելը խստացնում են սիրտը: Մենք կարող ենք զանազանել Տիրոջ կամքը մեր կյանքի և ընտանիքի համար, եթե աղոթքում խոսենք Աստծո հետ և մեր սիրտը փափուկ պահենք Նրա հանդեպ: Մենք պետք է մնանք Աստծո Խոսքի մեջ և աղոթենք Նրա Հոգով, որ սխալը մաղվի մեր սրտից: Չարն ատենք և բարին հետևեք (Հռոմեացիների 12.9):

Մենք օգնության կարիք ունենք մեր սրտերը տեսնելու համար: «Տիրոջ երկյուղը իմաստության սկիզբն է»: Ինչ է Տիրոջ երկյուղը: Ինձ համար դա նշանակում է ամեն ինչից առավել վախենալ Նրա ներկայությունը կորցնելուց: Առակաց 2.1-5-ում մեզ հորդորվում է. «Փնտրի՛ր Աստծո իմաստությունը ինչպես թաքնված գանձ»: Սա վերաբերմունք է, ոչ միայն հասկացողություն: Երբ Կայենն ու Աբելը մատուցեցին իրենց զոհը, Կայենն ուներ սխալ վերաբերմունք Տիրոջ հանդեպ: Հարցն այն չէ, թե ինչ նա տվեց, այլ այն, թե ինչպես նա տվեց. խիստ սրտով և սխալ վերաբերմունքով: Սա գլուխն ընդդեմ սրտի վերաբերմունք է: Մեր սիրտը պետք է վարժվի ցանկանալու նմանվել Հիսուսին ավելի, քան որևէ մեկին կամ որևէ բանի, որ տեսնում ենք աշխարհում: Հիսուսն ասաց. «Եթե Իմ կողմից չեք, Ինձ հակառակ եք»: Մեր հերոսները չեն կարող լինել աստղեր կամ չարագործներ: Մեր նպատակը չի կարող լինել հանրաճանաչություն ձեռք բերելը, այլ ավելի շուտ Նրան նմանվելը:

Եթե գիշեր-ցերեկ խորհենք Աստծո Խոսքի շուրջ, այն մեր ճանապարհները հաջողակ կդարձնի: Առակաց 2.6-ում ասվում

է. «Տերն է տալիս իմաստությունը», իսկ Հիսուսն ասաց. «Ձեզ է տրված Աստծո Թագավորության խորհուրդները գիտենալ»: Կա, այսպես կոչված, աշխարհի իմաստություն, որ հասնում է մեզ բուրբ կողմերից՝ համալսարաններից, մեդիայից, ժամանցի տեսակներից, բայց մենք ենք որոշում, թե ուր ուղղենք մեր սիրտը: Եթե Աստծո իմաստությունը բարձր չգնահատվի, այն չի հայտնվի մեզ: Մենք պետք է փնտրենք այն ինչպես գանձ և հասկանանք, որ այն ինքն իրենով կյանք է: Պահպանիր սիրտդ ամեն ջանասիրությամբ, քանի որ նրանում է կյանքը, կյանքի ելքը (Առակաց 4.20-23):

Եթե մարդիկ փորձեն աշխարհի իմաստությամբ հասնել այն օրհնություններին, որոնք գալիս են Տիրոջ երկյուղի հետ, ապա հաջողություն չեն ունենա: Հայտնիների մշակույթի խաբեությունը վատ է ավարտվում. մեզ միայն անհրաժեշտ է նայել հետևանքներին: Աստղային աշխարհի մեծագույն անունները, վերջին հաշվով, սնանկանում են, իսկ նրանց ընտանիքները տառապում են ցավից, կոտրվածությունից, ամուսնալուծությունից, ինքնասպանությունից և սպանությունից:

Մենք չենք կարող ավելի շատ ժամանակ անցկացնել սոցցանցերում, լրատվական կայքերում, ֆիլմերում, ժամանցի վայրերում և խաղերում, քան Աստծո հետ և Նրա Խոսքի մեջ, և միաժամանակ ակնկալել ունենալ Աստծո իմաստությունն ու օրհնությունները:

Մենք չենք կարող ավելի շատ ժամանակ անցկացնել սոցցանցերում, լրատվական կայքերում, ֆիլմերում, ժամանցի վայրերում և խաղերում, քան Աստծո հետ և Նրա Խոսքի մեջ, և միաժամանակ ակնկալել ունենալ Աստծո իմաստությունն ու օրհնությունները: Մենք կվստահենք այն համակարգին, որ հաստատել ենք մեր կյանքում: Ինչքան ենք տալիս մեր հիմնական ուշադրությունը: Սա ազդեցություն կունենա մեր սրտի վրա և կուղղորդի մեր կյանքի ընթացքը: Մենք պետք է

է ազդենք և ներգործենք մշակույթի վրա, բայց թույլ չտանք, որ այն ուղղորդի մեր համոզմունքների համակարգը կամ մեր գործողությունները, երբ դրանք հակադիր են իրար: Մենք պետք է

կառուցենք կամուրջ, որպեսզի ազդեցության ոլորտների միջոցով հասնենք մարդկանց, բայց չենք կարող փոխզիջման գնալ Աստծո Խոսքի հետ՝ դա անելու համար:

Սա իմաստուն և հիմար կույսերի պատմությունն է Սուրբ գրքում, որոնք պատրաստվում և սպասում էին ամուսնական ընթրիքին: Ովքեր ուշադիր չէին իրենց հոգևոր կյանքի հանդեպ, չունեին յուզ իրենց լապտերների համար, երբ փեսան եկավ: Նրանք ցանկացան պարտքով յուզ վերցնել ուրիշներից, սակայն վերջիններս ասացին. «Ո՛հ, մենք չենք ունենա բավականաչափ մեզ համար: Գնացե՛ք և գնե՛ք ձեզ համար»: Յուրաքանչյուրը պետք է ձեռք բերի իր յուզը, իր անձնական փոխհարաբերությունն Աստծո հետ Սուրբ Հոգու (յուզի) միջոցով: Ձեր մոր կամ հոր փոխհարաբերությունը չի գնի յուզ ձեզ համար: Այն պետք է լինի ձեր անձնականը: Գործե՛ք ձեր անձերի փրկությունը Տիրոջ երկյուղով: «Փնտրե՛ք Նրան, քանի դեռ կարելի է գտնել Նրան»:

«Շնորհքն ու ճշմարտությունը քեզ չեն ձգի... նրանց գրիք քո սրտի փախստակի վրա: Այսպես դու շնորհք և հաճութուն կգտնես Աստծո և մարդկանց առջև: Տիրոջն ապավինիք քո բոլոր սրտով և քո հասկացողությանը մի՛ վստահիր: Քո բոլոր ճանապարհներում ճանաչի՛ր Նրան, Նա կուղղի քո ճանապարհները: Դու քո աչքի առաջ իմաստուն մի՛ եղիր, վախեցի՛ր Տիրոջից և հեռացի՛ր չարից: Սա առողջություն կլինի քո մարմնի համար և պարարտություն՝ քո ոսկորներին: Պատվի՛ր Տիրոջը քո ստացվածքից և քո բոլոր բերքերի երախայրիներից: Այն ժամանակ կլցվեն քո շտեմարաններն առափնյայտով...»:

– Առակաց 3.3-10ա

Սա ներառում է ոչ միայն եկեղեցի հաճախելը կամ հավատքը, այլև առողջությունը, ֆիզիկական վիճակը, ֆինանսները և հաջողությունը: Առակաց 4.20-22-ն ասում է. «Որդյանկա, ուշադիր եղիր իմ խոսքերին... նրանք կյանք են նրանց գպնողներին և նրանց բոլոր մարմնին՝ բժշկություն»: Մենք չենք ցանկանում աշխարհի-

կացնել կամ տրոհել մեր հավատքը: Աստծո Խոսքն անդրադառնում է կյանքի յուրաքանչյուր սարին, տալիս է մեզ հրահանգներ և իշխանություն՝ խոսելու այն սարերին, որոնք փորձում են կործանել մեր հավատքը:

Հիսուսն ասաց. «Եթե ասեք այս սարին՝ վեր կաց և ծնվա ընկիր, ու չերկմտեք ձեր սրտում, կլինի ձեզ»: Մենք ունենք իշխանություն այս ոլորտներում, երբ հեռու ենք մնում նրանց գիտության ծառի մոտ երկրպագելուց: Այն, ինչի հետ փոխզիջման ենք գնում՝ ձեռք բերելու համար, վերջին հաշվով կորցնում ենք: Թեև ցանկանում ենք օգտագործել Աստծուց տրված մեր իշխանությունը՝ հասնելու մարդկանց յուրաքանչյուր ոլորտում, մենք չենք կարող թույլ տալ, որ խորամանկ և նենգ ծրագրերը ներքաշեն մեզ սխալ ապրելակերպի մեջ:

Իշխանությունը, փողը և սեռական հարաբերությունը ոլորտների «Մեծ եռյակն» են, որ սատանան օգտագործում է, որպեսզի գայթակղի տղամարդկանց և կանանց և հարձակվի նրանց վրա, և բացառություն չեն նրանք, ովքեր սիրում են Աստծուն: Մարդիկ պայքարում են, որպեսզի հաղթահարեն այս հզոր ցանկությունները, որոնք դրսևորվում են ազդեցության սարերում՝ ներքաշելով նրանց աշխարհի համակարգի գայթակղությունների մեջ: Մենք տեսել ենք Աստծո տղամարդկանց և կանանց անկումը, որոնք փոխզիջման են գնացել և կործանել են իրենց կյանքն ու ծառայությունը: Մենք չպետք է խեղդվենք՝ փորձելով փրկել դժվարության մեջ գտնվողներին: Մենք տեսել ենք, թե ծառայողներն ինչ հրաշալի ծրագրեր են իրականացնում և զբաղեցնում այս ոլորտները՝ հետագայում անզգուշության հետևանքով կամ ցավից մի ակնթարթում կորցնելով ամեն ինչ: Աշխարհը կգայթակղի և սատանայի նույն ծուղակը կզցի նրանց, ովքեր ունեն ազդեցություն: Չլինենք իմաստուն մեր աչքերում և չմոռանանք, որ Տերն է տվել մեզ զորություն՝ հարստանալու և հաստատելու Նրա, ոչ թե մեր թագավորությունը:

Անհավատարմությունն ամուսնու կամ կնոջ հանդեպ և վերահսկողությունից դուրս եկող սեռական ցանկությունները խորտակում են կյանքը, որքան էլ դրանք անմեղ և հուզիչ թվան կինոնկարներում: Առակաց 5.8-12-րդ խոսքերը զգուշացնում են

նրանց, ովքեր ներգրավվում են շնության մեջ. այն կխլի ձեր պատիվը և այն ամենը, ինչ ստեղծում եք: Վերջում՝ կվարակվեք հիվանդությամբ: «Օ՛հ, որքան էի ես ատում կարգապահությունը: Եթե միայն չանտեսեի բոլոր զգուշացումները»:

Այս ազդու խոսքերը հիշեցնում են մեզ, որ մեր սեռական մտերմությունը պետք է կիսենք միայն մեր ամուսնու կամ կնոջ հետ: Դուք կբավարարվեք և կհագենաք միայն նրա սիրով:

Սա տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ մեր կյանքը պահպանում ենք այլ ուղերձներից, որոնք գայթակղում են մեզ, որպեսզի դուրս նայենք մեր ամուսնությունից՝ Աստծո նախատեսած մտերմությունից: Ցավը փնտրում է հաճույք, և երբ մենք ցավ ենք զգում, պետք է վազենք Աստծո և մեր ամուսնու կամ կնոջ մոտ: Հակառակ դեպքում աշխարհն ամբողջությամբ պատրաստ է առաջարկելու կեղծը:

Մշակույթը, որն այլևս չի պաշտպանում երեխաներին, գնում է կործանման: Վերջին 40 տարիներին մեր մշակույթը շատ հստակ ուղերձ է հղել երեխաներին. «Դու կարևոր չես»:

Մշակույթը, որն այլևս չի պաշտպանում երեխաներին, գնում է կործանման: Վերջին 40 տարիներին մեր մշակույթը շատ հստակ ուղերձ է հղել երեխաներին. «Դու կարևոր չես»: Խաղալիքների խանութները, ինչպիսիք են «ԹոյսԻՌԻս»-ը և «ՖԱՕ Շվարց»-ը, անցյալի հուշեր են, և գրեթե անհետացել են նույնիսկ մանկական հագուստի խանութները: Սակայն ավելանում են կենդանիների հսկայական խանութները: Ամերիկացիները տարեկան ավելի քան 100 միլիարդ դոլար են ծախսում կենդանիների վրա, որն ավելի շատ է, քան աշխարհի 39 ամենաաղքատ երկրների ՀՆԱ-ն՝ միասին վերցրած:

Մի դպրոցում աշակերտները տնօրենին խնդրել են դպրոցի զուգարաններում աղբի տուփեր դնել, որպեսզի այնտեղ տեղավորվեն այն երեխաները, որոնք իրենց նույնացնում են մարդակերպ կենդանիների հետ: Երբ տնօրենի պոտենցիալ ծրագրերը

զեկուցվել են դպրոցի խորհրդի տեսագրվող նիստին, տեսանյութը տարածվել է՝ առաջացնելով ծնողների զայրույթն ու հանրային նողկանքը: Ինչպես և կանխատեսվում էր, տնօրենը հերքել է մեղադրանքները՝ որպես կեղծ լուրեր, բայց արդեն ուշ էր: Այս երեխաները հավատում էին, որ իրենք շներ են, կատուներ կամ այլ կենդանիներ: Իսկ ինչո՞ւ այս երեխաները չպիտի ցանկանային լինել կենդանիներ: Մշակույթն ավելի մեծ հարգանք ունի իր ընտանի կենդանիների, քան իր երեխաների հանդեպ: Մշակույթը հեռացել է ճշմարտությունից և հղել հետևյալ ուղերձը. ճշմարտությունը հարաբերական է, և դու կարող ես լինել այն, ինչ ցանկանաս, նույնիսկ կենդանի:

Որպես Երկրի թագավորության և երկնքի Թագավորության քաղաքացիներ՝ մենք պետք է աղոթենք. «Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»: Մենք պետք է տիրենք Երկրին և բերենք երկնքի խաղաղությունը, ուրախությունը, մատակարարումը, բժշկությունը և արժեքները մշակույթի յուրաքանչյուր սարի մեջ և տանենք Աստծո Թագավորությունն ամենուր, ուր գնում ենք՝ զորությամբ ցուցադրելով ճշմարտությունը: Աստծո Խոսքը ճշմարտություն է՝ զուգակցված Աստծո ներկայությամբ, Նրա գործությամբ, որ դրսևորվում են ձեր միջոցով: Մենք ընդունում ենք Հիսուսի հանձնարարությունը՝ գրված Մարկոսի 16.17,18-րդ խոսքերում, որ մեզ հորդորում է դիմել գործողությունների.

«...Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներ կխոսեն: Օձեր վեր կառնեն և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի փա. հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»:

Որպեսզի չհիասթափվենք, մեր առջև մշտապես Դավիթն ընդդեմ Գողիաթի սցենարն է: Երուսաղեմի կրոնական առաջնորդներն ուղարկեցին քահանաների, որպեսզի Հովհաննես Մկրտչից հարցնեին, թե ով է նա: Նա հստակ պատասխանեց. «Ես չեմ Քրիստոսը»: Երբ նրանք հարցրին, թե արդյոք նա Մարգարեն է, նա ասաց՝ ո՛չ: Վերջապես նրանք հարցրին. «Այն ժամանակ ո՞վ ես դու: Մենք պետք է պատասխան տանք մեզ ուղարկողներին: Ասա՛ մեզ՝ ո՞վ ես դու»: Հովհաննեսը պատասխանեց Եսայի մարգարեի

խոսքերով. «Ես եմ անապատում կանչողի ձայնը, թե ուղղեք Տիրոջ ճանապարհը» (Հովհաննես 1.23):

Այո, Հիսուսը վերադառնում է, և մենք պետք է պատրաստենք ճանապարհը:

«Ձեր սրտերը թող չխռովվեն. Աստուծուն հավատարացեք և Ինձ հավատարացեք: Իմ Հոր փանը շատ բնակարաններ կան, ապա թե ոչ Ես ձեզ կասեի՝ գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որ ուր Ես եմ, դուք էլ լինեք: Եվ որտեղ որ Ես գնում եմ՝ գիտեք, և ճանապարհը գիտեք»:

– Հովհաննես 14.1-4

Աշակերտները հարցրին Հիսուսին, թե երբ է հաստատելու Իր Թագավորությունը: Մարկոսի 13.28-ում Հիսուսը հայտնում է Իր վերադարձին նախորդող հանգամանքները և ժամանակի նշան տալիս: Մենք գիտենք ժամանակաշրջանը, բայց ո՛չ օրը կամ ժամը:

«Բայց թզենուց սովորեք առակը. երբ որ նրա ճյուղերը արդեն կկակղեն, և տերևները կարծակվեն, գիտեք, թե ամառը մոտ է: Այնպես էլ դուք, երբ որ տեսնեք այս բոլորը լինելիս, իմացեք, թե մոտիկ է դռներին: Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե այս ազգը չի անցնի, մինչև որ այս բոլորը լինեն: Երկինքը և երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի:

Միայն այն օրվա և ժամի համար ոչ ոք չգիտի, ո՛չ հրեշտակները երկնքում և ո՛չ Որդին, բայց միայն Հայրը: Զգուշացեք, արթուն կացեք և աղոթք արեք, որովհետև չգիտեք, թե ժամանակը երբ է: Ինչպես մի մարդ, որ հեռու աշխարհի գնալիս իր տունը թողնի և իր ծառաներին իշխանություն տա և ամեն մեկին իր գործը և դռնապանին հրաման տա, որ արթուն կենա: Արդ արթուն կացեք, որ չգիտեք, թե փանտերը երբ կգա՝ իրիկունը, թե՛ կես գիշերին, թե՛ հավի խոսելու ժամանակին, թե՛ առավոտյան. որ չլինի թե հանկարծ

գալով ձեզ քնած գտնի: Բայց ինչ որ ձեզ ասում եմ, ամենին եմ ասում. արթուն կացեք»:

– Մարկոս 13.28-37

Մեր գործն է քարոզել Աստծո Թագավորությունը և հրաժարվել մշակութային ճնշմանը տեղի տալուց, որի նպատակն է փոխզիջման ենթարկել այն, ինչ Աստված ասում է, որ ճիշտ է կամ սխալ: Չափազանց շատ հոգևոր և կրոնական առաջնորդներ կողմնորոշվում են աշխարհի չափանիշներով՝ Աստծո չափանիշների փոխարեն: Ավելի երիտասարդ հոգևոր առաջնորդները պետք է գիտակցեն, որ ամենայն հավանականությամբ իրենք կրթվել են մարքսիստական գաղափարախոսություններով մեղիայի, դպրոցների և քարոզչության միջոցով: Եթե մշակույթն ունի Աստվածաշնչից տարբերվող տեսակետ, Սուրբ գիրքը մեզ պատվիրում է դուրս գալ անհավատների միջից և նրանցից բաժանվել: Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք հասկացողություն և զանազանում ձեռք բերելու համար: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ ժամանակների վերջում, եթե օրերը չկարճացվեին, նույնիսկ ընտրվածները կխաբվեին: Խաբեությունը և վիրավորանքը վերջին օրերի նշաններից են: Եկեք պահենք մեր ընթացքը և զերծ մնանք խաբեությունից:

Մենք պետք է պահպանենք մեր սրտերը մոլորությունից, պահպանենք մեր երեխաներին մոլորությունից, պահպանենք մեր եկեղեցիները մոլորությունից, հատկապես գառան հագուստով գայլերից, գոտևորվենք ճշմարտությամբ և կիսենք այն նրանց հետ, ովքեր կլսեն: Գողիաթին հաղթելու համար չի պահանջվում մի ամբողջ բանակ, այլ ընդամենը մեկը, ով կհավատա Աստծո Ուխտին և մարտահրավեր կնետի Գողիաթին:

Եփեսացիների 5-ը հստակ սովորեցնում է մեզ, թե ինչպես ապրենք վերջին օրերին:

«...ոչ մի պոռնիկ կամ պիղծ կամ ազահ, որ կռապաշար է, ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո արքայությունում: Ոչ ոք թող չխաբի ձեզ դատարկ խոսքերով, որով-

հեղինակը այս պատճառով էլ Աստծո թարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա: Ուրեմն մասնակից մի՛ եղեք նրանց:

Որովհետև մի ժամանակ խավար էիք, իսկ հիմա լույս եք Տերում. լույսի որդիների պես գնացեք: Որովհետև Հոգու պտուղը ամեն բարությունով է և արդարությունով և ճշմարտությունով: Փորձեցե՛ք, թե ինչ է հաճո Տիրոջը: Եվ մասնակից մի՛ եղեք խավարի անպարտ զործերին, այլ մանավանդ հանդիմանեք»:

– Եփեսացիների 5.5-11

«Արդ նայե՛ք, թե ինչպես զգուշությամբ վարվեք. ոչ թե ինչպես անխելքներ, այլ ինչպես իմաստուններ. գնե՛ք ժամանակը, որ օրերը չար են: Նրա համար մի՛ եղեք անմիտ, այլ իմացե՛ք, թե ինչ է Տիրոջ կամքը: Եվ մի՛ արբենաք գինով, որ նրանում անտակություն կա, այլ լցվե՛ք Հոգով»:

– Եփեսացիների 5.15-18

Լցվե՛ք Աստծո Հոգով: Աստծո Հոգու մեջ խաղաղություն կա: Աստծո Թագավորության մեջ ուրախություն կա: Կա ուղղություն, մատակարարում, տեսիլք: Մենք լցված ենք մնում Աստծո Հոգով, երբ խորհում ենք Նրա Խոսքի շուրջ, երբ փոթորկի մեջ խարսխված ենք մնում Նրա ասածին: Առջևում ունենք անհավանական ապագա և խոստումներ, որոնց համար արժե պայքարել և կանգուն մնալ: Հիսուսն ասաց, որ երբեք չի թողնի կամ չի լքի մեզ: Եկե՛ք չթողնենք Նրան հանուն մշակութային ազդեցությունների: Ընկերները կամ հավատակիցները գուցե թողնեն, բայց եթե մենք կանգնենք Աստծո կողքին, Նա կկանգնի մեր կողքին: Ինչպես պատերազմի մեջ կան երկու թագավորություններ, այնպես էլ կան երկու հավիտենական նախասահմանություններ՝ երկինքը և դժոխքը: Յուրաքանչյուրը կվարձատրվի՝ համաձայն իր որոշման:

Ահա թե ինչու մենք պետք է պայքարենք ինչպես երկինքը: Երբ հրատարակչի հետ խոսեցի այս գրքի մասին, նա ասաց. «Պայքարի՛ր ինչպես երկինքը» և «Հեռացրո՛ւ դժոխքը այստե՛ր»:

ղից»: Կարծում եմ, նա ճիշտ է: Մենք պետք է հեռացնենք դժոխքը մարդկանց կյանքերից և օգնենք նրանց գտնելու երկինքը: Եվ երբ Արքայության այս Ավետարանը քարոզվի ամեն ազգի, մենք կհեռանանք այստեղից:

Կանայք, տղամարդիկ և երեխաներ՝ անկախ ծագումից, Աստված կանչել է մեզ վերցնելու ճշմարտությունը և խոսելու այն իսկական սիրով, սիրով, որը փոխզիջման չի գնում ճշմարտության հետ, այլ կառուցում է կամուրջ՝ այդ ճշմարտությունը տարածելու համար, քանի որ միայն ճշմարտությունն է մեզ ազատ արձակում: Արթուն եղեք: Երբ տեսնեք այս բաները, վերև նայեք: Ձեր փրկությունն ավելի մոտ է, քան երբևէ:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.6,7



«Նրա հետ մեզ հարուցանեց և Նրա հետ երկնավորներում նստեցրեց՝ Քրիստոս Հիսուսում: Որ նոր եկող դարերում հավիտյան ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը՝ Քրիստոս Հիսուսի մեզ վրա ցույց տված քաղցրությունով»:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.10-12



«Այսուհետև, եղբայրներս, զորացեք Տերով և Նրա զորության կարողությունով: Եվ Աստուծո սպառազինությունը հագնեք, որ կարող լինեք սափանայի հնարքներին հակառակ կենալ: Որովհետև մեր պատերազմը արյան և մարմնի հետ չէ, այլ իշխանությունների և պետությունների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ, որ երկնավորների մեջ են»:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.13-15



«Սրա համար Աստուծո սպառազինությունն առեք, որ կարող լինեք հակառակ կենալ չարության օրում և ամենը կատարելով հաստատ կանգնել: Արդ հաստատ կանգնեք՝ ձեր մեջքերը ճշմարտությամբ գոյևորված և արդարության զրահը հագած և ձեր ոտները կոշիկ հագած խաղաղության ավետարանի պատրաստությունով»:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.16



«Եվ ամենի վրա հավատքի վահանն առեք, որով կարող լինեք չարի ամեն կրակոտ նեպերը հանգցնել»:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.17



«Եվ փրկության սաղավարտն առեք և Հոգու սուրը, որ Աստծո խոսքն է»:

ՉԱՔԱՐԻԱ 4.6



«Եվ նա պատասխանեց և ասաց ինձ, թե սա Տիրոջ խոսքն է առ Ջորաբաբել՝ ասելով. «Ոչ թե զորությունով և ոչ թե ուժով, այլ Իմ Հոգով», - ասում է Ջորաց Տերը»:

ՀԵՍՈՒ 23.10



«Ձեզնից մեկ մարդ հազարը կհալածի, որովհետև ձեր Տեր Աստվածը Ինքն է ձեզ համար պատերազմողը, ինչպես որ ձեզ ասել է»:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 3.22



«Նրանցից չվախենաք, որովհետև ձեր Եհովա Աստվածը Ինքը կպատերազմի ձեզ համար»:

ՀԵՍՈՒ 1.9



«Ահա քեզ պատվիրում եմ, զորացի՛ր և քանջ եղի՛ր, մի՛ վախենա և մի՛ զարհուրի՛ր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն տեղ, ուր որ գնաս»:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 10.4



«Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու. խորհուրդներ ենք քանդում»:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 10.5



«Եվ ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ, և գերի ենք բռնում ամեն միտք Քրիստոսին հնազանդեցնելու համար»:

ՂՈՒԿԱՍ 10.19



«Ահա իշխանությունը տվի ձեզ՝ կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու բոլոր զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.4



«Դուք Աստուծոց եք, որդյակներ, և հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհիս մեջ է»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.37



«Բայց այս ամեն բաներումն առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց»:

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 6.12



«Պատերազմի՛ր հավատքի բարի պատերազմը և բռնի՛ր հավիտենական կյանքը, որի մեջ կանչվեցիր և դավանեցիր բարի դավանությունը շարվկաների առջև»:

ՀԱԿՈՐՈՍ 4.7



«Արդ հնազանդվե՛ք Աստծուն, հակառակ կանգնե՛ք սատրանային, և նա կփախչի ձեզնից»:

Բ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ 3.3



«Բայց Տերը հավատարիմ է, որ կհաստատի ձեզ և կպահի այն չարից»:

ԱՌԱԿԱՑ 28.1



«Ամբարիշտը փախչում է առանց մեկի հալածելու, բայց արդարները առյուծի պես ապահով են»:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 28.7



«Եհովան քո առաջ ջարդել կտա քեզ վրա վեր կենող թշնամիներիդ: Նրանք քեզ դեմ մեկ ճանապարհով դուրս կգան, բայց քո առաջից յոթ ճանապարհով կփախչեն»:

Ա ՊԵՏՐՈՍ 5.8,9



«Արթուն եղեք, հսկում արեք, որովհետև ձեր ոտիս թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կույ տա: Որին հակառակ կացեք հավատքով հաստատված՝ գիտենալով, որ ձեր եղբայրներն էլ, որ աշխարհիս մեջ են, նույն չարչարանքներն են քաշում»:

ՍԱՂՄՈՍ 60.12



«Մենք Աստծով զորություն կգործենք, և Նա կոխ կտա մեր թշնամիներին»:

ՍԱՂՄՈՍ 91.7



«Հազար հոգի քո կողմից կընկնեն, և տասը հազար՝ քո աջ կողմից, բայց քեզ չի մոտենա»:

ՍԱՂՄՈՍ 18.39



«Դու ինձ զորություն ես հազցնում պատերազմի համար, և ինձ դեմ վեր կացածներին իմ տակն ես զցում»:

ՍԱՂՄՈՍ 91.11,12



«Որովհետև Իր հրեշտակներին հրամայել է քեզ համար, որ պահեն քեզ քո բոլոր ճանապարհներում: Նրանք ձեռքերի վրա կառնեն քեզ, որ քո ոտքը քարի չդպցնես»:

ՄԱՏԹԵՈՍ 18.18



«Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վրա կապեք, երկնքում էլ կապված կլինի, և ինչ որ երկրի վրա արձակեք, երկնքում էլ արձակված կլինի»:

ԵՍԱՅԻ 41.10



«Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ, մի՛ վեհերիր, որովհետև ես քո Աստվածն եմ. ես զորացրել եմ քեզ, նաև օգնել եմ քեզ, նաև քեզ հաստատել եմ Իմ արդարության աջով»:

ԵՍԱՅԻ 43.1



«Եվ հիմա այսպես է ասում Տերը՝ քեզ Սպեղծողը, ո՛վ Հակոբ, և քո Արարիչը, ո՛վ Իսրայել. «Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ փրկել եմ, քո անունով կանչել եմ, թե դու Իմն ես»»:

ԵՍԱՅԻ 54.4ա



«Մի՛ վախեցիր, որովհետև չպիտի ամաչես, և մի՛ պատկառիր, որովհետև պիտի չնախապրվես...»:

ԵՍԱՅԻ 54.17



«Բոլոր քեզ դեմ շինած գործիքը պիտի չհաջողվի, և ամեն լեզու, որ վեր կենա քեզ դեմ դատաստանի, պիտի դատապարտվի. սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և նրանց արդարությունը Ինձնից է», - ասում է Տերը»:

ԵՐԵՄԻԱ 1.19



«Եվ նրանք կպատերազմեն քեզ դեմ, բայց քեզ չեն հաղթի, որովհետև ես քեզ հետ եմ, - ասում է Տերը, - որ քեզ փրկեմ»:

Բ ՄՆԱՅՈՐԴԱՑ 20.15բ



«...Տերը ձեզ այսպես է ասում. «Դուք մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք այս մեծ բազմության երեսից, որովհետև պատերազմը ձերը չէ, այլ Աստծունն է»:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆՆԵՐԻ 16.13



«Արթուն եղեք, հաստակար կացեք հավատքում. արիացե՛ք և ուժովացե՛ք»:

ՍԱՂՄՈՍ 144.1



«Օրհնյալ է Տերը՝ իմ Վեմը, որ սովորեցնում է իմ ձեռքերը կռիվ անելու և իմ մատները պատերազմելու»:

Բ ՏԻՄՈԹԵՈՍ 4.18ա



«Եվ կփրկի ինձ Տերն ամեն չար բանից և կազարի կհասցնի Իր երկնային արքայությանը...»:

ՍԱՂՄՈՍ 44.5



«Քեզանով գեպինը գցեցինք մեր թշնամիներին. Քո անունով կռիվ արեցինք մեզ դեմ վեր կենողներին»:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 12.11



«Եվ նրանք հաղթեցին նրան Գառի արյունով և իրենց վկայության խոսքով և չսիրեցին իրենց հոգին մինչև մահ»:

23

ՆՎԱՃԻՐ ՍԱՐԸ



Մենք մարդկանցով լի մեքենայով ուղևորվեցինք դեպի վանք, որը գտնվում էր Իտալիայի սարերից մեկի լանջին: Դա ամենաուղղաձիգ սարն էր, որ երբևէ բարձրացել էի: Ճանապարհն անցնում էր թեք սարալանջով, և չկային պաշտպանական բազրիքներ, լույսեր կամ ցուցանակներ: Մեր որդի Թոմի հարսանիքն էր, և նրա հարսնացուն՝ Ալեքսիսը, մանկուց երազել էր ամուսնանալ իտալական գեղատեսիլ սարերի լանջին: Ուղևորությունը տանջալի էր: Մենք բավականին ծիծաղաշարժ անհաջողություն ունեցանք Հռոմ թռչելիս, մեքենաների վարձույթի, գնացքների և հյուրերի հարցում կողմնորոշվելիս: Ես վարձեցի մեքենա, այն, ինչպես միշտ, փոքր էր խոստացվածից, որպեսզի հարսնացուին, փեսային և ամբողջ ուղեբեռը տեղափոխելի փոքրիկ տոսկանական քաղաք, որտեղ հասնելու համար երեք ժամվա ճանապարհ պետք է անցնել:

Հարսնացուի մայրը, մորաքույրը, եղբայրը և տատիկը ստիպված եղան տաքսի, այնուհետև ավտոբուս նստել: Իմ գործն էր նրանց վերցնել ավտոբուսի կանգառից: Հռոմից դուրս գալիս պատահաբար հայտնվեցի ավտոբուսների համար նախատեսված գոտում և բախվեցի մի քանի այլ ճանապարհային վտանգների, որից հետո վերջապես հասա Սանսեպոլկրո: Կար ևս մեկ խնդիր: Եթե մեքենայում ևս մեկը լիներ, բավականաչափ տեղ չէր լինի նրանց նստեցնելու համար: Ես 1.2 կմ բարձրացա թեք սա-

րալանջով, որ իջեցնեի որդուս և նրա հարսնացուին, այնուհետև հետ սլացա դեպի քաղաք, որ գտնեի ավտոբուսի կանգառը: Նրանց ավտոբուսը ժամանում էր: Ես չէի խոսում իտալերեն և չէի կարող կարդալ որևէ ցուցանակ: Մեքենայի գլոբալ տեղորոշման համակարգը չունեի հուշումներ: Աղոթեցի և վերջապես արգելակեցի մի լցակայանի մոտ՝ օգնություն ստանալու: Տղամարդը միայն կարողացավ ցույց տալ մյուս կողմը: Գնացի այդ ուղղությամբ՝ ջերմեռանդորեն աղոթելով և մտածելով տատիկի մասին, որը հավանաբար անձանոթ քաղաքում մթության մեջ կանգնած էր: Երբ աղոթում էի, հանդիպեցի ավտոբուսի, որ գալիս էր դեպի ինձ: Շրջադարձ կատարեցի և հետևեցի ավտոբուսին՝ ընթանալով դեպի ճանապարհի եզրային հատվածը:

Ես երբեք այնքան թեթև չէի զգացել, որքան այն ժամանակ, երբ տեսա, թե ինչպես տատիկն ու ուղևորներն իջան ավտոբուսից: Քանի որ մեքենան փոքր էր, հարսնացուի մայրը ստիպված եղավ տեղավորվել վարորդի նստատեղի հետևում և վախից բռնվել գլխակալից, մինչ մենք բարձրանում էինք ուղիղ դեպի սարը: Իմ զգուշացումը չնախապատրաստեց նրանց այդ վերելքին:

Այդ երեկո՝ ավելի ուշ, ես իմացա, որ ամուսնուս ինքնաթիռի թռիչքը հետաձգվել էր, և նա ժամանելու էր հաջորդ օրը՝ հարսանիքից մեկ ժամ առաջ: Հոգեպես մի փոքր դժվար էր, բայց միակ տարբերակը համբերելն էր: Երբ արարողության համար բոլոր նախապատրաստություններն ավարտվեցին, ես ունեի ընդամենը մի քանի րոպե պատրաստվելու համար: Շտապելով չոր շամպուն քսեցի մազերիս, այնուհետև, երբ ամբողջ շշի պարունակությունը թափվեց գլխիս, հասկացա, որ դա լիցքավորիչն էր, ոչ թե ներարկիչը:

Դեմքիս գույնն ամբողջովին սպիտակել էր, իսկ մազերս նմանվել էին տատիկի մազերի՝ չոր ու ճերմակ: Զգեստս սև էր՝ բնորոշ ավանդական իտալական հարսանիքին: Սպիտակ մազեր, սպիտակ դեմք և սև հագուստ՝ իմ առաջին գոթական տեսքը: Չափազանց ուշ էր: Ես պետք է մասնակցեի այնպիսին, ինչպիսին կայի:

Երբ Թոմն ու Ալեքսիսը փոխանակեցին իրենց գեղեցիկ երդումները աշնանային տերևների և գեղեցիկ, մառախլապատ տոսկանական լեռների մեջ, Աստծո Հոգու ներկայությունն այն-

քան ուժեղ էր, որ այն հեղեղեց մեր սրտերը, և մեր աչքերից ուրախության արցունքներ հոսեցին: Դա չափազանց զորեղ էր և օժված էր Աստծուց: Երբ նրանք քնքշորեն փոխանակեցին ձեռագիր երդումները, բոլոր անհանգիստ տեսարանները, ճնշումները և իմ թերի տեսքը մոռացության մատնվեցին:

Աշակերտները Հիսուսին հարցրին, թե ինչպիսին կլինի Նրա գալուստը: Հիսուսն ասաց, որ Իր գալուստը նման կլինի հարսանիքի: Բոլոր աշակերտները գալիլեացիներ էին և գիտեին իրենց հարսանեկան սովորույթները: Գալիլեական հարսանիքին հայր ու որդի ուխտ էին կնքում հարսնացուի հետ, իսկ նրա հայրը ուխտ էր կնքում փեսայի ընտանիքի հետ: Նշանադրության ուխտը հաստատելու համար հարսնացուն խմում էր փեսայի առաջարկած մեկ գավաթ գինուց, որը հայտնի էր որպես ուրախության գավաթ: Նրանք բաժանվում էին, և փեսան հոր հետ գնում էր, որ հարսնացուի համար հոր տանը տեղ պատրաստեր: Նրանց բաժանման ժամանակ հարսնացուն պատրաստվում էր փեսայի գալուստին:

Գալիլեական հարսանիքներն ունեին հումորային, առանձնահատուկ երանգ: Փեսան հայտնվում էր կեսգիշերից մինչև վաղ առավոտ ընկած ժամանակահատվածում, ինչպես գողը գիշերում: Երբ հարսանիքի բոլոր պատրաստություններն արվում էին, հայրը թփթփացնում էր որդու ուսին և ասում. «Գնա՛ և բեր՛ հարսնացուիդ»: Միայն հայրը գիտեր ժամանակը, բայց բոլորը, ովքեր իսկապես ճանաչում էին ընտանիքին, հասկանում էին, որ ժամանակը մոտ է:

Փեսան քայլում էր փողոցներով՝ փչելով եղջերափողը, իսկ հյուրերը վերցնում էին իրենց թիկնոցները և գալիս էին միանալու հարսանեկան խնջույքին: Փեսան հայտնվում էր հարսնացուի դռան մոտ, տեղավորում նրան պատգարակին և տանում հարսանեկան ընթրիքին, որպեսզի փոխանակվեին երդումներով, խնջույք անեին և զվարճանային յոթ օր շարունակ: Երբ հարսանիքի վայրի դռները փակվում էին, ոչ ոք այլևս չէր կարող մտնել: Հյուրերը պատրաստի յուղ պետք է ունենային իրենց լապտերների համար՝ հետևելով և սպասելով գիշերվա այն պահին, երբ կհնչեր փեսայի եղջերափողը:

**Մտտ է այն օրը,
երբ Հայրը
կհայտնվի
Իր Որդուն,
կթփթփացնի Նրա
ուսին և կասի.
«Գնա՛ և բեր
հարսնացուիդ»:**

Մտտ է այն օրը, երբ Հայրը կհայտնվի Իր Որդուն, կթփթփացնի Նրա ուսին և կասի. «Գնա՛ և բեր հարսնացուիդ»:

Քովիդ-ի փորձությունների և սոցիալական ցնցումների ժամանակ ես սկսեցի ուժգնորեն պաշտպանել մեր եկեղեցական ընտանիքին, մեր ծառայողական ընկերներին և գործընկերներին և, իհարկե, մեր ընտանիքին: Նրանց, ում սիրում էի և ում համար հոգ էի տանում, ցանկանում էի հավաքել ու տեղափոխել

մի ապահով վայր, մի կղզի կամ հեռու մի տեղ, որպեսզի կարողանայի պաշտպանել: Այն ժամանակ ես հասկացա, թե ինչպիսի զգացողություն Հիսուսն ուներ մեր հանդեպ: Նա նույնիսկ Իսրայելին ասաց, թե որքան փափագեց հավաքել նրանց, բայց նրանք թույլ չտվեցին: Հիսուսի անհավանական սերը մեր հանդեպ և մեզ պաշտպանելու Նրա ցանկությունը հետ կբերեն Նրան, որպեսզի Նա հավաքի Իր սիրելիներին այն վայրում, որը պատրաստել է նրանց համար:

Մինչև Տիրոջ վերադարձը մենք պետք է ապրենք արթուն և առավելագույնս օգտագործենք մեր օրերը, որովհետև ժամանակները չար են: Մենք պետք է հագնենք Աստծո ամբողջ սպառազինությունը, որի մասին գրված է Եփեսացիների 6-րդ գլխում, և զինված լինենք պատերազմի համար: Աստված կանչում է մեզ՝ լինելու լույսի զինվորներ՝ սիրով, որը մեր զենքն է, և Սուրբ Հոգով, որը մեր զորության և պաշտպանության աղբյուրն է: Մենք պետք է զերծ մնանք աշխարհի սիրուց և նրա՝ մեղքով լցված գայթակղություններից:

Խաղաղությամբ լի սրտով «արթուն և տեղյակ լինելու» Աստծո մեթոդը աղոթքն է:

Աստված կանչում է մեզ՝ լինելու լույսի զինվորներ՝ սիրով, որը մեր զենքն է, և Սուրբ Հոգով, որը մեր զորության և պաշտպանության աղբյուրն է:

«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով և գոհությունով՝ ձեր խնդրվածքները թող հայտ-

նի լինեն Աստուծուն: Եվ Աստուծո խաղաղությունը, որ ամեն մարքից վեր է, ԿՊԱԿՊԱՆԻ ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում»:

– Փիլիպպեցիների 4.6,7

Պահպանե՛ք ձեր սրտերն ու մտքերը: Մեր միտքը պետք է նորոգվի Աստծո Խոսքով: Մեր սիրտը պետք է նվիրվի Աստծո Թագավորությանը: Մենք լայնորեն բացահայտում ենք չարը համակարգերում, որպեսզի «անտեղյակ չլինենք սատանայի խորհուրդներին» և ակտիվորեն շարժվենք առաջ՝ Աստծո պատասխանները բերելու համար: Ինչպե՞ս ենք վարվում չարի և գաղտնի ծրագրերի հետ: Ջերմեռանդորեն աղոթում ենք: Խնդրում ենք երկինքը: Աղոթքով բարեխոսում ենք: Աստված ցանկանում է հասնել մարդկանց, և մենք պետք է կառուցենք կամուրջ նրանց և Աստծո միջև: Մենք անում ենք սա՛՝ աղոթելով նրանց համար և հետ պահելով չարին, որ նրանք կարողանան լսել Աստծուն: Մենք ցուցադրում ենք Նրա բարի կամքը նրանց համար: Մենք աղոթքով հետ ենք մղում չարին, որը կուրացնում է նրանց: Տերունական աղոթքն ուրվագիծ է, թե ինչպես աղոթենք, որ երկինքը հանդիպի երկրին:

Հիսուսն ասաց, որ այսպես աղոթենք.

«Մեր Հայր, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը, գա Քո արքայությունը, լինի Քո կամքը, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: Մեր ամեն օրվա հացը տո՛ւր մեզ այսօր: Եվ թո՛ղ մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ թողնում ենք մեր պարտականներին: Եվ մի՛ տանիր մեզ փորձության մեջ, այլ ազատիր մեզ չարից, որովհետև Քոն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»:

Որովհետև եթե դուք մարդկանց իրենց հանցանքները թողնեք, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կթողնի: Իսկ եթե դուք մարդկանց չեք թողնի նրանց հանցանքները, ձեր Հայրն էլ չի թողնի ձեր հանցանքները»:

– Մատթեոս 6.9-15

Մենք պատվում ենք Նրան՝ որպես սուրբի, որպես մեր աղբյուրի՝ ամեն ինչից վեր Նրա Թագավորությունը պահելով մեր մտքերում և մտածմունքներում: Մենք ստանում ենք մեր կարիքների բավարարումը և հավատում, որ Նրա Թագավորությունը գործում է և վերարտադրվում է այստեղ այնպես, ինչպես որ երկնքում է: Մենք աղոթում ենք, որ զերծ մնանք գայթակղությունից, և Նրա ներումն առաջարկում ուրիշներին և ինքներս մեզ: Ներումը բանալի է՝ զերծ մնալու թշնամու դատապարտող ձայնից և թույլ չտալու, որ դառնությունը կլանի մեր հոգին:

Խոստովանեմ, որ վերջին տարիներին մի քանի անգամ հայտնվեցի այնպիսի թևաթափ վիճակում, որ ոտքի ցատկեցի և բղավեցի հեռուստացույցի վրա: Անարդարությունը պարզապես չափից շատ էր ինձ համար: Ես պետք է կանգ առնեի, աղոթեի և ինքս ինձ հիշեցնեի, որ Աստծո արդարադատությունն անխուսափելի է, նույնիսկ եթե կարող է թվալ, թե այն հետաձգվում է մի կարճ ժամանակով:

Եսայի 32.5-8-րդ խոսքերը (NKJV) մեզ հիշեցնում են.

«Այլևս չեն կոչի տիմարին մեծահոգի, և ժլատին չեն ասի՝ առաքածոն: Որովհետև տիմարը տիմարություն կխոսի, և նրա սիրտը անօրինություն կգործի, որ անբարեպաշտություն ցուցաբերի և Տիրոջ մասին սխալ խոսի, որ սովածի հոգին զրկի հացից և ծարավի խմելիքը պակասեցնի: Եվ նենգամիտի հնարքները չար են, նա չար ծրագրեր է խորհում, որ աղքատներին կորցնի սուր խոսքերով, թեև կարիքավորը արդարություն խոսի: Իսկ մեծահոգի մարդը մեծահոգի բաներ է խորհում, և մեծահոգությամբ նա կկանգնի»:

Տեսնո՞ւմ եք: Մեծահոգի մարդը կկանգնի: Երբ չարագործները չար ծրագրեր են խորհում մարդկանց վնասելու, անարդարություն գործելու համար, Աստված կարգադրում է մեզ մեծահոգի բաներ խորհել: Եվ սրանում մենք կանգուն կմնանք: Ահա թե ինչպես ենք չարին հաղթում բարիով:

2020 թվականի մարտին Քովիդ-19-ի պատճառով Վաշինգտոնի (Կոլումբիայի շրջան) մեկուսացումից երկու օր առաջ Գարին և Ես ինքնաթիռով մեկնեցինք Կոլումբիայի շրջան: Օդանավակայանում

շատ քիչ մարդիկ կային, և տիրում էր աղետալի մթնոլորտ, իսկ Փենսիլվանիայի պողոտան գրեթե ամբողջությամբ դատարկ էր: Մենք քայլեցինք շենքից շենք և աղոթեցինք մեր երկրի ու կառավարության համար: Մեզ հետ ոչ մի հեռուստատեսային անձնակազմ չկար, պարզապես մենք էինք և հեռախոսը: Հունվարին Աստված ասել էր ինձ գնալ այնտեղ: Ես սկզբնապես ծրագրել էի գնալ 75 կանանց հետ, բայց մարտահրավերների պատճառով մենք երկուսով էինք: Բայց արթուն կանայք աղոթում էին մեզ համար: Մենք շրջեցինք մեր երկրի կառավարության հիմքերով՝ կանգնելով այնտեղ, որտեղ Սուրբ Հոգին առաջնորդում էր, և աղոթելով մայրաքաղաքում, Արդարադատության նախարարությունում, ՀԴԲ-ում մոլեգնող կաշառակերության դեմ և բարեխոսելով մեր երկրի համար, որպեսզի այն կանգուն մնա այս խավար ժամին:

Երբ հասանք Կապիտոլիում (ԱՄՆ կոնգրեսի շենքը), աղոթքի մի ուժեղ և հրատապ մարգարեական օծություն իջավ ինձ վրա: Ես սկսեցի կապել սատանայական այն ուժերին, որոնք գործում էին չձեռնարկների և մեր երկրի դեմ: Ես հռչակեցի ազատություն կեղեքումից: Ուժգին լարվածություն կար: Այնուհետև կանգնեցինք Գերագույն դատարանի մոտ և արեցինք նույնը:

Ավելի ուշ ես իմացա, որ Կոնգրեսն արտահերթ նիստ էր անցկացնում: Ժամանել էր Նենսի Փելոսին, որպեսզի հսկայական գումարներ ավելացնեն արհեստական վիժեցման ֆինանսավորմանը և Քովիդ-ի հետ կապված միջոցառումներին հատկացվող տրիլիոններին, և դա հաստատելու համար անհրաժեշտ էր շտապ կարգով օրենք ընդունել: Ես հավատում եմ, որ Աստված դրեց մեզ այնտեղ, որ ջերմեռանդ աղոթեինք և մյուսների հետ աղոթքով կանգնեցնեինք այդ վայրագությունը: Օրենքը չընդունվեց:

Երեմիան ասաց.

«Եվ Տերն ինձ իմացրեց, և ես գիտեմ. Դու ինձ ցույց տվեցիր այն ժամանակ նրանց գործերը: Բայց ես մի ընտելացած գառի պես էի, որ տարվում է մորթվելու, և չգիտեի, թե ինձ դեմ նենգություն են հնարում, թե փչացնենք ծառը իր պտղով, և նրան բնաջինջ անենք կենդանյաց երկրից, և նրա անունը այլևս չհիշվի»:

– Երեմիա 11.18,19

Երեսմիան զգում էր իր թշնամիների՝ իրեն և Աստծո ժողովրդին կործանելու դավադրության ճնշումը: Նա դիմեց Աստծուն՝ արդարադատություն բերելու համար, և Աստված պատասխանեց նրան:

Երեսմիայի ողբերի 3.59,60 (NLT)– ը մեզ հիշեցնում են.

«Ո՛վ Տեր, Դու տեսար, թե որքան սխալ են վարվել նրանք ինձ հետ: Եղի՛ր իմ Դատավորը և ապացուցի՛ր, որ ես ճիշտ եմ: Դու տեսար վրեժխնդիր դավադրությունները, որ իմ թշնամիները նյութել են իմ դեմ»:

Այո, Աստված լսել է: Նա ասում է, որ կպաշտպանի քեզ, երբ թշնամին փորձի հիասթափեցնել քեզ:

Սաղմոս 37.6-8-րդ խոսքերը խոստանում են.

«Եվ քո արդարությունը դուրս կհանի լույսի պես, և քո իրավունքը՝ կես օրվա պես: Համբերի՛ր Տիրոջը և սպասի՛ր Նրան. մի՛ բարկացիր այն մարդու ճանապարհը հաջողվելիս, որ իր չար խորհուրդները կատարում է: Դադարի՛ր բարկությունից և թո՛ղ տուր սրտմտությունը. մի՛ բարկացիր, որ չար գործես»:

Անզուսպ զայրույթը կամ վախը չեն օգնի մեզ, բայց Աստված կօգնի: Մենք հավատում ենք անշարժ Թագավորությանը: Հարձակումները, որոնք փորձում են կործանել Աստծո ժողովրդին,

Հարձակումները, որոնք փորձում են կործանել Աստծո ժողովրդին, միշտ եղել են Աստծո օրհնություններին հասնելու ցատկահարթակ

միշտ եղել են Աստծո օրհնություններին հասնելու ցատկահարթակ: Գուցե հարցնում եք՝ ինչպե՞ս:

Մենք աճում ենք ճնշման միջոցով: Հոգու սուրն օգտագործելու մեր կարողությունը զարգանում է: Ճնշումը ստուգում է մեր հավատարմությունն Աստծուն, և մենք ձեռք ենք բերում ավելի խոր նվիրում, որն ապահովում է հաղթանակ մարտում և վախ է առաջացնում մեր թշնամիների մեջ: Ճնշումն ուժե-

ղացնում է ինչ-որ բան անելու՝ միջոցներ ձեռնարկելու, ամբողջովին պայքարի մեջ մտնելու մեր վճռականությունը:

Քո հանդեպ Աստծո սերն ու սրտացավությունը հատուցվում են օրհնություններով՝ հոգևոր, հուզական և նյութական: Մենք ժառանգում ենք Թագավորությունը՝ կանգնելով և պատերազմելով մեր Թագավորի կողքին:

Մատթեոսի 5.10-12-ում ասվում է, որ մենք երանելի ենք, երբ մեզ հետ վատ են վարվում:

«Երանի նրանց, որ արդարության համար հալածված են, որ նրանցն է երկնքի արքայությունը: Երանի է ձեզ, երբ որ կնախադեն ձեզ և կհալածեն և ամեն չար բան սուտ րեղը կասեն ձեզ վրա Իմ պատճառով: Ուրախացեք և ցնծացեք, որ ձեր վարձքը շար է երկնքում, որովհետև այսպես հալածեցին մարգարեներին, որ ձեզնից առաջ կային»:

Եթե հասկանանք, որ նրանց վիրավորանքը, վերաբերմունքը և չար դավադրությունները գործում են մեր օգտին, մենք կարող ենք ուրախանալ վախից անհանգստանալու կամ զայրությանից պոռթկալու փոխարեն: Ինչպես Պողոս առաքյալն է ասում Բ Կորնթացիների 12.10-ում.

«Դրա համար հավանել եմ տկարությունների, թշնամանքների, վշտերի, հալածանքների և նեղությունների Քրիստոսի համար, որ երբ որ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ»:

Նույնիսկ երբ թվում է, թե ինչ-որ բան եմ կորցրել Հիսուսին հետևելու համար, իմ ամենասիրելի հիշեցումն այն մասին, որ ես պետք է շտկեմ իմ վերաբերմունքը, գրված է Մարկոս 10.30-ում: Հիսուսը խոստանում է, որ երբ հրաժարվենք որևէ բանից Աստծո Թագավորության համար, դա միայն ժամանակավոր է: Նա ասում է, որ ով թողնի ինչ-որ բան, կստանա *«հարյուրապատիկ հիմա այս ժամանակում՝ տներ և եղբայրներ և քույրեր և մայրեր և որդիներ և արտեր հալածանքի հետ և գալու աշխարհում՝ հավիտենական կյանքը»* (Մարկոս 10.30):

Հռոմեացիների 8.35-37-րդ խոսքերը մեր երաշխիքն են, որ

ինչ էլ փորձի վնասել մեզ, չկա բացարձակապես ոչինչ, որ կարողանա կանգնել Աստծո և մեր հանդեպ Նրա մեծ սիրո միջև: Մեր հավատքը գործում է՝ իմանալով, որ Նրա սերը լիովին հուսալի է:

«Ապա ղվ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. փառապանք, թե նեղություն, թե հալածանք, թե սո՛վ, թե մերկություն, թե վրանձ, թե սո՛ր: Ինչպես գրված է, թե Քեզ համար մեռցվում ենք բոլոր օրը և մորթվելու ոչխարի պես համարվեցինք: Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց»:

– Հռոմեացիների 8.35-37

Վերջապես այդ սերն է, որ մշտապես ստիպում է մեզ հաղթել պայքարում, կառչել խոստումից և տեսնել այն հաղթանակը, որ Նա խոստացավ: Սաղմոս 110.3-ում (AMP) ասվում է. «Քո ժողովուրդը զորությանդ օրը հոժար կամքով պատրաստ կլինի (մասնակցելու Քո պատերազմին)...»:

Պայքարի՛ր ինչպես երկինքը:



ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՄԵՆ, ՈՎ ՈՐ
ԱՍՏԾՈՒՑ Է ԾՆՎԱԾ, ՀԱՂԹՈՒՄ
Է ԱՇԽԱՐՀԻՆ: ԵՎ ՍԱ Է
ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԱՇԽԱՐՀԻՆ
ՀԱՂԹԵՑ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԵՐ
ՀԱՎԱՏՔԸ:

(Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 5.4)

«Դրենդան համարձակ է, խիզախ և աններողամիտ, երբ փորձում է լուծում տալ այսօր եկեղեցու առջև ծառայած որոշ դժվարին հարցերի: Ժամանակն է պայքարելու ինչպես երկինքը»:

- Ջոնի Լեմ, «Դեյսթար» հեռուստատեսային ցանցի համահիմնադիր և «Ջրույց սեղանի շուրջը` Ջոնիի հետ» հաղորդման հաղորդավար

«Պայքարի՛ր ինչպես երկինքը»... պետք է լինի անձնական ճամփորդություն յուրաքանչյուրիս համար: Սա քաջալերող գիրք է, որը ներշնչում է բոլորիս ավելի մոտենալ Նրան, Ով ստեղծել է մեզ...»:

- Միշել Բախման, Ռիջենթի համալսարանի դեկան, ԱՄՆ Կոնգրեսի նախկին անդամ

«Ես ողջունում եմ նրա համարձակությունը և քաջությունը` կանգնելու ժամանակակից փարիսեցիների դեմ և սիրով գրելու ճշմարտությունը»:

- Հովիվ Ռոբին Բուլոկ

«Այս գիրքը հարուստ է Թագավորության սկզբունքների վրա հիմնված իմաստությամբ, հետևաբար պարտադիր է կարդալ այն...»:

- Դր Էյվերի Ջեքսոն, նյարդավիրաբույժ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Պատրաստ եք պատերազմի: Իր բոլորովին նոր` «Պայքարի՛ր ինչպես երկինքը. մշակութային ուղեցույց արթուն ապրելու համար» գրքում Դրենդա Կիսին առանձնացնում է Ազդեցության յոթ սարերը, որոնք նվաճել է Հակաքրիստոսի ոգին. դրանք են` ընտանիք, կառավարություն, եկեղեցի, կրթություն, մեդիա, արվեստ և առողջապահություն: Հեղինակը հստակ ցույց է տալիս, թե ինչպես պայքարեք երկնքի նման, հեռացնեք դժոխքը և հետ վերցնեք այս սարերը Աստծո Թագավորության համար:

Այս մշակութային, հոգևոր և անձնական մարտադաշտերում ձեզ առաջնորդելու իր որոնումներում Դրենդան ոչնչի առջև կանգ չի առնում, երբ բացահայտում և ցույց է տալիս թշնամու վերջին օրերի ցնցող օրակարգերը, որոնց նպատակն է խաբել, ստրկացնել, աղքատացնել և սպանել Աստծո ամենաթանկ արարածներին` մարդկանց` միաժամանակ հատուկ նպատակ ունենալով ներսից կործանելու մեր երեխաներին:

Աստված կանչել է յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի` լինելու արթուն և խոսելու ճշմարտությունը սիրով, բայց առանց փոխզիջման:

Ժամանակն է պայքարելու ինչպես երկինքը և հեռացնելու դժոխքը:



Դրենդա Կիսին քարոզիչ է, կյանքի մարզիչ, հովիվ, գործարար կին, «Դրենդա» հաղորդման և «Դրենդա. լինել արթուն» ալիքի հաղորդավարուհի, ինչպես նաև «Նողկալին մեզ ոչ մի տեղ չի տանում», «Պաշտպանություն շնանկներից», «Նոր հին ընտանիք» և մի քանի այլ գրքերի հեղինակ: Նա և նրա ամուսինը` Գարին, ամուսնացած են շուրջ 40 տարի և ունեն հինգ շնորհալի զավակներ: